

Գ.Ա.Առաքիառյան

Տ Բ Ն Ա Ն Ս Ա Կ Ա Ն
Ի Բ Ա Վ Ա Ռ Ի Ն Բ

«Տնտեսագետ»
Երևան 2001

Գ. Ա. Մուրիապյան

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔ**

(դասագիրք բուհերի համար)

«Տպատպագր»
Երևան, 2000 թ.

ՀԴՏ 347.73(479.25)(07)

ԳՄԴ 67.99 (ՉԴ) 2գ73 Հրատարակվում է ԵՐՊՏԻ Ֆինանսահաշվային ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ
Ս 982

Նվիրում եմ որդուս՝
Սևադա Սուքիասյանի
անմար հիշատակին

Գրախոսներ՝
տ. գ. դ., պրոֆեսոր Լ. Ձ. Անանյան
իր. գ. թ., դոցենտ Ս. Վ. Սուրադյան

Մասնագիտական խմբագիր՝
տ. գ. թ., պրոֆեսոր Լ. Բաղանյան

Հրատարակվում է հեղինակի միջոցներով:

Հրատարակչական գրիֆը տրամադրվել է առանց խմբագրական միջամտության:

Ներածություն

Արտասահմանյան բոլոր երկրների իրավաբանական ինստիտուտներում և համասարանների իրավաբանական ֆակուլտետներում «Ֆինանսական իրավունք» առարկան դասավանդվում է որպես իրավունքի ինքնուրույն ճյուղ:

Կարծում ենք, որ ֆինանսական իրավունքի, իրավունքի ինքնուրույն ճյուղի հասկացության, նրա կարգավորման առարկայի, մեթոդի և այդ ճյուղի նորմերով կարգավորվող հասարակական հարաբերությունների էության, բովանդակության, իրավական առանձնահատկությունների, ինչպես նաև իրավունքի համակարգում հատկապես քաղաքացիական, վարչական, աշխատանքային և այլ ձևավորվող միջճյուղային բնույթի համալիր իրավական հարաբերությունների էությունը և բովանդակությունը ճիշտ և անսխալ արժեքավորելու համար ուսանողներին կարող է օգնել «ֆինանսական իրավունք» առարկայի մայրենի լեզվով շարադրված ներկա դասագիրքը:

Սյուս կողմից ֆինանսական իրավունքի դասընթացը սերտորեն առնչվում է տնտեսագիտության այնպիսի ճյուղերի հետ, ինչպիսիք են, օրինակ, «Ֆինանսները», «Պետական բյուջեն» և այլն:

Բնական է, որ դասագիրքում հնարավորության սահմաններում արտացոլվել են նաև տնտեսագիտության այդ ճյուղերի նվաճումները, որն ուսանողներին հնարավորություն կընձեռնի ֆինանսաիրավական կոնկրետ ինստիտուտների գործնական հետազոտության հիման վրա կողմնորոշվելու քննարկվող երևույթների տնտեսական-բազիսային բովանդակության հարցերում և ըմբռնելու տնտեսական հարաբերությունների վերափոխման պրոցեսը վերնաշենքային իրավական հարաբերությունների:

Գիտության բնագավառում ՀՀ կառավարության քաղաքականությունը նպակամղված է գիտելիքների բոլոր ճյուղերի դիմամիկ առաջադիմության համար նպաստավոր պայմանների ստեղծմանը,

Սուքիասյան Գ.Ա.
Ս 982 Ֆինանսական իրավունք (դասագիրք բուհերի համար)
Եր., Տնտեսագետ, 2001, 360 էջ:

Պատագրքում լուսարանվում են հարկային, բանկային, օտարերկրյա ներդրումների բնագավառների ֆինանսաիրավական հարաբերությունների կարգավորման խնդիրները:

Ներկայացված է ինչպես ՄՊՀ, այնպես էլ ՀՀ ֆինանսական բնագավառին վերաբերող օրենսդրությունը, 2001թ. մայիս ամսվա դրությամբ:

Դասընթացը շարադրված է պետական ուսումնական ծրագրերին համապատասխան: Կարող է օգտակար լինել ինչպես իրավաբանական, տնտեսագիտական բուհերում դասավանդվող «Ֆինանսական իրավունք» դասընթացը ուսումնասիրողների, այնպես էլ գործադիր, դատական և արդարադատության մարմիններում աշխատող անձանց համար:

Ս $\frac{1203020300}{719(01) - 2001}$ 2001

ԳՄԴ 67.99 (ՉԴ) 2գ73

ISBN 99930 - 894 -6 -X

© Գառնիկ Արտաշեսի Սուքիասյան, 2001

առավել հեռանկարային ուղղություններում կադրերի, նյութական ու ֆինանսական ռեսուրսների համակենտրոնացմանը, որոնք կոչված են արագացնելու տնտեսական ու սոցիալական նախատեսված նպատակների ձեռքբերումը, հասարակության հոգևոր զարգացումը, ապահովելու երկրի հուսալի պաշպանությունը:

Ներկա ժամանակաշրջանում, երբ մեր երկրի սոցիալ-տնտեսական կյանքում արմատավորվում են սեփականության նոր ձևերը և շուկայական հարաբերությունները, երբ դրվում է գիտության անմիջական արտադրողական ուժի վերածվելու խնդիրը տնտեսական հարաբերությունների ուսումնասիրության և հասարակության կարիքների համար այն օգտագործելու գործում բարձրանում է նաև ֆինանսական իրավունքի գիտության դերը, որի ուսումնասիրության առարկան հասարակության կարգավորման կարևոր ուղորտներից մեկն է՝ դրամական միջոցների պլանային հավաքման, բաշխման և վերաբաշխման գործընթացում ծավալվող հասարակական հարաբերությունները և դրանք կարգավորող ֆինանսաիրավական նորմերը:

«Ֆինանսական իրավունք» առարկայի ներկա դասագրքում արտացոլված սկզբունքների, խնդիրների ու նպատակների ուսումնասիրությունները կարծում ենք, ուսանողներին կզինի անհրաժեշտ գիտելիքներով՝ ընթանել անկախ զարգացման ուղի բռնած, ինքնիշխան Հայաստանի Հանրապետության ֆինանսական քաղաքականության էությունը և կնպաստի հետագայում իրենց պրակտիկ գործունեության մեջ ճշտորեն կիրառելու այն:

Ֆինանսական իրավունքի, ինչպես տեսական, այնպես էլ գործնական պարապմունքների ընթացքում ձեռք բերած գիտելիքները կնպաստեն ուսանողներին արագ կողմնորոշվելու ֆինանսական օրենսդրության աղբյուրների բարդ համակարգում և ճիշտ կիրառելու այդ ակտերի պահանջները, հասարակական կյանքի այս կամ այն ոլորտում ծագած ֆինանսա-տնտեսական հիմնախնդիրները լուծելիս կամ դրա հետ կապվող հարցեր քննարկելիս:

Ֆինանսական իրավունք առարկայի դասագրքում տեղ գտած, ֆինանսա-իրավական ինստիտուտները վերլուծելիս անհրաժեշտություն կառաջանա նաև ծանոթանալու հաշվապահական, հարկային, բանկային և ֆինանսական բնույթի որոշ փաստաթղթերի ձևերի հետ, որոնք հիմնականում վերաբերվում են ձեռնարկությունների, միավորումների, կազմակերպությունների, նախարարությունների և գերատեսչությունների եկամուտների և ծախսերի ֆինանսական պլանների, դրանց նախահաշիվներին, շահույթին և նրանցից կատարվող մասհանումների տեսակներին, ինչպես նաև գործող հարկերի հաշվարկման և վճարման կարգին:

Այդպիսի փաստաթղթերի հետ գործնական ծանոթությունը կարող է նպաստել հետագայում բանկային, հարկային, նաև դատա-քննչական մարմիններում աշխատանքի անցած ուսանողներին արագ և ճիշտ կողմնորոշվելու՝ տնտեսական-ֆինանսական բնույթի հարաբերությունները սահմանազատելիս, ինչպես նաև այդ բնույթի քրեական գործեր քննելիս:

Դասագրքի շարահյուսման հիմքում դրված են արտասահմանյան երկրներում դասավանդվող ֆինանսական իրավունքի գործող պետական օրագրերը: Ֆինանսական իրավունքի վերաբերյալ օրենսդրական ակտերի ժողովածուները, ինչպես նաև արտերկրներում հրատարակված «Ֆինանսական իրավունքի» դասագրքերը:

Առարկայի ուսումնասիրության դասընթացը կազմված է նաև ընդհանուր և հատուկ մասերի տեսական և գործնական նշանակության պահանջների հաշվառման հիման վրա:

Ֆինանսական իրավունք առարկայի դասագիրքը նպատակ է հետապնդում ուսանողներին կողմնորոշվելու ֆինանսական իրավունքի որպես իրավունքի ինքնուրույն ճյուղի ուսումնասիրության առարկայի առանձնահատկությունների հարցում: Դասընթացի հիմնական խնդիրն է՝ օգնել ուսանողներին, որպեսզի ճիշտ ընկալվեն և լուսաբանվեն տնտեսական օրենքների ֆինանսաիրավական առանձնահատկությունները, օրենքներ, որոնցով պայմանավերված են տնտեսության պլանայությունը, ապրանքադրամական հարաբերությունների էությունը, պետական բյուջեն, որոնց արտահայտման ձևերն են հանդիսանում փողը, ֆինանսները և վարկը:

Վերլուծել ԳՀ և նրա իրավագոր մարմինների ֆինանսական գործունեության գործընթացում ֆինանսական իշխանության կազմակերպման ձևերը և մեթոդները:

Ցույց տալ պետության և նրա մարմինների ֆինանսական գործընթացում ծավալվող իրավական հարաբերությունների առանձնահատկությունները և լուսաբանել այդ հարաբերությունները կարգավորող ֆինանսա-իրավական նորմերի բովանդակությունը:

Ուսումնասիրել ֆինանսական գործունեությանը բնորոշ սպառման և վերահսկողության ֆունկցիաները, որոնք իրենց դրսևորումն են ստանում ֆինանսա-իրավական ցանակացած ինստիտուտի նորմերի կիրառման ընթացքում:

Ելնելով դասընթացի ուսումնասիրության և իրավունքի ճյուղի կարգավորման առարկայի առանձնահատկություններից՝ էական նշանակություն ունեցող որոշ թեմաներ միավորված են հանրաճանաչ իրավական ինստիտուտների մեջ, իհարկե, բոլոր դեպքերում նման ընդհանրացումների հիմքում ընկած է կարգավորման առարկայի ընդհանրությունը:

ԳԼՈՒԽ I

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ**

**§ 1. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Հայաստանի Հանրապետության «Ֆինանսական իրավունք» դասընթացի ուսումնասիրության առարկան հանրապետության ֆինանսներն են:

Ֆինանսները որպես դրամական հարաբերություններ ընդհանուր են տնտեսության բոլոր ճյուղերում համախառն ներքին արդյունքի շրջապտույտից: Առանց ֆինանսների ապրանքադրամական հարաբերությունների համակարգում անհնար է պատկերացնել ազգային եկամտի ձևավորումը, նրա բաշխումը և օգտագործումը:

Ֆինանսները պատկանում են ապրանքային արտադրության տնտեսական կատեգորիաների թվին և կպահպանվեն այնքան ժամանակ, որքան գոյություն կունենան ապրանքադրամական հարաբերությունները և պետությունը:

Ֆինանսական հարաբերությունները տնտեսական հարաբերություններ են, որոնք երևան են գալիս պետության և նրա վարչաքաղաքական տարածքների դրամական միջոցների կենտրոնացված և ապակենտրոնացված ֆոնդերի ստեղծման, բաշխման և օգտագործման ընթացքում, ապահովում են համախառն ներքին արդյունքի, այդ թվում նաև ազգային եկամտի ծրագրված բաշխումը և վերաբաշխումը՝ երկրի ընդլայնված վերարտադրության կարիքները և հասարակության աճող պահանջումները բավարարելու համար:

Պետության ֆինանսներ հասկացության սահմանումից երևում է, որ ֆինանսները առաջին հերթին դրամական հարաբերություններ են, չնայած ոչ բոլոր դրամական հարաբերություններն են ներառվում

Այսպես, «Պետական և տեղական դրամական ֆոնդերի իրավական կարգավորումը» թեման ուսումնասիրելիս ՀՀ պետական բյուջեի և բյուջային իրավունքների հետ նպատակահարմար է ուսումնասիրել տեղական իրնքնակառավարման մարմինների բյուջետային իրավունքները, նրանց բյուջեների կառուցվածքը, բյուջեների կազմման, քննարկման և հաստատման կարգը:

Նման ընդհանրացումները ուսանողներին հնարավորություն են ընձեռում պարզ պատկերացում կազմելու ՀՀ բյուջետային լիազորությունների մասին և ճիշտ գնահատելու լիազորությունների բաշխումը Հանրապետության և համայնքների միջև՝ բյուջետային եկամուտների և ծախսերի սահմանման և հաստատման ոլորտում:

Նման ընդհանրացումները տեղ են գտել նաև «Հարկային իրավունք» թեմայում, որտեղ ուսանողները համապետական հարկերի հետ ուսումնասիրում են նաև տեղական հարկերի և տուրքերի իրավական կարգավորման առանձնահատկությունները:

«Ֆինանսական իրավունք» առարկայի դասագիրքը ՀՀ իրավագիտության բնագավառում մայրենի լեզվով ուսումնական նյութեր նախապատրաստելու առաջին փորձերից մեկն է:

*Հեղինակ՝ իր. գիտ. թեկ. դոց.
Գառնիկ Արտաշեսի Սուքիասյան:*

Ֆինանսների մեջ:

ՀՀ ներկա տնտեսական հարաբերություններում ֆինանսները արտահայտում են այնպիսի դրամական հարաբերություններ, որոնք ձևավորվում են.

1. պետության և պետական սեփականություն հանդիսացող կազմավորումների, միավորումների ու ձեռնարկությունների միջև,
2. պետական ու կոլեկտիվ սեփականության վրա հիմնված ընկերությունների ու միավորումների միջև,
3. արտադրական, արդյունաբերական և այլ բնույթի ձեռնարկությունների, կազմակերպությունների և նրանց վերադաս մարմինների միջև,
4. պետության և գյուղացիական, գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների, կոոպերատիվ կազմակերպությունների ու ձեռներեցների միջև,
5. պետության և բնակչության միջև:

Հիշատակված դրամական հարաբերություններն արտահայտում են համախառն ներքին արդյունքի՝ հատկապես՝ զուտ եկամտի բաշխման և վերաբաշխման գործընթացը:

Ֆինանսները պետության արտադրական հարաբերությունների համակարգի տարրերից են, որը դրսևորվում է ոչ թե հասարակության նյութական և աշխատանքային ռեսուրսներում, այլ աչքսպես կոչված, ֆինանսական ռեսուրսներում, որոնք արտահայտվում են դրամի միջոցով: Ֆինանսները չի կարելի շփոթել դրամ հանկարծության հետ: Ֆինանսները դրամ չեն, բայց արտահայտվում են դրամի միջոցով: Դրանք բաշխում և վերաբաշխում արտահայտող հարաբերություններ են, որոնք դրսևորվում են դրամական ձևով որպես դրամական հարաբերությունների համակարգի բաղկացուցիչ՝ իրեն յուրահատուկ հատկանիշներով:

Ֆինանսների անհրաժեշտությունն ու ելությունը բնորոշվում են երկու փոխադարձաբար միախոյունված նախադրյալներով՝ ապրանքադրամական հարաբերություններով և պետության խնդիրներով ու ֆունկցիաներով: Ֆինանսների ելությունը երևան է գալիս նրա կատարած կոնկրետ ֆունկցիաների միջոցով, այն ոլորտում, որտեղ նրանք գործում են այն մեթոդներով ու ձևերով, որոնցով իրագործվում են այդ ֆունկցիաները:

Հարկ է նշել, որ պետության և նրա լիազոր մարմինների ֆինանսական գործունեության հիմնական բովանդակությունը հանգում է հասարակության և նրա յուրաքանչյուր անդամի նյութական ու հոգևոր պահանջների առավել լրիվ բավարարմանը, որը պայմանավորում է քաղաքացիների սոցիալական, կուլտուր-կենցաղային այնպիսի պահանջների ապահովումը, ինչպիսիք են լուսավորության, առողջապահության, գիտության և մշակույթի ոլորտների ծառայությունները:

Հասարակական ամբողջ կարիքների բավարարման աղբյուրը համախառն ներքին արդյունքն է, որ ստեղծվում է նյութական արտադրության ոլորտում: Անընդմեջ արտադրության ապահովման համար հասարակական արդյունքի ողջ հանրագումարից առաջին հերթին որոշակի մաս առանձնացվում է արտադրության գործընթացում սպառվող արտադրության միջոցների փոխհատուցման, պահուստային, տնտեսական և հասարակական ֆոնդերի ստեղծման համար:

Հասարակության համար անհրաժեշտ դրամական ֆոնդերի ձևավորման անմիջական աղբյուրը ազգային եկամուտն է: ՀՀ տնտեսական և սոցիալական քաղաքականության ոգուն համապատասխան ազգային եկամուտը ֆինանսական-իրավական նորմերի ակտիվ ներգործության միջոցով բաշխվում է ըստ հասարակական սպառման և կուտակման ֆոնդերի, որոնց տոկոսային հարաբերությունը այսօր վկայում է հասարակական սպառման ֆոնդերի տեսակարար կշռի աճի բարձր տեմպերի մասին: Այն գերազանցում է հասարակական կուտակման ֆոնդերին:

Ներկայումս ազգային եկամտի բաշխումը հանրապետությունում կատարվում է ոչ թե բնամթերքի, այլ դրամական ձևով: Հետևաբար, պետական շինարարության ընթացքում պետության ֆինանսական գործունեությունը ուղղված է շուկայական հարաբերություններին անցման ժամանակաշրջանին բնորոշ ապրանքադրամական հարաբերությունների իրականացմանը: Ընդ որում, էկոնոմիկայի ղեկավարումը իրականացվում է տնտեսական և սոցիալական զարգացման պետական ծրագրերի հիման վրա՝ ակտիվորեն օգտագործելով առևտրային շահույթը, ինքնարժեքը, տնտեսական մյուս լծակներն ու խթանները:

Ֆինանսական գործունեության իրականացման ձևերը և մեթոդները իրավական նորմերով ամրագրված այնպիսի վարքագծի կանոններ են, որոնց օգնությամբ պետությունը հավաքակրում, օգտագործում և բաշխում է դրամական միջոցները:

Պետության ֆինանսական գործունեության իրականացման ձևերի շարքում պետք է առանձնացնել պետական և սեփականության մյուս ձևերի վրա հիմնված ձեռնարկություններից, ընկերություններից, գյուղական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններից, կոոպերատիվ, հասարակական, քաղաքական և այլ կազմակերպություններից, ինչպես նաև քաղաքացիներից պարտադիր վճարների և

հարկերի գանձումը, կյանքի և ոչ կյանքի ապահովագրությունը, մաքսերի և տուրքերի սահմանումը և գանձումը, դրամական միջոցների ներգրավումը շրջանառության մեջ (փոխառությունների, պարտատոմսերի, ավանդների և այլ տեսքով):

Ֆինանսական գործունեության վերջ նշված իրավական ձևերը կառավարությունն իրականացնում է դրամական միջոցները կենտրոնացնելիս: Արդեն հավաքված դրամական միջոցները բաշխելու համար պետությունը կիրառում է տնտեսա-իրավական այլ մեթոդներ:

Դրանք են.

1. Ֆինանսավորումը, այսինքն՝ բյուջետային դրամական միջոցների պլանային, նպատակային, անհատույց և անվերադարձ հատկացումը պետական ձեռնարկություններից, բյուջետային կազմակերպություններին և հատկապես համապետական ծրագրեր կատարողներին:
2. Փոխատվությունների հատկացումը, որի ելությունը հանգում է վերադարձման սկզբունքով գումարների տրամադրման, երբ ստացող կազմակերպությունները և քաղաքացիները վճարում կամ չեն վճարում որոշակի տոկոս:

Ֆինանսական գործունեության ներքին բովանդակությունը կազմող տնտեսական և իրավական միատարր հիմքերի մանրագնին ուսումնասիրության հիման վրա դժվար չէ նկատել, որ տեսական և ուսումնական գրականության մեջ տրվող «Պետության ֆինանսական գործունեություն» հասկացության կառուցվածքային տարրերն են հանդիսանում կենտրոնացված և ապակենտրոնացված դրամական ֆոնդերի ստեղծումը, բաշխումը և օգտագործումը:

Այսպիսով, պետության ֆինանսական գործունեությունը՝ պետական համապատասխան մարմինների գործունեությունն է, որը ուղղված է դրամական միջոցների ծրագրված հավաքմանը, բաշխմանը և օգտագործմանը, օժանդակում է պետության խնդիրների և ֆունկցիաների իրականացմանը, նպաստում տվյալ պետության քաղաքացիների չիարժեք կենսամակարդակի ապահովմանը:

§ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Տնտեսագիտական և իրավաբանական գրականության մեջ ֆինանսավարկային համակարգ հասկացությունը մեկնաբանվում է երկու առումով:

Լայն առումով այն դիտվում է որպես ֆինանսական ինստիտուտների ամբողջություն, որոնցից յուրաքանչյուրը համեմատաբար ինքնուրույն է և գործում է դրամական ֆոնդերի ստեղծման ու օգտագործման միայն իրեն հատուկ մեթոդներով և ձևերով:

Նեղ առումով ֆինանսական համակարգը դիտարկվում է որպես ֆինանսավարկային մարմինների համակարգ, որոնք կոչված են ապահովելու պետության ֆինանսական գործունեությունը՝ տնտեսավարման առկա պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ինստիտուտների թվին են պատկանում պետական բյուջեն, պետական ձեռնարկությունների և տնտեսության մյուս ճյուղերի ֆինանսները, կյանքի և ոչ կյանքի ապահովագրությունը, արտաբյուջետային նպատակային ֆոնդերը, պետական և բանկային վարկերը և այլն:

Հանրապետության ֆինանսական միասնական համակարգի ֆինանսաիրավական առաջատար ինստիտուտը պետական բյուջեն է:

Հանրապետության բյուջեն պետության դրամական միջոցների կենտրոնացված ֆոնդի գոյացման և օգտագործման ֆինանսական ծրագիրն է:

Հանրապետության սահմանադրական վարչատարածքային բաժանմանը համապատասխան՝ քաղաքներում և գյուղերում տեղական ինքնակառավարման ֆինանսական հիմքը կազմում են տեղական բյուջեները:

Պետական բյուջեն հիմնական ֆինանսական ծրագիր է համարվում այն պատճառով, որ նրա միջոցով բաշխվում և վերաբաշխվում է երկրում ստեղծվող ազգային եկամտի մոտ կեսը: Բացի հանրապետության բյուջեից, գոյություն ունեն նաև ապակենտրոնացված կարգով, անկախ սեփականության ձևից, ձեռնարկությունների, բաց և փակ բաժնետիրական ընկերությունների, կազմակերպությունների, կոոպերատիվների և հասարակական կազմակերպությունների ֆինանսները: Դրա համար էլ ելնելով կատարվող խնդիրների կարևորությունից ֆինանսական քաղաքականության մեջ ընդգծվում է բյուջեի առաջատար դերը:

Պետական բյուջեի մասին խոսելիս պետք է մշտապես նկատի ունենալ, որ խոսքը այն հարաբերությունների մասին է, որոնց միջոցով ֆինանսական ռեսուրսների որոշակի մասը անմիջականորեն դրվում է իշխանության կենտրոնական և տեղական մարմինների տնօրինության տակ:

Կառավարությունը կենտրոնացնելով ազգային եկամուտը՝ նրա զգալի մասը պետական բյուջեի միջոցով ուղղում է արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի, առևտրի և տնտեսության մյուս ճյուղերի զարգացման, բնակչության նյութական բարե-

կեցության ու կուլտուրական մակարդակի բարձրացման, լուսավորության, առողջապահության, սոցիալական ապահովագրության միջոցառումների, ինչպես նաև օրենսդիր, գործադիր, դատական իշխանությունների և երկրի պաշտպանության ֆինանսավորմանը:

Պետական ձեռնարկությունների և տնտեսական կազմակերպությունների ֆինանսները անմիջականորեն կապված են նյութական արտադրության հետ, որտեղ ձևավորվում են ազգային եկամուտը, և ֆինանսական համակարգի միջոցով տեղի է ունենում նրա բաշխումն ու վերաբաշխումը: Ձեռնարկությունների և տնտեսական կազմակերպությունների (միավորումների) դրամական ֆոնդերը իրենց նյութական արտահայտությամբ հանդես են գալիս որպես այս կամ այն ձեռնարկություններում ստեղծված համապետական կարիքների բավարարման նպատակով կենտրոնացվող և իրենց գործունեության ընդլայնման ու բանվոր-ծառայողների սոցիալական և տնտեսական զարգացման կարիքների համար ծախսվող միջոցներ: Ձեռնարկությունների և միավորումների ֆինանսները անբաժանելիորեն կապված են արտադրության և արտադրանքի իրացման ողջ գործընթացի հետ, անմիջականորեն ներազդում են արտադրական պրոցեսների վրա, նպաստում աշխատանքի արտադրողականության բարձրացմանը:

Պետական ձեռնարկությունների և տնտեսական կազմակերպությունների ֆինանսները կրում են ապակենտրոնացված բնույթ և սեփականության ձևից կախված ունեն առանձնահատկություններ: Այն, անկախ ձեռնարկության բնույթից, արտացոլվում է յուրաքանչյուր կոնկրետ օղակի առանձնացված դրամական միջոցներով (ֆոնդերով):

Հանրապետության ֆինանսական համակարգի անբաժան մաս է կազմում *կյանքի և ոչ կյանքի ապահովագրությունը*, որի նպատակն է տարերային աղետներից, դժբախտ պատահարներից իրավաբանական և ֆիզիկական անձանց հասցված նյութական վնասների փոխհատուցումը և դրանց ի հայտ գալու ռիսկի մեղմացումը:

Գույքային և անձնական ապահովագրության ֆոնդերի ձևավորման աղբյուրը հիմնականում ֆիզիկական և իրավաբանական անձանց վճարումներն են: Առանձին դեպքերում ապահովագրական նպատակներով գումարներ կարող են հատկացվել նաև պետական բյուջեից:

Ապահովագրական ֆոնդերում կուտակված դրամական միջոցներն ունեն խիստ նպատակային բնույթ և կարող են օգտագործվել միայն աղետների, դժբախտ դեպքերի և այլ անբարենպաստ երևույթների հետևանքով արդյունաբերության, կապի, տրանսպորտի, շինարարության, տնտեսության այլ ճյուղերի ձեռնարկություն-

ների, ընկերությունների և քաղաքացիների նյութական վնասը հատուցելու համար:

Ապահովագրությունը այսօր, կապված տնտեսական հարաբերությունների փոփոխությունների հետ, դադարել է պետության մենաշնորհ լինելուց: Բացի պետական մարմիններից ապահովագրական գործունեություն են ծավալում ոչ պետական կազմակերպություններ՝ ձեռնարկատիրական գործունեության սկզբունքով:

ՀՀ ֆինանսների համակարգի նոր ձևավորված իրավական ինստիտուտներից են *արտաբյուջետային նպատակային ֆոնդերը*, որոնք կյանքի կոչվեցին 90-ական թվականներից: Այս ֆոնդերի թվին են դասվում ՀՀ կենսաթոշակային, բնակչության զբաղվածության և այլ ֆոնդերը, որոնց նույնպես բնորոշ է նպատակային բնույթը:

Արտաբյուջետային նպատակային ֆոնդերի միջոցները կազմվում են իրավաբանական անձանց, իրավաբանական անձ չհանդիսացող տնտեսական սուբյեկտների և ֆիզիկական անձանց պարտադիր վճարումների և կամավոր մուծումների հաշվին: Այդ ֆոնդերը երբեմն նաև կարող են ձևավորվել համգանակության եղանակով, որը իր հերթին նպաստում է արտաբյուջետային ֆոնդերի ֆինանսական բազայի և պետության ֆինանսական ռեսուրսների ավելացմանը:

Որպես ՀՀ ֆինանսական համակարգի տարր՝ *պետական վարկը* իրենից ներկայացնում է հատուկ ֆինանսական հարաբերությունների մի բնագավառ, որտեղ որպես փոխառու հանդես է գալիս պետությունը, իսկ վարկատու՝ իրավաբանական անձ հանդիսացող կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող տնտեսավարման սուբյեկտները, արտասահմանյան պետությունները, միջազգային ֆինանսավարկային կազմակերպությունները և բնակչությունը, որոնք իրենց ժամանակավոր ազատ ֆինանսական միջոցները կամավոր տրամադրում են պետությանը: Պետությունը հանդես է գալիս որպես փոխառու, որի հետևանքով էլ առաջանում է պետական ներքին ու արտաքին պարտքը:

Բանկային վարկը նույնպես տնտեսական հարաբերությունների համակարգի բաղկացուցիչներից է: Բանկերը իրենց սեփական, տնտեսավարողների և բնակչության ժամանակավորապես ազատ դրամական միջոցների ներգրավումով ձևավորած վարկային ռեսուրսների հաշվին, վերադարձելիության և փոխհատուցման պայմանով վարկեր են տալիս ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձանց, նրանց արտադրական, սոցիալական և այլ կարիքների բավարարման համար:

Բանկային համակարգի վերակառուցման հետևանքով հանրապետությունում այսօր վարկավորում իրականացնում են ինչպես

պետական, այնպես էլ առևտրային, կոոպերատիվ և սեփականության այլ ձևերի վրա հիմնված վարկային ոչ պետական հաստատությունները:

§ 3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱԳՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Պետության խնդիրների կատարումը պետական յուրաքանչյուր մարմնից պահանջում է որոշակի աշխատանք՝ կապված ֆինանսների օգտագործման հետ:

Ֆինանսական գործունեություն իրականացնող պետական մարմինները բաժանվում են երկու խմբի:

Առաջին խմբի մեջ են մտնում այն մարմինները, որոնք իրենց մյուս ֆունկցիաներին զուգահեռ իրականացնում են նաև ֆինանսական գործունեություն (Հանրապետության նախագահ, Ազգային ժողով, կառավարություն, նախարարություններ):

Երկրորդ խմբի մեջ են մտնում այն պետական մարմինները, որոնց համար ֆինանսական գործունեությունը հանդիսանում է հիմնականը:

Այդ մարմինները ստեղծվում են հատկապես ֆինանսական գործունեություն իրականացնելու համար և կազմում են պետության ֆինանսավարկային համակարգը (ֆինանսների և պետական եկամուտների նախարարություն, ՀՀ կենտրոնական բանկ և այլ մարմիններ):

Հայաստանի Հանրապետության օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը: Աժ, որպես հանրապետության միակ օրենսդիր մարմին, ընդունում է օրենքներ, որոնց նորմերով կարգավորվում են ֆինանսական գործունեության բնագավառի կարևորագույն հարաբերությունները (հարկային, վարկային, դրամաշրջանառության, արժույթային և այլն): Բացի օրենսդրական ֆունկցիայից, Ազգային ժողովի կարևորագույն ֆունկցիաներից է պետական բյուջեի հաստատումը և դրա կատարման վերահսկողությունը: Պետական բյուջեի քննարկման և հաստատման կարգը սահմանվում է օրենքով:

Ազգային ժողովը Հանրապետության նախագահի առաջարկությամբ նշանակում է կենտրոնական բանկի նախագահ և նրա տեղակալ:

ՀՀ նախագահը հրապարակում է հրամանագրեր և կարգադրու-

թյուններ, որոնք ենթակա են կատարման հանրապետության ամբողջ տարածքում:

Ֆինանսների ոլորտում հանրապետության նախագահի ընդունած հրամանագրերը և կարգադրությունները չեն կարող հակասել Սահմանադրությանը և օրենքներին: Նա նշանակում ու ազատում է վարչապետին և վերջինի առաջարկությամբ էլ նշանակում ու ազատում է կառավարության անդամներին (այդ թվում նաև՝ ֆինանսների նախարար):

Մի շարք երկրներում պետության ֆինանսական գործունեության իրականացմանը մասնակցում են նաև պետության ղեկավարին կից ֆինանսաբյուջետային վարչությունները կամ ծառայությունները¹:

Ֆինանսաբյուջետային ծառայությունների ֆինանսական գործունեությունը ընդհանուր գծերով հանգում է պետության համընդհանուր ֆինանսական գործունեության կենսագործմանը, որն արտահայտում է բյուջեի, հարկային քաղաքականության, ապահովագրական գործի, գնագոյացման, վարկավորման և դրամական շրջանառության գործունեության ուսումնասիրումը և որոնց արդյունքներով ընդհանրացվում ու կանխատեսումների ճանապարհով որոշվում են երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ուղղությունները:

Այս մարմինների կարգավիճակը հաստատող իրավական ակտերում սպառիչ թվարկված են այն խնդիրներն ու գործառույթները, որոնց կենսագործման նպատակով էլ դրանք ստեղծվել են: Այսպես, Ռուսաստանի Դաշնության նախագահի աշխատակազմում գործող ֆինանսաբյուջետային վարչությունը զբաղվում է ֆինանսավարկային խնդիրներին վերաբերող տեղեկատվության հավաքման և մշակման կանխատեսումներով, ֆինանսական ռեսուրսների պետական ծախսերի առաջնայնության որոշման, երկրի ֆինանսավարկային կարգավորման հիմնական ուղղությունների կապակցությամբ առաջարկությունների մշակման, ինչպես նաև գրավոր առաջարկություններ է ներկայացնում նախագահին՝ ֆինանսավարկային համակարգի կարգավորմանն ուղղված օրենքների, հրամանագրերի և կարգադրությունների նախագծերի վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանությունը իրականացնում է ՀՀ կառավարությունը՝ այն ընդհանուր իրավասության մարմին է: ՀՀ պետական բյուջեի կենսագործումը ապահովում է կառավարությունը:

Հանրապետությունում ֆինանսական գործունեությունը իրա-

¹ Ств' Положение о Контрольном управлении Президента РФ. Утверждено указом Президента РФ от 24 мая 1994г. (СЗ РФ, 1994 N5, ст. 402)

կամացմող հատուկ մարմինների համակարգում առանձնահատուկ է ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը, որի միջոցով պետական իշխանության և կառավարման բարձրագույն մարմինները տնօրինում են բյուջետային միջոցները, ղեկավարում երկրի ֆինանսական համակարգը և իրականացնում ժամանակի ֆինանսական քաղաքականությունը:

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության իրավական կարգավիճակի առանձնահատկությունները սահմանված են նրա կանոնադրությամբ: Ըստ գործող կանոնադրության, նրա խնդիրներն են ֆինանսների օգտագործումը նպատակամղելի հանրային արտադրության արդյունավետության բարձրացմանը, տնտեսության մեջ սոցիալական խնդիրների լավացմանը և հանրապետությունում ազգային եկամտի աճի բարելավմանը: Բնականաբար, որպեսզի կատարելագործվեն ձեռնարկությունների, կազմակերպությունների, հիմնարկների, գյուղացիական տնտեսությունների և ձեռներեցների պետության հետ ունեցած ֆինանսական փոխհարաբերությունները, ինչպես նաև միջոցառումներ է մշակում երկրի ֆինանսական միջոցների հեռանկարային աճի ապահովման ուղղությամբ:

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հիմնական խնդիրներից մեկն է սոցիալական ծրագրերին համապատասխան դրամական միջոցների կենտրոնացումն է, որը ուղղում է հանրապետության տնտեսության զարգացմանը, ժողովրդի նյութական և կուլտուրական մակարդակի հետագա բարձրացմանը, երկրի պաշտպանունակության ապահովմանը և անհրաժեշտ պետական ռեզերվները ստեղծմանը: Նախարարության կարևորագույն խնդիրներից է տնտեսագիտորեն հիմնավորված հաշվարկներով պլանավորել պետական բյուջեի եկամուտները ու ծախսերը, հետևել դրանց նպատակային ծախսումներին, միջոցառումներ անցկացնել պետական բյուջեում նախատեսվող բոլոր եկամուտների ժամանակին և լրիվ ստացման ու պետական բյուջեից հատկացվող միջոցների խնայողաբար և նպատակային ծախսման ապահովման ուղղությամբ: Հանրապետությունում ֆինանսների նախարարությունը վերահսկողություն է սահմանում ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների և ձեռներեցների կողմից պետական-ֆինանսական կարգապահության ապահովման և պետության առաջ ունեցած ֆինանսական պարտավորությունների կատարման և օրինականության պահպանման վրա:

Հանրապետությունում ֆինանսական համակարգի ստորին օղակի մարմիններ են քաղաքապետարանների և համայնքների ֆինանսական բաժինները, որոնք գտնվում են վերադաս ֆինանսական մարմինների և համայնքների ենթակայության տակ:

Համայնքային ֆինանսական բաժինը գլխավորում է վարիչը՝ Հիմնական ապարատը կազմված է բյուջետային տեսչությունից, պետական եկամուտների տեսչությունից և հաշվապահությունից: Զաղաքապետարանների և համայնքների ֆինանսական բաժինները, անմիջականորեն կապված լինելով ձեռնարկությունների ու կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հետ, մեծ աշխատանք են կատարում բյուջեի կազմելու, եկամուտները մոբիլիզացնելու և բյուջեի մուտքերն ապահովելու գործում:

Նրանք են հայտնաբերում արտադրության ռեզերվները, ստուգում խնայողության ռեզիմի պահպանումը, ապահովում կայուն ֆինանսական դրություն բոլոր տնտեսություններում և բյուջեի մշարումների ծրագրի կատարումը:

Համայնքային ֆինանսական բաժինները կազմակերպում են քննաչությունից տուրքերի գանձման աշխատանքը, վերահսկողություն են իրականացնում համայնքների տարածքում քննաչության վճարումների ընդունման մկատմամբ:

Ստորին օղակի ֆինանսական մարմինների աշխատանքի որակից է կախված ոչ միայն տեղական բյուջեների, այլև պետական բյուջեի հաջող կատարումը:

Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կազմի մեջ մտնող *գանձատների* իրավաբանությունը սահմանված է գործող օրենքներով, ՀՀ նախագահի հրամանագրերով, ինչպես նաև իրենց կանոնադրություններով: Այս մարմինների խնդիրն է պետության շրջանակներում իրականացնել բյուջետային միասնական քաղաքականություն, բյուջեի կատարման ընթացքում ապահովել եկամուտների և ծախսերի իրականացման արդյունավետությունը, նպատակ է պետական ծրագրերի ֆինանսավորման օպերատիվությունը, ուժեղացնել պետական ֆինանսական ռեսուրսների նպատակային ծախսումների վերաբերյալ ֆինանսական վերահսկողությունը:

Այս խնդիրների կենսագործումն ապահովելու նպատակով գանձատները օժտված են վերահսկողական և հարկադրանքի իրականացման լայն լիազորություններով:

Գանձատները իրավունք ունեն իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում պետական իշխանության և կառավարման մարմիններում, հիմնարկ-ձեռնարկություններում անցկացնել դրամական փաստաթղթերի և նախաինձշվման ստուգումներ, բանկային մարմիններից ստանալ հիմնարկ-ձեռնարկությունների հաշիվների և հատկապես բյուջետային և արտաբյուջետային միջոցների օգտագործման հետ կապված տեղեկանքներ: Բյուջետային և արտաբյուջետային միջոցների օգտագործման խախտումները հայտնաբերելիս իրավունք ունեն պահանջել ֆինանսահաշվային փաստա-

բղթեր, տնտեսավարող սուբյեկտների ղեկավարներին պարտավորեցնել անհապաղ վերացնելու տեղ գտած ֆինանսական խախտումները, դադարեցնելու խախտումներով կատարվող հաշվարկները: Չանձատների ղեկավարները իրավունք ունեն գրավոր կարգադրությունների միջոցով ֆինանսական խախտումները թույլ տված հիմնարկ-ձեռնարկություններից բռնագանձել այն բյուջետային և արտաբյուջետային գումարները, որոնք նպատակային չեն ծախսվել:

Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի բաղկացուցիչ մասն են կազմում վարկային մարմինները:

Վարկը այսօր դարձել է կենսական անհրաժեշտություն, այն կարևորագույն գործիքներից մեկը, որը ապահովում է ապրանքադրամական հարաբերությունների օրգանական ընդգրկումը էկոնոմիկայի կառավարման, նրա արդյունավետության բարձրացման մեխանիզմի մեջ:

Այսօր տնտեսության մեջ որակական նոր բնույթ է ստացել բանկային վարկավորումը: Հանրապետության կենտրոնական բանկը, որը մեր երկրի գլխավոր բանկն է, կազմակերպում և վերահսկում է տնտեսության վարկային ու հաշվարկային հարաբերությունները:

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի 1993 թվականին ընդունված «ՀՀ կենտրոնական բանկի մասին» և «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքներով սահմանվեց նոր բանկային համակարգ, որը ներառում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը, Հայաստանի Հանրապետության բանկերը, որոնք ըստ կազմակերպման կարգի կարող են ձևավորվել փայտտիրակային, կոոպերատիվ, բաժնետիրակային, օտարերկրյա և համատեղ մասնակցությամբ սկզբունքներով:

Գործող բանկային օրենսդրությամբ վարկային մարմինների թվին են դասվում նաև վերը հիշատակված բանկային մարմինների մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները:

Բանկային համակարգի ընդլայնման ուղղությամբ օրենսդրությունը սահմանափակումներ չի նախատեսում, ընդհակառակը խրախուսվում է նաև բանկային միությունների ստեղծումը, սակայն, ինչպես նշված է «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 4-րդ հոդվածում, բանկային միությունները չպետք է օգտագործվեն շուկայում մենատիրական դիրք գրավելու և բանկային գործում մրցակցությունը սահմանափակելու նպատակով:

Նոր վարկային օրենսդրությունը նախանշում է միայն բանկային համակարգի մեջ մտնող առանձին օղակների գործունեության նյակետային սկզբունքները՝ հիմք ընդունելով վերջինների գործունեության տնտեսական արդյունավետությունը:

Բանկային մարմինները այսօր գործում են լիազորությունների

որոշակի շրջանակներում, որը նրանց վերապահված է օրենսդրությամբ:

Գործող վարկային օրենսդրության ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ աճում է Կենտրոնական բանկի՝ որպես մեր երկրի գլխավոր բանկի դերը, որը միաժամանակ հանդիսանում է էմիսիոն և հաշվարկային կենտրոն:

Գործող բանկային օրենսդրության սկզբունքային առանձնահատկությունն այն է, որ Հայաստանի բանկերը իրենց գործունեության մեջ անկախ են օրենսդիր և գործադիր մարմիններից: Ըստ «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի առաջին հոդվածի, հանրապետությունում բանկերը ինքնուրույն են, պատասխանատու չեն Հայաստանի Հանրապետության կառավարության պարտավորությունների համար և, հակառակը, կառավարությունը պատասխանատվություն չի կրում բանկերի պարտավորությունների համար, բացի այն դեպքերից, երբ բանկը կամ կառավարությունը ստանձնում են այդպիսի պարտավորություններ:

Հայաստանի Հանրապետության բանկային գործունեության համալիր իրավական կարգավորումը արտացոլվում է 1996 թ. հաստատված «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ նոր օրենքում, որի առաջին հոդվածում ուղղակի ասվում է, որ «ՀՀ կենտրոնական բանկը իրավաբանական անձ է, որի միակ հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է»: Այն իրենից ներկայացնում է միասնական համակարգ, որը ներառում է գլխամասային գրասենյակը և տարածքային ստորաբաժանումները:

Տնտեսավարման ներկա պայմաններում հանրապետության բանկային օրենսդրության համար նորույթ է Կենտրոնական բանկի բացառիկ ինքնուրույնությունը և անկախությունը կառավարությունից:

Կենտրոնական բանկի համար այսպիսի իրավունքի նոր ռեժիմի սահմանումը բնավ չի խոսում այն մասին, որ վերջինս դուրս է պետական իշխանության և կառավարման բարձրագույն մարմինների տնտեսական համագործակցությունից, ընդհակառակը, Կենտրոնական բանկը մասնակցում է Կառավարության տնտեսական ծրագրերի մշակմանը և աջակցում է Կառավարության կողմից իրականացվող միջոցառումներին:

Գործող օրենսդրությամբ բանկը կառավարությանը կարող է մինչև մեկ տարի ժամանակով տրամադրել փոխառություններ բյուջեի եկամուտների 15 տոկոսի չափով, զննել կառավարության կողմից թողարկված արժեթղթերը, իրականացնել կառավարության բանկային սպասարկումը:

Բանկային նոր օրենսդրությունը երաշխավորում է Հանրա-

պետության կառավարության և Կենտրոնական բանկի համագործակցության նոր՝ այնպիսի գործունեության ոչորտ, ինչպիսին է դրամավարկային քաղաքականության մշակումը և իրականացումը:

Կենտրոնական բանկը այս նպատակով համագործակցում է հանրապետության ֆինանսների նախարարության և այլ գերատեսչությունների հետ, որոնց լիազորությունների մեջ մտնում է դրամավարկային, ֆինանսական և արժույթային քաղաքականության կենսագործումը:

ՀՀ Կենտրոնական բանկի առջև դրված խնդիրները ըստ իրավական գործունեության բովանդակության կարելի է դասակարգել երկու խմբի.

- ա) տնտեսա-կազմակերպչական,
- բ) վարկային:

Տնտեսա-կազմակերպչական խնդիրները Կենտրոնական բանկը իրականացնում է գործադիր, կարգադրիչ և վերահսկողական ֆունկցիաների միջոցով, որոնք հիմնականում դրսևորվում են դրամական էմիսիայի, դրամաշրջանառության կազմակերպման, դրամավարկային և արժույթային քաղաքականության մշակման և իրականացման և այլ պետական մարմինների բանկային սպասարկման կազմակերպման ձևերով:

Կենտրոնական բանկի հիմնական վերահսկողական ֆունկցիաները որոշակիորեն սահմանված են գործող օրենսդրությամբ, որոնց ընդհանուր բովանդակությունը հանգում է բանկային գործունեության և արտարժույթով բանկային գործառնություններ իրականացնելու արտոնագրերի տրամադրմանը, հանրապետության տարածքում գործող բանկերի, այլ ֆինանսավարկային կազմակերպությունների գործունեության հսկողությանը:

Կենտրոնական բանկի վերահսկիչ գործունեությունը ամրապնդված է ինչպես «ՀՀ կենտրոնական բանկի մասին» օրենքի 36-րդ, այնպես էլ «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի մի շարք հոդվածներում¹:

Ստուգումների արդյունքների հիման վրա իրավունք ունեն պարտադիր ցուցումներ տալու հայտնաբերված խախտումները վերացնելու, բանկը վերակազմավորելու կամ լուծարելու մասին:

Կենտրոնական բանկի բացառիկ վարկային խնդիրներն են բանկերի և այլ ֆինանսավարկային կազմակերպությունների, վարկատուների և ավանդատուների շահերի պաշտպանությունը՝ նրանց գործունեության կարգավորման ու վերհսկման միջոցով:

¹ Տե՛ս «ՀՀ բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 6-րդ և 7-րդ գլուխները:

Այսպիսով ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական գործունեություն իրականացնող պետական մարմինները կյանքի են կոչված ֆինանսարկարկական նորմերի կենսագործման միջոցով ապահովելու Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական, բյուջետային, հարկային և բանկային գործունեությունը հասարակական կյանքի բոլոր բնագավառներում:

Ֆինանսական գործունեություն իրականացնող պետական մարմինների համակարգում իրավական երկակի վիճակի առանձնահատկություններով, կազմակերպման կարգով, գործունեության ձևերով և մեթոդներով առանձնանում է ՀՀ պետական եկամուտների նախարարության կառուցվածքը:

Մեր հանրապետությունում այս կառույցը ստեղծվել է ՀՀ կառավարության 1991թ. հոկտեմբերի 2-ի «Գլխավոր պետական հարկային տեսչություն ստեղծելու մասին» թիվ 555 որոշմամբ: Սկզբնական շրջանում հարկային մարմինները ստեղծվեցին ՀՀ ֆինանսների նախարարության համակարգում, հետագայում առանձնացան որպես ինքնուրույն գործող կառավարման և հետաքննական մարմիններ՝ իրենց կառուցվածքում ունենալով օպերատիվ վարչություններ: Հանրապետության հարկային մարմինների համակարգի ստորին օղակներն են հանդիսանում տարածքային հարկային տեսչությունները, որոնց ապարատի ներքին կառուցվածքը պայմանավորված է հարկային վճարումների տեսակներով: Այսպես, տարածքային տեսչություններում գործում են ձեռնարկությունների, ֆիզիկական անձանց եկամուտներից գանձվող հարկերի բաժիններ, տեղական հարկերի գանձման բաժին և այլն:

Հարկային մարմինների գործունեության հիմնական ոլորտը տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ հարկային վերահսկողության իրականացումն է:

Այսօր ավելի քան երբևէ, հանրապետության պետական եկամուտների նախարարության մասին օրենսդրությունը կատարելագործման և համալրման մեծ կարիք ունի: Մինչև վերջ հստակեցված չի պետական եկամուտների նախարարության իրավական կարգավիճակը: Իրավական կարգավորման պահանջ առաջադրող այս հիմնահարցերը այսօր սահմանված են ՀՀ նախագահի 1994 թ. օգոստոսի մեկի ընդունած «Ձեռնարկություններում, հիմնարկություններում, կազմակերպություններում՝ ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» հրամանագրով, ինչպես նաև «Հարկերի և տուրքերի մասին» ՀՀ օրենքով և այլ օրենսդրական ակտերով, որոնք ժամանակի ինաստով ճիշտ չեն արտացոլում պետության և տնտեսավարող սուբյեկտների փոխհարաբերությունները պետական բյուջեի ձևավորման հարցում:

Գործող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերը ընդհանուր գծերով են սահմանում պետական այս մարմինների իրավական վիճակը, նրանց խնդիրները և ֆունկցիաները:

Պետական եկամտների նախարարության աշխատանքների կազմակերպումը հարկային օրենսդրության պահանջների ամբողջական կատարման առումով արդյունավետ և հստակ կլինի միայն «Հարկային ծառայության մասին» նոր օրենքի ընդունմամբ, որի տնտեսական նախադրյալները հանրապետությունում վաղուց հատուկապես են:

§ 4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԾԵՎԵՐԸ

Ֆինանսական գործունեություն իրականացնող պետական մարմինների իրավական վիճակը արտաքուլում է նրանց կողմից ընդունված իրավական ակտերում:

Իրավական հետևանքների տեսանկյունից ֆինանսական գործունեություն իրականացնող մարմինների աշխատանքը կարելի է բաժանել երկու խմբի

ա) իրավական

բ) ֆինանսական գործունեության ապահովման կազմակերպական-օժանդակ:

Ֆինանսական գործունեության իրավական ձևերը սկզբունքային նշանակություն ունեն բոլոր մարմինների համար և այսպիսի ֆունկցիայով օժտված են իշխանության համակարգի մեջ մտնող բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինները:

Ֆինանսաիրավական գրականության մեջ ընդհանուր ճանաչում ստացած տեսությունների համաձայն, ֆինանսաիրավական ակտերը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսների ոլորտում իրավական հետևանքներ պարունակող կանքի դրսևորումն են, որն արտացոլվում է իրավական ձևերով և պայմանավորված է այդ մարմիններին վերապահված իրավասությամբ:

Օժանդակ կազմակերպական գործունեությունը իր բնույթով իրավական չէ, վարքագծի համապարտադիր կանոններ չի սահմանում, սակայն, նպատակ է դրամական միջոցների հավաքագրման, բաշխման և օգտագործման պրոցեսների մեղմումն: Գործունեության այս ձևերը իրմնականում արտահայտվում են հրահանգչական բնույթի միջոցառումների կազմակերպմամբ (ժողովների և հավաքների կազմակերպում, ֆինանսական և հարկային օրենսդրության

ոլորտում պարզաբանումների անցկացում, տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսա-տնտեսական գործունեության արդյունքների և բյուջետային ֆինանսավորման ուղղությունների ամփոփում):

Պետական մարմինների գործունեության օժանդակ-կազմակերպական ձևերի միջոցով, կուտակված հարուստ փորձի և նյութերի հիման վրա պետական իշխանության և կառավարման մարմինները, օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում, կիրառում են ֆինանսական գործունեության իրավական ձևերը, որտեղ կոնկրետ իրենց արտահայտությունն են ստանում օրենսդիր և գործադիր մարմինների կանքի դրսևորման պետաիշխանական հատկանիշները

Պետության ֆինանսաիրավական գործունեությունը կյանքի է կոչում պետական մարմինների իրավաստեղծիչ ֆունկցիաների կիրառումը, որոնց շնորհիվ սահմանվում, փոփոխվում կամ դադարեցվում է ֆինանսաիրավական նորմերի գործունեությունը:

Պետության ֆինանսական գործունեության ոլորտում իրավական այս կամ այն ձևի կիրառումը մեծ մասամբ պայմանավորված է հասարակական շահերի տեսանկյունից իրավական կարգավորման ենթակա հիմնահարցերի բնույթով: Օրինակ ԳՀ պետական բյուջեն, որը ամրագրում է հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացումը, սահմանում է բյուջետային եկամտների աղբյուրները և ծախսերի ուղղությունները, հաստատվում և իրականացվում է օրենքի տեսքով:

Բյուջեից կատարվող ֆինանսավորման այլ պահանջները կարող են լուծվել իրավական մեկ այլ ձևի՝ որոշումների կարգով:

Ֆինանսական գործունեությունը արտացոլող իրավական ակտերը ըստ իրավական առանձնահատկությունների դասակարգվում են ըստ

ա) իրավական հատկանիշի,

բ) իրավական բնույթի:

Ինչպես իրավունքի ցանկացած ճյուղում, այսպես էլ այստեղ, ֆինանսաիրավական ակտերը իրենց ներհատուկ հատկանիշների շնորհիվ հանդես են գալիս նորմառիվ և անհատական իրավական ակտերի ձևով:

Նորմատիվային ֆինանսաիրավական ակտերը հանդես են գալիս իրավական նորմի տեսքով, վարքագծի համապարտադիր իրավական կանոններ են, կարգավորում են համասեռ հասարակական հարաբերություններ և կյանքի են կոչված գործելու տեղական ժամանակի համար: Գործնականում այս բնույթի ֆինանսաիրավական ակտերով սահմանվում են հարկային պարտավորությունները, սահ-

մանված պարտադիր վճարումների հաշվարկների կարգը, նախատեսված պետական ֆինանսական միջոցների ծախսման կարգը, ֆինանսական հսկողության իրականացումը և գործունեության այլ տեսակները:

Անհատական ֆինանսաիրավական ակտերը կյանքի են կոչվում կարգավորելու կոնկրետ ֆինանսական խնդիրներ: Կարող են հանդես գալ ինչպես նորմատիվային ակտերում պարունակվող ընդհանուր կանոնների դետալացված կամ անհատականացված վարքագծի համապարտադիր կիրառման ակտեր, այնպես էլ՝ որպես ինքնուրույն ֆինանսական հարաբերություններ կարգավորող իրավական նորմեր:

Չնայած իրավաբանական գրականության մեջ անհատական իրավական ակտերը որպես իրավաբանական փաստեր չեն ընդունվում, այնուամենայնիվ, ֆինանսաիրավական անհատական ակտերը ուղղված են դրամական միջոցների հավաքագրման, բաշխման և վերաբաշխման փուլերում ծագող հասարակական-ֆինանսական հարաբերությունների կարգավորմանը: Հետևաբար, կարգավորման առարկայի առանձնահատկություններից ելնելով, պետության կամքով, անհատական ֆինանսաիրավական ակտերի գործադրմամբ ֆինանսական գործունեության ոլորտում իրավահարաբերությունների սուբյեկտների փոխհարաբերություններում ծագում, փոփոխվում և դադարեցվում են համարժեք իրավական հարաբերություններ: Օրինակ, ՀՀ «Եկամտահարկի մասին» 01.12.1996թ. օրենքի 14 հ. համաձայն, ձեռնարկատիրական գործունեության գծով եկամտի չրացուցիչ աղբյուրի առաջացման դեպքում, մեկ ամիս հետո 5-օրյա ժամկետում հարկային տեսչությանը հայտարարագիր է ներկայացվում, որտեղ նշվում է գործունեության առաջին ամսվա փաստացի եկամտի չափը: Հայտարարագիրը սահմանված ժամկետներում ներկայացնելը նոր իրավական հարաբերությունների ծագման հիմք է հանդիսանում, քանի որ փոփոխման է ենթարկվում հարկի ծավալը, դրույքը, հարկվող եկամտի չափը, հետևաբար՝ հարկային տեսչության կողմից հարկի վճարման մասին հիշեցումը նոր բովանդակությամբ է համալրվում, որը և հիմք է տալիս դատելու, որ վերջինս ոչ թե հիմնական օրենքի կիրառմանը ուղղված անհատական ակտ է, այլ իրավաբանական նոր փաստ, որի ուժով դադարում են եկամտահարկի գանձման մասին նախորդ իրավունքները և պարտականությունները, կյանքի են կոչվում նորացված բնույթի հարկային իրավական հարաբերություններ: Դժվար չէ համոզվել, որ այս դեպքում անհատական ֆինանսաիրավական ակտը հանդես է գալիս ոչ որպես ֆինանսաիրավական նորմի կիրառման ակտ:

Ըստ իրավական բնույթի, ֆինանսավարկային ակտերը բաժանվում են

ա) օրենսդրական,

բ) ենթաօրենսդրական ակտերի, որի համար իրավական հիմք է հանդիսանում պետական մարմինների դասակարգման սկզբունքները՝ ըստ իշխանության իրականացման ձևերի, որոնք ամրագրված են ՀՀ Սահմանադրությամբ:

Օրենսդրական բնույթի ֆինանսաիրավական ակտերի թվին են դասվում Աժ կողմից ընդունած օրենքները և որոշումները, Հանրապետության նախագահի հրամանագրերը և կարգադրությունները:

Ենթաօրենսդրական ակտերը իրենց տեսակարար կշռով մեծ տեղ են զբաղեցնում ֆինանսաիրավական ակտերի շարքում, որոնք հատկապես ընդունվում են Հանրապետության կառավարության, նախարարությունների, պետական ֆինանսավարկային մարմինների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

Պետության ֆինանսական գործունեության իրավական յուրօրինակ ձևեր են *ֆինանսապլանային ակտերը*, որոնք իրենց բովանդակությամբ և կարգավորման առանձնահատկություններով տարբերվում են ցանկացած ֆինանսաիրավական ակտերից:

Ֆինանսապլանային ակտերը պրտահայտում են պետության ֆինանսական գործունեության ռազմավարությունը որոշակի տևական հատվածի համար: Պլանային ակտերը ուղղված են կոնկրետ մեծածավալ խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ դրամական ռեսուրսների հավաքագրմանը, բաշխմանը և վերաբաշխմանը: Պլանային ակտերը միաժամանակ հանդես են գալիս որպես պետական այս կամ այն մարմնին ուղղվող պարտադիր հանձնարարականներ:

Ֆինանսապլանային ակտերը բազմազան են: Սրանց թվին են դասվում հանրապետության հիմնական ֆինանսական պլանը, նախարարությունների, ձեռնարկությունների և տնտեսավարող կազմակերպությունների եկամուտների և ծախսերի ֆինանսական պլանները, բանկային մարմինների վարկային և դրամարկային պլանները, պետական և տեղական ինքնակառավարման նպատակային ֆոնդերի ֆինանսական պլանները և այլն:

Ֆինանսապլանային ակտերի հիմնական առանձնահատկությունն այն է, որ դրանք արտահայտվում են համապատասխան պետական մարմինների կողմից ընդունած իրավական ակտերի ձևով և իրենց կիրառման ընթացքում, իրավական հետևանքների տեսակետից, ապահովվում են պետական հարկադրանքի ուժով, որով և հավասարեցվում են ֆինանսաիրավական ակտերին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆ, ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ
ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ**

**§ 1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՅԻ
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ**

Հայաստանի Հանրապետության իրավագիտության ժամանակակից խնդիրներից է ֆինանսական իրավունքի առարկայի հասկացության լուսաբանումը: Կարևոր է, որ ուսումնասիրության ոլորտում առանձնացվի և իրավունքի տեսության դիրքերից հետազոտվի ֆինանսական իրավունքի առարկայի հասկացության հարցը հանրապետությունում ձևավորվող իրավունքի նոր համակարգում:

Նման խնդիրների լուծումը սերտորեն կապված է ֆինանսական իրավունքի բնագավառում իրավաբանների տեսական աշխատանքի արդյունքների հետ: Չնայած այսօր պետությունները ֆինանսների բնագավառում հարուստ փորձ են կուտակել, այնուամենայնիվ, ֆինանսների պետաիրավական կարգավորման ուղղությամբ դեռևս քիչ աշխատանք է տարվել:

Ֆինանսական իրավունք առարկայի հիմնահարցերի լուսաբանման արդյունավետության վրա, անտարակույս, բացասաբար է անդրադառնում նաև իրավունքի տեսության մի շարք հարցերի դեռևս ոչ բավարար մշակված լինելը: Դա, ամենից առաջ, վերաբերում է ՀՀ իրավունքի համակարգի հետ կապված հիմնախնդիրներին:

Մեր կողմից փորձ է արվում ֆինանսական իրավունքի վերաբերյալ տեսական և ուսումնական գրականության ուսումնասիրման հիման վրա, ելնելով արտադրության արդյունավետության բարձրացման պահանջներից, մասնակի վերլուծության ենթարկել ֆինանսական իրավունքի առարկայի հասկացության հարցը, նպատակ ունենալով ցույց տալ նրա տեղը հանրապետության իրավունքի ընդհանուր համակարգում:

ՀՀ ֆինանսական իրավունքի առարկայի ինքնուրույնությունը պայմանավորված է մի շարք գործոններով:

Առաջին, ֆինանսական իրավունքի առարկայի ինքնուրույնությունը բխում է ՀՀ Սահմանադրությունից, ՀՀ Ազգային ժողովի և կառավարության կողմից ընդունած օրենքներից և որոշումներից, որոնք ուղղված են հանրապետության համախմբված և պետական բյուջեի հաստատմանը և կատարման ստուգմանը, վարկային և հաշվարկային համակարգի կատարելագործմանը, հարկերի և բանկերի դերի հտազա բարձրացմանը:

Ֆինանսաիրավական հարաբերությունները կարգավորող նորմերի վերլուծությունը և հանրապետության Սահմանադրության և օրենսդրության պահանջներին դրանց համապատասխանեցնելը այսօր օրենսդրության կատարելագործման կարևոր խնդիրներից են:

Նման խնդիրների հաջող լուծումով է պայմանավորված ֆինանսական իրավունքի ինքնուրույնությունը: Արդյունավետ կլինի նաև վերանայել իրավունքի մի շարք համալիր ճյուղերի գոյության հարցը, որոնցում եղած իրավանորմերը, մի շարք այլ հարաբերությունների հետ միասին, կարգավորում են նաև հանրապետության ֆինանսական գործունեության ոլորտում ծավալվող հարաբերությունները:

Երկրորդ, ներկա ժամանակաշրջանում ավելի, քան երբևէ, աճում և ամրապնդվում է ֆինանսավարկային մարմինների համակարգը: Այն համալրվում է քաղաքական և մասնագիտական բարձր որակավորում ունեցող այնպիսի կադրերով, որոնք իրենց ամենօրյա գործունեության ընթացքում օժանդակում և ապահովում են ֆինանսական օրենսդրության էության ճիշտ ըմբռնումը և հասարակական կյանքում դրա անշեղ իրականացումը: Պետության ֆինանսական ապարատը կյանքի է կոչված իրականացնելու Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի և կառավարության ֆինանսական քաղաքականությունը: ՀՀ կառավարությունը հոգ է տանում ֆինանսական ապարատը նաև իրավաբան կադրերով համալրելու համար: Այդ ապարատում լայն հնարավորություն է ստեղծվում կադրերի ընտրության և ճիշտ տեղաբաշխման, պետության ֆինանսական գործունեության ընթացքում, ինչպես ֆինանսական կարգապահության ապահովման, այնպես էլ հանրապետության ֆինանսական օրենսդրության ամրապնդման համար: Հետևաբար, պետության ֆինանսական գործունեության ուսումնասիրությունը ևս ֆինանսական իրավունքի առարկայի հարցը դեռևս չլուծված խնդրի է վերածում անհրաժեշտություն առաջացնելով իրավունքի մեթոդոլոգիայի դիրքերից գիտականորեն իրավաբանական վերլուծության ենթարկել պետությունների ֆինանսական գործունեության հարուստ փորձը, վերջնական լուծում տալ այն հիմնախնդիրներին, որոնք տեղ են գտել ֆինանսական իրավունքի գիտության մեջ:

Երրորդ, ֆինանսական իրավունքի առարկայի ինքնուրույնության անհրաժեշտությունը բխում է նաև իրավունքի գարգացման և կատարելագործման անհրաժեշտությունից: ԴՅ պետական մարմինների կողմից հասարակության բազիսային հարաբերությունների վրա ներգործության միջոցների աճը հանգեցնում է իրավական հարաբերությունների ընդլայնմանը, որն իր հերթին հանրապետության իրավաստեղծ գործունեության ընդլայնման և կատարելագործման անհրաժեշտություն է առաջացնում: Ձևավորվող իրավունքի գարգացման ընթացքում երևան են գալիս նոր, բնութիցով առանձնահատուկ հասարակական հարաբերություններ, որոնք իրենց յուրահատուկ հասարակական հարաբերությունների կարգավորման իրավական նորմերով հանդես են գալիս որպես իրավունքի ինքնուրույն ճյուղեր:

Վերոհիշյալ միտքն ամբողջությամբ վերաբերում է նաև ֆինանսական իրավունքին, որտեղ հասարակական հարաբերությունների ռեալ գոյություն ունեցող համակցությունը պետական ֆինանսների բնագավառում այսօր այնքան է ընդլայնվել և բարդացել, որ ժայրահեղ անհրաժեշտություն է առաջացնում ֆինանսական իրավունքը ճանաչել որպես իրավունքի լիիրավ ինքնուրույն ճյուղ: Այսպիսով, մեր հանրապետությունում ֆինանսական իրավունքի ինքնուրույնության հարցը իրավունքի տեսության մեջ ոչ միայն ԴԴ ֆինանսական գործունեության պրակտիկայից բխող անհրաժեշտություն, այլև իրավունքի համակարգման կարևորագույն պահանջներից է:

Համաշխարհային իրավունքի տեսության ոլորտում կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ֆինանսական իրավունքի առարկայի հասկացության, ինչպես նաև իրավունքի համակարգում նրա գրաված տեղի հարցը իրավաբանական գրականության մեջ տեսական մեծ վեճերի առարկա են: Մեր խնդիրն է ֆինանսների ոլորտում ծավալվող հարաբերությունների հետազոտության միջոցով փորձել լուսաբանել ֆինանսական իրավունքի առարկայի հասկացությունը և այն սահմանազատել վարչական, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններից:

Այժմ ավելի, քան երբևէ, մեր երկրում ակտիվ աշխատանք է տարվում օրենսդրության կոդիֆիկացման ուղղությամբ: Այս կապակցությամբ կարևոր նշանակություն է ձեռք բերել իրավունքի համակարգի հետ կապված այնպիսի հարցերի ուսումնասիրությունը, ինչպիսիք են իրավունքի համակարգի միասնությունը, առանձին ճյուղերի բաժանումը և ներքին ճյուղային կառուցվածքին վերաբերող հարցերը: Իրավունքի մի խումբ տեսաբաններ ժամանակին գտնում էին, որ իրավունքի համակարգը կազմված է իրավունքի ճյուղային երկու՝

ա. իրավունքի հիմնական

բ. համալիր (կոմպլեքսային) խմբերից:

Իրավունքի հիմնական ճյուղը կազմում են պետական, վարչական, քաղաքացիական, քրեական իրավունքի ոլորտները: Իրավունքի համալիր ճյուղերը պարունակում են այնպիսի վարքագծի կանոններ, որոնք միաժամանակ վերաբերում են ինչպես իրավունքի հիմնական ճյուղերին, այնպես էլ, դրանցից գատ, ներքին կարգավորման տեսակետից ունեն միասնական առարկա: Իրավաբանական գրականության մեջ շատ հեղինակներ, պաշտպանելով կոմպլեքսային իրավունքի ճյուղի տեսությունը, նպատակ են հետապնդում հասնել իրավունքի գիտականորեն հիմնավորված համակարգմանը: Այսպիսի սխալ ընդհանրացման հետևանքով իրավունքի մի շարք տեսաբաններ, ժխտելով իրավունքի համալիր ճյուղերում առարկայական միասնության առկայությունը, իրավունքի ընդհանուր համակարգից անհիմն կերպով դուրս էին թողնում օբյեկտիվորեն գոյություն ունեցող համալիր մի շարք ճյուղերը, այդ թվում նաև Ֆինանսական իրավունքը¹:

Իրավաբանական գրականության մեջ համալիր իրավունքի ճյուղերի տեսությանը հարող մի խումբ իրավաբաններ չափից ավելի գերազանահատելով այդ ճյուղերի դերն իրավագիտության մեջ, արհեստականորեն բանավեճ սկսեցին նաև իրավագիտության եզրաբանության ասպարեզում՝ իրենց աշխատություններում օգտագործելով «համալիր ճյուղ», «համալիր իրավական ուսմունք» և այլ հասկացություններ: Ավելին, իրավագետների մի մասն էլ առանց տարբերության սահմանման, միանշանակ բովանդակություն հաղորդեցին «իրավունքի ճյուղ», «իրավունքի ուսմունք», «գիտական ուսմունք» հասկացություններին:

Այսպիսով, որքանով այս հսկացությունների իրավաբանական վերլուծությունը կարող է միայն մեթոդալոգիական բազա հանդիսանալ Ֆինանսական իրավունքի համար, հարկ ենք համարում, մի կողմ թողնել այդ հասկացությունների լուսաբանման հարցը և ԴԴ-ում գործող Ֆինանսական մարմինների կոնկրետ հարաբերությունների իրավիճակով հասնել Ֆինանսական իրավունքի առարկայի հասկացության, ինչպես նաև իրավունքի համակարգում նրա գրաված

¹ Ст'ю, Халфина Р.О. "К вопросу о предмете и системе финансового права" (Сборник "Вопросы советского административного и финансового права"). Изд-во АН СССР, М., 1952, Ровенский Е.А. "Основные вопросы теории советского финансового права", М., 1960. Братусь С.М. "Предмет и система советского гражданского права" М., 1960.

տեղի պարզաբանմանը:

Իհարկե, իրավաբանական գրականության մեջ բազմաթիվ փորձեր են արվել Ֆինանսական իրավունքի հասկացության սահմանման և իրավունքի համակարգում նրա գրաված տեղի հարցի կապակցությամբ: Բայց մեզ թվում է, որ մինչև այժմ եղած բոլոր փորձերը միակողմանի են, քանի որ Ֆինանսական իրավունքի հասկացության սահմանման, ինչպես նաև իրավունքի համակարգում նրա գրաված տեղի հետ կապված հարցերի ուսումնասիրման հիմքում մեծ մասամբ դրվել են միայն այն հասարակական հարաբերությունները, որոնք առաջանում էին ֆինանսական մարմինների գործունեության ոլորտում: Մինչդեռ ֆինանսական իրավունքի առարկա են կազմում ոչ միայն այն հասարակական հարաբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական մարմինների ամենօրյա գործունեության ոլորտում, այլև այն բոլոր հասարակական հարաբերությունները, որոնք ծագում են հանրապետության բոլոր պետական մարմինների ֆինանսական գործունեության ոլորտում և կրում են բյուջետային, հարկային, դրամական, վարկային, հաշվարկային բնույթ և այլն:

Ֆինանսական իրավունքի հասկացության, ինչպես նաև իրավունքի համակարգում նրա գրաված տեղի խնդրի տեսական վերլուծությունը, ինչպես արդեն նշել ենք, իրավունքի առարկայի, նրա ինքնուրույնության հարցը, որպես չլուծված տեսական ժառանգություն, իրավաբանների ուշադրությանն է արժանացել դեռևս 30-ական թվականներին, բայց այսօր էլ այն չի գտել իր լուծումը: Իրավաբանական գրականության մեջ բերված հարցի կապակցությամբ արտահայտված տեսակետները ռուս իրավաբանների երկար տարիների գիտական հետազոտությունների արդյունք են և ըստ էության այսօր ամուր հիմք են հանդիսանում այդ հարցի հետագա ուսումնասիրման համար:

Ֆինանսական իրավունքի առարկայի հասկացության հարցը իրավաբանական գրականության մեջ տրված է Է.Ա.Ռովինսկու, 1940թ. հրատարակած «ֆինանսական իրավունք» դասագրքում, ՍՍՄԿ ԳԱ իրավունքի ինստիտուտի «Սովետական սոցիալիստական իրավունքի սիստեմ» թեզիսներում, ինչպես նաև Է.Ա.Ռովինսկու «Սովետական ֆինանսական իրավունքի տեսության հիմնական հարցերը» և մի շարք այլ աշխատություններում: Այսպես, օրինակ՝ ըստ 1946թ. հրատարակված «ֆինանսական իրավունք» դասագրքի, ֆինանսական իրավունքը իրավանորմերի համակցություն է, որը կարգավորում է բյուջետային, հարկային, պետական վարկի և խնայողության, պետական ապահովագրության, դրամական համակարգի կազմակերպման և կարգավորման, ինչպես նաև ֆինանսական

հսկողության ոլորտներում ծագած հասարակական հարաբերությունները: Իհարկե, ֆինանսական իրավունքի հասկացության հարցի գնահատման վերջ բերված տեսանկյունից պետք է կիսել Ռ.Օ.Խալֆինայի այն կարծիքը, համաձայն որի 1946թ. ֆինանսական իրավունքի դասագրքում տրվող ֆինանսական իրավունքի հասկացությունը ոչ թե ըստ էության ֆինանսական իրավունքի բնորոշում է, այլև նրա առանձին ինստիտուտների, ինչպես նաև խորհրդային պետության ֆինանսական գործունեության առանձին ձևերի պարզ թվարկումն է:

Ակնհայտ է, որ ֆինանսական իրավունքի ինստիտուտների կամ պետության ֆինանսական գործունեության ձևերի մեխանիկական թվարկումը չի կարող փոխարինել ֆինանսական իրավունքի առարկային: Իրավունքի առարկայի բնորոշման մեջ (լինի ֆինանսական, թե իրավունքի մեկ այլ ճյուղ) պետք է տրվեն երևույթի առավել էական հատկանիշները, որոնցով նա տարբերվում է հարակից, բայց ոչ միասեռ երևույթներից: Այս բոլորով հանդերձ, իրավունքի առարկայի բնորոշումը պետք է ներառի նաև երևույթների բոլոր ընդհանուր կողմերը: Յետևաբար, վերջ բերված ֆինանսական իրավունքի հասկացության շարադրանքը ընդհանուր քիչ բան ունի նրա բնորոշման հետ: Դեռ ավելին, հիշատակված բնորոշման մեջ չի խոսվում պետական ծախսերի, պետական տուրքերի, հարկերի մասին, որոնք առանձին վերցրած կազմում են և պետք է կազմեն ֆինանսական իրավունքի առանձին սահմանակարգեր (ինստիտուտներ): Միաժամանակ, այդ դասագրքի հեղինակները, առանց վերապահման, ֆինանսաիրավական հարաբերությունների թվին են դասում այնպիսի իրավահարաբերություններ, որոնք առաջանում են խնայողության գործի, պետական ապահովագրության, կարճաժամկետ վարկերի և հաշվարկային համակարգի բնագավառներում: Մինչդեռ, օրինակ, խնայքանկի և ավանդապահի, պետական ապահովագրության մարմնի և ապահովագրվողի միջև առաջացած հասարակական հարաբերությունները կարգավորում են նաև այնպիսի իրավունքի ճյուղերով, ինչպիսիք են քաղաքացիական և աշխատանքային իրավունքները: Թվում է՝ ֆինանսական իրավունք հասկացության հարցը սահմանափակ վերլուծության է ենթարկված նաև 1949թ. ՍՍՄԿ ԳԱ իրավունքի ինստիտուտի կողմից հրատարակված «Պետության և իրավունքի տեսություն» դասագրքում: Համաձայն այդ գրքի հեղինակների տեսակետի, բյուջետաֆինանսական իրավունքը պետական մարմինների ֆինանսական գործունեությունը կարգավորող, պետական բյուջեն սահմանող, հարկման ենթակա միջոցները նախատեսող, ինչպես նաև պետական միջոցների ծախսման կարգը սահմանող իրավունքի մի ճյուղ է: Դատելով այս

բնորոշումից, չի կարելի համամիտ լինել այն կարծիքի հետ, թե «Ֆինանսական իրավունքը, կարգավորում է միայն պետական մարմինների գործունեությունը»: Ֆինանսական իրավունքը կարգավորում է ոչ միայն պետական մարմինների գործունեությունը, այլև այնպիսի ֆինանսաիրավական հարաբերություններ, որոնք ծագում են մի կողմից պետական մարմինների, մյուս կողմից՝ միավորումների, կոոպերատիվ, գյուղացիական, հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների միջև: Վիճելի է նաև վերոհիշյալ դասագրքում արժանավոր ֆինանսական իրավունքի անվանման հարցը, որտեղ խոսվում է «բյուջետաֆինանսական» իրավունքի մասին: Անշուշտ, պետական բյուջեն Ֆինանսական իրավունքի ամենածավալուն սահմանակարգերից (ինստիտուտներից) մեկն է, բայց դրան տարածական մեկնաբանում տալը և իրավունքի ճյուղը նույն իրավունքի ինստիտուտներից մեկի անունով կոչելն ամիմն է: Իրավաբանական գրականության մեջ ֆինանսական իրավունքի հասկացության կապակցությամբ մինչև օրս գոյություն ունեցող բնորոշումների շարքում ելակետային և յուրահաաուկ նշանակություն ունի 1940թ. ԱՄՂՄ ԳԱ իրավունքի ինստիտուտի կողմից հրատարակված «Սովետական սոցիալիստական իրավունքի սիստեմը» թեզիսներում տեղ գտած ֆինանսական իրավունքի հասկացությունը, որը, ըստ ամենայնի, ֆինանսական իրավունքի թերևս ամենից ավելի հաջող բնորոշումն է:

Ֆինանսական իրավունքը իրավունքի ճյուղ է, որը կարգավորում է այնպիսի հասարակական հարաբերություններ, որոնք ծագում են պետությանն դրամական միջոցների կուտակման և բաշխման գործընթացում այդ նպատակի համար կյանքի կոչված պետական մարմինների (ֆինանսական համակարգի) միջոցով: Այս բնորոշումը հիմնականում ճիշտ է արտահայտում ֆինանսական իրավունքի բովանդակությունը, այն հիմնավորմամբ, որ դրա հիմքում ընկած է մեկ միասնական չափանիշ, որով սահմանազատվում է իրավական կարգավորման առարկան:

Ֆինանսական իրավունքը ևս, ինչպես իրավունքի մյուս ճյուղերը, իրենից ներկայացնում է իրավանորմերի համակցություն, որն արտահայտում է ժողովրդի կամքը և ուղղված է հասարակության ու տվյալ պահին պետականության զարգացմանը ձեռնտու և շահավետ նպատակների իրականացմանը: Իհարկե, արդյունավետ չի կարելի համարել այն մոտեցումները, երբ ֆինանսական իրավունքի բնորոշման մեջ զգաճգործվում են իրավունքի ճյուղը բնորոշող այնպիսի ընդհանուր եզրույթներ, որոնք յուրահասուկ են իրավունքի հասկացությանն ընդհանրապես: Ընշտ կլինի իրավունքի կոնկրետ ճյուղի բնորոշման մեջ ցույց տալ հասարակական այն հարաբերություն-

ների առանձնահատկությունները, որոնց ամբողջությունը կազմում է այդ ճյուղի յուրահատուկ իրավական կարգավորման առարկան:

Այսպես, ֆինանսական իրավունքի բնորոշումը ենթադրում է, որ այստեղ պետք է խոսվի հասարակական այն հարաբերությունների մասին, որոնք ծագում են պետության կողմից դրամական միջոցների կուտակման և բաշխման գործընթացում:

Ֆինանսական իրավունքի նման բնորոշումը բավարար է, քանզի դրանից պարզ է դառնում հասարակական հարաբերությունների այն շրջանակը, որոնք կարգավորվում են ֆինանսական իրավունքի նորմերով: Ֆինանսական իրավունքի առարկայի հասկացության կապակցությամբ իրավաբանական գրականության մեջ գոյություն ունեցող տարակարծությունները, բնական է, չեն կարող իրենց ազդեցությունը չթողնել ուսումնական գրականության վրա: Այսպես, օրինակ Մ.Ա.Գուրվիչը դեռևս 1954թ. հրատարակած «Սովետական ֆինանսական իրավունք» դասագրքում գրում է. «Սովետական ֆինանսական իրավունքը, որպես իրավունքի ճյուղ, իրավական նորմերի համակցություն է, որի կողմից կարգավորվում են հասարակական այնպիսի հարաբերությունները, որոնք ծագում են սովետական պետության կողմից պլանային կարգով դրամական միջոցների կուտակման և բաշխման պրոցեսում ապահովելով տվյալ ժամանակի համար պետության կարևորագույն խնդիրների իրականացումը: Ֆինանսական իրավունքի հասկացության այլ ձևակերպման ենք հանդիպում 1961թ. «Սովետական ֆինանսական իրավունք» դասագրքում, որտեղ ասվում է. «Սովետական ֆինանսական իրավունքը, որպես իրավունքի ճյուղ, իրենից ներկայացնում է իրավական նորմերի համակցություն, որը կարգավորում է սովետական պետության խնդիրների և ֆունկցիաների իրականացումը՝ ուղղված կոնկրետ կառուցման գործին»: Ֆինանսական իրավունքի հասկացության հարցում այլ մոտեցում են ցուցաբերում 1967թ. հրատարակված ֆինանսական իրավունքի դասագրքի հեղինակները: Ըստ այդ հեղինակների, ֆինանսական իրավունքը կարելի է դիտել որպես իրավական նորմերի համակցություն, որոնց կողմից կարգավորվող հասարակական հարաբերությունները ծագում են խորհրդային պետության կողմից պլանային կարգով ազատ դրամական միջոցների կուտակման, բաշխման և օգտագործման գործընթացում ապահովելով խորհրդային պետության խնդիրների և ֆունկցիաների իրականացումը խորհրդային պետության զարգացման տվյալ ժամանակաշրջանում: Ինչպես երևում է շարադրվածից, ֆինանսական իրավունքի հասկացության բոլոր բնորոշումներն էլ, գրեթե առանց բացառության, համընկնում են:

Ֆինանսական իրավունքի առարկայի կապակցությամբ իրավա-

բանական գրականության մեջ գոյություն ունեցող տարակարծությունների ընդհանրացման հիման վրա կարելի է ասել, որ ֆինանսական իրավունքի կարգավորման առարկան ոչ թե ֆինանսաիրավական հարաբերություններն են, այլ պետական մարմինների ֆինանսական գործունեությունն է: Մեր կարծիքով, ֆինանսական իրավունքի առարկայի և պետական մարմինների ֆինանսական գործունեության նույնացումը հիմնավորված է այն պատճառաբանությամբ, որ ֆինանսաիրավական հարաբերությունները ոչ միայն բազիսային հարաբերություններ են, այլև մեծ մասամբ հանդես են գալիս որպես պետական մարմինների գործունեության դրսևորման յուրահատուկ ձևեր: կյանքի կոչելով այնպիսի իրավական նորմեր, որոնք բացառապես միայն կարգավորում են պետական մարմինների ֆինանսական գործունեության ոլորտում ծագած ֆինանսաիրավական հարաբերությունները:

Մյուս կողմից, եթե ընդունում ենք, որ պետության ֆինանսական գործունեությունը կարգավորվում է իրավական նորմերով, իսկ ֆինանսական իրավահարաբերություններն էլ պատկանում են հարաբերությունների այն խմբին, որոնք բացառապես գոյություն ունեն միայն իրավական հարաբերությունների ձևով, ապա կարելի է պնդել, որ ֆինանսաիրավական կարգավորման առարկա են հանդիսանում ոչ թե ֆինանսաիրավական հարաբերությունները, այլ պետական մարմինների ֆինանսական գործունեությունն ընդհանրապես:

Սակայն այն փաստը, որ ֆինանսական հարաբերությունները կապված են պետական մարմինների ֆինանսական գործունեության հետ, իսկ ֆինանսական գործունեությունն իր հերթին գործնականում դրսևորվում և ընթացք է ստանում իրավական ձևով, երբևէ և երբեք չի բացառում ֆինանսական հարաբերությունների անմիջական կարգավորման անհրաժեշտությունը: Ֆինանսական գործունեությունը հանդես է գալիս որպես պետական մարմինների, տնտեսական և հասարակական կազմակերպությունների օրինաչափ գործողություն, որը նպատակ է հետապնդում պլանային կարգով հավաքել և ըստ նպատակի բաշխել պետության դրամական միջոցները: Ինչպես պետական մարմինների և կազմակերպությունների ամեն մի գործունեություն, ֆինանսական գործունեությունը ևս իրավաբանական ձևակերպում ստացած սկզբունքների ամբողջությունն է, որոնք սահմանում են վերջինիս կազմակերպման կարգը, ֆինանսական գործունեություն իրականացնող մարմինների, պաշտոնատար անձանց իրավասությունների և լիազորությունների շրջանակը, սահմանում են ֆինանսական ապարատի ներքին կառուցվածքը, ինչպես նաև նրանց խնդիրներն ու ֆունկցիաները: Սակայն վերոհիշյալ

պետական մարմինների և կազմակերպությունների ֆինանսական գործունեության կարգավորումը դեռևս չի պարունակում այնպիսի իրավական նորմեր, որոնք նպատակ են հետապնդում կարգավորել ֆինանսաիրավական հարաբերությունները: Օրինակ, 73 Ֆինանսների նախարարության, համայնքային ինքնակառավարման մարմինների ֆինանսական բաժինների և վարչությունների կանոնադրությունները սահմանում են այս մարմինների խնդիրները, ֆունկցիաները, ինչպես նաև իրավասության շրջանակը, սակայն պետք է նկատել, որ քննարկվող կանոնադրություններում բացակայում են ֆինանսաիրավական ինստիտուտները կարգավորող նորմերը: Առանձին դեպքերում կարող է փոփոխություն մտցվել ֆինանսական հարաբերությունների ֆինանսաիրավական կարգավորման ձևերի ու եղանակների մեջ, բայց այդպիսի փոփոխությունները ոչնչով չեն ազդում այդ մարմինների լիազորությունների վրա: Հետևաբար, ֆինանսաիրավական հարաբերություններն այսօր ոչ թե պետական մարմինների ֆինանսական գործունեության, այլ մեր հանրապետության տնտեսվարման նոր ձևերի արմատավորման արդյունք են:

Այսպիսով, ֆինանսական հարաբերությունների ֆինանսաիրավական կարգավորման բովանդակությունը կազմում են ֆինանսական հարաբերությունները, իսկ ֆինանսական գործունեությունը, որպես համապատասխան մարմինների իրավաչափ գործողությունների համակցություն, ուղղված է ֆինանսական հարաբերությունների կազմակերպմանն ու իրականացմանը՝ այդպիսով նպաստելով պետության համապետական դրամական ֆոնդի գոյացմանը և նրա պլանաչափ օգտագործմանը:

Հետևաբար, 77 *ֆինանսական իրավունքը իրավանորմերի համակցություն է*, որը կարգավորում է պետական մարմինների, ինչպես նաև տնտեսական կազմակերպությունների ֆինանսական գործունեությունը, պայմանավորված է հասարակության կյանքի նյութական պայմաններով և ուղղված է պետության խնդիրների ու ֆունկցիաների իրականացմանը՝ զարգացման արդի փուլում: Ֆինանսական իրավունքի առարկայի հասկացության պարզաբանումից հետո անհրաժեշտություն է առաջանում ցույց տալ նաև նրա տեղը՝ իրավունքի համակարգում:

§2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՂԸ ՀՀ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ, ՆՐԱ ՍՈՒՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՊԸ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄՅՈՒՄ ԾՅՈՒՂԵՐԻ ՀԵՏ

Այսօրվա դրությամբ իրավաբանական գրականության մեջ դեռևս պատշաճ մշակում չի ստացել Հայաստանի Հանրապետության իրավունքի համակարգում ֆինանսական իրավունքի տեղի հարցը: Ժամանակին իրավաբանական գրականության մեջ արտահայտված տեսակետների համաձայն, ֆինանսական իրավունքի՝ իրավունքի համակարգում գրաված տեղի հարցերը լուսաբանելիս, մի քանի տեսությունների վերլուծության հիման վրա պարզ պատկերացում ստեղծելու նպատակով, ճիշտ ենք համարում տեսական ընդհանրացումը:

Այսպես, իրավագետների մի մասն այն կարծիքին են, որ ֆինանսական իրավունքը հանդես է գալիս որպես ինքնուրույն իրավունքի ճյուղ, իսկ երկրորդ խումբը գտնում է, որ ֆինանսական իրավունքը պայմանավորված է պետական, վարչական և քաղաքացիական իրավունքի նորմերով և սկզբունքներով:

Ֆինանսական իրավունքի մի շարք հիմնահարցեր վերջին տարիներին իրենց լուծումն են ստացել իրավաբանական գրականության մեջ: Իրավաբան հեղինակների մի մասը պաշտպանում է ժամանակին առաջ քաշած «կոմպլեքսային իրավունքի» տեսությունը, համաձայն որի ֆինանսական իրավունքը պետք է դիտել ոչ թե որպես իրավունքի ինքնուրույն ճյուղ, այլ որպես իրավունքի կոմպլեքսային ճյուղ, որը պարունակում է պետական, վարչական, ինչպես նաև քաղաքացիական իրավունքի նորմեր՝ կարգավորելով պետության գործունեության տարբեր կողմերը:

Իրավագետ Ի.Ա.Գուրևիչը, հակադրվելով ֆինանսական իրավունքը որպես իրավունքի ինքնուրույն ճյուղ ընդունող տեսության կողմնակիցներին, գրում է. «ֆինանսական իրավունքը որպես իրավունքի ինքնուրույն ճյուղի տեսության կողմնակիցների հիմնական սխալն այն է, որ վերջիններս անտեսում են ֆինանսական իրավափառաբերությունները կարգավորող նորմերի կոմպլեքսային բնույթը»:

Ի.Ա.Գուրևիչը իր կողմից առաջ քաշած տեսակետը հիմնավորելու համար վկայակոչում է այն փաստը, համաձայն որի «բյուջետային և հարկային իրավունքը համալրվում է պետական և վարչական իրավունքի նորմերից, իսկ կարծաժամկետ ֆինանսավորումը և հաշվարկները կատարվում են պետական բանկի միջոցով, որի

գործունեության ընթացքում ծագած իրավահարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական և վարչական իրավունքի նորմերով»: Այսպիսի ընդհանրացման միջոցով Գուրևիչը անում է այն հետևությունը, որ ֆինանսական իրավունքը, որպես իրավունքի ինքնուրույն ճյուղ գոյություն չունի. դա պարզապես կոմպլեքսային իրավունքի ճյուղի իրական օրինակ է:

Ֆինանսական իրավունքի առարկայի առկայության կապակցությամբ իրավաբանական գրականության մեջ գոյություն ունի նաև մեկ այլ տեսակետ, համաձայն որի՝ ֆինանսական իրավունքը հանդես է գալիս ոչ թե որպես իրավունքի ինքնուրույն ճյուղ, այլ իր էությանը վարչական իրավունքի մի մասն է: Այս տեսության ներկայացուցիչները վկայակոչում են Ս.Ա.Ստոնոգեցիկին կողմից 1940թ. հրատարակված վարչական իրավունքի դասագիրքը: Վերը հիշատակված փաստարկների մի մասը ժամանակի առունով թերևս ավելի հին են քան ֆինանսական իրավունքը՝ որպես իրավունքի ինքնուրույն ճյուղի ձևավորման տեսությունը. ուստի ֆինանսական իրավունքի կարգավորման մեթոդի իմաստը պարզաբանելու և ճիշտ ընկալելու համար նապատակահարմար է անդրադառնալ Մ.Դ.Շարգարոցկու և Օ.Ա.Իոֆեյի կողմից առաջ քաշված տեսություններին:

Այն պնդումը, որի համաձայն ֆինանսական իրավունքը չի կարող հանդիսանալ իրավունքի ինքնուրույն ճյուղ, քանի որ ամբողջովին հանպատրաստից օգտագործում է վարչական իրավունքի մեթոդը, ըստ վերը հիշատակված հեղինակների նույնպես հիմնավոր չի հնչում, քանզի պետության ֆինանսական գործունեությունը իրավական կարգավորում է ստանում ոչ միայն վարչական իրավունքի մեթոդով, այլև պետական, քաղաքացիական և իրավունքի այլ ճյուղերի մեթոդով: Հետևաբար, Մ.Դ.Շարգարոցկու և Օ.Ա.Իոֆեյի կողմից առաջ քաշված վարչական և ֆինանսական իրավունքի միասնության հարցը դեռևս որոշիչ չէ իրավունքի այդ երկու ճյուղերի նույնացման համար: Իրավաբանական գրականության մեջ իրավագետների մեկ այլ խումբ այն կարծիքն է պաշտպանում, որ ֆինանսական իրավունքը, որպես կոմպլեքսային իրավունքի ճյուղի դասական օրինակ, պարունակում է նաև պետիրավական նորմեր:

Պատշաճ հիմնավորումից զուրկ է նաև այս տեսությունը, քանի որ պետական իրավունքը միայն սահմանում է պետության ֆինանսական գործունեության հիմնական սկզբունքները, մինչդեռ ֆինանսական իրավունքը, հենվելով սահմանադրական նորմերի կողմից նախանշվող ելակետային դրույթների վրա, մեծ մասամբ այդ դրույթներն անմիջականորեն արտահայտում է իր նորմերում և, պետության ֆինանսական գործունեության ընթացքում դրսևորվող

ամեն մի կոնկրետ հարաբերության շրջանակում հանդես է գալիս որպես այդ հարաբերությունների իրավական կարգավորիչ:

Մեր կարծիքով ճիշտ են իրավունքի այն տեսաբանները, ովքեր ֆինանսական իրավունքը դիտում են որպես իրավունքի ինքնուրույն ճյուղ:

Այսպես, Գ.Ի.Պետրովը իր «Վարչական իրավունքի էությունը» մենագրության մեջ այն միտքն է զարգացնում, համաձայն որի հասարակական հարաբերությունները, որոնք ծագում են պետության կողմից դրամական միջոցների կուտակման և բաշխման գործընթացում, կազմում են պետաիրավական հարաբերությունների առանձին, իր էությամբ բոլորովին նոր հասարակական հարաբերությունների մի համակարգ: Հետևողականորեն զարգացնելով իր այս տեսակետը, Գ.Ի.Պետրովը հանգում է այն եզրակացության. որ վերը նշված հասարակական հարաբերությունները կարգավորող իրավունքի նորմերն իրենց ամբողջությամբ կազմում են հարաբերականորեն ինքնուրույն իրավունքի ճյուղ, և այդ հասարակական հարաբերությունները կարգավորող նորմերի համակցությունն էլ կազմում է Ֆինանսական իրավունքի առարկան: Պրոֆեսոր Ռ.Օ.Խալֆինան ընդգծում է, որ ելնելով Ֆինանսական իրավունքի կողմից կարգավորվող հասարակական հարաբերությունների օբյեկտիվ առանձնահատկություններից և ֆինանսական իրավունքի հանրորեն անհրաժեշտ բնույթից, այն պետք է դիտել որպես ինքնուրույն իրավունքի ճյուղ: Այսպիսով, շարադրված բոլոր տեսակետների և կարծիքների ընդհանրացումից կարող ենք ասել, որ ֆինանսական իրավունքը կարգավորում է գործունեության միայն մեկ ոլորտ, այն է՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսաիրավական գործունեությունը: Այս իսկ պատճառով, ֆինանսական իրավունքը չի կարելի նույնացնել կամ հակադրել պետական, վարչական կամ քաղաքացիական իրավունքի հետ:

Հետևաբար, ֆինանսական իրավունքը ՀՀ իրավունքի ինքնուրույն ճյուղ է և իր իրավական կարգավորման առարկայով տարբերվում է պետական ու վարչական իրավունքներից՝ կարգավորելով հասարակական այնպիսի հարաբերություններ, որոնք ծագում են Հայաստանի Հանրապետության պետական իշխանության և կառավարման տարբեր մարմինների ֆինանսական գործունեության ոլորտում և ներկա ժամանակահատվածում ձեռք են բերում կարևորագույն հասարակական և պետական նշանակություն:

§3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՔԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԱՐԲՅՈՒՐՆԵՐԸ

Պետության ֆինանսական գործունեությունը կարգավորող իրավական նորմերը ֆինանսական իրավունքի որպես միասնական ճյուղի շրջանակներում հանդես են գալիս խմբավորված իրավական ինստիտուտների տեսքով: Ֆինանսաիրավական ինստիտուտները ներքին կառուցվածքի տեսանկյունից փոխադարձ կապի և պայմանավորվածության մեջ գտնվող ֆինանսաիրավական նորմերի խումբ է, որը ֆինանսական իրավունքի ճյուղի համակարգում կազմում է համասեռ հարաբերությունների որոշակի շրջանակ:

Ֆինանսաիրավական ինստիտուտները կարգավորող իրավական նորմերի համակցությունն ունի օբյեկտիվ բնույթ: Այն մեծամասամբ պայմանավորված է կարգավորում պահանջող ֆինանսական հարաբերությունների բնույթից: Ֆինանսական նորմերը ըստ էության ոչ միայն արտահայտում են ֆինանսական հարաբերությունների ձևավորման ուղորտները և ակունքները, նրանց նպատակայնությունը, այլև ամենակապիվ ձևով ներագրում են նրանց վրա, սահմանում նրանց անհրաժեշտությունը և նպատակաուղղվածությունը:

ՀՀ ֆինանսական իրավունքի համակարգի, նրա նորմերի և ֆինանսաիրավական ինստիտուտների ձևավորման ու կառուցվածքի վրա մեծ ազդեցություն ունի պետության և նրա լիազոր մարմինների ֆինանսական գործընթացը:

ՀՀ ֆինանսական իրավունքի համակարգը ելնելով օբյեկտիվորեն գործող ֆինանսական-հասարակական հարաբերությունների առանձնահատկություններից կարելի է բաժանել ընդհանուր և հատուկ մասերի:

Ֆինանսական իրավունքի ընդհանուր մասի իրավական նորմերը ամրապնդում են ՀՀ ֆինանսական գործունեության ելակետային դրույթները, նրա խնդիրների իրականացման ձևերը և մեթոդները: Սահմանում են ֆինանսական վերահսկողության իրավական հիմքերը, ֆինանսական գործունեության մասնակիցների իրավահավասարությունը և շրջանակները:

ՀՀ ֆինանսական իրավունքի հատուկ մասը հանդես է գալիս առանձին ֆինանսա-իրավական ինստիտուտների միավորման տեսքով, որոնցից յուրաքանչյուրը առանձին վերցրած արտացոլվում է համասեռ ֆինանսական հարաբերությունների տեսքով, որոնք ի տարբերություն ընդհանուր մասի ունեն իրենց ներհատուկ նեղ, անհատական կարգավորման տեսակային օբյեկտներ, որոնք կար-

գավորվող օբյեկտների միատարրության հիման վրա երբեմն հանդես են գալիս որպես ֆինանսական իրավունքի հատուկ մասի բաժիններ:

Ֆինանսական իրավունքի համակարգի հատուկ մասի տեսքով հանդես են գալիս ՀՀ բյուջետային համակարգը, պետական արտաբյուջետային և տեղական ինքնակառավարման ֆոնդերը, պետական ձեռնարկությունների ֆինանսները, պետական վարկը, բանկային վարկավորումը և դրամական շրջանառությունը, պետական ծախսերը, պետության արժույթային գործառնությունները:

ՀՀ ֆինանսական իրավունքի համակարգի ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ մասի նորմերը արտահայտվում են ամենատարբեր նորմատիվ ակտերում, որոնք և հանդիսանում են ֆինանսական իրավունքի աղբյուրները: Ֆինանսական իրավունքի աղբյուրները բազմազան են: Վերջիններիս թվին են դասվում ներկայացուցչական, գործադիր-կարգադրիչ մարմինների, նախարարությունների և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունած իրավական ակտերը:

Ֆինանսական իրավունքի աղբյուրների շարքում առանձնանում է ՀՀ Սահմանադրությունը, որը սահմանում է հանրապետության նախագահի, Ազգային ժողովի, կառավարության, ինչպես նաև նախարարությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական գործունեության ելակետային սկզբունքները: Հանրապետության Սահմանադրությունը միաժամանակ անդամակցում է նաև հանրապետության, տեղական ինքնակառավարման մարմինների ինչպես բյուջետային իրավունքները, այնպես էլ սահմանում է բյուջետային գործընթացի միասնական փուլերը և սկզբունքները:

Այսօր ֆինանսական իրավունքի աղբյուրների շարքում ղեռն չկա միասնական կողի ֆիկացված օրենսգիրք, չնայած այդպիսիք սպասվում են հարկային և բյուջետային հարաբերությունների կարգավորման ոլորտում:

Ֆինանսական իրավունքի աղբյուրներ հանդիսանում են հանրապետության իրավունքի այնպիսի ճյուղերը ինչպիսիք են պետական, վարչական, քաղաքացիական և իրավունքի մյուս ճյուղերը: Օրինակ, ֆինանսական իրավունքի աղբյուր են հանդիսանում տեղական կառավարման, բանկերի, ձեռնարկությունների, ինչպես նաև բյուջետային իրավունքի մասին օրենքները:

Ֆինանսական իրավունքի աղբյուրների շարքում մեծ նշանակություն է ձեռք բերում ՀՀ նախագահի հրամանագրերը, որոնք ներկա շուկայական հարաբերությունների բնույթից ելնելով օպերատիվ կարգով ուղղվում են հատկապես հարկային, պետական ներքին պարտքի և պետության այլ ոլորտներում ֆինանսական գործունեության կարգավորմանը: Այդպիսի հրամանագրերի թվին են դասվում

հանրապետության նախագահի կողմից շահութահարկի, ակցիզային հարկերի մասին օրենքներում կատարված փոփոխությունները:

Հանրապետությունում ԱԺ կողմից ընդունված օրենքները իրենց բնույթով և բովանդակությամբ ամենաընդարձակ աղբյուրներն են որոնք միաժամանակ նոր լիցք և բովանդակություն են հաղորդում ֆինանսական նորմերին, բարձրացնելով նրանց դերը և ծառայողական նշանակությունը իրավունքի ընդհանուր ճյուղերի նորմերի համակարգում¹:

Ֆինանսական իրավունքի աղբյուրների շարքում իրենց տեսակարար կշռով աչքի են ընկնում ՀՀ կառավարության կողմից ընդունված իրավական ակտերը, որոնց մեծ մասը ունեն նորմատիվային բնույթ:

Ֆինանսական իրավունքի նորմ-աղբյուրներ են հանդիսանում նաև պետական կառավարման մարմինների նախարարությունների, գերատեսչությունների կողմից ընդունված ենթաօրենսդրական ակտերը: Պետական կառավարման մարմինների ընդունած ակտերի շարքում անհրաժեշտ է առանձնացնել ՀՀ ֆինանսների, պետական եկամուտների նախարարությունների, կենտրոնական բանկի կողմից ընդունած հրամանները, հրահանգները:

Վերջապես ֆինանսական իրավունքի աղբյուր են հանդիսանում ընկերությունների, պետական հիմնարկ-ձեռնարկությունների աշխատանքային կուլեկտիվների կողմից ընդունված իրավական ակտերը:

Այսպիսի աղբյուրների թվին է դասվում, օրինակ «Ընկերություններում շահույթի բաշխման մասին» կանոնները և այլն:

§ 4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՔԻ ՍԿԶԲՈՒՆԵՐՆԵՐԸ

Ֆինանսական իրավունքի սկզբունքներն արտացոլում են ֆինանսական իրավունքի որպես իրավունքի ինքնուրույն ճյուղի և նրա առանձին իրավական ինստիտուտների դրսևորման ելակետային դրույթներ, որոնք արտահայտում են ֆինանսական իրավունքի էական առանձնահատկությունները և հասարակական ու պետական կյանքի պահանջներին համապատասխան նրանց նպատակաուղղվածությունը:

Ֆինանսական իրավունքի սկզբունքների հարցում իրավաբանական գրականության մեջ միասնական տեսակետ գոյություն չունի:

Իրավագետների մի մասը այն կարծիքին է, որ սկզբունքները

¹ Տես՝ ԱԺ օրենքը «ՀՀ բյուջետային համակարգի մասին» (ՀՀ գործող օրենքների ժողովածու 1995-1999թ., գիրք «բ»), է. 1999:

հիմնականում ֆինանսաիրավական նորմերի միջոցով ամրապնդում և արտացոլում են պետության և հատկապես տեղական ինքնակառավարման մարմինների զուտ ֆինանսական գործունեությունը: Իրավագետների մյուս խմբի կարծիքով այն արտացոլում է ոչ միայն ֆինանսական, այլև պետության գործունեության բոլոր ձևերը և որպես գործունեություն իր արտացոլումը ստանում է ինչպես պետաիրավական, այնպես էլ հիմնականում ֆինանսաիրավական նորմերի միջոցով:

Ֆինանսական իրավունքի սկզբունքները հիմնադրույթների տեսքով ամրապնդված է ԳՀ Սահմանադրությամբ:

Հանրապետության ֆինանսական գործունեության սահմանադրական ամրապնդման հիմնադրույթի սկզբունքների թվին են դասվում միասնական ֆինանսական քաղաքականության և դրամական, սոցիալական նպատակաուղղվածության, պլանայնության, հարաբերությունների օրինականության, օենսդիր և զործադիր իշխանությունների տարանջատման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման և քաղաքացիների պետական ֆինանսական գործունեությանը ինքնուրույն մասնակցելու սկզբունքները:

Հանրապետության սահմանադրության 76,77 և 89 հոդվածները հանձնին ԱԺ և կառավարությանը վերապահած լիազորությունների երկրի տարածքում ապահովում են միասնական ֆինանսական քաղաքականություն պետական բյուջեի, ֆինանսա-տնտեսական, վարկային, հարկային, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման ոլորտում: Դրամական էմիսիայի իրավունքը բացառապես վերապահված է հանրապետության կենտրոնական բանկին, որը և սահմանում է դրամական համակարգը ու վերահսկում դրամական շրջանառությունը:

Սոցիալական նպատակաուղղվածության սկզբունքը իր էությամբ կազմում է ֆինանսական իրավունքի սկզբունքների առանցքը: Նրա մենաշնորհը սկսվում է ԳՀ սահմանադրության առաջին հոդվածից, ըստ որի «Հայաստանի Հանրապետությունը սոցիալական պետություն է»:

Հայաստանի Հանրապետությունը որպես սոցիալական պետություն ներքին և արտաքին քաղաքականությունը ուղղված է նրա քաղաքացիների համար արժանապատիվ կյանքի պայմանների ստեղծմանը, քաղաքացու, անհատի ազատ և բազմակողմանի զարգացմանը:

Սոցիալական նպատակաուղղվածության սկզբունքը արտահայտվում է հանրապետության սահմանադրությամբ քաղաքացիներին վերապահած այնպիսի իրավունքներով, ինչպիսիք են

աշխատանքի ազատ ընտրության, առողջության պահպանման, ծերության, հաշմանդամության, հիվանդության և սոցիալական ապահովության իրավունքը, որոնց գործնական իրականացման նպատակով պետությունը ֆինանսական գործունեության ճանապարհով ձևավորում է համապատասխան դրամական ֆոնդեր և այն նպատակաուղղված ձևով ուղղում քաղաքացիների սոցիալական պահանջների բավարարմանը:

Ֆինանսական իրավունքի հանրաճանաչ մյուս սկզբունքը *Ֆինանսական գործունեության իրականացման պլանայնությունն է*, որը արտահայտվում է հանրապետական և տեղական նշանակության տնտեսական և սոցիալական զարգացման ծրագրերում և պլաններում առաջ քաշված դրամական միջոցների հավաքագրման, բաշխման և վերաբաշխման գործընթացում:

Պլանայնության սկզբունքը անկախ սեփականության ձևից լայնորեն կիրառում են գրեթե բոլոր տնտեսավարող սուբյեկտները իրենց հաշվեկշիռները նախապատրաստելիս:

Պլանայնության սկզբունքը ուղղակի և անմիջական արտացոլում է ստանում հանրապետության և համայնքային բյուջեները ձևավորելիս: Այս սկզբունքը ունի սահմանադրական ամրապնդում, համաձայն որի ԳՀ կառավարությունը, Ազգային ժողովի հաստատման և ներկայացվում պետական բյուջեի նախագիծը, ապահովում բյուջեի կատարումը:

Շուկայական հարաբերությունների պայմաններում պլանայնության սկզբունքը, կապված աշխատանքի նկատմամ ձևավորվող հասարակական առաջարկից և պահանջարկից, վերափոխվում է տնտեսական ֆունկցիայի՝ արձագանքելով արժեքի օրենքին, արտահայտելով ապրանքի միավորի արտադրության վրա ծախսված հասարակական ճիշտ պլանավորված անհրաժեշտ աշխատանքը և շուկայում դրսևորվում է որպես ապրանքափոխանակության և մատուցված ծառայությունների արժեքային արտահայտությունը:

Շուկայական հարաբերությունների բնույթից կախված՝ պլանավորման սկզբունքը նպաստում է ապրանքային արտադրության տեսականու ճիշտ և տևական ժամանակի համար կանխորոշումը:

Պլանայնության սկզբունքը լայնորեն կիրառվում է հասարակական կյանքի և արտադրության բոլոր ոլորտներում, հատկապես հանրապետությունում Ֆինանսների և դրամական շրջանառության կազմակերպման պրոցեսում, որի գործադրման արդյունքների հիման վրա կազմվում է հանրապետության ֆինանսների ամփոփ հաշվեկշիռը:

Ֆինանսական իրավունքի որպես իրավունքի ճյուղի էությունը դրսևորվում է պետության կողմից իրականացվող *ֆինանսական*

գործունեության հրապարակայնությամբ, որը թափանցելի է, գտնվում է ազգաբնակչության անմիջական հսկողության ներքո և հիմնականում իրականացվում է նրա մասնակցությամբ: Այս սկզբունքի արտահայտման իրական պատկերն այն է, որ օրենսդիր և գործադիր մարմինների կողմից ընդունված յուրաքանչյուր իրավական ակտ նախաձեռնողի վիճակից մինչև ընդունման ու հրապարակման պահը մամուլի ու լրատվական այլ ծառայությունների միջոցով հրամցվում է ազգաբնակչությանը: Հանրապետության ֆինանսական գործունեությունը արտացոլող այն իրավական ակտերը, որոնք հատկապես շոշափում են հանրապետության քաղաքացիների շահերը, նախապես դրվում են համաժողովրդական քննարկուների: Այսպիսով իրավական ակտերի թվին են դասվում հիմնարկ-ծեռնարկությունների ֆինասական հաշվեկշիռները, սոցիալական ապահովագրության և ապահովությանը վերաբերող իրավական ակտերը և հատկապես պետական բյուջեն:

Հանրապետության ֆինասական իրավունքի էությունը արտահայտվում է ինչպես իրավաբանական անձանց, այնպես էլ քաղաքացիների կողմից *ֆինասական գործունեության ընթացքում օրինականության պահանջների անթերի կատարմամբ:*

Օրինականության սկզբունքին ներկայացվող պահանջները հիմնականում արտացոլվում են բոլոր տնտեսավարող սուբյեկտների և քաղաքացիների կողմից պետական բյուջեին կատարվող վճարների ժամանակին և լրիվ ապահովումը, բանկային վարկերի նպատակային օգտագործումը և վերջիններիս ժամանակին մարումը, հիմնարկ-ծեռնարկությունների միջև սահմանված դրամական հաշվարկների կանոնները ճշգրիտ պահպանումը:

Ֆինասական իրավունքի մյուս սկզբունքները, որոնք վերաբերում են պետության ֆինասական գործունեության առանձին ոլորտներին, ունեն նաև նավոր բնույթ, ներհատուկ են ֆինանսաիրավական որոշակի իմաստիտուտների: Այդպիսի սկզբունքների թվին են դասվում պետության ֆինասական գործունեության գործընթացում օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև գործառույթների բաշխման հրապարակայնությունը, քաղաքացիների հանրապետության և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող ֆինասական գործունեության մասնակցությունը: Այս և մի շարք այլ սկզբունքներ ֆինասական իրավունքի ճյուղի համար չունեն համընդհանուր նշանակություն, հանդես են գալիս ֆինանսաիրավական նորմ-սկզբունքի տեսքով:

Իրավունքի համընդհանուր ճանաչում ստացած սկզբունքներից զատ ֆինանսական իրավունքը ունի նաև միայն իրեն նեյիատուկ ճյուղային սկզբունքներ, որոնք կիրառելի չեն իրավունքի մյուս

ճյուղերում:

Ճյուղային այսպիսի սկզբունքների թվին են դասվում պետության դրամական միջոցների ձևավորման, հավաքագրման և օգտագործման գործընթացը, որը իրականացվում է ֆինանսապահանջային ակտերի պահանջներին համապատասխան: Այս սկզբունքով ամենակտիվ ձևով գործում են հասարակական արտադրության ամենատարբեր ճյուղերը, որտեղ դրամական միջոցների ձևավորմանը, բաշխմանը և վերաբաշխմանը մասնակցում են ինչպես տնտեսավարող սուբյեկտները, օտարերկրյա տնտեսական մարմինները, այնպես էլ հանրապետության քաղաքացիները:

Որպես ճյուղային սկզբունքներ կարելի է առանձնացնել նաև դրամական միջոցների նպատակաուղղվածությունը, բաշխումը և վերաբաշխումը, տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական ինքնուրույնությունը, ֆինասական կարգապահությունը, ֆինանսաիրավական հարաբերությունների սուբյեկտների իրավունքների ու պարտականությունների իրացումը ֆինանսահարկային մարմինների հսկողության ներքո, ինչպես նաև ֆինանսաիրավական նորմերի խախտման համար ֆինանսաիրավական պատասխանատվության անխուսափելիությունը՝ դրամական սանկցիաների կիրառման հնարավոր բոլոր հետևանքներով:

§5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՐԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հանրապետության ֆինանսական իրավունքի՝ որպես իրավունքի ինքնուրույն ճյուղի գոյության փաստը վկայում և պայմանավորում է համանուն իրավական գիտության առկայությունը, որի ուսումնասիրության առարկան են կազմում ֆինանսական իրավունքի մասին ժամանակի ընթացքում ձևավորված և մշակված ուսմունքները, իրավունքի փիլիսոփայության տեսական ընդհանրացումները, ինչպես նաև ֆինանսական իրավունքը ամբողջությամբ վերցրած որպես իրավունքի ճյուղի:

Ֆինանսական իրավունքի գիտության ուսումնասիրության առանցք են կազմում ֆինանսաիրավական նորմերը և հատկապես գործող ֆինանսական օրենսդրությունը, որպիսիք ուղղված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, որոնք ծագում են հանրապետությունում ֆինանսական գործունեության ընթացքում, արտահայտում են օրենսդիր և գործադիր իշխանությունների, տնտեսական մարմինների և քաղաքացիների նպատա-

կամղված ֆինանսական գործառնությունների իրավական ձևերը և մեթոդները:

Ֆինանսական իրավունքի գիտության կողմից պատշաճ մշակում ստացած պետության ֆինանսական գործունեության իրավական ձևերը և մեթոդները հասարակական կյանքի տնտեսական և սոցիալական պահանջներին համապատասխան, որպես հանընդհանուր վարքագծի իրական կանոններ, ֆինանսավարկային լիազոր մարմինների կողմից կիրառվում են տնտեսական և շուկայական ամրապնդվող հարաբերությունների կայունությունը ապահովելու համար:

Ֆինանսական իրավունքի հիմնահարցերի գիտական մշակումը հասարակության ժամանակակից տնտեսական և սոցիալական զարգացման ծրագրերին համապատասխան առաջին հերթին մեծ ավանդ է պետության և իրավունքի արդիական խնդիրների լուծման և հատկապես ֆինանսական իրավունքի հայրենական տեսությունների ձևավորման և զարգացման գործում:

Հանրապետությունում ձևավորվող ֆինանսական իրավունքի գիտության նվաճումները տեսական-վերլուծական արժեքներից զատ, ունեն գործնական համակարգման իրավական ուժ: Գիտության ձեռքբերումների հիման վրա վերամշակվում են ֆինանսաիրավական նորմերի հասարակական հարաբերությունների վրա ներազդման ձևերը և եղանակները, կատարելագործվում է ֆինանսական օրենսդրությունը, այն աստիճանաբար ենթարկվում է կողիֆիկացման, որը ավելի ոյուրին է դարձնում պետության ֆինանսական գործունեության կարգավորումը և նպաստում հանրապետությունում ֆինանսական համակարգի ժամանակակից խնդիրներին և պահանջներին համապատասխան վերակառուցմանը:

Ֆինանսական իրավունքի գիտության նվաճումների և տեսական ընդհանրացումների մեթոդոլոգիական բազան հանդիսանում է մատերիալիստական դիալեկտիկայի մեթոդները, որոնց տեսական հետազոտությունների աղբյուրը գործնական կյանքն է, հասարակական հարաբերությունների իրավական ընկալումը:

Ժամանակակից ֆինանսաիրավական հիմնախնդիրների մշակման համար մեթոդաբանական ոչ պակաս արժեք են ներկայացնում նաև իրավունքի ընդհանուր տեսության կողմից կատարվող հետևությունները, որոնք իրենց հերթին բխում են իրավունքի ճյուղային գիտությունների նվաճումներից, ապահովում ֆինանսական իրավունքի գիտության փոխկապվածությունը, սահմանադրական, վարչական, քաղաքացիական, աշխատանքային և իրավունքի այլ ճյուղային գիտությունների հետ:

Ֆինանսական իրավունքի գիտությունը անբաժանելիորեն կապ-

ված է տնտեսագիտական այնպիսի գիտական ուսմունքների հետ, ինչպիսիք են «Ֆինանսները», «վարկը», «պետական քուլջեն», որոնց ուսումնասիրության առարկան են կազմում բազիսային տնտեսական հարաբերությունները: Դժվար չէ հանգել այն հետևությանը, որ ֆինանսների մասին գիտության առարկան ընդգծված սահմանազատվում է ֆինանսական իրավունքի գիտության առարկայից: Գիտության առարկան կազմում են հասարակական կյանքի տնտեսաբազիսային հարաբերությունները, որոնք չունեն իրավական բնույթ, հիմնականում ձևավորվում են դրամական միջոցների հասարակական ֆոնդերի գոյացման, բաշխման և օգտագործման պրոցեսում: Ուսումնասիրում են ֆինանսների զարգացման օրինաչափությունները, նրանց ֆունկցիաները՝ որպես տնտեսական կատեգորիա:

Հետևաբար ֆինանսաիրավական ուսումնասիրության առարկան հանդիսանում են տնտեսական հարաբերությունները, որոնք կարգավորվելով ֆինանսաիրավական նորմերի միջոցով ձեռք են բերում ֆինանսաիրավական հարաբերությունների բնույթ: Այսպիսով, ֆինանսների մասին գիտության առարկան խիստ ընդարձակ է, որը իրավունքի մյուս ճյուղերի համար համդիսանում է գիտական ուսումնասիրության հարուստ շտեմարան:

Ուսումնասիրությունները վկայում են, որ չնայած ֆինանսական իրավունքի գիտության համակարգը հիմնականում համընկնում է ֆինանսական իրավունքի որպես ճյուղի համակարգի հետ, սակայն կան էական տարբերություններ, որոնք բխում են հասարակական կյանքում նրանց զրաված տեղից և առանձնահատկություններից:

Ֆինանսական իրավունքի գիտության համակարգում նույաես իրավական ինստիտուտները դասակարգվում են ընդհանուր և հատուկ մասերի առանձնահատկություններով:

Ֆինանսական իրավունքի գիտության նվաճումների միջոցով է առանձնանում ֆինանսական իրավունքը՝ իրավունքի համընդհանուր համակարգում որպես ինքնուրույն ճյուղ իրեն ներհատուկ կարգավորման առարկայով և մեթոդներով: Գիտության շնորհիվ իրենց տեսական հիմնավորումն են ստանում ֆինանսաիրավական նորմերը և հարաբերությունները, ֆինանսաիրավական ինստիտուտների առկայությունը: Գիտության ուսումնասիրությունների հիման վրա ձևավորվում է վերջինների մշակման, կատարելագործման և զարգացման ուղղությունները:

Պատմական էքսկուրսները վկայում են, որ ֆինանսական իրավունքի հայրենական գիտությունը կապված ազգային պետականության զարգացման պատմական պրոցեսների հետ խղճուկ ժառանգություն ունի:

Հոկտեմբերյան հեղափոխության և ապա Հայաստանի Հանրա-

պետությունում 1920թ. խորհրդային կարգերի հաստատումից հետո առ երրորդ հանրապետության ստեղծումը ֆինանսական իրավունքի բնագավառում մայրենի լեզվով հայրենական գիտության մշակման բնագավառում այնքան քիչ և աղքատ խոսք է ասված, որ այսուհետ այս ոլորտին վերաբերվող ամեն մի գիտական հետազոտման փորձն անզամ անկախ մակարդակից արժանի է խրախուսանքի:

Խորհրդային իշխանության տարիներին և այսօր ֆինանսական իրավունք առարկան դասավանդվում է հանրապետության տարբեր բուհերում, որի ուսումնամեթոդական քազան են հանդիսանում ռուս և արտասահմանյան երկրների հանրաճանաչ իրավաբանների աշխատությունները, որոնց սովորում երբեմն աղոտ աչքի են զարմվում մայրենի լեզվով ՀՀ ֆինանսական գործունեությունն արտահայտող մի քանի աշխատություններ, որոնց կարիքը ունի ուսանողությունը¹:

Այսօր, ավելի քան երբևե, ժողովրդական Հայաստանի Հանրապետության իրավունքի համակարգի ձևավորման գործընթացում առավել ուշադրության է արժանի ֆինանսական իրավունքի և նրա գիտության ձևավորման պրոցեսներին պետության հոգածությունը, որպես արտադրատնտեսական բազմաբղետ հարաբերությունների իրավական կարգավորչի:

Ֆինանսական իրավունքի որպես իրավունքի ճյուղի դերը ներկա ժամանակաշրջանում կենսական անհրաժեշտության է վերածվել նաև այն պատճառով, որ ձևավորված անկախ հանրապետության ապագա գործունեությունը ուղղակի կախվածության մեջ է ներքին և արտաքին ֆինանսական ռեսուրսները ձևավորելու և ինքնուրույն տնօրինելու իրավունքից:

Հանրապետության սահմանադրությամբ ամրապնդված սեփականության ձևերը և գործող շուկայական հարաբերությունները, որոնց շրջանակներում ձևավորվում են ժամանակակից տնտեսական հարաբերությունները, որոնց մի մասը ունի դրամական-արժեքային բնույթ պետության գոյատևման համար հրամայաբար պահանջ են

առաջադրում որպեսզի դրամական ռեսուրսները, որոնք հիմնականում արտահայտվում են պետական բյուջեի և այլ դրամական ֆոնդերի տեսքով, կենտրոնացվեն հանրապետության բյուջեում, որը միակ իրական երաշխիքն է երկրում ձևավորված տեղական ինքնակառավարման համակարգը պահպանելու և վերջիններիս կայուն աշխատանքային գործունեությունն ապահովելու համար:

Այս և մի շարք այլ օբյեկտիվ տնտեսական հարաբերություններ պահանջ են ներկայացնում ֆինանսական իրավունքի գիտությանը իրավական կարգավորման նոր մեթոդներ և եղանակներ մշակել բյուջետային և հատկապես հարկային իրավահարաբերությունների կառուցվածքի պարզեցման, այս իրավահարաբերությունների մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հմնաստով:

Ֆինանսական իրավունքի գիտության առաջնահերթ նշանակության խնդիրների թվին են դասվում նաև հանրապետության ժամանակակից ֆինանսական գործունեության արդյունքների հիման վրա ֆինանսական իրավունքի ընդհանուր տեսական հիմնահարցերի մշակումը:

Այս հիմնախնդիրների թվին են դասվում ֆինանսական իրավունքի ֆունկցիաների, բյուջետային և հարկային հարաբերությունների ֆինանսաիրավական կարգավորման մեթոդների, ֆինանսական իրավահարաբերություններից բխող օրինաչափությունների և խրախուսման հարցերը:

Հանրապետության նոր իրավունքի համակարգի ձևավորման գործընթացում հատկապես տնտեսական իրավահարաբերությունները կարգավորող իրավունքի ճյուղերի ուսումնասիրություններին նվիրված առանձին իրավաբանների աշխատություններում փորձեր են կատարվում վկայակոչելու և հիմնավորելու «նոր» իրավունքի ճյուղեր, որպիսի անհաջող և անպտուղ փորձեր արվել են հատկապես ֆինանսական իրավունքից բյուջետային և հարկային իրավունքի ինստիտուտները իր ժամանակին տեսականորեն առանձնացնելու նպատակով:

Այսպիսի անհաջող փորձերից մեկն է 1999թ. հրատարակված «ՀՀ հարկային իրավունք» ձեռնարկը, որտեղ մի կողմ թողնելով իրավունքի և հատկապես ֆինանսական իրավունքի հիմնահարցերի մասին տեսությունները, իրավունքի ճյուղերի սահմանազատման հիմքերը և չափանիշները, իրավունքի տեսությանը հարևանցի ժանրությամբ, ձեռքի հետ, մեկ տպագրական էջի սահմաններում հարկային իրավունքը որպես ֆինանսական իրավունքի «հսկա» իրավական ինստիտուտի առանց իրավական հիմնավորման հեղինակը նպատակահարմար է համարում իր ցանկությամբ առանձնացնել և

¹ С.Д. Крылов, Бюджетное право СССР, федеральные основы. Л. 1928. М.М.Агапов, Основы банковского права, М. 1929. С.А.Кетляревский, Финансовое право, 1926, М.Н.Пискотин, Советское бюджетные право, М.1971. А.С.Ангелов, Финансовое право" а НР Булгария, София, 1967. Г.Шпигер, Валютное монополия и международные финансовые отношения, Берлин, 1963. С.А.Ровенский, Основные вопросы теории Советского финансового права, 1960. С.Д.Цыпкин, Доходы государственного бюджета СССР, М. 1973, Գ.Ա.Սուբխայան, Սովետական ֆինանսական իրավունք (ուսումնական ձեռնարկ), Ե.1987, Գ.Սուբխայան, Ֆինանսական գործունեության իրավական կարգավորումը ՀՀ-ում, Ե., «Տնտեսագետ», 2000:

հարկային իրավունքը հրատարակել ու քննարկել որպես իրավունքի ինքնուրույն ճյուղ¹:

Վերջապես Հանրապետության ֆինանսական իրավունքի գիտության հրատարակ խնդիրն է ֆինանսական օրենսդրության կողմից կացումը, որի նախադրյալները ըստ ֆինանսական իրավունքի առանձին իրավական ինստիտուտների՝ վերջին տաս տարիների ընթացքում ձևավորվել են և ֆինանսական օրենսգրքի պահանջ են առաջադրում:

Ֆինանսական իրավունքի գիտության և հատկապես օրենսդրության զարգացմանը և կատարելագործմանը մեծ նպաստ են բերում արտասահմանյան պետությունների ֆինանսական գործունեության ուսումնասիրման համար փորձի փոխանակման նպատակով կազմակերպված գիտաժողովները և Ֆինանսական օրենսդրության մշակմանը նվիրված արտասահմանյան կազմակերպությունների աշխատանքներին մասնակցելը:

Ֆինանսական իրավունքը որպես գիտության և իրավունքի ճյուղի ինչպես նախորդ պետականության, այնպես էլ ներկա ինքնիշխան հանրապետության ակադեմիական և գիտամանկավարժական հաստատությունների գիտահետազոտական ուսումնասիրությունների թեմատիկաներից աններելիորեն դուրս են մնացել:

Ժամանակը և հատկապես ֆինանսատնտեսական հարաբերությունները պահանջում են պատշաճ ուշադրություն հիմնարար իրավունքի այս ճյուղի նկատմամբ:

ԳԼՈՒԽ III

ՖԻՆԱՆՍԱ-ԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§1. ՖԻՆԱՆՍԱ-ԻՐԱՎԱԿԱՆ ՆԵՐՄԵՐԻ ՀԱՍԿԱԳՈՒ- ԹՅՈՒՆԸ, ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾԲԸ

Ֆինանսական իրավունք դասընթացի առանձնահատկությունների ըմբռնման համար ոչ պակաս կարևորություն ունեն մաս ֆինանսա-իրավական նորմերի, հարաբերությունների ճիշտ զննատուրը նրանց բովանդակության և իրավական առանձնահատկությունների իմաստով:

Ֆինանսա-իրավական նորմերը, իրավունքի մյուս ճյուղերի նորմերի նման, սահմանում են վարքագծի համապարտադիր որոշակի իրավական կանոններ: Նրանք աչքի են ընկնում իրենց կիրառման հատուկ ոլորտով:

Ֆինանսա-իրավական նորմերի ծառայական նշանակությունը պայմանավորված է պետության ֆինանսական գործունեության ընթացքում դրամական միջոցների հավաքման, բաշխման և օգտագործման պրոցեսում ծագած հասարակական հարաբերությունների կարգավորմամբ:

Ֆինանսա-իրավական նորմերի համահավաք բովանդակությունը ուղղված է.

1. Պետական եկամուտների սահմանմանը, նրանց կազմին և մոբիլիզացմանը (հարկային ճանապարհով):
2. Ֆինանսավորմանը, նրա ուղղություններին և նպատակայնությանը:
3. Հանրապետությունում բյուջետային և դրամական համակարգի, կարճատև և երկարատև վարկավորման, հաշվարկներին:
4. Արժեթղթերի և արժույթային գործառնության կարգավորմանը:

Ֆինանսա-իրավական նորմերին ներկայացվող այսպիսի ընդհանուր պահանջները հիմք ընդունելով՝ իրավաբանական գրականու-

¹ Տես. Ա.Աղասյան, Հայաստանի Հանրապետության հարկային իրավունք, Ե., 1999թ., էջ 3, 17:

թյան մեջ ֆինանսա-իրավական նորմերը, մի շարք հատկանիշների հիման վրա, ենթարկվում են որոշակի դասակարգման: Պայմանականորեն նորմերը դասակարգվում են՝

ա) ըստ ֆինանսա-իրավական հարաբերություններին մասնակիցներին վերապահված իրավունքների և պարտավորությունների (որպիսի դասակարգումը հաճախ ընդունված է համարել ըստ դիսպոզիցիայի):

բ) ըստ ֆինանսա-իրավական նորմում արտահայտված վարքագծի բնույթի, որը կարող է դրսևորվել իմպերատիվ կամ կատեգորիկ եղանակով կամ կարող է ունենալ երկընտրանքային բնույթ:

գ) ըստ ֆինանսա-իրավական նորմի բովանդակության, որոնք դրսևորվում են մատերիալ կամ պրոցեսուալ նորմերի տեսքով:

Ֆինանսա-իրավական նորմեր ըստ կարգավորվող հասարակական հարաբերությունների բովանդակության և այդ նորմերի դիսպոզիցիայի բնույթի կարելի է բաժանել հետևյալ խմբերի

1. Հանրապետությունում բյուջետային կառուցվածքը, բյուջեի կազմման, քննարկման, հաստատման և կատարման կարգը սահմանող նորմեր,
2. Հարկային իրավական նորմեր,
3. Կյանքի և ոչ կյանքի ապահովագրությունը կարգավորող նորմեր,
4. Վարկավորման, հաշվարկների և դրամական շրջանառության իրավական հիմքերը սահմանող նորմեր,
5. Հանրապետության արժեթղթերի և արժույթային գործառնությունները սահմանող նորմեր:

Ինչպես յուրաքանչյուր իրավական նորմի, այնպես էլ ֆինանսա-իրավական նորմի հիմքը դիսպոզիցիան է: Ֆինանսա-իրավական նորմերը ըստ դիսպոզիցիայի հատկանիշի բաժանվում են երեք խմբի՝ պարտավորեցնող, արգելող և լիազորող: Վերջին ժամանակները, հատկապես ֆինանսավարկային մարմինների գործունեության պրոցեսում, լայնորեն կիրառվում են տեսական և գործնական հիմնավորում ստացած խրախուսող բնույթի իրավական նորմերը, որոնք կիրառվում են կենտրոնական բանկի և բանկային համակարգի մյուս օղակների կողմից:

Պարտավորեցնող - Ֆինանսա-իրավական նորմերը իրավահարաբերությունների մասնակիցներին պարտավորեցնում են կատարել որոշակի գործողություններ, սահմանում են նրանց իրավունքները, նախաձեռնում պարտավորությունների շրջանակները: Օրինակ՝ «Հայաստանի հանրապետությունում հարկերի և տուրքերի մասին» օրենքի 15-րդ հոդ. սահմանում է, որ հարկատուները պարտավոր են «ժամանակին ու լրիվ վճարել օրենքով սահմանված հարկերը և

տուրքերը»:

Արգելող - Ֆինանսա-իրավական նորմերը իրավահարաբերությունների մասնակիցների համար սահմանում են պասիվ վարքագիծ, արգելում են որոշակի գործողությունների կատարումը, որոնք ուղղակիորեն կարող են առաջ բերել ֆինանսա-իրավական նորմի պահանջների խախտում իրենց բոլոր իրավական հետևանքներով:

Արգելող ֆինանսա-իրավական ներմերը իրենց տեսակարար կշռով վիճքը են, լայն կիրառում չունեն: Նորմերի այդ տեսակը արգելում է ֆինանսա-իրավական հարաբերությունների մասնակիցների ազատ գործելակերպը: Ֆինանսա-իրավական հարաբերությունները կարգավորելիս, ներկայումս, ֆինանսական օրենսդրության բնագավառում ընդլայնվում են պարտավորեցնող նորմերի կիրառման ոլորտները, որոնք շահերի տեսանկյունից ձեռնառու են կողմերի համար: Արգելող ֆինանսա-իրավական նորմերի սահմանափակ կիրառումը բացատրվում է նաև նրանով, որ վերջիններս խիստ սահմանափակում են իրավահարաբերությունների մասնակիցների թույլատրելի գործելակերպի սահմանները: Այս սկզբունքով են մշակված հարկային համակարգը սահմանող բոլոր իրավական նորմերը:

Լիազորող - Ֆինանսա-իրավական նորմերը սահմանում են իրավահարաբերությունների մասնակիցների ինքնուրույն գործելակերպի թույլատրելի սահմանները: Լիազոր ֆինանսաիրավական նորմերը ինքնուրույն որոշումներ ընդունելու հնարավորություններ են ընձեռնում իրավահարաբերությունների մասնակիցներին: Ելնելով ֆինանսա-իրավական նորմերի ընդհանուր առանձնահատկություններից, դժվար չէ նկատել, որ նորմերի այս տեսակին էլ ներհատուկ է օրենքի պահանջների կատարման կատեգորիկ սկզբունքը: Այսպես, գործող հարկային օրենսդրությամբ, անկախ սեփականության ձևից, արտադրությամբ զբաղվող կազմակերպությունները իրենց տարեկան շահույթը կարող են տնօրինել միայն պետական բյուջեի հանդեպ պարտադիր վճարները կատարելուց հետո:

Այսօր, շուկայական հարաբերությունները օբյեկտիվորեն ներազդում են պետության իրավաստեղծ գործունեության վրա՝ կանխակալ կողմնորոշելով հատկապես ֆինանսա-իրավական նորմերի բնույթը արտացոլող հարկային և տնտեսական հարաբերությունները: Լիազորող ֆինանսա-իրավական նորմերում պարտադիր պատվիրանների տեսքով հանդես են գալիս հասարակական հարաբերությունների վրա ներազդման տնտեսական միջոցներ, որոնք միաժամանակ նպատակ են հետապնդում բարձրացնել տնտեսավարող սուբյեկտների ինքնուրույնությունը, ազատ կողմնորոշվել, պետության հանդեպ ֆինանսական պարտավորությունների կա-

տարման աղբյուրների ընտրության հարցում:

Ֆինանսա-իրավական նորմերի համահավաք ուսումնասիրությանը ներքինից դժվար է նկատել, որ վերջիններս իրենց բովանդակությամբ կարող են հանդես գալ մատերիալ և պրոցեսուալ բնույթով:

Մատերիալ ֆինանսա-իրավական նորմերը, որպես կանոն, սահմանում են ֆինանսա-իրավական հարաբերությունների մասնակիցների օրենքով վերապահված իրավունքները և պարտականությունները: Այս նորմերը սահմանում են տնտեսվարող բոլոր տիպի սուբյեկտների դրամական պարտավորությունները, բանկային վարկավորման ռեսուրսները, հաշվարկների տեսակները, բյուջետային համակարգի կառուցվածքը, եկամուտների և ծախսերի ընդհանուր գումարը և այլն:

Պրոցեսուալ ֆինանսա-իրավական նորմերը, ըստ էության, ուղղված են մատերիալ նորմերի իրացմանը և սահմանում են թե ինչ ձևերով և եղանակներով ֆինանսա-իրավական հարաբերությունների մասնակիցները կարող են հասնել իրենց ֆինանսական իրավունքների իրականացմանը: Բավական է անդրադառնալ տարեկան բյուջեի ձևավորմանը, որպեսզի ակնհայտ դառնա վերջինիս կազմման, ընտրված և հաստատման փուլերում ազգային պետական կյանքի պահպանման նպատակով դրամական միջոցների ինչպես հավաքման, այնպես էլ բաշխման և օգտագործման պրոցեսում իշխանության և կառավարման մարմինների օրենքով վերապահված լիազորությունների կենսագործումը:

Ի տարբերություն իրավունքի շատ ճյուղերի ֆինանսական իրավունքի մատերիալ և պրոցեսուալ իրավանորմերը իրենց կրու միասնությանը հանդես են գալիս իրավունքի մեկ միասնական ճյուղի շրջանակներում և նույնիսկ կարող են արտահայտվել նրա սռանձին իրավական ինստիտուտներում չխախտելով ֆինանսական իրավունքի որպես ճյուղի ներքին կառուցվածքի միասնությունը: Այս կանոնից բացառություն է կազմում միայն «բյուջետային իրավունքը», որի պրոցեսուալ իրավական նորմերը իրենց բարձր նշանակությամբ կարող են հավակնել ապագայում ինքնուրույն պրոցեսուալ իրավունքի ճյուղի տեսքով հանդես գալու:

Ինչպես իրավունքի ամեն մի ճյուղի, այնպես էլ ֆինանսական իրավունքի նորմերը ըստ կառուցվածքի բաղկացած են երեք տարրերից՝ հիպոթեզից, դիսպոզիցիայից և սանկցիայից:

Ֆինանսա-իրավական նորմի հիպոթեզը արտահայտում է այն հանգամանքները, որոնց հետ նորմերը գույակցվելով իրավահարաբերության մասնակիցների համար առաջացնում, փոփոխում կամ դադարեցնում են իրավունքներ: Ֆինանսա-իրավական նորմերը իրենց հիպոթեզի կոնկրետ շարադրմամբ առանձնանում և տարբեր-

վում են իրավունքի մյուս ճյուղերի իրավանորմերից: Օրինակ ԳԳ «Եկամտահարկի մասին» օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է, որ եկամտահարկ են վճարում ԳԳ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք, որպես կատեգորիկ արտահայտված հանգամանք օրենքը պարտադիր է համարում տարվա մեջ 183 օր ԳԳ գտնվելը կամ կենսակամ շահ ունենալը:

Պրոպոզիցիան ֆինանսա-իրավական նորմի այն մասն է, որտեղ նկարագրվում է իրավահարաբերության մասնակցի վարքագծի կանոնները, որոնք կոնկրետ ֆինանսական իրավունքում ուղղված են դրամական միջոցների հավաքմանը, օգտագործմանը և բաշխմանը: Այլ բառերով, դիսպոզիցիան ֆինանսա-իրավական նորմի հիմքն է, որտեղ հատուկ շարադրված է իրավահարաբերության մասնակցի իրավունքները և պարտականությունները, որի պահանջները իմպերատիվ են և խախտումների դեպքում անհրաժեշտ կարող են վրա հասնել ֆինանս-իրավական պատասխանատվության տեսակներ:

Սանկցիան - ֆինանսա-իրավական նորմի այն բաղադրամասն է, որտեղ արտահայտված է նորմի խախտման իրավական հետևանքները հարկադրանքի և պատասխանատվության կիրառման տեսքով:

Ֆինանսա-իրավական նորմի սանկցիաները նույնպես գործում են որոշակի առանձնահատկություններով: Որպես կանոն, ֆինանսա-իրավական սանկցիաները ունեն դրամական բնույթ և որպես հարկադրանքի միջոցներ կիրառվում են իրավախախտում թույլ տված ֆիզիկական և իրավաբանական անձանց դրամական ֆունդերի և ունեցվածքի նկատմամբ: Օրինակ, պետական բյուջե մուտքագրվող ժամկետանց գումարների համար տուգանքների նշանակումը և տուժանքների գանձումը:

Ֆինանսական սանկցիաները կիրառվում են վարչա-իրավական կարգով և ունեն ինչպես իրավապահպան, այնպես էլ պատժողական բնույթ:

Ֆինանսական իրավունքի, որպես ինքնուրույն իրավունքի ճյուղի գործունեության անհրաժեշտությունը և որպես պետության ֆինանսական իշխանության օրենսդրական կարգավորում, գործող իրավունքի մյուս ճյուղերից սահմանազատվում է նաև ֆինանսա-իրավական նորմերի մեկ այլ էական առանձնահատկությամբ, որը արտահայտվում է այս նորմերի բաշխիչ և վերահսկողական ֆունկցիայով: Այս ֆունկցիաները կարող են արտահայտվել պետության ֆինանսական գործունեության ընթացքում ֆինանսա-իրավական հարաբերությունների սուբյեկտներին ինչպես աջակցություն ցուցաբերելու, այնպես էլ ժամանակի ընթացքում պետության համար ոչ շահավետ ֆինանսական գործունեության ձևերից ազատվելու եղա-

Նակով

Ֆինանսա-իրավական նորմ-սկզբունքների բաշխիչ ֆունկցիաների ամենօրյա գործնական կիրառումը արտահայտում է պետության ֆինանսական լիազոր մարմինների կողմից դրամական միջոցների հավաքման, բաշխման և օգտագործման գործընթացում, հատկապես այս պրոցեսը ցայտուն է դրսևորվում պետական բյուջեի ինչպես ամենամյա կազմման, քննարկման և կատարման, այնպես էլ նախորդ տարիների բյուջեի կատարման մասին հաշվետվությունները 33 ԱԺ քննարկելիս:

Ֆինանսա-իրավական նորմերի վերահսկողական ֆունկցիան արտահայտվում է պատության ֆինանսական գործունեության բոլոր ոլորտներում բյուջետային եկամուտների ձևավորման և ծախսերի նպատակային օգտագործման վերաբերյալ օրինականության նկատմամբ հսկողության իրականացմամբ, որը թե տնտեսական և թե իրավական առումով արտահայտվում է դրամով վերահսկողության իրականացմամբ: Եթե ժամանակին չի ձևավորվում բյուջեի եկամտային աղբյուրները, ապա վատ են աշխատում արդյունաբերությունը, առևտուրը և տնտեսության մյուս ճյուղերը:

Այլ խոսքով, ֆինանսա-իրավական նորմերը տնտեսության մեջ նպաստում են մշտական դրամական վերահսկողության իրականացմանը:

Ֆինանսա-իրավական նորմերին ներհատուկ է նաև արտադրության խթանման ֆունկցիան: Այս հատկապես աչքի է ընկնում հարկային քաղաքականություն իրականացնելիս: Բյուջեի եկամուտների հիմնական մասը ձևավորվում և հավաքվում է հարկային նորմերի միջոցով, որոնք բյուջետային իրավահարաբերություններում հանդես են գալիս տնտեսավարող սուբյեկտների շահույթի վերաբաշխման իրավական ձև, որը արտահայտում է պետության և կազմակերպությունների շահերի իրական փոխհարաբերությունները: Եթե ճիշտ են մշակված հարկային իրավանորմերը, ապա նպաստում են հիմնարկ-ձեռնարկությունների շահույթների ճիշտ բաշխմանը, խթանում են աշխատանքային կոլեկտիվների նյութական շահագրգռվածությունը արտադրողականության բարձրացման, տեխնոլոգիական պրոցեսների կատարելագործման, գիտատեխնիկական նորագույն մվաճումների ներդրումների ուղղությամբ:

Հակառակ բովանդակությամբ հարկային նորմերը բացասական ազդեցություն են ունենում արտադրա-տնտեսական հարաբերությունների ձևավորման, տնտեսավարող սուբյեկտների և պետական բյուջեի փոխհարաբերությունների կարգավորման ոլորտում:

Ներկա պայմաններում բյուջետային եկամուտների ժամանակին հավաքման անհնարինության հիմնական պատճառներից մեկն էլ

չհիմնավորված հարկային օրենսդրությունն է, որը բացասական ազդեցություն ունի արտադրության և ձեռնարկությունների շահույթի բաշխման պրոցեսի կարգավորման վրա:

Հարկային օրենսդրությունը մշակելիս ֆինանսա-իրավական նորմերի հիշյալ ֆունկցիաների անտեսումը այսօր առաջ է բերել պետական հարկերը վճարելուց խուսափելու մասսայական փորձեր: Պատճառն այն է, որ ձեռնարկությունների շահույթի զգալի մասը ուղղակի և անուղղակի ծանապարհներով մուտքագրվում է պետական բյուջե:

Ի տարբերություն, իրավունքի մյուս ճյուղերի իրավանորմերի ֆինանսական իրավունքի գործադրման պրոցեսում լայն կիրառում ունեն ֆինանսա-իրավական տեխնիկական նորմերը:

Ֆինանսա-իրավական տեխնիկական նորմերը արտադրության և բաշխման պրոցեսներում մարդկանց կողմից բնության առարկաների, աշխատանքային գործիքների, տարբեր տեխնիկական միջոցների նպատակահարմար վերաբերվելու համապարտադիր կանոններ են:

Ֆինանսա-իրավական տեխնիկական նորմերը հատկապես կարևոր նշանակություն ունեն ժամանակակից հարկային ոլորտում: Նրանց գործադրումը ներպետական կյանքի սահմաններից դուրս է եկել և այսօր ընդգրկում է նաև արտաքին տնտեսական, ֆինանսական, հաշվարկային և ներդրումային հարաբերությունները:

Արտադրության մեջ բարդ և բարձրորակ տեխնիկայի լայնորեն ներդրումը բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը, մարդկանց նյութական ապահովման մակարդակը:

Իրավական պետությունը ստիպված է մշտապես հոգալ նյութական բարիքների արտադրության և պետության ֆինանսական գործառույթների մեջ տեխնիկական միջոցների ներդրումը շահագրգռող գիտականորեն հիմնավորված ֆինանսա-իրավական տեխնիկական նորմերի սահմանումը:

Ֆինանսա-իրավական տեխնիկական նորմերի շարքին են դասվում պետական բյուջեի ինչպես եկամուտների, այնպես էլ բյուջեից կատարվող ծախսերի մուտքի և ելքի, դրամական գործառույթների կատարման փաստաթղթերը, ֆինանսա-վարկային մարմիններին ներկայացվող օպերատիվ-վիճակագրական, հաշվապահական հաշվառման հաշվետվությունները, դրամարկղային գործառույթությունների իրականացման կանոնները, հարկային տեսչության ներկայացվող եկամուտի և ծախսերի հաշվետվությունները, կապիտալ շինարարության և վերանորոգման նախագծային-նախահաշվային, ինչպես նաև հաշվարկների կատարման կարգը սահմանող փաստաթղթերը:

Ֆինանսա-տեխնիկական նորմերի առանձնահատկությունն է կա-

յանում է նրանում, որ սրանք հանդես են գալիս որպես տեխնիկական բովանդակությամբ սոցիալական (հաշվապահական) նորմեր:

Ֆինանսա-իրավական ասպեկտով մեծ արժեք ունեն այն ֆինանսա-տեխնիկական նորմերը, որոնք իրենց կիրառման ընթացքում իրավահարաբերությունների մասնակիցների համար սահմանում, փոփոխում կամ դադարեցնում են ֆինանսա-իրավական բնույթի իրավահարաբերություններ:

Ֆինանսատեխնիկական նորմերի այս էական առանձնահատկությունների հիման վրա դժվար չէ վերջիններս ըստ բովանդակության բաժանել խմբերի

1. Պետական բյուջեի եկամուտների և ծախսերի դասակարգման և դրամարկղային գործառնությունների միասնությունը ապահովող տեխնիկական նորմեր:

Բյուջետային եկամուտների և ծախսերը դասակարգումը և դրանց միասնական դրամարկղային կատարումը արտահայտում են ոչ միայն բյուջետային համասեռ եկամուտների ձևավորման աղբյուրները և նրանց դասակարգումը ըստ տնտեսական կարգի և համաման մեթոդների, որը դրսևորվում է որպես պարտադիր տեխնիկական կանոնների համակցություն, այլև հանդես են գալիս որպես ֆինանսական գործունեություն իրականացնող պետական մարմինների և պաշտոնատար անձանց իրավական այնպիսի պարտավորությունների համակարգ, որոնք ուղղված են բյուջե մուտքագրվող համասեռ քուրո եկամուտների պարտադիր խմբավորմանը մեկ միասնական եկամտի աղբյուրի անվան տակ: Օրինակ հարկեր ֆիզիկական և իրավաբանական անձանցից:

Դժվար չէ նկատել, որ բյուջետային եկամուտների և ծախսերի դասակարգումը ըստ բյուջետային համակարգի, իրավական կարգավորում է ստանում ֆինանսաիրավական տեխնիկական նորմերի հիշյալ խմբի կողմից:

2. Ֆինանսական գործառնությունների տեխնիկական փաստաթղթավորումը ապահովող նորմեր: Այս բնույթի ֆինանսատեխնիկական նորմերի պահանջները արտահայտվում են հարկային տեսչությունների հիշեցումների ձևերի և ռեկվիզիտների, բյուջետային հատկացումների, բանկային վարկավորման լիմիտների ինչպես նաև բյուջեից ծախսման նպատակով ֆինանսական միջոցներ ստանալու չեկերի մեջ:

Հարկի վճարման մասին հիշեցումը, օրինակ, ծնում է հարկային իրավահարաբերություն հարկատուի և հարկային մարմնի միջև: Հարկատուն ստանալով շահութահարկի վճարման մասին հիշեցումը պարտավոր է սահմանված ժամկետներում վճարել հարկը, հիշեցման պահանջների և վճարման ժամկետների խախտումը անվերա-

պահորեն առաջ են բերում օրենքով սահմանված պատասխանատվություն իր բոլոր իրավական հետևություններով:

3. Ֆինանսատեխնիկական նորմերի մի մասն էլ, հատկապես հարկային օրենսդրության բնագավառում, ուղղված են դրամական միջոցների ծախսերի չափաբաժիններին: Օրինակ ձեռնարկության, հիմնարկների վարչա-տնտեսական, սոցիալ-կուլտուրական ծախսերի համար սահմանվում են որոշակի չափեր: Այդպիսի ֆինանսատեխնիկական նորմերը իրավական իմաստով հանդես են գալիս որպես իրավաբանական փաստեր, որոնք առաջացնում են փոփոխում կամ դադարեցնում են ֆինանսական հարաբերությունները:

4. Վերջապես, ֆինանսատեխնիկական նորմերի մի զգալի մասը, որը արտահայտվում է պաշտոնական փաստաթղթերի, գրությունների, հաղորդումների, նամակների, ինչպես նաև հայցադիմումների մեջ վերաբերում է ֆինանսական իրավահարաբերությունների դադարեցմանը:

Ֆինանսատեխնիկական նորմերի այս խմբին են պատկանում, օրինակ, այն նորմերը, որոնք պաշտոնական գրությունների տեսքով արտահայտում են հարկային պարտավորությունների կատարումը, գործուղումների վերաբերյալ հաշվետվությունները կամ պետական շահերի պաշտպանության նպատակով հարկային մարմինների գույքի բռնագրավման մասին դատարաններին ներկայացվող հայցադիմումները:

Այսպիսով, պետության ֆինանսական գործունեության ոլորտում առանձնանում են միայն այն ֆինանսատեխնիկական նորմերը, որոնք անմիջականորեն կապված են ֆինանսաիրավական հարաբերությունների ծագման, փոփոխման և դադարեցման հետ:

§ 2. ՖԻՆԱՆՍԱԻՐԱՎԱԿԱՆ ՀՍՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՍԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ֆինանսական իրավունքի դասընթացի ամբողջական ըմբռնման իմաստով էական նշանակություն ունի նաև ֆինանսա-իրավական հարաբերությունների հասկացության, դասակարգման, ինչպես նաև իրավունքի այլ ճյուղերի կողմից կարգավորվող իրավահարաբերություններից սահմանազատման հարցերի պարզաբանումը: Ֆինանսա-իրավական հարաբերությունները, դրանք դրամական միջոցների հավաքման, բաշխման և վերաբաշխման պրոցեսում ծագող հասարակական հարաբերություններն են, որոնք կարգավորվում են

Ֆինանսական իրավունքի նորմերով:

Ֆինանսա-իրավական հարաբերությունների հիմնական առանձնահատկությունը կայանում է նրանում, որ վերջիններս ծագում են պետության կողմից դրամական միջոցների հավաքման, բաշխման և օգտագործման պրոցեսում:

Ֆինանսա-իրավական հարաբերությունների մյուս բոլոր առանձնահատկությունները ածանցվում են այս հիմնական առանձնահատկությունից: Ֆինանսա-իրավական հարաբերություններն իրենցից ներկայացնում են գույքային հարաբերությունների մի տարատեսակ, որոնք ծագում են դրամական հիմքի վրա: Դրանը մեծամասամբ այդ հարաբերությունների անմիջական օբյեկտն է: Այդ իմաստով փոքր ինչ առանձնացված են այն ֆինանսաիրավական հարաբերությունները, որոնք իրենք են ուղղված այլ հարաբերությունների կազմակերպմանը և պլանավորմանը: Դրանց թվին են պատկանում օրինակ, պետական բյուջեի, Կենտրոնական բանկի վարկային և դրամարկղաչին ծրագրերի և այլ ֆինանսական պլանների կազմման, քննարկման և հաստատման հետ կապված հարաբերությունները: Սակայն այս հարաբերություններն էլ իրենց վերջնական նպատակով ուղղված են դրամական միջոցների շարժման ապահովմանը: Համապատասխան պետական մարմնի կողմից բյուջեի կամ այլ ֆինանսական պլանի հաստատումը նրա կատարման պայմանն է, որի պրոցեսում տեղի է ունենում նախատեսված դրամական միջոցների հավաքագրումը և բաշխումը:

Ֆինանսական իրավական հարաբերությունների մյուս առանձնահատկությունը կայանում է նրանում, որ դրանք ոչ միայն դրամական, այլ նաև պետական-իշխանական, կազմակերպական բնույթի հարաբերություններ են:

Հայաստանի հանրապետության ֆինանսական գործունեությունը նրա պետական սուվերենության դրսևորման ձևերից մեկն է: Պետությունը, հասարակության շահերից ելնելով, հավաքում և բաշխում է դրամական միջոցները, տնօրինում է դրամական միջոցների համապետական կենտրոնական ֆոնդը, կազմակերպում է տնտեսության ճյուղերի, ձեռնարկությունների, կազմակերպությունների ֆինանսավորումը, կարգավորում է կոոպերատիվ, գյուղացիական տնտեսությունների և բնակչության կուտակումները: Պետության հիմնական հատկանիշներից մեկը՝ ֆինանսների առկայությունը մշտապես պահանջ են առաջադրում, որպեսզի ֆինանսա-իրավական հարաբերության կողմերից մեկը մշտապես հանդես գա պետությունը ամբողջությամբ վերցրած, հանձին նրա մարմինների:

Ֆինանսական գործունեություն անմիջականորեն իրականացնում են պետական իշխանության և պետական կառավարման հա-

մապատասխան մարմինները (հիմնականում ֆինանսա-վարկային մարմինները): Ֆինանսական մարմինները օժտված են պետական իշխանական լիազորություններով, նրանք իրավասու են հրատարակելու իրավական ակտեր, ապահովելու նրանց պահանջների իրականացումը և անհրաժեշտության դեպքում դրանց պահանջների կատարումն ապահովելու համար օգտագործելու պետական հարկադրանք: Պետական մարմնի իրավասության շրջանակներում արված ֆինանսական բնույթի կարգադրությունները անառարկելիորեն պետք է կատարվի նրա հասցեատերերի կողմից:

Ֆինանսա-իրավական հարաբերությունների մյուս կողմը կարող են հանդիսանալ տարբեր սուբյեկտներ: Պետական իշխանության և պետական կառավարման մարմինները, կազմակերպությունները, ձեռնարկությունները, հիմնարկները, գյուղացիական, կոոպերատիվ և հասարակական կազմակերպությունները, քաղաքացիները:

Բոլոր ֆինանսա-իրավական հարաբերությունները անհնարին են պետական գործունեությունից դուրս և միաժամանակ նրանք անխզելիորեն կապված են գույքային (դրամական) իրավահարաբերությունների հետ, հետևաբար ֆինանսական իրավական հարաբերությունները դրանք իշխանական գույքային հարաբերություններ են:

Վերջապես, ֆինանսա-իրավական հարաբերությունների մյուս իրավական առանձնահատկությունն այն է, որ սրանք առաջանում են, փոփոխվում կամ դադարեցվում են միայն օրենքի հիման վրա: Սա նշանակում է, որ ֆինանսա-իրավական հարաբերությունների սուբյեկտները կամային, իրենց նախաձեռնությամբ չեն կարող իրենց համար սահմանել, փոփոխել կամ դադարեցնել ֆինանսա-իրավական բնույթի իրավահարաբերություններ:

Ֆինանսա-իրավական հարաբերությունների հասկացության և առանձնահատկությունների ուսումնասիրության միջոցով ուսանողը, հիմնվելով նոր հրապարակված «Ֆինանսական իրավունք» դասագրքերի վրա կարող է անցնել ֆինանսա-իրավական հարաբերությունների տեսակների դասակարգման հարցերի հետազոտմանը:

Ֆինանսա-իրավական հարաբերությունները, որպես կանոն, դասակարգվում են ըստ իրենց նյութական բովանդակության և իրավահարաբերության սուբյեկտների

Ըստ նյութական բովանդակության ֆինանսա-իրավական հարաբերությունները կարելի է դասակարգել հետևյալ խմբերի.

- ա) բյուջետային
- բ) հարկային
- գ) վարկային և հաշվարկային
- դ) դրամական շրջանառություն և արժույթային օրենսդրություն:

Ֆինանսա-իրավական հարաբերությունների ուսումնասիրությունը հեշտացնելու նպատակով ուսանողը կարող է ֆինանսա-իրավական հարաբերությունների տեսակների դասակարգմանը նվիրված հարցերի ուսումնասիրությունը սկսել ըստ իրավահարաբերության սուբյեկտների, որոնք ստորաբաժանվում են.

1. պետական իշխանության մարմինների միջև ծավալվող հարաբերություններ
2. Պետական կառավարման վերադաս և ստորադաս մարմինների
3. Ֆինանսական և վարկային մարմինների միջև
4. Առևտրային հաշվարկի սկզբունքով գործող տնտեսական մարմինների
5. Հարկային մարմինների և կազմակերպությունների
6. Հարկային մարմինների և քաղաքացիների
7. Տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքային ենթարկության տակ գտնվող կազմակերպությունների և քաղաքացիների:

Ի տարբերություն այլ իշխանական-գույքային (օրինակ՝ վարչական) իրավահարաբերությունների - ֆինանսական իրավահարաբերություններին բնութագրական է ուղղակի կապը դրամական միջոցների պլանային հավաքման և բաշխման հետ:

Անհրաժեշտ է նշել նաև ֆինանսա-իրավական հարաբերությունների և մեկ կարևոր առանձնահատկություն: Ֆինանսա-իրավական հարաբերությունները չեն կարող ծագել երկու քաղաքացիների միջև: Դրանով իսկ նրանք նման են վարչա-իրավական հարաբերություններին: Սակայն, նրանք միջև ևս կա տարբերություն, որում ի հայտ են գալիս ֆինանսական գործունեության առանձնահատկությունները: Եթե վարչա-իրավական հարաբերությունների մեջ սուբյեկտներից մեկը, որպես կանոն, հանդես է գալիս պետական կառավարման մարմինը, ապա ֆինանսական իրավական հարաբերությունների սուբյեկտները կարող են լինել հավասարապես պետական բոլոր մարմինները:

Ակնհայտ է նաև ֆինանսա-իրավական հարաբերությունների էական տարբերությունները քաղաքացիիրավական հարաբերություններից: Քաղաքացիա-իրավական հարաբերությունները, լինելով իրավահարաբերության տեսակ, ֆինանսա-իրավական հարաբերություններից տարբերվում են նրանով, որ կամային հարաբերություններ են: Դրանք ծագում են քաղաքացիական իրավունքի առարկան հանդիսացող գույքային և անձնական ոչ գույքային հարաբերությունները կարգավորելու հետևանքով: Այս հարաբերությունների ձևավորման համար առավել կարևոր է սուբյեկտների ազատ

կամահայտնությունը, որը և պայմանավորված է հիմնականում իրավահարաբերության մասնակիցների շահագրգռվածությամբ, իրավահարաբերությունների մեջ մտնելով՝ բավարարել սեփական պահանջմունքները:

Քաղաքացիական իրավահարաբերություններին ներհակ է նաև իրավաբանորեն միմյանցից անկախ մասնակիցների իրավահավասարությունը: Պետությունը քաղաքացիական հարաբերություններում հանդես է գալիս որպես հատուկ սուբյեկտ՝ իրավաբանական անձի կարգավիճակով և անկախ դիրքի ուժից չի կարող քաղաքացիա-իրավական հարաբերություններում թելադրել իր կամքը, մի հանգամանք, որը, ինչպես տեսնում ենք, ընդունելի չէ ֆինանսական իրավունքում և տիպիկ չէ ֆինանսական հարաբերություններին:

Ֆինանսա-իրավական հարաբերությունները փոխադարձ կապի և պայմանավորվածության մեջ են գտնվում ֆինանսա-իրավական նորմերի հետ: Նորմ հարաբերությունների կապը ֆինանսական իրավունքում արտահայտվում է նրանում, որ միասնական ճյուղի շրջանակում, ելնելով ֆինանսական նորմերի բնույթից, ֆինանսաիրավական հարաբերությունները բաժանվում են. ա) մատերիալ և բ) պրոցեսուալ բնույթի ֆինանսա-իրավական հարաբերությունների:

Մատերիալ ֆինանսա-իրավական հարաբերությունների միջոցով իրացվում են ֆինանսական իրավունքի սուբյեկտների այնպիսի սուբյեկտիվ իրավունքներ և պարտականություններ, ինչպիսիք են դրամական միջոցների ձեռք բերումը և բաշխումը, որոնք միջոցով ձևավորվում են դրամական անհրաժեշտ ֆոնդեր: Պրոցեսուալ բնույթի ֆինանսա-իրավական հարաբերությունները արտահայտում են պետության և նրա լիազոր մարմինների կողմից իրավական միջոցների շնորհիվ տնտեսվարող սուբյեկտներից ստացվող ֆինանսական ռեսուրսները, որոնք պետական մարմինները օգտագործվում և բաշխվում են իրենց հայեցողությամբ: Օրինակ՝ սահմանված ժանկետներում կառավարությունը պետական բյուջեի նախագիծը ներկայացնում է Աժ հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշները ճշգրտելու համար:

Պրոցեսուալ բնույթի ֆինանսա-իրավական հարաբերությունները իրավական իմաստով հանդես են գալիս որպես ֆինանսա-իրավական հարաբերությունների մասնակիցներ, օրենքով նախատեսված իրավունքների և պարտականությունների իրացման ձև:

§ 3. ՖԻՆԱՆՍԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

Ֆինանսա-իրավական հարաբերությունները՝ որպես իրավական նորմերով կարգավորվող հասարակական հարաբերությունների տարատեսակ, իրենց ներքին կառուցվածքով ոչնչով չեն տարբերվում մյուս իրավահարաբերություններից: Այս իմաստով, ինչպես ամեն մի իրավահարաբերություն, ֆինանսական իրավահարաբերությունը ունի իր տարրերը, որպիսիք են իրավահարաբերության սուբյեկտները, օբյեկտները և բովանդակությունը:

Ժամանակակից ֆինանսաիրավական գրականության մեջ փորձ է կատարվում սահմանազատում անցկացնել «ֆինանսական իրավունքի» և «ֆինանսական իրավահարաբերության» սուբյեկտների միջև, որը տեսական և գործնական նշանակություն ունի: Միանգամայն ճիշտ համարելով այն դիրքորոշումը, որ ֆինանսական իրավունքի սուբյեկտը ավելի ընդգրկուն հասկացություն է, որը իր մեջ է ներառում ֆինանսական իրավահարաբերության սուբյեկտներին վերագրվող տարրերը, կարելի է ասել, որ ֆինանսական իրավունքի սուբյեկտը պոտենցյալ իրավասուբյեկտությամբ օժտված ֆիզիկական և իրավաբանական անձինք են, որոնք ցանկացած դեպքում, կարող են հանդես գալ որպես ֆինանսական հարաբերությունների մասնակիցներ՝ օժտված լինելով որոշակի իրավունքներով և պարտականություններով: Ֆինանսական իրավունքի սուբյեկտները կոնկրետ իրավահարաբերություններին մասնակցելով՝ իրացնում են իրենց իրավանորմերով վերապահված իրավունքները և պարտականությունները, ձեռք են բերում սուբյեկտիվ իրավունքներ կամ պարտականություններ, որակվում են որպես ֆինանսա-իրավական հարաբերությունների մասնակիցներ:

Ի տարբերություն իրավունքի մյուս ճյուղերի սուբյեկտներին վերապահված իրավունքների և պարտականությունների, որոնց շրջանակը ընդարձակ է և իրավահարաբերության ընթացքում մասնակիցները կարող են իրացնել միանգամից մի շարք իրավունքներ կամ կրել պարտավորություններ, ինչպես, օրինակ՝ քաղաքացիական իրավունքում, ֆինանսական իրավունքում սուբյեկտները այսպիսի հնարավորություններից զրկված են կախված այն հասարակական հարաբերությունների առանձնահատկություններից, որոնք առաջանում են պետության ֆինանսական գործունեության ոլորտում:

Այս էական առանձնահատկությունից ելնելով ֆինանսական իրա-

վունքի սուբյեկտները կարելի է բաժանել երեք խմբի.

1. հասարակական - տարածքային միավորներ
2. կոլեկտիվ սուբյեկտներ
3. անհատական սուբյեկտներ

Հայաստանի Հանրապետությունը, որպես միատարր ազգային պետական միավոր, ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն, հանդես է գալիս որպես ֆինանսական իրավունքի **հատուկ սուբյեկտ**:

Պետությունն իրավունքի հատուկ սուբյեկտ է համարվում այն յուրահատկությունների ուժով, որ նա հանդիսանում է պետական, տնտեսական, քաղաքական և քաղաքացիական իշխանության կրող, հանրային իրավունքի սուբյեկտ, ինքն է սահմանում ներքին և արտաքին ֆինանսական գործունեության շրջանակները, իր և ֆինանսական իրավունքի մյուս սուբյեկտների իրավահարաբերություններին մասնակցելու սահմանները, ծավալն ու բովանդակությունը: Եւ ֆինանսական հարաբերություններին մասնակցում է անսահմանափակ պետա-իշխանական լիազորություններով, միայն քաղաքացիա-իրավական հարաբերություններին է, որ մասնակցում է քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով: Այդ դեպքերում նրա նկատմամբ կիրառվում են իրավաբանական անձանց մասնակցությունը կարգավորվող իրավական նորմերը: Հանրապետության սահմանադրության 104 հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներ են մարզերը և համայնքները: Մարզերը կազմված են գյուղական և քաղաքային համայնքներից:

Համայնքները, որպես ֆինանսական իրավունքի հասարակական-տարածքային սուբյեկտներ, սահմանադրությամբ օժտված են բյուջետային լայն իրավունքներով: Համայնքի ավագանին համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի բյուջեն, վերահսկում բյուջեի կատարումը, օրենքով նախատեսված կարգով սահմանում տեղական տուրքեր և վճարներ (սահմանադրություն 106 հոդված):

Հայաստանի Հանրապետությունը և վարչա-տարածքային միավորները, որպես ֆինանսական իրավունքի սուբյեկտներ, հանդես են գալիս ֆինանսական այլ իրավահարաբերություններում, կրում են իրավունքներ և պարտականություններ: Այսպես, պետությունը պատասխանատու է ներքին պարտքի, կենտրոնական բանկից ստացված վարկերի և այլ ֆինանսական գործառույթների համար:

Ֆինանսական իրավունքի **կոլեկտիվ սուբյեկտներ** գործունեության նպատակը և ֆինանսական աղբյուրները բազմազան են:

Մրանց թվին են դասվում պետական իշխանության և կառա-

վարման մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները, ինչպես նաև սեփականության տարբեր ձևերի վրա հիմնված կազմակերպությունները:

Որպեսզի այս մարմինները ֆինանսա-իրավական հարաբերությունների մեջ մտնեն, անհրաժեշտ է, որ նրանք լինեն իրավունակ:

Իրավունակությունն օրենքով նախատեսված կամ օրենքով թույլատրված իրավունքներն ունենալու և պարտականությունները կրելու ունակությունն է: Ֆինանսա-իրավական հարաբերությունների ծագման նախադրյալ է հանդիսանում նրա կողմերի ֆինանսական իրավունակությունը: Ֆինանսական իրավունակությունը ֆինանսական իրավահարաբերության սուբյեկտի իրավունքներ ունենալու և իրավաբանական պարտավորությունները կրելու ունակությունն է այետույան ֆինանսական գործունեության ոլորտում:

Պետության ֆինանսական գործունեության ոլորտում պետական իշխանության և կառավարման, ինչպես նաև տնտեսական կազմակերպությունների ֆինանսական իրավունակությունը գործում է տվյալ մարմնի կազմակերպման և նրա իրավասության որոշման պահից: Հենց այդ պահից էլ գործում է նրա գործունակությունը, այսինքն իր իրավունակությունը կենսագործելու ունակությունը:

Ֆինանսական գործունեությունը ենթադրում է տվյալ սուբյեկտի ֆինանսական իրավունակության առկայությունը:

Պետական իշխանության և կառավարման մարմինները, ինչպես նաև տնտեսական կազմակերպությունները ունեն օրենքով կամ այլ նորմատիվ ակտերով սահմանված որոշակի իրավասություն և այդ իրավասության շրջանակում էլ հանդես են գալիս որպես ֆինանսա-իրավական հարաբերությունների սուբյեկտներ:

Ֆինանսական իրավունակությունը ենթադրում է, որ պետական և տնտեսական բոլոր մարմինները օժտված են պետական իշխանության և գործադիր-կարգադրիչ լիազորություններով, ֆինանսական գործունեություն իրականացնելու իրավունքով: Այդ լիազորությունների բնույթը և ծավալը պայմանավորված է տվյալ մարմնի իրավասությամբ: Հետևաբար, կարելի է ասել, որ ֆինանսական գործունեություն իրականացվող բոլոր մարմինների ֆինանսական իրավունակությունը ևս իրագործվում է նրա իրավասության ծավալով:

Ֆինանսական գործունեությունը իրականացնող բոլոր մարմինների և տնտեսական կազմակերպությունների իրավասությունները իրենց արտացոլումն են գտնում նրանց կանոնադրություններում, ինչպես նաև այլ նորմատիվ ակտերում: Դրանցով կարելի է սահմանել այն ֆինանսա-իրավական հարաբերությունների տեսակները, որոնցում որպես մասնակիցներ կարող են հանդես գալ ֆինանսական գործունեություն իրականացնող մարմինները:

Որպես ֆինանսաիրավական հարաբերությունների կոլեկտիվ սուբյեկտներ պետական իշխանության և կառավարման, ինչպես ընդհանուր (կառավարություն, տեղական ինքնակառավարման մարմիններ), այնպես էլ ճյուղային և հատուկ իրավության մարմինները հիշյալ հիմնադիր իրավական ակտերի ուժով, որպես ֆինանսա-իրավական հարաբերությունների մասնակիցներ կարող են իրենց իրավասության սահմաններում հրատարակել նորմատիվ և անհատական (որոշումներ, հրամաններ, հրահանգներ, կարգադրություններ) բնույթի ֆինանսական իրավական ակտեր, դրանց կատարումն ապահովել հարկադրանքի միջոցների կիրառմամբ:

Ինչպես նշվեց, ֆինանսա-իրավական հարաբերությունների կոլեկտիվ սուբյեկտների ֆինանսական իրավունակությունը որոշվում է նրա իրավասության ծավալով:

Արտահայտված դիրքորոշումից պետք է հանգել այն եզրակացության, որ ֆինանսական իրավունակությամբ օժտված են միայն իշխանության և կառավարման մարմինն ամբողջությամբ վերցրած:

Ֆինանսական իրավունակությամբ են օժտված նաև գործադիր մարմինների ներքին կառուցվածքային ստորաբաժանումները: Օրինակ նախարարությունն ամբողջությամբ վերցրած հանդես է գալիս որպես ֆինանսական իրավական հարաբերության մասնակից, այսինքն օժտված է ֆինանսական իրավունակությամբ: Բայց ֆինանսական իրավունակությամբ են օժտված նաև այդ նախարարության կենտրոնական ապարատի յուրաքանչյուր օղակ՝ գլխավոր վարչություն, վարչություն և բաժին, քանի որ դրանք ևս այս կամ այն չափով մասնակցում են պետության ֆինանսական գործունեության ոլորտում ծագող խնդիրների իրականացմանը, որը ուղղված է նախարարության ընդհանուր խնդրի կենսագործմանը:

Չնայած իշխանության և կառավարման մարմնի կառուցվածքային ստորաբաժանումները ևս կարող են լինել ֆինանսական իրավական հարաբերությունների սուբյեկտներ, սակայն դրանք չեն ճանաչվում որպես իշխանություն կամ կառավարման ինքնուրույն մարմիններ: Դրանց ֆինանսական իրավունակության ծավալը ավելի նեղ է: Առավել նեղ իրավասությամբ են օժտված ֆունկցիոնալ օղակները:

Ուսումնասիրությունից դժվար չէ կոհեղ, որ ֆինանսական իրավունքի կոլեկտիվ սուբյեկտների ֆինանսական իրավունակությունը կարող է լինել Ընդհանուր և հատուկ:

Ընդհանուր իրավունակության համար ընդորոշ է պետության ֆինանսական գործունեության իրականացմանը մասնակցելը, իսկ հատուկ ֆինանսական իրավունակության համար՝ բնորոշ է ֆինանսական գործունեության պրոցեսում հատուկ խնդիրների և հանձնարարությունների իրականացման ունակությունը, ինչպիսիք հատ-

կապես կյանքում իրականացնում են ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը, հանրապետության կենտրոնական բանկը, տեղական ինքնակառավարման մարմինները և այլն:

Ֆինանսական իրավունքի կոլեկտիվ սուբյեկտների համակարգում անհրաժեշտ է առանձնացնել հատկապես պաշտոնատար անձանց, որոնց ֆինանսական իրավունակության և գործունակության իրավական զննահատման հարցերը ժամանակի ընթացքում երբեք չեն չունաբանվել:

Պետության ֆինանսական գործունեության ժամանակակից հիմնախնդիրները և ֆինանսաիրավական հարաբերությունների կարգավորմանն ուղղված օրենսդրությունը հրամայաբար պահանջ են առաջադրում սահմանել պետական ծառայողների, հատկապես ֆինանսական գործունեության ոլորտում տնտեսական մարմինների պաշտոնատար անձանց (հիմնարկ-ծեռնարկության ղեկավար, գլխավոր հաշվապահ) ֆինանսական իրավունակության և գործունակության ծագման, նրանց ծավալի, բովանդակության և իրավական հետևանքների կարգավորմանն ուղղված հիմնահարցերը:

Չի կարելի ասել, թե պետական բոլոր ծառայություններն էլ ֆինանսական իրավունակությամբ են օժտված: Ծառայողների ֆինանսական իրավունակությունը որոշվում է իշխանության, գործադիր և դատական ապարատում նրանց զբաղեցրած պաշտոնով: Տնտեսական ղեկավարների և այդ ծառայությունների գլխավոր հաշվապահների ֆինանսական իրավունակությունը և գործունակությունը որոշվում է պետական և տնտեսական մարմինների ֆինանսական իրավասության բնույթով:

Պետական ապարատում ընդհանրապես ծառայողների ֆինանսական իրավունակությունը որոշվում է իշխանության, գործադիր, դատական և տնտեսական ասպարեզում նրանց զբաղեցրած պաշտոնով, տեղով, իրավասության շրջանակներով: Պատահական չէ, որ տնտեսական մարմինների ֆինանսական գործառնությունների իրականացման իրավունքը և պատասխանատվությունը ըստ «հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ ԱԺ 1998թ. մարտի 19-ի օրենքի դրված է տնտեսական մարմնի ղեկավարի և գլխավոր հաշվապահի վրա: Այս պաշտոնատար անձանց ֆինանսական գործառնությունների իրականացումը իրավական նշանակություն ունի միայն տվյալ մարմնի սահմաններում:

Ֆինանսա-իրավական հարաբերությունների կոլեկտիվ սուբյեկտների անենատարածված տեսակալ սեփականության տարբեր ձևերի վրա հիմնված ձեռնարկություններն են, հիմնարկները, կազմակերպությունները և ընկերությունները:

Ի տարբերություն պետական իշխանության և կառավարման

մարմինների, որոնք կազմակերպում են պետության ֆունկցիաների գործնական կենսագործումը, ձեռնարկությունները, հիմնարկները, ընկերությունները անմիջականորեն նյութական ու կուլտուրական բարիքներ են արտադրում և բավարարում հասարակության անմիջական նյութական և հոգևոր պահանջները: Նրանց գործունեության բովանդակությունը կայանում է արտադրելու, բաշխելու, դաստիարակելու, ուսուցման, կենցաղային սպասարկման մեջ և այլն:

Ձեռնարկությունների, հիմնարկների և ընկերությունների ֆինանսական իրավունակությունը ևս ծագում է դրանց կազմակերպման պահից: Արանց իրավասությունը որոշվում է իրենց կանոնադրությամբ:

Հիմնարկի, ձեռնարկության որպես ֆինանսական իրավունքի այլ ոչ որպես ֆինանսա-իրավական հարաբերությունների սուբյեկտի ֆինանսա-իրավական ընկալման հիմնախնդրի լիարժեք լուծմանը այսօր նպաստում է քաղաքական իրավունքի տեսությունը և գործող «ՀՀ քաղաքացիական» օրենսգիրքը:

Ըստ քաղաքացիական իրավունքի տեսության ներկայացուցիչների հասարակական կյանքում քաղաքացիները շատ հաճախ արտադրա-տնտեսական գործունեության իրականացնելու համար միավորվում են զանազան կազմակերպությունների մեջ, ստեղծում տնտեսական միավորներ: Որպեսզի քաղաքացիների նպատակային միավորները կարողանան հանդես գալ քաղաքացիական շրջանառության մեջ, ձեռք բերեն իրավունքներ և օրինական շահեր, պետք է ճանաչվեն իրավահարաբերության սուբյեկտ, ավելի կոնկրետ, հանդես գան որպես իրավաբանական անձ:

Իրավաբանական անձ կարող են ճանաչվել ոչ թե անձանց ցանկացած միավորում կամ միության, այլ առանձնահատուկ կարգով կազմակերպվող և դադարող այն կազմակերպությունը, որը օժտված է օրենքով պահանջվող յուրատիպ հատկանիշներով, որոնցից յուրաքանչյուրն անհրաժեշտ է, իսկ բոլորը միասին բավարար են, որպեսզի կազմակերպությունը ճանաչվի քաղաքացիական իրավունքի սուբյեկտ՝ իրավաբանական անձ¹:

Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» ուսումնասիրությունից դժվար չէ նկատել, որ իրավաբանական անձ ճանաչվելու համար անհրաժեշտ է չորս հիմնական հատկանիշ, կազմակերպական միասնության, առանձնացված գույքի առկայության, իր անունից հանդես գալու իրավունք և ինքնուրույն գույքային պարտականություն:

¹ Տե՛ս. Гражданское право. часть 1. Изд.во "Проспект", М., 1999, ст. 123

Ձեռնարկությունը, հիմնարկը և տնտեսական ցանկացած կազմակերպություն, որպեսզի հանդես գա ֆինանսական իրավունքի սուբյեկտ, պետք է օժտված լինի իրավասուբյեկտիվությամբ՝ լինի իրավունակ և գործունակ, այսինքն կարող է ձեռք բերել այնպիսի իրավունքներ և կրել այնպիսի պարտավորություններ, որոնք ապահովում են իր համար կանխորոշված նպատակների և խնդիրների իրականացումը:

Ի տարբերություն քաղաքացիների, իրավաբանական անձն օժտված է ոչ թե ընդհանուր, այլ հատուկ իրավունակությամբ, այսինքն հանդես է գալիս կանոնադրային իրավունակությամբ¹:

Ձեռնարկության, հիմնարկի, ընկերության հատուկ իրավասությունը վերջնական սահման չէ, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 52 հոդ. ամրապնդում է այն, ըստ որի առևտրային կազմակերպություններն օրենքով չարգելված գործունեության ցանկացած տեսակի համար կարող են ունենալ անհրաժեշտ քաղաքացիական իրավունքներ և կրել պարտականություններ: Օրենսդիրը թույլատրելի է համարում ունիվերսալ (համընդհանուր) իրավունակությունը, որով և տնտեսվարող բոլոր մարմինները կարող են հանդես գալ ֆինանսական իրավահարաբերությունների սուբյեկտների, վճարել հարկեր, բաշխել շահույթ, բյուջետային ֆինանսաիրավական ճանապարհով ստանալ ֆինանսական միջոցներ, տնօրինել այն, ինչպես նաև վարկային պայմանագրով բանկի հասույթներից ստանալ վարկեր, սահմանել հաշվարկների տեսակներ և այլն:

Ձեռնարկությունը, հիմնարկը, կազմակերպությունը, որպես իրավաբանական անձ ստեղծված է համարվում և նրա իրավունակությունը ծագում է պետական զրանցման պահից:

Հիմնարկ-ձեռնարկությունների՝ որպես ֆինանսական իրավունքի սուբյեկտի իրավունակությունը ֆինանսական կարգավիճակի միայն մեկ տարրն է:

Նրա երկրորդ տարրը գործունակությունն է, որը ծագում է իրավունակության հետ միասին, ձեռնարկության, հիմնարկի, ընկերության ստեղծման պահին:

Ձեռնարկության, հիմնարկի և տնտեսական մյուս կազմակերպությունների գործունեությունը, բնականաբար արտահայտվում է կազմակերպությունը կազմող մարդկանց գործունեությունը, քանի որ միայն մարդիկ են ունակ իրականացնելու գիտակցված գործունեություն: Սակայն մարդկանց դերը իրավաբանական անձի գործունեության իրականացման գործում տարբեր է: Միասնական նպատա-

կային գործունեության կազմակերպման, իրավաբանական անձի կամքը ձևավորելու, նրա գործունեությունը ղեկավարելու, իրավունքներ ձեռք բերելու և պարտականությունների ստանձնելու համար «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի» 57-րդ հոդվածը սահմանում է իրավաբանական անձի մարմնի հասկացությունը:

Հետևաբար, իրավաբանական անձի իրավունակությունը և գործունակությունը իրականացնում է ոչ թե իրավաբանական անձը, որպես այդպիսին, այլ նրա մարմինները: Այլ խոսքով. ֆինանսական գործունեություն իրականացնելիս՝ ֆինանսա-իրավական հարաբերությունների սուբյեկտներ հանդես են գալիս ոչ թե իրենք՝ ձեռնարկությունները, հիմնարկները, այլ նրանց գործադիր մարմինները տնօրենը, ձեռնարկության և հիմնարկների տնօրինությունները:

Ձեռնարկության կամ հիմնարկի ֆինանսական գործունեությունը իրականացնում է նրանց գործադիր տնօրինությունը (ղեկավարները) այլ ոչ թե նրանց ամբողջ աշխատավորների կոլեկտիվը: Հետևաբար, որպես ֆինանսական հարաբերությունների սուբյեկտ կարող է հանդես գալ ոչ թե ամբողջ ձեռնարկությունը կամ հիմնարկը, այլ նրանց տնօրինությունը:

Դա պայմանավորված է նրանով, որ բոլոր վառչական լիազորությունները իրականացնում է ոչ թե ձեռնարկությանը կամ հիմնարկն ամբողջությամբ վերցրած, այլ նրանց տնօրինությունը, որը գործում է պետության անունից և լիազորված է տվյալ ձեռնարկության կամ սոցիալ-կուլտուրական հիմնարկության նկատմամբ կառավարումն իրագործելու:

Ձեռնարկության ղեկավարությունը (տնօրինությունը) գործում է պետության անունից, որը լիազորում է նրան տվյալ ձեռնարկությունը կամ հիմնարկը կառավարելու:

Մրանով է արտահայտվում տարբերությունը ֆինանսա-իրավական հարաբերությունների սուբյեկտների և քաղաքացիական իրավահարաբերությունների սուբյեկտների (իրավաբանական անձանց) միջև:

Ֆինանսական իրավունքի կոլեկտիվ սուբյեկտներից են հանդիսանում անհատական և ընտանեկան, գյուղական կոլեկտիվ տնտեսությունները, որոնք հանդես են գալիս որպես ինքնուրույն տնտեսվարող սուբյեկտներ հարկային, վարկային և այլ բնույթի ֆինանսական իրավահարաբերություններում: Վերջապես, ֆինանսական իրավունքի անհատական սուբյեկտներ կարող են հանդես գալ քաղաքացիները:

Ֆինանսաիրավական հարաբերությունների սուբյեկտներ կարող են լինել ոչ միայն մեր հանրապետության քաղաքացիները, այլև օտարերկրացիները և քաղաքացիություն չունեցող անձինք:

¹ Ст'я Предпринимательское право. Курс лекций, Изд.-во "Юрид.лит.": М: 1993

ՀՀ քաղաքացու ֆինանսական իրավունակությունը ծագում է նրա ծննդյան օրից և դադարում է նրա մահվան հետ միասին:

Քաղաքացիների որպես ֆինանսական հարաբերությունների սուբյեկտի, գործունակության բացահայտման համար նաև նախապես ընդունվում են աշխատանքային և քաղաքացիական իրավունքի ճյուղերի կողմից մշակված և օրենսդրական ամրապնդում ստացած գործունակության սկզբունքները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 24 հոդվածի համաձայն գործունակություն է համարվում քաղաքացու իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար պարտավորություններ ստեղծելու ու դրանք կատարելու ունակությունը:

Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը, որպես կանոն, քաղաքացուն լրիվ գործունակ է ճանաչում 18 տարեկանը լրանալու պահից: Այս սկզբունքը առանց բացառությունների կիրառվում է նաև ֆինանսական իրավունքի սուբյեկտների համար: 18 տարին չլրացած քաղաքացիները ֆինանսական իրավունքում նույնպես անվանվում են անչափահասներ, որոնք բաժանվում են երկու խմբի ա) մինչև 14 տարեկաններ (փոքրահասակներ), բ) 14-ից 18 տարեկաններ (անչափահասներ):

Ֆինանսական իրավունքի և օրենսդրության ժամանակակից անբավարար տեսակետ հետազոտությունների պակասի հետևանքով լուծված չեն ներկայումս իրավունքի մի շարք ճյուղերի առանձին իրավական ինստիտուտների փոխադարձ կապի և հետադարձ հետևանքների հիմնահարցերը, որպիսիք վերաբերվում են աշխատանքային և ֆինանսական իրավունքի փոխհարաբերության հարցերին, որոնց միասնական իրավական կարգավորման բացը մշտապես տեղի է տալիս հակասությունների, խզում ստեղծում իրավունքի և օրենսդրության տարբեր ճյուղերի միջև:

Այսպես ՀՀ աշխատանքային օրենսդրությունը թույլատրելի է համարում հիմնարկ-ձեռնարկությունների արհմիութենական կոմիտեների համաձայնությամբ աշխատանքային պայմանագրեր կնքել 14-ից մինչև 18 տարեկան անչափահասների հետ, որոնք պայմանագրի կնքման պահից հանդես են գալիս աշխատանքային իրավահարաբերության սուբյեկտներ, իրենց կատարած աշխատանքների դիմաց ստանում են վարձատրություն: Հարկային օրենսդրությունը, որը կարգավորում է ֆիզիկական անձանցից գանձվող եկամտահարկը, առանց տարիքի սահմանման, օրենքի առաջին հոդվածում ամրապնդում է, որ Հայաստանի Հանրապետությունում եկամտահարկ վճարող են հանդիսանում, հանրապետությունում մշտական բնակություն ունեցող ֆիզիկական անձինք՝ անկախ եկամտի

ստացման աղբյուրներից: Այնուհետև, «եկամտահարկի մասին» օրենքի 2-րդ հոդվածում սպառիչ բերված են հարկման այնպիսի օբյեկտներ, ինչպիսիք են աշխատանքային-քաղաքաիրավական պայմանագրերի կատարումից, հեղինակային, ձեռնարկատիրական գործունեությունից, նվիրատվություն, գույքի վարձակալության տալուց ստացած եկամուտները¹:

Տարիքային սահմանի անտեսումը վկայում է, որ հատկապես հարկային իրավահարաբերություններում հստակեցված չեն ֆինանս-իրավական հարաբերությունների մասնակից քաղաքացիների ֆինանսական գործունակության հիմնահարցերը, որոնք պատճառ են հանդիսանում օրենսդրության տարբեր ճյուղերի ներքին հակասությունների:

Այնուհետև, ֆինանսական օրենսդրության առանձնահատկությունները վկայում են, որ 14-ից 18 տարեկան անչափահասները ամենատարբեր ձևերով իրենց մասնակցությունն են բերում պետությանը ֆինանսական գործունեության հիմնական ձևերին, դրամական միջոցների հավաքման, բաշխման և օգտագործման գործընթացներին:

Առանց օրինական ներկայացուցիչների անչափահասները կարող են տնօրինել իրենց աշխատավարձը, կենսաթոշակը, կրթաթոշակը և այլ եկամուտներ, իրականացնել գիտության, գրականության կամ արվեստի ստեղծագործություններ, ավանդներ մուծել վարկային հիմնարկներ և տնօրինել դրանք:

Հիշատակված գործունեության բոլոր ձևերը ֆինանսական գործառնություններ են, որոնց մի մասի համար ըստ գործող հարկային օրենսդրության անչափահասները եկամտահարկ պետք է վճարեն, մինչդեռ ֆինանսական իրավունքի գիտության ոլորտում անչափահասների ֆինանսական կարգավիճակի, նրանց իրավունակության և գործունակության հիմնախնդիրները ուշադրության չեն արժանացել:

Փոքրահասակները և հոգեկան հիվանդները օժտված չեն ֆինանսական գործունակությամբ: Ֆինանսական գործառնությունները նրանց փոխարեն կատարում են ծնողները, որոնք գործողները, խնամակալները կամ պետական լիազոր մարմինները:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ֆինանսական իրավունակության ծավալը որոշվում է սահմանադրությամբ, ինչպես նաև ֆինանսաիրավական նորմերի ողջ համակցությամբ: Պետական ֆինանսական, վարկային, ինչպես նաև հարկային մարմինները իրականացնելով իրենց վրա դրված խնդիրները ֆինանսաիրավական

¹ Տե՛ս. ՀՀ հարկային համակարգը, «Միջաբար Գոչ», Ե: 1998, էջ 57

հարաբերությունների մեջ են մտնում ինչպես հանրապետության, այնպես էլ տարերկրյա և քաղաքացիություն չունեցող անձանց հետ: Քաղաքացիները իրենց հերթին կենսագործելով իրենց սուբյեկտիվ իրավունքները և կատարելով պետության կողմից իրանց վրա դրված ֆինանսական, վարկային, հարկային և այլ ֆինանսական բնույթի պարտականություններ, մշտական իրավական հարաբերությունների մեջ են մտնում պետական լիազոր ֆինանսական-վարկային մարմինների հետ:

Ֆինանսա-իրավական նորմերը կարգավորելով փոքրահասակների մասնակցությամբ ֆինանսական հարաբերությունները, քաղաքացիներին լայն իրավունքներ են վերապահում հանգստարկելու պետական իշխանության և կառավարման, հատկապես ֆինանսավարկային և հարկային մարմինների ու նրանց պաշտոնատար անձանց անօրինական գործողությունները:

Ֆինանսական օրենսդրությունը կարգավորում է նաև այն դեպքերը, երբ տարերկրյա և քաղաքացիություն չունեցող անձինք կարող են հանդես գալ հանրապետության ֆինանսական, հարկային և վարկային իրավահարաբերությունների սուբյեկտ:

Ֆինանսա-իրավական հարաբերությունների վերլուծությունները վկայում են, որ այս հարաբերությունների սուբյեկտներ հանդես են գալիս հանրապետության ազգային պետական վարչատարածքային մարմինները, ինչպես նաև հանրապետությունում, օտարերկրյա և քաղաքացիություն չունեցող ֆիզիկական անձինք, որոնք առօրյա մասնակցություն ունեն պետության կենտրոնական և ապակենտրոնացված ոլորտական ֆոնդերի ձևավորմանը կամ հանդես են գալիս, որպես այդ միջոցների օգտագործողներ, որոնց ֆինանսական իրավունակության և գործունակության ծավալը սահմանված է ֆինանսա-իրավական նորմերով:

§ 4. ՖԻՆԱՆՍԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԳԱՆ, ՓՈՓՈԽՍԱՆ և ՊՈՂՈՒՅՍԱՆ ՀԻՄՆԵՐԸ

Իրավահարաբերությունները ընդհանրապես ինքնին չեն առաջանում: Նրանք ծագում, փոփոխվում կամ դադարում են կյանքի որոշակի հանգամանքների (փաստերի) վրա հասնելու հետևանքով: Իրավահարաբերությունները ձևավորվում և փոփոխվում են իրականության մեջ գոյություն ունեցող այնպիսի հանգամանքների առկա-

յությամբ, որոնց հետ օրենքը կապում է որոշակի իրավական հետևանքների առաջացումը: Այսպիսի հանգամանքները իրավա-
ֆիտության մեջ ընդունված է անվանել իրավաբանական փաստեր:

Ֆինանսա-իրավական հարաբերությունների ծագման, փոփոխման և դադարեցման համար հիմք են հանդիսանում իրավաբանական փաստերը (օրինակ՝ հարկի վճարումը) կամ եղելությունները (օրինակ՝ ծնունդը, մահը, երկրաշարժը, ջրեղեղը և այլն):

Ֆինանսա-իրավական նորմերը դրանց առկայության հետ են կապում որոշակի իրավական հետևանքների առաջացումը:

Նշանակում է, իրավաբանական փաստերը կյանքի կոնկրետ հանգամանքներ են, որոնց հետ իրավունքի նորմը կապում է իրավահարաբերությունների ծագումը, փոփոխումը կամ դադարեցումը:

Իրավաբանական փաստերը սուբյեկտի անհատական կամքի հետ ունեցած կապի տեսակետից բաժանվում են երկու խմբի՝ գործողությունների և եղելությունների:

Գործողություններն այնպիսի փաստեր են, որոնք կատարվում են մարդկանց կամքով, դրանք, փաստորեն, մարդկանց կամքի արտահայտությունն են:

Օրինականության տեսակետից մարդկանց բոլոր գործողությունները բաժանվում են իրավաչափի և ոչ իրավաչափի:

Իրավաչափ գործողությունները - այնպիսի փաստեր են, որոնք հանգեցնում են մարդու մոտ իրավունքի նորմով նախատեսված իրավաբանական իրավունքների և պարտականությունների ծագմանը:

Իրավաչափ գործողությունները իրենց հերթին բաժանվում են իրավաբանական ակտերի և իրավաբանական արարքների:

Ֆինանսա-իրավական հարաբերությունները մեծամասամբ ծագում են իրավաչափ այնպիսի գործողությունների հետևանքով, ինչպիսիք են նորմատիվային և անհատական ֆինանսա-իրավական ակտերը: Այդպիսի նորմատիվային իրավական ակտ է հանդիսանում ամեն տարի Աժ կողմից ընդունվող «Պետական բյուջեի մասին»
●րենքը:

Ֆինանսա-իրավական հարաբերության փոփոխություններն, որպես կանոն, չեն կարող տեղի ունենալ նրանց մասնակիցների ցանկությամբ: Այդ փոփոխությունները կարող են կյանքի կոչվել միայն այնպիսի նորմատիվային ակտերի պահանջով, որոնք փոփոխություններ են սահմանում բուն իրավական ակտում սահմանված հանգամանքներում և եղելություններում:

¹ Տե՛ս. Վ.Լ.Նորոզյանյուկ, Պետության և իրավունքի տեսություն, «Գոչ», Ե: 1997, էջ 376:

Օրինակ՝ բյուջետային հատկացումների ավելացումը կամ պակասեցումը առաջ են բերում համապատասխան ֆինանսա-իրավական հարաբերության փոփոխում:

Իրավաբանական արարքները - այնպիսի իրավաչափ գործողություններ են, որոնք հատուկ ուղղված չեն իրավահարաբերությունների առաջացմանը, փոփոխմանը կամ դադարեցմանը, սակայն կարող են առաջ բերել այդպիսի հետևանքներ: Օրինակ տնտեսվարող սուբյեկտի զանգառի հիման վրա, զանգառը ըննության առնող հարկային մարմինը իրավունք ունի մինչև զանգառի լուծումը դադարեցնել հարկերի գանձումը: Այս օրինակում զանգառը **իրավաբանական արարք է**, որի ուժով հարկային իրավահարաբերության մասնակիցը դադարեցնում է հարկի վճարումը:

Ֆինանսական իրավաբանական արարքները, որպես իրավաչափ գործողությունների հանակցություն, կարելի է բաժանել երկու հիմնական խմբի.

1. Իրավաբանական արարքներ, որոնք ուղղվում են ֆինանսական հարաբերությունների սուբյեկտների իրավունքների պաշտպանությանը, այսինքն, երբ իրավահարաբերության մասնակիցը օգտվում է պետության ֆինանսական գործունեության ոլորտում իրեն վերապահված իրավունքից (դիմում, բողոք ներկայացնել):
2. Իրավաբանական արարքներ, որոնք ուղղվում են իրավահարաբերությունների մասնակիցների կողմից պարտավորությունների կատարմանը (հարկերի մասին հաշվետվություններ ներկայացնել կամ հարկային տեսչության հարկը վճարելու մասին հիշեցումը):

Ոչ **իրավաչափ** գործողություններ են համարվում այն փաստերը, որոնց կատարելն արգելված է օրենքով, այսինքն չեն համապատասխանում իրավական նորմերի պահանջներին, առաջ են բերում իրավախախտումներ.

Ոչ իրավաչափ գործողությունները պետության ֆինանսական գործունեության ոլորտում այնպիսի խնդիրներ են, որոնք ուղղված են երկրի սահմանված ֆինանսա-վարկային, արժույթային, բյուջետային, պետական եկամուտների կարգի դեմ:

Ոչ իրավաչափ գործողությունները ֆինանսական իրավունքում գրանցվում են զանցանքների և հանցագործությունների տեսքով:

Այսպես, «ՀՀ քրեական օրենսգրքի» հարկերից և պետական սոցիալական ապահովության վճարներից հրաժարվելը տնտես-

վարող սուբյեկտների կողմից, դիտում է ոչ իրավաչափ գործողություն, իրավախախտում, որի համար նախատեսում է քրեական պատասխանատվություն:

Ոչ իրավաչափ ճանաչվում են ոչ միայն անտիվ գործողությունները, այլև անգործությունը, որը կարող է ապահովել օրենքով սահմանված գործողությունների կատարումից ձեռնպահ մնալու կամ պարտավորությունների չկատարելու եղանակներով:

Անգործության դրսևորումը, որպես ոչ իրավաչափ գործողություն, առաջ է բերում ֆինանսական պարտավորություն:

Ֆինանսական իրավահարաբերություններ գործնականում կարող են առաջանալ ինչպես մեկ, այնպես էլ մեկից ավելի իրավաբանական փաստերի հիման վրա: Այսպիսի իրավահարաբերությունների ծագման հիմքը ընդունված է համարել բարդ: Այսպես, ներդրումների կապակցությամբ, հատկապես կապիտալ շինարարության և վերամորթման ոլորտում, ֆինանսական իրավահարաբերություններ կարող են առաջանալ, եթե առկա են իրավաբանական մի քանի այնպիսի փաստեր, ինչպիսիք են շինարարության թույլտվությունը, նախագծային նախահաշվային փաստաթղթերը, ֆինանսավարման ընդհանուր և տեղական պլաններն և այլն: Արանցից մեկի բացակայության դեպքում կապիտալ շինարարությունը չի սկսվի, հետևաբար ֆինանսաիրավական հարաբերություններ չեն առաջանա:

Ֆինանսաիրավական հարաբերությունները ծագում, փոփոխվում և դադարեցվում են **նաև եղելության հիման** վրա, որոնք այնպիսի երևույթների համակցության են, որոնք վրա են հասնում մարդկանց կամբից անկախ: Այս երևույթները շատ են անկանխատեսելի: ● րի-նակ՝ մահը, ծնունդը, բնական աղետները, դժբախտ դեպքերը և այլն:

● րինակ՝ քաղաքացու մահվամբ դադարում է հատկապես իրավահարաբերությունը նրա և հարկային մարմնի միջև:

Հիշատակված վերլուծությունները վկայում են այն մասին, որ ֆինանսական իրավահարաբերությունների ծագման, փոփոխման և դադարեցման պայմանները, այսինքն իրավաբանական փաստերը նախատեսվում են ֆինանսաիրավական նորմերի հիպոթեզով:

§5. ՖԻՆԱՆՍԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայումս տնտեսվարման նոր մեթոդներն և շուկայական հարաբերությունները, ելնելով հասարակության և պետության սեփականության տարբեր ձևերի վրա հիմնված տնտեսական կազմա-

¹ Տե՛ս ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետությունում հարկերի և տուրքերի մասին», հոդ. 38, «Ախիթար Գոշ», Ե., 1998

կերպարությունների և քաղաքացիների շահերից, պահանջ են առաջադրում պաշտպանել պետության ֆինանսական գործունեության ոլորտում ծագող ֆինանսական իրավահարաբերությունները:

Ֆինանսաիրավական հարաբերությունների պաշտպանությունը պետության կողմից նշանակում է ապահովել դրանց մասնակիցների այնպիսի վարվելակերպ, որը համապատասխանում է ֆինանսաիրավական նորմերում արտահայտված պահանջներին:

Ֆինանսաիրավական նորմերի պահանջների կատարումը հասարակական կյանքում իրագործվում է հիմնականում համոզման մեթոդի հիման վրա: Ֆինանսավարկային մարմինները, նրանց պաշտոնատար անձինք, հասարակական-քաղաքական կազմակերպությունները, ինչպես նաև քաղաքացիները երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը և հիմնական ֆինանսական պլանի պահանջները կատարում են կամավոր կերպով, առանց հարկադրանքի, քանի որ դրանք արտահայտում են իրենց կամքը, բխում իրենց շահերից:

Միշտ չէ, որ ֆինանսաիրավական հարաբերությունների սուբյեկտները գործում են իրավանորմերի պահանջներով, առանձին դեպքերում հարաբերությունների մասնակիցները թույլ են տալիս խախտումներ:

Այսպիսի դեպքերում, երբ համոզումը որպես այդպիսին սպառում է իրեն, չի բացառվում ֆինանսաիրավական հարաբերությունների մասնակիցների շահերի պաշտպանությունը հարկադրանքի միջոցով:

Ֆինանսաիրավական հարաբերությունների մասնակիցների կողմից ֆինանսաիրավական նորմերի պահանջների խախտման դեպքում, այդ հարաբերությունների պաշտպանությունը, որպես կանոն, կատարվում է վարչական կարգով, կառավարման լիազորված մարմնի կողմից վարչական հարկադրանքի միջոցների կիրառմամբ:

Հարկադրանքի կիրառումը նպատակ ունի կանխելու և վերացնելու նորմի պահանջների անօրինական խախտումը:

Հարկադրանքի կիրառմամբ վերականգնվում է պետության, վարչատարածքային միավորների, հիմնարկ-ձեռնարկությունների և քաղաքացիների խախտված ֆինանսական իրավունքները:

Ներկայումս ֆինանսաիրավական հարաբերությունների սուբյեկտների բազմազանությունը նկատի ունենալով օրենսդիրը դիֆերենցիված մոտեցում է ցուցաբերում վեճերի լուծման հարցում: Իրավահարաբերությունները այսօր պաշտպանվում են վարչական և դատական կարգով:

Ֆինանսաիրավական հարաբերությունների պաշտպանության վարչական կարգը լայն տարածում ունի, այն հանդես է գալիս

որպես ֆինանսական վեճերի լուծման օպերատիվ միջոց: Վարչական կարգով, որպես հարկադրանքի միջոցների համակցություն, կիրառվում է մեծամասամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկ-ձեռնարկությունների նկատմամբ:

Հայաստանի Հանրապետության «Հարկերի մասին» 1997թ. ապրիլի 14-ի օրենքի 36-րդ հոդվածում սահմանված է վեճերի լուծման վարչական կարգի էությունը, որտեղ ասված է, որ հարկերը գանձելիս հարկային պետական տեսչության մարմինների պաշտոնատար անձանց գործողությունները կարող են գանգատվել այն մարմնին, որին անմիջականորեն ենթարկվում են այդ անձինք:

Ֆինանսական վեճերի լուծման վարչական կարգին ներհարկ է նաև վեճերի քննարկման ենթակայական կարգը, այսինքն գանգատի վերջնական քննարկումը կատարվում է վերադաս մարմնի կողմից:

Ստորադաս հարկային մարմնի որոշման հետ ձեռնարկությունները, հիմնարկները և կազմակերպությունները համամիտ չլինելու դեպքում իրավունք ունեն դիմելու հարկային տեսչության մարմնին:

Ֆինանսաիրավական հարաբերությունների սուբյեկտների իրավունքների և շահերի պաշտպանության վարչական կարգը նպատակ ունի ոչ միայն վերականգնելու խախտված իրավունքները, այլև վերականգնելու խախտման հետևանքով հասցված նյութական - դրամական վնասները: Այսպես, «Հարկերի մասին» օրենքի 34-րդ հոդվածում ամրագրված է, որ եթե հարկերը սահմանված չափից ավելի է գանձվել, գումարները վերադարձվում են այդ մասին հայտնի դառնալու օրվանից մեկ ամսվա ընթացքում, սահմանված չափից ավելի գանձման օրվան հաջորդող երեք տարիների համար:

Հարկային տեսչության մարմինների կողմից իրենց վրա դրված պարտականությունները ոչ պատշաճ կատարելու հետևանքով վճարողին պատժառված վնասը, այդ թվում բաց թողնված եկամուտները, հատուցվում են օրենքով սահմանված կարգով:

Ֆինանսաիրավական հարաբերությունների սուբյեկտների շահերի պաշտպանության ձևերի շարքում հատուկ տեղ ունի դատական պաշտպանությունը:

«Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգիրքը սահմանում է ըստ սուբյեկտների ֆինանսական այն իրավահարաբերությունները, որոնք ենթակա են դատական պաշտպանության: Այդ նույն օրենսգրքի 15-րդ հոդվածում ասված է, որ քաղաքացիական գործերը քննող դատարաններին ենթակա են բոլոր քաղաքացիական գործերը, որոնք ծագում են պետաիրավական, վարչաիրավական, հարկային և այլ ենթակայության վրա հիմնված իրավահարաբերություններից, եթե մի կողմը քաղաքացի է:

Ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների

որպես ֆինանսական հարաբերությունների մասնակիցների շահերի պաշտպանության դատական կարգը նույնպես սահմանված է քաղաքացիական դատավարության օրենսգրքով: Նրանց շահերի պաշտպանությունը իրականացնում են տնտեսական դատարանները: Օրենսգրքի 16-րդ հոդվածում ասված է, որ տնտեսական դատարանի իրավությանը ենթակա են առևտրային կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի միջև ձեռնարկատիրական գործունեության ոլորտում պետաիրավական, վարչաիրավական և հարկային իրավահարաբերություններից ծագող վեճերը:

Այսօր, չնայած գործող ֆինանսական օրենսդրությունը սահմանում և երաշխավորում է ֆինանսաիրավական հարաբերությունների մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության կարգն ու եղանակները, այնուամենայնիվ, դեռևս ֆինանսաիրավական գրականության մեջ հստակացված չէ «ֆինանսական վեճի» հակասության, նրա ծավալի և բովանդակության, ինչպես նաև «տնտեսական վեճերից» նրա սահմանազատման հարցը:

Ֆինանսական վեճը իրավական բարդ կատեգորիա է, այդ հասկացությունը հավաքական բնույթ ունի և կարող է քննարկվել ոչ միայն իրավական, այլ նաև տնտեսական տեսակետներից: Ֆինանսական վեճի հասկացության հիմքում տնտեսական տեսակետից ընկած են սեփականության տարբեր ձևերի վրա հիմնված, կազմակերպությունների և այն ոլորտի նյութական շահերի հասկացությունները, որտեղ այդ հակասությունները ծնվում են: Այդ հասկացությունը իրավական տեսանկյունից քննարկելու համար հիմք է ծառայում ֆինանսական իրավահարաբերությունների սուբյեկտների իրավունքների և պարտականությունների կարգավորումը:

Ֆինանսական վեճը իրավունքի վերաբերյալ վեճի տարատեսակ է: Ֆինանսական վեճի առարկայի բովանդակության ճիշտ որոշումը հնարավոր է միայն հետազոտվող առարկայի բնույթին հետազոտման մեթոդի համապատասխանության դեպքում: Իրավական վեճի հետազոտման հիմքում դրված չափանիշի (նյութական կամ ձևական) հետ կապված կարող է պարզվել համապատասխանաբար կամ դրա նյութական էությունը, կամ այն հատկանիշները, որոնցով պայմանավորված է դրա լուծման պրոցեդուրային ձևը: Իրավունքի մասին վեճի իրավաբանական բնույթի հասկացության վերաբերյալ միասնական կարծիք չկա գիտության մեջ: Դա բացատրվում է նրանով, որ իրավաբան գիտնականները այդ հասկացության հետազոտման ժամանակ օգտագործում են միաժամանակ վերոհիշյալ երկու չափանիշները՝ մի շարք դեպքերում գերապատվություն տալով ձևականին:

Ֆինանսաիրավական վեճը նեղ իմաստով դրսևորվում է որպես իրավունքի խախտում, իսկ լայն իմաստով նրա տակ հասկացվում է օրենքով պահպանվող շահի խախտում կամ վիճարկում: Իրավահարաբերության մեջ մի կողմի շահը ոչ միշտ է համապատասխանում մյուս կողմի հնարավորություններին՝ չնայած դրա բավարարումը կախված է այդ հնարավորություններից, հակառակ դեպքում մի կողմի օրենքով պահպանվող շահերի բավարարումը կհանգեցնեք մյուս կողմի նույնպես օրենքով պահպանվող շահերի խախտմանը: Յետևաբար, իրավական վեճը հակասություն է երկու վիճող կողմերի պնդումների միջև նյութական իրավահարաբերության մեջ իրավունքների ու պարտականությունների մասին:

Իրավական վեճի ընդհանուր հասկացության հատկանիշները բնորոշ են դրա բոլոր տարատեսակներին, այդ թվում նաև ֆինանսաիրավական վեճի հասկացությանը: Մասնավեճերի նյութական իրավական պատկանելիությունը ֆինանսական իրավունքի ճյուղին պայմանավորված է պետության ֆինանսական գործունեության ոլորտում ֆինանսաիրավական նորմերով կարգավորվող հարաբերությունների բնույթով: Ֆինանսաիրավական վեճերը ըստ էության հարաբերություններ են մի կողմից պետության և նրա ֆինանսավարկային մարմինների, իսկ մյուս կողմից սեփականության տարբեր ձևերի վրա գործող տնտեսական կազմակերպությունների և քաղաքացիների միջև, որոնք ծագում են պետության վարկային, հարկային, արժույթային, ինչպես նաև պետական վարկի կենսագործման ընթացքում: Կազմակերպությունների և պետական բյուջեի միջև ֆինանսական վեճերի ծագումը բոլոր դեպքերում այս կամ այն չափով կապված է դրանց նյութական, առևտրային շահերի հետ: Բայց ոչ բոլոր դեպքերում ֆինանսական վեճը պետք է ընդունել և քննարկել որպես այնպիսի սուբյեկտիվ իրավիճակ, որի դեպքում մի կողմը ձեռնարկությունը, պետական բյուջեի հետ իր հարաբերություններում դրսևորում է ֆինանսաիրավական նորմի պահանջների խախտումներ՝ դրանով ոտնահարելով պետության նյութական շահերը, իսկ պատասխանատվության դեպքում պայքարում է, դրանով պաշտպանելով իր նյութական շահերը: Գործող ֆինանսական օրենսդրությունը և նրա կիրառման պրակտիկան այսօր բացառում են պետության կողմից կամայականությունների դրսևորման փաստերը:

Ֆինանսական վեճերը կարող են ծագել նաև վիճող կողմերից օբյեկտիվորեն անկախ պատճառներով: Խոսքը արտադրանքի արտադրության, շահույթի, վարկի և հարկային քաղաքականության ոլորտում սխալների մասին է: Այս դեպքում անհրաժեշտ է խոսել վերադաս տնտեսական մարմինների նախարարությունների և գե-

րատեսչությունների գործունեության անտարբերության, ոչ թե ձեռնարկությունների և կազմակերպությունների բյուջեի հետ փոխհարաբերությունների մեջ եղած թերությունների մասին: Դրանց միջև վեճերը ծագում են որպես շահույթից բյուջե վճարումների բռնագանձման առիթով բացթողումների և սխալների հետևանք:

Երբեմն նաև տնտեսվարող սուբյեկտների և ֆինանսական մարմինների միջև մեծաքանակ ֆինանսական վեճեր են ծագում սուբյեկտիվ պատճառներով, որոնք էական չեն և չի կարելի հանգեցնել առանձին ձեռնարկությունների և կազմակերպությունների անպարտաճանաչ վերաբերմունքին և նրանց կողմից պետական կարգապահության խախտմանը:

Ֆինանսաիրավական գրականության մեջ ֆինանսական վեճերի ծագման պատճառները երբեմն նույնացվում են դրանց քանակի աճի պատճառների հետ: Ֆինանսական վեճերի ծագումը ոչ միայն տնտեսվարող սուբյեկտների և քաղաքացիների պետական բյուջեի փոխհարաբերություններում հակասությունների ավելացման արդյունք է տնտեսության կառավարման կատարելագործման պրոցեսում: Տնտեսական կազմակերպությունների պետական բյուջեի հետ հարաբերություններում ֆինանսական կարգապահությունը նկատելիորեն ամրապնդվում է: Բայց ֆինանսական մարմինների կողմից լուծվող ֆինանսական վեճերի քանակը, թրինակ աճում է նույնիսկ կարգապահության ամրապնդման պայմաններում: Բանն այն է, որ պետությունը նշանակալիորեն բարձրացրել է ձեռնարկությունների և կազմակերպությունների ֆինանսական պատասխանատվության չափերը պետական բյուջեի առջև հարկային համակարգի առանձին տեսակների համար: Տնտեսական վեճերից ֆինանսական վեճի սահմանազատման միակ հիմնավոր սկզբունքը պայմանավորված է ֆինանսական իրավունքի որպես իրնքնուրույն իրավունքի ճյուղի կողմից կարգավորվող հասարակական հարաբերությունների առանձնահատկություններով: Ավելի ստույգ ֆինանսական պետք է համարել այն բոլոր տարածայնությունները, որոնք տնտեսությունում, սոցիալ-մշակութային և վարչաքաղաքական կյանքում առաջանում են պետության ֆինանսական գործունեության ընթացքում և կապված են դրանական միջոցների հավաքման, բաշխման և օգտագործման գործառությունների հետ:

Այս առաջնությունով, այսօր անբավարար պետք է համարել ֆինանսաիրավական վեճերի տեսակների և նրանց դատական պաշտպանություն խիստ սահմանափակ գործընթացը, որը ըստ էության միշտ չի արտահայտում ֆինանսաիրավական հարաբերությունների սուբյեկտների տնտեսական կառուցողիաների ձևավորման պրոցեսում ծագող ֆինանսական վեճերի բնույթը:

Այուս կողմից տնտեսական կազմակերպությունների և քաղաքացիների ֆինանսական իրավունքների և օրինական շահերի դատաիրավական պաշտպանությունը համարելով հանրապետության ժողովրդավարության քաղաքական ուժեղ մի ասեմանեմ նվաճումը, անկախ պետականության ձևավորման անցման շրջանի համար անարդյունավետ պետք է համարել ֆինանսաիրավական վեճերի լուծման դատական կարգը: Նախապատվությունը վեճերի լուծման արդյունավետության և օպերատիվության իմաստով պետք է տալ վարչական կարգին:

Իրավագիտության մեջ մինչև այժմ քավարար ուշադրություն չի դարձվել ֆինանսական վեճերի լուծման ասպարեզում վարչական կարգի հիմնահարցերին: Գրականության մեջ այդ հարցերը լուսաբանվել են հիմնականում դատական իրավասությունից սահմանված բացառումները քննարկելու ժամանակ: Գործող ֆինանսական թրենսպորտում ևս չկա վարչական կարգով ընկարկվող ֆինանսական վեճերի ենթակայության համալիր կարգավորում: Մինչդեռ վարչական կարգով ֆինանսական վեճերի լուծումը նշանակալի գիտական և գործնական հետաքրքրություն են ներկայացնում:

Ֆինանսական մարմնի վարչական իրավատեղիներումը շահույթից բյուջե վճարումների ուղղությամբ ծագող ֆինանսական վեճերի լուծման բնագավառում կախված չէ վիճող կողմերի ենթակայությունից, այլ մշտապես որոշվում է վեճի առարկայով (բնույթով):

Իրավաբանական գրականության մեջ կարծիք է հայտնվել այն մասին, որ ֆինանսական մարմնի և տնտեսական կազմակերպությունների միջև ծագող հակասությունների վարչական կարգով կարգավորումը արդարացված չէ, քանի որ վիճող կողմերի միջև չկան ենթակայության հարաբերություններ:

Ուսումնասիրությունները, հատկապես գործնական կյանքում վկայում են, որ հարկային հարաբերություններից ծագող ֆինանսական վեճերի դատական քննարկումները աննպատակահարմար են այն հիմնավորմամբ, որ առաջին, այդ վեճերը ծագում են դրանական միջոցների պլանային հավաքման պրոցեսում: Դրանց օբյեկտը դրանին է կան դրամական պարտավորությունները դրամական միջոցների համապետական ֆոնդի ստեղծումը: Այդ իրավահարաբերություններում միշտ մասնակցում է պետությունը՝ անմիջականորեն կամ ի դեմս իր անունից և իր հսկողությամբ դրամական միջոցների համապատասխան ֆոնդերի ստեղծման ուղղությամբ օրինաչափ գործունեություններ իրականացնող լիազորված

¹ Տես. И.Г.Побирченко. Хозяйственные споры и формы их разрешения. Автореферат докторской диссертации, Харьков. 1971. ст. 41-42.

հարկային մարմնի:

Երկրորդ, շահույթից բյուջե վճարումների ասպարեզում ձեռնարկությունների և հարկային մարմինների իրավունքները և պարտականությունները պայմանավորված չեն պայմանագրով, այլ սահմանված են անմիջականորեն ֆինանսա-իրավական ակտերով:

Ձեռնարկությունների և տնտեսական կազմակերպությունների եկամուտների բաշխման և համապետական ֆոնդի պլանային մոբիլիզացման ուղղությամբ ձեռնարկության և պետական բյուջեի իրավական հարաբերություններում պետությունը հանդես է գալիս ոչ միայն որպես իշխանության սուբյեկտ, այլ նաև որպես տնտեսվարող սուբյեկտ և ողջ հասարակության նյութական և մշակութային պահանջմունքների արտահայտիչ: Այն իշխանական ակտերի հիման վրա իրականացնում է նյութական, դրամական բնույթի գործունեություն:

Այդ կապակցությամբ ձեռնարկությունների շահույթից բյուջե վճարումների պրոցեսում տեղի ունեցող իրավահարաբերություններում հստակորեն առանձնացնում են երկու իրավական տարրեր՝ պետական և գույքային:

Ղա բնորոշ է շահույթից բյուջե վճարումների որպես իշխանաունեցվածքային հարաբերությունների բնույթը:

Ֆինանսա-իրավական հարաբերությունների նման առանձնահատկությունը, որտեղ կողմերից մեկը հանդիսանում է պետությունը կամ լիազորված ֆինանսական մարմինը, որը միակողմանիորեն որոշում է մնացած սուբյեկտների վարքը անհիմաստ է դարձնում ֆինանսական վեճերը դատական կարգով լուծելու հնարավորությունը:

Բացի այդ անհրաժեշտ է հաշվի առնել, որ ֆինանսական վեճերի լուծման վարչական կարգը արագացնում է հարցերի լուծման ընթացքը՝ չսպասելով դատարանում գործի նախապատրաստմանը:

Ֆինանսական վեճերի լուծման վարչական կարգը նպատակահարմար է նաև այն պատճառով, որ ապահովում է ձեռնարկությունների դրամական միջոցների ժամանակին մուտքը բյուջե¹:

ԳԼՈՒԽ IV

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՅՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

§ 1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՅՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱԺԱՍՆԱԿԱՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետության հասարակական-տնտեսական զարգացման արագացման, սեփականության ձևերի արդյունավետ օգտագործման, ժողովրդավարության ընդլայնման, հասարակական կյանքի բոլոր կողմերի նորացման և կառավարության որդեգրած քաղաքականության կենսագործումը պահանջում են արմատապես վերակառուցել տնտեսության կառավարումը, հատկապես նրա բաղկացուցիչ մասը կազմող ֆինանսական վերահսկողությունը:

Մեր երկրում գործող ֆինանսական վերահսկողության մեխանիզմը սկսվել է ձևավորվել 1990-ական թվականներին, որն իր ժամանակին մասամբ նպաստեց տնտեսության զարգացման գործին:

Ներկայումս, երբ երկրի արտադրողական ուժերը վերելք են ապրում, ստեղծվում են արտադրության նոր ճյուղեր, ընդլայնվում են արտաքին տնտեսական կապերը, առաջանում են սոցիալական բարձր պահանջներ, անհրաժեշտություն է առաջացել կատարելագործել ֆինանսական վերահսկողությունը որպես ֆինանսների սոցիալ-տնտեսական ֆունկցիա:

Ֆինանսական վերահսկողությունը դա պետական, ինչպես նաև սեփականության տարբեր ձևերի վրա հիմնված կազմակերպությունների դրամական միջոցների հավաքման, բաշխման և օգտագործման նպատակահարմարության և օրինականության ապահովման նկատմամբ իրականացնող վերահսկողությունն է, որը ուղղված է տնտեսության արդյունավետ զարգացմանը և ժողովրդի բարօրության ապահովմանը:

Ֆինանսական վերահսկողության ոլորտի մեջ են մտնում նաև, նյութական և աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման վրա իրականացվող գործողությունները, քանի որ շուկայական

¹ См иванришдан Г.А. Сукласян, Порядок разрешения споров до платежам из прибиак в бюджет. ЕГУ, Ер. 1977, стр. 22.

հարաբերություններում դրանք պահպանում է իր դերը:

Ֆինանսական հսկողությունը կոչված է լուծելու երկու հիմնական խնդիրներ

1) Ապահովել օրինականության պահպանումը ֆինանսական գործունեության ընթացքում,

2) Հասնել այն բանին, որ ձեռնարկությունների, հիմնարկությունների և կազմակերպությունների ֆինանսական գործունեությունը համապատասխանի ոչ միայն օրենքին, այլև իրենց էությամբ կրի ամենից առավել արդյունավետ և նպատակասլաց բնույթ: Այսպիսով, Ֆինանսական հսկողությունը դա հսկողությունն է, պետական դրամական միջոցների պլանային հաշվառման, բաշխման և օգտագործման պրոցեսում կատարվող բոլոր միջոցների օրինականության և նպատակասլացության վրա: Ֆինանսական կարգապահության հիմնական պահանջներն են՝ ապահովել օրինականության պահպանումը ֆինանսական գործունեության մեջ, հասնել այն բանին, որ բոլոր ձեռնարկությունները, հիմնարկությունները և կազմակերպություններն ու քաղաքացիները կատարեն ֆինանսական հարցերով եղած բոլոր օրենքները, որոշումները և կարգադրությունները, թույլ չտան ֆինանսական կարգապահության խախտում: Ֆինանսական կարգապահության բովանդակությունը կազմող պահանջները հիմնականում հանգում են հետևյալին.

ա) բոլոր ձեռնարկությունների, կազմակերպությունների ու քաղաքացիների կողմից բյուջե վճարումներ կատարելու. պարտականությունների ժամանակին և լրիվ կատարումը:

բ) Ձեռնարկությունների, կազմակերպությունների և հիմնարկների պետական և սեփական միջոցների ծախսումը իրականացնել խիստ նպատակային կարգով՝ ֆինանսական մարմնի կողմից սահմանված շրջանակներում, ըստ պլանների քանակային ու որակային ցուցանիշների փաստացի կատարողականի, առավել տնտեսամբ ու արդյունավետությամբ:

գ) Բանկային վարկերի խստիվ նպատակային օգտագործումը և դրանց ժամանակին ու լրիվ մարումը:

դ) Ձեռնարկությունների, կազմակերպությունների, հիմնարկների միջև դրամական հաշվարկների կատարման կարգի խստիվ պահպանումը:

ե) Բոլոր ձեռնարկությունների, հիմնարկությունների, կազմակերպությունների և պաշտոնատար անձանց կողմից հավաքվող կանխիկ դրամի լրիվ և ժամանակին հանձնումը բանկային հաստատություններին և ձեռնարկության, հիմնարկության ու կազմակերպության դրամարկղեր:

Ֆինանսական գործողությունների նպատակայնությունը բացի

այս եղանակներից, ապահովում է նաև դրամով վերահսկողության միջոցով:

Դրամով հսկողությունը դա ձեռնարկությունների և կազմակերպությունների տնտեսական-ֆինանսական գործունեության հսկողությունն է, այնպիսի արժեքային կատեգորիաների օգնությամբ, ինչպիսին է շահույթը, ինքնարժեքը, գինը և այլն, ինչպես նաև վարկավորման, ֆինանսավորման և հաշվարկների համակարգի միջոցով:

Արա համար բազա է հանդիսանում տնտեսական կազմակերպությունների, ձեռնարկությունների գործունեության իրականացման մեթոդը՝ առևտրային հաշվարկը:

Դրամով հսկողությունը մի կողմից նպատակ ունի բացահայտել աշխատանքի արդյունքները և որակը, մյուս կողմից՝ ներազդել ձեռնարկության և նրա աշխատողների վրա՝ թերությունները վերացնելու նպատակով: Դրամով վերահսկողության համար նախադրյալ է հանդիսանում այն հանգամանքը, որ դրամական մուտքերը ստացվում են ձեռնարկության կողմից պլանի քանակական և որակական ցուցանիշների կատարմանը զուգընթաց: Այն դեպքում, երբ հաշվարկները բանվորների ու ծառայողների հետ, բյուջեի կատարվող վճարումները, բանկային վարկերի վերադարձը ըստ օրացուցային պլանի ժամկետավորվում է ձեռնարկության հաշիվներում դրամական միջոցների բացակայությունը, բանվորներին ու ծառայողներին պարտք մնալը, բյուջե ժամանակին վճարումներ չկատարելը, բանկային վարկերը ժամանակին չվերադարձնելը, մատակարարողները հետ ժամանակին հաշվարկները չկատարելը ահազանգ են ձեռնարկության գործունեության անբավարար վիճակի մասին և առաջ են քաշում ֆինանսական վիճակի բարելավման նպատակով գործնական միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը:

Ներկա հասարակական կյանքում հաշվառումն ու վերահսկողությունը դեռևս բնորոշվում են տնտեսական օրենքների պահանջներով:

Հաշվառումը ամբողջ տնտեսության պլանայնորեն համաչափ զարգացման գործոններից մեկն է: Վերահսկողությունը անհրաժեշտ է, որպեսզի հնարավոր լինի պարզել, թե որքանով է արտադրությունը համապատասխանում տնտեսական պլաններին և խնայողության ոեժիմի պահանջներին:

Շուկայական հարաբերություններում դրամը, ինչպես հայտնի է, աշխատանքի ծախսումների ըստ քանակի ու որակի հաշվառման և հասարակական արդյունքի բաշխման համապարփակ ձևն է: Վ.Ի.Լենինը նշում է, որ «Հաշվառում և վերահսկողություն, - ահա այն զլխավոր բանը, որ պահանջվում է կոմունիստական հասարակու-

թյան առաջին փուլը կարգի գցելու, նրա կանոնավոր գործունեության համար»¹:

Հաշվառումը և վերահսկողությունն անհրաժեշտ են ոչ միայն նյութական արտադրության մեջ նյութական և դրամական միջոցների ծախսման գործում, այլև, ամբողջ հասարակական կյանքում: Վ.Ի.Լենինը նշում էր. «Մեզ պետք է մարդկանց պիտանիության ստուգում փաստական կատարման ստուգումը... Ստուգել մարդկանց և ստուգել գործի փաստական կատարումը - այս է դարձյալ այս է, միմիայն այս է այժմ ամբողջ աշխատանքի, ամբողջ քաղաքականության մեխը»²: Վ.Ի.Լենինի այս կարծիքը մինչև այժմ էլ չի կորցնում իր կենսականությունը:

Պետական հաշվառման ու վերահսկողության ընդհանուր համակարգում կարևոր տեղ է պատկանում Ֆինանսական վերահսկողությանը: Նրա միջոցով է իրագործվում սեփականության ձևերի պաշտպանությունը, ֆինանսական-բյուջետային կարգապահության ամրապնդումը, հասարակության նյութական միջոցների խնայողությունը: Ֆինանսական վերահսկողության նշանակությունն առանձնապես մեծանում է ժամանակակից հասարակության կառուցման ժամանակաշրջանում:

Նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունում հասարակությունն ունի համաժողովրդական ֆոնդեր ուստի մեծանում է հաշվառման ու վերահսկողության դերը ազգային հարստության պահպանման և ճիշտ օգտագործման գործում: Ժողովրդին պատկանող յուրաքանչյուր դրամի խնայողաբար, ռացիոնալ օգտագործումը, միջոցների հմտորեն ծախսումը, ճիշտ կազմակերպված դեկավարության և տնտեսվարության մեթոդների անշեղորեն բարելավումը (կազմակերպական և գիտակցական) օրինականության և կարգապահության բարձրացումը, ժողովրդական նախաձեռնության զարգացումը հասարակական արտադրության արագացման հզոր աղբյուրներ են հանդիսանում:

Տնտեսության բնագավառում իրագործվող ֆինանսական վերահսկողությունը բազմաձև է: Նրա մեթոդներով ստուգման են ենթարկվում առևտրահաշվարկային կազմակերպությունների ֆինանսական պլաններն ու բյուջետային հիմնարկությունների նախահաշիվները, որպեսզի թույլ չտրվեն ոչ նպատակահարմարորեն բարձրացված ծախսեր ու նվազեցված եկամուտներ և պարզել, թե արդյոք հաշվի են առնվել եղած արտադրական հնարավորությունները: Տնտեսական տարվա ընթացքում կազմակերպություն-

ներում վերահսկման է ենթարկվում արտադրական պլանների կատարումը, թողարկվող արտադրանքի ինքնաթիվների, շահույթի, բյուջե կատարվելիք վճարումների պլանները: Ստուգման են ենթարկվում նաև խնայողության ռեժիմի պահպանումը, թե որչափ նպատակահարմարորեն են օգտագործվում բյուջետային ու սեփական միջոցները, նյութական արժեքների օգտագործումն ու պահպանումը:

Ֆինանսական վերահսկողության մեջ է մտնում նաև տարբեր ֆոնդերի, ինչպես նաև փոխառու միջոցների օգտագործման ստուգումը, տնտեսության ներքին ռեզերվների բացահայտումը, նրանց օգտագործումը արտադրության աճման և կուտակումների մեծացման համար: Ֆինանսական վերահսկողության օգնությամբ ոչ միայն բացահայտվում են պետական, տնտեսական ու ֆինանսական կարգապահության խախտումները, այլև կանխվում են այդ խախտումները, նախատեսվում են տնտեսվարման կատարելագործման ուղիները:

Այսպիսով, ֆինանսական վերահսկողությունը կարևոր լծակ է նյութական և դրամական միջոցների արդյունավետ և խնայողաբար օգտագործման, սոցիալ-տնտեսական ծրագրերով նախատեսվող առաջադրանքների կատարման համար: Լավ կազմակերպված, բազմակողմանի վերահսկողությունը բարձրացնում է յուրաքանչյուր աշխատողի պատասխանատվությունն իր տեղամասի աշխատանքի համար, նպաստում արտադրական և տնտեսական ծրագրերի կատարմանը:

Ֆինանսական վերահսկողության հետ անխզելիորեն կապված է բոլոր կազմակերպությունների կողմից պետական կարգապահությունը և կառավարության կողմից ընդունված օրենքներն ու սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը կատարելու պահանջը:

Մասնավոր սեփականությունը և շուկայական հարաբերությունները օբյեկտիվորեն պայմաններ են ստեղծում ֆինանսական վերահսկողություն դերի և նշանակության սահմանափակումների համար, քանի որ ինչպես նյութական բարիքների արտադրության, այնպես էլ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների անմիջական վերահսկողությունը գտնվում է արտադրության միջոցների սեփականատերերի ձեռքին:

Գոյություն ունի արտադրական և առևտրական գաղտնիություն, որը հնարավորություն է տալիս սեփականատիրոջը թաքցնել իրական եկամուտները:

Պետական և հասարակական ֆինանսական վերահսկողության աճող նշանակությունն իր օրենսդրական ամրապնդումն է ստացել հասարակական կյանքում:

Որոշված են հանրապետություն նախագահին կից վերահսկողու-

¹ Վ. Ի.Լենին, երկար, հատոր 25 էջ 616:

² Վ. Ի.Լենին, երկար, հատոր 45 էջ 264-265:

բյան մարմինների ձևավորման և ստուգումների անցկացման կարգը, սահմանադրությամբ ամրապնդված է ԱԺ և կառավարության լիազորությունները բյուջեի նախագծի քննարկման, նախորդ տարիների բյուջեների կատարման հաշվետվությունների հաստատման ուղղությամբ: Սահմանադրական այս լիազորությունները վկայում են պետական ֆինանսական վերահսկողության անհրաժեշտությունը ազգային պետականության ամրապնդման գործընթացում:

Այսօր հատուկ դեր ունի ֆինանսական վերահսկողությունը պետական կառավարման բնագավառում, քանի որ վերջինս իրենից ներկայացնում է ամենօրյա պետական գործունեություն, որն ընդգրկում է հասարակական կյանքի առավել կարևոր ոլորտները:

Պետական վերահսկողությունն իրականացվում է գործադիր իշխանության բոլոր ուղղություններով, նրա բոլոր մարմինների կողմից իրենց և նրանց ենթակա օբյեկտների առաջ դրված խնդիրների ամենօրյա իրագործման ընթացքում: Այն կոչվում է պետական, քանի որ իրականացվում է պետության անունից համապատասխան իրավական-իշխանական լիազորություններից օգտվելու հիման վրա:

Ելնելով վերահսկող և վերահսկվող օբյեկտների կազմակերպական փոխհարաբերություններից կարելի է տարբերել *ներքին (ներգերատեսչական)* և *արտաքին (արտագերատեսչական)* ֆինանսական վերահսկողություն: Ներքին վերահսկողություն իրականացվում է նույն համակարգի մարմինների նկատմամբ և արտաքին կազմակերպորեն ենթակա օբյեկտների նկատմամբ:

Ֆինանսական վերահսկողության միջոցով իրագործվում է սեփականության տարբեր ծեղերի պաշտպանությունը, ֆինանսական-բյուջետային կարգապահության ամրապնդումը, հասարակության նյութական միջոցների խնայողությունը: Ֆինանսական վերահսկողության բովանդակության մեջ մտնում է բոլոր գերատեսչությունների, ձեռնարկությունների, կազմակերպությունների և հիմնարկների արտադրատնտեսական և ֆինանսական գործունեության, ինչպես նաև պետական բյուջեի եկամուտների ու ծախսումների կատարման ստուգումը:

Ֆինանսական վերահսկողությունը պետական և հասարակական մարմինների գործունեություն է, որի էությունը կայանում է հասարակության ընդլայնված վերարտադրության պլանային համամասնությունների պահպանման նպատակով կենտրոնացված և ապակենտրոնացված դրամական ֆոնդերի առաջացման և օգտագործման պրոցեսների ստուգման և հիմնավորվածության մեջ:

Այս բնորոշումը թույլ է տալիս ընդգծելու ֆինանսական վերահսկողության առանձնահատուկ տեղը վերահսկողության մյուս տեսակների շարքում, ինչպես այդ վերահսկողության ուղղակի օբյեկտի

տեսակետից (կենտրոնացված և ապակենտրոնացված դրամական ֆոնդերի), այնպես էլ ֆինանսական վերահսկողության ամփոփական նպատակների տեսակետից (հասարակական ընդլայնված վերարտադրության պլանային համամասնությունների պահպանում):

Ֆինանսական վերահսկողությունը ծնվում է արտադրական-տնտեսական հարաբերություններից: Ներկայումս այն իրականացվում է սկզբունքորեն այլ քաղաքական պայմաններում, ժողովրդավարական պետության նոր դերի պայմաններում: Այս հանգամանքները մատնանշում են ֆինանսական վերահսկողության արմատական բովանդակությունը: Նորը դրսևորվում է զլխավորապես ոչ թե վերահսկողության կազմակերպման կարգի, այլ նրա առարկայի մեջ, որն իր հերթին, որոշում է վերահսկողության մյուս առանձնահատկությունները, մասնավորապես՝ տարածման ոլորտը, վերարտադրության նկատմամբ ունեցած ներգործությունը, վերահսկողության ղեկավարատական բնույթն և այլն:

Ֆինանսական վերահսկողության հնարավորությունը ելնում է ֆինանսների հատուկ վերահսկիչ գործառույթներից: Մակայն այդ հնարավորությունը ինքնին չի ծնում ֆինանսական վերահսկողություն: Այդ իրականացնելու համար անհրաժեշտ են համապատասխան կազմակերպական և մեթոդական պայմաններ, որոնց թվին կարելի է դասել վերահսկող հատուկ մասնագիտացված մարմինների ստեղծումը, դրանց որակյալ մասնագետներով ապահովելը, նրանց երաշխավորված իրավունքներով և պարտականություններով լիազորելը:

Ֆինանսական վերահսկողության անհրաժեշտությունը ելնում է ապրանքային արտադրության շուկայական բնույթից, որը նշանակալից չափով կախված է ապակենտրոնացված դրամական ֆոնդերի լիարժեք և ճիշտ օգտագործումից: Անկախ առաջացման աղբյուրից՝ ֆինանսական հարաբերությունների յուրաքանչյուր խախտում ըստ ծավալի և ժամանակի բացասաբար է անդրադառնում շրջանառության վրա ամբողջությամբ:

Ֆինանսական վերահսկողության իրականացումը թույլ է տալիս դրամական ֆոնդերի պլանաչափ շարժման պարբերաբար ստուգմամբ լուծել նաև նյութական և աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման խնդիրը: Այստեղ ֆինանսական վերահսկողությունը հանդես է գալիս որպես հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման գործոն:

Տնտեսության բնագավառում իրագործվող ֆինանսական վերահսկողությամբ ստուգման է ենթարկվում նաև խնայողության ռեժիմի պահպանումը: Բացահայտվում են բյուջետային և սեփական շրջանառու միջոցների օգտագործման նպատակայնությունը, նյու-

թական արժեքների պահպանման վիճակը: ֆինանսական վերահսկողության մեջ են մտնում նաև տարբեր ֆոնդերի, ինչպես նաև փոխառած միջոցների օգտագործման ստուգումը, տնտեսության ներքին ռեզերվների բացահայտումը, նրանց օգտագործումը արտադրության աճի և կուտակումների մեծացման համար: ֆինանսական վերահսկողության օգնությամբ ոչ միայն բացահայտվում են պետական, տնտեսական ու ֆինանսական կարգապահության խախտումներ, այլև կանխվում են այդ խախտումները, նախատեսվում տնտեսության կատարելագործման ուղիներ:

Լինելով սոցիալական վերահսկողության հատուկ ձև՝ ֆինանսական վերահսկողությամբ ստուգման է ենթարկվում գործադիր և կարգադրիչ մարմինների կողմից ընդունված ֆինանսական ակտերի կատարումը:

Այսպիսով, ֆինանսական վերահսկողության գործառույթների իրականացման չափազանց լայն ոլորտը թույլ է տալիս նշանակալիորեն ազդել ընդլայնված վերարտադրողական հարաբերությունների ամբողջության վրա:

§2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՎԱՐԳԸ

1. ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Իրավաբանական գրականության մեջ ֆինանսական վերահսկողության տեսակների կապակցությամբ մեկ միասնական տեսակետ գոյություն չունի:

Ըստ Է.Ս.Վոզնեսենսկու վերահսկողությունը կախված վերահսկողության սուբյեկտներից կարող է լինել 2 տեսակի՝ պետական և հասարակական, իսկ վերահսկողության օբյեկտների տեսակետից կարելի է բաժանել ֆինանսական, վիճակագրական, պետառտեսչական, հրշեջ հսկողության, սանիտարա-հիգիենիկ և այլն¹:

Ֆինանսա-իրավական գրականության մեջ իրավաբանների ճնշող մեծամասնությունը այն կարծիքին է, որ ֆինանսական վերահսկողությունն ըստ սուբյեկտների դրսևորվում է.

ա) Համապետական ֆինանսական վերահսկողություն որն իրականացվում է պետական իշխանության և կառավարման բարձրագույն ու տեղական մարմինների,

բ) Ներքերտեսչական ֆինանսական վերահսկողություն որը կապված է անմիջական կառավարման իրականացման հետ, ընդգրկում է ենթակա մարմինների ամբողջ գործունեությունն ընդհանրապես,

գ) Արտագերտեսչական ֆինանսական վերահսկողություն որն ընդգրկում է ոչ ենթակա մարմինների ֆինանսական գործունեությունը,

դ) Ներտնտեսական ֆինանսական վերահսկողություն

ե) Հասարակական ֆինանսական վերահսկողություն

զ) Աուդիտորական ֆինանսական վերահսկողություն

Ֆինանսական վերահսկողության դասակարգման հարցում կան նաև այլ կարծիքներ:

Պետական իշխանության և կառավարման համակարգի մարմինների կողմից իրականացվող վերահսկողությունը իր էությամբ համապետական ֆինանսական վերահսկողություն է:

Ակաժ ԳԳ ԱԺ և կառավարությունից վերջացրած տեղական ինքնակառավարման մարմիններով, ֆինանսական վերահսկողությունն իրագործվում է համապատասխան բյուջեներից, սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի և բյուջեների կատարման վերաբերյալ հաշվետվությունների քննարկման, հաստատման և կատարման պրոցեսում: Նրանք ստուգման են ենթարկվում բազմաթիվ տեսակի բյուջեներով, ծախսերի օրինականությունը և նպատակահարմարությունը, բյուջեի եկամուտների մուծումների և համապատասխան ծախսերի լրիվ ու ժամանակին կատարումը:

ԳԳ Սահմանադրության 77-րդ հոդվածի համաձայն Ազգային ժողովը «վերահսկողություն է իրականացնում պետական բյուջեի կատարման, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ»:

Հանրապետության ԱԺ անհրաժեշտության դեպքում ցանկացած հարցի շուրջ կարող է ստեղծել ստուգող հանձնաժողովներ: Պետական և հասարակական բոլոր մարմինները, կազմակերպությունները և պաշտոնատար անձինք պարտավոր են կատարել այդ հանձնաժողովների պահանջները, ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթեր և նյութեր:

Տնտեսական և սոցիալական զարգացման ծրագրերի և բյուջեի քննարկման ժամանակ բյուջետային և ճյուղային հանձնաժողովները, պատգամավորները իրականացնում են արտադրական և ֆի-

¹ Э.А.Вознесенский, Финансовый контроль в СССР, "Юридическая литература", М., 1973, с.67-68.

նամակահան ցուցանիշների մանրամասն ըննարկում, բացահայտում են ներքին ռեզերվները, ուղիներ են գտնում պլանավորված ծախսերի առավել արդյունավետ օգտագործման համար: Ընթացիկ բյուջեների կատարման հաշվետվությունների հաստատման ժամանակ նրանք ստուգում են բյուջետային միջոցների օգտագործման ճշտությունը, վեր են հանում առանձին արտադրաչափ միավորումների, ձեռնարկությունների, նախարարությունների և գերատեսչությունների կողմից բյուջե կատարվող մուծումների թրակտարման պատճառները, առաջարկություններ են մտցվում նշված թրությունների վերացման ուղղությամբ:

Ազգային ժողովը պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը ըննարկում և հաստատում է Ազգային ժողովի վերահսկիչ պալատի եզրակացության առկայությամբ:

Վերահսկիչ պալատը ֆինանսական աուդիտ (ուսումնասիրություններ և վերլուծություններ) իրականացնող կազմակերպություն է, որը ձևավորվում է ԳՀ Ազգային ժողովի կողմից և հաշվետու է միայն նրան:

Վերահսկիչ պալատի խնդիրներն են՝

ա) Ազգային ժողովին ներկայացնել աուդիտի արդյունքները, դրանց մասին տեղեկացնել կառավարությանը:

բ) Ազգային ժողովին ներկայացնել եզրակացություններ՝ պետական բյուջեի կատարման մասին, կառավարության տարեկան հաշվետվության, պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման տարեկան ծրագրի կատարման մասին կառավարության հաշվետվության, կենտրոնական բանկի տարեկան հաշվետվության վերաբերյալ:

գ) Յուրաքանչյուր կիսամյակի սկզբում տեղեկանք ներկայացնել Ազգային ժողովի պատգամավորներին նախորդ կիսամյակում պետական բյուջեի կատարման այլ պետություններից, միջազգային կազմակերպություններից ստացած փոխառությունների և վարկերի օգտագործման, սեփականաշնորհման և ապապետականացման ծրագրի կատարման ընթացքի մասին:

դ) Ազգային ժողովի հանձնաժողովներին և պատգամավորներին ջրայն տալ մեթոդական և մասնագիտական օգնություն: Ազգային ժողովի վերահսկիչ պալատն իր խնդիրների իրականացման համար օժտված է համապատասխան իրավասություններով: Մասնավորապես աուդիտ իրականացնել՝

1) ԳՀ պետական բյուջեի կատարման, եկամուտների և ծախսերի հոգսվածների, պետական բյուջեի եկամուտների մուտքի, պետական բյուջեի միջոցների, պետական արտաբյուջետային ֆոնդերի օգտա-

գործման, պետական մարմինների պահպանման ծախսերի, պետական բյուջեով նախատեսված և փաստացի կատարման միջև շեղումների նկատմամբ:

2) պետական ծրագրերի և պետական պատվերների կատարման համար ձեռնարկություններին, հիմնարկներին և կազմակերպություններին (անկախ սեփականության ձևից) պետական սեփականության, ֆինանսական միջոցների տրամադրման նկատմամբ:

3) պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմիններում բյուջետային հատկացումների օգտագործման նկատմամբ:

4) այլ պետություններից, միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման վերաբերյալ:

5) պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման ծրագրի կատարման, սեփականաշնորհման և ապապետականացման գործընթացում գտնվող ձեռնարկությունների նկատմամբ համապատասխան նախարարությունների, գերատեսչությունների և պետական կառավարման տարածքային մարմինների իրավասությունների սահմանափակումների պահպանման, սեփականաշնորհման սերտիֆիկատների թողարկման, բաշխման և ճարման նկատմամբ:

Վերահսկիչ պալատն աուդիտն իրականացնում է ուսումնասիրությունների միջոցով:

Ուսումնասիրությունն ընդգրկում է՝

ա) օրենքներին, ԳՀ նախագահի որոշումներին և կարգադրություններին, ԳՀ կառավարության և վարչապետի որոշումներին, պետական այլ մարմինների որոշումներին և նորմատիվ ակտերին ծանոթանալն ու դրանց վերլուծությունը,

բ) ԳՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, ձեռնարկություններից, հիմնարկներից և կազմակերպություններից իրենց իրավասությունների շրջանակներում և կանոնադրությամբ սահմանված կարգով տեղեկություններ և այլ փաստաթղթեր պահանջելը, դրանց հետ ծանոթանալը և վերլուծելը,

գ) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ֆինանսատնտեսական փաստաթղթերի հետ տեղում ծանոթանալը և իրավիճակն արձանագրելը:

Վերահսկիչ պալատի ուսումնասիրությունների հիման վրա պատրաստվում են համապատասխան տեղեկանքներ, արձանագրություններ և եզրակացություններ:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների պաշտո-

նատար անձինք պարտավոր են վերահսկիչ պալատին ըստ պահանջի ներկայացնել տեղեկանքներ ու անհրաժեշտ այլ փաստաթղթեր՝ բյուջետային միջոցների օգտագործման վերաբերյալ և աջակցել վերահսկիչ պալատի պաշտոնատար անձանց՝ իրենց պարտականությունները կատարելիս: Վերոհիշյալ պաշտոնատար անձինք վերահսկիչ պալատին կեղծ տեղեկություններ հաղորդելու, նրա պաշտոնատար անձանց պարտականությունների կատարմանը խոչընդոտելու դեպքում պատասխանատվության են կրում օրենքով սահմանված կարգով:

2. Կառավարությունն իր փառաբանությունները սահմանում վերահսկում է պետական բյուջեի կազմումը և կատարումը (ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածի 2-րդ կետ), ապահովում է ֆինանսատնտեսական, վարկային և հարկային միասնական պետական քաղաքականության իրականացումը (Սահմանադրության 89-րդ հոդվածի 4-րդ կետ):

3. ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը վերահսկում է պետական մարմինների, բյուջետային ֆինանսավորում ստացող հիմնարկների, կազմակերպությունների կողմից բյուջետային միջոցների ճիշտ և նպատակին օգտագործումը, վերը նշված մարմինների կողմից ֆինանսական կարգապահության կանոնների պահանջների կատարումը և այլն: Ֆինանսների նախարարությունը պարբերաբար անցկացնում է ստուգումներ՝ նախարարություններում ֆինանսական կարգապահության, վերահսկիչ-վերստուգիչ աշխատանքի վիճակի կապակցությամբ: Հիշյալ նախարարությունն իրավունք ունի ստուգվող մարմիններից պահանջել անհրաժեշտ նյութեր, փաստաթղթեր, հաշվետվություններ, նախահաշիվներ, անցկացնել ֆինանսական գործունեության ստուգում և վերստուգում, ստուգել կանխիկ դրամի առկայությունը, կարգապահության վերահանված խախտումների վերացման վերաբերյալ ցուցումներ տալ ստուգվող կազմակերպությունների ղեկավարներին:

Բյուջետային հատկացումների ճիշտ ու նպատակին օգտագործման վրա վերահսկողությունը ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունն իրականացնում է իր կառուցվածքային ստորաբաժանման վերահսկիչ-վերստուգիչ գլխավոր վարչության միջոցով: Վերահսկիչ-վերստուգիչ գլխավոր և նրա կազմում գտնվող վարչությունները ստուգումներն իրականացնում են ՀՀ Նախագահի 1994թ. օգոստոսի 1-ի թիվ 352 հրամանագրով հաստատված՝ «Ձեռնարկություններում, հիմնարկներում, կազմակերպություններում ստուգումների կազմակերպման ու անցկացման» կանոնակարգին համապատասխան: Այս վարչության վերստուգիչներն իրավունք ունեն ցուցումներ տալ ստուգվող օբյեկտների ղեկավարներին՝ վերաց-

նելու ֆինանսական կարգապահության խախտումները, համապատասխան կազմակերպության առջև հարց բարձրացնել մեղավոր պաշտոնատար անձանց աշխատանքից ազատելու մասին, նյութերն ուղարկել քննչական մարմիններ:

ՀՀ Նախագահի հրամանագրով հաստատված կանոնակարգը սահմանում է ստուգումների կազմակերպման և անցկացման կարգը:

Բազմակողմանի ֆինանսական վերահսկիչ աշխատանքներ են տանում ընդհանուր իրավասության պետական կառավարման մարմինները:

Համայնքներում ֆինանսա-վերահսկիչ աշխատանք են տանում տեղական ինքնակառավարման մարմինները: Այսպես, համայնքների ֆինանսական բաժնի հիմնական խնդիրներից մեկն իր ենթակայության ձեռնարկությունների, կազմակերպությունների և հիմնարկների կողմից պետության հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելն է: Այս խնդրի իրականացման համար համայնքների ֆինանսական բաժինն իրավունք ունի հիմնարկներից, ձեռնարկություններից ու կազմակերպություններից ստանալու ֆինանսական պլանները, ծախսերի նախահաշիվները, համայնքի կամ քաղաքի բյուջեն կազմելու և կատարելու համար անհրաժեշտ այլ նյութեր, հաշվապահական հաշվետվություններ և հաշվեկշիռներ, որոնք անհրաժեշտ են համայնքի ֆինանսա-բյուջետային պլանավորման, ձեռնարկությունների, կազմակերպությունների և հիմնարկների կողմից պետության հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունների կատարման և պետական ֆինանսական կարգապահության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար:

2. ՖԻՆԱՆՍԱ-ԲԱՆԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԵՐԱՀԱԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Համապետական ֆինանսական վերահսկողություն իրականացնում են հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը, նրա վերահսկիչ-վերստուգիչ վարչությունները, ՀՀ Կենտրոնական բանկը և բանկային համակարգի մյուս մարմինները: Եզված մարմինները համապատասխան ձեռնարկությունների, կազմակերպությունների և հիմնարկությունների նկատմամբ իրականացնում են ֆինանսական օպերատիվ վերահսկողություն:

Ֆինանսական մարմինները բյուջեների կատարման և նոր տարվա բյուջեների նախագծերի կազմման աշխատանքի պրոցեսում պարբերաբար վերահսկողություն են իրականացնում ձեռնարկու-

թյուրման կողմից խնայողության ռեժիմի պահպանման, իրացման, ինքնարժեքի և շահույթի պլանների կատարման նկատմամբ։ Բյուջեի նախագիծը կազմելիս իրագործվող վերահսկողությունն արտահայտվում է ֆինանսական պլանների և նախահաշիվների ստուգմամբ։

Ֆինանսական գործունեության ոլորտում կենտրոնական դերը պատկանում է ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը, որի իրավասությունն իր ամրապնդումն է ստացել ԳԳ կառավարության որոշմամբ հաստատված կանոնադրությունում։

Այսպես, ԳԳ ֆինանսների նախարարությունը վերահսկողություն է իրականացնում նախարարությունների, գերատեսչությունների, մյուս բյուջետային հիմնարկությունների և տնտեսական կազմակերպությունների ու ձեռնարկությունների կողմից հանրապետության պետական բյուջեն անշեղորեն կատարելու նկատմամբ, պետական բյուջեի դրամարկային կատարման սահմանված կանոնները բանկային համակարգի հիմնարկությունների կողմից պահպանման նկատմամբ, ինչպես նաև կապիտալ ներդրումների և մյուս միջոցառումների բյուջետային ֆինանսավորման նկատմամբ։

Վերահսկողություն է իրականացվում նաև կառավարման ապարատի պահպանման համար միջոցների ճիշտ և խնայողաբար ծախսման և այդ նպատակի համար սահմանված առավելագույն հատկացումների գերաժախսեր թույլ չտալու նկատմամբ, մշակվում է առաջարկություններ հիմնարկությունների, ձեռնարկությունների և կազմակերպությունների կառավարման ապարատի ծախսերի իջեցման ուղղությամբ, իրագործվում է վերահսկողություն օրենսդրությամբ սահմանված հաստիքների և կառավարման ապարատի պահպանման ծախսերի նախահաշիվների, ինչպես նաև աշխատավարձի դրույքաչափերի հաստատման կարգի նկատմամբ։

Վերահսկում է հիմնարկությունների, ձեռնարկությունների և կազմակերպությունների կողմից պետական ֆինանսական կարգապահության պահպանման, նրանց կողմից բյուջետային ու սեփական միջոցները ճիշտ և խնայողաբար ծախսելու գործունեությունը։

Հսկողություն է իրականացնում դրամաշրջանառության վիճակի նկատմամբ։ Աշակում է առաջարկություններ դրամաշրջանառության, պետական ներքին փոխառությունների իրացման, բարելավման ուղղությամբ, մասնակցում է բնակչության դրամական եկամուտների և ծախսերի ընթացիկ ծրագրերի մշակմանը և իրագործում է հսկողություն նրանց կատարման նկատմամբ։

Իրագործում է վերահսկողություն պետական բյուջեի կատարողականի, հաշվապահական հաշվառումը վարելու և հաշվետվությունը կազմելու սահմանված կարգի պահպանման նկատմամբ,

կազմակերպում է վերահսկողություն հաշվապահական հաշվառման և հաշվետվություն դրվածքի, հիմնարկություններում, ձեռնարկություններում և կազմակերպություններում հաշվապահական հաշվառման և հաշվետվության հարցերի վերաբերյալ գործող կանոնադրությունների, հրահանգների և ցուցումների ճիշտ կիրառման նկատմամբ։

Վերահսկում է հանրապետության տարածքում ապահովագրության ընկերությունների գործունեությունը, տալիս է թույլտվություններ և ցուցումներ ապահովագրություն անցկացնելու վերաբերյալ, քննարկում է ապահովագրական ընկերությունների կողմից մշակված միջոցառումները, ապահովագրության զարգացման ու կատարելագործման ուղղությամբ, քննարկում է ապահովագրության եկամուտների և ծախսերի պլանները և ներկայացնում է այն կառավարության հաստատմանը, քննարկում և հաստատում է ապահովագրության գծով տարեկան հաշվետվությունները։

Ֆինանսական մարմինների համակարգում գործում է հատուկ ապարատ, որը գբաղվում է վերահսկողությամբ։ Դա ֆինանսների նախարարության *վերահսկիչ-վերստուգիչ վարչությունն է*։

Այս վարչությունը վերստուգումներ է անցկացնում հանրապետության նախարարություններում, գերատեսչություններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, նրանց ենթակա հիմնարկություններում, ձեռնարկություններում և կազմակերպություններում։

Վերահսկիչ-վերստուգիչ վարչությունը լիազորված է.

1. Վերահսկել հանրապետության բոլոր նախարարությունների և գերատեսչությունների, ինչպես նաև դրանց տեղական մարմինների կողմից հանրապետության և համայնքների բյուջետային իրավունքների մասին օրենքների պահպանումը։
2. Վերահսկել բոլոր հիմնարկների, ձեռնարկությունների և կազմակերպությունների կողմից սեփական և բյուջետային միջոցների ճիշտ ծախսումը։
3. Վերահսկել հանրապետության բոլոր նախարարությունների, գերատեսչությունների, հիմնարկ-ձեռնարկությունների և կազմակերպությունների բյուջեի կատարումը և ստուգել բյուջեի առաջ նրանց պարտականությունների կատարումը։
4. Մտուզել բանկային հաստատությունների կողմից բյուջեի դրամարկային կատարման կանոնների կատարումը։

ԳԳ ֆինանսների նախարարության վերահսկողության-վերստուգման վարչությունը և նրա տեղական մարմինները իրենց վրա դրված խնդիրները կատարելիս իրավունք ունեն.

1. Անցկացնել ֆինանսական գործունեության ստուգումներ և վերստուգումներ նախարարություններում, գերատեսչություն-

ներում համայնքային ենթակայության հիմնարկ-ծեռնարկություններում:

2. Վերստուգվող հիմնարկություններում, ձեռնարկություններում և կազմակերպություններում ստուգել դրամական փաստաթղթերը, հաշվապահական գրքերը, հաշվետվությունները, նախահաշիվները և մյուս փաստաթղթերը, դրամական գումարների և արժեթղթերի առկայությունը, նյութական արժեքների և դրամական միջոցների առկայությունը ու ծախսման ճշտությունը, ինչպես նաև ստանալ պաշտոնատար անձանցից բացատրագրեր և անհրաժեշտ տեղեկանքներ վերստուգման և ստուգման ընթացքում ծագած հարցերի վերաբերյալ:
3. Կենտրոնական բանկի և մյուս վարկային հիմնարկներից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություններ և փաստաթղթերի պատճեններ՝ կապված վերստուգվող հիմնարկ-ծեռնարկությունների, կազմակերպությունների գործարքների հետ, հաշվարկների վիճակի և դրանց պտույտի մասին, վերստուգվող հիմնարկների և կազմակերպությունների կողմից բացվող վարկերի վիճակի մասին և այլ հարցերի գծով:
4. Այլ հիմնարկներից և կազմակերպություններից պահանջել տեղեկանքներ և փաստաթղթերի պատճեններ՝ վերստուգվող հիմնարկների և կազմակերպությունների հետ գործարքների մասին:
5. Անհրաժեշտության դեպքում վերստուգումներին որպես փորձագետ ներգրավել ձեռնարկությունների գիտահետախույզագտական, նախագծային և մյուս կազմակերպությունների մասնագետներին, գիտական աշխատողներին:
6. Վերստուգումների և ստուգումների ընթացքում հայտնաբերված ֆինանսական կարգապահության խախտումները վերացնելու համար վերստուգող հիմնարկների, ձեռնարկությունների և կազմակերպությունների հետ համատեղ ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ և նրանց ղեկավարներին տալ պարտադիր ցուցումներ:

Ֆինանսական վերահսկողության իրագործման բնագավառում նշանակալից դեր են խաղում հանրապետության կենտրոնական բանկը և բանկային համակարգի մյուս մարմինները:

Հանրապետության Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության լիազորությունները ամրապնդված են նրա իրավական կարգավիճակը սահմանող 1996թ. հունիսի 30-ի ԱԺ կողմից ընդունած «ՀՀ կենտրոնական բանկի մասին», ինչպես նաև «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքների համապատասխան նորմերով:

Կենտրոնական բանկի կարգավիճակը և վերահսկիչ ֆունկցիաները ուղղված են հանրապետությունում գների կայունության ամրապնդմանը, միասնական դրամավարկային քաղաքականության մշակմանը, վարկային համակարգի կայունության ապահովմանը և ավանդատուների շահերի պաշտպանությանը:

Կենտրոնական բանկի մասին օրենքի 5-րդ հոդվածում սպառիչ թվարկված են այն հիմնական խնդիրները, որոնց իրագործման համար կյանքի է կոչված բանկը: Այս խնդիրների մի մասը ուղղված է վճարահաշվարկային համակարգի գործունեության կարգավորմանը և վերահսկմանը:

Կենտրոնական բանկի վերահսկողության գործառույթները կարելի է բաժանել ներքին, սեփական կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության և գործառույթների վերահսկում և արտաքին, որն ուղղված է բանկային համակարգի և մյուս ֆինանսական մարմինների գործունեության վերահսկմանը:

Կենտրոնական բանկը կառուցվածքային ստորաբաժանումների ֆինանսական գործունեությունը վերահսկելու նպատակով ստեղծում է վերստուգիչ խումբ որը բանկի հատուկ ստորաբաժանում է: Նա վերահսկողություն է իրականացնում բանկի ստորաբաժանումների նկատմամբ, վերստուգում է Կենտրոնական բանկի ծախսերի նախահաշիվի կատարումը, հաշվապահական հաշվառումը ու հաշիվները, բանկի ֆինանսական հաշվետվությունը և այլ նման փաստաթղթեր¹:

Կենտրոնական բանկը հսկում է նաև արժուպային գործառույթների իրականացման գործունեությունը:

Հանրապետության Կենտրոնական բանկի արտաքին վերահսկողության գործառույթները դրսևորվում են բանկային համակարգի մարմինների նկատմամբ: Բանկերի գործունեության վերահսկողությունը Կենտրոնական բանկի բացառիկ իրավասիւթյունն է: Բանկը վերահսկում է հանրապետության տարածքում գործող բանկերի գործունեությունը, սահմանում է դրանց կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների և տեղեկանքների ձևերը և դրանք ներկայացնելու կարգը:

«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ ԱԺ հունիսի 30-ի օրենքի 6-րդ գլուխը սահմանում է Կենտրոնական բանկի կողմից բանկային համակարգի մարմինների հաշվեկշիռների, հաշվապահական հաշվետվությունների վերահսկողության իրականացման կարգը: Օրենքի 57-րդ հոդվածը սահմանում է, որ Կենտրո-

¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի մասին» օրենքի 25-րդ հոդվածը, (ՀՀ գործող օրենքների ժողովածու, 1995-1999թթ., գիրք Ա, եր. 1989):

նական բանկի ծառայողները վերստուգումներ են կատարում բանկերում՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով և հաճախականությամբ:

Հանրապետության բանկային համակարգի ցանկացած օղակում յուրաքանչյուր տարի բանկը ստուգվում է աուդիտային գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անկախ աուդիտային կազմակերպությունների կողմից: Անկախ աուդիտային կազմակերպություն նշանակում է Կենտրոնական բանկը¹:

Ֆինանսավարկային կամ առևտրական բանկի մարմինների կողմից ֆինանսական օրենսդրության խախտումները հայտնաբերելու դեպքում Կենտրոնական բանկը «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 61-րդ հոդվածի պահանջներին համապատասխան կարող է կիրառել այնպիսի պատժամիջոցներ, ինչպիսիք են նախազգուշացումը, տուգանքը, պաշտոններից հեռացումը, լիցենզիայի ուժը կորցրած ճանաչումը: ՀՀ Կենտրոնական բանկը պարտադիր ցուցումներ է տալիս հայտնաբերված խախտումները որոշակի ժամկետներում վերացնելու մասին:

3. ՆԵՐԳԵՐԱՏԵՍԶԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ

Պետական ֆինանսական վերահսկողության համակարգում զգալի տեղ է գրավում ներգերատեսչական վերահսկողությունը: Ներգերատեսչական ֆինանսական վերահսկողությունն իրականացվում է տվյալ նախարարության կամ գերատեսչության ներսում: Բոլոր նախարարությունները և գերատեսչությունները, տեղական ինքնակառավարման մարմինները ոչ պակաս քան տարեկան մեկ անգամ փաստաթղթային ստուգում են կատարում իրենց ենթակա ձեռնարկություններում, հիմնարկություններում և կազմակերպություններում:

Ներգերատեսչական ֆինանսական վերահսկողության հիմնական խնդիրներն են՝

1. Ստուգել ձեռնարկությունների, հիմնարկությունների և կազմակերպությունների կողմից իրականացվող ֆինանսական և տնտեսական գործառնությունների օրինականությունը:
2. Սեփականության պահպանման նպատակով, պետական դրամական և նյութական միջոցների հափշտակումների և անօրինական օգտագործումների հայտնաբերումը և կանխումը:

¹ Տե՛ս «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 57-58 հոդվածները, (ՀՀ գրչո՞ղ օրենքների ժողովածու, 1995-1999թթ., գիրք Ա):

3. Հաշվապահական և հաշվառման դրվածքի, վարման ստուգումը, գործառնություններ կատարելու համար հաշվապահական փաստաթղթերի ճշտությունը:

4. Պահեստային, տնտեսական, նյութական հաշվառման ճշտության ստուգումը: Ներգերատեսչական ֆինանսական վերահսկողություն իրականացնելու համար նախարարություններում և գերատեսչություններում ստեղծվում են հատուկ ստուգող խմբեր /բաժիններ/, որոնք մտնում են կենտրոնական /գլխավոր/ հաշվապահության կազմի մեջ և գործում են գլխավոր հաշվապահի հսկողության ներքո: Յուրաքանչյուր ստուգող խումբ գլխավորում է նրա պետը, որը օգտվում է հաշվապահի տեղակալի իրավունքներից:

Յուրաքանչյուր գերատեսչությունում վերադաս կազմակերպությունները ղեկավարում և վերահսկում են իրենց ենթակա կազմակերպությունների գործունեության ֆինանսական վերահսկողության գործընթացը: Կենտրոնական և մարզային գերատեսչական կազմակերպություններում հաշվապահության և ֆինանսական բաժինների հետ մեկտեղ, որոնք վերահսկողություն են իրականացնում իրենց աշխատանքի գործընթացում, գործում են նաև վերստուգիչների հաստիքներ:

Գերատեսչություններում ֆինանսական վերահսկողությունն իրականացվում է հիմնականում վերստուգումների միջոցով: Ատուգման է ենթարկվում կազմակերպությունների ֆինանսա-տնտեսական գործունեությունը, վերստուգվող ժամանակաշրջանում կատարված գործառնությունների օրինականությունը, պետական ֆինանսական կարգապահության պահպանումը, հաշվառման ու հաշվետվության վիճակը, ապրանքանյութական արժեքների պահպանումը:

Վերստուգում կատարողն իրավունք ունի վերստուգման ենթարկվող ձեռնարկություններից, հիմնարկություններից, կազմակերպություններից պահանջել անհրաժեշտ նյութեր, տեղեկանքներ: Բանկային հիմնարկություններից և այլ կազմակերպություններից տեղեկություններ ստանալ փոխադարձ հաշիվների վերաբերյալ: Վերստուգումների արդյունքների հիման վրա վերադաս կազմակերպությունները միջոցներ են ձեռնարկում բացահայտված թերությունների վերացման ուղղությամբ:

Գերատեսչական վերահսկողություն է իրականացվում նաև այլ մեթոդներով ներկայացվող հաշվետվությունների ստուգման ու վերլուծմամբ, առանձին հարցերի վերաբերյալ անցկացվող թեմատիկ ստուգումներով, բացված վարկերի ճշտության, տրված ցուցումների կատարման ստուգմամբ և այլն:

Առանձին հիմնարկ-ձեռնարկության ներսում ֆինանսական վե-

րահսկողությունը կրում է ներտնտեսական ֆինանսական վերահսկողություն անվանումը:

Այն իրականացվում է գլխավոր հաշվապահի կողմից, կարող է իրականացվել նաև առանձին ֆունկցիոնալ բաժինների և ծառայությունների կողմից: Ֆինանսական բաժնի, հաշվապահության և այլն: Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» 1998թ. մայիսի 19-ի օրենքի, սահմանված են գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները: Օրենքի 12-րդ հոդվածում ասվում է, որ կազմակերպությունների հաշվապահական վարումը և ֆինանսական հաշվետվությունների կազմումը իրականացնում է հաշվապահական ծառայության ղեկավարը՝ գլխավոր հաշվապահը, որը պատասխանատու է հաշվապահական հաշվառումը վարելու, ֆինանսական հաշվետվությունները ժամանակին կազմելու և ներկայացնելու համար:

Գլխավոր հաշվապահի կարգադրությունը գործառնությունների ծևակերպման և պահանջվող փաստաթղթերի ու տեղեկությունների ներկայացման վերաբերյալ պարտադիր է տվյալ ձեռնարկության, հիմնարկության, կազմակերպության բոլոր աշխատողների համար: Ձեռնարկության մնացած բոլոր բաժինները և ստորաբաժանումները պարտավոր են ժամանակին գլխավոր հաշվապահներին ներկայացնել հաշվապահական հաշվառման և վերահսկողության համար անհրաժեշտ փաստաթղթեր, հրամաններ, որոշումներ, կարգադրություններ, ինչպես նաև առանձին տեսակի պայմանագրեր, նախահաշիվներ և այլ նյութեր: Այն փաստաթղթերը, որոնք հիմք են հանդիսանում դրամի, ապրանքա-նյութական և այլ արժեքների մուտքի և ելքի համար, կամ փոխում են հիմնարկության և կազմակերպությունների վարկային և հաշվային պարտականությունները, պարտադիր կարգով ստուգվում են ղեկավարի և հաշվապահի կողմից: Գլխավոր հաշվապահի կողմից չստորագրված նմանօրինակ փաստաթղթերը անվավեր են և չեն կարող ընդունվել նյութական պատասխանատու անձանց, հաշվապահական հաշվառման մարմինների, ինչպես նաև բանկի հաստատությունների կողմից: Ձեռնարկության, հիմնարկության, կազմակերպության կողմից կնքված պայմանագրերը ապրանքա-նյութական արժեքների ստացման կամ բացթողման մասին աշխատանքներ կատարելու վերաբերյալ, ինչպես նաև աշխատողներին պատասխանատվության ու անհատական դրույքներ տալու և պարգևատրման վերաբերյալ փաստաթղթերը նախապես ստորագրվում կամ վավերացվում է գլխավոր հաշվապահի կողմից: Այն դեպքում, երբ փաստաթղթերը, պայմանագրերը, համաձայնագրերը, հրամանները, նրանց կարգադրությունները չեն համապատասխանում գործող օրենսդրությանը,

վերադաս մարմինների հրամաններին և կարգադրություններին, գլխավոր հաշվապահը չի ստորագրում նման փաստաթղթերը և չի վավերացվում: Առանձին տնտեսական գործառնությունների իրականացման հետ կապված կազմակերպության ղեկավարի և գլխավոր հաշվապահի միջև տարաձայնությունների դեպքում գլխավոր հաշվապահը կատարման է ընդունում փաստաթղթերը՝ կազմակերպության ղեկավարի գրավոր կարգադրությամբ (հանձարարությամբ), և նման գործառնությունների իրականացման հետևանքների պատասխանատվությունը կրում է կազմակերպության ղեկավարը¹:

Հրատարակվող ֆինանսական հաշվետվությունները, որոնք արտացոլում են ներտնտեսական գործունեության բոլոր ոլորտները ստորագրելու իրավունք ունի հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմնի կողմից սահմանված կարգով որակավորված գլխավոր հաշվապահը:

4. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական վերահսկողության բնագավառում առանձին տեղ է գրավում հասարակական վերահսկողությունը: Հասարակական և պետական կյանքում ժողովրդավարական սկզբունքների զարգացմանը գուզընթաց այն ձեռք կբերի ավելի մեծ նշանակություն:

Ներկայումս հասարակական վերահսկողության ձևերը ստացել են լայն զարգացում: Հասարակական ֆինանսական վերահսկողություն են իրականացնում կուսակցական, արհմիութենական և հասարակական կազմակերպությունները: Այդ կազմակերպությունները ժողովներում, համագումարներում և արտադրական խորհրդակցություններում տարբեր հարցերի ըննարկման հետ, ըննարկում են առանձին ֆինանսական բնույթի հիմնահարցեր, կապված բյուջեի եկամուտների և ծախսերի, բնական ռեսուրսների և նյութական միջոցների օգտագործման ու ծախսումների օրինականության հետ:

Այսպես, արհմիութենական մարմինների վերահսկիչ հանձնաժողովը ստուգում է սոցիալական ապահովագրության վճարումների հաշվարկների ճշտությունը և ժամանակին մուծումը, բանվորներին և ծառայողներին տրվող հանգստյան տների ու առողջարանների, ճամբարների ուղեգրերի համար գանձվող հատույթները: Ստուգում է գործատուների կողմից աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի կանոնները խախտելու հետևանքով

¹ Տես, «Հաշվապահական հաշվառման մասին» ԳԳ ԱԺ 1998 թ մայիսի 19-ի օրենքի 12-րդ հոդ. (ԳԳ գործող օրենքների ժողովածու, 1995-1999 թթ., գիրք Բ, Երևան 1999թ)

տեղի ունեցած դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների կապակցությամբ վճարված ժամանակավոր անաշխատունակության նպաստների ճշտությունը:

Արհմիութենական մարմնի վերստուգիչ հանձնաժողովը իր վերահսկիչ գործունեությամբ նպաստում է ֆինանսական, բյուջետային, նախահաշվային կարգապահության ամրապնդման, տնտեսական ռեժիմի պահպանման գործին: Ատուզում է կատարված ծախսերի տնտեսական նպատակահարմարությունը և հաստիքային կարգապահության պահպանումը:

Իր լիազորությունները իրականացնելու համար արհմիութենական մարմնի վերաստուգիչ հանձնաժողովը պարտավոր է ստուգումը վերջացնելուց հետո կազմել ակտ: Ակտերում պետք է նշվեն հաշվառման և հաշվետվության գործում հայտնաբերված թերությունները, ֆինանսատնտեսական կարգապահության խախտումները: Դրա հետ միաժամանակ վերաստուգիչ հանձնաժողովը պարտավոր է վերստուգվող մարմնին տալ իր առաջարկները՝ ֆինանսատնտեսական գործունեության, ստուգման միջոցով հայտնաբերված թերությունների և ֆինանսական կարգապահության խախտումների վերացման ուղղությամբ և սահմանել ժամկետ դրանց վերացման համար:

Որպես կանոն, վերստուգիչ հանձնաժողովն իր աշխատանքը կատարում է աշխատանքային ժամերից դուրս, հասարակական կարգով: Վերստուգիչ հանձնաժողովի անդամներն իրենց աշխատանքի համար վարձատրություն չեն ստանում:

5. ԱՌԷԴԻՏՈՐԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՅՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Տնտեսության կառավարման նոր ձևերը և հատկապես շուկայական հարաբերությունները առաջ բերեցին ֆինանսական վերահսկողության նոր՝ աուդիտորական ձևը: Որպես աուդիտորներ կարող են հանդես գալ ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձինք: Աուդիտորական գործունեություն կարող են իրականացնել միայն գործունեության այդ ձևով զբաղվելու թույլտվություն ձեռք բերելուց հետո:

Անկախ աուդիտորները և աուդիտորական ընկերությունները չեն կարող զբաղվել ձեռներեցությամբ և ձեռնարկատիրական գործունեությամբ:

Աուդիտորական ֆինանսական վերահսկողությունը իրականացվում է «Աուդիտորական գործունեության մասին» իրավական ակտերով, որի համաձայն աուդիտորական գործունեությունը հավասարեցվում է արտագերատեսչական անկախ ֆինանսական վերահ-

սկողության:

Աուդիտորական ֆինանսական վերահսկողությունը կարգավորող իրավական ակտերը սահմանում են աուդիտորական վերահսկողության երկու տեսակներ՝ պարտադիր և նախաձեռնությամբ:

Պարտադիր պաշտոնը սկսված ֆինանսական վերահսկողությունը իրականացվում է իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում, իսկ նախաձեռնությամբ իրականացվող ստուգումները կազմակերպվում են տնտեսավարող սուբյեկտների ցանկությամբ:

Պարտադիր աուդիտորական ստուգումների կազմակերպումը խոչընդոտելու դեպքում տնտեսական կազմակերպությունը կարող է ենթարկվել տուգանքի նվազագույն աշխատավարձի 100-150 պատիկի, իսկ նրանց պաշտոնատար անձինք 50-100 պատիկի չափով¹:

Աուդիտորական ֆինանսական վերահսկողության ենթակա են բոլոր հիմնարկ-ձեռնարկությունները, կազմակերպությունները անկախ սեփականության ձևից:

Աուդիտորական ստուգման առարկա են հանդիսանում կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները, վճարահաշվարկային փաստաթղթերը, հարկային հաշտարարագրերը, ֆինանսական պարտավորությունները:

Տնտեսական կազմակերպությունների պահանջով աուդիտորական ընկերությունները կարող են տնտեսավարող սուբյեկտներին մատուցել աուդիտորական ծառայություններ:

§3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՅՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՉԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ֆինանսաիրավական գրականության մեջ ֆինանսական վերահսկողության ձևերի ու մեթոդների հարցը դեռևս բավարար չափով լուսաբանված չէ:

Երբեմն վրահսկողության մեթոդներն ու ձևերը նույնացվում են: Իրավագետներից է.Ա.Ոզնիսենսկին, կախված վերահսկիչ գործունեության կատարման ժամանակից, վերահսկողության ձևի տակ հասկանում է վերահսկողության դրսևորման առանձին կողմեր: Նման դեպքում վերահսկիչ գործունեության կատարման ժամանակը ընդլայնելով որպես ֆինանսական վերահսկողության ձևերի դասա-

¹ Положение о комиссии по аудиторской деятельности при Президенте РФ утверждено распоряжением Президента РФ от 4 февраля 1994г. (ЦАПП РФ, 1994 N6, стр. 438).

կարգման հիմք, Է.Ս.Ոզնիսենսկին նշում է ֆինանսական վերահսկողության երկու հիմնական ձևեր՝ նախնական և հաջորդող վերահսկողություն¹:

Ֆինանսական վերահսկողության ձևերի նման դասակարգման գործոն է հանդիսանում վերահսկիչ գործողությունների իրականացման ժամկետները, որոնք կապվում են կենտրոնացված և ապակենտրոնացված դրամական ֆոնդերի ձևավորման և օգտագործման պրոցեսների հետ: Օրինակ, նշված պրոցեսներին նախորդող վերահսկիչ գործունեությունը հանդիսանում է նախնական ֆինանսական վերահսկողությունը, իսկ այն գործողությունը, որն իրականացվում է վերոհիշյալ պրոցեսներից հետո /օրինակ՝ հարկային հաշվետվությունների ստուգումը/, հանդիսանում է հաջորդող ֆինանսական վերահսկողություն:

Ըստ պրոֆեսոր Ա.Ե.Ռովինսկու ընթացիկ ֆինանսական վերահսկողությունը նյութական և դրամական միջոցների ծախսման, պահպանման, մուտքագրման հետ կապված գործողությունների կատարման ընթացքում իրագործվող վերահսկողությունն է²: Է.Ս.Ոզնիսենսկին իր «Ֆինանսական վերահսկողությունը ՍՄՂՍ-ում» աշխատության մեջ ֆինանսական վերահսկողության ինչպես ընթացիկ, այնպես էլ հաջորդող հսկողությունը իրականացվում է վերահսկվող օբյեկտների ընթացիկ գործունեության ժամանակ և արտահայտում է համապատասխան մարմինների ընթացիկ օպերատիվ աշխատանքի բովանդակությունը: Փաստորեն, ժխտելով ընթացիկ վերահսկողության գոյությունը, հեղինակը դիմում է հարցի լուսաբանման տրամաբանական մեթոդին՝ նշելով, որ յուրաքանչյուր դեպքում ընթացիկ գործունեության նկատմամբ իրականացվող վերահսկողությունը չի վերափոխվում վերահսկողության ինքնուրույն տեսակի, որը նախնական և հաջորդող վերահսկողության հետ համեմատած ունի յուրահատուկ գծեր:

Եթե հարցին մոտենանք տրամաբանորեն, ապա պայմանականորեն կարելի է համաձայնվել հեղինակի հետ, որ ընթացիկ գործունեության ժամանակ կատարված ամեն մի վերահսկողություն ժամանակից կախված դրսևորվում է նախնական կամ հաջորդող ֆինանսական վերահսկողության տեսքով, այլ կերպ ինչպես կարող է ձեռնարկության գլխավոր հաշվապահը վերահսկողություն սահմանել աշխատավարձի ֆոնդի ճիշտ ծախսման վրա, եթե ասենք այն

դեռևս չի ստացված: Այլ կերպ Է.Ս.Ոզնիսենսկին ընթացիկ գործունեության ժամանակ կատարված յուրաքանչյուր ստուգում վերագրում է արդեն իսկ ավարտված գործողության կամ դեռևս չավարտված գործողության նկատմամբ ֆինանսական վերահսկողությանը և բնական է, որ խոսքը կարող է գնալ ֆինանսական վերահսկողության միայն երկու ձևերի՝ նախնական և հաջորդողի մասին:

Մի կողմ թողնելով տեսական վեճերը՝ դժվար չէ նկատել, որ պետության ֆինանսական գործունեության պրակտիկայում ընթացիկ ֆինանսական վերահսկողությունն ավելի հաճախ է իրականացվում և ունի առավել կարևոր նշանակություն, քան նախնական կամ հաջորդող վերահսկողությունը, չնայած որ վերջիններն ունեն իրենց դերն ու նշանակությունը ֆինանսական վերահսկողության գործընթացում: Ընթացիկ վերահսկողության խնդիրն է կանխել ֆինանսական կարգապահության խախտումները, ոչ նպատակահարմար ծախսերը, ապահովել խնայողության ռեժիմն ամբողջ գործունեության ընթացքում բոլոր տնտեսական գործառնություններում:

Վերահսկողության մեթոդները ցույց են տալիս, թե ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինները ինչպես և ինչ ձևերով են իրագործում վերահսկողության ֆունկցիաները: Ֆինանսական վերահսկողության հիմնական մեթոդներն են՝ ֆինանսատնտեսական գործունեության վերստուգումը, ստուգումը, ուսումնասիրությունը, հետազոտությունը և վերլուծությունը:

Ֆինանսական վերահսկողության ուսումնասիրության մեթոդն արտահայտվում է վերահսկման ենթակա կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ընդհանուր վիճակի ծանոթությանը:

Ստուգումը որպես վերահսկողության մեթոդ բնութագրվում է ստուգման ենթարկված օբյեկտի ֆինանսական գործունեության հիմնական ուղղությունների ուսումնասիրությամբ: Այն անց է կացվում տեղում հաշվեկշռային, հաշվարկային և ծախսային փաստաթղթերի ստուգմամբ:

Հետազոտումը որպես մեթոդ ուղղված է հիմնարկ-ձեռնարկությունների և կազմակերպությունների ֆինանսական գործունեության առանձին կողմերին և հենվում է առավել լայն տնտեսական ցուցանիշների վրա, որով տարբերվում է ստուգումից: Հետազոտման ընթացքում կիրառվում են հանրաձանաչ այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են հարցումները և անկետավորումը: Հետազոտման մեթոդը մեծամասամբ կիրառվում է արտադրության վերակառուցման նպատակով:

Վերլուծությունը որպես ֆինանսական վերահսկողության մեթոդ նպատակ ունի բացահայտելու և վերացնելու վերահսկվող օբ-

յնկտում ւոեղ գտած ֆինանսական գործունեության խախտումները: Այս մեթոդը կիրառվում է անալիտիկ այնպիսի ձևերի կիրառմամբ, ինչպիսիք են միջին և հարաբերական մեծությունների, խմբավորումների և ինդեքսավորման մեթոդները:

Վերլուծության սկզբունքով իրականացվող վերահսկողությունը իրականացվում է ընթացիկ և տարեկան հաշվետվությունների ստուգման միջոցով:

Իրավական հետևանքների տեսանկյունից ֆինանսական վերահսկողության մեթոդների շարքում առանձնանում է ստուգումը որպես ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների ֆինանսական գործունեության առավել խորը և լրիվ հետազոտում:

Ստուգումը ըստ իրականացման եղանակի լինում է՝ փաստաթղթային և փաստացի:

Փաստաթղթային ստուգման ժամանակ ստուգվում են փաստաթղթեր, հատկապես նախահաշիվները, դրամական հաշիվները, օրոգրները, հաշվետվություններն և այլն:

Փաստացի ստուգումների առարկա կարող են հանդիսանալ ոչ միայն փաստաթղթերը, առկա դրամը, այլև նյութական արժեքները, գույքը:

Ստուգումները դասակարգվում են նաև ըստ ընդգրկման ծավալի: Այս հատկանիշի հիման վրա առանձնանում են համատարած և ընտրանքային ստուգումները:

Համատարած ստուգում կատարելիս ստուգման են ենթարկվում տվյալ ժամանակահատվածում ձևակերպված բոլոր փաստաթղթերը, **ընտրովի ստուգում** դեպքում միայն այն փաստաթղթերը, որոնք բնութագրում են կազմակերպության գործունեության առանձին բնագավառները կամ առանձին ժամանակահատվածներում ձևակերպված բոլոր փաստաթղթերը, որոնց հիման վրա հետևություններ են արվում ստուգման ենթակա ժամանակահատվածում ձեռնարկության ամբողջ գործունեության մասին:

Ստուգումները կարող են լինել նաև **համալիր** (ստուգման են ենթարկվում գործունեության բոլոր կողմերը) և թեմատիկ (ստուգվում է գործունեության որևէ մեկ կողմ): Համալիր ստուգումները հնարավորություն են տալիս ավելի ճիշտ հետևություններ անել ստուգման ենթարկվող կազմակերպության աշխատանքի մասին:

Ստուգումը հնարավորություն է տալիս խորը և բազմակողմանի ֆինանսական վերահսկողություն իրականացնել բոլոր ձեռնարկություններում և հիմնարկություններում, մասնավաճ, որ ստուգողն իրավունք ունի ստուգելու այլ կազմակերպությունների հետ ստուգվող կազմակերպության ունեցած փախադարձ հաշիվները:

Ստուգումը սկսվում է ձեռնարկության, հիմնարկության, կազմա-

կերպության դրամարկղում առկա դրամական միջոցների ստուգումից հանվում են ապրանքա-նյութական արժեքների մնացորդները, եթե ստուգվող կազմակերպություններում կանխիկ հաշվով իրացում է կատարվում, ձեռնարկություններում և տնտեսական կազմակերպություններում վերստուգումներ անցկացնելիս բացի նրանց ֆինանսատնտեսական գործունեությունից ստուգվում է նաև արտադրության և իրացման, ինքնարժեքի և շահույթի պլանի կատարումը, շահույթի բաշխման ճշտությունը, արտադրական ֆոնդերի լրիվ օգտագործումը և արտադրության արդյունավետության մյուս հարցերը:

§4. ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ ԱՆՅԿԱՅՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ տարածքում ստուգումներ իրականացնելու իրավասությամբ օժտված են նաև պետական եկամուտների նախարարության կազմի մեջ մտնող **հարկային տեսչություն** և **մաքսային վարչություն**ը:

Ստուգումները սկսելուց առաջ վերը նշված մարմինները (դրանց պաշտոնատար անձինք) ստուգվող օբյեկտի ղեկավարին ներկայացնում են ստուգում իրականացնելու մասին հրամանը, որի մեջ նշվում են՝ ստուգման նպատակը, ժամկետը, ստուգումն անմիջապես կարող են իրականացնող պաշտոնատար անձը, ստուգման իրավական հիմքերը: Նշված հրամանի պատճենի մեկ օրինակը տրվում է ստուգվող օբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին, իսկ երկրորդ օրինակը ստորագրվում է ստուգվող օբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից և հանձնվում ստուգող պետական մարմնին: Ստուգման ժամկետը չի կարող գերազանցել 15 օրվանից: Այդ ժամկետը չպետք է գերազանցի նաև ստուգում իրականացնելու մասին համապատասխան պետական մարմնի հրամանի մեջ նշված ժամկետը: Անհրաժեշտության դեպքում ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի գրավոր հիմնավորմամբ այն կարող է երկարացվել նախարարության կողմից:

Ստուգումը կատարող պաշտոնատար անձը ստուգումն իրականացնելու մասին հրամանի մեջ նշված նպատակի շրջանակներից դուրս գալու իրավունք չունի: Ստուգման ընթացքում նոր հանգամանքներ ի հայտ գալու և նոր ստուգման անհրաժեշտություն առաջանալու դեպքերում ստուգում կատարող պաշտոնատար անձի գրավոր հիմնավորմամբ ստուգման նպատակները և շրջանակները կարող են փոփոխվել համապատասխան պետական մարմնի

կողմից: Եթե ստուգման ընթացքում ծագում են այնպիսի հարցեր, որոնք դուրս են գալիս ստուգումն իրականացնող պետական մարմնի իրավասության շրջանակներից, ապա այդ մասին տեղեկացվում է համապատասխան իրավասու պետական մարմնին:

Ֆինանսատնտեսական գործունեության ստուգումները օբյեկտներում կարող են իրականացվել տարեկան ոչ ավելի, քան մեկ անգամ: Կրկնական ստուգումներ կարող են իրականացվել հետևյալ դեպքերում. ա) օբյեկտի լուծարման դեպքում, բ) օբյեկտի ղեկավարի խնդրանքով, գ) պետական կամ պետական բաժնեմաս ունեցող օբյեկտի պետական կառավարման վերադաս մարմնի համաձայնությամբ կամ խնդրանքով. դ) ստուգումն իրականացնող պետական մարմնի ղեկավարի թույլտվությամբ, ե) ՀՀ վարչապետի հանձնարարությամբ:

Ստուգումն իրականացնող անձինք իրավունք ունեն

1) իրենց լիազորություններն իրականացնելիս, ստուգվող օբյեկտի ներկայացուցչի մասնակցությամբ անարգել մուտք գործել ստուգվող օբյեկտ և դրա ցանկացած արտադրական, պահեստային և այլ շինություններ,

2) պահանջել փաստաթղթեր, տվյալներ և այլ տեղեկություններ, բացատրություններ, տեղեկանքներ, որոնք անմիջականորեն առընչվում են իրենց իրավասության շրջանակներում իրականացվող ստուգման նպատակներին,

3) անհրաժեշտության դեպքում սահմանված կարգով ստուգումներին ներգրավել օբյեկտի մասնագետներին,

4) պահանջել սահմանված ժամկետում վերանայելու բացառապետական թերությունները և խախտումները,

5) վերցնել փաստաթղթեր, իրեր, փորձանմուշներ և այլ անհրաժեշտ նյութեր, որոնք անմիջականորեն առընչվում են ստուգման նպատակներին,

6) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կիրառել ներգործության համապատասխան միջոցներ,

7) իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

Ստուգումն իրականացնող անձինք պարտավոր են

1) պահպանել ՀՀ գործող օրենսդրությունը,
2) չհրապարակել ստուգվող օբյեկտի մասին ցանկացած, այդ թվում նաև առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկություններ,

3) պահպանել ստուգվող օբյեկտի՝ օրենքով սահմանված իրավունքներն ու օրինական շահերը,

4) չխոչընդոտել ստուգվող օբյեկտի բնականոն աշխատանքին,

5) ծանոթացնել ստուգվող օբյեկտի պաշտոնատար անձանց

իրենց իրավունքներին ու սպարտականություններին:

Փաստաթղթեր ու իրեր ժամանակավորապես վերցնելու դեպքում այդ մասին կազմվում է արձանագրություն, որի մեկ օրինակը հանձնվում է ստուգվող օբյեկտի ղեկավարին: Ստուգումն իրականացնող անձինք պատասխանատվություն են կրում ժամանակավորապես վերցրած կամ առգրավված փաստաթղթերի, իրերի պահպանության համար: Արգելվում է ստուգման ընթացքում կապարակնքել պահեստներ, շինություններ, դրամարկղեր, էներգիայի աղբյուրներ, սարքավորումներ, սարքեր և այլն:

Վերջիններիս ամենօրյա հաշվառման և շահագործման համար ստեղծվում է համապատասխան ժամանակավոր հանձնաժողով ստուգվող օբյեկտի և ստուգումն իրականացնող անձանց մասնակցությամբ:

Ստուգվող օբյեկտի պաշտոնատար անձինք իրավունք ունեն

ա) արգելել ստուգումն իրականացնող անձանց մուտքը ստուգվող օբյեկտ, եթե վերջիններիս կողմից խախտվել են հիշյալ Կանոնակարգով նախատեսված ստուգումների անցկացման կարգը,

բ) ծանոթանալ ստուգումների ակտի հետ,

գ) ներկայացնել բացատրություններ, հարուցել միջնորդություններ, սահմանված կարգով գանգատարկել ստուգումն իրականացնող անձանց գործողությունները,

դ) պահանջել ստուգումն իրականացնող անձանց ապօրինի գործողությունների հետևանքով պատճառված վնասի հատուցում,

ե) չկատարել ստուգումն իրականացնող անձանց իրավասությունից, ինչպես նաև ստուգման նպատակներից չբխող պահանջներ,

զ) ստուգվող օբյեկտի շահերի պաշտպանության նպատակով ստուգումներին մասնակից դարձնել մասնագետների, փորձագետների, աուդիտային ծառայության ներկայացուցիչների, փաստաբանների:

Ստուգվող օբյեկտի պաշտոնատար անձինք պարտավոր են

ա) չխոչընդոտել ստուգումների ընթացքը, կատարել ստուգումն իրականացնող անձանց օրինական պահանջները և ցուցումները,

բ) ներկայացնել պահանջվող փաստաթղթեր, տվյալներ և այլ տեղեկություններ,

գ) անհրաժեշտ պայմաններ ստեղծել ստուգումն իրականացնող անձանց գործունեության համար,

դ) սահմանված ժամկետում վերացնել ստուգման արդյունքների ակտում նշված թերությունները և խախտումները:

Ստուգումն իրականացնող անձանց գործողությունները կարող են գանգատարկվել այն պետական մարմնին, որին անմիջակա-

նորեն ենթարկվում է ստուգող անձը: Գանձատները քննության են առնվում և դրանց վերաբերյալ որոշումներն ընդունվում են ոչ ուշ, քան զանգատ ստացվելու օրվանից 30-օրյա ժամկետում: Նշված ժամկետում զանգատի վերաբերյալ պատասխան չտրվելու դեպքում զանգատում բերված պատճառաբանությունները համարվում են ընդունված: Ընդունված որոշման հետ համաձայն չլինելու դեպքում ստուգվող օբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը իրավունք ունի այն զանգատարկելու պետական կառավարման վերադաս մարմնին կամ դատարան: ¹:

Ստուգվող օբյեկտին պատճառած վնասները, այդ թվում և բաց թողնված օգուտները, ենթակա են հատուցման ստուգումն իրականացնող պետական մարմինների կողմից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ստուգման արդյունքներով կազմվում է ակտ, որտեղ արձանագրվում են՝ ակտը կազմելու ամսաթիվը և տեղը, ստուգումն իրականացնող համապատասխան պետական մարմնի և պաշտոնատար անձանց կազմը, ստուգման նպատակը, ժամկետը, արդյունքները, ստուգվող օբյեկտի ներկայացուցիչների բացատրությունները (հատուկ կարծիքը), ակտի օրինակների քանակը և ակտի հեթոթական համարը: Կազմված ակտը ստորագրում է ստուգվող օբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը: Ակտը ստորագրելուց հրաժարվելու դեպքում այդ մասին ակտում կատարվում է համապատասխան գրառում: Ակտը ստորագրում են նաև ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք: Տարածայնություններ առաջանալու դեպքում ստուգվող օբյեկտի պաշտոնատար անձանձ կարծիքները արձանագրվում են ակտում: Ակտի պատճենի մեկ օրինակը հանձնվում է ստուգվող օբյեկտին: Եթե վերջինս պետական բաժնեմաս ունեցող ձեռնարկություն է, ապա պատճենի մեկ օրինակը ուղարկվում է պետական կառավարման վերադաս մարմնին:

ՀԱՏՈՒԿ ՄԱՍ

ԳԼՈՒԽ V

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՖՈՆԴԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

§1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՆ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի երկրորդ հոդվածում ասված է. պետական և համայնքի բյուջեները՝ պետության և տեղական ինքնակառավարման մարմիններին սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագրեր են:

Իրավաբանական գրականության մեջ պետական բյուջե տերմինը ժամանակին և այսօր ընկալվում է մի քանի իմաստով.

- ա) բյուջեն որպես տնտեսական կատեգորիա
- բ) բյուջեն այդ բառի նյութական իմաստով
- գ) բյուջեն որպես իրավական կատեգորիա¹:

Որպես տնտեսական կատեգորիա, հանրապետության բյուջեն իրենից ներկայացնում է տնտեսական հարաբերությունների մի համակարգ, որի միջոցով ազգային եկամտի բաշխման և վերաբաշխման հիման վրա հավաքվում և օգտագործվում է դրամական միջոցների համապետական ֆոնդը:

Ըստ իր նյութական բովանդակության՝ բյուջեն իրենից ներկայացնում է պետության անհրաժեշտ դրամական միջոցների ձևավոր-

¹ Տե՛ս Մ.И.Пискотин, Бюджетное право, "Юридическая литература" М; стр.16; Финансовое право, "Бек", М; 1996, стр.108

ման և ծախսման որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագիր:

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն լայն փոխհարաբերության մեջ է գտնվում հանրապետության տնտեսական և սոցիալական զարգացման ծրագրերի հետ: Պետական բյուջեի պլանային բնույթը բխում է հանրապետության տնտեսական հիմքից, որը կազմում է սեփականության նոր ձևերի հիման վրա ձևավորված արտադրության գործիքների և միջոցների նկատմամբ քաղաքացիների կոլեկտիվ և պետական սեփականությունը: Այն պայմանավորված է օբյեկտիվ տնտեսական օրենքների և, մասնավորապես, ՀՀ տնտեսության շուկայական զարգացման օրենքի գործողությամբ, բացի դրանից այն հիմնականում հենվում է տնտեսության զարգացման ծրագրերի վրա:

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը յուրաքանչյուր տարի հանրապետության կառավարությանն եզրակացություն է ներկայացնում առաջիկա տարվա համար կազմված պետական բյուջեի նախագիծը այդ տարվա տնտեսության և սոցիալական զարգացման ծրագրերին համապատասխան լինելու մասին: Սակայն, այստեղից բոլորովին էլ չի բխում թե պետական բյուջեի մեջ մեխանիկորեն փոխանցվում են տնտեսության զարգացման ցուցանիշներն իրենց ֆինանսական արտահայտությամբ:

Չի կարելի պետական բյուջեն և մյուս ֆինանսական պլանները դիտել սոսկ այդ ցուցանիշների պասսիվ արտահայտություններ, քանի որ, գոյություն ունեն մի շարք ցուցանիշներ, որոնք սահմանվում են բյուջեի կողմից անկախ, մյուս ֆինանսական ծրագրերի, օրինակ՝ կառավարչական ծախսերի հիմնական զանգվածը, կենսաթոշակների և նպաստների վճարման գումարները և այլն: Պետական բյուջեն բացառիկ կարևոր և ակտիվ ազդեցություն է թողնում տնտեսության և սոցիալ զարգացման ծրագրերի վրա, պարզում և ճշտում է հեռանկարները, միջոցներ է նախատեսում դրության շտկման համար, տնտեսության մեջ ի հայտ է բերում ռեզերվներ պետական եկամուտների ավելացման համար, կարևոր դեր է խաղում տնտեսական ծրագրերի կատարմանը հսկելու գործում:

Բյուջետային և տնտեսության զարգացման ծրագրերը երկու փոխադարձ պայմանավորված պրոցեսներ են, որոնք իրականացվում են միաժամանակ:

Ինչպես արդեն նշեցինք, պետական բյուջեն հանդես է գալիս որպես մեր երկրի հիմնական ֆինանսական պլանը: Այն առաջատար և կոորդինացնող դեր է կատարում մյուս ֆինանսական պլանների մեջ:

Այսպես, պետական, կոլեկտիվ և անհատական ձեռնարկություն-

ների ֆինանսական պլաններում կա մի հատուկ բաժին, որը կոչվում է փոխհարաբերություն բյուջեի հետ: Նրանում նշվում են բյուջեին պարտադիր վճարումներ կատարելու չափերը (շահութահարկ, ավելացված արժեքի, ակցիզային հարկեր): Նրանում նշվում են նաև պետբյուջեից ձեռնարկությանը բաց թողած գումարները: Եվ առաջին և երկրորդ դեպքում պետբյուջեի օգնությամբ հսկողություն է իրականացվում ձեռնարկության գործունեության նկատմամբ, սահմանվում է նրա գործունեության ֆինանսական ռեժիմը, որը խթանում է պայքարը շահութաբերության բարձրացման, ինքնարժեքի իջեցման և կարգապահության ամրապնդման համար:

Կամ նախահաշիվներով պետբյուջեից են հիմնականում ամբողջապես ստանում իրենց գործունեության համար անհրաժեշտ բոլոր միջոցները պետական հիմնարկները (դպրոցները, հիվանդանոցները և այլն): Այդ միջոցներն ամբողջությամբ անցնում են բյուջեի ծախսերի մասով և նրանց պլանավորումը ու օգտագործումը գտնվում է բյուջեն կազմող և կատարող մարմինների հսկողության տակ:

Պետբյուջեի հետ սերտորեն կապված են նաև բանկային հիմնարկների ֆինանսական պլանները: Նրանից բանկերի ֆինանսական պլանում նշվում է շահույթի այն մասը, որը տրվում են բյուջեին:

Այսօր Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն իր մեջ է ներգրավում սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի բյուջեն:

Բյուջեն անմիջապես կապված է նաև ընկերությունների ապահովագրության ֆինանսական պլանների հետ: Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական ընկերությունները գործում են առևտրային հաշվարկի սկզբունքով և ունեն շահույթ, ըստ որում այդ շահույթի որոշակի մասը փոխանցվում է պետական բյուջե՝ պահեստային ֆոնդերի ստեղծման համար:

Այսօր հանրապետության բյուջեի ընդհանուր գումարի մեջ են ներառվում նաև բնակչության սոցիալական ապահովագրության եկամուտների ու ծախսերի մեծ մասը (կենսաթոշակներ, նպաստներ, հարկեր):

Բյուջեի հետ սերտորեն կապված են նաև անհատ ձեռներեցների, կոոպերատիվ և հասարակական կազմակերպությունների ֆինանսական պլանները:

Պետբյուջեն հիմնական ֆինանսական պլան է համարվում նաև այն պատճառով, որ նրա միջոցով բաշխվում և վերաբաշխվում է մեր հանրապետությունում ստեղծվող ազգային եկամուտի մոտ կեսը, ՀՆԱ-ի մինչև 20%-ը: Բացի բյուջեից գոյություն ունեն նաև ապակենտրոնացված ֆինանսական ֆոնդեր՝ ձեռնարկությունների և կազ-

մակերպությունների, կոոպերատիվ և հասարակական կազմակերպությունների ֆինանսները: Դրա համար էլ բյուջեն քննարկելիս ընդգծվում է, որ այն գլխավոր ֆինանսական պլան է:

Եթե մենք վերլուծության ենթարկենք նորաստեղծ հանրապետության բյուջեն զարգացած երկրների բյուջեների հետ համեմատության մեջ, ապա կտեսնենք, որ մեր բյուջեն արմատապես տարբերվում է այդ երկրների բյուջեներից: Յետևապես, բյուջեին չի կարելի տալ եզակի որոշակիություն:

Կ.Մարքսը գրել է, որ բյուջեն, դա պետության ընթացիկ տարվա ծախսումների և եկամուտների նախահաշիվն է, հիմնական ֆինանսական փորձ՝ անցած տարվա հաշվեկշռի հիման վրա: Տնտեսական նոր հարաբերությունների և շուկայական գնազոյացման պայմաններում Հայաստանի Հանրապետության բյուջետային պլանավորումը կրում է ենթադրական պայմանական բնույթ և անհնարին է իրական բյուջետային պլանավորում ամբողջ էկոնոմիկայի մասշտաբով:

Հայաստանի Հանրապետության բյուջեն ընդգրկում է միայն մեր հանրապետության դրամական միջոցների համապետական ֆոնդը: Նա չի ընդգրկում հանրապետության բոլոր դրամական եկամուտները:

Երբ խոսքը վերաբերվում է պետական բյուջեին, ապա պետք է հասկանալ միայն այն ֆինանսական ռեսուրսները, որոնք անմիջականորեն դրվում են իշխանության կենտրոնական ու տեղական մարմինների տնօրինության տակ:

ՀՀ կառուցվածքային (վարչական տեսակետից) ձևը թույլ է տալիս հանրապետության բյուջեի կողքին համայնքային բյուջեներ, որոնք հանդիսանում են արդարենակչության մունիցիպալ մարմինների բյուջետային ինքնուրույնության դրսևորման ձևերից մեկը:

Հայաստանի Հանրապետությունն ունի իր սեփական բյուջետային իրավունքը, որը իր ամրապնդումն է գտել հանրապետության սահմանադրությունում: Համաձայն սահմանադրական նորմերի, հանրապետությունն ունի իր պետական բյուջեն, որը հաստատվում է հանրապետության Ազգային ժողովի կողմից (սահմանադրության 76, 77 հոդվածներ):

Հանրապետության բյուջեի մեջ կենտրոնացվում է հանրապետության ազգային եկամուտը, որն ուղղվում է արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի, առևտրի և տնտեսության մյուս ճյուղերի պլանաչափ զարգացման, աշխատավորների նյութական բարեկեցության ու կուլտուրական մակարդակի բարձրացման, լուսավորության, առողջապահության, սոցիալական ապահովության միջոցառումների ֆինանսավորման, պետական իշխանության և

պետական կառավարման մարմինների պահպանման նպատակներին: Յուրաքանչյուր տարի հանրապետության բյուջեն կազմվում է սոցիալ-տնտեսական զարգացման պլանի ցուցանիշների հիման վրա:

Արտադրանքի թողարկման, ինքնարժեքի, ապրանքաշրջանառության, կապիտալ ներդրումների առաջադրանքների, դպրոցների, բՆԻՀ-երի, տեխնիկումների, ուսումնարանների, հիվանդանոցների, մանկապարտեզների, գրադարանների և սոցիալ-կուլտուրական բնույթի մյուս հիմնարկների ցանցի ու կոնտինգենտի պլանների հիման վրա կատարվում է մի կողմից բյուջեի եկամուտների և մյուս կողմից բյուջեի ծախսերի չափի սահմանում: Բյուջեի գլխավոր նպատակն է մոբիլիզացնել անհրաժեշտ չափերի դրամական ռեսուրսներ պետության տրամադրության տակ և ապահովել տնտեսության զարգացման պլանով նախատեսված միջոցառումների անխափան ֆինանսավորումը: Բյուջեն կազմվում է տնտեսության զարգացման պլանի ցուցանիշների հիման վրա, դրա հետ միասին բյուջեն չի հանդիսանում այդ ցուցանիշների թվաբանական հետևանքը: Նա ունի ինքնուրույն նշանակություն տնտեսության մեջ՝ նոր ռեզերվներ հայտնաբերելու, այդպիսիք տնտեսական ու կուլտուրական զարգացման նպատակներին ուղղելու և պետական միջոցները խնայողաբար օգտագործելու գործում: Այդ պատճառով էլ հանրապետության բյուջեն տնտեսության զարգացման պլանի հետ յուրաքանչյուր տարի կառավարության ուղերձով ուղարկվում է Ազգային ժողովի հաստատմանը:

Բյուջեում, ինչպես հայելու մեջ, արտացոլվում է հանրապետության էկոնոմիկայի առաջընթացը:

Յուրաքանչյուր վարչա-տարածքային միավոր հանրապետության բյուջեում ունի իր բաժինը, որի չափը պայմանավորված է տերիտորիայից, բնակչության քանակից և այլ չափանիշներից, բայց դա չի նշանակում, որ համայնքային բյուջեները կորցնում են իրենց բյուջետային իրավունքների հավասարության սկզբունքները: Այդ ընդհանուր սկզբունքը պայմանավորված է հանրապետության կառուցվածքով և տարածվում է հասարակական կյանքի բոլոր բնագավառների՝ ինչպես նաև պետական ֆինանսների վրա:

ՀՀ յուրաքանչյուր բյուջետային օղակ, իր բյուջեի կազմման, քննարկման, հաստատման և կատարման շրջանում օգտվում են հավասար իրավունքներից:

Հայաստանի Հանրապետության սեփական բյուջետային իրավունքը արտացոլվում է մի շարք կոնկրետ լիազորություններում, դրանցից ամենակարևորները հետևյալներն են՝

1. Հանրապետության պետական բյուջեին ամրացված եկամուտ-

ների տնօրինման ինքնուրույն իրավունք

2. Պետական հարկերից ու եկամուտներից ամենամյա հատկացումների ստացման իրավունք
3. Օրենքով սահմանված կարգով հանրապետության բյուջեի կազմման, հաստատման և բյուջետային միջոցների բաշխման իրավունք
4. Հաստատված բյուջեի և նրան նախատեսված հատկացումների օգտագործման ինքնուրույն իրավունք:

Հայաստանի Հանրապետության բյուջեն տարեցտարի աճի տեմպերով կունենա: Այդ աճը պայմանավորված է հանրապետության իշխանության և տեղական մարմինների այն կարևոր դերով, որ նրանք ունեն տնտեսության զարգացման, ներքին ռեզերվները հայտնաբերելու և միջոցների արդյունավետ ծախսումը ապահովելու գործում:

Բյուջետային հարաբերությունները կարգավորվում են իրավական մի շարք ակտերով, որոնց թվում կարևոր տեղ ունի Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին օրենքը, որը ընդունվել է 1997թ. հունիսի 24-ին Ազգային ժողովի կողմից: Այս իրավական ակտը հիմնական բազան է, որը կարգավորում է այսօր բյուջետային, ինչպես նյութական, այնպես էլ պրոցեսուալ բնույթի իրավական հարաբերությունները:

§ 2. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Պետական բյուջեի կարևոր դերը և նշանակությունը զարգացող Հայաստանի Հանրապետության համար տնտեսավարման այս նոր փուլում պայմանավորված է դրամական միջոցների բյուջետային ֆոնդի ստեղծման, բաշխման և օգտագործման պրոցեսում ծագող հասարակական հարաբերությունների մանրակրկիտ իրավական կարգավորմամբ:

Բյուջետային օրենսդրությունը սահմանում է ոչ միայն դրամական միջոցների հավաքագրումը, բաշխումը և վերաբաշխումը, առավելապես պետական կարևորություն ունեցող հասարակական հարաբերությունների համար, նախատեսում է բյուջետային իրավունքների սահմանազատումը ըստ պետական կառուցվածքի առանձնահատկությունների, սահմանում է հանրապետության և նրա վարչա-տարածքային միավորների միջև լիազորությունների բաշխումը, միա-

ժամանակ իրավական կարգավորման և տնօրինության տակ է վերցնում բոլոր պետական և հասարակական կազմակերպությունների, հիմնարկ-ծեռնարկությունների գործունեությունը:

Այս իմաստով իրավաբանական գրականության մեջ բյուջետային իրավունքի կապակցությամբ նրա կարգավորման առարկայի և մեթոդի վերաբերյալ մեկ միասնական տեսակետ գոյություն չունի:

Հեղինակների մի մասը, ժխտելով ֆինանսական իրավունքի ինքնուրույն գոյության փաստը, չեն ընդունում բյուջետային իրավունքի ինքնուրույն առկայությունը ներկա ժամանակաշրջանում¹:

Ելնելով նման դիրքորոշումից՝ օրինական պահանջ է առաջանում պարզելու բյուջետային իրավունքի և նրա տեղը իրավունքի համակարգում:

Պատմական էքսկուրսները ցույց են տալիս, որ ինչպես իրավունքի համակարգին նվիրված նախկին խորհրդային պետությունների իրավաբանների առաջին 1938-40թթ. և թե երկրորդ՝ 1956-58թթ. կոնֆերանսների ժամանակ սովետական ֆինանսական իրավունքը ճանաչվել է որպես իրավունքի ինքնուրույն ճյուղ իր կարգավորման մեթոդով և առարկայով, որին ներհատուկ են նաև իրավական տարբեր ինստիտուտները:

Հատկապես վերջին ժամանակներս իրավաբանական գրականության մեջ երևան եկան նոր տեսակետներ, համաձայն որի՝ ճյուղերի սահմանազատման համար գոյություն ունեցող հիմնական չափանիշների, որոնք մի ժամանակ վերաբերում էին կարգավորման առարկային և մեթոդին, չի կարելի դիտել որպես բավարար և անհրաժեշտ պայման: Այս հեղինակները իրավունքի ճյուղերի սահմանազատման համար առաջ են քաշում այսպես կոչված «արյունակից» ճյուղերի տեսությունը, ըստ որի իրավունքի ճյուղերի դասակարգման հիմքում պետք է դնել կարգավորման մեթոդը²:

Անդրադառնալով բյուջետային իրավունքի՝ «որպես իրավունքի ինքնուրույն ճյուղի» առարկայի և մեթոդի ուսումնասիրությանը, անհրաժեշտաբար պետք է ընդգծել, որ վերջինս դուրս չի գալիս ֆինանսահարավական հարաբերությունների շրջանակից և ամբողջությամբ նույնպես ուղղված է դրամական միջոցների հավաքագրմանը, բաշխմանը և վերաբաշխմանը:

Այսպիսով, բյուջետային իրավունքը հանդես է գալիս որպես համասեռ հասարակական հարաբերություններ կարգավորող իրավա-

¹ Ств Поль Марж Годме, "Финансовое право", М., Прогресс, 1978. стр.39

² Ств В.М.Чхиявдзе, А.А.Ямпольская, О системе советского права, "Советское государство и право" 1967г., N9, стр.32-40.

կան ինստիտուտ և մտնում է ֆինանսական իրավունքի կազմի մեջ:

Բյուջետային իրավական հարաբերությունները ծագում են

1. Բյուջետային համակարգի կառուցվածքի սահմանման և առանձին բյուջեների միջև եկամուտների և ծախսերի բաշխման պրոցեսում:
2. Հանրապետության և տեղական ինքնակառավարման մարմինների միջև բյուջետային իրավասության սահմանագատման:
3. Բյուջեների կազմման, քննարկման, հաստատման և կատարման պրոցեսում:
4. Բյուջեների կատարման, հաշվետվությունների կազմման և հաստատման պրոցեսում:
5. Բյուջեի կատարման պրոցեսում հսկողության իրականացումը:

Թվարկված հարաբերությունները կարգավորվում են իրավական նորմերով, որոնք իրենց հանրագումարի մեջ կազմում են բյուջետային իրավունքը, որը ֆինանսական իրավունքի գլխավոր բաղկացուցիչ մասն է և առաջատար ինստիտուտը: Այսպիսով, բյուջետային իրավունքն իր մեջ ընդգրկում է իրավական նորմեր, որոնք սահմանում են բյուջետային համակարգի կառուցվածքը, առանձին բյուջեների ծավալը, եկամուտների և ծախսերի թվարկումը և նրանց բաշխումը տարբեր բյուջեների միջև, ինչպես նաև բյուջետային պրոցեսը կազմող նորմեր, այսինքն նորմեր, որոնք կարգավորում են բյուջեների կազմման, քննարկման, հաստատման և կատարման կարգը:

Բյուջետային նորմերով կարգավորվող հասարակական հարաբերությունները կոչվում են բյուջետային իրավահարաբերություններ: Դրանք ֆինանսական իրավական հարաբերությունների տեսակներից մեկն են և դրա ուժով նրանց ներհատուկ են այն բոլոր գծերը, որոնք բնորոշ են ֆինանսական-իրավական հարաբերությունների համար: Դրա հետ միասին բյուջետային իրավահարաբերություններն ունեն նաև առանձնահատկություններ, որոնցով նրանք առանձնանում են ֆինանսական իրավական հարաբերությունների զանգվածից: Բյուջետային իրավահարաբերությունների սուբյեկտներ կարող են լինել.

1. Հայաստանի հանրապետությունը՝ ի դեմս նրա Ազգային ժողովի և կառավարության
2. Վարչա-տերիտորյալ միավորումները՝ ի դեմս մարզպետարանների և տեղական ինքնակառավարման մարմինների

3. Հայաստանի հանրապետության ֆինանսա-վարկային մարմինները՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը, ՀՀ Կենտրոնական բանկը, բանկային համակարգի մյուս մարմինները:

Բյուջետային իրավահարաբերության սուբյեկտ դառնալու, համար անհրաժեշտ է օժտված լինել հետևյալ հատկանիշներով.

1. Մասնակցել բյուջեների միջև եկամուտների և ծախսերի բաշխմանը
2. Որպես կողմ մասնակցել բյուջետային պրոցեսի որևէ փուլում
3. Կապված լինել բյուջեի հետ նրանից դրամական միջոցների համապատասխան գումար՝ բյուջետային ֆինանսավորման ձևով ստանալով:

Բյուջետային իրավահարաբերությունների որոշ սուբյեկտներ միաժամանակ օժտված են երկու և նույնիսկ հիշյալ երեք հատկանիշներով: Դրա հետ միասին պետք է նշել, որ բյուջետային իրավահարաբերության սուբյեկտները ի տարբերություն ֆինանսական իրավահարաբերության այլ տեսակների, չեն կարող լինել ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները, ինչպես նաև քաղաքացիները: Նրանք օժտված չեն վերը նշված հատկանիշներից և ոչ մեկով: Այսպես, օրինակ՝ պետական ծառայողները ստանալով աշխատավարձ, հարաբերության մեջ են մտնում համապատասխան պետական հիմնարկների հետ, որոնք աշխատավարձի համար ըստ նախահաշվի գումարներ են բաց թողնվում բյուջեից, սակայն ոչ բյուջեի մասին օրենքը և ոչ էլ բյուջեն կոնկրետ իրավունքներ չեն ծնում նրանց համար: Զեռնարկությունների, կազմակերպությունների ու քաղաքացիների փոխհարաբերությունները բյուջեի հետ ածանցվում են հարկային և ոչ հարկային վճարումների ձևով, որ նրանք մուծում են բյուջե: Սակայն բյուջետային իրավունքը չի կարգավորվում այն հարաբերություններն, որոնք ծագում են բյուջեի եկամուտները կազմող դրամական միջոցների հավաքագրման պրոցեսում: Այդ հարաբերությունների կարգավորումն իրականացվում է ֆինանսական իրավունքի ուրիշ ինստիտուտների կողմից (հարկային իրավունք, պետական վարկ և այլն): Բյուջետային իրավահարաբերություններն ունեն ևս մեկ առանձնահատկություն, որը հատուկ է ոչ բոլոր ֆինանսական իրավահարաբերությունների: Յուրաքանչյուր բյուջետային իրավահարաբերություն չի կարող տևել մեկ տարուց ավել: Դա կապված է այն բանի հետ, որ բյուջեն ընդունվում է միայն մեկ տարվա համար: Սակայն այս հանգամանքը չի բացառում այն, որ բյուջետային իրավահարաբերությունները կրում են սիստեմատիկ, անընդմեջ բնույթ:

Բյուջետային իրավահարաբերությունները բաժանվում են հետևյալ հիմնական խմբերի.

1. Հարաբերություն հանրապետության և համայնքային բյուջեների միջև, որոնք ծագում են համայնքային բյուջեների համահարթեցման գործընթացում:
2. Հարաբերություն ֆինանսական մարմինների և ձեռնարկությունների, հիմնարկների ու կազմակերպությունների միջև, որոնք ծագում են բյուջեների կազմման և կատարման ժամանակ:
3. Հարաբերություն ֆինանսական մարմինների և ՀՀ Կենտրոնական բանկի հաստատությունների միջև, որոնք ծագում են բյուջեի դրամարկղային կատարման պրոցեսում.

Նշված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ սահմանադրությամբ, ընթացիկ օրենսդրությամբ, կառավարության որոշումներով, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերով:

Իրավաբանական գրականության մեջ բյուջետային իրավունքի նորմերը դասակարգվում են ըստ բովանդակության:

Ըստ իրենց բովանդակության, բյուջետային իրավունքի նորմերը կարելի է բաժանել երկու խմբի

ա) **ՆՅՈՒԹԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ** - Արանք սահմանում են բյուջեի բովանդակությունը, այսինքն համապատասխան բյուջե մուտք եկամուտների գումարների աղբյուրները, տվյալ բյուջեի հաշվին կատարվող ծախսերի ծավալը, ուղղությունը, եկամուտների և ծախսերի ընդհանուր գումարը, առաջինների գերակշռությունը երկրորդների նկատմամբ, պահուստային ֆոնդերի չափերը և այլն:

բ) **ՊՐՈՑԵՍՈՒԿԱՆ ՆՈՐՄԵՐ** - Սրանք սահմանում են բյուջետային համակարգի գործունեության կարգը, այսինքն բյուջետային գործընթացը: Այլ բառերով ասած, նորմերի այս խումբը նախատեսում է թե ինչ կարգով պետք է կատարվի բյուջեների կազմումը, քննարկումը, հաստատումը և գործադրումը, ինչպես նաև նրա կատարման մասին հաշվետվությունների կազմումը և հաստատումը:

Բյուջետային իրավունքի նորմերը հասարակական կյանքում իրացվում են Հանրապետության ԱԺ և կառավարության, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների, «բյուջեի» բնագավառում ունեցած իրավունքների միջոցով:

«Բյուջետային իրավունք» հասկացությունը ընդգրկում է բազմազան լիազորությունների լայն շրջանակ: Այդ լիազորությունների հիմնական բովանդակությունը կազմում են

ա) Որոշակի բյուջետային եկամուտներ ստանալու իրավունք:

բ) Բյուջեի կազմման և հաստատման ճանապարհով բյուջետային

միջոցները իր հայեցողությամբ բաշխելու իրավունք:

գ) Բյուջեի ինքնուրույն կատարման, նրանում նախատեսված գումարները օգտագործելու իրավունք:

Այս հիմնական իրավունքները կոնկրետացվում են լիցենզիայի և կառավարման մարմինների բազմազան լիազորությունների միջոցով: Մարմիններ, որոնք գործնականում իրացնում են հանրապետության և տեղական ինքնակառավարման մարմինների բյուջետային իրավունքները:

Բյուջետային իրավունքներն իրականացվում են Հանրապետությունում օրենսդիր և գործադիր մարմինների կողմից: Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և կենտրոնական բանկի կողմից:

Ազգային ժողովը հաստատում է հանրապետության բյուջեն, այսինքն եկամուտների և ծախսերի ընդհանուր ծավալը ամբողջությամբ վերցրած: Նա սահմանում է նաև համայնքների բյուջեները մուտք լինող եկամուտները, բյուջեների միջև եկամուտների և ծախսերի բաշխման կարգը, հաստատում է նախորդ տարիների պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունը: Ազգային ժողովի իրավասությանն է վերաբերվում նաև հանրապետության, ֆինանսական մարմինների և ձեռնարկությունների, կազմակերպությունների ու հիմնարկների միջև բյուջետային հարաբերությունները կարգավորող օրենսդրական ակտերի ընդունումը:

ՀՀ կառավարությունը որոշումներ ու կարգադրություններ է իրատարակում ուղղված եկամուտների և ծախսերի գծով պետբյուջեի կատարման ապահովմանը, ինչպես նաև բյուջեների կատարման պրոցեսում առաջացած հարցերի լուծմանը: Այն սահմանում է բյուջետային միջոցների ծախսման կարգը, եթե բյուջեն չի հաստատվել մինչև նոր տարվա սկիզբը, սահմանում է դրամարկղային ժամանակավոր շեղումների փակման կարգը, համաձայնություն է տալիս վարկերը բյուջեի մեկ օղակից մյուսը տեղափոխելու, պահուստային ֆոնդից միջոցներ բաց թողնելու համար, կարգավորում է բյուջետային վարկերը տնօրինողների իրավունքները և այլն: Բացի դրանից, ՀՀ կառավարությունը յուրաքանչյուր տարի որոշում է իրատարակում համապատասխան տարվա պետբյուջեի կազմման կարգի և ժամկետների վերաբերյալ, քննարկում է նոր բյուջեի նախագիծը և Ազգային ժողով է ներկայացնում:

ա) ՀՀ պետական բյուջեն.- եկամուտների ընդհանուր գումարով, ցույց տալով եկամուտների հիմնական աղբյուրները, ծախսերի ընդհանուր գումարը, որի մեջ առանձնացված են տնտեսության, սոցիալական, կուլտուրական միջոցառումների, երկրի պաշտպանության, պետական իշխանության, պետական կառավարման, դատական մարմինների պահպանման ծախսերը:

բ) Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի բյուջեն եկամուտների և ծախսերի ընդհանուր գումարով:

գ) Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեները եկամուտների և ծախսերի ընդհանուր գումարով:

դ) Կառավարությունը պետական բյուջեի նախագիծը ներառյալ նաև ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված «ՀՀ կենտրոնական բանկի կապիտալ ներդրումների ծրագիրը և ծախսերի նախահաշիվը առանձին հողված», Աժ քննարկմանն է ներկայացնում բյուջետային տարին սկսվելուց վաթսուներորդ ամսից՝:

Պետբյուջեի նախագծի քննարկման պրոցեսում կառավարությունը լուծում է այն բոլոր տարածայնությունները, որոնք առաջանում են մի կողմից ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության, մյուս կողմից՝ նախարարությունների և գերատեսչությունների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների միջև: ՀՀ կառավարությունը պետական բյուջեի կատարումը կազմակերպում է ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության, նախարարությունների և գերատեսչությունների միջոցով, ինչպես նաև սահմանում է ֆինանսների նախարարության կողմից պետական բյուջեի կատարման վրա հսկողություն սահմանելու կարգը: Կառավարությունը սահմանում է պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության կազմման կարգը և ժամկետները, քննարկում է այդ հաշվետվությունը և այն ներկայացնում է ՀՀ Ազգային ժողովի հաստատմանը:

§ 3 ՀՀ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ:

Պետության բյուջետային համակարգը ուղղակի կախվածության մեջ է պետության կառուցվածքից: Ցանկացած պետության բյուջետային կառուցվածքը որոշվում է նրա պետական և վարչատարածքային բաժանումից:

Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգը պայմանավորված է նրա ունիտար բնույթով: Հանրապետության սահմանադրության 104 հոդվածի համաձայն Հայաստանի վարչատարածքային միավորներ են մարզերը և համայնքները: Մարզերը կազմված են գյուղական և քաղաքային համայնքներից:

Պատահական չէ, որ «Հանրապետության բյուջետային համակարգի» մասին օրենքի երրորդ հոդվածը հիմնվելով սահմանադրական նորմի վրա նախատեսում է, որ Հայաստանի հանրապետության բյուջետային համակարգը բաղկացած է պետական և համայնքների բյուջեներից: Պետական և համայնքների բյուջեները հիմնվում են ֆինանսական, դրամավարկային և հարկային միասնական պետական քաղաքականության վրա:

Ֆինանսական գրականության մեջ պետության բյուջետային համակարգի լուսաբանումը, նրանց ֆինանսաիրավական կարգավորման առանձին հատկանշություններին վերաբերող հիմնահարցերը լուսարանվում են բյուջետային համակարգի պետաիրավական կառուցվածքի սկզբունքներով:

Պետության կազմում ազգային պետական և վարչատարածքային բաժանումները բնավ չեն բացառում միասնական-կենտրոնացված բյուջեի գաղափարը, որը իրական երաշխիք է տեղական բյուջեների ինքնուրույնության ապահովման համար:

Հայաստանի Հանրապետության ազգային միատարրությունը արտահայտում է նրա ինքնիշխանության անբաժանելիությունը, որը իր արտահայտությունն է գտնում նաև պետության բյուջեի և բյուջետային համակարգի կազմակերպման և գործունեության ուղորտում: Բյուջետային համակարգի միասնության դրսևորման մասին է վկայում հանրապետության տարածքում միասնական տնտեսական, ֆինանսական, հարկային քաղաքականության իրականացումը:

Հայաստանի հանրապետության իշխանությունն անբաժան է, բաժանելի է միայն նրա գործունեության ձևերը, օրենսդիր, գործադիր և դատական, որոնք պետական իշխանության բաղադրամասերն են: Այսպիսի միասնական գործունեության ձև է պետության ֆինանսական գործունեությունը, որ նպատակ ունի համալրել պետական բյուջեն և ապահովել հանրապետության տարածքում կենտրոնացված միասնական բյուջետային համակարգ՝ իր համայնքային բաղադրիչներով:

Հանրապետության բյուջետային համակարգի կազմակերպման հիմքում ընկած են մի շարք հիմնարար սկզբունքներ, ինչպիսիք են բյուջեների միասնականության, լիարժեքությունը, իրական լինելը, հրապարակայնությունը և ինքնուրույնությունը:

Բյուջետային համակարգի կառուցվածքի միասնականության սկզբունքը ապահովված է միասնական իրավական հիմքով: Սկզբունքները ՀՀ-ում առաջին անգամ իրավական ամրապնդում ստացան «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին օրենքում: Համակարգը հիմնված է

ա) բյուջեների նախագծերը կազմելու

¹ Տե՛ս. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Աժ 1997թ. հունիսի 24-ի օրենքը, հոդ.21 (ՀՀ գործող օրենքների ժողովածու 1995-1999թթ. Գիրք Բ: Ե: 1999)

- բ) բյուջեների եկամուտների (մուտքերի) և ծախսերի բյուջետային դասակարգման
- գ) հաշվառման
- դ) հաշվետվություն ներկայացնելու
- ե) բյուջեների կատարման ընդհանուր սկզբունքների վրա¹:

Բյուջետային համակարգի միասնական սկզբունք ապահովում է ընդհանուր իրավական հիմքով, բյուջետային գործընթացի կազմակերպման սկզբունքներով, բյուջետային դասակարգմամբ, բյուջետային հաշվառման, հաշվետվության և բյուջեի մասին մեթոդաբանությամբ ու դրամական համակարգով:

Հանրապետության բյուջետային համակարգի կառուցվածքի լիարժեքության սկզբունքը արտահայտվում է պետական և համայնքային բյուջեների ինչպես եկամուտների, այնպես էլ առանձին բյուջեների ծախսերի լիարժեքությամբ՝ Այուս կողմից բյուջետային համակարգի կառուցվածքի լիարժեքության սկզբունքը հանդիսանում է հանրապետության ազգային պետական կառույցի անբաժան ամբողջության և վարչատարածքային միավորների ֆինանսական ապահովվածության երաշխիք:

Բյուջետային լիարժեքության սկզբունքը միաժամանակ վկայում է այն մասին, որ հանրապետության տարածքում ձևավորվող եկամտի բոլոր տեսակները ըստ աղբյուրների կենտրոնանում են բյուջետային համակարգի օղակներում:

Լիարժեքության սկզբունքով է կատարվում նաև բյուջետային համակարգի ծախսերի բաշխումը, որը ընդգրկում է հանրապետության սոցիալ-տնտեսական կյանքի, ինչպես նաև առանձին ծրագրերի իրականացման ֆինանսավորումը:

Բյուջետային համակարգի կառուցվածքի իրական լինելու սկզբունքը կապված է բյուջետային եկամուտների և ծախսերի սահմանման օրինականության հետ: Բյուջեների իրական լինելու նպատակով է, որ օրինակաբան կարգավորում է տրվում եկամուտների առանձին տեսակներին և նախապես սահմանվում է, թե որ բյուջեն է մուտքագրվելու:

Բյուջեների իրական լինելու սկզբունքը հնարավորություն է ընձեռնում հաշվեկշռելու բյուջետային համակարգի առանձին օղակների եկամուտները և ծախսերը այն հաշվով, որպիսի կրճատվի նրանց միջև բյուջետային ճեղքվածքի հնարավորությունը:

Բյուջետային համակարգի եկամուտների և ծախսերի իրական լինելը միաժամանակ բացառում է ինչպես եկամուտների առանձին

տեսակների, այնպես էլ պետության կողմից սահմանված և օրենսդրական ամրապնդում ստացած ծախսերի միակողմանի փոփոխությունները պետական մարմինների կամ պաշտոնատար անձի կողմից:

Բյուջետային համակարգի ինքնուրույնության սկզբունքը վկայում է, գործող օրենսդրությամբ բյուջետային համակարգի սուբյեկտների իրավասության ժամալը սեփական եկամուտների սահմանման (հարկեր, հաստատագրված վճարներ, զանձումներ) ինչպես նաև ինքնուրույնաբար ծախսերի կատարում, սեփական նախածեռնությամբ նրանց ուղղությունների որոշումը:

Բյուջետային համակարգի կառուցվածքի ինքնուրույնության սկզբունքը առաջին հերթին ենթադրում է այս համակարգի գործունեությունը իրականացնող սուբյեկտների օրենքով նախատեսված բյուջետային իրավունքների առկայություն, որոնց գործադրումը անհնար է հանրապետության այլ մարմինների կամքից:

Ինչ վերաբերում է բյուջետային համակարգի կառուցվածքի հրապարակայնությանը² որպես սկզբունք, այն այս կամ այն չափով կախված է համապատասխան պետության պետական ռեժիմից և արտահայտում է ազգաբնակչության պետական կառավարմանը մասնակցության հնարավորության աստիճանը:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական ստատուսը (կարգավիճակը) վկայում է նրա ժողովրդավարական, սոցիալական և իրավական լինելու մասին: Պատահական չէ, որ ամեն տարի պետական բյուջեի նախագիծը դրվում է ժողովրդական քննարկման, նրա եկամուտները և ծախսերը իրենց ձևավորման աղբյուրներով և ծախսերի ուղղություններով մինչև ԱԺ կողմից քննարկվելը և հաստատվելը: ԱԺ բյուջեի նախագծի քննարկումներին մասնակցում են մշտական և ժամանակավոր հանձնաժողովներ, լրատվական ծառայությունների ներկայացուցիչներ:

«Պետական բյուջեի մասին» օրենքը հրապարակվում է պաշտոնական փաստաթղթերով, հաղորդվում է հեռուստատեսությամբ և ռադիոյով: Այն աղգաբնակչությանն է հասցվում ԱԺ պատգամավորների միջոցով:

Այս նույն կերպով հրապարակվում է նաև նախորդ տարվա պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունները:

¹ Տե՛ս. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքը, նշ. ժողովածու, էջ 170

¹ Տե՛ս. Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին, նշ. օրենքի 8-րդ հոդվածը

² Տե՛ս. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքը, հոդված 26

§ 4 ԲՅՈՒՋԵՒ ՀԱՍՆԱԿԱՐԳԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՃԱՆՍԵՐԻ ԿԱԶՄԸ, ՆՐԱՆՑ ԲԱՇԽՈՒՄԸ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՍՆՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Բյուջետային համակարգը սահմանող ֆինանսական օրենսդրությամբ ամրապնդված է ինչպես պետական, այնպես էլ համայնքային բյուջեների կառուցվածքը:

Պետական և համայնքային բյուջեները բաղկացած են երկու մասից՝ եկամուտներից և ծախսերից: Բյուջեի եկամուտներն իրենցից ներկայացնում են պետական եկամուտների որոշակի մաս և ունեն կենտրոնացված բնույթ, քանի որ դրվում են պետության անմիջական տնօրինության ներքո և օգտագործվում են նրա խնդիրների և ֆունկցիաների իրականացման համար: Բյուջեի եկամուտները ձևավորվում են տարբեր աղբյուրների հաշվին:

Բյուջետային եկամուտների աղբյուրները, նրանց սոցիալ-տնտեսական բնույթը, գանձան կարգը, տեսակները սահմանված են բյուջետային օրենսդրությամբ: «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի 17-րդ և 28-րդ հոդվածները սահմանում են պետական և համայնքային բյուջեների եկամուտների կազմը: Ըստ հիշատակված օրենքի՝ պետական բյուջեի եկամուտների աղբյուրները դասակարգվում են՝

- ա) հարկային եկամուտներ և տուրքեր
- բ) ոչ հարկային եկամուտներ
- գ) եկամուտներ՝ կապիտալ գործառնություններից
- դ) մուտքեր՝ պաշտոնական տրանսֆերտներից:

Հարկային եկամուտներ և տուրքեր են

- ա) ավելացված արժեքի հարկը
- բ) ակցիզային հարկը
- գ) շահութահարկը
- դ) եկամտահարկը 85 տոկոսի չափով
- ե) գույքահարկը՝ համայնքի վարչական տարածքում գտնվող գույքի համար հինգ տոկոսի չափով, համայնքի վարչական տարածքից դուրս գտնվող գույքի համար՝ ամբողջությամբ.

զ) հողի հարկը՝ համայնքի վարչական տարածքում գտնվող հողի համար՝ հինգ տոկոսի չափով, համայնքի վարչական տարածքից դուրս գտնվող հողի համար՝ ամբողջությամբ, հանրապետության կառավարության նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով կենտրոնացված կարգով վճարողների հողի համար ամբողջությամբ.

ջությամբ.

- է) հաստատագրված վճարները
- ը) մաքսային տուրքը
- թ) Պետական տուրքը՝ բացառությամբ համայնքների բյուջեներ մուտքագրվող պետական տուրքի տեսակներ
- ժ) հարկային օրենսդրությունը խախտելու համար գանձվող տուգանքները և տուրքերը, բացառությամբ համայնքների բյուջեներ մուտքագրվող հարկերի գծով չվճարման համար գանձվող տուգանքների և տույժերի.

Ոչ հարկային եկամուտներ են

- ա) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ծախսերի և մասհանումների նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքերը
- բ) դիվիդենդները և շահաբաժինները
- գ) պետական ձեռնարկությունների և գույքի, համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող պետական պահուստի հողերի վարձակալության և օգտագործման վարձավճարներն ամբողջությամբ.
- դ) պետության տված վարկերի օգտագործման դիմաց վճարները (տոկոսները)
- ե) բռնագրավված, տիրագուրկ և ժառանգության իրավունքով պետությանն անցած գույքի իրացումից մուտքեր
- զ) իրավախախտումների համար գործադիր մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքեր
- է) ճանապարհային վճար
- ը) օրենքով սահմանված պետական բյուջե մուտքագրվող այլ ոչ հարկային եկամուտներ:

Կապիտալ գործառնություններից եկամուտներ են

- ա) պետությանը պատկանող հիմնական միջոցների օտարումից մուտքերը
- բ) պետական բյուջեի միջոցների հաշվին պահվող բյուջետային հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի օտարումից մուտքերը
- գ) պետության պահեստներում պահվող ապրանքանյութական արժեքների իրացումից մուտքերը
- դ) պետական սեփականություն համարվող հողի և ոչ նյութական ակտիվների վաճառքից մուտքերը

Պաշտոնական տրանսֆերտներ են

- ա) օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպու-

թյունների տրամադրած տրանսֆերտները

բ) այլ աղբյուրներից ստացվող տրանսֆերտները

«Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 18-րդ հոդվածում սպառիչ թվարկված են պետական բյուջեի ծախսերի ուղղությունները:

ՀՀ պետական բյուջեի միջոցով ֆինանսավարում են պետական նշանակության ծրագրերը և ծախսերը հետևյալ հիմնական ուղղություններով՝

ա) ընդհանուր բնույթի պետական ծառայություններ

բ) պաշտպանություն

գ) հասարակական կարգի պահպանություն և անվտանգություն

դ) կրթություն և գիտություն

ե) առողջապահություն

զ) սոցիալական ապահովագրություն և սոցիալական ապահովություն

է) բնակարանային կոմունալ տնտեսություն

ը) մշակույթ, սպորտ և կրոն

թ) վառելիքաւներգետիկ համալիր

ժ) գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ջրային տնտեսություն

ծա) չեռնահանքային արդյունաբերություն և հանքային հանածոներ, վերամշակող արդյունաբերություն, շինարարություն և բնապահպանություն

ծբ) տրանսպորտ և կապ, ճանապարհային տնտեսություն

ծգ) պետական բյուջեի ծախսերի հիմնական ուղղություններին զրուսվող այլ ծախսեր, այդ թվում՝

կառավարության պահուստային ֆոնդ

համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ

համայնքների բյուջեներին պատվիրակված լիազորությունների համար տրամադրվող հատկացումներ

համայնքների կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրվող նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ և սուբսիդիաներ:

Հանրապետության բյուջետային համակարգի ինչպես նաև բյուջետային եկամուտների և ծախսերի իրավական ռեժիմը ամրապնդող օրենսդրությամբ հատուկ ամրապնդված են համայնքային բյուջեների ձևավորման սկզբունքները, վերջիններիս բյուջեների կառուցվածքը, եկամուտները և ծախսերը:

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի 27-րդ հոդվածում

սպառիչ թվարկված են համայնքների բյուջեների ձևավորման սկզբունքները: Այս սկզբունքները ուրվագծում են համայնքների հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորումը, պահուստային ֆոնդի ստեղծումը, համայնքի բյուջեի հաշվեկշռվածությունը, խնայողականությունը, արդյունավետությունը, հավաստիությունը, ինչպես նաև հրապարակայնությունը:

Համայնքների բյուջեների կառուցվածքը, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող լիազորությունների և դրանց ֆինանսավորման համապատասխանության ապահովման անհրաժեշտությունից ելնելով բաժանվում է հետևյալ բաղկացուցիչ մասերի.

ա) համայնքի բյուջեի վարչական մաս (վարչական բյուջե)

բ) համայնքի բյուջեի ֆոնդային մաս (ֆոնդային բյուջե):

Համայնքների բյուջեի վարչական մասը ըստ էության իր մեջ ներառում է համայնքային բյուջեի եկամուտները ըստ ձևավորման աղբյուրների և ծախսերի ուղղությունների:

Օրենքներով և իրավական այլ ակտերով ամրագրվող եկամուտները բաժանվում են

ա) հարկային եկամուտներ և տույժեր,

բ) ոչ հարկային եկամուտներ,

գ) պաշտոնական տրանսֆերտներ:

Համայնքային բյուջեների հարկային եկամուտների և տուրքերի աղբյուր են հանդիսանում հողի հարկը՝ 95 տոկոսի չափով, գույքահարկը համայնքի վարչական տարածքում գտնվող գույքի համար 95 տոկոսի չափով, եկամտահարկը 15 տոկոսի չափով, ինչպես նաև օրենքով սահմանված պետական տուրքեր, որոնց թվին են դասվում քաղաքացիական կացության, նոտարական ծառայությունների համար գանձվող գումարները:

Համայնքների բյուջետային եկամուտների աղբյուր է հանդիսանում նաև հարկային օրենսդրությունը խախտելու համար գանձվող տուգանքները և տույժերը, տեղական տուրքերը:

Համայնքների բյուջեների ոչ հարկային եկամուտները ներկայանում են օրենսդրությամբ: Տեղական բյուջեների ոչ հարկային եկամուտներ են հանդիսանում համայնքի սեփականությունը հանդիսացող հողերի վարձակալության դիմաց գանձվող վարձավճարները, ինքնակառավարման մարմիններին ենթակա գույքի վարձակալությունից եկամուտները, ենթակա ձեռնարկությունների տրամադրության մասնաճանաչից կատարվող մասհանումները, տեղական վճարները: Որպես պաշտոնական տրանսֆերտներ համայնքային բյուջեների եկամուտի աղբյուր են համարվում պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով

տրամադրվող դրուտացիաները¹:

Համայնքային բյուջեների ծախսերի տեսակների և ուղղությունների սպառիչ իրավական կարգավորումը սահմանված է «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 28-րդ հոդվածում, որտեղ որպես հիմնական ծախսեր քվարկված են պաշտպանության, հասարակական կարգի և ապահովագրության, մշակույթի, սպորտի, կապի, տրանսպորտի և հասարակական կյանքի մի շարք այլ ոլորտներ, որոնց զարգացման ծրագրերը ֆինանսավորում են միայն համայնքային բյուջեներից:

Համայնքների բյուջեներում նախատեսվում է պահուստային ֆոնդ, որը համայնքի տվյալ տարվա բյուջեում չկանխատեսված, ինչպես նաև ֆոնդային մաս կտարվող հատկացումների, համայնքների բյուջեների կողմից վարկերի և այլ փոխառու միջոցների օգտագործման վճարների գծով ստանձնած պարտքային պարտավորությունների կատարման ապահովման ֆինանսական աղբյուր է:

ԳԼՈՒԽ VI

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿՈՒՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

§1 ԻՆՔՆԱԿՈՒՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Հանրապետության Ասհմանադրության, ինչպես նաև «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի համաձայն, եկամուտների սահմանումը, որոնցից գոյանում են պետական համայնքային բյուջեները, արտացոլում են հանրապետության պետական իշխանության և պետական կառավարման բարձրագույն մարմինների իրավասությունը բյուջեի ոլորտում:

Բյուջետային եկամուտների բաժանումը համակարգի օղակների մեջ իրականացվում է բյուջետային միասնության սկզբունքի հիման վրա:

Բյուջետային եկամուտների նման կենտրոնացումը հնարավորություն է տալիս որոշակի հավասարություն ստեղծել վարչատարածքային միավորների միջև՝ նրանց ֆինանսական դրության տեսանկյունից: Չնայած այս հանգամանքին բյուջետային համակարգի օղակները կարող են տարբերվել իրենց եկամուտների կազմով: Եկամուտների մի շարք տեսակներ կարող են մտցվել միայն պետական բյուջե (օրինակ մաքսային եկամուտներ), մյուսները օրենքով սահմանված չափով (հողի հարկ, գույքահարկ) լրիվ տրվում են համայնքների բյուջեներին:

Բյուջետային համակարգի եկամտային բազայի, ինչպես նաև կառավարման տնտեսական ծրագրի միասնությունը հնարավորություն է տալիս ռացիոնալ կերպով ձևավորել բյուջետային համակարգի յուրաքանչյուր օղակի ու առանձին տեսակի բյուջեների եկամտային մասերը:

¹ Տե՛ս. մանրամասն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 28-րդ հոդվածը:

Կապված Նրանց սոցիալ-տնտեսական բովանդակությունից, համայնքների բյուջեների եկամուտները ստորաբաժանվում են հարկային եկամուտներ և տուրքեր, որոնց կազմում կարելի է առանձնացնել հողի հարկը, գույքահարկը, եկամտահարկը՝ 15 տոկոսի չափով, պետական տուրքերը, ինչպես նաև ազգաբնակչությունից ստացվող տեղական տուրքեր և վճարումներ, ու կամավոր բնույթի այլ վճարումները (պետական փոխառությունից, վիճակախաղից):

Ինչպես պետական բյուջեի, այնպես էլ համայնքային բյուջեների եկամուտների գերակշռող մասը տնտեսություններից ստացվող մուտքերն են: Այս հանգամանքը բյուջետային համակարգի ամենաբնորոշ կողմն է և պայմանավորված է սեփականության ձևերով:

Հանրապետությունում միջոցառումներ են ձեռնարկվում, որպեսզի պակասեցվեն ազգաբնակչությունից ստացվող մուծումները, և բյուջեի մեջ ավելացվեն տնտեսությունից ստացվող եկամուտների ծավալը:

Համայնքների բյուջեներում ազգաբնակչությունից ստացվող եկամուտները ծավալով փոքր են, սակայն դրանց տեսակարար կշիռը այստեղ անհամեմատ ավելի մեծ է: Այս հանգամանքը բացատրվում է նրանով, որ ազգաբնակչությունից գանձվող տեղական հարկերը և տուրքերն ամբողջովին մուտքագրվում են համայնքային բյուջեները: Այս բացատրվում է նրանով, որ տեղական իշխանություններն անմիջականորեն են շփվում ազգաբնակչության կարիքների հետ, իսկ համայնքային բյուջեները հանդիսանում են նրանց կարիքների բավարարման ֆինանսական բազա:

Համայնքների բյուջեների մեջ մտցվում են ինչպես տեղական բնույթի եկամուտներ (բյուջե կատարվող մասհանումները, տեղական տուրքեր և վարկեր), այնպես էլ հանրապետական նշանակության եկամուտներ (եկամտահարկ 15 տոկոսի չափով, պետական բյուջեին անրագրվող այլ հարկատեսակներից կատարվող մասհանումներ և այլն):

Համայնքների բյուջե են մուտք լինում նաև օրենքով պետական բյուջեին անրագրված այլ հարկատեսակներից կատարվող մասհանումներ, պետական տուրքեր և տեղական վճարներ: Պետական հարկերի թվին են դասվում աղգաբնակչությունից գանձվող եկամտահարկը 15 տոկոսի չափով, որը հանդիսանում է համայնքային բյուջեի եկամուտ: Համայնքների բյուջետային եկամուտներ են հանդիսանում տեղական վճարները:

Համայնքների բյուջեի նշված եկամուտները, կախված բյուջե մուտքագրվելու կարգից, իրենց իրավաբանական հատկությամբ կամ մշտապես անրացվում են այդ բյուջեներին, կամ էլ ամեն տարի բաշխվում են:

Համայնքային բյուջեների մշտական եկամուտների ցանկը սահմանվում է հանրապետական օրենսդրությամբ: Նրան են վերաբերվում պետական և տեղական տուրքերը, գույքի վարձակալության գումարները, վարչական իրավական պատժամիջոցներից գանձվող եկամուտները, տեղական վճարները և այլն: Այս եկամուտները հանդիսանում են համայնքների ֆինանսական բազան:

Ինչպես նշվեց, մշտական եկամուտներից բացի համայնքների բյուջեներին պետական իշխանության մարմինների կողմից ամենամյա բաժանման կարգով տրվում է նաև այլ եկամուտներ՝ հողի հարկը, գույքահարկը 95%-ի չափով, եկամտահարկը 15%-ի չափով:

Առվորաբար, ամենամյա բաժանման կարգով տրվող եկամուտները ունեն կարգավորող բնույթ և սահմանվում են հանրապետության Ազգային ժողովի կողմից: Ամենամյա բաժանման չափը նպատակ է հետապնդում ապահովել համայնքային բյուջեները եկամտով: Անհրաժեշտության դեպքում տրվում են դոտացիաներ:

Համայնքների բյուջեների համար եկամուտ են ծառայում նաև բյուջեի կատարման ընթացքում լրացուցիչ ստացված եկամուտները, ինչպես նաև ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցող գումարները:

Համայնքների բյուջեների եկամուտները որպես կանոն օրենսդրական կարգով ամրապնդված նպատակային նշանակություն չունեն: Նրանք մուտք են լինում բյուջեի դրամական ֆոնդը և բաժանվում են համայնքների կողմից ձեռնարկվող միջոցառումների ֆինանսավորմանը:

Բացառված չէ սակայն, որ օրենսդրությամբ նախատեսված լինի այս կամ այն եկամուտների կոնկրետ նպատակը: Օրինակ, տեղական վճարները համայնքի ավագանու որոշմամբ կարող է հատկացվել բարեկարգման, հանգստի գոտիների, ավտոկանգառների և այլ միջոցառումների ֆինանսավորմանը:

Համայնքի ղեկավարի տնօրինության տակ հատուկ նպատակներով կարող է թողնվել իրենց ենթակա կենցաղային սպասարկման, տեղական արդյունաբերության, կոմունալ տնտեսության օբյեկտների շահույթների մի մասը, որոնք հատկացվում են նշված օբյեկտների ցանցի ընդլայնման և նրանց համար սարքավորումներ ձեռք բերելու ֆինանսավորմանը:

Բյուջեի կատարման ընթացքում ի հայտ եկած լրացուցիչ եկամուտները նույնպես ծախսվում են նպատակային հիմունքներով:

Համայնքների բյուջետային իրավունքների ընդլայնման մասին է խոսում այն փաստը, որ վերջին տարիներին նրանց բյուջետային եկամուտները ավելացնելու նպատակով իրենց տնօրինությանն է մնում առևտրային կազմակերպություններում օդու և ծխախոտի

վաճառքի համար տրված թույլտվության համար կատարված գանձումների գումարները:

Համայնքների նյութական բազայի ամրապնդման համար կարևոր նշանակություն ունեն նրանց ենթակա ձեռնարկությունների խոշորացումը և մասնագիտացումը:

Համայնքների ֆինանսա-նյութական բազայի ամրապնդման վերաբերյալ օրենսդրության կատարելագործմանն ուղղված կայանքի պահանջները խնդիր են դնում բարձրացնել հանրապետական և տեղական ինքնակառավարման մարմինների բյուջետային գործունեության մակարդակը: Ղրա հետ միասին համայնքների վերաբերյալ նոր օրենսդրությունը հնարավորություն կտա ռացիոնալ կերպով օգտագործել նաև իրենց ենթակայության տակ չգտնվող ձեռնարկությունների միջոցները, քանի որ նրանք իրավունք կստանան իրենց տերիտորիայում գտնվող ձեռնարկությունների միջոցները միավորել և ուղղել տեղական ազգաբնակչության կարիքների ապահովմանը: Այս նույնը վերաբերվում է նաև գյուղական համայնքներին:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի և համայնքների գործնական աշխատանքների ուսումնասիրությունը վկայում է, որ հատկապես գյուղական համայնքները, իրենց տերիտորիայում գտնվող ձեռնարկությունների, հիմնարկությունների և գյուղացիական տնտեսությունների համաձայնությամբ կենտրոնացնում են նրանց միջոցները ջրամբարների, ոռոգման ցանցի, ճանապարհային և այլ շինարարական աշխատանքների կատարման համար:

Համագործակցության այս ձևերը էական դեր են խաղում համայնքների ֆինանսական հնարավորությունները ընդլայնելու գործում, բարձրացնում են նրանց կարգավորող դերը տեղական միջոցների օգտագործման հարցում: Այս հարցի օրենսդրական կարգավորումը կարևոր նշանակություն ունի, քանի որ համայնքների նման գործունեության համար իրավաբանական բազա է ստեղծում, իսկ դա իր հերթին նպաստում է ինքնակառավարման մարմինների ակտիվության բարձրացմանը:

Մի շարք կազմակերպությունների միջոցների միավորման պրակտիկական հնարավորություն է ընձեռնում լայնորեն և բազմակողմանիորեն բավարարել ազգաբնակչության պահանջումները:

Պրակտիկ է դարձել ձեռնարկությունների ու կազմակերպությունների միջոցների օգտագործման հեռանկարային ծրագրավորումը, որը հնարավորություն է տալիս ավելի նպատակահարմար ծախսել միավորված միջոցները:

Այս բոլորից հետո հարց է առաջանում, թե ինչպիսի ենթակայության ձեռնարկությունների վրա կարող է տարածվել տեղական

ինքնակառավարմանը մարմինների իրավունքները նրանց միջոցները միավորելու գործում: Մուսիցիպալ շահերի հաշվառումը վկայում է այն մասին, որ տվյալ դեպքում նկատի է առնվում համապատասխան համայնքի տերիտորիայում գտնվող՝ այդ թվում արտասահմանյան համատեղ և հայրենական բոլոր ձեռնարկությունները:

Բնական է, որ հանրապետության օրենսդրությամբ տվյալ հարցը կարող է լուծել միայն հանրապետական և տեղական ենթակայության ձեռնարկությունների նկատմամբ:

Համայնքներին նման իրավունքներ վերապահելը անկասկած կունենան դրական նշանակություն և կնպաստի նրանց դերի բարձրացմանը: Մակայն, որպեսզի նրանք ավելի գործարար լինեն անհրաժեշտ է, որպեսզի այդպիսիք իրավաբանական երաշխիքներ ունենան, ստանան օրենսդրական ձևակերպում:

Միջոցների միավորման իրավունքը չի նշանակում սակայն, որ համայնքները միակողմանիորեն կարող են պարտավորեցնել իրենց տերիտորիայում գտնվող ձեռնարկություններին տեղական կարիքների համար ծախսեր կատարել:

Այսպիսով, խոսելով տեղական ինքնակառավարման մարմինների բյուջետային եկամուտներ սահմանելու իրավունքների մասին, նկատեցինք, որ վերջին տարիներին բավականին ընդլայնվել է նրանց բյուջետային եկամուտների ցանկը, որ ռեալ հնարավորություններ է ստեղծվել համայնքների նյութա-ֆինանսական բազայի ամրապնդման և տեղական նշանակության միջոցառումների ֆինանսավորման համար:

§2 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՐԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ ՄԱՅՄԱՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆԵՆԵՐԸ

Սահմանելով համայնքին բյուջեների ծախսերի շրջանակը՝ գործող օրենսդրությունը ելնում է այն սկզբունքից, որ բյուջեի ծախսերը համապատասխանեն տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքներին և պարտականություններին, որպիսիք նրանք իրականացնում են իրենց իրավասությանը ենթակա հարցերի կարգավորման համար: Ելնելով այն բանից, որ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց ընձեռնված իրավունքների սահմաններում լուծում են տեղական նշանակության բոլոր հարցերը, «ՀՀ բյուջետային համակարգի» և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքները այդ իրավունքները իրականացնելու գործում

Նրանց ընձեռնել են լայն լիազորություններ: Այդ լիազորությունները արտահայտվում են արդյունաբերության, գյուղատնտեսության, բնակ-կոմունալ տնտեսության, բարեկարգման, առևտրի, հասարակական սննդի, ազգաբնակչության կենցաղային սպասարկման, ինչպես նաև ժողովրդական կրթության, կուլտուր-լուսավորչական աշխատանքների, առողջապահության, ֆիզկուլչուրայի և սպորտի, սոցիալական ապահովագրության և կառավարման այլ գործընթացներում:

Տեղական բյուջեների ծախսերի կազմը պետք է համապատասխանի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող լիազորություններին: Դրանք տվյալ գյուղի, քաղաքի համար տեղական նշանակության ծախսեր են: Նրանք ուղղվում են տվյալ համայնքի ենթակայության տակ գործող ձեռնարկությունների և հիմնարկությունների ֆինանսավորմանը: Նման ձեռնարկությունների և հիմնարկ-ձեռնարկությունների ֆինանսավորումը պետական բյուջեներից բացառությամբ հատուկ նշված դեպքերից չի թույլատրվում: Եթե հիմնարկությունը կամ կազմակերպությունը սպասարկում է վարչատերիտորիալ միավորումների խումբ (համայնք, մարզ), ապա նրա ֆինանսավորումը կատարվում է համապատասխան վերադաս բյուջեից (օրինակ՝ պետական բյուջեից):

Համայնքային բյուջեների մեջ ծախսերը մտցնելը, հաշվի առնելով ինքնակառավարման մարմինների իրավասությունը (ինչպես նաև նրանց ենթակայության տակ գործող ձեռնարկությունների և հիմնարկությունների իրավասությունը), համապատասխանում է այդ բյուջեների հիմնական կոչմանը, որի նպատակը տեղական տնտեսական և սոցիալ-կուլտուրական շինարարությանը դրամական միջոցներով ապահովելն է:

Այդ ընդհանուր կանոնից երբեմն կատարվում է բացառություններ: Այդ տեղի է ունենում այն ժամանակ, երբ առաջին հերթին հաշվի է առնվում այս կամ այն ֆինանսավորող կազմակերպության կամ հիմնարկության դերն ու նշանակությունը, այլ ոչ թե նրանց ենթակայությունը: Օրինակ, պետական, այլ ոչ թե համայնքային բյուջեներից է կատարվում համայնքի տարածքում գտնվող նախարարության և մարզպետարանի ֆինանսավորումը:

Այս դեպքում առաջին պլան է մղվում կառավարման մարմինների դերը ոչ միայն տեղական, այլև համապետական խնդիրների իրականացման գործում: Դա պետական ֆինանսական կարգապահության ապահովումն է, որը համապատասխան տերիտորիայում բյուջետային համակարգի օդակներին, կյանքի է կոչում եկամուտների մուտքերի պլանների կատարմանը:

Համայնքների բյուջեների ծախսերի հիմնական խմբերը սահման-

ված են «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքներով:

Այդ ծախսերն են

1. Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ.
2. պաշտպանության բնագավառում օրենքով վերապահված լիազորությունների իրականացում.
3. հասարակական կարգի պահպանության և անվտանգության:
4. կրթության, գիտության, առողջապահության, մշակույթի, սպորտի, սոցիալ ապահովության, գյուղատնտեսության և այլն:

Ծախսերի հիմնական մասը ուղղվում է տնտեսության և սոցիալ-կուլտուրական միջոցառումների ֆինանսավորմանը: Պետական իշխանության և պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերը ունեն ոչ մեծ տեսակարար կշիռ:

Համայնքային բյուջեների ծախսերի առավել մեծ բաժին է ընկնում սոցիալ-կուլտուրական միջոցառումների ֆինանսավորմանը: Նրանց տեսակարար կշիռը մեծ է համայնքային բյուջեներում: Այսօր համայնքների տնտեսությունների հետագա զարգացման համար մեծ նշանակություն ունի բնակարանային ֆոնդի և կոմունալ տնտեսության օբյեկտների շահագործումը բարելավելու միջոցառումների իրականացումը, որի իրավական ռեժիմը սահմանված է «ՀՀ տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 30-րդ հոդվածում:

Վերջինս խուսում է այն մասին, որ նպատակահարմար է ընդլայնել համայնքների ձեռնարկությունների, կազմակերպությունների և հիմնարկությունների բնակելի ֆոնդը, ինչպես նաև կոմունալ-տնտեսության օբյեկտները:

Բոլոր դեպքերում ինքնակառավարման մարմինները իրենց իրավունքների իրականացման գործում պետք է ղեկավարվեն միջոցների ռացիոնալ տեղաբաշխելու և արդյունավետ օգտագործելու սկզբունքով:

Ծախսերի առանձին խմբերից յուրաքանչյուրը միավորում է ձեռնարկությունների և հիմնարկությունների ֆինանսավորումը: Տնտեսության վրա կատարվող ծախսերի կազմի մեջ են մտնում արդյունաբերության և շինարարության, գյուղատնտեսության, տրանսպորտի կապի և այլի ծախսերը:

Սոցիալ կուլտուրական միջոցառումների ծախսերը ընդգրկում են լուսավորության, առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, սոցիալական ապահովագրության ֆինանսավորումը:

Համայնքների բյուջեներում տնտեսության ծախսերին են վերաբերում տեղական նշանակության գյուղատնտեսական ձեռնարկությունների և հիմնարկությունների ֆինանսավորումը: Այս խմբի ծախսերի մեջ են մտնում նաև անմիջական համայնքի ենթակայության

տակ գտնվող էլեկտրակայանների, հյուրանոցների և այլ կոմունալ ձեռնարկությունների պահպանման ծախսերը ու տեղական ենթակայության կազմակերպությունների, բնակարանային շինարարության ծախսերը և այլն: Համայնքների բյուջեների սոցիալ-կուլտուրական ծախսերը, դրանք այն ծախսերն են, որոնք ապահովում են լուսավորության հիմնարկությունների (մանկապարտեզներ, դպրոցներ, մանկատներ, մասնագիտացված դպրոցներ և այլն) պահպանմանը, վերանորոգմանը և սարքավորումների ձեռք բերմանը:

Ինչպես համայնքների, այնպես էլ մարզերի և նրանց մեջ մտնող գյուղական համայնքների հաշվին ստեղծվում են պահուստի ֆոնդեր, որոնք կազմում են դպրոցների պահպանման ծախսերի 1 տոկոսը: Համայնքների ժողովրդական կրթության բաժինները, ինչպես նաև գյուղական համայնքները պարտադիր ուսուցման ֆոնդը բաժանում են դպրոցներին, որոնք ֆինանսավորվում են համապատասխան բյուջեներից:

Լուսավորության ծախսերի ֆինանսավորման հետ մեկտեղ սոցիալ-կուլտուրական միջոցառումների խմբի ծախսերի մեջ մեծ տեղ են գրավում առողջապահության ֆինանսավորումը: Սրա մեջ են մտնում համայնքային հիվանդանոցների, դիսպանսերների, բուժկետերի և այլ առողջապահական հիմնարկությունների պահպանման, վերանորոգման և սարքավորումներ ձեռք բերման ծախսերի ֆինանսավորումը:

Սոցիալ ապահովության և ապահովագրության միջոցառումների ծախսերի մեջ են մտնում անհատական կենսաթոշակառուների, պատերազմի հաշմանդամների և նրանց ընտանիքների թոշակների և նպաստների վճարումը, Հայրենական պատերազմի հաշմանդամներին և նրանց ընտանիքներին միաժամանակյա նպաստների վճարումը, կենսաթոշակ չստացող հաշմանդամներին և գառամյալներին նպաստների վճարումը:

Համայնքային բյուջեների միջոցների հաշվին դրամական օգնություն են ցույց տալիս բնական աղետներից տուժած քաղաքացիներին:

Համայնքների բյուջեի մեջ են մտնում տեղական ինքնակառավարման մարմինների՝ բաժինների և վարչությունների պահպանման ծախսերը:

Գյուղական համայնքների բյուջեների մեջ են մտնում անասնաբուժա-անասնաբուժական տեղամասերի, անասնաբուժական պոլի-կլինիկաների, վերահսկողության կայանների և գյուղատնտեսական այլ հիմնարկությունների պահպանման, վերանորոգման և սարքավորումներ ձեռք բերելու ծախսերը:

Գյուղական համայնքների բյուջեները իրենց մեջ են ընդգրկում

գյուղական համայնքի ենթակայության ձեռնարկությունների և տնտեսական կազմակերպությունների, գյուղերի բարեկարգման, բնակելի ֆոնդի պահպանման, շուկաների շահագործման և բարեկարգման, մանկապարտեզների, գյուղական դպրոցների, գրադարանների, ակումբների, գյուղական առողջապահական հիմնարկությունների պահպանման և այլ միջոցառումների ֆինանսավորումը:

Այստեղ են մտնում նաև գյուղական համայնքի և նրանց ինքնակառավարման մարմնի պահպանման ծախսերի ֆինանսավորումը:

Համայնքային բյուջեներում գործող օրենսդրությամբ նախատեսված է պահուստայի ֆոնդ, որը համայնքի տվյալ տարվա բյուջեում չկանխատեսված, ինչպես նաև ֆոնդային մաս կատարվող հատկացումների, համայնքների բյուջեների կողմից վարկերի և այլ փոխառու միջոցների օգտագործման վճարների (տոկոսների) գծով ստանձնած պարտքային պարտավորություններ կատարման ապահովման ֆինանսական աղբյուր է:

Այսպիսով, համայնքային բյուջեների ծախսային մասը հասարակական կյանքի ժամանակակից պահանջներին համապատասխան ավելացման տենդենց ունի և նպատակ է հետապնդում ավելի լրիվ ֆինանսավորել մունիցիպալ տնտեսության և սոցիալ-կուլտուրական միջոցառումները:

ՉԼՈՒԽ VII

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

§ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱ- ՍԻՈՒԹՅՈՒՆԸ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՍՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՐՄԱՆՄԱՆ և ԲԱՇԽՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Բյուջետային իրավունքները ֆինանսական իրավունքի ամենա-
կարևոր ինստիտուտներից մեկն է, որը շատ հաճախ իրավաբա-
նական գրականության մեջ համարվում է իրավունքի ինքնուրույն
ճյուղ¹:

Ֆինանսական իրավունքը ուսումնասիրում է ոչ միայն պետու-
թյան, այլև տնտեսական կազմակերպությունների, վարկային հիմ-
նարկների, կոոպերատիվ, հասարակական և մյուս կազմակերպու-
թյունների ֆինանսական, դրամարկղային, հաշվարկային հարաբե-
րությունների հետ կապված իրավական նորմերը, իսկ բյուջետային
իրավունքը կարգավորում է պետական բյուջեի կազմման, բյուջե-
տային միջոցների հավաքագրման ու նրանց ծախսելու հետ կապ-
ված հարաբերությունները:

Իրավաբանական գրականության մեջ վերջին ժամանակներս իշ-
խանության որևէ մարմնի բյուջետային իրավունքները ուսումնասի-
րելիս առաջին պլան է մղվում բյուջետային իրավասության հարցը:

«Բյուջետային իրավասության» հասկացությունը ածանցված է
«իրավասության» ընդհանուր հասկացությանը և որպեսզի ցույց
տրվի բյուջետային իրավասության բովանդակությունը, անհրաժեշտ

է բացատրել, թե ինչ է իրենից ներկայացնում իրավասություն
հասկացությունը ընդհանրապես¹:

Այսպես, իրավասությունը իրենից ներկայացնում է՝

1. Լիիրավության և տնօրինման առարկաների համակցություն

2. Որպես իրավաբանական կատեգորիա, որը իրենից ներկայաց-
նում է լիազորությունների համակարգ: Լիազորություններն ունեն
տարածական սահմաններ, իսկ երբեմն «գործողության սահմաններ
ժամանակի մեջ»: Տնօրինման առարկաները չեն հանդիսանում
իրավասության տարրեր, չեն մտնում նրա մեջ, բայց նրա հետ
ուղղակիորեն կապված են: Իրավասության մեջ մտնում են ֆունկ-
ցիաների որոշակի տեսակի իրագործման պարտականությունը և
իրավունքը:

Հայաստանի Հանրապետության բյուջետային իրավասությունը
դա նրան սահմանադրությամբ վերապահված իշխանության լիա-
զորությունների համակցությունն է: Հենց ինքը՝ բյուջեն, կազմում է
հանրապետության միասնական տնօրինման առարկա:

Ընդհանրապես, յուրաքանչյուր պետության իրավասությունը,
անկախ պետական կառուցվածքից, միշտ կրում է խիստ «անհատա-
կան բնույթ»: Այդ իսկ պատճառով պետք է նշել, որ նպատակահար-
մար չէ ֆեդերատիվ կառուցվածքի պետություններին իրավական
իմաստով օգտագործել այնպիսի հասկացություն, ինչպիսին է
«բացարձակ բյուջետային իրավասություն» արտահայտությունը,
քանի որ գոյություն չունի սուբյեկտների «համատեղ իրավասու-
թյուն», հետևաբար չի կարող լինել նաև «բացարձակ իրավասու-
թյուն»: Յուրաքանչյուր պետության կամ հանրապետության իրավա-
սությունը մի ամբողջություն է, որը չի կարելի բաժանել երկու մասի,
հետևաբար և չի կարող լինել «բացարձակ» ու «համատեղ» իրա-
վունքներ ու պարտականություններ²: Տվյալ դեպքում այսպիսի
արտահայտությունները վերաբերում են ոչ թե իրավասությանն, այլ
«տնօրինման առարկային»:

Պետք է նշել, որ ոչ նորմատիվ ակտերում և ոչ էլ ֆինանսական
իրավական գրականության մեջ «բյուջետային իրավասություն»
տերմինը գրեթե չի գործածվում, բայց ամենուր օգտագործվում է
բյուջետային իրավունք տերմինը:

Հայաստանի Հանրապետության բյուջետային իրավունքների
բազմակողմանի լուսաբանումը հրամայաբար պահանջ է առա-
ջադրում լուսաբանելու թե ինչ փոխհարաբերությունների մեջ են

¹ Տե՛ս. В.В. Бесчеревных, компетенция Союза ССР в области бюджета, "Юридическая литература", М., 1976, стр.32

² Տե՛ս. մանրամասն, В.В.Бесчеревных, նշ. աշխ. էջ42:

¹ Տե՛ս. М.И.Писквин. Советское бюджетное право, "Юридическая литература", М., 1971г. стр.34

գտնվում «բյուջետային իրավունք» և «բյուջետային իրավասություն» հասկացությունները:

ՀՀ բյուջետային իրավունքի բովանդակությունը կազմող հիմնական ատրիբուտների իմաստը հանգում է՝

1. Բյուջեների տեսակների սահմանումը և նրանց միավորման սկզբունքները հանրապետության բյուջետային համակարգում.

2. Ընթացիկ տարվա բյուջետային ծախսերի սահմանումը և նրանց ուղղությունների կանխորոշումը զարգացման բյուջեում.

3. Բյուջետային համակարգի եկամտային աղբյուրների սահմանը և նրանց բաշխումը համակարգի առանձին օղակների միջև.

4. Միասնական բյուջետային դասակարգման սահմանումը.

5. Բյուջետային միասնական գործընթացի և նրա սկզբունքների սահմանումը.

6. Բյուջետային իրավահարաբերությունների սուբյեկտների իրավունքների և պարտականությունների, տեղական ինքնակառավարման մարմինների բյուջետային իրավունքների հիմունքի սահմանումը.

7. Բյուջետային միասնական գործունեության մեթոդական ղեկավարման կազմակերպումը և վերահսկողությունը հանրապետական բյուջետային օրենսդրության կատարման նկատմամբ.

8. Բյուջետային համակարգի համահարթեցումը

Հայաստանի Հանրապետության բյուջետային իրավասության առարկան կազմող իրավունքների և պարտականությունների շրջանակը սպառնիչ թվարկված է ինչպես ՀՀ սահմանադրությամբ, այնպես էլ «ՀՀ բյուջետային համակարգի» և «ՀՀ հարկերի մասն» ԱԺ կողմից ընդունված օրենքներում, ինչպես նաև ամեն տարի ընդունվող Հանրապետության «պետական բյուջեի մասին» օրենքում:

Այս հիմնական իրավունքները կոնկրետացվում են իշխանության և կառավարման մարմինների համապատասխանող լիազորություններում, որոնք գործնականում հանդիսանում են Հայաստանի Հանրապետության բյուջետային իրավունքների դրսևորման ամենաբազմազան ձևերը:

Համապատասխան նորմատիվ նյութերի վերլուծությունները թույլ են տալիս եզրակացություն անել այն մասին, որ «բյուջետային իրավունքներ» տերմինը կրում է պայմանական բնույթ: Այդ տերմինը ընդգրկում է ոչ միայն «բյուջետային իրավունքները» այլ նաև բյուջետային պարտավորությունների լայն շրջանակը¹:

«Հայաստանի հանրապետության բյուջետային համակարգի

մասին» օրենքի 17-րդ հոդվածը սահմանում է համրապետության բյուջեի եկամուտների ընդհանուր կառուցվածքը, ըստ որի հանրապետության պետական բյուջեի եկամուտների մեջ մտնում են.

ա) հարկային եկամուտներ և տուրքեր.

բ) ոչ հարկային եկամուտներ.

գ) եկամուտներ կապիտալի գործառնություններից.

դ) մուտքեր պաշտոնական տրանսֆերտներից¹:

Բոլոր եկամուտները ըստ սոցիալ-տնտեսական հատկանիշի կարելի է բաժանել երկու խմբի.

1) եկամուտներ, որոնք ստացվում են իրավաբանական անձանցից և տնտեսական այլ մարմիններից

2) բնակչության վճարումներ:

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների ճնշող մեծամասնությունը ստացվում է տնտեսություններից:

Հարկերը և տուրքերը հանդիսանում են պետական բյուջեի ամենախոշոր աղբյուրները:

Ձեռնարկությունների և տնտեսական կազմակերպությունների վճարումները, որոնք կազմում են հանրապետության բյուջետային եկամուտների հիմքը, բյուջե են մուտքագրվում հարկերի ձևով:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 1997թ ապրիլի 14-ին ընդունված «Հարկերի մասին» օրենքի 12-րդ հոդվածում սահմանվում է հարկերի հետևյալ տեսակները.

ա) շահութահարկ,

բ) եկամտահարկ,

գ) ակցիզային հարկ,

դ) ավելացված արժեքի հարկ,

ե) գույքահարկ,

զ) հողի հարկ:

Հիմնարկները և ձեռնարկությունները, կոոպերատիվ և այլ հասարակական կազմակերպությունները, որոնք գործում են առևտրային հաշվարկով, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդ, սահմանված կարգով վճարում են հարկեր, եթե հարկային օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ: Հարկերի չափը սահմանվում է ՀՀ կառավարության կողմից: Հարկ վճարողների հաշվառումը կառավարության հանձնարարությամբ իրականացնում է հարկային տեսչությունը:

Ձեռնարկությունների և տնտեսական կազմակերպությունների շահույթից կատարվող վճարը արտացոլում է ապրանքների արտադրության և իրացման հետագա ավելացումը, իսկ շահութա-

¹ Стѹ. Бесчеревных, Компетенция СоюзаССР в области бюджета, "Юридическая литература, М., 1976г. стр.43

¹ Стѹ. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 17-րդ հոդվածը

հարկի ավելի բարձր աճը վկայում է տնտեսության մեջ շահույթի արագ ավելացման մասին, որն իր հերթին հետևանք է արդյունաբերության ու տնտեսության, տեխնիկա-տնտեսական ցուցանիշների, աշխատանքի արտադրողականության բարձրացման, արտադրական կարողությունների օգտագործման բարելավման, հումքի արդյունավետ օգտագործում, և այդ բոլորի հետևանքով արտադրանքի ինքնարժեքի իջեցման:

Տնտեսության մեջ ստեղծվող ամբողջ շահույթի զգալի մասը մնում է ձեռնարկությունների տնօրինման տակ և ուղղվում նրանց ծրագրված ծախսումներին՝ առաջին հերթին ընդլայնված վերարտադրության նպատակներին, կապիտալ ներդրումներ, շրջանառու միջոցների ֆինանսավորում, իսկ մի մասն էլ ուղղվում է ձեռնարկությունների աշխատողների կուլտուր-կենցաղային պայմանների բարելավմանը, բնակարանային շինարարության և այլն, ի վերջո կուտակման ու սպառման նպատակներին:

Շահութահարկի տնտեսական բովանդակությունը ձեռնարկություններում ստացված զուտ եկամուտն է: Ըստ էության, զուտ եկամուտը ձեռնարկություններում ստեղծված հավելյալ արդյունքի արժեքի արտացոլումն է: Ընդգծելով տնտեսվարող սուբյեկտներից գանձվող շահութահարկի և ակցիզային հարկի տնտեսական բովանդակության միասնությունը հարկավոր է նկատել, որ որպես բյուջեի եկամտային մասի աղբյուրներ տարբեր է նրանց տեսակարար կշիռը:

Պետական բյուջեի բնակչությունից ստացվող եկամուտները բաժանվում են *հարկային և կանավոր* վճարումների: Բնակչությունից գանձվող հարկային վճարումները, պետական բյուջեում մեծ տեսակարար կշիռ չունեն: Ըստ էության բնակչությունից գանձվող հարկերը ապագայում նվազեցման միտում ունեն:

Բնակչությունից գանձվող հարկերի աստիճանաբար նվազելու միտումը անհրաժեշտություն է առաջացնում բյուջեի եկամուտների պակասը փոխհատուցել ձեռնարկությունների վճարումների աճով, ինչը հնարավորություն կտա ապահովել բնակչության գնողական պահանջարկի ընդլայնումը:

Բնակչությունից ներգրավվող եկամուտների մյուս խումբը բնակչության կանավոր վճարումներն են, որոնք ժամանակավորապես փոխարինաբար օգտագործվում են պետական բյուջեի կողմից: Դրանցում գլխավոր տեղը պատկանում է պետական փոխառության պարտատոմսերի իրացումից ստացված հասույթին:

Բացի վերը նշված եկամուտներից, ԳՅ օրենսդրությամբ հանրապետության բյուջեի եկամտի մեջ մտնում են՝ տիրազուրկ, ժառանգության հետևանքով պետությանն անցած գույքի իրացումից

հասույթը:

Եկամուտների առանձին տեսակի անտառային տնտեսությունից, ընդերքից ստացվող եկամուտները և այլն:

Բյուջեի եկամուտները կարելի է բաժանել *ներքին և արտաքին* եկամուտների: Ներքին եկամուտների թվին են դասվում եկամուտների բոլոր այն աղբյուրները, որոնք կապված են ներքին նյութական արտադրության և սոցիալական սպասարկման ոլորտի հետ: Արտաքին աղբյուրները նախ և առաջ այլ պետությունների կամ միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրվող փոխառու միջոցներ են:

Ըստ իրենց կազմի, բյուջեի եկամուտները լինում են՝ *ամրագրված և կարգավորվող*:

Ամրագրված եկամուտներն այն եկամուտներն են, որոնք ամրագրված են բաժնենասով կամ տոկոսադրույթով՝ մշտապես կամ երկարաժամկետ հիմքի վրա և սահմանված կարգով մուտք են արվում համապատասխան բյուջե: Այսպես, օրինակ, ներկայումս հողի հարկի գումարները լրիվ չափով մուտքագրվում են տեղական բյուջե:

Կարգավորող եկամուտները այն եկամտի աղբյուրներն են, որոնք բյուջեների միջև բաշխվում են ամեն տարի բյուջեն հաստատելիս և միայն նրա գործողության ժամկետի ընթացքում: Քանի որ ամրագրված եկամուտները ծածկում են տեղական բյուջեների ծախսերի միայն մի մասը, պետական եկամուտներից և հարկերից այդ բյուջեներին տրվում են մասհանումներ, որոնք ենթակա են ամենամյա վերաբաշխման: Նման մասհանումների միջոցով կարգավորվում են տեղական բյուջեները:

Բյուջեի եկամուտների և ծախսերի մասերը հաստատվում են առանձին-առանձին: Սկզբից պետք է հաստատվի նրա եկամուտների մասը, ապա միայն՝ դրա հիման վրա էլ՝ նրա ծախսերի մասը: Բյուջեի երկու մասերը պետք է հավասարակշռեն միմյանց: Սակայն մի շարք դեպքերում ծախսերը գերազանցում են եկամուտներին: Բյուջեի ծախսերը ծածկելու համար, բացի կարգավորող եկամուտներից, օգտագործվում են նաև այլ միջոցներ: Դրանք են *լրավճարները* (դոտացիա), սուբվենցիաները, պետական վարկը, բանկային վարկը:

Լրավճարն այն գումարն է, որը վերադաս բյուջեից տրվում է տեղական բյուջեին՝ իրենց բյուջետային պակասորդը (դեֆիցիտ) ծածկելու համար:

Սուբվենցիան այն գումարն է, որը որոշակի ժամկետով և կոնկրետ նպատակների համար վերադաս բյուջեից տրվում է տեղական բյուջեին:

Պետական վարկը պետական եկամուտների մեջ դրամական միջոցների ներգրավման գործընթացն է, որն իրականացվում է վերադարձնելիության, հատուցելիության, կամավորության հիման վրա և կարգավորվում է իրավական նորմերով:

Պետական վարկը եկամտի լրացուցիչ տեսակ է: Ըստ էության, այն պետության կողմից կատարվող փոխառություն է և չի համարվում վերջնական եկամուտ: Փոխառությունների միջոցով պետությունն իրեն ապահովում է դրամական միջոցներով ոչ թե հարկադրանքի, այլ իր վրա որոշակի պարտավորություններ վերցնելու միջոցով:

Պետական վարկի առաջացման աղբյուրներն են պարտատոմսերը, կառավարության մուրհակները և այլն: Պետական վարկը կազմում է պետական ներքին պարտքի հիմնական մասը:

Պետական ներքին պարտքի մյուս մասը կազմում են բանկային վարկերը (փոխառությունները): Սա վերաբերում է հանրապետության ռեզիդենտ բանկերի վարկերին:

Բյուջեի ծախսերի մասը բաժանվում է՝ ընթացիկ և զարգացման ծախսերի:

Ընթացիկ ծախսերին վերաբերվում են բյուջետային կազմակերպությունների պահպանման ծախսերը:

Զարգացման բյուջեին են վերաբերում ներդրումների և ինժե-վացիաների համար կատարվող հատկացումնաբը, որոնք կապված են տարածքի սոցիալ-տնտեսական զարգացման, սեփական բնապահպանական ծրագրերի ու այլ ծախսերի հետ և ընդլայնված վերարտադրություն ապահովելու նպատակ են հետապնդում : Բյուջեի պակասորդի դեպքում առաջին հերթին ֆինանսավորում են ընթացիկ բյուջեի ծախսերը:

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 18-րդ հոդվածով ամրապնդվում է հանրապետության բյուջեի ծախսերը, որը ստորաբաժանվում է մի շարք հիմնական ուղղությունների.

1. Ընդհանուր բնույթի պետական ծառայություններ
2. պաշտպանություն
3. հասարակական կարգի պահպանություն և անվտանգություն
4. կրթություն և գիտություն
5. առողջապահություն
6. սոցիալական ապահովվածություն և սոցիալական ապահովություն
7. գյուղատնտեսություն, անտառային, ջրային տնտեսություն և այլն:

Հանրապետության կառավարությունը իրականացնում է երկրի ամբողջ տնտեսության ղեկավարումը, պլանավորումը, կազմակերպումը:

Հասկանալի է, որ հանրապետության բազմակողմանի տնտեսական կազմակերպական գործունեությունը նախատեսում է նաև արտադրության, սոցիալ-կուլտուրական միջոցառումների լայն ծրագրի պլանաչափ ֆինանսավորումը:

Պետական բյուջեի ծախսերն աճելու միտում ունեն, որն արտացոլում է Հայաստանի անկախ հանրապետության տնտեսության ու ամբողջ հասարակության նորովի զարգացման տեմպերը:

Տնտեսության ու սոցիալ-կուլտուրական միջոցառումների ֆինանսավորման ծախսերն զգալի են, որը վկայում է մեր բյուջեի տնտեսական բնույթի մասին: Տնտեսության ֆինանսավորումն ընդգրկում է արդյունաբերության բոլոր ճյուղերի, գյուղատնտեսության, անտառային տնտեսության, տրանսպորտի ու կապի բոլոր տեսակների, առևտրի և բնակարանային-կոմունալ տնտեսության ծախսերը:

Ֆինանսավորման օբյեկտներն են՝ կապիտալ ներդրումները, սեփական շրջանառու միջոցների ավելացումը, տնտեսական կազմակերպական միջոցառումները (երկրահետախուզական աշխատանքներ, գյուղատարություն, կադրերի պատրաստում), ռեզերվների գոյացում և այլն: Նրանց մեջ հիմնական տեղը գրավում են կապիտալ ներդրումները: Կապիտալ ներդրումները գերազանցապես իրականացվում են տնտեսության բնագավառում:

Կապիտալ ներդրումների համար հատկացվող խոշոր միջոցների նպատակահարմար և ռացիոնալ օգտագործումը շատ կարևոր նշանակություն ունի, քանի որ վերարտադրության արագ տեմպերի՝ և ժողովրդի բարեկեցության բարձրացման կարևորագույն պայմաններից մեկը կապիտալ ներդրումների անընդհատ աճն է: Ներդրումներ է նախատեսվում ծանր արդյունաբերության մեջ, որի զարգացումը հանրապետության նյութատեխնիկական բազայի ստեղծման, տեխնիկական առաջընթացի, երկրի պաշտպանության բարձրացման և սպառման առարկաների ավելացման վճռական նախապայմանն է: Աճում են նաև կապիտալ ներդրումները թեթև արդյունաբերության մեջ:

Բացի կապիտալ ներդրումների և շրջանառու միջոցների ֆինանսավորումից, բյուջեից հատկացումներ են կատարվում նաև տնտեսության գործնական ծախսերը հոգալու համար (ջրանցքների, ճանապարհների, անտառների պահպանման, գյուղատնտեսության մեջ իրականացվող մի շարք միջոցառումների ծախսեր), միջոցներ են տրվում այսօր գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններին դաշտավարական և անասնապահական համա-

չիրենրի կազմավորման, կոմունալ տնտեսության գծով բարեկարգման ծախսերը հոգալու համար և այլն:

Իրենց տեսակարար կշռով հանրապետության ծախսերում նշանակալի տեղ են զբաղում սոցիալ-կուլտուրական միջոցառումների համար կատարվող հատկացումները, այդ թվում՝ լուսավորության, առողջապահության, ֆիզկուլտուրայի և սոցիալական ապահովության ծախսերը (ինչպես նաև պետական սոցիալական ապահովագրության հատկացումները):

Արանց մեջ հիմնական տեղը զբաղում են լուսավորության և ժողկրթության ծախսերը (կադրերի պատրաստում, գիտական, կուլտուրական հիմնարկների պահպանում), այնուհետև պետական սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության ծախսերը (կենսաթոշակներ, բանվորներին և ծառայողներին, այլ կենսաթոշակներ, նպաստներ բազմազավակ և միայնակ մայրերին, սոցիալական ապահովության հիմնարկների պահպանում, և վերջապես առողջապահության և ֆիզիկական կուլտուրայի համար տրվող հատկացումներ):

Նշված բոլոր հատկացումները կատարվում են ի հաշիվ պետական բյուջեի: Մեր երկրի աշխատավորները հնարավորություն ունեն այդ ֆոնդերի հաշվին ստանալ կրթություն, բժշկական օգնություն, կենսաթոշակներ, նպաստներ:

Սոցիալ-կուլտուրական հիմնարկների և միջոցառումների ֆինանսավորումը բյուջեից կատարվում է այդ հիմնարկների կողմից կազմված նախահաշիվների հիման վրա: Յուրաքանչյուր առանձին բյուջետային հիմնարկության համար կազմվում է ծախսերի անհատական նախահաշիվ, որոնք քննարկվում և հաստատվում են նախարարությունների ու գերատեսչությունների կողմից, իսկ ամփոփ նախահաշիվները քննարկվում և ընդունվում են ֆինանսական մարմինների կողմից: Նախահաշիվներում ծախսերը խմբավորվում են ըստ տեսակների և նպատակային նշանակման: Նախահաշիվով չնախատեսված միջոցառումները կամ նախահաշիվի հատկացումները գերազանցող ծախսերը բյուջեից չեն ֆինանսավորում: Սոցիալ, կուլտուրական և ընդհանրապես բյուջետային հիմնարկներին միջոցներ են բաց թողնում աշխատողների աշխատավարձի հատկացումների, գրասենյակային ու տնտեսական ծախսերի, գործուղումների, գիտահետազոտական աշխատանքների, զույթի ձեռքբերման, կապիտալ ներդրումների, կապիտալ վերանորոգումների և մի շարք այլ հոդվածներով:

Նախահաշիվային կարգով են ֆինանսավորվում նաև կառավարման ապարատի պահպանման ծախսերը, որոնք մեծ տեսակարար կշիռ չունեն բյուջեում: Նշված ծախսերի մեջ են մտնում պետական

իշխանության և պետական կառավարման կենտրոնական և տեղական մարմինների, դատարանների ու դատախազության պահպանման ծախսերը: Կառավարությունը միջոցառումներ է իրականացնում կառավարման ապարատի ճկունացման ու կատարելագործման ուղղությամբ, դրա հետ միասին կառավարման ապարատի պահպանման ծախսերը տարեցտարի կկրճատվեն:

Բյուջեի ծախսերի մեջ նշվում է նաև այլ ծախսեր հատվածը, որը իրենից ներկայացնում է հիմնականում հանրապետության կառավարության պահեստային ֆոնդերը: Այս ֆոնդերը ձևավորում են տարվա ընթացքում ծագող նոր ծախսերի ֆինանսավորման համար:

Բյուջեի, ինչպես եկամուտների, այնպես էլ ծախսերի զուամարները հաշվարկվում են սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի ցուցանիշների հիման վրա: Տնտեսվարող սուբյեկտների պետական բյուջեի հանդեպ հարկային պարտավորություններ կատարելու համար հիմք են հանդիսանում ապրանքային արտադրության և ապրանքաշրջանառության պլանները, գյուղատնտեսական մթերքների արտադրության, տրանսպորտի փոխադրումների, կոմունալ ծեռնարկությունների սպասարկումների, կապի և այլ ցուցանիշների գծով տնտեսության տվյալ տարվա ծրագրերով ընդունված առաջադրանքները: Կապիտալ ներդրումների ֆինանսավորման չափը բյուջեում սահմանվում է ելնելով տնտեսության զարգացման ծրագրում ընդունված ներդրումների ծավալից: Սոց-կուլտուրական հիմնարկների պահպանման ծախսերը նույնպես որոշվում են այդ հիմնարկների ցանցի և կոնտինգենտի կարևորագույն այն ցուցանիշների (դասարանների թիվը, մահճակալների թիվը, բժշկական պաշտոնները) հիման վրա, որոնք սահմանվում են սոցիալ-տնտեսական պլանում: Վերը նշված հանգամանքը չի նշանակում, որ բյուջեն սոցիալ-տնտեսական զարգացման ցուցանիշների թվաբանական հետևանքն է:

Բյուջեն ունի ինքնուրույն նշանակություն՝ նոր ռեզերվներ հայտնաբերելու և դրանք տնտեսական նպատակներին ծառայացնելու համար: Այս հանգամանքը մեծ նշանակություն ունի բյուջետային խստագույն կարգապահություն սահմանելու համար, որը ապահովում է բյուջեով հաստատված բոլոր եկամուտների ժամանակին մուտքը և բյուջետային միջոցների առավել նպատակահարմար և խնայողաբար օգտագործումը:

Բյուջետային ռեսուրսները հիմնականում մոբիլիզացնում են հարկերի և տուրքերի ձևով: Բյուջեին հասանելիք գումարները ժամանակին չվճարելը հանգեցնում է պետական սանկցիայի կիրառման (վճարումների պարտադիր, կամ դատական կարգով գանձում, քրեական և վարչական պատասխանատվություն): Բյուջեից բաց

թողնված միջոցների ծախսման նկատմամբ սահմանվում է սիստեմատիկ վերահսկողություն: Բյուջեի միջոցները բաց են թողնվում ոչ թե կամայականորեն, այլ նպատակային՝ ըստ ծրագրերի կատարման անհրաժեշտության, ընդ որում ֆինանսավորվող ձեռնարկությունը, հիմնարկությունը կամ կազմակերպությունը պարտավոր է ապացուցել, որ ինքը ունի բոլոր պայմանները՝ միջոցները բյուջետային նշանակումներին համապատասխան օգտագործելու համար:

§ 2 ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Ներկա ժամանակաշրջանում համայնքների բյուջետային իրավունքների զարգացմանը մեծապես նպաստեցին «տեղական ինքնակառավարման մասին» օրենսդրության կատարելագործումը: Վերջին ժամանակաշրջանում հանրապետության ԱԺ ընդունեց «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքը, որն էական նշանակություն ունեցավ համայնքի բյուջետային իրավունքների զարգացման և նրանց ակտիվ ֆինանսական գործունեության համար:

Համայնքների բյուջետային իրավունքների զարգացման և ընդլայնման համար էական նշանակություն ունի նաև ժամանակակից էտապում տնտեսության զարգացման առանձնահատկությունները, որը տեղական ինքնակառավարման համար ակտիվ ֆինանսական գործունեության լայն հնարավորություններ է ստեղծում:

Քանի որ համայնքները ունեն իրենց բյուջեները, ապա այդ բնագավառում նրանք ունեն նաև բավականին լայն իրավունքներ:

Համայնքների բյուջետային իրավունքների բովանդակությունը կայանում է տեղական բյուջեի միջոցով եկամուտներ ստանալու և այդպիսիք օգտագործելու մեջ:

Համայնքների բյուջետային իրավունքների մասին կարելի է խոսել երկու իմաստով՝ նախ, գոյություն ունեն իրավունքներ, որոնք կրում են համայնքները անմիջականորեն որպես պետական իշխանության մարմիններ, և երկրորդ՝ որպես տեղական ինքնակառավարման մարմիններ՝ հանձին նրանց բաժինների ու վարչությունների ունեն որոշակի իրավունքներ¹: Իրոք, եթե խոսենք միայն համայնքի բյուջետային իրավունքների մասին նկատի ունենալով միայն

համայնքը, ապա «բյուջետային իրավունքներ» հասկացությունը կունենա մեղ իմաստ, բայց խոսելով տեղական բյուջետային իրավունքների մասին, այն ընկալվում է լայն իմաստով:

Ըստ բովանդակության բյուջետային իրավունքները լինում են երկու տեսակի՝ նյութական և պրոցեսուալ: Այսպես, բյուջեի եկամուտները և ծախսերը ապահովող միջոցառումները, ինչպես նաև բյուջետային միջոցներից ֆինանսավորման հարցերը նյութական իրավունքի հարցերն են: Իսկ պրոցեսուալ իրավունքի հարցերը, դրանք այն հարցերն են, որոնք ծագում են բյուջեի նախագծի կազմման, քննարկման, հաստատման և կատարման պրոցեսում: Օրինակ, համայնքի ավագանու կողմից բյուջեի նախագծի քննարկման իրավունքը, կամ համայնքի ղեկավարի կողմից բյուջեի կազմման պրոցեսում ֆինանսական և այլ մարմինների միջև առաջ եկած տարաձայնությունները վերացնել և այլն:

Բյուջետային ինչպես նյութայան, այնպես էլ պրոցեսուալ իրավունքները միմյանց հետ սերտորեն կապված են: Նրանց մասն բաժանումը բխում է բյուջետային իրավունքի բնույթից և դերից ու այնքան ռեալ ու ակնհայտ է, որ նրան հետևում են բոլորը, ովքեր ցանկանում են դասակարգել բյուջետային նորմերը:

Բյուջետային իրավունքների մասն դասակարգման հարցում բյուջետային իրավունքների վերաբերյալ տեսական գրականությունում էական տարակարծություններ չկան:

Համայնքների բյուջետային օրենսդրության վերլուծությունը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական գործունեության պրակտիկան հնարավորություններ են տալիս առանձնացնել համայնքների բյուջետային իրավունքների զարգացման հետևյալ ուղղությունները:

ա) Համայնքների բյուջետային եկամուտների բազայի ամրապնդումը:

բ) Համայնքի կապերի ընդլայնումը իրենց տարածքում զտնվող, սակայն իրենց չենթարկվող կազմակերպությունների հետ:

գ) Համայնքի բյուջեից ֆինանսավորվող օբյեկտների շրջանակի մեծացումը:

դ) Համայնքի բյուջետային գործունեությունում նյութական շահագրգռվածության սկզբունքի առավել լրիվ կիրառումը:

ե) Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց բյուջետային իրավունքների իրականացման ղեմնկրատական սկզբունքների ընդլայնում և այլն:

Համայնքների բյուջետային իրավունքների ընդլայնման գործում կարևոր նշանակություն ունեցավ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքը:

¹ М.И.Писпотян, Советское бюджетное право, М., "Юридическая литература" 1971, стр.91

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի հիմնվածորդ գլուխը սահմանում է միայն հանրապետության համայնքների բյուջետային իրավունքների հիմունքները: Ֆինանսական օրենսդրությամբ համայնքների բյուջետային իրավունքների ընդլայնումը բարձրացրեց տեղական ինքնակառավարման մարմինների դերը և ինքնուրույնությունը, բյուջետային գործունեության մեջ զարգացրեց նրանց նախաձեռնությունը, հնարավորություն ստեղծեց, որպեսզի կատարվեն ոչ միայն համայնքների բյուջեների դրամական մուտքերի պլանները, այլև պետական բյուջեի դրամական մուտքերը:

Ընդլայնվեց մշտապես համայնքների բյուջեներին ամրացված եկամուտների ցուցակը: Օրինակ, համայնքները իրավունք ստացան իրենց տարածքում գտնվող, բայց իրենց ոչ ենթակա ձեռնարկությունների եկամուտների մի մասը մտցնել տեղական բյուջե, որը ոչ միայն ավելացնում է տեղական բյուջեի եկամուտները, այլև հնարավորություն է ստեղծում ամրապնդել տեղական մարմինների կապը այդ կատեգորիայի ձեռնարկությունների հետ և որոշակի հսկողություն սահմանել նրանց ֆինանսատնտեսական գործունեության վրա: Համայնքներին իրավունք է վերապահված իրենց բյուջեներում ունենալ չնախատեսված ծախսերի ֆոնդ, որը կարևոր հանգամանք է նրանց բյուջետային իրավունքների բնագավառում:

Ընդլայնվեցին նաև այն միջոցառումների շրջանակները, որոնք ֆինանսավորվում են համայնքների բյուջեի հաշվին:

Համայնքների բյուջետային իրավունքների զարգացմանը նպաստեց նաև այն հանգամանքը, ըստ որի համայնքների բյուջեների կատարման ժամանակ ստացված լրացուցիչ եկամուտները համայնքների ավագանու որոշմամբ հատկացվում են տնտեսության և սոցիալ կուլտուրական միջոցառումների, ինչպես նաև կապիտալ ներդրումների ֆինանսավորման համար:

Համայնքներին իրավունք է վերապահված տարվա ընթացքում հայտնաբերված լրացուցիչ եկամուտները իրենց հայեցողությամբ ուղղել նոր միջոցառումների ֆինանսավորմանը: Յուրաքանչյուր համայնք կարող է նախաձեռնություն հանդես բերել բյուջեի եկամուտների նոր աղբյուրներ փնտրելու և եղածները ընդլայնելու ուղղությամբ, որոնք ծախսվում են լրացուցիչ միջոցառումների վրա:

Համայնքների բյուջետային իրավունքների զարգացման հիմնական ուղղություններից մեկն էլ այն է, որ նրանց բյուջեների եկամուտները ծախսերի նկատմամբ մշտապես գերազանցում են: Այն գումարները, որոնք տարեվերջին գոյանում են եկամուտների գերակատարման կամ ծախսերի խնայողության շնորհիվ, համայնքները ծախսում են իրենց հայեցողությամբ:

Համայնքների դերի բարձրացումը տնտեսական և կուլտուրական շինարարության բնագավառում անհրաժեշտություն առաջացրին, որպեսզի ամրապնդվի նրանց ֆինանսա-նյութական բազան: Այդ նպատակով տեղական ինքնակառավարման մարմինների ենթակա հիմնարկությունները և ձեռնարկությունները, որոնք հատկապես զբաղվում էին ազգաբնակչության սպասարկման և նրանց ամենօրյա պահանջմունքների բավարարմամբ իրենց տրամադրության տակ մնացած շահույթներից համայնքի ավագանու որոշմամբ մասհանումներ են կատարում համայնքային բյուջեին¹:

Համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններում համապատասխան վարչությունների ստեղծումը լուրջ ազդեցություն ունեցան նրանց բյուջեի եկամուտներին մասհանվող դրամական միջոցների ավելացման և նրանց ենթակա տնտեսությունների ցանցի ընդլայնման գործում:

Համայնքների ֆինանսա-նյութական բազայի հիմքի ամրապնդման գործում մեծ դեր խաղաց «բյուջետային համակարգի մասին» օրենքը: Հայտնի է, որ համայնքների բյուջեների եկամուտների հիմքը ամբողջությամբ վերցրած կազմում են տնտեսություններից ստացվող հարկերը և տուրքերը: Դրա համար էլ համայնքների կողմից իրենց ենթակա տնտեսություններում տեղական բյուջեների հետ փոխհարաբերությունների նոր մեթոդի կիրառումը նպաստում է համայնքների բյուջեների ամրապնդմանը: Հետևաբար համայնքների ենթակայության տնտեսական կազմակերպությունների ավելացումը, ներդրումները անկասկած խթանում և լայն հնարավորություններ են ստեղծում նրանց աշխատանքում և նպաստում են բյուջեի եկամուտների ավելացմանը:

Տեղական արդյունաբերության զարգացումը մեծ դեր է խաղում համայնքների բյուջեների ամրացման գործում: Հանրապետության տնտեսական և սոցիալական զարգացման ծրագրերով համայնքներին հնարավորություն է տրված տեխնիկապես կատարելագործել և մասնագիտացնել տեղական արդյունաբերությունը, ինչպես նաև կառուցել տեղական արդյունաբերության նոր օբյեկտներ:

Ինքնակառավարման մարմինների բյուջետային իրավունքների ձևավորման վրա էական ազդեցություն ունեն սեփականության ձևերի փոփոխությունները, որի հետևանքով փոխվում են համայնքային բյուջե մուտք լինող եկամուտների ցանկը, տարբեր եկամուտների միջև եղած փոխհարաբերությունները, բյուջեում ծախսերի առանձին տեսակների նշանակությունը և այլն:

¹ Տե՛ս. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 28-րդ հոդվածը:

Այժմ լայն հնարավորություններ կան համայնքային բյուջեների մշտական աղբյուրներ համարել՝ հողի հարկը, գույքահարկը, պետական տուրքի որոշ տեսակներ (քաղաքացիական կացության գրանցման և նոտարական ծառայությունների համար գանձված տուրքերը): Ծայրահեղ անհրաժեշտության դեպքում կարելի է բացառություն անել առանձին առավել մեծ քաղաքների համար, պետական բյուջեի այն եկամուտներից, որոնք ստացվում են պետական վիճակախաղի խաղարկությունից: Սրանք իրական երաշխիքներ են համայնքային բյուջեները ամրապնդելու գործում:

Այսօր ձեռնարկությունների, կազմակերպությունների, այդ թվում և համայնքների խնդիրը կայանում է նրանում, որպեսզի արտադրության արդյունավետության բարձրացման ճանապարհով հասնեն բարձր շահույթի, որտեղ և համապատասխանաբար կշահի բյուջեի եկամտային մասը:

Ներկա ժամանակաշրջանում հետզհետե ավելանում են ձեռնարկությունների և կազմակերպությունների ծախսերը:

Գործող բյուջետային օրենսդրությունը արգելում է բյուջեի հաշվին ծածկել ձեռնարկությունների սեփական շրջանառու միջոցների պակասը, որոնք առաջացել են վերջիններիս մեղքով, օգուտների պլանները չկատարելու կամ գերպլանային վնասներ առաջացնելու հետևանքով:

Նշված ուղղություններով «Բյուջետային համակարգի մասին» օրենքով համայնքներին ընձեռնվել են մի շարք իրավունքներ, որոնք ապահովում են տեղական ինքնակառավարման մարմինների ազդեցությունը իրենց տերիտորիայում գտնվող և իրենց ենթակայության տակ գործող ձեռնարկությունների և տնտեսական այլ կազմակերպությունների շահույթներից կատարվող մասհանումների նպատակային օգտագործման գործում: Նույնը նրանք անում են նաև իրենց ոչ ենթակա ձեռնարկությունների նկատմամբ:

Այսպես, հանրապետության մարզերը իրավունք են ստացել համապատասխան նախարարությունների և գերատեսչությունների համաձայնությամբ կենտրոնացնել առանձնացված կուլտուր-կենցաղային օբյեկտների շինարարության և բնակավայրերի բարեկարգման միջոցները, լուծել մարզային և տեղական ենթակայության ձեռնարկությունների միջոցների կոոպերացման հարցերը բուժ-պրոֆիլակտիկ հիմնարկություններ կառուցելու գործում: Տարբեր ձեռնարկությունների միջոցների միավորման իրավունքից օգտվում են նաև բոլոր համայնքները:

Վերջապես, համայնքների բյուջետային իրավունքների հետագա զարգացման գործում մեծ դեր են խաղում «տեղական ինքնակառավարման» 1996թ. հուլիսի 22-ին Աժ կողմից ընդունած օրենքը և

«Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՀՀ նախագահի 1997թ. մարտի 6-ին ընդունած հրամանագիրը:

Ներկայումս համայնքների իրավունքների ընդլայնումը և ամրապնդումը ուղեկցվում է նաև տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքի ղեկավարի և ավագանու դերի բարձրացմամբ: Դրան մասնավորապես նպաստում է համայնքների բյուջեների մուտքերի հստակ սահմանումը և ավագանու բյուջետային լայն մասնաձեռնության հնարավորությունների ընձեռնումը:

§3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՍԿԶՈՒՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՎԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ

Համայնքային բյուջեի հիմնական խնդիրներից մեկը կայանում է նրանում, որպեսզի ստացված եկամուտները վերաբաշխվեն տնտեսության արտադրական և ոչ արտադրական ոլորտներում, տարբեր ճյուղերի և առանձին ձեռնարկությունների և տնտեսական կազմակերպությունների միջև: Կատարելով այդ ֆունկցիան, բյուջեն մեծ ազդեցություն է գործում տնտեսական համամասնությունների ձևավորման, կուլտուր-լուսավորչական շինարարության զարգացման, ինչպես նաև պետական և հասարակական կյանքի ամենաբազմազան կողմերի զարգացման վրա:

Բյուջեի վերը նշված խնդրի իրականացման վրա լուրջ ազդեցություն է գործում տնտեսական խթանման սկզբունքի իրականացումը բյուջետային գործունեության բնագավառում, որը առաջին հերթին արտահայտվում է համայնքային բյուջեի արդյունաբերական և գյուղատնտեսական, կենցաղային սպասարկման ու ձեռնարկությունների և մնացած տնտեսական կազմակերպությունների հետ ունեցած կապով: Անհրաժեշտ է նկատել, որ բյուջետային գործունեության հնարավորությունները չեն սահմանափակվում միայն տնտեսավարկային ոլորտով:

Համայնքների բյուջետային իրավունքների մասին օրենսդրությունը բխում է նաև տնտեսական խթանման սկզբունքներից: Չնայած այն հանգամանքին, որ համայնքների բյուջետային գործունեության իրավական կարգավորման գործում տարբեր տեսակի նյութական շահագրգռվածության սկզբունքը տարբեր ձևերով կիրառվում էր նաև նախկինում, սակայն շուկայական հարաբերություն-

ների նոր մեթոդին անցնելուց հետո համայնքների իրավունքները բյուջետային գործունեության բնագավառում էլ ավելի զարգացան:

Տեղական ինքնակառավարման և բյուջետային օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ համայնքների բյուջետային գործունեության բնագավառում նյութական շահագրգռվածության կոնկրետ ձևերը սահմանվում են ամբողջությամբ վերցրած համայնքի նկատմամբ, որը վերաբերվում է նրան ենթակա տնտեսություններին և տարածքին կամ նրա համակարգի աշխատողներին անհատապես:

Տնտեսական խթանման սկզբունքի կիրառումը համայնքների բյուջետային իրավունքների իրականացման պրոցեսում առաջին հերթին արտահայտվում է այն բանում, որ տեղական ինքնակառավարման մարմինները իրավունք ունեն տնօրինելու բյուջեի կատարման ընթացքում առաջացած լրացուցիչ եկամուտները՝ Համայնքները ինքնաբերաբար տնօրինում են ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցման գումարները, որոնք առաջանում են տարեվերջին եկամուտների պլանները կատարելու կամ ծախսերի գծով տնտեսումներ ունենալու շնորհիվ: Այս իրավունքները նյութական շահագրգռվածություն են ստեղծում համայնքների համար, որպեսզի նրանք միջոցներ ձեռնարկեն ծախսերը կրճատելու և եկամուտները ծախսերի նկատմամբ գերազանցելու համար, ռացիոնալ օգտագործեն ներքին ռեզերվները և ավելացնեն բյուջե կատարվող մուտքերը:

Տնտեսական խթանման սկզբունքը ընկած է նաև պետական եկամուտներից համայնքների բյուջե կատարվող տոկոսային մասհանումների հիմքում: Սա նոր չէ ֆինանսական օրենսդրության գործում: Սակայն այժմ էլ նպաստում է, որպեսզի տեղական ինքնակառավարման մարմինները կատարեն եկամուտների պլանները և ապահովեն պետական եկամուտների նախատեսված մուտքերը:

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում նշված են այն եկամուտների ցանկը, որոնք տոկոսային մասհանումների միջոցով տրվում են համայնքային բյուջեներին, որը նպաստում է համայնքային բյուջեների ֆինանսական հնարավորությունների ավելացմանը: Նրանց է մնում նաև կենտրոնացված կարգով հումքի և նյութերի լրացուցիչ առաջադրանքների իրացումից առաջացած եկամուտների մի մասը, ինչպես նաև իրենց ենթակա ձեռնարկությունների և կազմակերպությունների շահույթներից կատարվող մասհանումները:

Համայնքների բյուջետային իրավունքների իրականացման գործում մեծ դեր ունեն գործադիր մարմնի ֆինանսական բաժինների աշխատողները, որոնց նկատմամբ նյութական շահագրգռվածու-

թյան սկզբունքի կիրառումը զգալիորեն նպաստում է բյուջեի կատարմանը:

Համայնքների բյուջետային եկամուտների հավաքման գործնական աշխատանքների ուսումնասիրությունները վկայում են, որ համայնքների ֆինանսական մարմինների աշխատողները լավագույն աշխատանքի դեպքում պարզևատրային վարձատրություն կարող են ստանալ: Նրանք դրան արժանանում են եկամուտների գծով բյուջեի ցուցանիշների գերակատարման, բյուջեով նախատեսված միջոցառումների ժամանակին ֆինանսավորումը ապահովելու, հիմնարկությունների և ձեռնարկությունների ֆինանսական գործունեության վրա վերահսկողությունը ուժեղացնելու, դրամական միջոցների և նյութական արժանիքների տնտեսման ռեժիմը պահպանելու համար:

Նյութական շահագրգռվածության սկզբունքի ամենաբազմազան ձևերի կիրառումը նպաստում է բյուջետային գործունեության կատարելագործմանը, բարձրացնում է բյուջետային իրավունքների իրացման արդյունավետությունը:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

**§ 1 ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԱՍԿԱՑՈՒ-
ԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՒԼԵՐԸ**

Բյուջետային գործընթացը իրենից ներկայացնում է պետական մարմինների բյուջետային իրավունքի նորմերով կարգավորվող գործունեությունը՝ բյուջեների կազմման, քննարկման և հաստատման, ինչպես նաև բյուջեների կատարման մասին հաշվետվությունների կազմման և հաստատման ուղղությամբ:

Քանի որ բյուջեն գործում է մեկ տարվա ընթացքում բյուջետային գործընթացի թվարկված փուլերը ամեն տարի կրկնվում են: Բյուջետային պրոցեսի լրիվ ցիկլը, այսինքն՝ բյուջեի կազմման վրա գործողությունները սկսելուց մինչև նրա կատարման մասին հաշվետվության հաստատումը, ինչը հաճախ տևում է ավելի քան երկու տարի: Բյուջետային գործընթացի առանձին փուլերի իրացման ընթացքում մեր պետության պայմաններում իրականացվում են հանրապետական և տեղական ինքնակառավարման մարմինների բյուջետային միջոցներ ստանալու և օգտագործելու իրավունքները: Այլ խոսքով, բյուջետային գործընթացը բյուջետային իրավունքի նյութական նորմերի իրացման ձև է: Ահա թե ինչու բյուջետային իրավունքի նյութական և պրոցեսուալ նորմերը գտնվում են սերտ միասնության մեջ:

Ամհրաժեշտ է ընդգծել, որ բյուջետային իրավունքի նյութական և պրոցեսուալ նորմերի կապը էականորեն տարբերվում է այն կապի բնույթից, որն, ասենք, գոյություն ունի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական պրոցեսի միջև: Այլ տարբերությունը արտահայտվում է հետևյալում.

1. Բյուջետային իրավունքի նյութական և պրոցեսուալ նորմերը իրարից տարբերվում են իրավունքի մեկ ճյուղի ինստիտուտի շրջանակներում, մինչդեռ այնտեղ դրանք կազմում են իրավունքի երկու ինքնուրույն ճյուղեր.

2. Նույնն է նյութական և պրոցեսուալ բյուջետային հարաբերությունների սուբյեկտների շրջանակը:

Բյուջեի գործընթացի հիմքում ընկած են նրան յուրահատուկ որոշակի սկզբունքներ.

- 1) բյուջեի բոլոր եկամուտների և ծախսերի միասնությունը,
- 2) բյուջեի իրական լինելը,
- 3) նրա ընդունման հրապարակայնությունը,
- 4) բյուջեի ցուցանիշների մասնագիտացումը:

1. Բյուջեի բոլոր եկամուտների ու ծախսերի միասնությունը և դրանց լրիվ ներառումը կայանում է նրանում, որ ՀՀ պետական բյուջեն հանդիսանում է միասնական ակտիվ հաստատվող դրամական միջոցների համապետական ֆոնդ:

2. Բյուջեի իրական լինելու սկզբունքի համաձայն, պետության իրական եկամուտներից ելնելով պետք է նախատեսվեն նրա համապատասխան ծախսերը:

3. Հրապարակայնությունը բյուջետային գործընթացում արտահայտվում է նրանով, որ տեղի է ունենում գալիք և նախորդ տարիների արդյունքների համեմատական ու բազմակողմանի քննարկում: Իսկ հրապարակայնությունը բյուջեի վերաբերյալ որոշումների պարտադիր հրատարակումն է մասնավորում:

4. Բյուջեի ցուցանիշների մասնագիտացումը յուրահատուկ է բյուջետային գործընթացի յուրաքանչյուր փուլին: Այն դրսևորում է բյուջեի եկամուտներն ըստ աղբյուրների և ծախսերի՝ ըստ նպատակային նշանակության կոնկրետացման մեջ: Մասնագիտացման սկզբունքը իրականացվում է բյուջետային դասակարգման հատուկ իրավաբանական ակտի միջոցով, որը սահմանում է բյուջեի եկամուտների և ծախսերի խմբավորումը: Այն ընկած է պետական ֆինանսական մարմինների բյուջետային ողջ գործունեության հիմքում, որն արտահայտում է բյուջեի իրավական կազմակերպումը:

Բյուջետային պրոցեսի բոլոր փուլերի համար բնութագրական է բյուջետային դասակարգումը:

Բյուջետային և տնտեսական մյուս ծրագրերի ելման կետը այսօր հանրապետությունում նախագահի և կառավարության համապատասխան տարվա հանձնարարականներն են սոցիալ-տնտեսական ծրագրերի կազմման մասին: Ելնելով դրանցից, ինչպես նաև «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներից, հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը մինչև ընթացիկ տարվա հունիսի 20-ը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին է տրամադրում բյուջեները կազմելու համար ամհրաժեշտ հաշվարկների կատարման մեթոդական ցուցումներ, բյուջետային ֆինանսավոր-

ման հայտեր, բյուջետային հիմնարկների պահպանման ծախսերի նախահաշվի ձևերը և ներկայացման կարգը:

Այդ ցուցումները ուղարկվում են հանրապետության բոլոր նախարարություններին և գերատեսչություններին իրենց եկամուտների և ծախսերի հաշվեկշիռների կազմման ժամանակ ղեկավարվելու համար, որոնց հիման վրա կազմվում է հանրապետության բյուջեն: Այդ ցուցումներն ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը ուղարկում է համապատասխան լրացումներով հանրապետության նախարարություններին և տեղական ինքնակառավարման մարմիններին: Նույն ձևով վարվում են նաև տեղական ֆինանսական մարմինները:

Նախարարությունները, գերատեսչությունները, տեղական ինքնակառավարման մարմինները իրենց հերթին ստացված ցուցումները ուղարկում են իրենց ենթակա ձեռնարկություններին և հիմնարկներին եկամուտների և ծախսերի հաշվեկշիռներն ըստ իջեցված ցուցումների պահանջներին համապատասխան կազմելու համար:

Ըստ բյուջետային դասակարգման եկամուտների և ծախսերի նախահաշիվներն ու հաշվեկշիռները կազմվում են օրենսդրությանը և կառավարության որոշումներին ու կարգադրություններին լիովին համապատասխան: Այդ համապատասխանությունը արտահայտվում է հետևյալում.

1. Ստացված բոլոր եկամուտները և ծախսերն ունեն իրավական հիմք, այսինքն նախատեսվում են միայն այն եկամուտները և ծախսերը, որոնք սահմանված են օրենսդրությամբ:

2. Եկամուտների և ծախսերի բոլոր նախահաշիվները և հաշվեկշիռները կազմվում են միասնական ձևով՝ ՀՀ կառավարության, ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից հաստատված միասնական դասակարգման համապատասխան:

Բյուջետային դասակարգումը դա եկամուտների և ծախսերի պարտադիր խմբավորումն է միասնական հատկանիշների հիման վրա՝ բյուջեի առանձին ստորաբաժանումներին տալով ճշգրիտ անվանումներ և հերթական համարներ:

Եկամուտների դասակարգման հիմքում ընկած է դրանց աղբյուրը, ծախսերինը՝ նրանց նպատակը: Ապա եկամուտները և ծախսերը խմբավորվում են կամ գերատեսչական կամ էլ ճյուղային սկզբունքով: Գործող բյուջետային դասակարգումներն իրենց մեջ պարունակում են այս երկու սկզբունքները: Հանրապետության բյուջեի եկամուտները ամրապնդող հողվածը ըստ կառուցվածքի կարելի է բաժանել բաժինների, հողվածների և ենթակետի:

Դասակարգման ավելի մեծ ստորաբաժանումը բաժինն է, որտեղ

յուրաքանչյուրն ունի իր հերթական համարը օրինակ՝ բաժին ա) հարկային եկամուտներ և տուրքեր, բաժին բ) ոչ հարկային եկամուտներ, բաժին գ) «եկամուտներ կապիտալի գործառնություններից», բաժին դ) մուտքեր պաշտոնական տրանսֆերտներից: Օրենքի 17-րդ հոդվածում ամրագրված 4 եկամտի աղբյուրներից յուրաքանչյուրը ենթակետով արտահայտում է եկամտի աղբյուրի տեսակը և հանման բնույթը: Օրինակ՝ հարկային եկամուտների և տուրքերի բաժնում ամփոփվում են 1) ավելացված արժեքի հարկը, 2) ակցիզային հարկը, 3) շահութահարկը, 4) եկամտահարկը, 5) գույքահարկը, 6) հողի հարկը և տուրքերի համակարգը:

Հանրապետության բյուջեի ծախսերի դասակարգումը օրենքի հողվածների կառուցվածքի բովանդակությամբ համընկնում է նրա եկամուտների կառուցվածքի դասակարգման սկզբունքներին:

Համայնքների բյուջետային եկամուտների և ծախսերի իրավական կարգավորմանն ուղղված հողվածները, բյուջետային դասակարգման համար ճիշտ այնպիսի սկզբունքներով են արտահայտված ինչպիսին հանրապետությանը:

Բյուջետային դասակարգումը հնարավորություն է տալիս ակտիվորեն ներգործել բյուջետային պլանավորման բոլոր փուլերի վրա և հսկողություն իրականացնել բյուջեի կատարման վրա: Այն կարևոր միջոց է հանդիսանում բյուջետային գործունեության մեջ օրինականության պահպանման համար: Այն հնարավորություն է տալիս նաև համադրել միատիպ բյուջետային հիմնարկների եկամուտները և ծախսերը, որտեղ միասեռ պահանջների բավարարման մակարդակի ուսումնասիրությանը և վերլուծությունը տարեցտարի նպաստում են բյուջետային գործընթացի կատարելագործմանը:

§ 2 ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄՈՒՄԸ

Եկամուտների և ծախսերի նախահաշիվների և հաշվեկշիռների կազմման հիմքում դրվում են տնտեսական և սոցիալական զարգացման ցուցանիշները, այն է՝

Արտադրանքի թողարկումը ըստ տնտեսության ճյուղի
Ինքնարժեքի իջեցում

Առանձին ճյուղերում կապիտալ շինարարության ծավալը,

Ապրանքաշրջանառության ընդլայնումը և այլն:

Հաշվի են առնվում նաև հաստատված հաստիքները, ռոճիկները, ընթացիկ տարում հաշվեկշռի եկամուտների և ծախսերի փաստացի ու սպասվելիք կատարումը, եղած շուկայական գները և այլն: Ձեռնարկությունների, հիմնարկների ղեկավարների կողմից հավանության արժանացած նախահաշիվների և հաշվեկշիռների նախա-

**§3 ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԵԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ,
ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ
ԺՈՂՈՎՈՒՄ**

գծերը բացատրագրերի և հայտերի հետ միասին ներկայացվում են համապատասխան նախարարություններին: Դրանք շահագրգռված ձեռնարկությունների և հիմնարկների ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկում են ներկայացված նախահաշիվները և հաշվեկշիռները, ստուգում են նրանց համապատասխան լինելը տնտեսական ծախսերին, օրինակաբանությունը և նախատեսված ծախսերի նպատակահարմար չինելը: Նման քննարկման հետևանքով կազմվում է տվյալ նախարարության եկամուտների և ծախսերի համահավաք նախահաշիվ և հաշվեկշիռ: Բացի դրանից նախարարությունները կազմում են իրենց նախարարության պահպանման ծախսերի նախահաշիվ և նախարարության կողմից իրականացվելիք կենտրոնացված միջոցառումների նախահաշիվ: Նշված երեք նախահաշիվները առանձին-առանձին, որպեսզի թույլ չտրվի ենթագերատեսչական հիմնարկների միջոցների ծախս նախարարության կարիքների վրա ներկայացվում են ֆինանսական մարմիններին:

Ֆինանսական մարմինները մանրակրկիտ ստուգում են եկամուտների և ծախսերի նախահաշիվների ու հաշվեկշիռների ներկայացված նախագծերը: Ըստ որում ֆինանսական մարմիններն իրավունք ունեն ծախսի անհիմն լինելը հայտնաբերելու դեպքում այն չմտցնել բյուջետային նախագծի մեջ, փոփոխել և վերացնել գերատեսչության կողմից նախատեսված գումարները, մածացնել եկամուտները և այլն: Այս կապակցությամբ առաջացած տարաձայնությունները հետագայում լուծվում են կառավարության կողմից: Եկամուտների և ծախսերի ճյուղային նախահաշիվները և հաշվեկշիռները ֆինանսական մարմինների կողմից միավորվում են բյուջեի եկամուտների և ծախսերի մեջ, որոնք լիակատար հավասարակշռումից հետո ձևավորում են բյուջեի նախագիծը:

Բյուջետային ֆինանսավորման հայտերի, արտաքին ու ներքին պարտավորությունների և հաջորդ տարում կանխատեսվող մուտքերի հիման վրա ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը կազմում է հաջորդ տարվա պետական բյուջեի նախագիծը և ներկայացնում կառավարությանը:

Կառավարությունը պետական բյուջեի նախագիծը՝ ներառյալ նաև ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված «Հայաստանի հանրապետության կենտրոնական բանկի կապիտալ ներդրումների ծրագիրը և ծախսերի նախահաշիվը» առանձին հոդվածը Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացնում բյուջետային տարին սկսվելուց առնվազն վաթսուց օր առաջ¹:

ՀՀ կառավարությունը քննարկում է ՀՀ պետբյուջեի նախագիծը և Ազգային ժողով է ներկայացնում:

1. Հայաստանի Հանրապետության համախմբված բյուջեն ըստ եկամուտների ընդհանուր գումարի, ցույց տալով եկամուտների հիմնական աղբյուրները և ըստ ծախսերի ընդհանուր ծավալի, ցույց տալով ծախսերի հիմնական տեսակները, ինչպես նաև բյուջետային դեֆիցիտը:

2. Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի բյուջեն՝ եկամուտների և ծախսերի ընդհանուր գումարով:

3. Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեները եկամուտների և ծախսերի ընդհանուր գումարով:

ՀՀ պետբյուջեն նախապես քննարկվում է Ազգային ժողովի ֆինավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովում:

Հանձնաժողովը պետբյուջեն քննարկելիս կարող է լսել նախարարությունների և գերատեսչությունների զեկուցումները ըստ իրենց հաշվեկշիռների և նախահաշիվների ու ըստ պետական սոցիալական ապահովագրության բյուջեի եկամուտների և ծախսերի, ինչպես նաև քննարկում են նրանց առաջարկները հանրապետության պետբյուջեի վերաբերյալ:

Կազմում և Աժ եզրակացություն է ներկայացնում պետբյուջեի վերաբերյալ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ կառավարության անուց զեկուցում է ընթացիկ և նախորդ տարվա պետական բյուջեի կատարման մասին: Բյուջեի քննարկումը կատարվում է ըստ պլանների առանձին-առանձին: Զեկուցումներով կարող են հանդես գալ մշտական հանձնաջողովների նախագահները: Եզրափակիչ խոսքով հանդես է գալիս հանրապետության ֆինանսների նախարարը: Բյուջեն հաստատվում է քվեարկությամբ: Ապա Ազգային ժողովը անցնում է պետբյուջեի մասին օրենքի ընդունմանը: Սկզբում քվեարկությունը ընթանում է հողված առ հողված, ապա օրենքը ամբողջությամբ վերցրած:

Այսօր՝ հանրապետության կառավարությունը բյուջետային օրենսդրությանը համաձայն ինքն է որոշում, թե իրենց բյուջեի ընդհանուր ծավալից, որքան է տալիս համայնքների բյուջեներին:

Այսպիսով, հանրապետությունը սահմանում է պետական բյու-

¹ Տե՛ս. Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 12 և 13-րդ հոդվածները:

ջեի ընդհանուր ծավալը, եկամուտներից մասհանումներ կատարելով համայնքային բյուջեներին:

Համայնքները ըստ 77 բյուջետային համակարգի մասին օրենքի 32-րդ հոդվածի իրենց բյուջեների նախագիծը ավագանու քննարկման են ներկայացնում պետական բյուջեի հաստատումից հետո մեկ ամսյա ժամկետում:

Ելնելով պետբյուջեի մասին օրենքով սահմանված ծավալներից հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը մինչև համայնքների բյուջեների ներկայացնելը ճշգրտումներ է մտցնում հանրապետության բյուջեի նախագծի մեջ: Պետական բյուջեի նախագծի քննարկման ընթացքում արդեն ստացված են լինում համայնքների բյուջեների նախագծերը: Համայնքների բյուջեների հաստատման գործընթացը գրեթե չի տարբերվում հանրապետության բյուջեի քննարկման համար օրենսդրությամբ սահմանված կարգից:

Բյուջետային գործընթացը ՀՀ-ում սկսվում է վերից վար: Յուրաքանչյուր համայնք կարող է վերջնականապես ընդունել իր բյուջեն միայն այն բանից հետո, երբ հաստատվել է պետական բյուջեն, քանի որ նրա հաստատումից հետո սահմանվում է բյուջեի պլանային ծավալը և կարգավորող աղբյուրներից համայնքների բյուջեին կատարվող մասհանումների գումարը: Համապատասխան համայնքի ավագանու կողմից հաստատված բյուջեները ներկայացվում են մարզպետին, որի կողմից միավորվում են համայնքների բյուջեները որպես տվյալ վարչա-տերիտորիալ միավորման բյուջեների հավաք, իսկ այդ հավաքն իր հերթին ներկայացվում է վերադաս ֆինանսական մարմինը: Ֆինանսական մարմինը հսկողության կարգով ստուգում է ստացվող բյուջեները և դրանց հավաքները: Օրենսդրության խախտման, տնտեսական ծրագրերին չհամապատասխանելու դեպքում միջոցներ են ձեռնարկվում նկատված թերությունները վերացնելու համար:

Գործող բյուջետային օրենսդրությունը կարգավորում է համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման առնչությամբ մարզպետի և համայնքի ղեկավարի միջև առաջացած տարաձայնությունները:

«Բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ համայնքի բյուջեն չհաստատվելու դեպքում, համայնքի ղեկավարը դնում է հրաժարական տալու միջոցով իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարցը: Եթե համայնքի ավագանին համայնքի ղեկավարի հրաժարականի վերաբերյալ դիմումը ստանալուց հետո եռօրյա ժամկետում իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ նման որոշում

չի ընդունում, ապա համայնքի բյուջեն համարվում է հաստատված համայնքի ղեկավարի կատարած ուղղումներով:

Հաստատված հանրապետության և համայնքների բյուջեներին համապատասխան հանրապետության ֆինանսների նախարարությունը և տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական բաժինները կազմում են համապատասխան բյուջեի եկամտային և ծախսային մասի կատարման նոթագրում: Այսինքն, մանրակրկիտ բաշխում են բյուջետային հատկացումներն ըստ եկամուտների և ծախսերի բյուջետային դասակարգման բոլոր ստորաբաժանումներով:

Ընդլայնված ձևով բյուջեի առկայությունը անհրաժեշտ է նրա կատարման համար, ինչպես նաև հնարավորություն է տալիս վերահսկել բյուջեի կատարումը: Բյուջետային համակարգի օդակների նման նոթագրումներ կազմելուց հետո նշված մարմինները հաստատում են իրենց ենթակա ձեռնարկությունների և հիմնարկների նախահաշիվները և հաշվեկշիռները: Դրա հետևանքով բյուջետային բոլոր առաջադրանքները և հատկացումները անմիջականորեն հասցվում են հիմնարկներին, ձեռնարկություններին և կազմակերպություններին:

Բյուջեի ընդունումը բյուջետային գործընթացի երրորդ փուլն է: Ազգային ժողովը կառավարության ներկայացրած պետական բյուջեն հաստատում է նիստին ներկա պատգամավորների ձայների մեծամասնությամբ:

ՀՀ Սահմանադրության 90-րդ հոդվածի համաձայն, ՀՀ կառավարությունը կարող է պահանջել, որ իր կողմից ընդունված ուղղումներով պետական բյուջեն քվեարկության դրավի մինչև 60-օրյա ժամկետի ավարտը:

Մինչև բյուջետային տարվա սկիզբը պետական բյուջեն չհաստատվելու դեպքում ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով:

Բյուջեի հաստատման առնչությամբ կառավարությունը կարող է դնել իր վստահության հարցը: Եթե ՀՀ Սահմանադրության 74-րդ հոդվածով նախատեսված կարգով Ազգային ժողովն անվստահություն չի հայտնում կառավարությանը, ապա ընդունված ուղղումներով պետական բյուջեն վերջինիս կողմից համարվում է հաստատված:

Բյուջեի հաստատման առնչությամբ Ազգային ժողովի կողմից կառավարությանն անվստահություն հայտնելու դեպքում, նոր կառավարությունը քսան օրվա ընթացքում բյուջեի նոր նախագիծ է ներկայացնում, որն օրենսդիր մարմնի կողմից քննարկվում և հաստատվում է երեսուն օրվա ընթացքում (ՀՀ Սահմ., հոդված 90):

§ 4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՒՄ

Կատարել բյուջեն նշանակում է՝ ճիշտ սահմանված ժամկետներում և հաստատված չափերով հավաքել ծրագրված եկամուտները և կատարել նախատեսված ծախսերը: Բյուջետային օրենսդրությունը սահմանում է, որ բյուջեի կատարման կարգը սահմանում է կառավարությունը: Պետական բյուջեի կատարման բնագավառում Հանրապետության կառավարությունը օժտված է մի շարք լիազորություններով, որոնք հանգում են հետևյալին.

1. Հաստատում է հանրապետության բյուջեի եռամսյակային համապատասխանությունները.

2. Որոշումներ և կարգադրություններ է հրատարակում եկամուտների և ծախսերի գծով պետբյուջեի կատարման ուղղությամբ:

3. Լուծում է բյուջեների գործադրման պրոցեսում ծագած գանազան հարցեր (դրամարկղային ժամանակավոր ճեղքվածքների փակման կարգը, վարկերի տեղափոխման, պահեստային ֆոնդի օգտագործման և այլ հարցեր):

4. Յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 40 օրվա ընթացքում Ազգային ժողով է ներկայացվում պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն:

Ինչ վերաբերվում է բյուջեի կատարմանը տեղերում, ապա բյուջեների անմիջական կատարումը դրված է տեղական ինքնակառավարման մարմինների վրա:

Հանրապետության պետական բյուջեի կատարման գործում լայն լիազորություններ ունի հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:

1) Նա կազմակերպում է պետական բյուջեի գործադրումը:

2) ղեկավարում է համայնքային բյուջեների կատարումը:

3) կազմակերպում և ուղղություն է ցույց տալիս ձեռնարկություններից, կազմակերպություններից և բնակչությունից պետական հարկերի, տուրքերի, տեղական վճարների և տուրքերի աշխատանքներին, տնտեսական ձեռնարկությունների շահույթներից կատարվող մասհանումների և այլ ոչ հարկային եկամուտների գանձման գործին:

4) քննարկում է նախարարությունների և գերատեսչությունների հաշվապահական հաշվետվությունները և հաշվեկշիռները, ստուգում է տնտեսական կազմակերպությունների կողմից բյուջեի առաջ ունեցած նրանց պարտականությունների կատարումը:

5) նախարարություններին և գերատեսչություններին պահանջներ է ներկայացնում նրանց ֆինանսական գործունեության մեջ

տեղ գտած թերությունները վերացնելու գործում, անհրաժեշտության դեպքում համապատասխան առաջարկներ է մտցնում հանրապետության կառավարություն:

6. հսկողություն է իրականացնում նախարարությունների, գերատեսչությունների, բյուջետային հիմնարկությունների, տնտեսական կազմակերպությունների և ձեռնարկությունների կողմից հանրապետության բյուջեի կատարման վրա, նրանց կողմից ֆինանսական կարգապահության պահպանման, բյուջետային և սեփական միջոցների ճիշտ և տնտեսվար օգտագործման, սահմանված հաստիքների և աշխատավարձի չափերի ու վարչա-տնտեսական ծախսերի պահպանման վրա:

Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը իր կանոնադրության համաձայն իրավունք ունի.

1. Սահմանափակել, իսկ առանձին դեպքերում ղադարեցնել պետբյուջեից կատարվող այն ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների ֆինանսավորումը, որոնցում տեղ են գտել միջոցների անօրինական ծախսեր, ինչպես նաև այն դեպքում, երբ վերջիններս հաշվետվություններ չեն ներկայացրել իրենց կողմից կատարված ծախսերի մասին՝ այս մասին տեղյակ պահելով համապատասխան նախարարությունների, գերատեսչությունների ղեկավարներին:

2. Անցկացնել բյուջետային կազմակերպությունների տնտեսական գործունեության փաստաթղթային ստուգումներ, դրանց ղեկավարներին տալ պարտադիր ցուցումներ ֆինանսական կարգապահության տեղ գտած թերությունները վերացնելու ուղղությամբ:

3. Սահմանված կարգով տնտեսվարող սուբյեկտներից բռնագանձել ժամանակին չմուծված ոչ հարկային մուծումները, ինչպես նաև օրենքներին ու ՀՀ կառավարության որոշումներին ու կարգադրություններին համապատասխան, տույժի ենթարկել այն կազմակերպություններին ու ձեռնարկություններին և նրանց ղեկավարներին ու գլխավոր հաշվապահներին, որոնք սահմանված ժամկետներում չեն ներկայացրել օրենքով նախատեսված հաշվետվությունները:

4. Տվյալ եռամսյակում ավելացնել հանրապետության բյուջեից կատարվող հատկացումները նույն նպատակների համար, հաջորդ եռամսյակի գումարների հաշվին:

5. Նախարարությունների և գերատեսչությունների կողմից լիմիտից ցածր կատարվող կապիտալ ներդրումների պլանների փոփոխման կապակցությամբ փոփոխել կապիտալ ներդրումների համար նախատեսված բյուջետային հատկացումները:

Բյուջեն կատարելիս նմանօրինակ ֆունկցիաներ են իրականաց-

նում տեղական ինքնակառավարման մարմինները:

Տեղերում բյուջեի կատարումը դրված է համայնքների ղեկավարի վրա: Նա իրականացնում է հետևյալ ֆունկցիաները.

1) համայնքի բյուջեի հաստատումից հետո համայնքի ղեկավարը սահմանում է բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունները, հաստատում է բյուջետային հիմնարկների պահպանման նախահաշիվները:

2) Համայնքի ավագանու հաստատած տեղական բյուջեն, եռամսյակային համամասնություններով և բյուջետային հիմնարկների պահպանման ծախսերի տարեկան և եռամսյակային բաշխմամբ հաստատված նախահաշիվները տրամադրում է համայնքի բյուջեի կատարման սպասարկումն իրականացնող ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համապատասխան տեղական գանձապետական բաժանմունքին:

3) ստորագրում է ֆինանսական փաստաթղթեր:

4) աջակցում է հարկային մարմիններին համայնքի բյուջե հարկերի մուտքագրման գործում:

5) համայնքի բյուջեի կատարման ընթացքում համայնքի ղեկավարը կարող է գործառական և տնտեսագիտական դասակարգման մեջ կատարել բյուջեն հաստատելու մասին՝ համայնքի ավագանու ընդունած որոշմանը չհակասող վերաբաշխումներ:

Համայնքի բյուջեի կատարման սպասարկումը իրականացնում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը՝ իր տեղական գանձապետական բաժանմունքների միջոցով:

Տեղական ինքնակառավարման ֆինանսական ծառայությունները համայնքների բյուջեների կատարումն ապահովելու համար թփուլված են լայն իրավունքներով: Նրանք իրավունք ունեն.

1. Հիմնարկներից, կազմակերպություններից ստանալու ծախսերի նախահաշիվներ, հաշվապահական հաշվետվություններ ու հաշվետու տվյալներ:

2. Սահմանափակել, իսկ առանձին դեպքերում դադարեցնել այն կազմակերպությունների և հիմնարկությունների ֆինանսավորումը, որոնցում տեղ են գտել միջոցների անօրինական ծախսեր ինչպես նաև նախկինում հատկացված միջոցների ծախսման ու այլ սահմանված հաշվետվությունների չներկայացնելու դեպքեր:

3. Սահմանված կարգով վճարողներից բռնագանձել նրանց կողմից ժամանակին չմուծված տուրքերը և բյուջե կատարվող ոչ հարկային վճարումները:

Նախարարությունները, գերատեսչությունները և տեղական ինքնակառավարման մարմինները վերահսկում են, թե ինչպես են բյուջեի առաջ իրենց պարտականությունները (ըստ եկամուտների և

ծախսերի) կատարում նրանց ենթակա ձեռնարկությունները և կազմակերպությունները և անմիջական մասնակցություն են ունենում բյուջեի ծախսերի մասի կատարմանը:

Ձեռնարկությունները մասնակցում են բյուջեի եկամտային մասի կատարմանը, շահույթից մասհանումներ են կատարում:

Բյուջեի կատարման բնագավառում կարևոր նշանակություն ունի բյուջեի եռամսյակային համամասնությունների պահպանումը:

Ներկայումս ըստ եկամուտների և ծախսերի կատարման եռամսյակային բաժանումը սահմանվում է կառավարության կողմից:

Բյուջետային համակարգի եկամուտների և ծախսերի, համամասնությունների կատարումը կանխորոշում են յուրաքանչյուր եռամսյակում բյուջետային եկամուտների ծավալը և ծախսերի ուղղությունը:

Բյուջեի եռամսյակային բաժանումը պայմանավորված է.

1) Օպերատիվ պահանջներով, տարվա եռամսյակների միջև եղած տարբերությամբ (տարվա ընթացքում եկամուտների մուտքերի և միջոցների ծախսման անհավասարությունը և այլն):

2) Որպեսզի միջոցառումներ ձեռնարկվեն յուրաքանչյուր եռամսյակի ներսում բյուջեի ճշգրիտ հավասարակշռման համար (առավել ոչ կարևոր ծախսերի փոխանցումը հաջորդ եռամսյակ, վերադաս բյուջեից ստորադասին միջոցների հատկացում և այլն):

3) Բյուջեների առավել մանրակրկիտ ստուգման անհրաժեշտությամբ:

Բյուջեների եռամսյակային բաժանման նախագծերը կազմվում են ֆինանսական մարմինների կողմից նախարարությունների, գերատեսչությունների ու համալսարանների ֆինանսական ծառայությունների կողմից ներկայացված նախահաշիվների ու հաշվեկշիռների եռամսյակային բաժանման հիման վրա: Դրանք համապատասխանաբար հաստատվում են կառավարության և համայնքների կողմից: Որից հետո այն դրվում է ֆինանսական մարմնի կողմից կազմվող համապատասխան բյուջեի ցանկի հիմքում՝ ըստ բյուջետային դասակարգման բոլոր ստորաբաժանումների: Ինչպես նշվել է բյուջեի ցանկի հիման վրա նախարարությունները և տեղական ինքնակառավարման մարմինները հաստատում են իրենց ենթակա հիմնարկների և ձեռնարկությունների նախահաշիվները և հաշվեկշիռները: Քացի ֆինանսական մարմիններից բյուջեի կատարման գործին ակտիվ մասնակցություն են ցուցաբերում նաև վարկային մարմինները, որոնք իրականացնում են բյուջեի դրամարկղային կատարումը:

Բյուջեի դրամարկղային կատարում ասելով, հասկանում ենք՝ հանրապետության Կենտրոնական և բանկային համակարգի մյուս

հաստատությունների կողմից դրսևորվող գործունեությունը ըստ բյուջետային նպատակների դրամական գումարների ընդունման, պահպանման և բաց թողման, ինչպես նաև բյուջեի կատարման ստուգման ուղղությամբ:

Բյուջեի դրամարկղային միասնության սկզբունքը դրամարկղի միասնության սկզբունքն է, համաձայն որի յուրաքանչյուր բյուջեի բոլոր եկամուտները կենտրոնացվում են այդ բյուջեն կատարող միասնական դրամարկղային մարմնում: Այդ մարմինները սահմանված կարգով դրամական միջոցներ են տալիս տվյալ բյուջեից նպասարկվող բոլոր հիմնարկ-ձեռնարկություններին: Հիմնարկներն իրավունք չունեն իրենց մոտ պահելու բաց թողնված գումարները և նրանցից ծախսեր կատարելու, նրանք պարտավոր են բոլոր եկամուտները հանձնել բյուջեն կատարող դրամարկղային մարմնին:

Հանրապետության պետական բյուջեի դրամարկղային կատարման հիմնական մարմինը բյուջետային համակարգի բոլոր օղակների համար հանդիսանում է հանրապետության կենտրոնական բանկը: Բանկում դրամական միջոցները պահպանվում են ըստ հանրապետության բյուջեի ֆինանսների նախարարության տնօրինության տակ, ըստ համայնքների: Ֆինանսական մարմիններն իրավունք ունեն վերահսկելու կենտրոնական բանկի կողմից բյուջեի դրամարկղային կատարումը և թերությունները հայտնաբերելու ղեկավարում պահանջներ դրանց վերացումը: Համաձայն կենտրոնական բանկի մասին օրենքի 32-րդ հոդվածի, կենտրոնական բանկը կառավարության լիազորված մարմնի հետ համատեղ սահմանված կարգով և պայմաններով, կառավարության ֆինանսական գործակալն է:

1) Իրականացնում է պետական բյուջեի և ներքին ու արտաքին պետական պարտքի սպասարկման հետ կապված գործառնությունները, ինչպես նաև վճարային այլ գործառնություններ: Բանկային համակարգի մարմինները ըստ կանոնադրությունների իրականացնում են:

2) Պետական հարկերից և տուրքերից սահմանված կարգով հանրապետական ու համայնքային բյուջեների համար մասնամուծների կատարում:

3) Հանրապետության բյուջեից ռիմնարկներին, ձեռնարկություններին և կազմակերպությունների համար բացված վարկերի շրջանակներում ծախսերի համար անհրաժեշտ միջոցների բաց թողում:

4) Համայնքների բյուջեների միջոցներից հիմնարկներին, կազմակերպություններին և ձեռնարկություններին ծախսերի համար միջոցներ բաց թողնելը նրանց հաշիվներում եղած միջոցներից:

5) Հանրապետության և համայնքների բյուջեների վրա գտնվող

հիմնարկ-ձեռնարկությունների և կազմակերպությունների հատուկ և այլ արտաբյուջետային միջոցների և դեպոզիտիվ գումարների ընդունումը և բաց թողումը:

6) Եկամուտների և ծախսերի հաշվառումը

7) Հանրապետությունում բյուջեի դրամարկղային կատարման ածական հաշվետվությունների կազմումը:

8) Համայնքների բյուջեների միջոցների հաշվառումը:

9) Հանրապետության բյուջեի գծով բացված վարկերի հաշվառումը, ինչպես նաև այդ վարկերի փոխանցումը բանկային համակարգի մի հաստատությունից մյուսը:

Ֆինանսական-իրավական գրականության մեջ այն կարծիքն է հայտնվում, որ բյուջեների դրամարկղային կատարման են մասնակցում նաև այլ մարմիններ, հատկապես, կապի նախարարության հիմնարկներ, զանձահավաքներ:

Արանք բոլորն էլ օժանդակ ապարատ են հանդիսանում բյուջեի դրամարկղային կատարման համար և ստեղծված են վճարողների հարմարավետության համար: Օրինակ, խնայողական բանկերը կատարում են պետական հարկերի և տեղական տուրքերի մուտք, զանձաններ բնակչությունից և արտաքին գումարները հաշվարկում են համապատասխան բյուջեներ: Բացի դրանից, նրանք վճարում են կենսաթոշակները: Կապի նախարարության մարմինները ընդունում են պետական, տեղական հարկերը, եկամուտները և արտաբյուջետային այն միջոցները, որոնք փաստացի և հեռագրային առաքման կարգով ուղղվում են բանկային հաշիվներ, ֆինանսական մարմիններին և տվյալ եկամուտները իր տնօրինության տակ ունեցող այլ հիմնարկների: Չանձահավաքի հատուկ դրամարկղները ստեղծվում են այն հիմնարկներին կից, որոնց կառավարության որոշմամբ իրավունք է տրված հավաքել եկամուտների որոշ տեսակ (մաքսատու, ԶԼԳՄ-ի մարմիններ, նոտարական գրասենյակ և այլն): Այդ դրամարկղները ստացված միջոցներից որպես կանոն որևէ ծախս կատարելու իրավունք չունեն:

Բյուջեի եկամուտների մի մասը կատարվում է կազմակերպությունների, ձեռնարկությունների և հիմնարկների, ինչպես նաև քաղաքացիների կողմից: Ձեռնարկությունը, կազմակերպությունը և հիմնարկությունը բյուջեին վճարումներ են կատարում իրենց և այդ գումարների ժամանակին ու լրիվ բյուջե մուտք լինելու պատասխանատվությունը լիովին դրված է նրանց վրա: Պրանք բյուջեի վճարումներ են կատարում ոչ կանխիկ հաշվարկների ձևով՝ իր հաշիվից համապատասխան միջոցներ բյուջեին փոխանցելու միջոցով: Պրա համար վճարողը լրացնում և բանկ է ներկայացնում 3 շրինակից բաղկացած վճարման հանձնարարություն (наращение

поручение) որում նշվում է վճարողի հաշվի համարը, ինչպես նաև վճարման անվանումը և գումարը: Այդ հանձնարարության առաջին օրինակը մնում է բանկում, իսկ 2-րդը բանկի նշումով ուղարկվում է համապատասխան ֆինանսական մարմին, 3-րդը՝ վճարողին:

Ժամկետը լրացած վճարումների համար բանկը բյուջե կատարելու փոխանցումների հանձնարարական է ընդունում նույնիսկ վճարողի հաշվում համապատասխան գումարի բացակայության դեպքում:

Քաղաքացիները, որպես կանոն, բյուջեին վճարումներ են կատարում ֆինանսական մարմինների կողմից վճարային ծանուցում ստանալուց հետո: Հիմնարկում մասն ծանուցման դերն է կատարում ռոճկացուցակը, որի մեջ քաղաքացին ծանուցվում է նրանից գանձվող եկամտահարկի մասին: Քաղաքացիների վճարումների հաշվին բյուջեի եկամուտի մասի գործադրումը կատարվում է 2 ձևով:

1. Եկամտահարկի՝ գումարները պահվում են աշխատավարձից կամ դրան հավասարեցված եկամուտներից:

2. Բյուջե կատարվող մնացած բոլոր վճարումները կատարվում են հենց իրենց քաղաքացիների կողմից կամ վճարային ծանուցման հիման վրա, կամ առանց դրա (պետական տուրքի վճարում): Վճարային ծանուցման մեջ նշվում է ֆինանսական մարմնի կողմից գանձվող հարկի չափը և վճարման ժամկետը: Բանկի բաժանմունքը վճարողին տալիս է անդորրագիր և համապատասխան ֆինանսական մարմնին տեղեկություն է հաղորդում ստացված վճարման մասին:

Բանկ մուտք ելող բոլոր եկամուտները փոխանցվում են հանրապետության կամ համայնքային բյուջեներին, որի համար բանկում բացվում են համապատասխան հաշիվներ:

Հայաստանի հանրապետության բյուջետային գործընթացը կարգավորող ֆինանսական օրենսդրությունը դեռևս գտնվում է ձևավորման պրոցեսում: Բյուջետային գործընթացի առանձին փուլերը կարգավորող օրենսդրական ակտերի բացակայության պատճառով բանկային գործառնությունների առանձին հիմնահարցերը շարունակում են մնալ վիճելի:

§ 5. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՏՆՕՐԻՆՈՂՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ծախսերի առանձին տեսակների համար հատկացվող գումարները ներկայացնում են բյուջետային վարկերը: Համաձայն բյուջետային իրավունքի բյուջեից ոչ մի ծախս չի կարող կատարվել առանց նրանում համապատասխան վարկի առկայության: Բյուջետային վարկավորումն ունի կարևոր իրավաբանական նշանակություն, առանց թույլտվության վարկերի, ծախսերի օգտագործումը ոչ նրանց ուղղակի նպատակին իրավախախտում է, որը կարող է հանգեցնել դատական պատասխանատվության: Իրավաբանորեն ձեռնարկության կամ հիմնարկության մոտ բյուջետային միջոցների որոշակի գումարներ կամ բյուջետային վարկեր ծախսելու իրավունքը ծագում է բյուջեների, ինչպես նաև եկամուտների և ծախսերի նախահաշիվները և հաշվեկշիռները հաստատելուց հետո: Փաստորեն մասն հնարավորությունը առաջանում է համապատասխան բյուջեից վարկերի բացմամբ:

Ներկայումս այս կարգը չի տարածվում համայնքների բյուջեների վրա, որոնցից ֆինանսավորումը կատարվում է ըստ հիմնարկների նախահաշիվներում սահմանված միջոցների եռամսյակային բաշխվածությամբ: Վարկերը հանրապետության բյուջեի գծով բացում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը, տեղերում տեղական ինքնակառավարման մարմինը:

Վարկի բացումը կայանում է նրանում, որ ֆինանսական մարմինները լիազորում են բանկին բյուջեից միջոցներ բաց թողնել համապատասխան մարմիններին որոշակի շրջանակներում:

Վարկի տնօրինողները հիմնարկությունների և գերատեսչությունների ղեկավարներն են, որոնց իրավունք է տրված իրենց հաստատությունների համար հաստատված նախահաշիվներով տնօրինել բյուջետային հատկացումները:

Իրավաբանական գրականության մեջ, ինչպես նաև տարբեր ժամանակաշրջաններում իրատեսակված ուսումնական դասագրքերում վարկ տնօրինողների տեսակների, նրանց իրավունքների և պարտականությունների հարցում մեկ միասնական տեսակետ գոյություն չունի: Այսպես, ըստ 1974թ. «Սովետական ֆինանսական իրավունքի» դասագրքի հեղինակների բյուջետային վարկերի տնօրինողները օրենքով վերապահված իրավունքների և պարտականությունների շրջանակներին համապատասխան կարելի է բաժանել երեք աստիճանի:

Իրավաբանական գրականության մեջ ճիշտ հակառակ կարծիքն են արտահայտում 1996թ. հրատարակված դասակարգի հեղինակները, ըստ որոնց բյուջետային վարկեր տնօրինողները իրենց իսկական վիճակով նպատակահարմար է անվանել

1. վարկի գլխավոր տնօրինողներ և
2. վարկերի երկրորդական տնօրինողներ¹:

Թվում է, թե առաջին և թե երկրորդ տեսությունների մեջ էական տարբերություններ չկան, քանի որ երկու դեպքում էլ բյուջետային վարկեր տնօրինողների իրավասության շրջանակների մեջ որևէ լուրջ փոփոխություն չի նկատվում:

Չետևաբար, ըստ իրենց տրամադրված իրավունքների վարկի տնօրինողները բաժանվում են երեք խմբի:

1. Վարկերի գլխավոր տնօրինողներ կամ 1-ին աստիճանի տնօրինողներ,
2. Վարկի 2-րդ աստիճանի տնօրինողներ,
3. Վարկի 3-րդ աստիճանի տնօրինողներ:

Հանրապետության բյուջեով որպես վարկերի գլխավոր տնօրինողներ հանդես են գալիս նախարարությունների, գերատեսչությունների ղեկավարները: Նրանք իրավունք ունեն

- ա) Իրենց տրամադրության տակ բացված վարկերը բաժանել ենթակա կազմակերպությունների և հիմնարկների միջև,
- բ) ծախսել նախարարության կամ գերատեսչության ապարատի պահպանման համար բաց թողնված բյուջետային միջոցները,
- գ) բյուջետային ծախսերը կատարել կենտրոնացված միջոցառումների վրա,
- դ) իրենց տրամադրված իրավունքների սահմաններում վարկերը նախահաշվի մի ստորաբաժանումից տեղափոխել մյուսը,
- ե) վարկերը բանկի իր հաշիվներից փոխանցել 2-րդ և 3-րդ աստիճանի վարկ տնօրինողների հաշիվներին:

Վարկի 2-րդ աստիճանի տնօրինողները այն հիմնարկությունների ղեկավարներն են, որոնք անմիջական կապ չունեն գլխավոր տնօրինողների հետ:

Վարկի 3-րդ աստիճանի տնօրինողները այն հիմնարկների և ձեռնարկությունների ղեկավարներն են, որոնք բյուջետային վարկերը ստանում են 1-ին և 2-րդ աստիճանի տնօրինողներից իրենց հիմնարկության կարիքների համար: Հանրապետության բյուջեից ֆինանսավորվող հիմնարկությունների համար նման իրավունքը տրվում է վարկի գլխավոր տնօրինողների կողմից, իսկ տեղական բյուջեների վրա գտնվող հիմնարկությունների ղեկավարներին

¹ Տե՛ս մանրամասն, "Финансовое право", "Бек", М., 1996, стр.173

տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

Վարկի 3-րդ աստիճանի տնօրինողների լիազորություններն հիմնականում հանգում են հաստատված նախահաշիվներով միջոցների ծախսմանը: Նրանք ուրիշ այլ իրավունքներով օժտված չեն:

Մասնավորապես նրանք իրավասու չեն իրենց համար բացված վարկերը փոխանցել վարկերի այլ տնօրինողներին, բացառությամբ այն վերադաս կազմակերպությանը փոխանցելուց, որից իրենք ստացել էին:

Բոլոր աստիճանի վարկի տնօրինողները կարող են վարկերի տնօրինման իրենց իրավունքները ամբողջությամբ կամ մասնակիորեն շնորհել իրենց տեղակալներին՝ այդ մասին պարտադիր կարգով տեղյակ պահելով ֆինանսական մարմին և սպասարկող բանկին:

Ինչպես նշվեց տեղական բյուջեի վարկերի գլխավոր տնօրինողները հանդիսանում են ենթակա տնտեսական կազմակերպությունների ղեկավարները, որոնց լայն իրավունքներ են տրված բյուջետային միջոցների տնօրինման գործում: Նրանք իրավունք ունեն

- 1) Միջոցներ փոխանցել ենթակա հիմնարկների և կազմակերպությունների ընթացիկ հաշիվներին:
- 2) Չետ բերել միջոցներ նրանց ընթացիկ հաշիվներից:
- 3) Հիմնարկների նախահաշիվներում վարկերը մեկ ստորաբաժանումից տեղափոխել մյուսը:
- 4) Միջոցներ ծախսել կենտրոնացված միջոցառումների վրա:
- 5) Դադարեցնել ենթակա հիմնարկներին վարկերի հատկացումը:
- 6) Կասեցնել արդեն իսկ տրամադրված վարկերը, եթե հիմնարկները կատարել են նախահաշվային կարգապահության խախտումներ:
- 7) Բյուջետային միջոցներ ծախսել սեփական ապարատի վրա:

Տեղական բյուջեների գծով վարկի 2-րդ աստիճանի տնօրինողներ, որպես կանոն չեն լինում:

Գյուղական համայնքի բյուջեների վարկերի գլխավոր տնօրինողները առանձնահատուկ տեղ են գրավում: Գյուղական բյուջեի գծով վարկերի 3-րդ աստիճանի տնօրինողներ չկան: Դրա ուժով գյուղական բյուջեի վարկերի գլխավոր տնօրինողները իրենց մեջ ամռվում են 1-ին և 3-րդ աստիճանի վարկի տնօրինողների իրավունքները: Գյուղական բյուջեի վարկերի գլխավոր տնօրինողների դերում կարող է հանդես գալ միայն ու միայն գյուղապետը և ուրիշ ոչ ոք:

Բյուջեի եկամտային մասի կառարման տեխնիկական պրոցեսը իրականացվում է հետևյալ կերպ.

հանրապետության բյուջեում վարկերը բացվում են բանկի հաստատություններում,

Վարկի բացումը կատարվում է ծախսային բաշխագրումների (распределение) հիման վրա, որոնք կազմվում են վարկերի գլխավոր տնօրինողների կողմից և ներկայասվում են ֆինանսների նախարարությունը: Վերջինս ստուգելուց հետո բաշխագրերը վավերացնում է իր կնիքով և տալիս տվյալ տնօրինողին սպասարկող բանկի բաժանմունքին:

Բյուջեի յուրաքանչյուր գլխավոր տնօրինողի համար բանկը կարող է բացել երկու բյուջետային հաշիվներ:

1. «Հիմնարկության ծախսեր»

2. «Վարկերի փոխանցումը ենթագերատեսչական հիմնարկներին և կենտրոնացված միջոցառումներին»:

Այս 2-րդ բյուջետային հաշվից վարկերի փոխադրումը վարկի ստորադաս տնօրինողներին կատարվում է բյուջետային հանձնարարության միջոցով:

Բյուջետային հանձնարարությունը, դա գլխավոր տնօրինողին սպասարկող բանկին ուղղված հրաման է: Նվազեցնել գլխավոր տնօրինողի բյուջետային հաշվի վարկերը և այլ նույն գումարով վարկ բացել ստորադաս տնօրինողին վերջինիս սպասարկող բանկի մասնաճյուղում:

Համայնքների բյուջեներով վարկերը բացվում են համապատասխան ֆինանսական մարմինների կողմից վարկերի անմիջապես գլխավոր տնօրինողին՝ շրջանցելով: Դրա համար էլ համայնքների բյուջեներով ստացված վարկերի հաշվառումը կատարվում է ոչ թե բանկի կողմից, այլ հենց իրենց տնօրինողների և ֆինանսական մարմնի կողմից: Համայնքների բյուջեներով բանկի բաժանմունքները ֆինանսավորվում են սոսկ վարկերի տնօրինողների ընթացիկ հաշիվներում եղած գումարների սահմանում: Այս դեպքում, որպեսզի վարկի գլխավոր տնօրինողը ապահովվի միջոցներով (վարկերով) համապատասխան ֆինանսական մարմինը դուրս է գրում վճարային հանձնարարություն, որի հիման վրա բանկը բյուջեի ընթացիկ հաշվից փոխանցում է կատարում գլխավոր տնօրինողի ընթացիկ հաշվին: 3-րդ աստիճանի յուրաքանչյուր վարկի տնօրինող ունի մեկ ընթացիկ հաշիվ, որի վրա և փոխանցվում են միջոցները՝ ըստ գլխավոր տնօրինողի վճարային հանձնարարության:

Վարկերի տնօրինողների իրավունքների իրականացման պրոցեսում նախահաշվային վարկերը ծախսելիս կարևոր պահ է բյուջետային վարկերի ստացումը բանկից: Բյուջետային միջոցների ծախսման պրոցեսում վարկը տնօրինողների մոտ ամենօրյա պարտականություն է առաջանում ստանալ բանկից այդ միջոցները: Բյուջետային հիմնարկները այդ միջոցները ծախսում են իրենց նախահաշիվներով նախատեսված միանգամայն տարբեր նպատակ-

ների համար, հատուկ փաստաթղթերի հիման վրա: Բանկից դրանք տրվում է կամ ոչ կանխիկ հաշվարկների կամ կանխիկ դրամի ձևով:

Եռամսյակային վարկերի հաշվին կանխավճարներ տրվում են միայն վարչա-տնտեսական ծախսերի ու գլխավորապես, ծառայողական գործուղումների համար: Վարչա-տնտեսական ծախսերի համար կանխավճարները տրվում են ֆինանսների նախարարության կողմից սահմանված գումարների շրջանակներում այն պաշտոնատար անձանց, որոնց վրա, ըստ նրանց ծառայության բնույթի, դրված է կամ հիմնարկի ղեկավարի կարգադրությամբ դրվում է նման ծախսեր կատարելը: Կանխավճարի չծախսված մասը վերադարձվում է գործուղումից վերադառնալուց ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում: Իսկ մնացած դեպքերում կանխավճարի ժամկետը լրանալուց հետո:

Վարկերի վերականգնումը կայանում է նրանում, որ նախահաշվի որևէ ստորաբաժանման գծով չծախսված գումարները ենթակա են վերադարձման բանկին հիմնարկության ընթացիկ հաշվին փոխանցելու համար: Վարկերի վերականգնման ժամանակ վարկերը վերականգնվում են միայն այն նախահաշվային ստորաբաժանումների գծով, որոնցով տրվել են բանկի կողմից:

Ըստ որում վարկը վերականգնման է ընդունվում միայն այն դեպքում, եթե նրանց վարկ տվող վճարային ծանուցման մեջ նշվում են տվյալ վարկի բոլոր ձեկվիդիտները, նախահաշիվը, բյուջեն, վարկերի տնօրինողի անվանումը, նրա ընթացիկ հաշվի համարը, հասցեն և այլն:

Երբ վարկերը վերականգնվում են ընթացիկ տարուց հետո և չի պարզվում վարկի պատկանելիությունը այս կամ այն նախահաշվային ստորաբաժանմանը, ապա նրանք մտցվում են համապատասխան բյուջեի եկամուտների մեջ՝ որպես «զանազան մուտքեր»:

Բացվող վարկերը, որպես կանոն, ծախսվում են իրենց նախահաշվային հոդվածներին և դրանց ստորաբաժանումներին լիովին համապատասխան: Նախահաշվային ստորաբաժանումներից կատարված ամեն մի շեղում դիտվում է որպես նախահաշվային բյուջետային կարգապահության խախտում: Սակայն, երբեմն, պրակտիկայում անհրաժեշտություն է զգացվում փոխել նախահաշվային վարկերի ուղղությունը: Այս դեպքում համաձայն գործող օրենսդրության փոփոխություն է կատարվում հաստատված տարեկան նպատակների մեջ: Նախահաշիվների վարկերի փոփոխման տարբեր տեսակների մեջ ամենից ավելի կիրառվում է վարկերի տեղաշարժը: Այն իրենից ներկայացնում է նախահաշվային նախնական նպատակներից նախահաշիվների առանձին ստորաբաժանումների փոփոխություն՝ մեծացնելու կամ նվազեցնելու ուղղությամբ: Բոլոր

դեպքերում վարկերի տեղաշարժը կատարվում է իրավական նորմերի հիման վրա, որոնք սահմանում են այդ տեղաշարժերը ըստ հանրապետության և համայնքների բյուջեների:

Հանրապետության բյուջեով տեղաշարժը մեկ նախարարության կամ գերատեսչության նախահաշիվը կատարվում է հանրապետության կառավարության թույլտվությամբ: Վարկերի տեղաշարժը միևնույն նախահաշիվի մեկ պարագրաֆից մյուսը կամ միևնույն նախարարության (գերատեսչության) ենթակա մեկ հիմնարկի նախահաշիվից մյուսը կատարվում է վարկի գլխավոր տնօրինողի կողմից, որի մասին հայտնվում է ֆինանսների նախարարությանը: Այսպիսով, վարկերի տեղաշարժը կատարվում է բոլոր դեպքերում համապատասխան մարմնի թույլտվությամբ: Բացի դրանից, ֆինանսական մարմինները վարկերի տեղաշարժի ժամանակ իրականացնում են նաև վերահսկիչ ֆունկցիաներ: Սակայն բոլոր դեպքերում արգելվում է վարկեր շարժել հետևյալ հոդվածներից

1. Աշխատավարձ, 2. Թոշակներ, 3. Կապիտալ ներդրումներ:

Ամեն մի խախտում դիտվում է որպես նախահաշվային - բյուջետային կարգապահության խախտում:

Վարկերի գլխավոր տնօրինողները հետևում են այն բանին, որ վարկերի ստորադաս տնօրինողները միջոցները ծախսեն նպատակային, համաձայն բյուջետային կարգապահության պահանջների: Անհրաժեշտության դեպքում գլխավոր տնօրինողները կարող են ուշացնել վարկերի բացումը, կասեցնել բացված վարկերով միջոցների բաց թողումը, ինչպես նաև ետ վերցնել և փակել վարկերը:

Վարկերի ետ վերցնելը կարող է տեղի ունենալ մի շարք դեպքերում (առաջադրանքի չկատարում, դրամական միջոցների պահանջի նվազում, հիմնարկի լուծարում և այլն): Վարկերի փակումը, որպես կանոն, կատարվում է դեկտեմբերի 31-ին տարվա ավարտի կապակցությամբ, սակայն այն կարող է կիրառվել նաև որպես սանկցիա (վարկերի ժամանակավոր փակում) ֆինանսական կարգապահության խախտման դեպքում (աշխատավարձի գերաժախտ հաստիքային կարգապահության խախտում և այլն):

Բյուջեի կատարման պրոցեսում կարող է առաջանա լրացուցիչ ծախսեր կատարելու անհրաժեշտություն, որոնք նախատեսված չեն բյուջեում: Օրինակ, բացվել են նոր հանքեր կամ տարերային աղետները վնաս են հասցրել երկրի տնտեսությանը: Նման ծախսերը չեն կարող նախատեսված լինել բյուջեն կազմելիս, սակայն մյուս կողմից էլ դրանց կատարումը անհետաձգելի է: Դրա համար էլ համաձայն «Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 19 հոդվածի, հանրապետության պետբյուջեում նախատեսվում են կառավարության պահուստային ֆոնդ, որոնք օգտա-

գործվում են չկանխատեսված ծախսերի ֆինանսավորման համար:

Պահուստային ֆոնդերից միջոցները բաց են թողնվում կառավարության որոշմամբ, այն գերատեսչության վարկերի գլխավոր տնօրինողի միջնորդությամբ, որը պետք է կատարի լրացուցիչ ծախսերը: Պահուստային ֆոնդից տրվող գումարները կոչվում են գերնախահաշվային վարկեր: Դրանց ծախսման համար կազմվում են լրացուցիչ նախահաշիվներ, որոնք հաստատվում են ճիշտ նույն կարգով, ինչ հիմնականները: Համայնքների բյուջեներում, նույնպես նախատեսվում են պահուստի ֆոնդեր, որը առանձին հոդվածով ներկայացվում է վարչական մասում:

Հանրապետության բյուջետային համակարգի բոլոր օղակներում բյուջետային վարկերի գործողությունը դադարեցվում է դեկտեմբերի 31-ին և նրանց հաշվին նոր տարում որևէ փոխանցում չի կատարվում: Հունվարի 1-ից բյուջետային միջոցները տրվում են սուս որպես նոր բյուջեի իրականացումներ: Դեկտեմբերի 31-ին պետբյուջեն կատարող մարմիններն այն ամփոփում են, այսինքն փակում են այն բոլոր հաշիվները, որոնց մեջ տարվա ընթացքում հաշվառվում էր բյուջեի եկամուտները և ծախսերի կատարումները ու տվյալ գործունեությունը ձևակերպում են համապատասխան գրառմամբ: Սկսվում է բյուջեի կատարման մասին հաշվետվության կազմումը: Բյուջեի կատարման ընթացքում ֆինանսական մարմինները, բանկային համակարգը և վարկերը տնօրինողները հաշվառում են բյուջետային միջոցների մուտքագրման և ծախսման բոլոր գործառնությունները: Դրա հիման վրա կազմվում են բյուջեի կատարման մասին պարբերական հաշվետվություններ (ամսեկան, եռամսյակային, կիսամյակային): Տարին վերջանալուց հետո կազմվում է տարեկան հաշվետվություն: Ֆինանսական մարմինները, օգտագործելով իրենց տվյալները, ինչպես նաև կենտրոնական բանկի տեղեկատվությունները և վարկերը տնօրինողների հաշվետվությունները, հաշվետվություն են կազմում համապատասխան բյուջեի կատարման մասին և տալիս վերադաս ֆինանսական մարմնին, իսկ ֆինանսների նախարարը՝ հանրապետության կառավարությանը, որը և նախորդ տարվա պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունը ներկայացնում է հանրապետության Ազգային ժողովի հաստատմանը: Ազգային ժողովի վերահսկիչ պալատի պետական բյուջեի կատարման մասին կառավարությունը տարեկան հաշվետվողթյան կապակցությամբ եզրակացություն է ներկայացնում Ազգային ժողովին¹, որը և հաստատում է պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը:

¹ Տե՛ս. ՀՀ օրենքը Ազգային ժողովի վերահսկիչ պալատի մասին, ընդունված ԱԺ կողմից 1996թ. մայիսի 29-ին (ՀՀ օրենքների ժողովածու 1995-1999թթ., Գիրք Ա, 1999թ.)

ԳԼՈՒԽ IX

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԸ

§ 1. ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՈՒՅԹԸ, ՆՐԱ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Հայաստանի հանրապետությունում կատարված սոցիալ-տնտեսական փոփոխությունները, սեփականության նոր ձևերը, ինչպես նաև ազատ շուկայական հարաբերությունները նոր տնտեսվարման պայմաններ են առաջադրում, որտեղ գերիշխող է ապրանքադրամական հարաբերությունները: Այս պայմաններում արտադրության կազմակերպման հիմնական օղակը հանդիսանում է տնտեսական կազմակերպությունը, որն հանդես է գալիս իրավաբանական անձի կարգավիճակով:

Տնտեսվարող սուբյեկտների ֆինանսական հարաբերությունները ազատ շուկայի պայմաններում դառնում են սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացման հեռանկարները կանխատեսող վճռական գործոն, որը պայմանավորված է ապրանքային արտադրության բնույթով, ներքին համախառն արդյունքի ձևավորման ու ծախսման առանձնահատկություններով:

Տնտեսական կազմակերպությունների ամենատարբեր ֆինանսական հարաբերությունները իրենց հաստատված դրսևորումներն են ստանում ձեռնարկությունների ֆինանսական պլանում:

Ձեռնարկությունների և տնտեսական մյուս կազմակերպությունների ֆինանսական պլանների միջոցով կոնկրետացվում են ձեռնարկության զարգացման ուղղությունները, որոշվում դրանց ապահովելու միջոցները, ցուցանիշները, ինչպես նաև տնտեսվարման այն մեթոդները, որոնց գործունեությամբ հնարավոր է հասնել արտադրական խնդիրների իրականացմանը:

Անկախ սեփականության ձևից տնտեսական կազմակերպությունների ֆինանսական պլանները իրենցից ներկայացնում են որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ռեսուրսների շարժի և համապատասխան ֆինանսական ռեսուրսների շարժի և հարաբերությունների գործընթաց:

Ինչ վերաբերում է տնտեսական կազմակերպությունների գործունեության ֆինանսական պլանավորմանը, հարկ է նշել, որ այն հանդես է գալիս որպես առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից իրականացվող նպատակասլաց գործողություն, որն ուղղված է ընդունված տնտեսական ու սոցիալական որոշումների արդյունավետության հիմնավորմանը, ելնելով նրանց ֆինանսավորման աղբյուրներով ապահովվածության, նախատեսված ծախսերի օպտիմալացման և վերջնական դրական արդյունքների ակնկալման հանգամանքներից¹:

Հայտնի է, որ անկախ տիրապետող արտադրական հարաբերությունների բնույթից, զարգացած ապրանքային արտադրության պայմաններում գործում են այնպիսի տնտեսական կատեգորիաներ, ինչպիսիք են արժեքը, արտադրության ծախսերը, գինը, շահույթը, վարկը և այլն:

Ազատ շուկայական տնտեսվարման պայմաններում ևս շահույթը և շահութաբերությունը մնում են տնտեսական կազմակերպությունների աշխատանքի արդյունավետության գնահատման վերջնական ցուցանիշները:

Տնտեսական կազմակերպությունների շահույթի էության ճիշտ ըմբռնման համար սկզբունքային նշանակություն ունեն արտադրական ծախսերը, որոնք բաղկացած են հաստատուն և փոփոխական կապիտալի ծախսումներից: Ընդ որում շահույթի աղբյուրը փոփոխական կապիտալն է: Շահույթը այսօր էլ հանդես է գալիս որպես ավելցուկ կապիտալի բոլոր ծախսումների նկատմամբ արտադրության բոլոր ձևերի համար:

Հաստատական շահերը և նյութական արտադրության օբյեկտիվ պայմանները մշտապես ուշադրության կենտրոնում են պահել շահույթի բաշխման մեխանիզմը: Պատահական չէ, որ տնտեսական բարեփոխումների հիմնահարցերից մեկը այսօր հանդիսանում է տնտեսական կազմակերպությունների շահույթների գնահատման և բաշխման իրավական կարգավորումը:

Անդրադառնալով շահույթի էությունը՝ դժվար չէ նկատել, որ այն տնտեսական կազմակերպություններում, ձեռնարկություններում

¹ Տե՛ս, Լ.Բադախյան, Կարճաժամկետ ֆինանսական կանխատեսումը արտադրական կազմակերպություններում, «Տնտեսագետ», Ե., 2000, էջ 10:

հանդես է գալիս որպես ստեղծված գուտ եկամտի մի մասը, նրա դրսևորման ձևերից մեկը:

Հանրապետությունում գործող «Շահութահարկի մասին» օրենքի 6-րդ հոդվածում կոնկրետացված է հարկվող շահույթի բովանդակությունը, որտեղ ասված է, որ այն շահույթը հարկատուի համախառն եկամտի և տվյալ օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է:

Զնայած ֆինանսաիրավական ակտով պարզեցված է հարկվող շահույթի իրավական բովանդակությունը, այնուամենայնիվ իրավական ակտերում «շահույթ» տնտեսական կատեգորիայի տակ ներառվում են մի շարք հասկացություններ, որոնք կարևոր խնդիր են դարձնում *շահույթի կազմը* որոշելը:

Զեռնարկությունների (անկախ սեփականության ձևից) գործունեության հիմնական նպատակի՝ շահույթի ստացման գործում սովորաբար գլխավոր դերը պատկանում է գործառնական բնագավառին, սակայն շատ հաճախ գործնականում շահույթ է ստացվում նաև այլ գործունեությունից:

Գործող հաղկային օրենսդրությունը, այդ թվում «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքը «համախառն շահույթ» կատեգորիան չի օգտագործում, սակայն արտասահմանյան մի շարք պետությունների շահութահարկին վերաբերվող իրավական ակտերում խոսվում է համախառն շահույթի մասին¹:

Ֆինանսական այս կատեգորիաների տնտեսական բովանդակության գնահատման հարցում ընդունելի պետք է համարել պրոֆ. Լ.Բադանյանի վերլուծությունները և գիտական հետևությունները, որի համաձայն *համախառն շահույթը ձեռնարկատիրական ընդհանուր գործունեությունից ստացվող շահույթի ընդհանուր ծեփալն է*, որի մեծության վրա ազդում է ձեռնարկության գործունեությունից կախված և անկախ գործոնների մի ամբողջություն²:

Տնտեսական կազմակերպությունների *համախառն շահույթի* կազմի մեջ մտնում են. 1) աշխատանքների, ծառայությունների ինչպես նաև արտադրանքի իրացումից ստացված հասույթը, 2) հիմնական ֆոնդերի և գույքի այլ տեսակների իրացումից գոյացած հասույթը և 3) ծախսերի կրճատումից և այլ գործառնություններից ստացված հասույթը:

Հանրապետության տնտեսական կազմակերպությունների, հիմնարկ-ձեռնարկությունների շահույթի իրավական ռեժիմը սահմանող

ֆինանսական ակտերով չի սահմանափակվում արտադրանքի, հիմնական ֆոնդերի, գույքի, ինչպես նաև չիրացված գործունեությունից ստացված շահույթի հասույթային հիմնահարցերը:

Արտասահմանյան պետությունների շահութահարկի մասին օրենսդրություններում լուսաբանված են ոչ միայն շահույթի հիշատակված տեսակների հասկացությունը, այլև այնպիսի շահույթի տեսակներ, ինչպիսիք են ձեռնարկությունների *արտաթուփային* շահույթը, որը դրսևորվում է, որպես տնտեսվարող սուբյեկտին ուղղակի հասցեագրված այնպիսի պարտականություն, որով նա պարտավոր է արտահանվող ապրանք հասույթի 50%-ն իրացնել (վաճառել) լիազորված բանկային մարմնի միջոցով ներքին շուկայի արտաթուփային կուրսով:

ՀՀ «Շահութահարկի մասին» օրենքի իրավական առանձնահատկությունները վկայում են, որ համախառն շահույթը իր բովանդակությամբ և ներքին կազմով էապես տարբերվում է *հարկվող շահույթից*, որը հանդես է գալիս որպես ձեռնարկությունից գանձվող վճարի աղբյուր:

Ինչ վերաբերում է տնտեսական կազմակերպությունների համախառն եկամուտին, ապա ֆինանսական օրենսդրությամբ այն դիտարկվում է հաշվետու ժամանակաշրջանում որպես հարկատուի կողմից ստացված բոլոր եկամուտների ամբողջություն, որտեղ օրենսդիրը էական չի համարում դրանց ստացման աղբյուրները: «Շահութահարկի մասին» օրենքի 7-րդ հոդվածում սպառնիչ թվարկված են այդ պայմանները, որոնց թվին են դասվում, արտադրանքի, ապրանքների, ծառայությունների, փոխատվությունների, վարձակալության, վնասի հատուցման, տույժ ու տուգանքների, հայցային վաղեմությունը կորցրած կրեդիտորական պարտքերի դիմաց փոխհատուցումները և այլն:

Տնտեսական կազմակերպությունները, ձեռնարկությունները շահութահարկերը վճարելուց հետո տնօրինում են շահույթի մնացած մասը, որը ընդունված է համարել ձեռնարկության *զուտ շահույթ*:

Տնտեսական կազմակերպությունների զուտ շահույթի տնօրինման իրավական երաշխիքները ամրապնդված են գործող ֆինանսական օրենսդրությամբ, համաձայն որի ոչ մի կազմակերպություն, այդ թվում նաև պետությունը, իրավունք չունի միջամտելու զուտ շահույթի օգտագործման ուղղություններին: Տնտեսական կազմակերպությունները սեփական շահույթի օգտագործման առաջնայնությունները որոշում են շուկայական պայմաններից ելնելով:

Ինչպես ցույց է տալիս գործնական կյանքը, տնտեսվարող սուբյեկտները շահույթը ուղղում են հիմնական և շրջանառու միջոցների ձեռք բերմանը, փոխառությունների և վարկերի դիմաց

¹ Տե՛ս նախաձայն. ● налоги на прибыль предприятий, организаций (ст. 2 п. 2.3.4.6), BBC РФ. 1992 N11, 34:

² Լ.Բադանյան, ԵՂ.աշխ. էջ 113

տոկոսների վճարման նպատակներին և այլ:

Ազատ շուկայական հարաբերությունների պայմաններում ձեռնարկությունների և տնտեսական կազմակերպությունների շահույթի մեծության վրա ազդում են այնպիսի ցուցանիշներ, որոնք պայմանավորված են տնտեսվարող սուբյեկտի գործունեությամբ նրա լավ կամ վատ աշխատանքով:

Այդպիսի ցուցանիշներ են ինքնարժեքը, արտադրանքի իրացումը, տեսականին և որակը, որոնք ըստ էության ոչ միայն ուղղակի վկայում են շահութաբերության մասին, այլև իրավական իմաստով արտահայտում են սպառողների շահերը:

**§ 2. ԱՐՏԱԴՐԱԿԻ ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ԵՎ ՄՅՈՒՄ
ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՇԺՄԸ ԱՁՍ
ԸՈՒԿԱՅԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Տնտեսական կազմակերպությունների, ձեռնարկությունների և հիմնարկների արտադրանքի ինքնարժեքը տնտեսական գործունեության մի այնպիսի ցուցանիշ է, որի մեջ իր ամփոփակամ արտահայտությունն է գտնում աշխատանքի արտադրողականության բարձրացումը, հետևաբար և միավոր արտադրանքի մեջ կենդանի ու առարկայացված աշխատանքի քանակի կրճատումը¹:

Արտադրանքի ինքնարժեքի միասնական իրավական ընթրնումը ելնում է պետության հարկային քաղաքականության, տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ միասնական հարկային քաղաքականության կիրառման սկզբունքներից: Այս սկզբունքների պահանջների հաշվառմամբ է մշակվել և ընդունվել ՀՀ «Շահութահարկի մասին» օրենքը, նպատակ ունենալով սեփականության տարբեր ձևերի հիման վրա գործող տեղական կազմակերպությունների համար սահմանել ինքնարժեքի միասնական չափանիշներ, որի իրավական արտահայտման ձևը հանդիսանում է շահութահարկը:

Շուկայական հարաբերությունների և հատկապես մրցակցության պայմաններում տնտեսական կազմակերպությունների գործունեության գնահատման հիմնական ցուցանիշներից մեկը մնում է ինքնարժեքը: Այսօր ինքնարժեքը իր տնտեսական թուվանդակության մեջ ներառնում է ձեռնարկությունների կատարած ծախսումների հասարակական պահանջը, արտադրական և շրջանառու ֆոնդերի սպառված մասի արժեքը:

Տնտեսական կազմակերպությունները, ելնելով շուկայական հարաբերությունների պահանջից, իրենք են պլանավորում ինքնարժեքը:

Չնայած արտադրանքի իրացումը մեծամասամբ պայմանավորված է շուկայական պահանջով, այնուամենայնիվ ինքնարժեքը հանդես է գալիս որպես ձեռնարկության տնտեսական հզորության ապահովման կենսական ցուցանիշը և ֆունկցիոնալ կապի մեջ է շահույթի չափի հետ, նրա իջեցումը հակադարձ համեմատական է շահույթի մեծությանը:

Տնտեսական կազմակերպությունների ինքնարժեքը արտացոլող ծախսերն իրենց իրավական կարգավորումը ստացել են ՀՀ «Շահութահարկի մասին» օրենքի 10, 12 և 13-րդ հոդվածներում, որտեղ սպառիչ թվարկված են այն ուղղությունները, որտեղ կարգավորող ծախսերը ունեն իմպերատիվ բնույթ:

Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետում ասվում է, որ ծախս է համարվում հաշվետու տարվա ընթացքում ակտիվների արտահոսքը, նվազումը կամ պարտականությունների աճը, որոնք հանգեցնում են հարկատուի սեփական կապիտալի նվազեցմանը: Եւայն իրավական ակտով ծախսերի թվին են դասվում, մասնավորապես՝

ա) նյութական ծախսերը, բ) աշխատանքի վարձատրման և դրան հավասարեցված այլ վճարները, գ) զբաղվածության, կենսաթոշակային, սոցիալական ապահովագրության համար վճարները, դ) ամորտիզացիոն մասհանումները, ե) վարկերի և այլ փոխառությունների տոկոսները, զ) գործուղումների, տույժերի, տուգանքների և օրենքով նախատեսված այլ ծախսեր:

Ամորտիզացիոն մասհանումները՝ որպես ինքնարժեքը բնութագրող ծախսեր, ուղղակի կապի մեջ են գտնվում տնտեսական կազմակերպությունների հարկվող շահույթի հետ: Որպես կանոն, հարկվող շահույթը որոշելիս, տնտեսական կազմակերպություններին իրավունք է վերապահված համապատասխան եկամուտը նվազեցնել գործունեության մեջ գտնվող, օգտագործվող և մաշվածքի ենթակա հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների գումարի չափով, որոնք հաշվարկվում են՝ ելնելով հիմնական միջոցների տվյալ խմբի համար սահմանված ամորտիզացիոն նվազագույն ժամկետները:

Ֆինանսական ակտերով սահմանված ինքնարժեքը ամբողջական դարձնող այլ ծախսերն արտահայտվում են հիմնական միջոցների վրա կատարված նորոգման, արդիականացման վարձակալված հիմնական միջոցների նույնարժանդակ, ինչպես նաև բնական պաշարների արդյունահանման, երկրաբանական, երկրաբանական հետախուզման, զիտահետազոտական և նախագծահետազոտական

¹ Տե՛ս ժամրամասն. Վ.Ե.Խյղաթյան, Արտադրության շահութաբերությունը և մաթեմատիկական մեթոդները, «Հայաստան», Ե., 1986, էջ 25

աշխատանքների վրա կատարված ծախսերը:

Տնտեսական բոլոր կազմակերպությունների, հատկապես շահույթ հետապնդող առևտրային կազմակերպությունների շահույթի մեծության վրա ազդող ապրանքի գինը, ինքնարժեքը, տեսականին, որակը և իրացման ծավալը փոխադարձաբար շաղկապված միեւրոյն տնտեսական հարաբերության առանձին բաղադրամասեր են, որոնցից յուրաքանչյուրը ազատ շուկայական հարաբերություններում անբաժան կապի մեջ է մյուսների հետ, ունի նորմատիվային իրավական կարգավորում:

Տնտեսական կազմակերպությունների շահութաբերության վրա ազդում են միախուսված այնպիսի գործոններ, ինչպիսիք են թողարկվող արտադրանքի որակը, տեսականին, դիմացկունությունը, հուսալիությունը, որոնք իրավական հնարավորություններ են ստեղծում ապրանքի իրացման համար:

Ճեղքարկության պատրաստի արտադրանքի իրացումը և շուկայական սպուռը վկայում են այն մասին, որ տվյալ տնտեսվարող սուբյեկտի արտադրանքը ունի հաւարական ճանաչում:

Յետևաբար, ապրանքի իրացումը ընդունվում է, որպես վաճառված ապրանքի կամ մատուցված ծառայությունների դիմաց գնորդներից ստացվող գումարներ, որոնք խոսում են տվյալ ձեռնարկության շահութաբերությամբ բարձր մակարդակի մասին և հուսալի երաշխիք են մրցակցության համակարգում ձեռնարկության տնտեսական տեղի կայունությունն ապահովելու գործընթացում:

§ 3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԳԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Սեփականության տարբեր ձևերի հիման վրա գործող տնտեսական կազմակերպությունների բազմաբնույթ ֆինանսական հարաբերությունները, նրանց ապագա հնարավոր զարգացումների կանխատեսումները իրենց խտացված արտահայտությունն են ստանում արտադրական ֆինանսական պլաններում:

Գիմարկ-ձեռնարկություններում արտադրական ֆինանսական պլանը տնտեսական գործունեության ծրագիր է, որը կոչված է ապահովելու պլանային առաջադրանքների կատարումը, արտադրական հոգրությունների և էլիմնական ֆոնդերի առավել լրիվ օգտագործումը, արտադրությամբ արդյունավետության ամնշեղ բարձրացումը և միվագաճույն ծախսերով առավել արդյունքների

ստացումը:

Ֆինանսական պլանը տնտեսական կազմակերպության կոնկրետի վի աշխատանքի միասնական պլանն է. Այն ընդգրկում է արտադրանքի թողարկման և իրացման, տեխնիկական զարգացման, նոր արտադրատեսակների արտադրության, ֆոնդերի օգտագործման բարելավման, ինքնարժեքի իջեցման, շահույթի ավելացման և այլ հիմնախնդիրներ:

Տնտեսական կազմակերպությունների եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը արտահայտում է ֆինանսական ռեսուրսների ձևավորման և օգտագործման գործընթացը մերկա շուկայական հարաբերություններում:

Ներկայումս ձեռնարկությունների ֆինանսական պլանների կազմակերպման, նրա կառուցվածքի իրավական կարգավորման հարցերը օրենսդրական ամրապնդում չեն ստացել, բացառությամբ պետական սեփականություն կազմող ձեռնարկությունների, որոնք գործում են կառավարության և նախարարությունների կողմից ընդունված նորմատիվային և պետական ակտերով: Պետական սեփականությունը կազմող ձեռնարկությունների թվաքանակը զնալով նվազում է կապված սեփականաշնորհման հետ: Այնուամենայնիվ, տնտեսական կազմակերպությունները գործում են անհատական ֆինանսական պլանների հիման վրա, որոնք կազմվում են սեփական նախաձեռնությամբ:

Այսօր առտադրության, մասնավորապես, և արդյունաբերության ոլորտում գործում են եկամուտների և ծախսերի հաշվեկշիռի մի քանի տեսակներ: Հաշվեկշիռի տարբերակներից մեկը կառուցվում է ֆինանսական ռեսուրսների վրա և իրենից ներկայացնում է նախկին պետականության օրենսդրությունից կատարված ֆինանսական պլանի փոփոխված ծև, որը հարմարեցված է ժամանակակից շուկայական էկոնոմիկայի պահանջներին:

Պետական ձեռնարկությունների ինչպես նաև սեփականության մյուս ձևերի վրա հիմնված կազմակերպություններում, ֆինանսական պլանները կազմվում են ֆինանսական կամ տնտեսական ծառայությունների կողմից մեկ կամ մեկից հինգ տարիների համար եռամսյակային բաժանումներով:

Շուկայական էկոնոմիկայի պայմաններում ձեռնարկությունների տնտեսական գործունեության տարեկան ֆինանսական պլանները կազմելիս հիմք է ընդունվում ձեռնարկության զարգացման հեռանկարային ծրագիրը, ապագա արտադրական-տնտեսական մատակարարման պայմանագրերը, կատարվում են համապատասխան տեխնիկա-տնտեսական հաշվարկներ: Ֆինանսական պլանների նորմատիվների մեջ իրենց արտահայտությունն են գտնում աշ-

խատանքի կազմակերպման, գիտատեխնիկական նորագույն նվաճումների հիման վրա գործող տեխնոլոգիական պրոցեսների, նորագույն սարքավորումների, արտադրական տարածությունների, նյութական և ֆիզիկական ռեսուրսների օգտագործման մակարդակը և արդյունքի որակի բարձրացումը, ինչպես նաև ինքնարժեքի և շահութաբերության ցուցանիշները:

Տնտեսական կազմակերպությունների ֆինանսական պլանները կազմված են չորս բաժիններից.

- 1) եկամուտներ և մուտքեր
- 2) ծախսեր և հատկացումներ
- 3) վարկային փոխհարաբերություններ
- 4) փոխհարաբերություններ բյուջեի հետ¹:

Ֆինանսական պլանի առաջին բաժինը, որը արտահայտում է *եկամուտները և մուտքերը* իր մեջ ներառում է, ԱԱՀ, Ակցիզային հարկը, համախառն շահույթը, այդ թվում.

- ապրանքային արտադրանքի իրացումից
- ոչ պարենային արտադրանքի իրացումից
- ինվեստիցիոն գործունեությունից, ոչ ընթացիկ ակտիվների մաշվածք, մուտքեր կենտրոնացված ֆոնդերից, կապիտալ ներդրումների ապակենտրոնացված աղբյուրներ, երկարատև վարկեր, մուտքեր վարձակալական պարտավորություններից, այլ եկամուտներ, ընդամենը եկամուտներ և մուտքեր:

Ծախսերը և հատկացումները ամփոփում է կապիտալի ներդրումները, այդ թվում՝

- տեխնիկական վերազինման և վերանորոգման համար
- ոչ արտադրական շինությունների համար, շրջանառու կապիտալի լրացում և աճ, հատկացումներ սպառման ֆոնդին, երկարատև ֆինանսական ներդրումներ, երկարատև վարկերի մարում, վարկային տոկոսների վճարում, հատկացումներ պահուստներին և շահաբաժիններին, այլ ծախսեր և հատկացումներ:

Ֆինանսական պլանի երրորդ բաժինը վերաբերում է *վարկային փոխհարաբերություններին* Այս բաժնում արտացոլվում է ինչպես բանկային վարկի գումարները, այնպես էլ վարկի մարման ծախսերը և վարկի օգտագործման տոկոսները:

Ձեռնարկության ֆինանսական պլանի չորրորդ բաժնում արտացոլվում է *փոխհարաբերությունները բյուջեի հետ* որտեղ կոնկրետացվում են գործող հարկային օրենսդրությամբ բյուջեին վճարումները, այդ թվում.

- ԱԱՀ,

- ակցիզային հարկ,
- շահութահարկ,
- այլ վճարումներ, ինչպես նաև ստացումներ բյուջեից,
- կապիտալ ներդրումների, շրջանառու կապիտալի լրացման և այլ ծախսերի համար:

Տնտեսական կազմակերպությունների ֆինանսական պլանները ըստ անհրաժեշտության կարող են ընթացքում լրացվել եկամուտների և ծախսերի կանխատեսման և արտադրական ծրագրի այլ ցուցանիշներով:

Ձեռնարկությունները, հիմնարկները, ելնելով շուկայական էկոնոմիկայի պահանջներից, իրենց ֆինանսական պլանները կազմելիս ղեկավարվում են իրավական, մաթեմատիկական մոդելավորման և այլ հանրահայտ մեթոդներով:

Տնտեսական կազմակերպությունների ֆինանսական պլանը հաստատվում է նրա ղեկավարի կողմից և հանդիսանում է համապատասխան ձեռնարկության ֆինանսական գործունեության իրավական փաստաթուղթ: Այլ խոսքով, այն դրվում է ֆինանսապլանային իրավական ակտերի շարքին, որը և սահմանում է տնտեսական մարմնի ֆինանսական իրավունքները և պարտականությունները, հատկապես նրա փոխհարաբերությունների իրավական շրջանակը պետական բյուջեի հետ:

¹ Տե՛ս. Финансовое право, Из. "БЕК", М., 1996, стр. 215

ՉԼՈՒԽ X

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

§ 1 ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ՀԱՍՎԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՍՎԱՐԳԸ, ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Իրավաբանական գրականության մեջ պետական եկամուտների հասկացության հարցը դեռևս պատշաճ մշակում չի ստացել:

Ինչպես իրավաբանների առանձին աշխատություններում, այնպես էլ «Ֆինանսական իրավունք» առարկայի տարբեր թվականներին հրատարակված ուսումնական դասագրքերում այն միտքն է զարգացվում, համաձայն որի, պետական եկամուտ ասելով ընդունված է հասկանալ այն տարբեր դրամական միջոցները, որոնք պետությանն են անցնում ներքին համախառն արդյունքի և ազգային եկամուտի բաշխման և վերաբաշխման գործընթացում և որոնք պետությունը իր հատուկ ֆինանսա-վարկային մարմինների միջոցով հավաքում և ծախսում է իր ներքին և արտաքին խնդիրներից բխող ֆունկցիաների իրականացման համար:

Երբեմն իրավաբանական գրականության մեջ ավելի ընդարձակ մեկնաբանություն է տրվում պետական եկամուտներին, նրան վերագրելով այնպիսի ֆունկցիա, որի ուժով պլանային կարգով հավաքվում, բաշխվում և վերաբաշխվում են մեր երկրի համապետական ֆոնդի միջոցները:

Այսօր բոլոր եկամուտների, այդ թվում նաև պետական եկամուտների ընդհանուր տնտեսական աղբյուրներն են կազմում նյութական արտադրության արդյունքում ստեղծվող ազգային եկամուտը:

Ազգային եկամուտը, որը հանդես է գալիս որպես նոր արդյունք ֆինանսա-իրավական նորմերի ակտիվ ներգործության և իրավունքի բաշխիչ ֆունկցիայի շնորհիվ ենթարկվում է տրոհման, որի հետևանքով այն ենթարկվում է բաշխման և վերաբաշխման: Ինչպես

բաշխման, այնպես էլ վերաբաշխման շնորհիվ պետական եկամուտների ամենատարբեր տեսակները իրենց դրսևորումն են ստանում եկամուտների հետևյալ խմբերի մեջ:

- 1) Բնակչության տարբեր խմբերի՝ բանվորների, ծառայողների, գյուղական և գյուղացիական տնտեսությունների եկամուտներ:
- 2) Ձեռնարկությունների, հիմնարկների, կոոպերատիվների եկամուտներ:
- 3) Ոչ արտադրական ոլորտի այլ կազմակերպությունների եկամուտներ:
- 4) Պետական եկամուտներ, որոնք կարող են ձևավորվել ամենատարբեր աղբյուրներից՝ նվիրատվությունից, տիրազուրկ գույքից և այլն:

Իրավաբանական գրականության մեջ վերջին ժամանակներս այն կարծիքն է հայտնվում, համաձայն որի պետական եկամուտները կարելի է պայմանականորեն բաժանել երկու հիմնական ձևի:

ա) Պետական կենտրոնացված եկամուտներ:

բ) Ապակենտրոնացված եկամուտներ:

Պետական ընդհանուր եկամուտների բաղկացուցիչ մասն են կազմում պետության անմիջական սեփականությունը կազմող պետական սեկտորում ձևավորվող զուտ եկամուտները, կոլեկտիվ սեփականության վրա ձևավորվող տնտեսական կազմակերպությունների եկամուտների մի մասը, ինչպես նաև բնակչությունից հարկադրման ճանապարհով գանձվող պետական հարկերը և գանձումները:

Հայաստանի Հանրապետությունում պետական կենտրոնացված եկամուտների հիմքն են կազմում պետական կոլեկտիվ և քաղաքացիների գույքային սեփականությունը: Սեփականության ձևերով պայմանավորված է պետական բյուջեի եկամուտների համակարգը: Այս ձևերին համապատասխան, պետական բյուջե մուտք լինող եկամուտները, ըստ տնտեսական բովանդակության բաժանվում են մուտքեր պետական և կոլեկտիվ տնտեսություններից, ձեռնարկություններից, կազմակերպություններից և մուտքեր բնակչությունից:

Հանրապետության պետական բյուջեի եկամուտները սահմանվում են տնտեսության զարգացման ճրագրերի հիման վրա: Ըստ հիմնական տեսակների սրանք հարկային եկամուտներ են:

Հանրապետության տնտեսության հաջող զարգացումը, կուտակումների ավելացումը կարող են նախադրյալներ ստեղծել բնակչությունից բյուջե կատարվող վճարումների իջեցման համար: Եկամուտների յուրաքանչյուր տեսակ ունի իր առանձնահատկությունները, որը հանդես է գալիս ձևավորման, օգտագործման և բյուջե

մուտք լինելու կարգի մեջ:

Դատելով պետական եկամուտների այսպիսի կազմից՝ դժվար չէ նկատել, որ պետական եկամուտներ հասկացությունը ավելի լայն է պետական բյուջեի եկամուտից, քանի որ այն իր մեջ պարունակում է բյուջեի և պետական ձեռնարկությունների ու տնտեսական մյուս կազմակերպությունների ու հիմնարկների եկամուտները: Պետական եկամուտներին վերաբերվում է ձեռնարկությունների և կազմակերպությունների մաքուր եկամուտը: Նրանց կողմից արտադրանքի իրացումից կամ մատուցված ծառայությունների համար ստացված միջոցների այն մասը, որը գնում է արտադրության սպառվող մասի փոխհատուցման, աշխատավարձի և այլ արտադրության ու արտադրանքի իրացման համար անհրաժեշտ ծախսերի վրա, պետական եկամուտ չի հանդիսանում: Բյուջե փոխանցվում է ձեռնարկությունների և կազմակերպությունների եկամուտի սոսկ մի մասը, նրա մյուս մասը մնում է ձեռնարկություններին և կազմակերպություններին արտադրության ընդլայնման, խրախուսանքի ֆոնդերի ստեղծման և այլ նպատակների համար: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ դրամական ռեսուրսների մի մասն էլ պետության տնօրինության տակ է անցնում անկախ բյուջեից, ֆինանսական այլ ինստիտուտների օգնությամբ, օրինակ՝ կյանքի և ոչ կյանքի ապահովագրության, ինչպես նաև խնայողական դրամարկղների ավանդների տեսքով:

Պետական եկամուտները օգտագործվում են ընդլայնված վերարտադրության ապահովման, հանրային ունեցվածքի ավելացման և ողջ հասարակության աճող պահանջների բավարարման համար: Մյուս կողմից, եկամուտների համակարգի կազմակերպման և համապատասխան եկամուտների կենտրոնացման ժամանակ պետությունը ներազդում է նյութական արտադրության ողջ պրոցեսի, արտադրական հարաբերությունների, տնտեսվարող սուբյեկտների կուտակումների և բնակչության եկամուտների առաջացման վրա: Այստեղից էլ բխում են պետական եկամուտների որպես իրավական ինստիտուտի խնդիրները:

Պետական եկամուտները նպատակ են հետապնդում ստեղծված ազգային եկամուտի շրջանակներում կազմավորել հնարավորին չափ առավելագույն դրամական միջոցների ֆոնդեր: Մյուս խնդիրն այն է, որ պետական եկամուտները նպաստում են առևտրային հաշվարկի ամրապնդմանը և խնայողության ռեժիմի կազմակերպմանը, ներքին ռեզերվների հայտնաբերմանը և օգտագործմանը, սիստեմատիկ հսկողություն են ապահովում տնտեսության առանձին ճյուղերի ֆինանսների վրա: Կարգավորում են բնակչության առանձին խմբերի եկամուտները:

Պետական եկամուտների ձևավորման պրոցեսում ծագող հարաբերությունները ինչպես նաև դրամական միջոցների հավաքագրման և օգտագործման հարաբերություններն իրենց էությամբ տնտեսական, ֆինանսական հարաբերություններ են, որոնք որպես այդպիսին օբյեկտիվ են և պայմանավորված են համապատասխան կարիքները բավարարելու համար ազգային եկամուտը բաշխելու անհրաժեշտությամբ: Տվյալ հարաբերությունները գոյություն ունեն պետության իշխանա-կազմակերպական գործունեության հետևանքով: Պետական եկամուտների, ինչպես ֆինանսական ամբողջ համակարգի կազմակերպումը կառուցվում է պետության համապատասխան իրավական ակտերով և այդ բնագավառում ծագող հարաբերությունները հանդես են գալիս ֆինանսական - իրավական հարաբերությունների տեսքով:

Պետական եկամուտների կազմակերպման իրավական հիմքերը ամրապնդված են Հայաստանի հանրապետության սահմանադրությունով: Նրանք իրենց հետագա զարգացումն ստացան «Հայաստանի հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում:

Համաձայն սահմանադրության եկամուտների և հարկերի սահմանումը վերապահված է հանրապետության պետական իշխանության և կառավարման բարձրագույն մարմիններին:

Տնտեսական կազմակերպությունների վճարումները, սահմանվում են ՀՀ հարկային օրենսդրությամբ և դրանց համապատասխան կառավարության որոշումներով ու կարգադրություններով: Բնակչությունից զանձվող հարկերը նույնպես սահմանվում են հանրապետության բարձրագույն օրենսդիր մարմնի կողմից:

Հանրապետության իրավասությանն է պատկանում պետական և տեղական հարկերի, տուրքերի և ոչ հարկային եկամուտների սահմանումը:

Իրավաբանական գրականության մեջ բյուջետային եկամուտների ընդհանուր համակարգը բաժանում են եկամուտների առանձին խմբերի և տեսակների: Եկամուտների մի մասը սահմանազատվում է իր սոցիալ-տնտեսական բնույթով, երկրորդ խումբ եկամուտներին ներհատուկ են առաջացման աղբյուրները: Բյուջետային կենտրոնացված եկամուտները տարբերվում են նաև միջոցների հավաքման ձևերով և մեթոդներով, ինչպես նաև դրանց հավաքման և օգտագործման կոնկրետ պայմաններով: Իրավաբանական գրականության մեջ, երբեմն ուսուցողական նպատակներով պետական բյուջեի եկամուտների մի մասը ըստ սոցիալ-տնտեսական հատկանիշի բաժանում են երկու խմբի, որոնց թվին են դասվում՝ տնտեսվարող սուբյեկտներից ստացվող եկամուտները և բնակչությունից զանձվող հարկերը և ոչ հարկային եկամուտները:

Պետական եկամուտների մասին գործող օրենսդրությամբ ևս ամրապնդված են եկամուտների այս տեսակները: Պետբյուջեի մասին ամենամյա օրենքներում սովորաբար առանձին է սահմանվում տնտեսությունից գանձվող ընդհանուր եկամուտը: Բնակչությունից կատարվող մուտքերի գումարը կարելի է որոշել նշված եկամուտների ընդհանուր գումարից այս գումարը հանելու միջոցով: Տնտեսական կազմակերպություններից ստացվող եկամուտները առանձի խմբում առանձնացնելը հիմնավորված է պետական ծառայությունների էության միատիպ բնույթով:

Դրա հետ միասին գործող սեփականության ձևերի տարբերությունը պայմանավորում են այդ եկամուտների ու դրանց հավաքագրման ձևերի տարբերությունները:

Ընդհանրացնելով պետական բյուջեի եկամուտները ըստ սեփականության գործող ձևերի՝ վերջիններս կարելի է բաժանել երկու խմբի:

- 1) Պետական տնտեսություններից ստացվող եկամուտները,
- 2) Սեփականության այլ ձևի վրա հիմնված կազմակերպություններից,
- 3) Բնակչությունից հարկման ճանապարհով ստացվող եկամուտներ:

Կենտրոնացված եկամուտների առաջին և երկրորդ խմբերը կարելի է հիմնական համարել, քանի որ ելնում են եկամուտների թվարկած խմբերի տնտեսության տարբեր բնույթից, նրանց մեծությունից ու բյուջետային նշանակությունից և հաշվի է առնվում պետության կողմից ֆինանսական քաղաքականություն վարելիս: Այս բաժանումը վճռական ազդեցություն է թողնում պետական բյուջեի եկամուտների դասակարգման վրա (ըստ առաջացման աղբյուրների, միջոցների, ներգրավման մեթոդների, ձևերի և այլն):

Պետական կենտրոնացված եկամուտների շարքում իրենց տեսակարար կշռով աչքի են ընկնում այն եկամուտները, որոնք հավաքվում են ըստ վերջիններիս առաջացման աղբյուրների:

Այս դասակարգումը հնարավորություն է տալիս ավելի կոնկրետացնելու եկամուտների վերը նշված խմբերի կազմը և սահմանելու բյուջեի մեջ համապատասխան միջոցների մուտք լինելու ձևերը: Այսպես, ձեռնարկությունների և այլ տնտեսական կազմակերպությունների եկամուտները կարելի է պայմանականորեն բաժանել հարկային համակարգով սահմանված եկամուտներ, որոնք մուտք են լինում՝

- ա) շահութահարկի
- բ) ակցիզային հարկի
- գ) ավելացված արժեքի հարկ

- դ) հողի հարկի
- ե) գույքահարկի ձևով:

Պետական եկամուտների խմբին է դասվում իրավաբանական անձանց ոչ հարկային եկամուտները, որոնք ըստ գնահատման աղբյուրի՝ բազմազան են: Այսպես՝ պետական եկամուտներ են համարվում.

- 1) տրանսպորտի և կապի մուտքերը
- 2) ֆինանսական-բանկային համակարգի մարմիններից ստացվող մուտքերը
- 3) պետական ունեցվածքից և անդակներից ստացվող այնպիսի եկամուտներ, ինչպիսիք են՝ անտառային, ձկնային եկամուտները,
- 4) լքյալ, անտեր և բռնագրավված ունեցվածքից ստացվող եկամուտներ,
- 5) փոստային առաքումներից ստացված եկամուտներ,
- 6) լիկվիդացիայի ենթարկված ձեռնարկությունների, կազմակերպությունների և հիմնարկությունների ունեցվածքից եկամուտներ,
- 7) պետական հիմնարկների ու կազմակերպությունների վարձատրվող ծառայություններից ստացվող եկամուտներ.
- 8) պետավտոտեսչություններից գանձվող եկամուտներ,
- 9) ապրանքային նշանների գրանցման համար կատարվող գանձումներ,
- 10) չափիչ գործիքների և կշեռքների ստուգման համար կատարված գանձումներ,

11) թանկարժեք մետաղների անալիզի և պիտակավորման համար կատարված գանձումներ,

12) պետական տուրքեր,

13) տեղական հարկերի ու տուրքերի ձևով:

Բնակչության եկամուտների և խնայողության հաշվին բյուջե միջոցներ են մուտք լինում.

1. պարտադիր վճարումների և՝
2. կամավոր մուծումների ձևով:

Պարտադիր վճարումներից են՝ եկամտահարկերը և տարբեր տուրքերը, պետական ունեցվածքից օգտվելու համար կատարված մուծումները:

Կամավոր մուծումները ներկայումս երկուսն են՝

1. պետական փոխառության պարտատոմսերի իրացումից հասույթ,
 2. դրամա-իրային վիճակախաղի տոմսերի ձեռքբերումը:
- Իրավաբանական գրականության մեջ պետական եկամուտները բաժանվում են պարտադիր և կամավոր եկամուտների:
- Այսպիսի բաժանումն ունի կարևոր իրավական և տնտեսական

նշանակություն:

Նման բաժանումը ամեն մի կոնկրետ դեպքում ցույց է տալիս թե արդյոք տվյալ ձեռնարկությունը, կազմակերպությունը կամ առանձին իրավաբանական անձը իրավաբանորեն պարտավոր է պետքույն որոշակի դրամական միջոցներ մուծելու, թե ոչ: Օրինակ, ձեռնարկությունները պարտավոր են պետական բյուջե կատարելու մի շարք հիմնական վճարումներ սահմանված հարկերի ձևով, որոնք վճռական նշանակություն ունեն բյուջեի եկամուտների համակարգում: Բնակչությունից հարկերի գանձումը կրում է հարկադիր բնույթ (պետությունն է հարկադրված):

Պետական եկամուտները կարելի է դասակարգել ըստ նրանց հավաքագրման և օգտագործման կոնկրետ պայմանների, որպիսիք դրսևորում են երեք ձևով:

1. Հետադարձ և անդրադարձ եկամուտներ,
2. հատուցվող և անհատույց եկամուտներ,
3. ընդհանուր և նպատակային եկամուտ:

Պետբյուջեի առանձին օղակների միջև եղած ներքին փոխհարաբերությունները կարգավորելու նպատակով տարբերակվում են նաև ամրապնդված և կարգավորող եկամուտներ:

Հետադարձ և անհետադարձ եկամուտները այդ բառի ուղղակի իմաստով անդարձ եկամուտներ են: Այսպես, բոլոր հարկերը չեն վերադարձվում նրանց սուբյեկտներին և բյուջե են մուտք արվում վերջնական ձևով: Անդարձ լինելը բնութագրական է նաև մի շարք կամավոր մուծումներին: Օրինակ, դրամա-իրային վիճակախաղի տոմսերի թողարկման և իրացման ճամանակ անդարձ ձևով բյուջե է մուտք արվում դրանց վաճառքի գումարի և շահումների համար վճարումների գումարի տարբերությունը:

Եկամուտների մյուս խումբը անցնում է պետության ժամանակավոր օգտագործմանը, որը ծախսելով ստացված միջոցները, պարտավոր է լիովին և որոշակի ժամկետում վերադարձնել դրանք: Հետադարձ եկամուտներն առավել բնութագրական են պետական վարկերի գործառնությունների համար:

Այսպես, բյուջեի եկամտային մասում հաշվվում է պետական փոխառությունից ստացված մուտքերը: Սակայն այս բոլոր մուծումները կարելի է պետական եկամուտ անվանել պայմանականորեն, սոսկ տվյալ տարվա պետական բյուջեի տեսանկյունից: Վերջին հաշվով նրանք պետք է վերադարձվեն:

Հատուցվող և անհատույց եկամուտները պետական բյուջեի եկամուտների շարքում գերակշռող նշանակություն ունեն: Դրան են վերաբերում տնտեսվարող սուբյեկտներից, բնակչությունից գանձվող հարկերը: Հատուցվող եկամուտներին են պատկանում այն

բոլոր մուտքերը, որոնք կապված են պետական ունեցվածքի օգտագործման հետ, (վարձավճար, անտառային եկամուտ, ընդերքի մշակման համար մուծվող գանազան տուրքեր, մուծումներ-ձկնորսության համար և այլն): Դրանք մեծ մասամբ բյուջե մուտք են արվում պետական կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների համար կատարվող վճարումների տեսքով: Հատուցման, հավասարաչափության տարրը առկա է նաև պետական ծառայությունների համար:

Բյուջեի եկամուտների մեծ մասը չունի նախապես սահմանված նպատակային դեր: Դրանք փոխանցվում են բյուջետային միջոցների ընդհանուր ֆոնդ և օգտագործվում են բյուջետային ընդհանուր ֆինանսավորման կաթգույլ: Դա հնարավորություն է տալիս լայն մասները կատարելու տվյալ ժամանակի համար հեռանկարային նշանակություն ունեցող ծախսերի ընտրության, երկրորդական ծախսերի կանխման համար: Սակայն որոշ եկամուտներ (սոցապ վճարներ, գիշերօթիկ դպրոցներում, մանկապարտեզ-մանկամսուրներում, երեխաներին պահելու համար վճարումները) ունեն խստիվ նպատակային դեր:

ՉԼՈՒԽ XI

ՀԱՐԿԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

§ 1 ՀԱՐԿԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Հարկը պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով համապարտադիր և անհատական վճար է, որը գանձվում է ֆիզիկական և իրավաբանական անձանցից, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություններից՝ հարկային օրենսդրությամբ նախատեսված կարգով, չափերով և սահմանված ժամկետներում¹:

Հարկային իրավունքը ֆինանսական իրավունքի կարևոր ինստիտուտներից մեկն է: Հարկերը մյուս պարտադիր վճարներից տարբերվում են նրանով, որ վերջիններիս բնորոշ կողմը հանդիսանում է սեփականատիրոջ փոփոխումը: Բնակչությունից գանձվող հարկերը մասամբ տարբեր ձևերով ետ են վերադարձվում հենց իրենց՝ բնակչությանը և ծառայում է նրանց շահերին:

Հարկերը առաջացել են պետության ծագման հետ միաժամանակ, առավելապես դրսևորվել են բուրժուական հասարակությունում, որտեղ ձևավոլվել են որպես արտադրական հարաբերությունների կարևոր կատեգորիա՝ կապիտալիստական պետության գոյության հարցում խաղալով մեծ դեր:

Պետական շահերը պաշտպանելու, նրա ներքին և արտաքին ֆունկցիաների իրականացման համար պետությունը ստիպված է ստեղծել հարկադրանքի հսկայական ապարատ՝ բանակ, ոստիկանություն, բանտեր, աքսորավայրեր, չինովնիկական ապարատ և այլն: Իսկ դրանց գոյության համար անհրաժեշտ է նյութական բազա

ունենալ: Այդպիսի բազա հանդիսանում է հասարակական արդյունքը: Բայց հայտնի է, որ այդ ապարատը հասարակական արդյունք չի ստեղծում, այլ միայն կառավարման ֆունկցիա է իրականացնում: Հենց այդ ապարատը պահելու համար էլ առաջացել են հարկերը, որոնց Կ.Մարքսը անվանել է «մայրական կուրծք», որը կերակրում է կառավարությանը, հինգերորդ աստվածը՝ սեփականության, ընտանիքի, կարգ ու կանոնի և կրոնի կողքին:

Յուրաքանչյուր երկրում գոյություն ունի հարկերի տարբեր տեսակներ և ձևեր, և կիրառվում են հիմնական հարկման մի քանի ընդհանուր սկզբունքներ:

Այդ սկզբունքները հետևյալներն են.

- 1) բնակչությունից կատարվող հարկման համընդհանուր բնույթը
- 2) եկամտահարկի ռեգրեսիվ մեթոդի կիրառումը
- 3) աշխատավորական զանգվածներից գանձվող անուղղակի հարկերի կիրառումը:

Պետությունների զարգացման հետ մեկտեղ հարկերը օգտագործվում են ոչ միայն որպես պետական բյուջեի եկամուտների հիմնական և կարևոր աղբյուրներ, այլև՝ վերարտադրության ապահովման արդյունավետ միջոց:

Հասկանալի է, որ իշխանությունները գիտակցում են, որ բնակչությունից գանձվող հարկերը չեն կարող անսահմանափակ աճել: Այդ իսկ պատճառով նրանք ժամանակ առ ժամանակ թուլացնում են հարկային բեռը, բայց ոչ թե ժողովրդի կենսամակարդակի բարձրացման համար, այլ միայն տնտեսության «գոտեպնդման» նկատառումով:

Հարկման վերը շարադրված սկզբունքները բնորոշ են նաև Հայաստանի Հանրապետությանը, ընդ որում նրա բյուջեում գլխավոր տեղը զբաղեցնում են անուղղակի հարկերը, ավելացված արժեքի հարկը և տուրքերը:

Ներկայումս հանրապետության հարկային քաղաքականությունը խստիվ համապատասխանում է այս կամ այն պահին հասունացած քաղաքական, տնտեսական խնդիրներին:

Աճկափի հանրապետության ձևավորման առաջին տարիներից ապրանքաշրջանառության նվազեցման և բնակչության մոտ ավելորդ թղթադրամների առկայության պայմաններում որոշ չափով ավելացվեցին հարկերի չափերը և մտցվեցին մի քանի նոր հարկեր: Բայց այդ միջոցառումը ժամանակավոր բնույթ էր կրում և բացատրվում էր երկրի ծանր դրությամբ:

Կառավարությունը այսօր վարում է հարկերի նվազեցման կայուն քաղաքականություն:

Ներկայումս բնակչությունից գանձվում է եկամտահարկ, հողի

¹ Տես, ԳԳ օրենքը «Հարկերի մասին», հոդ.3, ընդունված ԱԺ կողմից 1997թ. ապրիլի 14-ին. (Հարկային օրենսդրություն, Ե. 1998)

հարկ, գույքահարկ և այլն:

Հարկային միասնական քաղաքականության իրականացումը մեծապես կապված է հարկային գործունեություն իրականացնող մարմինների և նրանցում աշխատանքի ներգրավված մասնագետների որակից: Այս նկատառումներով հարկային մարմինները մեծ աշխատանք են կատարում հետևյալ ուղղություններով:

- 1) Մշտապես հարկային ապարատը համալրում են որակյալ մասնագետներով:
- 2) Ստեղծում են պայմաններ, որպեսզի հարկումը կատարվի ճիշտ:
- 3) Միջոցառումներ են իրականացնում, որոնք ուղղված են հարկային մարմինների աշխատանքի կազմակերպման կատարելագործմանը:
- 4) Ուժեղացնում են հարկային աշխատողների պատասխանատվությունը և այլն:

Անդրադառնալով հարկերին, պետք է նկատել, որ բնակչությունից գանձվող հարկերը չեն հանդիսանում ՀՀ պետական բյուջեի եկամուտների հիմնական աղբյուր: Բնակչությունից գանձվող բոլոր հարկերը ետադարձ են:

Մուտք գործելով պետական դրամական ռեսուրսներ՝ դրանք ֆինանսավորման տարբեր համակարգերի և հասարակական ֆոնդերի միջոցով ետ են վերադարձվում բնակչությանը:

Հարկումը կատարվում է հաշվի առնելով բնակչության սոցիալական խավերի տնտեսական դրությունը: Եկամտահարկի հիմքում ընկած է պրոգրեսիվ հարկման սկզբունքը:

Հարկերի համակարգին ուղեկցում է հարկ վճարողների բազմազան արտոնություններ:

Բնակչությունից գանձվող հարկերը և տուրքերը բաժանվում են պետականի և տեղականի: Տեղական հարկերը գանձվում են բացառապես համայնքների բյուջեի եկամուտների ամրապնդման համար:

Հարկերի և տուրքերի համակարգը հենված է մեր երկրում գոյություն ունեցող օրենսդրական ակտերի վրա: Հարկային իրավունքը նախատեսում է երկկողմանի իրավունքներ և պատասխանատվություն օրինականության ապահովման համար:

Հարկերն օգտագործվում են պետության կողմից որպես ազգային եկամուտի երկրորդական բաշխման և վերաբաշխման գործիք:

Հարկերի միջոցով տնտեսվարող այլ կազմակերպությունների, ինչպես նաև բնակչության եկամուտների մի մասը կենտրոնացվում է պետական պահանջի բավարարման համար: Ինչպես նշվեց, իրավաբանական տեսակետից հարկերը պարտադիր դրամային վճարումներ են, որոնք պետական բյուջե են մուծվում որոշակի չափով

նախապես սահմանված ժամկետներում: Դրանք սահմանվում են հանրապետության Ազգային ժողովի կողմից: Ի տարբերություն բյուջե կատարվող մի շարք այլ վճարումների՝ հարկերը անհատական-անհատույց վճարումներ են և դրանց գանձումը կապված չէ վճարողին անմիջական նյութական բարիք հատկացնելու կամ նրան ծառայություն մատուցելու հետ: Հայաստանի հանրապետությունում կատարված բոլոր գանձումներն ուղղակի կամ անուղղակի վերադարձվում են քաղաքացիների որպես հասարակության անդամի: Այդ պահին առանձնապես ընդգծված է հանդես գալիս սպառման հասարակական ֆոնդերի աճի մեջ, որոնց հաշվին ապահովվում է կրթությունը, բուժսպասարկումը և ընդհանուր այլ կարիքների բավարարումը:

Այսպիսով, հարկերի հասարակական դառնալիությունն ակնհայտ է: Սակայն այն ունի ածանցվող բնույթ և իրավաբանորեն կապված չէ կոնկրետ վճարողի կողմից հարկի մուծման փաստի հետ:

Ի վերջո, հարկերը, օրենքով սահմանված պետական կարիքների բավարարմանը ծառայող վճարումներ են, որոնք պետական բյուջե են մտցվում տնտեսվարող սուբյեկտների, ինչպես նաև բնակչության կողմից՝ նախատեսված չափերով և որոշակի ժամկետներում:

§ 2 ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարկային հարաբերությունները կարգավորվում են իրավունքի որոշակի նորմերի կողմից, որոնք իրենց հանրագումարի մեջ առաջացնում են հարկային բազմաթիվ ինստիտուտներ, որոնք սահմանվում են հարկերի մասին օրենքով: Օրենքը առանձնացնում և սահմանում է.

1. հարկ վճարողները (սուբյեկտները)
2. հարկի օբյեկտը
3. հարկի միավորը և դրույքը
4. չհարկվող նվազագույնը
5. հարկի վճարման ժամկետները
6. արտոնությունները:

Ցանկացած հարկային իրավահարաբերության բովանդակությանը ներհատուկ են թվարկված տարրերը, որոնք միշտ էլ առկա են կոնկրետ հարկի մասին ամեն մի օրենքում: Կոնկրետ օրենքները կարող են դրույթներ պարունակվել հարկադրման կարգի, թերառքի գանձման և այլնի մասին:

Հարկատուները կարող են հանդիսանալ տնտեսական կազմակերպություններ, առանձին անձինք և նրանց տնտեսությունները:

Այս կամ այն անձին հարկերի վճարման մեջ ներգրավելու պարտադիր պայմանը եկամուտի ինքնուրույն աղբյուրի կամ ունեցվածքի առկայությունն է: Մի քանի հարկերի գանձման համար նշանակություն ունեն և լրացուցիչ պայմանները որոշակի տարիքի հասնելը, քաղաքացիությունը:

Յուրաքանչյուր օրենքում պարտադիր կարգով նշվում է նաև, թե ինչ հանգամանքների առկայության դեպքում է ծագում վճարման պարտականությունը: Նման հանգամանքներ են կառուցված տիրապետելը, եկամուտներ ստանալը և այլն:

Հայաստանի հանրապետության հարկային օրենսդրությունը նախատեսում է հարկադրման հետևյալ օբյեկտները:

- ա) եկամուտ,
- բ) շահույթ,
- գ) արտարժույթի իրացում,
- դ) գույք,
- ե) հողամաս:

Սովորաբար հարկադրման օբյեկտը պարզ է դառնում հարկի մասին օրենքի անվանումից՝ «եկամտահարկի մասին», «գույքահարկի մասին» և այլն: Հարկադրման օբյեկտը չպետք է շփոթել հարկի աղբյուրի հետ: Հարկի աղբյուրները, դրանք այն միջոցներն ու եկամուտներն են, որոնց հաշվին նրանք մուծվում են (աշխատավարձ, տնտեսությունից ստացվող եկամուտներ): Հարկի աղբյուրը կարող է մի շարք դեպքերում չհամընկնել հարկադրման օբյեկտի հետ, օրինակ, հողի հարկի հարկադրման օբյեկտը հողամասն է, մինչդեռ հարկը կարող է վճարվել այդ հողամասին վերաբերող ուրիշ աղբյուրներից: Հարկի մասին օրենքը սահմանում է նաև հարկադրման միավորը, որը ծառայում է օբյեկտի հաշվառման կամ չափման նպատակին և դրվում է հարկի հաշվարկման հիմքում: Հարկադրման միավորը կարող է արտահայտվել դրամական տեսքով (եկամտահարկի համար 1 դրամ, կամ մատուրալ ձևով), օրինակ՝ հողի հարկի համար հողամասի 0,01 հեկտարը և այլն: Հարկադրման յուրաքանչյուր միավորից գանձվող հարկի չափը կոչվում է հարկի դրույք: Դրույքները լինում են.

- ա) կայուն, բ) հավասարաչափ, գ) պրոգրեսիվ ու ռեգրեսիվ:

Կայուն դրույքների դեպքում հարկը գանձվում է հարկադրման յուրաքանչյուր միավորից կայուն սահմանված բացարձակ գումարներով և ոչ թե տոկոսներով: Օրինակ, գյուղական վայրում հողի հարկ են վճարում կայուն դրույքներով յուրաքանչյուր հարյուրերորդական հեկտարի դիմաց: Կայուն դրույքները, դրանք հավասարա-

րաչափ դրույքների մի տարատեսակն են:

Հավասարաչափ դրույքների կիրառումը նշանակում է, որ հարկի չափն աճում է եկամուտի աճմանն ուղղակի համամասնորեն (կամ գույքի արժեքին, հողամասի մեծության աճին հավասարաչափ): Յուրաքանչյուր հարկատուից գանձվում է նրա եկամուտի որոշակի տոկոսը: Օրինակ, ձեռնարկությունների համար սահմանված է ավելացված արժեքի հարկի կայուն 20 տոկոս: Գանձելու տոկոսը կայուն է, սակայն վճարի գումարն աճում է եկամուտների աճի հետ միասին:

Պրոգրեսիվ դրույքների կիրառման ժամանակ դրույքումը այլ է: Այստեղ, եկամտի ավելացման հետ միաժամանակ մեծանում է հարկադրման դրույքը: Այս կապակցությամբ եկամուտներն ըստ իրենց չափերի բաշխվում են խմբերի և յուրաքանչյուր խմբի համար սահմանվում է (տոկոսներով) հարկի տարբեր դրույք: Նման հարկի օրինակ կարող է ծառայել (քաղաքացիներից եկամտահարկը): Առանձին դեպքերում կիրառվում է հարկադրման խառը մեթոդը, որում համատեղվում են և հավասարաչափ և պրոգրեսիվ դրույքները: Օրինակ, հարկային տարում հարկվող եկամուտներից եկամտահարկը վճարվում է մինչև 120000 դրամի հարկվող եկամտի 15 տոկոսը, 120001 դրամից բարձր՝ 25 տոկոսը:

Օրենքում հարկի վճարման ժամկետները նախատեսվում են հարկերի յուրաքանչյուր տեսակի համար առանձին-առանձին: Դրանց նպատակն է ապահովել միջոցների ժամանակին և կանոնավոր մուտքը բյուջե: Հարկերի մասին յուրաքանչյուր կոնկրետ օրենքում նախատեսվում են արտոնություններ և բացառություններ:

Արտոնություններ տրամադրելու կարգով լիովին կամ մասնակիորեն կարող են հարկերի վճարումից ազատվել հարկատուների առանձին խմբեր, եկամուտների աղբյուրներ, հարկադրման օբյեկտներ: Օրենքում կարող է նախատեսվել հարկից լրիվ ազատում (բացառությամբ հարկադրումից) և հարկի չափերի իջեցում: Բացի դրանից, արտոնությունները կարող են տրամադրվել այնպիսի ձևերով, ինչպիսիք են չհարկվող նվազագույնի սահմանումը (այսինքն, այն եկամտի չափի սահմանումը, որն ընդհանրապես չի ենթարկվում հարկադրմանը), միևնույն հարկատուի տարբեր եկամուտների առանձին-առանձին (և ոչ թե հանրագումար) հարկադրումը, վճարման հատուկ ժամկետների սահմանումը և այլն: Արտոնությունների սահմանման հիմքերը կարող են տարբեր լինել: Օրինակ, տնտեսության առանձին ճյուղերի զարգացման խթանումը, պետության համար որոշ մասնագիտությունների հատուկ նշանակությունը, քաղաքացիների նյութական դրությունը, ընտանեկան վիճակը և այլն:

Հարկային հարաբերությունները կարող են գոյություն ունենալ

միայն համապատասխան օրենքի առկայության դեպքում, իրավա-
կան հարաբերությունների տեսքով: Հարկային հարաբերության հիմ-
նական բովանդակությունը հարկատուի միակողմանի պարտակա-
նությունն է պետական բյուջե մուծելու որոշակի գումարներ: Հար-
կային հարաբերություններն ունեն գույքային բնույթ, նման պարտա-
կանության կատարումը նշանակում է պետության սեփականությանը
կանոնել որոշակի դրամական միջոցներ: Դրա համար էլ հարկերի
գծով պարտականությունները չկատարելը հանգեցնում է պետու-
թյանը նյութական վնաս հասցնելուն, համապետական շահերի
խախտմանը: Անհրաժեշտ դեպքում հարկային պարտավորությունը
կարող է կատարվել հարկադիր կարգով:

Հարկային իրավահարաբերությունները ըստ սուբյեկտների կա-
րելի է դասակարգել ա) իրավաբանական անձանցից, բ) այլ վճա-
րողներից և գ) ֆիզիկական անձանցից գանձվող հարկերից բխող
իրավահարաբերություններ: Առաջին խմբի հարկերի թվին են դաս-
վում շահութահարկը, ավելացված արժեքի հարկը, ակցիզային
հարկը և այլն:

Ֆիզիկական անձանցից գանձվող հարկեր են եկամտահարկը,
հողի հարկը, գույքահարկը և տեղական հարկերը:

Հարկերի մի մասը ունի ընդհանուր նշանակություն և գանձվում է
ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձանցից,
օրինակ, գույքահարկը, հողի հարկը:

Հարկերը կապված գանձման եղանակի և բնույթի հետ դասա-
կարգվում են.

1) ուղղակի և 2) անուղղակի հարկերի: Ուղղակի հարկերն
անմիջականորեն ուղղված են հարկատուին, նրա եկամուտներին:
Ուղղակի հարկերը գանձվում են նյութական արժեքների ձեռքբեր-
ման և կուտակման շրջանառությունից: Այս հարկերի թվին են
դասվում շահութահարկը, եկամտահարկը և այլն: Ուղղակի հարկերը
կարող են դրսևորվել անձնական և իրական բնույթով: Ուղղակի
իրական հարկերով հարկվում են ենթադրվող միջին եկամուտը:
Օրինակ հողի հարկը:

Ուղղակի անձնական հարկերը վճարվում են ստացված
եկամուտից:

Անուղղակի հարկերը ունեն բողոքված բնույթ, գանձվում են
ապրանքի գնի միջոցով: Անուղղակի հարկը դրսևորվում է ապրանքի
գնի ավելացմամբ: Այսպիս հարկեր են հանդիսանում ավելացված
արժեքի, ակցիզային հարկերը:

Ուղղակի հարկերի վերջնական վճարողը նա է, ով ստանում է
եկամուտ: Անուղղակի հարկ վճարող է հանդիսանում ապրանքի
գնորդը (սպառողը), որը ապրանքի գնի ավելացման միջոցով վճա-

րում է ավելացված արժեքի հարկը: Հարկի վճարման ժանրությունը
ընկնում է սպառողի վրա: Իրավական իմաստով այս հարկերը
վճարում են արտադրողները և վաճառողները:

§ 3. ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսավարող սուբյեկտներից սխալմամբ բյուջե գանձված
հարկերի և տուրքերի գումարները վճարողին վերադարձնելու
կարգը սահմանվում է օրենքով: Հարկերի և տուրքերի այն
գումարները, որոնք սխալ հաշվարկման կամ գանձման սահմանված
կարգի խախտման հետևանքով նախատեսված չափից ավելի են
վճարվել, ենթակա են վերադարձման կամ հաշվառման վճարողի այլ
պարտավորությունների հաշվին այդ մասին հայտնի դառնալու
օրվանից մեկ ամսվա ընթացքում՝ սահմանված չափից ավելի
վճարմանը հաջորդող երեք տարիների համար: Սահմանված չափից
ավելի գումարները վերադարձնելու մասին հարկային տեսչության
մարմիններին դիմում տալը կասեցնում է նվազ ժամկետի ընթացքը:

Եթե գործատուները ժամանակին չեն գանձել բանվորներից ու
ծառայողներից հարկվող գումարները, ապա դրանք գանձվում են ոչ
ավելի, քան վերջին երեք ամսվա համար, իսկ հարկերի սահմանված
չափից ավելի գանձված գումարները վերադարձվում են այդ մասին
հայտնի դառնալու օրվանից մեկ ամսվա ընթացքում՝ սահմանված
չափից ավելի գանձման օրվան հաջորդող երեք տարիների համար:

Սահմանված չափից ավելի վճարված գումարները վերա-
դարձնելու մասին վճարողի դիմում տալը կասեցնում է այդ
մեկամսյա ժամկետի ընթացքը:

Հարկային տեսչության մարմինների կողմից իրենց վրա դրված
պարտականությունների ոչ պատշաճ կատարման հետևանքով
վճարողներին պատճառված վնասը, (այդ թվում բաց թողնված եկա-
մուտի) հատուցվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՀ օրենսդրությունը սահմանում է հարկային իրավահարաբերու-
թյունների սուբյեկտների իրավունքների պաշտպանության երկու
եղանակ՝ 1) վարչական (արտադատարանական) և 2) դատական:
Հարկերը գանձելիս, հարկային տեսչության մարմինների պաշտո-
նատար անձանց գործողությունները կարող են գանգատարկվել այն
մարմնին, որին անմիջականորեն ենթարկվում են այդ անձինք:
Գանգատները քննության են առնվում և դրանց առթիվ որոշումներ

են կայացվում ոչ ուշ, քան գանգատը ստացվելու օրվանից երեսուն օրվա ընթացքում:

Այդ որոշումները կարող են գանգատարկվել վերադաս հարկային տեսչության մարմինն կամ դատարան գանգատարկողին որոշման կրկնօրինակը հանձնելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Հարկային տեսչության մարմինների պաշտոնատար անձանց այն գործողությունների գանգատարկումը՝ կապված վարչական տուգանք նշանակելու հետ, կատարվում է վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

Հարկային տեսչության մարմինների պաշտոնատար անձանց գործողությունների գանգատարկումը չի դադարեցնում հարկերի գանձումը: Գանգատը քննության առնող մարմինն իրավունք ունի դադարեցնել հարկի գանձումը՝ մինչև գանգատի լուծումը:

§4 ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍՊՐՈՒԹՅՈՒՆԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՍԱՐ

Հարկերը ճիշտ հաշվարկելու, ժամանակին վճարելու և հարկային օրենսդրության պահանջները պահպանելու պատասխանատվությունը դրվում է վճարողների և դրանց (ծեռնարկությունների, կազմակերպությունների)՝ օրենսդրությամբ նախատեսված պաշտոնատար անձանց վրա: Հարկային օրենսդրության խախտման համար նախատեսվում են ֆինանսական (նյութական), վարչական և քրեաիրավական սանկցիաներ:

ՀՀ «Հարկերի մասին» օրենքի 23-րդ հոդվածում նշված է, որ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում վճարողից գանձվում էր տույժ, ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար ժամանակին չմուծված հարկի գումարի 0,2% չափով, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան չի նախատեսված:

Հայաստանի Հանրապետությունում «Հարկերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ 1996թ. մարտի 23-ի օրենքով տույժի գումարն իջեցվեց և դարձվեց 0,25%, իսկ 2001թ. հունվարի 1-ից՝ 0,15%:

Հիշյալ փաստաթղթերը ներկայացվելուց հետո կատարվում է հարկերի վերահաշվարկ:

Հաշվապահական հաշվետվությունները, հաշվեկշիռները, հաշվարկները և հայտարարագրերը սահմանված ժամկետից երկու ամսից ավելի ուշացնելու դեպքում այդ ժամկետին հաջորդող

յուրաքանչյուր 15 օրվա համար հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ դրա հետևանքով չմուծված հարկի ընդհանուր գումարի 5%-ի չափով, բայց ոչ ավելի, քան այդ հարկի ընդհանուր գումարն է:

«Հարկերի մասին» օրենքի 25-րդ հոդվածում ասվում է, որ հաշվապահական հաշվառում չվարելու կամ վարման սահմանված կարգը խախտելու, հաշվապահական հաշվետվությունները, հաշվեկշիռները, հաշվարկները, հայտարարագրերը և օրենքով նախատեսված այլ փաստաթղթերը սխալ կազմելու համար վճարողը բյուջե է մուծում տուգանք՝ հարկի գումարի 10 տոկոսի չափով:

Եկամուտների հաշվառում չվարելը կամ սահմանված կարգի կոպիտ խախտմամբ վարելը, կամ եկամուտների մասին հայտարարագիր ներկայացնելուց խուսափելը կամ ժամանակին չներկայացնելը և կամ հայտարարագրի մեջ ակնհայտ կեղծ տվյալներ մտցնելը, եկամուտը (շահույթը) կամ հարկվող այլ օբյեկտ թաքցնելը, հարկերը վճարելուց հրաժարվելը կամ չարամտորեն խուսափելը առաջացնում են վարչական կամ քրեական պատասխանատվություն:

Հարկվող օբյեկտը թաքցնելու կամ այն պակաս ցույց տալու համար վճարողներից գանձվում է թաքցված կամ պակաս ցույց տրված օբյեկտի համար նախատեսված հարկի ամբողջ գումարը, ինչպես նաև այդ գումարի 50%-ի չափով տուգանք, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան չի սահմանված, իսկ մեկ տարվա ընթացքում մեկից ավելի խախտումների դեպքում՝ տուգանք հարկի ամբողջ գումարի չափով:

Թաքցված կամ պակաս ցույց տրված են համարվում հարկվող այն օբյեկտները, որոնք ցույց չեն տրվել հարկային տեսչության մարմիններին ներկայացված հաշվապահական հաշվետվություններում, հաշվեկշիռներում և հայտարարագրերում:

Թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի համար հարկի և տուրքի գումարները բյուջե են մուծվում վճարողների հաշվին:

Արտարժույթով ստացված եկամուտը (շահույթը) թաքցնելու կամ պակաս ցույց տալու դեպքում եկամտի (շահույթի) գումարը վերահաշվարկվում է Հայաստանի Հանրապետության ազգային բանկի արժույթային կուրսով:

Վճարողները թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի համար հարկի գումարը, ինչպես նաև օրենքով նախատեսված նյութ տույժերը բյուջե են մուծում հարկային տեսչության մարմինների կողմից՝ համապատասխան արձանագրություն կամ պահանջագիր ներկայացնելուց հետո՝ տասնօրյա ժամկետում: Սահմանված ժամկետներում չմուծված հարկի գումարները, ինչպես նաև հարկվող օբյեկտը թաքցնելու կամ պակաս ցույց տալու համար

տույժերը հարկային տեսչության մարմինների կողմից անվիճելի կարգով բռնագանձվում են այդ ամբողջ ժամանակամիջոցի համար:

Այն դեպքում, երբ վճարողը վերացնում (լուծարում) է եկամուտ (շահույթ) առաջացնող իր օբյեկտը կամ թաքցնում է իր եկամուտը (շահույթը) և հետագայում հնարավոր չէ գանձել օրենսդրությամբ սահմանված հարկերն ու տուրքերը, հարկային տեսչության մարմինը կարող է միջոցներ ձեռնարկել մինչև հաշվետու ժամանակը հարկերն ու տուրքերը գանձելու ուղղությամբ: Այդ դեպքում հարկային տեսչության մարմինը կարող է պահանջել հաշվապահական հաշվետվությունները, հաշվեկշիռները, հաշվարկները, հայտարարագրերը և օրենքով նախատեսված մյուս փաստաթղթերը՝ մինչև օրենքով սահմանված ժամկետը:

Հարկերի և տուրքերի վճարման ժամկետների խախտման կամ սխալ վճարման դեպքում հարկային տեսչության մարմինը պահանջներ է ներկայացնում 10 օրվա ընթացքում: Ժամկետի հաշվարկը սկսվում է հարկային տեսչության մարմնին հարկերի և տուրքերի ոչ ժամանակին կամ սխալ վճարման մասին հայտնի դառնալու օրվանից:

Առանձին հարկատեսակի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի համաձայնությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից առանձին վճարողների կամ վճարողների խմբի համար կարող են կիրառվել տուգանքների, տույժերի այլ չափեր, դրանց հաշվարկման, մուծման և գանձման այլ կարգ, քան նախատեսված է «Հարկերի մասին» օրենքով:

Հաշվապահական հաշվետվությունները, հաշվեկշիռները, հաշվարկները, հայտարարագրերը և օրենքով նախատեսված մյուս փաստաթղթերը ոչ ժամանակին ներկայացնելու և սխալ կազմելու, հարկերի գումարները ոչ լրիվ, ոչ ժամանակին գանձելու և բյուջե փոխանցելու, ինչպես նաև իրենց կողմից ձեռնարկություններին, հիմնարկներին, կազմակերպություններին ու քաղաքացիներին կատարած վճարումների վերաբերյալ օրենքով սահմանված կարգով և ժամանակին տեղեկություններ չներկայացնելու համար պատասխանատու պաշտոնատար անձինք ենթարկվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության:

ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի մի շարք հոդվածներ սանկցիաներ են նախատեսում հարկային օրենսդրության խախտման համար:

Անհատ ձեռներեցների, քաղաքացու կամ ձեռնարկության պաշտոնատար անձի կողմից եկամուտների հաշվառում չվարելը կամ սահմանված կարգի կոպիտ խախտմամբ հաշվառում վարելը, եկամուտների մասին հայտարարագիր ներկայացնելուց խուսափելը կամ ժամանակին չներկայացնելը կամ հայտարարագրի մեջ ակնհայտ կեղծ տվյալներ մտցնելը, ինչպես նաև շահույթը (եկամուտը) կամ հարկվող կամ բյուջե կատարվող այլ պարտադիր վճարումներով հարկվող օբյեկտը թաքցնելը առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի եռապատիկից մինչև վեցապատիկի չափով և թաքցված շահույթի բռնագրավումով:

Ձեռնարկության պաշտոնատար անձի կողմից հարկերը և պետական սոցիալական ապահովագրության մուծումները սահմանված կարգով և ժամանակին չվճարելը առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի լրիվ չափից մինչև կրկնապատիկը (ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 170-րդ հոդված):

Անհատ ձեռներեցի կամ ձեռնարկության պաշտոնատար անձի կողմից հարկային կամ կենսաթոշակային ու զբաղվածության ֆոնդի մարմիններում կամ սոցիալական ապահովագրության մարմիններում մեկ տարվա ընթացքում հաշվառման կանգնելուց խուսափելը առաջացնում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի լրիվ չափից մինչև կրկնապատիկը (ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 170 հոդված):

ՀՀ քրեական օրենսդրությամբ անհատ ձեռներեցների, քաղաքացու կամ ձեռնարկության պաշտոնատար անձի կողմից եկամուտների հաշվառում չվարելը կամ սահմանված կարգի խախտումով վարելը կամ եկամուտների մասին հայտարարագիր ներկայացնելուց խուսափելը կամ ժամանակին չներկայացնելը կամ հայտարարագրի մեջ ակնհայտ կեղծ տվյալներ մտցնելը, եթե դա կատարվել է նույնպիսի խախտումների համար վարչական տույժի նշանակվելուց մեկ տարվա ընթացքում, սահմանվում է քրեական պատասխանատվություն: Քրեական պատասխանատվություն է սահմանվում նաև հարկերը վճարելուց հրաժարվելը կամ չարամտորեն խուսափելու դեպքում:

§5. ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ պետական բյուջե մուտքագրվող հարկերի և այլ վճարումների ճիշտ ժամանակին մուտքը վերահսկելու պարտականությունը դրված է ՀՀ հարկային տեսչության վրա: Նա վերահսկում է ձեռնարկությունների, կազմակերպությունների, անհատ ձեռներեցների կողմից բյուջեի հանդեպ ունեցած պարտականությունների ժամանակին և բարեխիղճ կատարումը:

ՀՀ հարկային տեսչության լիազորությունները սահմանված են «Հարկերի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ Նախագահի 1994թ. օգոստոսի 1-ի թիվ 352 հրամանագրով հաստատված «Ձեռնարկություններում, կազմակերպություններում, հիմնարկներում ստուգումների կազմակերպման և անցկացման կանոնակարգով և ՀՀ կառավարության 1995թ. ապրիլի 17-ի թիվ 213 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ձեռնարկություններում, հիմնարկներում, կազմակերպություններում և անհատ ձեռներեցների մոտ Հայաստանի Հանրապետության հարկային պետական տեսչության մարմինների կողմից ստուգումների և ուսումնասիրությունների կարգով նախատեսված նորմերով: ՀՀ հարկային տեսչության մարմինները (հարկային տեսչությունը և նրա տարածքային մարմինները) իրենց իրավասության շրջանակներում վերահսկողություն են իրականացնում Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների, ինչպես նաև անհատ ձեռներեցների վրա: ՀՀ կառավարության կողմից հաստատված վերը նշված կարգին համապատասխան ստուգումը, ՀՀ օրենսդրության համաձայն, ձեռնարկություններում տնտեսական և այլ առևտրական գործունեության, ֆինանսական և այլ արտաիրացման գործառնությունների ուսումնասիրության վերլուծության, պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների, իսկ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նաև այլ պարտավորությունների կատարման առումով արդյունքների ամփոփում, ձևակերպում, սահմանված կարգով ներկայացում է կառավարությանը:

Ստուգումները տարբերակվում են՝

ա) ըստ իրականացման վայրի՝ ներքին (կամերալ) և արտաքին: Ներքին ստուգումը կատարվում է ստուգվող օբյեկտի գտնվելու կամ գործունեության վայր այցելության ձևով: Արտաքին ստուգումը ենթադրում է օբյեկտի գործունեության ստուգում՝ նրա սկզբնական

հաշվապահական և այլ անհրաժեշտ վստասաթղթերի ընդգրկումով. բ) ըստ պարբերականության՝ սկզբնական և լրացուցիչ. գ) ըստ իրականացման՝ համատարած (բոլոր սկզբնական և հաշվետվական փաստաթղթերի դիտարկմամբ) և ընտրանքային. դ) ըստ ընդգրկման աստիճանի՝ ֆինանսատնտեսական գործունեության (համալիր) ստուգումներ:

Հարկային մարմինների կողմից իրականացվող ֆինանսատնտեսական գործունեության ստուգումների նպատակը ձեռնարկությունների կողմից պետական բյուջեի նկատմամբ հարկային պարտականությունների կատարման ստուգումն է, որն իրականացվում է ըստ անհրաժեշտության և իրենից ներկայացնում է արտաքին փաստաթղթային ստուգում, որի ժամանակ իրականացվում է (համատարած կամ ընտրանքային ձևով) ձեռնարկության արտադրական, այլ առևտրական ողջ գործունեության և տնտեսական բոլոր տիպի գործառնությունների ստուգում՝ օգտագործելով փաստաթղթային ու փաստացի ստուգումների այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են նորմատիվային համալրումը, հանդիպակաց ստուգումները, գույքագրումը, չափագրումները, փաստաթղթերի տրամաբանական ու փորձագիտական վերլուծությունը և այլն:

Մասնակի ստուգումը հարկային մարմինների կողմից իրականացվող ստուգումների հիմնական տեսակն է և իրենից ներկայացնում է արտաքին փաստաթղթային, ստուգվող օբյեկտի կողմից իրականացվող գործունեության կամ գործառնությունների մի մասի, որոշակի պարուսկողությունների ստուգում:

Հարկային մարմինների կողմից ուսումնասիրություն անցկացվում է միայն կոնկրետ հարցերով և ընտրանքային ձևով՝ պետական բյուջեի պարտավորությունների կատարման նկատմամբ օպերատիվ և իրական վերահսկողության ապահովման համար:

Ստուգումների և ուսումնասիրությունների կազմակերպման նպատակով հարկային պետական տեսչության մարմնի ղեկավարը ստուգման վերաբերյալ հրապարակում է հրաման, կարգադրություն կամ հանձնարարագիր, որտեղ նշվում են ստուգումն իրականացնող հարկային մարմնի անվանումը, պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը: Իրավական ակտի բնօրինակը ներկայացվում է ստուգվող օբյեկտի ղեկավարին, իսկ երրորդ օրինակը, վերջինիս կողմից ստորագրվելուց հետո, ենթակա է վերադարձման հարկային մարմնի:

Ուսումնասիրության անցկացման դեպքում հարկային մարմնի ղեկավարը հրապարակում է ուսումնասիրության մասին հանձնարարագիր, որտեղ նշվում են ուսումնասիրության ժամկետը, նպատակը, հարկային մարմնի անվանումը, հարկային տեսչի ազգանուն-անուն-

հայրանունը: Այն, ծանոթացման նպատակով, ցույց է տրվում ստուգվող օբյեկտի ղեկավարին:

Ստուգումներն ու ուսումնասիրություններն իրականացվում են ճիայն հանձնարարագրում նշված նպատակների հետ առնչվող հարցերի շրջանակներում: Անհրաժեշտության դեպքում, ստուգումն իրականացնող հարկային մարմնի պաշտոնատար անձի (հարկային տեսուչ) գրավոր հիմնավորմամբ, հարկային մարմնի ղեկավարը սահմանված կարգով կարող է լրացում կատարել նախկին հանձնարարագրի մեջ և փոխել ստուգման նպատակը:

Ստուգումների ժամկետը (տևողությունը) չի կարող գերազանցել 15 օրացուցային օրը: Կոնկրետ ժամկետը նշվում է հանձնարարագրի մեջ և անհրաժեշտության դեպքում, հարկային պետական տեսուչի գրավոր հիմնավորմամբ, կարող է փոխվել: Տասնհինգ օրվանից ավելի ժամկետը սահմանվում է ԳՀ հարկային տեսչության պետի կողմից: Այդ փոփոխությունների մասին պետք է տեղյակ պահվեն ստուգվող օբյեկտների ղեկավարները: Մինևույն ստուգվող օբյեկտում իրականացվող ստուգումների պարբերականությունը սահմանում է հարկային մարմինը: Ընդ որում, ստուգվող օբյեկտում տարվա ընթացքում մեկից ավելի ստուգումն իրականացվում է ԳՀ հարկային տեսչության թույլտվությամբ, եթե ԳՀ օրենսդրությամբ այլ բան չի նախատեսված:

Մինևույն ստուգվող օբյեկտում հարկային մարմինների կողմից ֆինանսատնտեսական գործունեության համալիր (կոմպլեքս) ստուգումներ, որպես կանոն, կարող են իրականացվել տարեկան ոչ ավելի, քան մեկ անգամ: Ֆինանսատնտեսական գործունեության կրկնակի ստուգումներ կարող են իրականացվել հետևյալ դեպքերում

ա) օբյեկտի լուծարման պարագայում, բ) օբյեկտի ղեկավարի խնդրանքով, գ) պետական կամ պետական բաժնեմաս ունեցող օբյեկտի պետական կառավարման վերադաս մարմնի խնդրանքով, դ) ստուգումն իրականացնող պետական մարմնի ղեկավարի թույլտվությամբ, ե) ԳՀ վարչապետի հանձնարարությամբ:

Ստուգվող օբյեկտի պաշտոնատար անձն ու հարկային տեսուչն ունեն որոշակի իրավունքներ ու պարտականություններ:

Ստուգվող օբյեկտի պաշտոնատար անձն իրավունք ունի՝

ա) արգելել հարկային տեսուչի մուտքն ստուգվող օբյեկտ, եթե վերջինիս կողմից խախտվել են հիշյալ կարգով սահմանված ստուգումների և ուսումնասիրությունների կազմակերպման 7-10-րդ կետերի պահանջները, բ) չկատարել հարկային տեսուչի իրավասություններից, ինչպես նաև ստուգման (ուսումնասիրության) նպատակներին ցուցաբերող պահանջները, գ) ծանոթանալ ստուգումների ակտերի հետ, ինչպես նաև ուսումնասիրության արդյունքով կազմված տեղեկանքի (արձանագրության) հետ, դ) ստուգվող օբյեկտի շահերի պաշտպանության նպատակով ստուգումներին մասնակից դարձնել նասնագետների, փորձագետների, աուդիտային ծառայության ներկայացուցիչների, փաստաբանների, ե) ներկայացնել բացատրություններ, հարուցել միջնորդություններ, սուսմանված կարգով զանգատարկել հարկային տեսուչի գործողությունները, գ) պահանջել հարկային տեսուչի ապօրինի գործողությունների հետևանքով պատճառված վնասի հատուցումը:

Ստուգվող օբյեկտի պաշտոնատար անձը պարտավոր է այն տեղծել անհրաժեշտ պայմաններ ստուգում (ուսումնասիրություն) իրականացնելու համար, բ) կատարել հարկային տեսուչի օրինական պահանջներն ու ցուցումները չխոչընդոտելով ստուգման (ուսումնասիրության) ընթացքը, ներկայացնել պահանջվող փաստաթղթերը, տվյալները, այլ տեղեկություններ ու իրականացնել պահանջվող գործողությունները, գ) հարկային տեսուչի պահանջով ապահովել համապատասխան մասնագետների ժամանակցությունն ստուգման (ուսումնասիրման) աշխատանքներին:

Գարկային տեսուչն իրավասության սահմաններում ստուգում (ուսումնասիրություն) իրականացնելու ընթացքում իրավունք ունի՝

ա) պահանջել փաստաթղթեր, տվյալներ, այլ տեղեկություններ ու տեղեկատվություն, գործողությունների կատարում, որոնք անմիջականորեն առնչվում են ստուգման (ուսումնասիրության) հետ: ք) անհրաժեշտության դեպքում ստուգումներին ներգրավել ձեռնարկության համապատասխան մասնագետների (աշխատակիցների), գ) իրականացնել ստուգման (ուսումնասիրության) նպատակի հետ կապված գույքագրումներ, չափագրումներ, հսկիչ ստուգումներ և այլն, դ) ստուգվող օբյեկտի ներկայացուցչի մասնակցությամբ ժամանակը մուտք գործել ստուգվող օբյեկտ և դրա արտադրական գրասենյակային, պահեստային և այլ տարածք, ե) վերջնել փաստաթղթեր, իրեր (փորձամուշ և այլ գույք), որոնք անմիջականորեն առնչվում են ստուգման նպատակների հետ, ինչպես նաև ԳՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ու դեպքերում իրականացնել դրանց առգրավումը, գ) իրականացնել ԳՀ օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ և ներգործության համապատասխան միջոցներ:

Ստուգման (ուսումնասիրության) ընթացքում հարկային տեսուչը պարտավոր է՝

ա) ստուգվող օբյեկտի պաշտոնատար անձանց ծանոթացնել իրենց իրավունքներին ու պարտականություններին, բ) պահպանել

ՀՀ գործող օրենսդրությունը, ստուգվող օբյեկտի օրենքով սահմանված իրավունքներն ու օրինական շահերը, գ) ապահովել պետական բյուջե և արտաբյուջետային ֆոնդեր վճարման ենթակա հարկերի և այլ պարտադիր վճարումների օրենսդրությամբ սահմանված կարգով ճիշտ հաշվարկումը և մուծումը, ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմինների վրա դրված այլ պարտականությունների կատարումը, դ) չիրապարակել ստուգվող օբյեկտի մասին գաղտնիք հանդիսացող, ցանկացած, այդ թվում՝ առևտրային, տեղեկություններ, ե) չխոչընդոտել ստուգվող օբյեկտի բնականոն աշխատանքը:

Ստուգման ընթացքում հարկային տեսուչը վերլուծում է նախորդ ստուգումների և ուսումնասիրությունների նյութերը և դրանց մեջ նշված առաջարկությունների, հանձնարարականների կատարումը, սկզբնական փաստաթղթերի և հաշվետվությունների հիման վրա ստուգում է տնտեսական գործառնությունների օրինականությունը և արժանահավատությունը՝ հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների, ֆինանսական և հաշվարկային գործարքների ճշտությունը, պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների ժամանակին կատարումը և ստուգմամբ նախատեսված այլ հարցեր իր իրավասության շրջանակներում:

Ստուգման ընթացքում հարկային տեսուչի կողմից փաստաթղթեր և այլ գույք ժամանակավորապես վերցնելու կամ սահմանված կարգով առգրավելու դեպքում կազմվում է արձանագրություն, որի մեկ օրինակը հանձնվում է ստուգվող օբյեկտի ղեկավարին: Հարկային պետական տեսուչը պատասխանատվություն է կրում ժամանակավորապես վերցված կամ առգրավված փաստաթղթերի ու իրերի պահպանման համար: Ստուգման, ուսումնասիրության ընթացքում արգելվում է կապարակնքել պահեստները, շինությունները, դրամարկղերը, էներգիայի աղբյուրները, սարքավորումները, սարքերը, եթե դրա հետեանքով խթանվելու է ստուգվող օբյեկտի բնականոն աշխատանքը: Գույքագրման նպատակով և դրա ընթացքում կապարակնքված պահեստների, դրամարկղերի և այլնի ամենօրյա հաշվառման ու շահագործման համար ստեղծվում է ժամանակավոր հանձնաժողով ստուգվող օբյեկտի և ստուգումն իրականացնող անձանց մասնակցությամբ: Ստուգման արդյունքները ձևակերպվում են ակտով: Հարկային մարմնում իրականացվող ներքին ստուգումների արդյունքները ձևակերպվում են ՀՀ հարկային տեսչության կողմից սահմանված կարգով: Ստուգման արդյունքներով բյուջեի նկատմամբ լրացուցիչ պարտավորություններ կամ այլ պարտադիր գործողություններ կատարելու անհրաժեշտություն չառաջանալու դեպքում կարող է կազմվել համապատասխան տեղեկանք: Ուսումնասիրության մասին հարկային տեսու-

չի կողմից կազմվում է տեղեկանք կամ արձանագրություն: Ստուգման ակտի (տեղեկանքի) մեջ արտացոլվում են հետևյալ տվյալները՝ 1) ակտի հերթական համարը և ամսաթիվը, 2) հանձնարարագրի համարը և ամսաթիվը, 3) ակտի կազմման վայրը, 4) ակտի օրինակների քանակը, 5) ստուգման ժամկետը, 6) հարկային մարմնի անվանումը, հարկային տեսուչի (տեսուչների) ազգանուն, անուն, հայրանունը, 7) ստուգվող օբյեկտի լրիվ անվանումը, 8) ստուգմանը մասնակցած ստուգվող օբյեկտի ներկայացուցիչների անուն-հայրանուն-ազգանունները, պաշտոնները, 9) ստուգման նպատակը, ստուգման ընդգրկած ժամանակաշրջանը, 10) ստուգվող օբյեկտի ներկայացուցի բացատրությունները (հատուկ կարծիք), 11) ստուգման արդյունքները:

Ստուգումներն ընդգրկում են նախորդ ստուգման ժամանակահատվածից մինչև տվյալ ստուգման ժամանակն ընկած հերթական հաշվետու ժամանակաշրջանը, եթե հարկային մարմնի հանձնարարականում այլ բան չի նշված: Հարկային տեսուչը, ստուգման արդյունքներն ակտում արտացոլելիս, պետք է պարզորոշ նկարագրի խախտումները, դրանց պատճառները, խախտման կոնկրետ ժամանակը, դրանց վերացման (ուղղումների) համար անհրաժեշտ գործողությունները, համապատասխան պատասխանատվության կիրառման իրավական հիմքերը: Ելնելով ստուգման նպատակից՝ հարկային տեսուչի կողմից ակտում արձանագրվում են հարկերի և այլ պարտադիր վճարումների հաշվարկմանն ու վճարմանը, հաշվապահական հաշվառման վարմանը, դրամական գործառնություններին, հաշվետվությունների և հաշվարկների կազմմանն ու ներկայացմանն, ինչպես նաև նախորդ ստուգումների, ուսումնասիրությունների նյութերին ու դրանց հանձնարարականներին վերաբերող այլ հարցեր:

ՀՀ հարկային տեսչության սահմանած կարգով, հարկային տեսուչի կողմից իրականացված ստուգման նյութերը նախապես քննարկվում են հարկային մարմնում, եթե հանձնարարագրերով այլ բան չի նախատեսված: Ուսումնասիրության տեղեկանքում (արձանագրություններում) նշվում են հանձնարարագրի համարը, ամսաթիվը, տեղեկանքի կազմման վայրը և ստուգվող օբյեկտի լրիվ անվանումը, հարկային մարմնի անվանումը, հարկային տեսուչի ազգանունը, անունը, հայրանունը, պաշտոնը, ուսումնասիրության նպատակը և արդյունքները, ինչպես նաև համապատասխան առաջարկությունները:

Հարկային տեսուչի (տեսուչների) կողմից կազմված ստուգման ակտը ստորագրվում է տեսուչի և ստուգվող օբյեկտի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) ու գլխավոր հաշվապահի

կողմից: Տեսուչների միջև ստուգման արդյունքների մասին տարածայնություններ լինելու դեպքում նրանց կարծիքներն ակտուսն արձանագրվում են առանձին-առանձին: Ստուգվող օբյեկտի ղեկավարի և գլխավոր հաշվապահի կողմից ակտը ստորագրելուց հրաժարվելու դեպքում, հարկային տեսուչն այդ մասին ակտում կատարում է համապատասխան գրառում: Ակտի առաջին օրինակը հանձնվում է ստուգվող օբյեկտին, երկրորդը՝ հարկային մարմնին: Եթե ստուգվող օբյեկտը պետական (պետական բաժնեմաս ունեցող) ձեռնարկություն է, ապա ակտի օրինակի պատճենն ուղարկվում է համապատասխան պետական վերադաս մարմնին:

Ուսումնասիրության տեղեկանքը (արձանագրությունը) ներկայացվում է ստուգվող օբյեկտին՝ ստորագրության համար: Ստուգվող օբյեկտի ղեկավարի խնդրանքով նրան կարող է տրամադրվել տեղեկանքի օրինակ: Ձեռնարկություններում ուսումնասիրության անցկացումը (և դրա արդյունքներով տեղեկանքի կազմումը) բյուջեի նկատմամբ պարտավորությունների կամ այլ պարտադիր գործողությունների անմիջականորեն կատարում չի կարող առաջացնել: Հարկային տեսուչի կողմից կազմված ստուգման ակտում նշված փաստերի հետ համաձայն չլինելու դեպքում, ստուգվող օբյեկտի ղեկավարը և գլխավոր հաշվապահը պարտավոր են գրավոր բացատրություն ներկայացնել հարկային տեսուչին՝ ակտը ստորագրելուց հրաժարվելու պատճառի մասին:

Ստուգվող օբյեկտի ղեկավարի կողմից հարկային տեսուչի գործողությունները կարող են գանգատարկվել այն հարկային մարմնին, որին անմիջականորեն ենթարկվում է հարկային տեսուչը: Գանգատները քննության են առնվում, և դրանց վերաբերյալ հարկային մարմինը որոշում է ընդունում ոչ ուշ, քան գանգատն ստանալու օրվանից երեսուներորդ օրվան: Նշված ժամկետում գանգատի վերաբերյալ որոշում չընդունելու դեպքում, գանգատում բերված պատճառաբանությունները համարվում են ընդունված:

Հարկային մարմնի կողմից երեսուներորդ օրվան գանգատը մերժվելու դեպքում, ստուգվող օբյեկտի ղեկավարն իրավունք ունի գանգատարկել ՀՀ հարկային տեսչություն կամ դատարան այդ որոշման կրկնօրինակը ստանալու պահից՝ երեսուն օրվա ընթացքում:

Ստուգվող օբյեկտին պատճառված վնասը, այդ թվում նաև բաց թողնված շահույթը ենթակա են հատուցման նախատեսված կարգով:

ԳԼՈՒԽ XII

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑԻՑ ԳԱՆՁՎՈՂ ՀԱՐԿԵՐ

§ 1. ՇԱՀՈՒԹԱՅՐԱԿ

Հայաստանի հանրապետության հարկային համակարգը ձևավորվել է 1991-1995թթ., և կարճ ժամանակահատվածում, ելնելով ազատ շուկայական հարաբերությունների պահանջներից, մշակվել և հղկվել է, ապահովելով անկախ զարգացման ուղին բռնած հանրապետության ներքին և արտաքին ֆունկցիաների իրականացումը:

Հանրապետության հարկային օրենսդրության հիմնաքարը հանդիսանում է «Հարկերի և տուրքերի մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է հարկային համակարգի կառուցվածքը, նրա միասնականությունը, հարկերի հասկացությունը, տեսակները, հարկման օբյեկտները և սուբյեկտները, նրանց իրավունքները և պարտականությունները:

Այսօր պետական բյուջեի եկամուտների շարքում գերակշռում են տնտեսական կազմակերպություններից գանձվող հարկերը, որոնք սահմանված են ՀՀ «Հարկերի մասին» օրենքի 12-րդ հոդվածում: Դրանց թվին են պատկանում շահութահարկը, եկամտահարկը, ակցիզային, ավելացված արժեքի, հողի հարկերը և գույքահարկը: Շահութահարկը սահմանվել է 1997թ. սեպտեմբերի 30-ի «Շահութահարկի մասին» օրենքով: Այս օրենքի 2-րդ հոդվածում տրված է շահութահարկի հասկացությունը: Ըստ որի շահութահարկը հարկ վճարողների կողմից սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է:

Շահութահարկ վճարողներ են՝ ՀՀ ռեզիդենտները (բացառությամբ՝ ՀՀ բյուջետային հիմնարկների) և ՀՀ կենտրոնական բանկի) և ոչ ռեզիդենտները: Ընդ որում, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու դեպքում, բյուջետային հիմնարկը դադարում է լինել որպես այդպիսին և գործունեության այդ մասով հարկային պարտավորությունները հաշվարկվում են օրենքով սահմանված կարգով:

Ռեզիդենտ են համարվում Հայաստանի Հանրապետությունում ստեղծված (պետական գրանցում ստացած) իրավաբանական անձինք և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները:

Ոչ ռեզիդենտ են համարվում օտարերկրյա պետություններում ստեղծված իրավաբանական անձինք և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները և դրանց կողմից Հայաստանի Հանրապետությունից դուրս ստեղծված իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները:

Շահութահարկերի գանձման *օբյեկտ է համարվում* հարկվող շահույթը, որը հանդես է գալիս որպես հարկատուի համախառն եկամուտի և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերություն:

Ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը, ոչ ռեզիդենտների համար հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը:

Հարկատուի համախառն եկամուտը հաշվետու տարում հարկատուի բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից:

Եկամուտ է համարվում հաշվետու տարվա ընթացքում ակտիվների ներհույքը, աճը կամ պարտավորությունների նվազումը, որոնք հանգեցնում են հարկատուի սեփական կապիտալի նվազեցմանը:

Սեփական կապիտալ է համարվում ակտիվների և պարտավորությունների տարբերությունը: Ակտիվ է համարվում հարկատուին սեփականության իրավունքով պատկանող ցանկացած միջոց՝ գույքը (նյութական ակտիվները), գույքային իրավունքները և գույքային իրավունքների հետ կապված անձնական՝ ոչ գույքային իրավունքները (ոչ նյութական ակտիվները), արտարժույթը, արժեթղթերը, դեբիտորական պարտքը և այլ գույքը: Պարտավորություն է համարվում հարկատուի առկա պարտքը (վարկ, կրեդիտորական պարտք, հարկային պարտավորություն և այլն):

Եկամուտ չեն համարվում.

- մասնակիցների (բաժնետեր, վայատեր, անդամ) կողմից հարկատուի կանոնադրական կապիտալում (հիմնադրամում) կատարված ներդրումները.
- հարկատուի բաժնետոմսերի տեղաբաշխման գնի և անվանական արժեքի դրական տարբերությունը.
- համատեղ գործունեության նպատակով միավորվող միջոցները (համատեղ գործունեությունը կարող է իրականացվել այդ

նպատակի համար ստեղծված ցանկացած տեսակի իրավաբանական անձի միջոցով կամ առանց դրա).

- արտարժույթի և արտարժույթով արտահայտված այլ ակտիվների և պարտավորությունների վերագնահատման դրական արդյունքը.

- 1997թ.-ին թողարկված ՀՀ գանձապետական պարտատոմսերից և պետական այլ արժեթղթերից ստացվող տոկոսները և զեղչի ձևով եկամուտները:

Հարկվող շահույթը որոշելիս՝ համախառն եկամտից թույլատրվում է կատարել օրենքով նախատեսված նվազեցումները (ծախսեր, կորուստներ և այլ նվազեցումներ): Ընդ որում, նվազեցումների միևնույն գումարը համախառն եկամտից հանվում է միայն մեկ անգամ:

Շահութահարկի մասին օրենքը ամրապնդում է հարկվող *շահույթի դրույքաչափերը*

Շահութահարկի գումարը հարկվող շահույթի նկատմամբ հաշվարկվում է 20% միասնական դրույքով:

Շահումներով խաղերի եւ վիճակախաղերի կազմակերպումից ու անցկացումից ստացված եկամուտների դիմաց շահութահարկը վճարվում է 70 տոկոս դրույքաչափով (բացառությամբ՝ այն դեպքերի, երբ օրենքով նախատեսված են հաստատագրված վճարներ):

Առանձին վճարողների, նրանց խմբերի, գործունեության տեսակների համար օրենքով կարող են սահմանվել շահութահարկին փոխարինող հաստատագրված վճարներ:

Շահութահարկի տարբեր դրույքաչափերով /այդ թվում՝ շահութահարկի հաստատագրված վճարներով/ հարկումը շահութահարկի տարբեր դրույքաչափերով հարկվող գործունեության տեսակներ իրականացնող հարկատուն շահութահարկը վճարում է գործունեության յուրաքանչյուր տեսակի համար սահմանված առանձին դրույքաչափով: Այդ նպատակով հարկատուն վարում է եկամուտների և նվազեցումների առանձնացված հաշվառում՝ ըստ գործունեության առանձին տեսակների:

Շահութահարկի տարբեր դրույքաչափերով հարկվող գործունեության տեսակներ իրականացնող հարկատունները ըստ գործունեության առանձին տեսակների հարկվող շահույթի որոշման ժամանակ ընդհանուր արտադրական և ընդհանուր տնտեսական ծախսերը (կառավարման ապարատի աշխատավարձ, սոցիալական ապահովագրության վճարներ, կառավարման տեխնիկական միջոցների և ոչ արտադրական (ընդհանուր տնտեսական) նշանակության հիմնական միջոցների նորոգում, պահպանում և շահագործում, խորհրդատվական և տեղեկատվական ծառայություններ, գրասեն-

յակային, փոստային, հեռախոսային, հեռագրային և նմանատիպ այլ ծախսեր), որոնք ըստ գործունեության առանձին տեսակների հնարավոր չէ առանձնացնել, բաշխում են ելնելով ընդհանուր համախառն եկամտի մեջ գործունեության առանձին տեսակների գծով ստացված համախառն եկամուտների տեսակարար կշիռներից:

Ըստ գործունեության առանձին տեսակների համախառն եկամուտների և նվազեցումների առանձին հաշվառվում չվարելու դեպքում դրանց մեծությունը հարկային տեսչության մարմինների կողմից կարող է որոշվել՝ ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածով:

Եթե շահութահարկի տարբեր դրույթաչափերով հարկվող գործունեության տեսակներ իրականացնող հարկատուի հաշվետու տարվա գործունեության առանձին տեսակների գծով ստացվել է վնաս, իսկ առանձին տեսակների գծով՝ շահույթ, ապա շահութաբեր գործունեության տեսակների գծով հարկվող շահույթը որոշելիս այն նվազեցվում է գործունեության շահութաբեր տեսակների գծով ստացված վնասի գումարի չափով:

«Շահութահարկի մասին» օրենքի էական տարրերից մեկն այն ժամկետներն են, որի ընթացքում կատարվում են վճարումները: Օրենքը նախատեսում է, որ հարկատուն պարտավոր է շահութահարկի գումարը վճարել պետական բյուջե՝ մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա ապրիլի 25-ը ներառյալ:

Շահութահարկը կարգավորող իրավական ակտերով թույլատրվում է շահութահարկի վճարման ժամկետների հետաձգում:

Բնական գազի, էլեկտրական և ջերմային էներգիայի, խմելու և ոռոգման ջրի արտադրության, տեղափոխման և վաճառքի գործարքների և գործառնությունների, ջրահեռացման ծառայությունների, երկաթուղային փոխադրումների իրացման, ինչպես նաև պետական գնումները և պետական պատվերները կարգավորող օրենքներին կամ իրավական այլ ակտերին համապատասխան ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման գծով շահութահարկի վճարման ժամկետը հետաձգվում է մինչև դրանց իրացման դիմաց վճարման հաշվետու ժամանակաշրջանը:

Նշված գործարքների, գործառնությունների և ծառայությունների իրացման դիմաց մասնակի վճարումների դեպքում վճարման հաշվետու ժամանակաշրջանում շահութահարկի վճարումը կատարվում է ստացված գումարներին համամասնորեն:

Նշված գործարքների, գործառնությունների և ծառայությունների գծով հարկային հաշվառումը տարվում է ընդհանուր կարգով՝ հաշվեգրման եղանակով:

Շահութահարկի վճարման ժամկետների առումով օրենսդիրը

արտոնություններ է սահմանել նաև օտարերկրյա ներդրումներով ձեռնարկությունների համար:

Եթե օտարերկրյա ներդրողների փաստացի կատարած ներդրման ընդհանուր արժեքը 01.01.98թ.-ից հետո կազմում է առնվազն 500,0 մլն. դրամ, ապա տվյալ ռեզիդենտների շահութահարկի գումարը նվազեցվում է:

Վերը նշված արտոնության ժամկետում հարկատուի լուծարման դեպքում շահութահարկի գումարն այդ արտոնության ժամանակաշրջանի համար հաշվարկվում է լրիվ չափով՝ գործունեության ամբողջ ժամանակաշրջանի համար:

Մինչև 1998 թվականի հունվարի 1-ը օտարերկրյա ներդրումներով ձեռնարկություններին և բանկերին շահութահարկի գծով օրենքով կամ այլ իրավական ակտով արտոնություններ տրված լինելու դեպքում մինչև տվյալ օրենքով կամ այլ իրավական ակտով դրանց համար սահմանված ժամկետի ավարտը հարկատուն, իր հայեցողությամբ, հարկային տեսչության մարմիններ ներկայացվող հայտարարության հիման վրա, կարող է օգտվել վերը նշված արտոնությունից:

Մինչև 01.01.98թ. գործող ժամկետային արտոնությունները օտարերկրյա ներդրումներով ձեռնարկություններին վերապահվում է փաստացի ներդրման կատարումն ապահովելու նախապայմանով:

Նոր ստեղծված ձեռնարկությունների համար մինչև 01.01.98թ.-ը գործող օրենսդրությամբ համապատասխան հարկային արտոնությունից օգտվելու դեպքում տվյալ հարկատուի համար նոր օրենքով սահմանված արտոնության ժամկետը նվազեցվում է մինչև 01.01.98թ.-ը վերապահված արտոնության ժամկետի չափով:

Շահութահարկի մասին օրենքով ամրապնդված են նաև որոշակի արտոնություններ, որոնք վերաբերում են գյուղատնտեսական արտադրության և շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություններին:

Այսպես, շահութահարկի վճարումից ազատվում են գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված հարկատուները գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամտի, ինչպես նաև հիմնական միջոցների և այլ ակտիվների իրացումից ստացված և այլ եկամուտների մասով, եթե վերջիններիս տեսակարար կշիռը համախառն եկամտի մեջ չի գերազանցում 10%-ը: Գյուղատնտեսական արտադրանքի գծով ստացված եկամտի ճշգրիտ հաշվարկման անհնարինության դեպքում այն հաշվարկվում է հիմնվելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված կադաստրային զուտ եկամտի տվյալների վրա: Գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված հարկա-

տուների գործունեության այլ տեսակներից ստացված շահույթը ենթակա է շահութահարկով հարկման ընդհանուր կարգով:

Նշված արտոնությունը չի վերապահվում արդյունաբերական բնույթի գյուղատնտեսական ձեռնարկություններին (գազանաբուծական տնտեսություններ, անասնապահական համալիրներ, ագրոկոմբինատներ, թռչնաբուծական ֆաբրիկաներ և այլն) արդյունաբերական վերամշակում անցած գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամտի մասով: Գյուղատնտեսական ձեռնարկությունների տարբերակումը, ըստ արդյունաբերական բնույթի գյուղատնտեսական ձեռնարկությունների, կատարվում է ԳՅ կառավարության սահմանած հայտանիշների հիման վրա:

Շահութահարկի վճարումից ազատվում են ԳՅ հարկային տեսչության մարմիններում հաշվառման կանգնած.

- հասարակական և կրոնական կազմակերպությունները, ԳՅ քաղաքական կուսակցությունները,

- համատիրությունները, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող այն կազմակերպությունները, որոնք կազմակերպվել և գործում են բացառապես կրոնական, բարեգործական, գիտական, հասարակական անվտանգության նպատակով փորձարկման, շրջակա միջավայրի պաշտպանության, գրականության, մշակույթի և կրթության զարգացման և քարոզման, սպառողների իրավունքների պաշտպանության, սիրողական սպորտի խթանման և կազմակերպման, մարդու, կանանց, երեխաների և ծերերի իրավունքների պաշտպանության նպատակներով, եթե դրանց եկամուտները օգտագործվում են բացառապես կանոնադրական նպատակների համար:

§ 2. ԱՎԵԼԱԾՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ

Ավելացված արժեքի հարկը սահմանվել է ԱԺ կողմից 1997թ. մայիսի 14-ին: Օրենքի առաջին հոդվածում լուսաբանված է նրա հասկացությունը, ըստ որի՝ ավելացված արժեքի հարկը անուղղակի հարկ է, որը սահմանված կարգով վճարվում (գանձվում) է պետական բյուջե ապրանքների ներմուծման, ԳՅ տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում:

Օրենքի 2-րդ հոդվածում սահմանված են այն սուբյեկտները, որոնք ավելացված արժեքի հարկ են վճարում:

Ավելացված արժեքի հարկ վճարողներ են համարվում սահմանված կարգով ինքնուրույն տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեություն վարող և ավելացված արժեքի հարկով հարկման ենթակա գործարքներ (գործառնություններ) իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կար-

գավիճակ չունեցող ձեռնարկությունները: Ավելացված արժեքի հարկով հարկման նպատակով.

- ձեռնարկատիրական գործունեություն է համարվում շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով պարբերաբար իրականացվող տնտեսական գործունեությունը,

- տնտեսական գործունեություն է համարվում ցանկացած գործունեություն, որն իրականացվում է որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց:

Ֆիզիկական անձինք (ԳՅ քաղաքացիներ, օտարերկրյա քաղաքացիներ, քաղաքացիություն չունեցող անձինք) ավելացված արժեքի հարկ վճարող չեն հանդիսանում, եթե գործատուների հետ կնքած պայմանագրերի համաձայն հանդիսանում են վարձու աշխատողներ և միաժամանակ չեն իրականացնում ավելացված արժեքի հարկով հարկման ենթակա հետևյալ գործարքներ (գործառնություններ).

- ապրանքների մատակարարում,

- ծառայությունների մատուցում,

- ապրանքների ներմուծում:

Ֆիզիկական անձինք դառնում են ավելացված արժեքի հարկ վճարողներ և նրանց սահմանված կարգով գանձվում է ավելացված արժեքի հարկ ԳՅ տարածք ապրանքներ ներմուծելիս, եթե նրանց կողմից ներմուծվող ապրանքների քանակը կամ արժեքը գերազանցում է «Մաքսատուրքի դրույքաչափերի մասին» ԳՅ օրենքով սահմանված չափերը:

«Ավելացված արժեքի հարկը իրավական կարգավորման տեսանկյունից, հատկապես սուբյեկտների կարգավիճակի առումով մյուս հարկերի համեմատությամբ ունի որոշակի առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են *ստացված հասույթի ծավալով*:

Ավելացված արժեքի հարկով հարկման ենթակա ապրանքների մատակարարում և ծառայությունների մատուցում իրականացնող այն անձինք, որոնց ընթացիկ եռամսյակին անմիջապես նախորդող 4 եռամսյակների ընթացքում այդ գործարքների իրացումից ստացված հասույթի ընդհանուր ծավալը պակաս է 3,0 մլն. դրամից, հարկ վճարող են համարվում այն պահից, երբ որևէ գործարքի իրականացմամբ տվյալ եռամսյակի և դրան նախորդող 3 եռամսյակների ընթացքում այդ գործարքների իրացումից ստացված հասույթի ընդհանուր ծավալը գերազանցում է 3,0 մլն. դրամը գերազանցող մասի համար:

Միաժամանակ, անկախ նշված դրույթներից այն անձինք, ովքեր հարկային տեսչության համապատասխան մարմնին հայտարարություն կներկայացնեն ավելացված արժեքի հարկ վճարող ճանաչվելու վերաբերյալ, հախտարարությունը ներկայացնելու օրվանից կհամարվեն ավելացված արժեքի հարկ վճարող:

ԱԱԳ մասին օրենքով սահմանված է հարկման օբյեկտը, որը ըստ էության դրսևորվում է հասույթի ձևով:

Ավելացված արժեքի հարկի հաշվարկման նպատակով հասույթ է համարվում տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեություն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեության ընդհանուր արդյունքը առանց կատարված ծախսերի (այդ թվում՝ ապրանքների ձեռքբերման գծով ծախսերի) պակասեցման: Առևտրի ոլորտում հասույթը հավասարեցվում է ապրանքաշրջանառությանը:

Ավելացված արժեքի հարկ վճարողների համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում ավելացված արժեքի հարկ վճարողների կողմից իրականացվող ավելացված արժեքի հարկով հարկման ենթակա բոլոր գործարքների (գործառնությունների) ամբողջ արժեքը (շրջանառությունը), բացառությամբ սահմանված դեպքերի:

Ավելացված արժեքի հարկով հարկվող օբյեկտները սպառիչ թվարկված են օրենքի տեքստում որպես գործարքներ: Դրանք են.

1) ապրանքների մատակարարումը՝ գործարք, որն իրականացվում է ապրանքների (այդ թվում՝ արտադրանքի և անշարժ գույքի) սեփականության իրավունքը հատուցման դիմաց այդ անձի փոխանցելու միջոցով (ֆիզիկական անձանց անձնական գույքի օտարումը (բացառությամբ՝ սահմանված դեպքերի) ապրանքների մատակարարում չի համարվում),

2) ծառայությունների մատուցումը (այդ թվում՝ ապրանքների և անշարժ գույքի վարձակալություն) ապրանքների մատակարարում չհամարվող գործարք (գործառնություն), որն իրականացվում է որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց, ներառյալ՝ ոչ նյութակազմ ակտիվների իրացումը (փոխանցումը),

3) անհատույց (մասնակի հատուցմամբ) սպառումը՝ սահմանված կարգով ավելացված արժեքի հարկ վճարող անձանց կողմից ապրանքների անհատույց հատկացում կամ ծառայությունների անհատույց մատուցում տվյալ անձանց կամ այլ անձանց, կամ նրանց ապրանքների մատակարարում և ծառայությունների մատուցում տվյալ գործարքների (գործառնությունների) համար սովորաբար կիրառվող գներից նվազագույն ցածր գներով (բացառությամբ հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերի), ընդ որում՝ նշված գործարքները (գործառնությունները) համարվում են ավելացված արժեքի հարկով հարկվող, եթե իրականացվում են ինքնուրույն տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեություն վարող ավելացված արժեքի հարկ վճարող հանդիսացող ֆիզիկական և իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ

չունեցող ձեռնարկությունների կողմից.

4) ապրանքների ներմուծումը (բացառությամբ՝ սահմանված դեպքերի) ավելացված արժեքի հարկը հաշվարկվում և գանձվում է ՀՀ սահմանին մաքսային մարմինների կողմից ՀՀ ներքին տարածք ներմուծվող այն ապրանքներից, որոնց համար «մաքսատուրքի դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքով սահմանված է 10% մաքսատուրք (ինչպես նաև այն ապրանքներից, որոնց համար նշված օրենքով սահմանված է մաքսատուրք, սակայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով (մասնավորապես, Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների միջև գործող «Ազատ առևտրի մասին միջկառավարական համաձայնագրերով») այդ ապրանքները ներմուծվում են առանց մաքսատուրքի վճարման):

ԱԱԳ մասին օրենքով սահմանված է հարկի և գանձման դրույքաչափերը:

Ավելացված արժեքի հարկի դրույքաչափը սահմանվում է 20% ապրանքների ու ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ: Ապրանքների ու ծառայությունների լրիվ արժեքով հատուցման գումարի մեջ (ներառյալ 20% դրույքաչափը) ավելացված արժեքի հարկի գումարը որոշվում է 16,67% հաշվարկային դրույքաչափով:

Սահմանված դեպքերում ապրանքների և ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ ավելացված արժեքի հարկի դրույքաչափը սահմանված է 0%:

Ավելացված արժեքի հարկ առանձին վճարողների, նրանց խմբերի, գործարքների և գործառնությունների առանձին տեսակների համար օրենքով կարող են սահմանվել ավելացված արժեքի հարկը փոխարինող հաստատագրված վճարումներ:

ԱԱԳ օրենքը սահմանում է առանձին դեպքերում հարկի վճարման ժամկետները:

Հայաստանի Հանրապետություն ապրանքների ներմուծման դեպքում դրանց համար ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով ավելացված արժեքի հարկ վճարվում է ներմուծման օրվանից 10 օրվա ընթացքում: Եթե նախապես հայտարարված մաքսային ռեժիմը (որի համաձայն մաքսային սահմանով բացթողման ժամանակ ապրանքներից ավելացված արժեքի հարկ չի գանձվում) փոխարինվում է ազատ շրջանառության համար բացթողման (ներմուծման) ռեժիմով, ապա վճարողները (կամ մաքսային օրենսդրությամբ սահմանված վճարումների համար պատասխանատու այլ անձինք) պարտավոր են ավելացված արժեքի հարկի չգանձված գումարները վճարել ներմուծման մաքսային ռեժիմով ապրանքների վերահայտարարագրման կամ այդ մասին հայտնի դառնալու օրվանից հետո 10-օրյա ժամկետում:

Հայաստանի Հանրապետությունը ներմուծվող ապրանքների համար ՀՀ մաքսային մարմիններում վճարողների կողմից ավելացված արժեքի հարկի վճարումն իրականացվում է ՀՀ մաքսային տարածք ապրանքների ներմուծման օրվանից 10 օրվա ընթացքում:

Հայաստանի Հանրապետությունը ներմուծվող ապրանքների համար ավելացված արժեքի հարկը վճարվում է ներմուծողի ընտրությամբ հետևյալ կարգով.

- մինչև ներմուծումը կանխավճարների ձևով,
- ամսից ապես ներմուծման պահին (մաքսային ձևաերպումների ժամանակ),
- ներմուծման օրվանից 10 օրվա ընթացքում, եթե մաքսային ձևակերպման ժամանակ ավելացված արժեքի հարկի վճարման համար ներկայացվում է ՀՀ կենտրոնական բանկի սահմանված չափանիշները բավարարող բանկի կողմից տրված երաշխիքային նամակ:

«ժամանակավոր ներմուծում», «մաքսային պահեստ», «Տարանցիկ փոխադրում» մաքսային ռեժիմներով Հայաստանի Հանրապետությունը ապրանքների ներմուծման դեպքերում ավելացված արժեքի հարկ չի հաշվարկվում: Նշված մաքսային ռեժիմներով նախկինում հայտարարագրված ապրանքները «Ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով վերահայտարարագրման դեպքում ներմուծողը պարտավոր է ավելացված արժեքի հարկ վճարել սահմանված կարգով վերահայտարարագրման ժամանակ կամ դրա մասին հայտնի դառնալու օրվանից 10 օրվա ընթացքում:

Ավելացված արժեքի հարկի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ներմուծողից Պանձվում է տույժ՝ սահմանված կարգով և չափով:

Հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարումները պետական բյուջե կատարվում են յուրաքանչյուր եռամսյակ մինչև հաշվետու տարվան հաջորդող փետրվարի 25-ը:

Ավելացված արժեքի հարկ վճարողները վերը նշված ժամկետներում իրենց գրանցման վայրի հարկային տեսչության մարմին են ներկայացնում պետական բյուջե ավելացված արժեքի հարկի վճարման համար համապատասխան հաշվարկներ՝ ՀՀ հարկային տեսչության կողմից սահմանված ձևով:

Ինչ վերաբերվում է *ավելացված արժեքի հարկից սահմանվող արտոնությունների շրջանակներին*, ապա ռեզնդիրը հատկապես նկատի ունենալով ներմուծվող ապրանքների տեսակահին արտոնությունների ընդարձակ լիաճորություններ է վերապահել տնտեսվարող սուբյեկտներին ելնելով նրանց գործունեության բնույթից: Այսպես, ավելացված արժեքի հարկից ազատվում են ավելացված

արժեքի հարկով հարկման ենթակա հետևյալ գործարքները (գործառնությունները).

- համընկրթական դպրոցները, պրոֆտեսիսիկական ուսումնարանները, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունները ուսման վարձի մասով,

- դպրոցական գրելու և նուտայի տետրերի, նկարչական ալբոմների, մանկական և դպրոցական գրականության, դպրոցական ուսումնական հրատարակությունների իրացումը, բուհերի, մասնագիտացված գիտական կազմակերպությունների, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հրատարակած գիտական և ուսումնական հրատարակությունների իրացումը, գիտահետազոտական աշխատանքները,

- մանկական սննդի իրացումը,

- ամանմաբուժական դեղամիջոցների իրացումը, գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունում օգտագործվող թունաքիմիկատների, պարարտանյութերի, գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների սերմացուների և տնկանյութի իրացումը՝ գյուղատնտեսական արտադրանք արտադրողներին,

- արտադրողի կողմից Հայաստանի Հանրապետությունում արտադրված գյուղատնտեսական արտադրանքի իրացումը,

- նախադպրոցական հիմնարկներում երեխաներին պահելու, տուն-ինտերնատների, մանկատների, արատներ ունեցող երեխաներ կամ հաշմանդամներ խնամող հաստատությունների, ծերանոցներում գտնվող անձանց խնամքի հետ կապված ծառայությունները, ինչպես նաև խնամվողների կողմից այնտեղ ապտրաստված ապրանքների և կատարված ծառայությունների իրացումը,

- ռադիոհաղորդումները և սպառողների կողմից չհատուցվող հեռուստատեսային հաղորդումները, ներառյալ այդ հաղորդումները իրականացնելու համար երրորդ անձանցից միջոցների ստացումը (նշված արտոնությունները կիրառվում է, եթե միջոցներ տրամադրողի նկատմամբ՝ ստացողի մոտ որևէ պարտավորություն (մասնավորապես, ծառայություն մատուցելու) չի առաջանում),

- թերթերի և ամսագրերի իրացումը,

- թաղման բյուրոների, գերեզմանատների, ինչպես նաև մահվան և հուղարկավորության հետ կապված ծիսական բնույթի այլ ծառայությունների մատուցումը և համապատասխան պարագաների իրացումը,

- կրոնական ծիսակատարությունները, կրոնական պարագաների, ինչպես նաև կրոնական կազմակերպությունների կողմից այդ պարագաներ իրացումը,

- փոստային ծառայությունների, փոստային դրոշմանիշների,

փոստային բացիկների ու ծրարների, ինչպես նաև պետական տուրքային և դրոշմանիշների անվանական արժեքով իրացումը,

- վիճակախաղերի տոմսերի անվանական արժեքով իրացումը,
- ապահովագրական և վերաապահովագրական գործառնությունները (ներառյալ դրանց հետ կապած ապահովագրական միջնորդների և գործակալների կողմից մատուցվող ծառայությունները),
- կենսաթոշակային ապահովման գործառնությունները (ներառյալ դրանց հետ կապված միջնորդների և գործակալների կողմից մատուցվող ծառայությունները),
- պետական, համայնքային և գերատեսչական բնակարանային ֆոնդի վարձակալությունը, սեփականաշնորհված բնակարանների սեփականատերերից գանձվող սպասարկման վարձը, հանրակացարաններում բնակվելու վարձը, համատիրությունների, բնակարանային-շինարարական կոոպերատիվների՝ իրենց անդամներին մատուցված օրենսդրությամբ սահմանված ծառայությունները,
- դոնորային արյան, մայրական կաթի, դեղամիջոցների, դեղանյութերի, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, բժշկական տեխնիկայի և պարագաների, բուժօգնության, բուժսպասարկման (այդ թվում կանխարգելիչ և ախտորոշման) ծառայությունների, բուժկանխարգելիչ ձեռնարկություններում ու կազմակերպություններում բուժման հետ կապված և այդ բուժօգնության շրջանակներում հիվանդների կողմից պատրաստված ապրանքների և կատարված ծառայությունների իրացումը,
- օտարերկրյա պետությունների, միջազգային միջկառավարական (միջպետական) կազմակերպությունների, միջազգային, օտարերկրյա և ՀՀ հասարակական (ներառյալ բարեգործական), կրոնական և նմանատիպ բնույթի ոչ պետական այլ կազմակերպությունների, առանձին բարերարների կողմից ապրանքների մատակարարումը և ծառայությունների մատուցումը մարդասիրական օգնության և բարեգործական (համանման այլ հասարակական և սոցիալական) ծրագրերի (գործունեության) շրջանակներում, ինչպես նաև նման ծրագրերի իրականացման հետ անմիջականորեն կապված և դրանց համար զգալի նշանակություն ունեցող ապրանքների մատակարարումը և ծառայությունների մատուցումը Հայաստանի Հանրապետությունում ավելացված արժեքի հարկ վճարողների կողմից,
- միջազգային ֆինանսական կազմակերպությունների վարկային կամ շնորհային ծրագրերի նախապատրաստման միջոցների հաշվին ապրանքների մատակարարումը և ծառայությունների մատուցումը,
- հասարակական (այդ թվում բարեգործական) և կրոնական

կազմակերպությունների կողմից անհատույց (մասնակի հատուցմամբ) սպառումը և ապրանքների ու ծառայությունների տարվա ընթացքում միանգամյա կամ ոչ պարբերական իրացումը,

- արտոնագրերի, հեղինակային իրավունքի, լիցենզիաների ստացման և հանձնման հետ կապված գործառնությունները,
- մազուրի իրացումը (ուժի մեջ է մինչև 31.12.98թ. (ներառյալ)):

Նշված ապրանքների իրացման գծով ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունները, ՀՀ օրենսդրությամբ այլ բան սահմանված չլինելու դեպքում, տարածվում են նաև դրանց վաճառքի (վերավաճառքի) գործառնությունների վրա:

- վարկերի (փոխառությունների) տրամադրումը, այդ թվում պարտքերի կամ առևտրային գործարքների ֆինանսավորումը, ֆակտորինգային այլ գործառնությունները,
- երաշխավորությունների, բանկային երաշխիքների տրամադրումը, ակրեդիտիվների բացումը,
- արժեթղթերի թողարկումը, տեղաբաշխումը, գնումը, վաճառքը, այդ թվում վերավաճառելու նպատակով կամ պայմանով գնումը, ի պահ ընդունումը և հաշվառումը,
- մուրհակների, չեկերի, վճարագրերի, վճարային այլ գործիքների թողարկումը, գնումը, զեղչումը, կամ սպասարկումը,
- արտարժույթի (թղթադրամի և մետաղադրամի, բացառությամբ դրամագիտական նշանակություն ունեցող և այդ նպատակներով օգտագործվող մետաղադրամների և բանկային տոմսերի) գնումը, վաճառքը ու փոխանակումը, հայկական դրամի և արտարժույթի ֆյուչերսների, օպցիոնների և նման այլ գործարքների կատարումը,
- կանխիկի տրամադրման ծառայությունները,
- բանկերի կողմից ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայությունների մատուցումը,
- լիազորագրային կառավարման կամ այլ ձևով այլ անձանց ներդրումների (ինվեստիցիաների) կառավարումը,
- թանկարժեք մետաղների ստանդարտացված (բանկային) ձուլակտորների գնումը, վաճառքը, դրանցով արտահայտված հաշիվների բացումն ու վարումը, դրանցով այլ գործառնությունների կատարումը,
- ֆինանսական վարձակալության իրականացումը,
- բրոքերային և միջնորդական այլ ծառայություններ,
- բանկի կողմից արժեթղթերի, թանկարժեք մետաղների, քարերի, ոսկերչական իրերի, այլ արժեքների և փաստաթղթերի ի պահ ընդունումը,
- բանկի տրամադրության տակ մնացած գրավի իրացումից ստացված հասույթը (նշված դեպքում գրավի իրացումից ստացված

հասույթից ավելացված արժեքի հարկ չի հաշվարկվում միայն օրենքով սահմանված կարգով բռնագանձված (դատարանի որոշմամբ) գրավի իրացման դեպքում),

- գումարների (հասույթների, պարտադիր, կոմունալ և այլ վճարների) ընդունման, ինչպես նաև աշխատավարձի, թոշակների, նպաստների, ապահովագրական և այլ վճարների կատարման ծառայությունները կնքված պայմանագրերի համաձայն:

Միաժամանակ, ավելացված արժեքի հարկից չեն ազատվում նշված ծառայությունների հետ կապված քաղվածքների և այլ տեղեկությունների ձևակերպումը և տրամադրումը, արժեթղթերի, չեկերի, վճարները:

§ 3. ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿ

Ակցիզային հարկը ՀՀ հարկային համակարգի բաղկացուցիչ մասն է, որի իրավական կարգավորումը սահմանվել է ՀՀ ԱԺ 1997թ. հունիսի 23-ի «Ակցիզային հարկի մասին» օրենքով: Իրավական այս ակտի առաջին հոդվածում ասվում է, որ ակցիզային հարկը պետական բյուջե վճարվող անուղղակի հարկ է:

Ակցիզային հարկի սուբյեկտները, նրանց կարգավիճակի առանձնահատկությունները թվարկված են հարկի մասին օրենքի երրորդ հոդվածում, որտեղ ասվում է, որ ակցիզային հարկ վճարողներ են հանդիսանում Հայաստանի Հանրապետությունում ենթակցիզային ապրանքներ արտադրող-իրացող, ինչպես՝ նաև Հայաստանի Հանրապետություն ներմուծող ֆիզիկական անձինք, իրավաբանական անձինք և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները:

Հայաստանի Հանրապետությունում սահմանված կարգով պետական գրանցում չստացած պատվիրատուի կողմից տրված հունքից ՀՀ տարածքում պատրաստվող ենթակցիզային ապրանքների համար հարկ վճարող է հանդիսանում այդ ապրանքները պատրաստողը:

Ակցիզային հարկով հարկվում են Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ապրանքների իրացումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքատեսակները.

- 1) ձկան խավյար,
- 2) գարեջուր, խաղողի և այլ գինիներ, գինեմյութ, սպիրտ և սպիրտային խմիչքներ,
- 3) սիգարետ, սիգարետախմոր և սիգարետներ՝ ծխախոտով կամ դրա փոխարինողներով,
- 4) բենզին, դիզելային վառելիք,

- 5) բնական կաշվից հագուստ և հագուստի պարագաներ,
- 6) բնական մորթի, դրանից պատրաստված իրեր (բացի ոչխարի մորթուց կարված բանվորական և գինվորական կիսավերարկուներից),

7) բյուրեղապակյա և ճենապակյա արտադրանք,

8) ոսկերչական իրեր, զարդեղեն (բիժուտերիա):

Ակցիզային հարկի մասին օրենքում հստակ սահմանված է հարկվող օբյեկտը:

Ակցիզային հարկը վճարվում է ենթակցիզային ապրանքների իրացման հասույթից:

Հայաստանի Հանրապետությունում արտադրված ենթակցիզային ապրանքների համար հարկվող օբյեկտ է հանդիսանում դրանց իրացման շրջանառությունը բացթողման գներով (առանց ակցիզային հարկի և ավելացված արժեքի հարկի): Ենթակցիզային ապրանքներով աշխատանքի բնեղեն վարձատրության, դրանց փոխանակության, անհատույց (մասնակի հատուցմամբ) տրամադրման դեպքերում հարկվող շրջանառությունը հաշվարկվում է՝ ելնելով տվյալ հարկ վճարողի գործունեությամբ ձևավորված բացթողման գներից (դրանց բացակայության դեպքում՝ սովորաբար կիրառվող գներից):

Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ենթակցիզային ապրանքների համար հարկվող օբյեկտ են հանդիսանում այդ ապրանքները ներմուծողի (հայտարարատուի) կողմից հայտարարագրված մաքսային արժեքը (առանց ավելացված արժեքի հարկի և մաքսատուրքի):

Ակցիզային հարկով չեն հարկվում.

- 1) Հայաստանի Հանրապետությունից արտահանվող ապրանքների իրացումը,
- 2) դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, նրանց հավասարեցված միջազգային, միջկառավարական (միջպետական) կազմակերպությունների պաշտոնական օգտագործման նպատակներով ներմուծվող կամ ՀՀ տարածքում ձեռք բերվող ենթակցիզային ապրանքները,
- 3) քաղաքացիների կողմից ներմուծվող ենթակցիզային ապրանքները՝ օրենքով սահմանված կարգով բնափային կամ գումարային (500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք գումար) չափը չգերազանցելու դեպքում,
- 4) ՀՀ տարածքով տարանցիկ փոխադրվող ապրանքները,
- 5) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մարդասիրական օգնության շրջանակներում և բարեգործական նպատակներով ներմուծվող ապրանքները,

6) Գր օրենսդրությամբ սահմանված կարգով մաքսային հսկողության ներքո Գր մաքսային տարածք ժամանակավորապես ներմուծվող ապրանքները,

7) Գր մաքսային տարածքից ժամանակավորապես արտահանված ներմուծվող ապրանքները:

Ակցիզային հարկի օրենքում հստակեցված են ակցիզահարկի դրույքաչափերը:

Հայաստանի Հանրապետություն ներմուծվող բենզինի և ծխախոտի արտադրանքի և Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ծխախոտի արտադրանքի համար սահմանված են ակցիզային հարկի հաստատագրված վճարներ:

Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ենթակցիզային ապրանքների ապրանքների համար Գր մաքսային մարմիններում վճարողների կողմից ակցիզային հարկի վճարումն իրականացվում է Գր մաքսային տարածք ապրանքների ներմուծման օրվանից 10 օրվա ընթացքում:

Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ենթակցիզային ապրանքների համար ակցիզային հարկը վճարվում է ներմուծողի ընտրությամբ հետևյալ կարգով.

- մինչև ներմուծումը կանխավճարների ձևով,
- անմիջապես ներմուծման պահին (մաքսային ձևակերպումների ժամանակ),

- ներմուծման օրվանից 10 օրվա ընթացքում, եթե մաքսային ձևակերպման ժամանակ ակցիզային հարկի վճարման համար ներկայացվում է Գր կենտրոնական բանկի սահմանված չափանիշները բավարարող բանկի կողմից տրված երաշխիքային նամակ:

Նշված մաքսային ռեժիմներով նախկինում հայտարարագրված ապրանքները «Ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով վերահայտարարագրման դեպքում ներմուծողը պարտավոր է ակցիզային հարկ վճարել սահմանված կարգով վերահայտարարագրման ժամանակ կամ դրա մասին հայտնի դառնալու օրվանից 10 օրվա ընթացքում:

Ակցիզային հարկի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ներմուծողից գանձվում է տույժ՝ սահմանված կարգով և չափով:

Գր հարկային տեսչության մարմիններին ակցիզային հարկի վճարման ամսական հաշվարկները վճարողների կողմից ներկայացվում են միայն հանրապետությունում արտադրված ենթակցիզային ապրանքների համար Գր օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվետու ամսվա հաջորդող ամսվա 25-ից ոչ ուշ:

ԳԼՈՒԽ XIII

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑԻՑ ԳԱՆՁՎՈՂ ԵԿԱՄՏԱՅԱՐԿԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Եկամտահարկը համաշխարհային պրակտիկայում ամենատարածված հարկերից մեկն է, որը մուծվում է քաղաքացիների անձնական եկամուտներից: Հայաստանի հանրապետությունում այն գանձվում է Գր ԱԺ 1997թ. դեկտեմբերի 27-ին ընդունված «Եկամտահարկի մասին» օրենքի պահանջներին համապատասխան: Ֆիզիկական անձանցից գանձվող եկամտահարկը կարևոր նշանակություն ունի պետական բյուջեի եկամուտների համալրման գործում: Այս հարկը գանձվում է ինչպես Գր, այնպես էլ օտարերկրյա և քաղաքականություն չունեցող անձանցից:

Պատմական էքսկուրսները վկայում են, որ Գր միասնական եկամուտների սահմանմամբ վերացվեցին քաղաքացիներից գանձվող այնպիսի լրացուցիչ հարկեր, ինչպիսիք էին նախկինում ամուրիներից, միայնակ և սակավանդամ ընտանիքներից գանձվող, հարկը և գուղատնտեսական հարկերը:

Հանրապետության հարկային օրենսդրությամբ այսօր բացի «Եկամտահարկից» ֆիզիկական անձանցից գանձվում է գույքահարկ և հողի հարկ:

Ֆիզիկական անձանցից գանձվող «Եկամտահարկին» ներհատուկ են այն բոլոր առանձնահատկությունները և սկզբունքները, որոնցով բնութագրվում է հարկը ընդհանրապես:

Եկամտահարկը միաժամանակ արտահայտում է ազգաբնակչության կապը պետության և երկրի ազգային պետական կյանքի շինարարության մասնակցությունը, ապահովելով յուրաքանչյուր քաղաքացու տեղը պետական կառավարման ոլորտում:

«Եկամտահարկի մասին» օրենքում սահմանված է նրա հասկացությունը, սուբյեկտները, օբյեկտները, դրույքաչափերը և վճարման ժամկետները, որոնք կազմում են հարկի մասին ցանկացած օրենքի բովանդակությունը:

Եկամտահարկը հարկ վճարողների կողմից սահմանված կարգով և չափերով պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է:

Եկամտահարկի սուբյեկտներ (վճարողներ) են հանդիսանում ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք:

Ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում (հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ) սկսվող կամ ավարտվող 12-ամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ ուն կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի հանրապետությունում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում պետական ծառայության մեջ գտնվող ժամանակավորապես ՀՀ տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձը: Ընդ որում, կենսական շահերի կենտրոն է համարվում այն վայրը, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Սասնավորապես համարվում է, որ ֆիզիկական անձի կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում, եթե այնտեղ է գտնվում տունը կամ բնակարանը, որտեղ բնակվում է նրա ընտանիքը և գտնվում է նրա (ընտանիքի) անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը, կամ հիմնական տնտեսական (պրոֆեսիոնալ) գործունեության իրականացման վայրը:

Եկամտահարկի հարկման օբյեկտ է համարվում.

1) ռեզիդենտի համար՝ ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող եկամուտը,

2) ոչ ռեզիդենտի համար՝ հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող եկամուտը:

Հարկվող եկամուտը հարկատուի համախառն եկամտի և «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է:

Համախառն եկամուտը հարկատուի ստացած բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից:

Հարկատուի եկամուտներ են համարվում, մասնավորապես.

1) աշխատանքի վարձատրությունը և դրան հավասարեցված այլ վճարումները,

2) ռոյալթի,

3) փոխառության դիմաց ստացվող տոկոսը և այլ հատուցումը (տոկոսներ),

4) շահաբաժինները,

5) խաղատներում, շահումներով խաղերում ստացած եկամուտները (շահումները),

6) մրցույթների և մրցությունների, ինչպես նաև վիճակախաղերի իրային շահումները (մրցանակները),

7) մրցույթների և մրցությունների, ինչպես նաև վիճակախաղերի

դրամական շահումները (մրցանակները):

8) նվիրատվության և օգնության կարգով ստացված գույքը և դրամական միջոցները,

9) ժառանգության կարգով ստացված գույքը և դրամական միջոցները,

10) ապահովագրական հատուցումները,

11) ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները,

12) գույքն օտարելուց ստացված եկամուտները,

13) վարձակալության դիմաց ստացվող վճարը և այլ պայմանագրերից (վարձավճարներ), քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացվող եկամուտները,

14) իրավաբանական անձանց և իրավաբանական անձի կարգավիճակչունեցող ձեռնարկությունների կողմից ֆիզիկական անձանց համար կատարված ապահովագրավճարները:

«Եկամտահարկի մասին» օրենքը կարգավորում է նաև անձնական նվազեցումները:

Այսպես, հարկվող եկամուտը որոշելիս հարկային տարում հարկատուի համախառն եկամուտը նվազեցվում է եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա համար 8,0 հազ. դրամի չափով, ինչպես նաև լրացուցիչ նվազեցումների (20,0 կամ 8,0 և 1,0 հազ. դրամ գումարի) չափով: Ընդ որում, ֆիզիկական անձի մոտ 20,0 և 8,0 հազ. դրամի գումարի չափով՝ մեկից ավելի լրացուցիչ նվազեցումների իրավունքի առկայության դեպքում համախառն եկամուտը նվազեցվում է առավել մեծ նվազեցման չափով:

Եկամտի ստացման յուրաքանչյուր ամսում հարկատուի համախառն եկամուտը որոշելիս ստացվող եկամտից անձնական նվազեցման գումարը հանվում է միայն մեկ անգամ՝ մեկ հարկային գործակալի կողմից հարկատուի պահանջով՝ այլ հարկային գործակալներից ստացվող եկամուտներից այդ նցազեցումը չվերապահելու մասին ֆիզիկական անձի գրավոր հայտարարության հիման վրա:

«Եկամտահարկի մասին» օրենքի 18-րդ հոդվածում սահմանված են դրույքաչափերը:

Հարկային տարում հարկվող եկամուտներից եկամտահարկը գանձվում է օրենքով սահմանված դրույքաչափերով:

Այն գումարները, որոնք հավելվում են աշխատավարձին ըստ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շրջանային, բարձր լեռնային և այլ գործակիցների, ինչպես նաև աշխատանքային ստաժի համար, հարկը գանձվում է առանձին 15% դրույքաչափով: Այն դեպքում, երբ օրենքով սահմանված համախառն եկամտի անձնական նվազեցում-

ները գերազանցում են հիմնական աշխատավարձին, իսկ գործակցի և վերադիրի հետ միասին աշխատանքի վարձատրության ընդհանուր գումարը գերազանցում է նշված նվազեցումները, ապա հարկի հաշվարկը կատարվում է հիմնական աշխատավարձի, գործակցի և վերադիրի ամբողջական գումարից:

Անշափահաս անձանց եկամուտները հայտարարագրում են նրանց ծնողները (խնամակալները):

Հայտարարագիր չներկայացնելը հարկ վճարողին չի ազատում հարկային պարտավորությունները կատարելուց:

Հարկային օրենսդրությամբ սահմանված է տարեկան *եկամուտների հայտարարագրումը* և հարկի գումարի վճարուման *ժամկետները*:

Հարկ վճարող ֆիզիկական անձինք իրենց հարկային տարվա տարեկան եկամուտների մասին հայտարարագիր ներկայացնում են հաջորդ տարվա մարտի 1-ից ոչ ուշ, իսկ եկամտահարկի գումարը վճարում են պետական բյուջե մինչև տվյալ հարկային տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ը:

Մինչև հարկային տարին ավարտվելը գործունեությունը (եկամտի աղբյուրի) դադարեցնելու և Հայաստանի Հանրապետությունից մեկնելու դեպքում ֆիզիկական անձը պարտավոր է հայտարարագիրը ներկայացնել ոչ ուշ, քան մեկնելուց մեկ ամիս առաջ, իսկ հայտարարագրով հաշվարկված եկամտահարկի գումարը վճարում է բյուջե վճարման վերջնահաշվարկը կատարելուց հետո՝ 5-օրյա ժամկետում:

Հայաստանի հանրապետությունում օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցչություններից և հյուպատոսական հիմնարկներից ու միջազգային միջպետական (միջկառավարական) կազմակերպություններից ֆիզիկական անձանց եկամուտներ ստանալու դեպքում, երբ եկամտի վճարման աղբյուրի մոտ միջազգային պայմանագրերի դրույթների համաձայն եկամտահարկի պահում չի իրականացվում, տարվա ընթացքում հարկի վճարումը և հայտարարագրումն իրականացվում է ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով:

Օրենսդրությունը ամրագրում է նաև այն ժամկետները, որոնց ընթացքում կարելի է ճշգրտումներ մտցնել ներկայացված հայտարարագրում:

Ֆիզիկական անձինք հայտարարագրերը ներկայացնելուց հետո 2 ամսվա ընթացքում իրավունք ունեն ճշգրտումներ մտցնել դրանցում արտացոլված տվյալներում:

«Եկամտահարկի մասին» օրենքի 34-րդ հոդվածում իրավական կարգավորման են ենթարկված ոչ ռեզիդենտի հարկման առանձնա-

հատկությունները:

Հյաստանում ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց կողմից հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտների հարկումը կատարվում է սահմանված ընդհանուր կարգով: Հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ են համարվում.

- Հայաստանի Հանրապետությունում աշխատանքի վարձատրությունը և դրան հավասարեցված այլ վճարումները,

- Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիաիրավական պայմանագրերի կատարումից ստացված եկամուտները,

- ՀՀ տարածքում ոչ ռեզիդենտի իրականացրած ծեռնարկատիրական գործունեությունից (արտադրանքի, ապրանքների իրացումից և ծառայությունների մատուցումից) ստացված եկամուտները,

- պասիվ եկամուտները (ոչ ռեզիդենտի կողմից՝ իր գույքի կամ այլ ակտիվների ներդրմամբ (տրամադրմամբ), ՀՀ տարածքում բացառապես այլ անձանց գործունեությունից ստացված եկամուտները, մասնավորապես՝ շահաբաժինները, տոկոսները, ռոյալթիները, Հայաստանում գտնվող գույքը վարձակալության տալուց ստացված եկամուտը, Հայաստանում գտնվող գույքի և այլ ակտիվների օտարումից ստացված գույքի արժեքի և այլ ակտիվների հավելածը, փոխադրման ծառայությունների (ֆրախտ) դիմաց ստացված եկամուտները):

Հարկման ենթակա չէ ոչ ռեզիդենտին հայաստանյան աղբյուրներից վճարվող եկամուտը՝ կապված արտաքին տնտեսական գործունեության (բացառապես ոչ ռեզիդենտի անունից իրականացված, նրան պատկանող ապրանքները Հայաստանի Հանրապետություն ներկրելու հետ կապված (ապրանքների մաքսային փաստաթղթերի առկայության և տվյալ գործառնությունում միջնորդների բացակայության դեպքում գործունեություն, որի դեպքում ՀՀ ռեզիդենտն ապրանքների սեփականատեր է դառնում մինչև ՀՀ պետական սահմանը հատելը):

Ոչ ռեզիդենտը սահմանված դեպքերում օգտվում է համախառն եկամտից նվազեցումներ կատարելու իրավունքից:

Ոչ ռեզիդենտի դիմումի հիման վրա հայաստանյան աղբյուրներից պահված հարկի գումարների վերաբերյալ հարկային տեսչության մարմինների կողմից տրվում է համապատասխան տեղեկանք ՀՀ հարկային տեսչության կողմից սահմանված ձևով և կարգով:

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑԻՑ
ԳԱՆՁՎՈՂ ՀԱՐԿԵՐ**

§ 1 ԳՈՒՅՔԱԴՅԱՐԿ

ՀՀ հարկայաին համակարգի բաղկացուցիչ մասն են կազմում գույքահարկը և հողի հարկը, որոնք յուրովի են արտահայտում պետության և նրա տարածքում բնակվող և գործող ֆիզիկական և իրավաբանական անձանց տնտեսական և իրավական հարաբերությունները:

Հարկերի այս տեսակները հայտնի չէին խորհրդային իշխանության տարիներին: Հանրապետությունում նախկինում գործում էին գույքահարկի առանձին տեսակներ, որոնք կարգավորման օբյեկտի տեսակետից առանձնացված էին և դրսևորվում էին տեղակա հարկերի ձևով: Սրանց թվին էին պատկանում շինությունների, ավտոտրանսպորտի միջոցների սեփականատերերից գանձվող հարկերը:

Գործող հարկային օրենսդրությունը ի տարբերություն շատ երկրների գույքահարկի մեջ իրավական իմաստով միավորել է ոչ միայն մի շարք օբյեկտներ, այլև միասնական հարկային իրավունքներ և պարտականություններ է սահմանել հանրապետության տարածքում սեփականության իրավունքով պատկանող գույքի համար ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց համար:

Գույքահարկը ՀՀ իր իրավական կարգավորումն է ստացել Աժ 1997թ. դեկտեմբերի 27-ի ընդունված օրենքով:

Իրավական ակտում բերված է գույքահարկի հասկացությունը: Օրենքի 2-րդ հոդվածում ասված է.

Գույքահարկը հարկատուներին սեփականության (կամ լրիվ (մասնակի) տնտեսավարման իրավունքով պատկանող օրենքով սահմանված գույքի համար սահմանված կարգով և չափով վճարվող ուղղակի հարկ է: Գույքահարկը կախված չէ հարկատուների տնտեսական գործունեության արդյունքից:

Գույքահարկ վճարողներ են համարվում իրավաբանական

անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները և ֆիզիկական անձինք, որոնց ՀՀ տարածքում սեփականության (կամ լրիվ (մասնակի) տնտեսավարման) իրավունքով պատկանում է գույքահարկով հարկման ենթակա գույքը (բացառությամբ ՀՀ բյուջետային հիմնարկների, կենտրոնական բանկի և տեղական ինքնակառավարման մարմինների):

Իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների (բացառությամբ գյուղացիական տնտեսությունների) վրա տարածվում է գույքահարկի իրավաբանական անձանց համար օրենքով սահմանված հարկման կարգը: Գյուղացիական տնտեսությունների վրա տարածվում է գույքահարկի ֆիզիկական անձանց համար օրենքով սահմանված հարկման կարգը:

Եթե հարկվող օբյեկտը ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է մեկից ավելի հարկատուների, ապա գույքահարկի և դրանից բխող այլ պարտավորությունների համար նրանք կրում են համապարտ պատասխանատվություն: Եթե հարկվող օբյեկտը ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում է մեկից ավելի հարկատուների, ապա նրանք գույքահարկի և դրանից բխող այլ պարտավորությունների համար կրում են պատասխանատվություն յուրաքանչյուրն իր բաժնի չափով:

Գույքահարկի օբյեկտները սպառիչ թվարկված են օրենքի 4-րդ հոդվածում, որտեղ ասված է, որ հարկվող օբյեկտ է համարվում սեփականության (կամ լրիվ (մասնակի) տնտեսավարման) իրավունքով հարկատուին պատկանող, 1. շինությունները.

ա) բնակելի (մարդկանց բնականության համար նախատեսված շինությունները՝ բաղկացած բնակելի և օժանդակ մասերից, օժտված կոմունալ հարմարություններով),

- բազմաբնակարան բնակելի շենքի (մեկից ավելի առանձին բնակարաններ ունեցող շենք) բնակարանը (շենքում գտնվող առանձին տարածքը՝ բաղկացած բնակելի և օժանդակ մասերից, օժտված կոմունալ հարմարություններով),

- ավտոտնակը,

- այգետնակը (այգեգործական զանգվածում առանձին հողամասի վրա կառուցված շենքը՝ իր տնական շինություններով),

- բնակելի տունը (բնակավայրի տարածքում առանձին հողամասի վրա կառուցված բնակելի, օժանդակ և կոմունալ հարմարություններով օժտված, իր տնտեսական շինություններով կառույց) և նրան կից տնտեսական շինությունները (անասնաշենք, հացատուն, ամառային խոհանոց, մարագ և այլն),

բ) հասարակական նշանակության (բնակչության սոցիալական

սպասարկման, ինչպես նաև վարչական ու հասարակական կազմակերպությունների տեղակայման համար նախատեսված շենքերը և շինությունները),

զ) արտադրական նշանակության (արդյունաբերական, գյուղատնտեսական և տնտեսության մյուս մյուզերի արտադրությունների ու գյուղատնտեսական արտադրությունների տեղակայման և նրանց մեջ տեխնոլոգիական սարքավորումների շահագործման համար անհրաժեշտ պայմաններն ապահովող շենքերը և շինությունները),

2. փոխադրամիջոցները.

- ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը (բացառությամբ ավտոմոբիլային տրանսպորտի այն միջոցների, որոնցով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված լիցենզիայի հիման վրա իրականացվում է տրանսպորտային գործունեություն՝ աշխատած օրերին համապատասխան),

- անիվավոր, ինքնագնաց մեքենաները կամ մեխանիզմները (բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք օգտագործվում են գյուղատնտեսության մեջ),

- ջրային փոխադրամիջոցները:

Փոխադրամիջոցի հարկման բազան տվյալ հարկատուին սեփականության (կամ լրիվ (մասնակի) տնտեսավարման) իրավունքով պատկանող հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի քաշող շարժիչի հզորությունն է: Փոխադրամիջոցի վրա մեկից ավելի քաշող շարժիչների գումարային հզորությունը: Հարկման բազան որոշելիս շարժիչի հզորության չափման միավորը ծիաուժն է կամ կիլովատը:

Հարկման բազան որոշելու նպատակով շինությունների գնահատումը կատարվում է յուրաքանչյուր միավորի համար առանձին սահմանված կարգով: Ընդ որում, հարկատուները պարտավոր են անշարժ գույքի կադաստր վարող պետական մարմնին հնարավորություն ընձեռնել իրականացնելու շինության գնահատումը՝ հարկատուի համար հարմար աշխատանքային ժամերին:

Շինությունների գնահատումը (վերագնահատումը) կատարվում է 3 տարին մեկ անգամ. անշարժ գույքի կադաստր վարող պետական մարմնի կողմից հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված տվյալներով և հիմք է ընդունվում գնահատման (վերագնահատման) տարվան հաջորդող 3 տարիների համար հարկման բազան որոշելու նպատակով, իսկ նոր կառուցված, ինչպես նաև մասնավորեցված (սեփականաշնորհված) շինությունների համար՝ մինչև հաջորդ վերագնահատումը:

ՀՀ կառավարության նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով շինությունների հարկման բազայի առաջին գնահա-

տումը կատարվում է 01.07. 98թ.դրությամբ:

Օրենքով կարող է սահմանվել շինության հարկման բազայի ինդեքսավորման գործակից՝ յուրաքանչյուր տարվա համար տվյալ տարվան անմիջապես նախորդող տարվա հուլիսի 1-ից ոչ ուշ:

Գույքահարկի դրույքները օրենքում կոնկրետացված են ըստ օբյեկտների:

Այսպես, շինարարությունների համար գույքահարկը հաշվարկվում է հետևյալ տարեկան դրույքաչափերով.

- հասարակական և արտադրական նշանակության շինությունների համար՝ հարկման բազայի 0,6%,

- հարկատու համարվող ֆիզիկական անձանց պատկանող այգետնակների և առանձին կանգնած ավտոտնակների համար՝ հարկման բազայի 0,2%,

- այլ բնակելի շինությունների համար.

| Հարկման բազա | Հարկի դրույքաչափ |
|-----------------------|--|
| մինչև 3,0 մլն դրամ | հարկման բազայի 0% |
| 3,0-10,0 մլն դրամ | 100,0 դրամ + հարկման բազայի 3,0 մլն դրամ գերազանցող գումարի 0,1% |
| 10,0-20,0 մլն դրամ | 7100,0 դրամ + հարկման բազայի 10,0 մլն դրամ գերազանցող գումարի 0,2% |
| 20,0-30,0 մլն դրամ | 27100,0 դրամ + հարկման բազայի 20,0 մլն դրամ գերազանցող գումարի 0,4% |
| 30,0-40,0 մլն դրամ | 67100,0 դրամ + հարկման բազայի 30,0 մլն դրամ գերազանցող գումարի 0,6% |
| 40,0 մլն դրամ և ավելի | 127100,0 դրամ + հարկման բազայի 40,0 մլն դրամ գերազանցող գումարի 0,8% |

Գույքահարկի մասին օրենքը սահմանում է նաև *վճարման ժամկետները*:

Գույքահարկը հաշվարկելու և վճարելու պարտավորությունը հարկատուի համար առաջանում է հարկման օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման ամսվան հաջորդող ամսից: Հարկվող օբյեկտի կամ դրա մի մասի օտարման դեպքում, նախկին սեփականատերը պարտավոր է գույքահարկը հաշվարկել և ամբողջությամբ վճարել մինչև օտարման ամիսը ներառյալ: Մասնավորապես, 1998թ. ընթացքում ֆիզիկական անձանց համար սեփականաշնորհված շինությունների գծով սեփականության իրավունքի ծագման ամիս է հանդիսանում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից համապատասխան որոշման ամիսը, իսկ այն դեպքերում, երբ շինությունները քանդվում կամ

վերացվում են, հարկը հաշվարկվում է ներառյալ այն ամիսը, երբ քանդվել կամ վերացվել է շինությունը (դրա համար հիմք է հանդիսանում անշարժ գույքի կադաստր վարող մարմնի համապատասխան տարածքային ստորաբաժանման կողմից տրված տեղեկանքը):

Եթե հարկվող օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքը ծագում է դատավճռի, վճռի կամ իրավական ակտի հիման վրա, ապա հարկատուն գույքահարկը հաշվարկում և վճարում է այն ժամանակահատվածի համար, երբ գույքը հանձնվել է նրա տիրապետմանը: Մասնավորապես, 1998թ. ընթացքում ֆիզիկական անձանց համար նշվածը առավելապես վերաբերվում է այն դեպքերին, երբ կողմերի միջև ծագած քաղաքացիաիրավաբանական վեճի կապակցությամբ դատարանը վճիռ (դատավճիռ) է կայացնում գույքը սեփականության իրավունքով նրանցից մեկին հանձնելու մասին («իրավաբանական ակտ» հասկացությունը տվյալ դեպքում մեկնաբանվում է որպես պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից ընդունված ցանկացած ակտ, որով կսահմանվի գույքահարկ վճարող այս կամ այն սուբյեկտի սեփականության իրավունքը գույքահարկով հարկման ենթակա որևէ շինության նկատմամբ) այդ դեպքերում սեփականատեր ճանաչված անձը մինչև իր օգտին վճռված գույքը փաստացի տիրապետելու հնարավորություն ստանալը գույքահարկ չի վճարում:

Իրավաբանական անձինք և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները գույքահարկը հաշվարկում են ինքնուրույն և եռամսյակին հաշվարկները՝ մինչև հաշվետու տարվան անմիջապես հաջորդող տարվա փետրվարի 25-ը (ներառյալ) ներկայացնում են հարկային տեսչության համապատասխան մարմիններ:

Ֆիզիկական անձինք գույքահարկը հաշվարկում են ինքնուրույն, և կարող են մինչև հաշվետու տարվա հոկտեմբերի 1-ը (ներառյալ), գույքահարկի տարեկան հաշվարկները ներկայացնել հարկային տեսչության համապատասխան մարմիններ:

Հիմք ընդունելով անշարժ գույքի կադաստրը վարող պետական մարմնի կողմից հարկման բազայի վերագնահատման տարվա հուլիսի 1-ի դրությամբ ներկայացված տեղեկությունները, հարկային տեսչության համապատասխան մարմինները մինչև հարկման բազայի գնահատման (վերագնահատման) տարվա դեկտեմբերի 1-ը հաշվարկում և հարկատու համարվող ֆիզիկական անձանց են ներկայացնում հետագա 3 տարիներին վճարման ենթակա գույքահարկի ժանուցագրերը, որոնցում նշվում է հարկվող օբյեկտը, հարկման բազան և գույքահարկի հաշվարկը, ինչպես նաև ՀՀ

հարկային տեսչության նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ տեղեկություններ և տվյալներ:

Ծանուցագրում կատարված հաշվարկների հետ չհամաձայնելու դեպքում հարկատու համարվող ֆիզիկական անձը մինչև հաշվետու տարվա հոկտեմբերի 1-ը հարկվող օբյեկտի գտնվելու վայրի հարկային տեսչության մարմիններ է ներկայացնում գույքահարկի իր կատարած հաշվարկը:

Հարկային տեսչության մարմինների կողմից հարկատու համարվող ֆիզիկական անձին սահմանված ժամկետից ուշ ծանուցագրեր ներկայացնելը հարկատուին չի ազատում հարկային պարտավորություններն ամբողջությամբ չկատարելու պատասխանատվությունից:

Գույքահարկի մասին օրենքի մի շարք հոդվածները (290-292) սահմանում են որոշակի արտոնություններ, որոնց սուբյեկտները հստակեցված են ըստ արտոնությունների հիմքերի:

§ 2. Հողի ՀԱՐԿ

Հարկային համակարգի բաղկացուցիչ մասն է հողի հարկը, որը սահմանված է ՀՀ 1994թ. ապրիլի 27-ի, «Հողի հարկի մասին» օրենքով:

- Հողի օգտագործումը Հայաստանի Հանրապետությունում վճարովի է: Հողից օգտվելու վճարը սահմանված է հողի հարկի ձևով: Հողի հարկը պետական բյուջե գանձվող պարտադիր վճար է, որի չափը կապված չէ վճարողների տնտեսական գործունեության արդյունքների հետ:

Գյուղատնտեսական գործունեության (գյուղատնտեսական արտադրանքի արտադրության) գծով գանձվում է հողի հարկ: Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական գործունեության տարբերակումը կատարվում է ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով:

Հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական և ժամանակավոր օգտագործողները:

Վարձակալության պայմաններով օգտագործման տրամադրված հողերի համար հարկի հաշվարկումը և վճարումը բյուջե կատարվում է ընդհանուր կարգով, եթե ՀՀ օրենսդրությամբ այլ բան չի սահմանված: Այսպես.

1) վարձակալության տրվող պետական պահուստային ֆոնդի հողերի վարձավճարը պետք է լինի տվյալ հողատեսքի համար

պայմանագրի կնքման տարվա համար հաշվարկված հողի հարկի գումարից ոչ պակաս՝ հաշվի առնելով յուրաքանչյուր տարվա համար ՀՀ կառավարության կողմից հաստատված հողերի կադաստրի հաշվարկման համար կիրառվելիք ինդեքսավորման գործակիցը,

2) համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականության հողերից արոտազանգվածների հողատեսքերի վարձավճարը պետք է լինի տվյալ արոտազանգվածի վերաբերյալ պայմանագրի կնքման տարվա համար հաշվարկված հողի հարկի գումարից ոչ պակաս՝ հաշվի առնելով յուրաքանչյուր տարվա համար ՀՀ կառավարության կողմից հաստատված հողերի կադաստրի հաշվարկման համար կիրառվելիք ինդեքսավորման գործակիցը:

Բնակավայրերի հողերի կադաստրային զուտ եկամտի և հողերի կադաստրային զուտ եկամտի և հողերի կադաստրային արժեքի հաշվարկման համար 1998թ.-ին կիրառվելիք ինդեքսավորման գործակիցը 1994թ.-ի նկատմամբ սահմանվել է 2,49:

«Հողի հարկի մասին» օրենքի 2-րդ հոդվածում նշված են *հարկման օբյեկտը*, ըստ որի հողի հարկով հարկվող օբյեկտ են հանդիսանում.

- գյուղատնտեսական նշանակության հողերի (վարելահողեր, բազմամյա տնկարկներ, խոտհարկներ, արոտավայրեր, գյուղատնտեսական նպատակների համար նախորոշված այլ հողատեսքերը) համար՝ հողի կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամուտը,

- ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի (բնակավայրերի (քաղաքների, քաղաքատիպ ավանների, գյուղական բնակավայրերի)՝ հողեր, արդյունաբերության, տրանսպորտի, կապի, պաշտպանության և այլ նշանակության հողեր, բնապահպան, առողջարանային, հանգստավայրերի, մարզական և պատմամշակութային նշանակության հողեր, անտառային ֆոնդի հողեր, ջրային ֆոնդի հողեր, պահուստային ֆոնդի հողեր) համար՝ հողի կադաստրային գնահատման արժեքը:

1998թ. համար հաստատվել է.

- գյուղական համայնքների բնակավայրերի սահմանագծի մեջ գտնվող հողերի կադաստրային գնահատման զուտ եկամուտ և կադաստրային գնահատման արժեք՝ տվյալ համայնքի համար սահմանված գյուղատնտեսական հողերի (ոռոգելի վարելահողերի, իսկ դրանց բացակայության դեպքում անջրտի վարելահողերի) կադաստրային գնահատման զուտ եկամտի և կադաստրային գնահատման արժեքի միջին չափերը,

- համայնքների (Երևան քաղաքի) վարչական սահմաններում

գտնվող այգեգործական (ամառանոցային) հողերի կադաստրային գնահատման զուտ եկամուտ և կադաստրային գնահատման արժեք՝ տվյալ համայնքի (Երևան քաղաքի համապատասխան թաղի) գյուղատնտեսական հողերի (ոռոգելի վարելահողերի, իսկ դրանց բացակայության դեպքում անջրտի վարելահողերի) համար սահմանված կադաստրային գնահատման զուտ եկամտի և կադաստրային գնահատման արժեքի միջին չափերը:

Հողի հարկը սահմանվում է հողակտորի միավոր մակերեսի համար հաստատագրված վճարի ձևով տարվա համար: Հարկման ենթակա մակերեսների մեջ մտնում են նաև շենքերով և շինություններով զբաղեցված հողերը, դրանց պահպանության համար անհրաժեշտ տարածքները, ինչպես նաև օբյեկտների սանիտարապահպան, տեխնիկական և մյուս գոտիները:

Օրենքում առանձնացված են գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական նշանակության հողերից զարձվող *հարկերի դրույքաչափերը*:

Այսպես, գյուղատնտեսական նշանակության հողերի (ներառյալ բնակավայրերում բնակչինարարության համար հատկացված, տնամերձ և այգեգործական (ամառանոցային) հողամասերը) համար հողի հարկի դրույքաչափը սահմանվում է դրանց կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամտի 15%-ի չափով:

Ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հողի հարկի դրույքաչափը սահմանվում է.

1) արդյունաբերության (ներառյալ հանքավայրերն ու արտադրական գործունեությունից խախտված տարածքները), տրանսպորտի, կապի, ռադիոհեռարձակման, հեռուստատեսության, պաշտպանության նպատակներով օգտագործվող, զազատար խողովակաշարերով զբաղեցված հողատարածքների, ինչպես նաև ջրային ֆոնդի հողերի համար՝ համապատասխան կադաստրային նշանակման գոտիների տվյալ հողատեսքի (անօգտագործելի) կադաստրային գնահատման արժեքի նկատմամբ բնակավայրերի ներսում 1%-ի, իսկ բնակավայրերից դուրս՝ 0,5%-ի չափով,

2) անտառային ֆոնդի (բացառությամբ դրանցում գտնվող գյուղատնտեսական հողատեսքերի) համար՝ համապատասխան կադաստրային շրջանցման գոտիների անօգտագործելի հողերի կադաստրային գնահատման միջին արժեքի 1%-ի չափով,

3) մյուս հողերի համար՝ տվյալ հողատեսքի (անօգտագործելի) կադաստրային գնահատման արժեքի 1%-ի չափով:

«Հողի հարկի մասին» օրենքի բովանդակության էական մասն է այն *ժամկետների*, որի ընթացքում կատարվում է գանձումը:

Հողի հարկը հաշվարկվում է սկսած հողակտորի սեփականության, մշտական կամ ժամանակավոր օգտագործման իրավունքի ձեռքբերման ամսվան հաջորդող ամսից: Հաշվետու տարվա ընթացքում հողի հարկի գծով արտոնություն ունեցող սուբյեկտը հարկի վճարումից ազատվում է այն ամսից, երբ ծագել է արտոնության իրավունքը: Հաշվետու տարվա ընթացքում հողի հարկի գծով արտոնությունը դադարելու դեպքում հարկը հաշվարկվում է արտոնության իրավունքը դադարելու ամսվան հաջորդող ամսից: Եթե ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնության ժամկետը լրանում է տարվա ընթացքում, ապա հողի հարկը վերահաշվարկվում է տվյալ տարվա համապատասխան ամիսների հաշվով:

Կազմակերպությունները հողի հարկը հաշվարկում են ինքնուրույնաբար և ոչ ուշ, քան յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 1-ը:

Նոր հատկացված հողամասերի համար հարկման վերաբերյալ հաշվարկները ներկայացնում են հողի օգտագործման իրավունքի ձեռք բերման պահից սկսած մեկ ամսվա ընթացքում:

Հաշվարկված հարկերի գումարները կազմակերպությունների կողմից բյուջե վճարվում են եսամսյակը մեկ անգամ, ոչ ուշ, քան հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը:

Քաղաքացիների և գյուղացիական տնտեսությունների կողմից հողի հարկը հաշվարկվում է ինքնուրույնաբար, հիմք ընդունելով հարկային տեսչության մարմինների կողմից հաշվարկված և մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 1-ը իրենց հանձնված վճարման ծանուցագրերը:

Վճարողների հաշվառումը և հողի հարկի հաշվարկումը կատարվում է յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ի դրությամբ: Քաղաքացիներին և գյուղացիական տնտեսություններին հաշվետու տարվա հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 1-ը հատկացնելու դեպքում հարկային տեսչության մարմինների կողմից ստացված տեղեկությունների հիման վրա հաշվարկված հարկի գումարը գանձման է առաջադրվում մինչև ապրիլի 15-ը, որի մասին վճարման ծանուցագիրը վճարողին է հանձնվում մինչև մարտի 1-ը: Հուլիսի 1-ից հետո հողատեսքերի կազմում կատարված փոփոխությունները, եթե դրանք տեղի չեն ունեցել նոր հողեր հատկացնելու հետևանքով, տվյալ տարվա հարկի հաշվարկման նպատակով հաշվի չեն առնվում:

Հաշվարկված հարկի գումարները քաղաքացիների և գյուղացիական տնտեսությունների կողմից բյուջե վճարվում են հավասար մասերով, ոչ ուշ, քան տվյալ տարվա նոյեմբերի 15-ը և հաջորդ տարվա ապրիլի 15-ը:

«Հողի հարկի մասին» օրենքը *արտոնությունների* լայն շրջանակ

է սահմանում հարկատուների համար: Այսպես, հողի հարկի վճարումից ազատվում են.

1) բյուջետային հիմնարկները, ինչպես նաև պետական արգելանոցներն ու արգելավայրերը, ազգային և ծառաբանական զբոսայգիները, բուսաբանական այգիները և պատմամշակութային նշանակության հողերը (բացատրությամբ՝ վարձակալության և ծառայողական օգտագործման տրված հողերի),

2) հողային ռեֆորմի և սեփականաշնորհման ընթացքում ձևավորված գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունները՝ սկսած հողի սեփականության իրավունքի ձեռքբերման ամսից 2 տարվա ընթացքում,

3) հողի այն սեփականատերերը, մշտական և ժամանակավոր օգտագործողները, որոնց ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշակի ժամկետով եկամտահարկերից ազատելու պայմանով տրամադրվել են հողեր այդ ժամկետի ընթացքում,

4) բնակավայրերում պետական սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման հողերը (հրապարակներ, փողոցներ, անցումներ, ճանապարհներ, զբոսայգիներ, պուրակներ, ջրամբարներ և այլն),

5) մասնագիտական տեխնիկական ուսումնարաններին (պրոֆ-տեխուսումնարաններին) և դպրոցներին կից ուսումնաարտադրական և փորձարարական հողամասերը,

6) նոր հիմնված և երիտասարդ խաղողի ու պտղատու այգիները՝ մինչև տնկարկների լրիվ պտղաբերությունը (յուրաքանչյուր սորտի համար ագրոտեխնիկական ցուցումներով սահմանված ժամկետներում) դրանց տարածքը 0,1 հա և ավելի լինելու դեպքում:

ՀՀ օրենսդրությամբ կարող են սահմանվել հողի հարկի գծով այլ արտոնություններ:

Հողի հարկից 50%-ի չափով ազատվում են գյուղատնտեսական և անտառտնտեսական գիտական կազմակերպությունները, գիտահետազոտական հիմնարկների և ուսումնական հաստատությունների փորձնական, փորձարարական-սերմնաբուծական, տնկարանային, տոհմային և սորտափորձարկման կազմակերպությունները, կայաններն ու հենակետերը ՀՀ կառավարության կողմից հաստատված ցանկով, այն հողերի համար, որոնք օգտագործվում են բացառապես գիտական և ուսումնական, ինչպես նաև գյուղատնտեսական, անտառաբուծական մշակաբույսերի սորտափորձարկման նպատակներով:

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

§ 1. ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ՀԱՍԿԱԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍՎԱԿԱՐԳԸ:

Հայաստանի հանրապետության բյուջետային համակարգի առանձին օղակների եկամտային մասի աղբյուրներից մեկը հանդիսանում է ոչ հարկային եկամուտները, որոնց աղբյուրների, տեսակների, գանձման կարգի իրավական ռեժիմը սահմանված է «ՀՀ բյուջետային համակարգի մասին օրենքի» 17 և 28 հոդվածներում:

Իրավաբանական գրականության մեջ ոչ հարկային եկամուտների ֆինանսաիրավական հասկացության ընկալմանը վերաբերող հիմնահարցերը իրենց պատշաճ իրավական վերլուծությունը չեն ստացել:

Ոչ հարկային եկամուտները իրավական գնահատմամբ կարելի է պարզաբանել երկու առումով

ա) ոչ հարկային եկամուտներ հասկացության լայն ըմբռնմամբ, որի տակ մկատի է առնվում ինչպես բյուջետային, այնպես էլ բյուջե չմուտքագրվող ոչ հարկային եկամուտները (օրինակ, բարեփորձական վճարները, հանգանակությունները) և

բ) միայն բյուջե մուտքագրվող ոչ հարկային եկամուտներ, որոնք իրաւական ակտերում հստակեցված են և իրենց տեղն ունեն բյուջետային դասակարգման շարքում:

Հարկային և ոչ հարկային եկամուտների ընդհանուր իրավական գնահատականն այն է, որ երկուսն էլ հանդիսանում են պետական եկամտի աղբյուրներ, որոնք վճարվում են ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձանց կողմից: Հարկային և ոչ հարկային եկամուտները նրանց տեսակները և գանձման կարգը, հաշվարկները և գանձման ժամկետները որպես կանոն սահմանվում է օրենսդիր մարմնի կողմից, իսկ նրա կիրարկման կարգին վերաբերող ենթաօրենսդրական ակտերը մայր օրենքի հիման վրա կարող են ընդունվել ՀՀ կառավարության և գործադիր իշխանության մյուս մարմինների կողմից:

Ոչ հարկային եկամուտների ընդհանուր իրավական առանձնահատկությունների մերաբերող պարզաբանումներ բերված են «Ֆինանսական իրավունքի» հիմնախնդիրներին մվիրված արտասահմանյան տարբեր պետություններում իրատարակված «Ֆինանսական իրավունքի» դասագրքերում: Պետական ոչ հարկային եկամուտների հաջող վերլուծություններ են տրված ՈՅ 1996թ. իրատարակված դասագրքում, ըստ որի պետության ոչ հարկային եկամուտներին բնորոշ են ըր շարք առանձնահատկություններ:

Այսպես, ոչ հարկային եկամուտների (վճարումների) մեծ մասն ունի երկկողմ բնույթ: Ոչ հարկային վճարումների կապակցությամբ առաջադրող իրավահարաբերությունների սուբյեկտներն ունեն փոխադարձ իրավունքներ և պարտականություններ: Օրինակ, եթե պետությունը, որպես այդ իրավահարաբերությունների պարտադիր սուբյեկտ, գանձում է ոչ հարկային վճարումներ, ապա նա պարտավոր է հօգուտ այդ վճարումները կատարողների իրականացնել համապատասխան գործողություններ որևէ գործունեությամբ զբաղվելու թույլտվություն տալ: Իրենց հերթին ոչ հարկային վճարումներ կատարողներն իրավունք ունեն պետական մարմիններից իրենց օգտին համապատասխան գործողությունների կատարում պահանջել:

Երկրորդ, ի տարբերություն հարկերի, որոնք միշտ հանդիսանում են պարտադիր վճարումներ, ոչ հարկային եկամուտները կարող են ստանալ պարտադիր և կամավոր վճարումների տեսք: Ոչ հարկային եկամուտների մեծ մասը կազմավորվում է պարտադիր վճարումների հաշվին: Դրանք հարկադրաբար գանձվում են սահմանված կարգով: Սակայն ոչ հարկային և հարկային վճարումների գանձման հիմքը իրավասու մարմինների կողմից հօգուտ ներմարկությունների, կազմակերպությունների որոշակի գործողությունների կատարումն է:

Պետության ոչ հարկային եկամուտների մեջ մտնող կամավոր վճարումները հիմնված են համապատասխան սուբյեկտների ազատ կամահայտության վրա:

Լրացուցիչ դրամական միջոցների կամավոր ներգրավման մեթոդները սահմանված են օրենսդրությամբ: Դրանց թվին են պատկանում պետական արժեթղթերի թողարկումը և տարածումը, պետական վիճակախաղերի անցկացումը և այլ օրինական մեթոդներ:

Երկրորդ, ոչ հարկային վճարումների առանձնահատկությունը այն է, որ դրանք հարկերի համեմատ առավել մեծ չափով նպատակային ուղղվածություն ունեն: Ոչ հարկային եկամուտների օգտագործման նպատակային ուղղվածությունը նախատեսվում է ոչ հարկային վճարումների սահմանման ժամանակ, և ամրագրվում է յուրաքանչյուր կոնկրետ վճարման գանձման և հաշվարկման կարգը

Նախատեսող իրավական ակտերում:

Պետության հարկային եկամուտները կարելի է դասակարգել տարբեր չափանիշներից ելնելով.

1) ըստ տարածքային մակարդակի հանրապետական և տեղական եկամուտների,

2) ըստ կազմավորման մեթոդների ձեռնարկություններից, կազմակերպություններից, քաղաքացիներից ստացվող պարտադիր և կամավոր հասույթների.

3) ըստ դրանց կուտակման աղբյուրների բյուջեներում և արտաբյուջետային ֆոնդերում կուտակվող եկամուտների,

4) ըստ պետության ոչ հարկային եկամուտներ կազմող վճարումների գանձման կոնկրետ հիմքերի:

Վերջիններս իրենց հերթին բաժանվում են՝ ա) տուրքերի, որը ՀՀ ֆինանսաիրավական ակտերով նախատեսված կարգով պետական մարմինների կողմից իրականացվող որոշակի ծառայությունների և գործողությունների համար ձեռնարկություններից, կազմակերպություններից, քաղաքացիներից կանխիկ դրամով տուրքային դրոշմանիշով կամ վճարողի հաշվից գանձվող վճար է: Սրանց թվին են դասվում ա) պետական ու տեղական տուրքերը, մաքսատուրքերը,

բ) ընդերքի և բնական ռեսուրսների օգտագործման համար գանձվող վճարները:

Վճարումների այս խումբը բացառիկ կարևոր նշանակություն ունի որպես առկա բնական պաշարների օգտագործման և վերականգնման արդյունավետության բարձրացման խթանման գործոն:

Այս վճարումների թվին են պատկանում ընդերքի օգտագործման համար գանձվող, վարձակալության տրված հողի, ջրօգտագործման վճարները, անտառային եկամուտը:

գ) ձեռնարկությունների, կազմակերպությունների, քաղաքացիների ապահովագրական և այլ վճարները, որոնք ուղղված են կոնկրետ տնտեսական և սոցիալական պետական ծրագրերի կատարմանը: Ղրանց թվին են պատկանում ձեռնարկությունների, կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից տարբեր սոցիալական և այլ արտաբյուջետային (կենսաթոշակային, բնակչության զբաղվածության և այլն) ֆոնդեր կատարվող վճարումները,

դ) պետական արժեթղթերի թողարկումից և տեղաբաշխումից, պետական վիճակախաղերի անցկացումից ստացվող ոչ հարկային եկամուտներ:

ե) պետական սեփականության սեփականաշնորհումից և ապապետականացումից ստացվող եկամուտներ,

զ) տուգանքներից ստացվող եկամուտները (տուգանքներ, տույժեր և այլն), այլ եկամուտներ և գանձույթներ (դեբիտորական և

կրեդիտորական, հայցային վաղեմության ժամկետը անցկացրած պարտքերի գումարները):

§ 2. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՍԱՐ ԳԱՆՉՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԸ:

Ոչ հարկային եկամուտների համակարգում իրենց տեսակարար կշռով կարելի է առանձնացնել **պետական տուրքը և մաքսատուրքը:**

Պետական տուրքի հասկացությունը, նրա տեսակները և դրույքաչափերը, պետական տուրք վճարողների շրջանակը, արտոնությունների տրամադրման կարգն ու պայմանները, ինչպես նաև պետական տուրքերի հետ կապված այլ հարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում, կարգավորվում են 1997թ. դեկտեմբերի 27-ի «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով:

Օրենքի 2-րդ հոդվածում սահմանված է պետական տուրքի հասկացությունը պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված, օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից պետական և համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր գանձույթ է:

Օրենքը ամրապնդում է պետական տուրքի գանձման օբյեկտները:

Տուրք գանձվում է՝

ա) դատարան տրվող հայցադիմումների, գանգատների, դատարանների վճիռների դեմ բերվող վճռաբեկ գանգատների համար, ինչպես նաև դատարանների կողմից փաստաթղթերի պատճենները (կրկնօրինակներ) տալու համար.

բ) նոտարական գրասենյակների կողմից նոտարական գործողություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար.

գ) քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց

¹ Տես մանրամասն. Финансовое право, азд. БЕК, Москва, 1996, стр. 310-313; 33 ֆինանսական իրավունք, նշ. աշ. էջ 132-134:

մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումների փոփոխությունների, լրացումների, ուղղումների և վերականգնման կապակցությամբ վկայականներ տալու համար,

դ) լիցենզավորման ենթակա գործունեությունն իրականացնելու նպատակով լիցենզիա տալու համար.

ե) մշակութային արժեքներ արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր տալու համար.

զ) գյուտերի, օգտակար սարքերի, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների (արդյունաբերական սեփականության օբյեկտների), իրավական պաշտպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար.

է) ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար.

ը) հյուպատոսական ծառայություններ կամ գործողություններ իրականացնելու համար,

թ) ՀՀ քաղաքացիությունն ստանալու և ՀՀ քաղաքացիությունը փոխելու համար¹:

«Պետական տուրքի մասին» օրենքի 8-րդ հոդվածում սահմանված է տուրքի դրույթաչափերը:

Պետական տուրքի դրույթաչափերը սահմանվում են գնահատման ենթակա գույքի արժեքի կամ օրենքով սահմանված բազային տուրքի նկատմամբ: Բազային տուրքի չափ է սահմանված հազար լրամբ:

Ոչ ռեզիդենտ հանդիսացող վճարողների համար բազային տուրքի չափ է սահմանվում պետական տուրքի վճարման պահին ՀՀ կենտրոնական բանկի կողմից ՎՄՆ-ի դոլարի նկատմամբ սահմանված հաշվարկային փոխարժեքի կրկնապատիկը:

Պետական տուրքի մասին օրենքը իրավահարաբերության մասնակիցների համար սահմանում է արտոնությունների որոշակի շրջանակ: Օրենքով սահմանված են այնպիսի արտոնություններ, ինչպիսիք են տուրքի վճարումից ազատում, տուրքի նվազեցում, տուրքի դրույթաչափի նվազեցում, տուրքի վճարման ժամկետի հետաձգում:

«Պետական տուրքի մասին» օրենքի V գլուխը նախատեսում է պետական տուրքերից ազատվելու հետևյալ հիմքերը

- դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում

են՝ ա) բոլոր հայցվորները՝ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հետ կապված այլ գումարների գանձման ու աշխատանքային վեճերի վերաբերյալ հայցերով.

բ) հայցվորները՝ ալիմենտների գանձման վերաբերյալ հայցերով.

գ) հայցվորները՝ խեղճան կամ այլ վնասվածքների, ինչպես նաև կերակրողի մահվան հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով.

դ) սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության մարմինները՝ տուժողին կամ նրա ընտանիքի անդամներին վճարված թոշակի և նպաստի գումարները վնաս պատճառողից գանձելու վերաբերյալ ռեգրեսիվ հայցերով.

ե) հայցվորները՝ հանցագործության հետևանքով իրենց պատճառված նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով.

զ) ՀՀ համապատասխան իրավասու մարմինները՝ ՀՀ օրենսդրության խախտման հետևանքով պետությանը պատճառված վնասի փոխհատուցման գումարները պետական բյուջե գանձելու վերաբերյալ հայցերով.

է) հայցվորները՝ օրենքով նախատեսված դեպքերում այլ անձանց՝ օրենքով պաշտպանվող իրավունքների և շահերի պաշտպանության հարցերով դատարան տրվող դիմումների, գծով.

ը) ֆինանսական, հարկային, մաքսային և պետական գրանցման համար լիազորված մարմինները՝ հատուկ վարույթի կարգով ընձվող գործերի վերաբերյալ հայցերով.

թ) առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձիք՝ գործը կարճելու կամ հայցն առանց ըննության թողնելու մասին դատարանի որոշումը բեկանելու վճիռների կատարումն հետաձգելու կամ տարաժամկետելու, վճիռների կատարման եղանակը և կարգը փոփոխելու, հայցերի ապահովման կամ ապահովման մի տեսակը մեկ այլ տեսակով փոխարինելու վերաբերյալ հայցերով.

- ի հայտ եկած նոր հանգամանքների կապակցությամբ դատարանի վճիռը կամ որոշումը վերանայելու վերաբերյալ գանգատներով.

- դատարանի վճիռներով նշանակված տուգանքների զիջման կամ նվազեցման վերաբերյալ հայցերով.

- դատարանի վճիռների կատարումը շրջադարձելու դիմումներով, բաց թողնված ժամկետները վերականգնելու, ինչպես նաև դատական կատարածուների գործողությունները գանգատարկելու վերաբերյալ դիմումներով.

- տուգանքների զիջումը կամ նվազեցումը մերժելու մասին դատարանի որոշումների դեմ մյուս գանգատներով.

- վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատաս-

¹ Տե՛ս, ՀՀ օրենքը «պետական տուրքի մասին», ընտրված ԼՍ կողմից 1997թ. դեկտեմբերի 27-ին (ՀՀ գործող օրենքների ժողովածու 1995-1999թթ. Գիրք «Բ», էջ 360)

խան լիազորված մարմինների կողմից ընդունված որոշման դեմ գանգատներով:

ժ) դատախազության մարմինները՝ պետական շահերի պաշտպանության վերաբերյալ հայցերով:

ժա) որպես հայցվոր հանդես եկող ֆինանսական, հարկային և մաքսային մարմինները՝ վճարումները բյուջե գանձելու, ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիմքերով ձեռնարկությունը, հիմնարկը, կազմակերպությունը լուծարելու կամ անվճարունակ ճանաչելու, ինչպես նաև ՀՀ օրենսդրության խախտման համար նշանակված տույժերն ու տուգանքները բռնագանձելու հայցերով:

Պետական տուրքի մասին օրենքում մանրագնեին թվարկված են նոտարական, քաղաքացիական կացության գրանցման գործողություններ իրականացնող մարմիններում պետական տուրքի վճարումից ազատման հիմքերը:

«Պետական տուրքի մասին» օրենքը կարգավորում է տուրք վճարողների իրավունքները և պարտականությունները:

Տուրք վճարողն իրավունք ունի՝

- պահանջել պետական տուրք գանձող մարմնից՝ կատարելու տուրքի հաշվարկ, ինչպես նաև վերահաշվարկ, դատական, ինչպես նաև վերադասության կարգով գանգատարկել պետական տուրք գանձող մարմնի կամ պաշտոնատար անձանց գործողությունները, դիմել համապատասխան պետական մարմիններին՝ պետական տուրքի վճարման արտոնություններ ստանալու համար, 4. ստանալ պետական տուրքի վճարման մասին տեղեկանք: Օրենքով սահմանված դեպքերում իրավունք ունի հետ պահանջել և ստանալ վերադարձման ենթակա պետական տուրքի գումարը: Պետական տուրք վճարողը պարտավոր է ժամանակին և լրիվ վճարել օրենքով սահմանված պետական տուրքերը, պետական տուրքի վճարումով ծառայություններ կամ գործողություններ իրականացնող մարմիններին կամ պաշտոնատար անձանց ներկայացնել պետական տուրքի վճարումը հիմնավորող փաստաթղթերը կամ դրանց պատճենները, ներկայացնել պետական տուրքի վճարման գծով իրեն վերապահված արտոնությունները հաստատող փաստաթղթերը: Օրենքով սահմանված դեպքերում վճարել պետական տուրքը ժամանակին չվճարելու համար հաշվարկված տոկոսի գումարները:

Պետական տուրքի վճարման գծով իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների պարտավորությունը դադարում է այդ պարտավորության կատարմամբ, պետական տուրքի վճարումից ազատմամբ, պետական տուրքի վերացմամբ: Ֆիզիկական անձանց պարտավորությունը դադարում է նրա կատարմամբ, պետական տուրքի վճարումից

ազատմամբ, պետական տուրքի վերացմամբ կամ վճարողի մահվամբ:

Պետական մարմինների իրավական բնույթի գործողությունների կատարման համար գանձվող պարտադիր վճարների թվին է դասվում *մաքսատուրքը*, որը սահմանված է ՀՀ «Մաքսատուրքերի մասին» ԱԺ 1998թ. դեկտեմբերի 15-ին ընդունված օրենքով:

Մաքսատուրքերի մասին օրենքի 2-րդ հոդվածում սահմանված է մաքսատուրքերի հասկացությունը, ըստ որի մաքսատուրքերը սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող պարտադիր վճարներ են:

Գործող օրենսդրությամբ մաքսատուրքերն ենթարկվում են դասակարգման: Մաքսատուրքերի տեսակների հիմքում ընկած են մի շարք չափանիշներ: Այդպիսի չափանիշներ են հանդիսանում՝

- ա) գործառնության բնույթը
- բ) մաքսատուրքերի հաշվարկման մեթոդը
- գ) մաքսատուրքերի նպատակայնությունը:

Ըստ մաքսատուրքերի գործառնության, օրենքի 4-րդ հոդվածում դասակարգված են.

- ա) *արտահանման*՝ վճարվում են ՀՀ մաքսային տարածքից արտահանվող ապրանքների և այլ առարկաների համար.
- բ) *ներմուծման*՝ վճարվում են ՀՀ մաքսային տարածք ներմուծվող ապրանքների և այլ առարկաների համար.
- գ) *սեզոնային*՝ վճարվում են որոշակի ժամանակահատվածում առանձին ապրանքներ և այլ առարկաներ ՀՀ մաքսային տարածքից արտահանելու կամ այդ տարածք ներմուծելու համար:

Ըստ հաշվառման մեթոդի մաքսատուրքերն են 1) *աղվալորային* (արժեքային)՝ հաշվարկվում են մաքսատուրքերով հարկման ենթակա ապրանքների և այլ առարկաների մաքսային արժեքի նկատմամբ *տոկոսներով*. 2) *յուրահատուկ*՝ հաշվարկվում են մաքսատուրքով հարկման ենթակա ապրանքների և այլ առարկաների չափման միավորի համար *կայուն սակագնով*. 3) *խառը* երբ զուգակցվում են աղվալորային և յուրահատուկ մաքսատուրքերը: Նպատակային մաքսատուրքերը լինում են՝

- 1) *խրախուսական*՝ կիրառվում են առանձին երկրներից ներմուծվող ապրանքներից և այլ առարկաների նկատմամբ սահմանված մաքսատուրքերը նվազեցնելու նպատակով.
- 2) *հակազդման*՝ կիրառվում են այն արտասահմանյան պետությունների ապրանքները և առարկաները հարկելու դեպքում, որոնք իրենց ապրանքների և այլ առարկաների նկատմամբ սահմանում են չափազանց բարձր մաքսատուրքեր:

Մաքսային հարկման ենթակա ապրանքների և այլ առարկաների

մաքսատուրքերի հաշվարկումը կարող է կատարվել դրանց մաքսային արժեքի հիման վրա, այսինքն՝ գումարի, որը դրանց համար փաստորեն վճարվել կամ ենթակա է վճարման ՀՀ մաքսային սահմանը տեղափոխելու համար:

Մաքսատուրքի մասին օրենքը կարգավորում է ներմուծվող և արտահանվող ապրանքների մաքսատուրքերի ռեժիմին վերաբերող հիմնային դիրքերը: Օրենքի 7-րդ հոդվածում սահմանվում է ներմուծվող ապրանքների մուտքային արժեքը: Ըստ որի ներմուծվող ապրանքների մաքսատուրքերի հաշվարկումը կատարվում է մաքսային արժեքի հիման վրա, այն գումարի, որը փաստացի վճարվել, ենթակա է վճարման կամ պետք է վճարվեր ապրանքը ձեռք բերելու և մինչև ՀՀ մաքսային սահմանը տեղափոխելու համար:

Արտահանվող ապրանքների մաքսատուրքերի հաշվարկների հիմքում նույնպես ընկած է մաքսային արժեքը, որը բնութագրվում է որպես վճարումների այնպիսի գործողություններ, որոնք կատարվել են ՀՀ մաքսային տարածքում ապրանքը մինչև հանրապետության մաքսային սահմանը տեղափոխելը:

Ինչպես ներմուծվող, այնպես էլ արտահանվող ապրանքների մաքսային արժեքը ներառում են այնպիսի ընդհանուր ծախսեր, ինչպիսիք են՝

ա) ապրանքների ձեռք բերման գինը

բ) փոխադրման, բեռնման, բեռնաթափման, փոխբեռնման և ապահովագրության ծախսերը:

գ) կոմիսիոն և միջնորդային (բրոքերային) ծախսերը:

Մաքսատուրքի ուղղաթիվերը դիֆերենցված են ըստ ապրանքների տեսակների, որոնց թվարկումը բերված է մաքսատուրքի մասին օրենքի 15-րդ հոդվածում: Մաքսատուրքերը որպես կանոն վճարվում է ՀՀ պետական բյուջե:

Իրավական կարգավորման առանձնահատկություններով մաքսատուրքից անհրաժեշտ է տարբերել մաքսավճարը, որը «ՀՀ մաքսավճարի մասին» 1998թ. դեկտեմբերի 28-ին ԱԺ կողմից ընդունված օրենքի 2-րդ հոդվածի համաձայն նույնպես պարտադիր վճար է, որը օրենքով սահմանված կարգով և չափով վճարվում է պետական բյուջե:

Մաքսավճարի ֆինանսաիրավական բովանդակությունը որպես մատուցված ծառայությունների համար կատարվող պարտադիր վճար բնութագրվում է ՀՀ մաքսային մարմինների կողմից օրենքով սահմանված մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և այլ առարկաների, ինչպես նաև բանկերի կողմից տեղափոխվող արժույթի և արտարժույթի մաքսային ձևակերպումների իրականացում, որի համար գանձվում է մաքսավճար:

Մաքսավճարի գանձման օբյեկտներ են հանդիսանում բեռնային, ապրանքների մաքսային ձևակերպումները, փաստաթղթերի տրամադրումը, ապրանքների և բեռների փոխադրման ուղեկցումը և այլ գործողություններ:

Մաքսավճարի իրավական կարգավորումը նույնպես սուբյեկտների համար սահմանում է արտոնությունների լայն շրջանակ, որը ներհատուկ է հարկային օրենսդրությանը:

**ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՖՈՆԴԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ**

**§1. ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՖՈՆԴԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ
ՖԻՆԱՆՍԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ
ԱՌԱՆՋՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Արտաբյուջետային պետական սոցիալական ֆոնդերի ձևավորումը և իրավական կառավարումը կազմակերպվում է պետական մասշտաբով, այն համալիր իրավական ինստիտուտ է, կարգավորվում է քաղաքացիական և ֆինանսական օրենսդրությամբ:

Պետական եկամուտների տեսանյութումից շատ հաճախ, ինչպես տնտեսագիտական, այնպես էլ իրավաբանական գրականության էջերում երբեմն այս տնտեսական ինստիտուտները բնութագրվում են որպես պետական և տեղական նպատակային ֆոնդեր:

Եթե տնտեսագիտության առումով էական է դրամական ֆոնդերի խիստ նպատակային օգտագործման սկզբունքը, ապա իրավական գնահատմամբ էական է նրա ձևավունման, տեսակների, սուբյեկտների գանձման կարգի իրավական նորմատիվային կարգավորման հարցերը, ինչպես նաև պետության ֆինանսական իշխանության կազմակերպման գործընթացում ազգային պետական կյանքի համար էական նշանակություն ունեցող ծրագրերի ֆինանսավորման համար նրանց հավաքման և օգտագործման ընթացքում ծագող ֆինանսաիրավական հարաբերությունների կարգավորումը, տնտեսվարող սուբյեկտների և քաղաքացիների շահերի հաշվառման օրինաչափության ապահովմամբ:

Արտաբյուջետային - պետական նպատակային ֆոնդերը նորությ են ՀՀ ֆինանսական համակարգում և մեծ վաղեմություն չունեն: Այս ֆոնդերի ձևավորումը սկիզբ է առնում անկախ պետականության արմատավորումից, որի ֆինանսական քաղաքականության հիմնահարցերը ձևավորման պահից բախվեցին բնակչության սոցիալ-տնտեսական ծանր խնդիրների լուծման հետ, օրակարգի հարց դարձնելով ազգաբնակչության սոցիալական ապահովությունը և

ապահովագրությունը, զբաղվածությունը, կենսաթոշակով և նպաստով բնակչությանը ապահովելը:

Ինչպես վկայում է ՀՀ պետականության զարգացման պրակտիկան տնտեսական և սոցիալական բնույթի հիմնահարցերի և ծրագրերի զգալի մասը անհնար է լուծել պետական բյուջեի եկամուտների հաշվին, առավել ևս, երբ նախապես անհնար է պետական բյուջեի ծախսերի մասում նախատեսել նպատակային ծախսեր:

Այս բացը պետության ֆինանսական իշխանության իրականացման գործընթացում հնարավոր է լուծել միայն արտաբյուջետային պետական և տեղական ֆոնդերի ստեղծմամբ, որոնց ձևավորման հիմքում ընկած են զարգացած պետությունների փորձից կատարված փոխառություններ, որոնք ունեն պատշաճ իրավական կարգավորում:

Ներկա տնտեսվարման պայմաններում արտաբյուջետային ֆոնդերը գտնվելով պետական կամ այդ նպատակի համար ձևավորված հատուկ մարմինների կառավարման տակ դրսևորվում են որպես ՀՀ ֆինանսական համակարգի անենաճկուն և գործադրման տեսակետից օպերատիվ օղակը:

Պետական բյուջեի դեֆիցիտի աննախադեպ աճը թվում է հրամայական պահանջ է առաջադրում արտաբյուջետային պետական նպատակային ֆոնդերը վերածել իրավական կարգավորման առումով որպես բյուջեի նպատակային ֆոնդեր: Այս մասին է վկայում վերջին տարիներին ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտը ծածկելու նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի ֆինանսական միջոցները:

Արտաբյուջետային ֆոնդերը իրավակազմակերպական առումով կարելի է պայմանականորեն բաժանել երեք խմբի՝

- 1) պետական և տեղական արտաբյուջետային նպատակային դրամական ֆոնդեր
- 2) նպատակային բյուջետային դրամական միջոցներ
- 3) կառավարության պետական նպատակային ֆոնդեր:

Պետական և տեղական արտաբյուջետային նպատակային դրամական ֆոնդերի թվին է դասվում **ՀՀ կենսաթոշակային և զբաղվածության ֆոնդը**, որի պետական եկամուտները ունեն ոչ հարկային բնույթ: Այն ստեղծվել է պետական սոցիալական ապահովության մուծումների ժամանակին և լրիվ գանձումն ապահովելու նպատակով: Հիշյալ ֆոնդին իրավունք է վերապահված գործատուներից գանձելու՝ ա) ժամանակին չվճարված պետական սոցիալական ապահովագրության մուծումների գումարը, բ) ՀՀ կենսաթոշակային և զբաղվածության ֆոնդի հաշվին պետական սոցիալական ապահովագրության մուծումները հաշվարկելիս, աշխա-

տանքի վարձատրությանն ուղղված միջոցների թաքցրած կամ նվազեցրած գումարները. գ) պետական սոցիալական ապահովագրության մուծումների հասանելիք գումարը՝ ՀՀ կենսաթոշակային և զբաղվածության ֆոնդի հաշվին չհաշվեգրվելու և չփոխանցելու յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար տույժ այդ մուծումների գումարի 1 տոկոսի չափով:

Նշված գումարները և տույժը գործատուներից ու ՀՀ բանկերից գանձվում են անվիճելիորեն, իսկ քաղաքացիներից՝ դատական կարգով և հաշվեգրում են ՀՀ կենսաթոշակային և զբաղվածության ֆոնդի հաշվին:

ՀՀ կենսաթոշակային և զբաղվածության ֆոնդը ՀՀ տարածքում սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության ֆինանսների կառավարման, դբաղվածության պետական մարմին է: Այն տնտեսաշվարկի սկզբունքով գործող ինքնուրույն ֆինանսական համակարգ է, որի դրամական միջոցները չեն մտնում հանրապետության բյուջե:

ՀՀ կենսաթոշակային և զբաղվածության ֆոնդի միջոցները գոյանում են՝

ա) գործատուների պարտադիր ապահովագրական մուծումներից.

բ) աշխատողների աշխատավարձից կատարվող պարտադիր ապահովագրական մուծումներից

գ) գործատուների լրացուցիչ հատկացումներից

դ) պետական և համայնքների բյուջեներից կատարվող հատկացումներից.

ե) հանրապետության և այլ պետությունների գործատուների, հասարակական կազմակերպությունների և անձանց կամավոր մուծումներից¹:

ՀՀ կենսաթոշակային և զբաղվածության ֆոնդի միջոցները ծախսվում են օրենսդրությամբ սահմանված բոլոր տեսակի կենսաթոշակների վճարման, երեխայի խնամքի և յուրաքանչյուր երեխայի համար ամենամսյա նպաստների վճարման, մայրության և մանկության պահպանության կենսարժողության դասիչի փոփոխության հետ կապված կենսաթոշակի չափի բարձրացման, գործազրկության նպաստների վճարման, չզբաղված բնակչության օգնության ցուցաբերման, աշխատանքի տեղավորման գործում միջնորդության, մասնագիտական կողմնորոշման, գործազուրկների մասնագիտական պատրաստման, նրանց որակավորման բարձրացման և

վերամասնագիտացման կազմակերպման համար, կենսաթոշակային ֆոնդի միջոցներ կարող են ծախսվել ընթացիկ գործունեության ու ապարատի և համակարգի կառուցվածքային ստորաբաժանումների պահպանումն ու զարգացումն ապահովելու ֆոնդի ընթացիկ նյութատեխնիկական բազայի ստեղծման, զարգացման և օրենսդրությամբ սահմանված այլ վճարումների բնակչության շրջանում հիշյալ ֆոնդի խնդիրների վերաբերյալ բացատրական աշխատանքի և այլ միջոցառումների անցկացման, ֆինանսատնտեսական գործունեության իրականացման, ինչպես նաև բնակչության առավել կարիքավոր խավերին սոցիալական աջակցություն ցույց տալու համար:

Հայաստանի Հանրապետության ամենամյա պետական բյուջեի մասին օրենքները վկայում են, որ պետական բյուջեի դեֆիցիտի ծածկման աղբյուր է հանդիսանում «Հայաստան» համահայկական հիմնադրամի դրամական միջոցները, որը ըստ էության գործնական կյանքի պայմաններից ելնելով հանդես է գալիս որպես նպատակային բյուջետային դրամական միջոցներ:

Քաղաքացիաիրավական առումով հիմնադրամները դասվում են ոչ առևտրային իրավաբանական անձանց թվին, որոնք կարող են ստեղծվել տարբեր նպատակների իրականացման համար: Հիմնադրամներն իրենց առջև կարող են դնել սոցիալական, բարեգործական, մշակութային, գիտական կրթական, սպորտային, հոգևոր և այլ նյութական կարիքների բավարարման խնդիր:

Հիմնադրամների իրավական հասկացությունը սահմանված է ՀՀ քաղ. օրենսգրքի 123-րդ հոդվածում, որտեղ ասված է, որ հիմնադրամ է համարվում քաղաքացիների և իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող կազմակերպությունը, որը հետըստապահում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական կամ այլ հանրօգուտ նպատակներ:

Հիմնադրամին հանձնված գույքը, դրամական միջոցները հիմնադրամի սեփականությունն է: Գույք (դրամ) հանձնողները պատասխանատվություն չեն կրում հիմնադրամի պարտավորություններով, հիմնադրամն էլ պատասխանատու չէ հիմնադրամի և այլ գույք հանձնողների պարտավորություններով:

Հիմնադրամի հիմնադիրները որպես կանոն չեն մասնակցում նրա գործունեությունը, զրկված են նրա գործերի կառավարմանն ուղղակիորեն մասնակցելու հնարավորությունից:

Հիմնադիր մարմինների գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով ստեղծված է հոգաբարձուների խորհուրդ:

¹ Տե՛ս, «Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ օրենքը, ընդունված ԱԺ կողմից 1996թ. դեկտեմբերի 3-ին, ՀՀ գործող օրենքների ժողովածու, գիրք «Ա», էջ 485, հոդ 20:

Հիմնադրամի կառավարման և նրա մարմինների ձևավորման կարգը սահմանվում է հիմնադիրների հաստատած կանոնադրությամբ: Կանոնադրությամբ սահմանվում է հիմնադրամի մարմինների համակարգը, նպատակները, պաշտոնատար անձանց նշանակելու և ազատելու կարգը, ինչպես նաև հոգաբարձուների խորհրդի ձևավորման կարգը և լիազորությունները:

Հիմնադրամի ֆինանսա-նյութական բազան ձևավորվում է նրա հիմնադիրների և այլ սուբյեկտների կողմից նրան տված միջոցներից: Քաղաքացիական օրենսդրությամբ հիմնադրամները կարող են մասնակցել գործարարական հարաբերությունների ինչպես անմիջականորեն, այնպես էլ այդ նպատակի համար ստեղծված տնտեսական ընկերությունների միջոցով:

Հիմնադրամների գործունեությունը կրում է խիստ նպատակային բնույթ, այն կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և դատարանի որոշմամբ:

Պետական արտաբյուջետային սոցիալական ֆոնդեր կարող են ստեղծվել ելնելով պետական և հասարակական կյանքի պահանջներից, որոնք կարող են ուղղվել պարտադիր բժշկական օգնության, պաշտպանության, ինչպես նաև տնտեսության այլ ոլորտների և բնակչության սոցիալական ապահովության խնդիրների լուծմանը:

Այսպիսով, պետական արտաբյուջետային սոցիալական ֆոնդերը ձևավորվում են իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից համապատասխան ֆոնդերին կատարվող պարտադիր վճարներով, որոնց վճարման կարգը, չափերը սահմանված են իրավական ակտերով:

§ 4. ԱՐՏԱԲԵՐՈՒՋԵՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ:

Շուկայական հարաբերությունների զարգացման և խորացման ներկա պայմաններում կարևոր նշանակություն են ձեռք բերում այն արտաբյուջետային միջոցները, որոնք բյուջետային հիմնարկները ստանում են ձեռնարկատիրական գործունեության ծավալման, աշխատանքների և ծառայությունների մատուցման միջոցով:

Ոչ արտադրական ոլորտի հիմնարկների կողմից ձեռք բերված արտաբյուջետային միջոցները ըստ ձեռք բերման գործունեության ձևերի կարելի է բաժանել հատուկ, դեպոզիտ և ըստ հանձնարարության գումարների:

Բյուջետային կազմակերպությունները *հատուկ միջոցները* ձեռք են բերում տարբեր աշխատանքների և մատուցված ծառայություն-

ների դիմաց: Հատուկ միջոցներ են համարվում տրանսպորտի շահագործումից, վարձակալությունուց, ինչպես նաև ենթակառուցվածքային միավորված սպասարկումից գոյացած հասույթները, որոնց թվին են դասվում ջեռուցման, սանիտարական մաքրումից գոյացած գումարները: Այլ խոսքով, հատուկ միջոցները ձևավորվում են բյուջետային հիմնարկների կողմից միատեսակ գործունեություն իրականացնելուց:

Բյուջետային հիմնարկները արտաբյուջետային հատուկ գումարներ կարող են ստանալ իրենց հիմնական գործունեության բնույթին համապատասխանող միջոցառումների անցկացումից: Օրինակ, անհատական վարձի գանձում և այլն:

Բյուջետային հիմնարկներին երբեմն ի պահ են հանձնվում ժամանակավորապես ազատ դրամական գումարներ, որոնք ետ են վերադարձվում սեփականատերերի առաջին իսկ պահանջով: Դրանց են վերաբերվում գրավը, մաքսատանը ի պահ հանձնված գումարները:

Այս գումարները ընդունված է համարել արտաբյուջետային կազմակերպությունների դեպոզիտ գումարներ:

Ըստ հանձնարարության արտաբյուջետային գումարները այն դրամական միջոցներն են, որոնք փոխանցվում են ձեռնարկություններին, հիմնարկներին կազմակերպություններին օրենքով սահմանված կարգով, որևէ հանձնարարություն կատարելու նպատակով:

Գործող ֆինանսական օրենսդրությունը սահմանում է դեպոզիտային և ըստ հանձնարարության գումարների իրավական ռեժիմը: Այս միջոցների նկատմամբ բյուջետային հիմնարկների ղեկավարների իրավունքները խիստ սահմանափակ են: Որպես բյուջետային վարկեր տնօրինողներ, նրանք իրավունք չունեն իրենց կարիքների համար նույնիսկ ժամանակավորապես օգտագործել դեպոզիտ և ըստ հանձնարարության գումարները: Որպես կանոն դեպոզիտ գումարները վերադարձվում են դրանց տերերին առաջին իսկ պահանջով, իսկ ըստ հանձնարարության գումարները տրվում են հանձնարարության մեջ նշված անձին:

Այսօր բյուջետային հիմնարկներից հատկապես ԲՈՒՀ-ին, հարկային տեսչությանը իրավունք է վերապահված հատուկ միջոցների մի մասը օգտագործել սեփական կարիքների համար: Օրինակ՝ բուհերը ուսման վարձի մի մասը կարող են օգտագործել որպես աշխատավարձի հավելավճար և այլն:

ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՍՈՒՆՔՆԵՐԸ

**§ 1. ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐԿԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ:**

Ջարգացման ինքնուրույն ուղի բռնած Հայաստանի Հանրապետության տնտեսական-արտադրական գործունեությունը ձևավորվում է ազատ շուկայական հարաբերությունների պահանջներին համապատասխան, որի գործընթացում ապրանքադրամական հարաբերությունների առկայությունը պայմանավորում է ժամանակավորապես ազատ դրամական միջոցների գոյացումը և օգտագործումը ոչ միայն կազմակերպություններում, այլև բնակչության շրջանում: Արտադրության արդյունավետության բարձրացմանը և ազգային եկամտի ավելացմանը զուգընթաց աճում են բնակչության դրամական եկամուտները, այդ թվում նաև խնայողությունները:

Այդ խնայողությունների մի մասը կանխիկ ձևով գտնվում է բնակչության մոտ, իսկ մյուս մասը օգտագործվում է պետական վարկի տեսքով:

Տնտեսական տեսանկյունից պետական վարկը այսօր տնտեսական օրենքների պահանջներին համապատասխան ազգային եկամտի վերաբաշխման մեթոդներից մեկն է հանդիսանում:

Պետական վարկի ուսումնասիրությանն ուղղված պատմական էքսկուրսները վկայում են, որ մեր երկրում պետական վարկը ժամանակին կարևոր դեր է խաղացել սոցիալական շինարարության, երկրի ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման ասպարեզում:

Պետական վարկի ձևերի ընդհանուր տնտեսական հիմքը կազմակերպությունների և քաղաքացիների խնայողություններն են, ինչպես նաև տնտեսական կազմակերպությունների ժամանակավորապես ազատ միջոցները: Փոխառությունների, ավանդների ներգրավման և իրացման հարաբերությունները վարկային հարաբերություններ են, քանի որ հավաքված միջոցները սոսկ ժամանակավոր ռե-

սուրսներ են և ենթակա են ետ վերադարձման որոշակի ժամկետից հետո:

Պետվարկը դա բյուջեի եկամուտների կամ բանկի վարկային ռեսուրսների համալրման աղբյուրներից մեկն է: Այն հանրապետության վարկային համակարգի բաղկացուցիչ մասն է: Այդ համակարգի մյուս մասը բանկային վարկն է: Սրանց մեջ ընդհանուրն այն է, որ երկուսի հիմքում էլ ընկած է միջոցների ժամանակավոր օգտագործումը: Սակայն, եթե բանկային վարկի դեպքում ի տարբերություն պետական վարկի միջոցները փոխարինաբար տրամադրվում են տնտեսական կազմակերպություններին և քաղաքացիներին բանկի կողմից և որպես վարկատու հանդես է գալիս բանկը, ապա պետական վարկի դեպքում կատարվում է ուղիղ հակառակը: Այժմ բանկերի կողմից ստացված միջոցները լիովին օգտագործվում են Կենտրոնական բանկի կողմից տնտեսության վարկավորման և բյուջետային դեֆիցիտի ծածկման համար:

Տնտեսական կազմակերպությունների և քաղաքացիների մոտ ժամանակավորապես ազատ դրամական միջոցներ կարող են առաջանալ ամենատարբեր պատճառներով: Դրանց մի մասը գոյանում է արտադրության և ծախսերի կատարման սեզոնայնության, մյուս մասը արտադրական պրոցեսների տևական բնույթի պատճառով:

Տնտեսվարող սուբյեկտների և քաղաքացիների ազատ դրամական միջոցները ֆինանսավարկային մարմինների կողմից օգտագործման կազմակերպումը և իրավական կարգավորումը դրսևորվում է որպես պետական վարկ: Այս գործընթացում ձևավակող ֆինանսաիրավական հարաբերությունները բնութագրվում են որպես պետության ներքին պարտք, որը առաջանում է իրավաբանական և ֆիզիկական անձանց ազատ դրամական միջոցները վճարովիությամբ սկզբունքով օգտագործումից, որը պետության կողմից ենթակա է վերադարձման սահմանված ժամկետներում: Այլ խոսքով պետական ներքին պարտքը հանդես է գալիս որպես տվյալ պետության պարտք քաղաքացիներին և տնտեսավարող սուբյեկտներին:

Պետական վարկը հանդես է գալիս որպես վարկային հարաբերությունների մի ամբողջություն, որտեղ պետությունը մասնակցում է որպես փոխառու, իսկ բնակչությունը որպես վարկատու: Պետությունը կամավոր հիմունքներով օգտագործում է պետական բյուջեում բնակչության խնայողություններն ու ժամանակավորապես ազատ միջոցները վերադարձնելու պայմանով:

Այսօր պետական վարկի հիմնական ձևերը դրսևորվում են պետական փոխառությունների թողարկման, ավանդների ներգրավման և դրամա-իրային վիճակախաղի տեսքով: Բնակչության միջոցները, որոնք ներգրավվում են պետության տնօրինության ներ-

քո, պետական բյուջեի միջոցով օգտագործվում են՝ տնտեսության մեջ, առաջին հերթին ընդլայնված վերարտադրության կարիքների համար: Բնակչությունից փոխառած միջոցների արտադրողականորեն օգտագործումը մեծացնում է հանրային արտադրության մասշտաբները և հասարակության կուտակումները, որոնք պետական պարտքի մարման արջուկներ են հանդիսանում: Պետական վարկում գուզորդվում են աշխատավորների անձնական շահերը համապետական շահերին: Այն հնարավորություն է տալիս առավել նպատակահարմար կերպով օգտագործել բնակչության և տնտեսական կազմակերպությունների խնայողությունները ու ժամանակավորապես ազատ միջոցները, չկրճատելով աշխատավորների առօրյա սպառումը:

Վերջիններիս համաձայնությամբ օգտագործվում է տնտեսության զարգացման և այլ կարիքների համար:

Յետևաբար, պետական վարկը իրավական ակտերի և համաձայնության վրա հիմնված ֆինանսաիրավական պարտավորություններ են, որտեղ մասնակիցներից մեկը իշխանության լիազորություններով օժտված պետությունն է:

§ 2. ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐԿԻ ՉԵՎԵՐԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ:

Ժամանակակից աշխարհում պետությունների ներքին պարտքը կարող է արտահայտվել պետական վարկի մի շարք ձևերով, որոնց իրավական ռեժիմը սահմանվում է ներպետական ֆինանսական օրենսդրությամբ: Մեր հանրապետությունում ներքին պարտքը կարգավորող կոնկրետ օրենսդրական ակտ չկա: ԱՊՀ մի շարք երկրներում, այլ թվում Ռուսաստանի Ֆեդերատիվ հանրապետությունում այն սահմանված է «ՌՖ պետական ներքին պարտքի մասին» օրենքով:

Ըստ այս օրենքի ներքին պարտքի ձև է *կառավարության փոխառած վարկը*, նրա կողմից շրջանառության մեջ բաց թողած փոխառությունները և արժեթղթերը, ինչպես նաև ներքին պարտքը արտահայտող և կառավարության կողմից երաշխավորված *այլ ձևեր*:

Ինչպես վկայում են պետությունների ներքին պարտքերին վերաբերող գործնական ուսումնասիրությունները, պետությունները շատ հաճախ հարկադրված այս քայլին են դիմում, երբ առկա է պետական բյուջեի դեֆիցիտ:

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի 12-րդ հոդվածում

սահմանված է, որ պետական բյուջեի դեֆիցիտը ֆինանսավորվում է ներքին և արտաքին աղբյուրներից ստացվող փոխառու միջոցների հաշվին: Տվյալ բյուջետային տարվա ընթացքում պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը իրականանում է Հայաստանի Հանրապետությունում կենտրոնական բանկը: Պետական բյուջեի դեֆիցիտի չափը սահմանվում է տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով:

Այսպես, 1998թ. պետական բյուջեի դեֆիցիտը կազմել է 56.618.044 մլրդ դրամ, որի ծածկման համար որպես ռեսուրսներ օգտագործվել է պետական վարկի այնպիսի տեսակներ, ինչպիսիք են ա) պետական արժեթղթերը (3,660.000), բ) «Հայաստան» համահայկական հիմնադրամի փոխտվությունը (700.000.0), գ) պետական ներքին շահուղ փոխառության պարտատոմսերի ետ գնումը (1 մլրդ դրամ):

ՀՀ կենտրոնական բանկը իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում հանրապետության կառավարությանը վարկավորույիս, որպես վարկային ռեսուրսներ օգտագործում է ինչպես իր, այնպես էլ բանկային մյուս մարմինների սեփական միջոցները, պետական վարկի այնպիսի միջոցներ, ինչպիսիք են դեպոզիտները, բնակչության խնայողությունները, որոնք ժամանակավորապես պահվում են բանկային մարմինների հաշիվներում:

Պետական ներքին պարտքի ձևերից են փոխառությունները, որոնց ֆինանսաիրավական բնութագիրը հանգում է որպես պետության (հանձին կառավարության) և իրավաբանական ու ֆիզիկական անձանց միջև ձևավորվող վարկային հարաբերությունների համակցություն, որոնք դրսևորվում են հիշատակված սուբյեկտների շրջանում պետական պարտատոմսերի և արժեթղթերի տարածմամբ:

Պետական արժեթղթերը իրացվում են կամավոր ձեռք բերման սկզբունքով:

Պետական փոխառության իրավական կարգավորմանն է նվիրված ՀՀ քաղաքացիական օրենսդրության 885 հոդվածի, որի համաձայն պետական փոխառության պայմանագրով որպես *փոխառու* հանդես է գալիս Հայաստանի Հանրապետությունը, իսկ փոխատու քաղաքացին կամ իրավաբանական անձը:

Պետական փոխառության պայմանագիր կնքվում է փոխառուի թողարկված պետական այն պարտատոմսերը կամ այլ արժեթղթերը փոխատուի կողմից ձեռք բերելու միջոցով, որոնք հավաստում են դրամական միջոցները, այլ գույքը, սահմանված տոկոսները կամ այլ գույքային իրավունքները փոխառության թողարկման պայմաններով նախատեսված ժամկետներում փոխառուից ստանալու փոխատուի իրավունքը:

Երջանառության մեջ թողարկված փոխառության պայմանների փոփոխություն չի թույլատրվում:

Պետական վարկի կամ ներքին պարտքի ձևերից մեկը պետական փոխառություններն են կամ նրա կողմից բաց թողնված արժեթղթերը:

Հանրապետության տնտեսական և սոցիալ-կուլտուրական կարիքների համար բնակչության և իրավաբանական անձանց դրամական միջոցների հավաքման, կենտրոնացման ձևերից մեկը հանդիսանում են պետական փոխառությունները: Պետական փոխառությունները մեծ դեր ունեն տնտեսության վերականգնման կարիքների համար, փոխառության բաժնեթղթերը բնակչությունը ձեռք էր բերում բանկերում, որոնք իրացվում են կանխիկ հաշվով:

Առանձին երկրներում փոխառության արժեթղթերը թողարկվում են որոշակի ժամանակով, առանձին կարգերով և արժողությամբ: Յուրաքանչյուր կարգը սահմանված է սերիայից, որոնց տրված են համարներ: Յուրաքանչյուր սերիա ունի որոշակի համարի արժեթղթեր: Փոխառության արժեթղթերը թողարկված են անվանական արժեքով: Փոխառության եկամուտը վճարվում է շահումների ձևով, տարեկան սահմանված տոկոսների հաշվարկով: Ամեն տարի անց է կացվում շահում տիրած: Փոխառության գործողության ողջ ընթացքում շահում է արժեթղթերի որոշակի տոկոսը, մնացած արժեթղթերը ժամկետի ավարտից հետո ետ են գնվում իրենց անվանական արժեքով:

Շահած արժեթղթերը մարվում են և հետագա տիրաժին չեն մասնակցում: Յուրաքանչյուր խաղարկվող տիրաժին ընկնում են ավելի քիչ թվով արժեթղթեր: Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր նոր տիրաժին փոխառությամբ պարտատոմսերի շահման հնարավորությունը մեծանում է¹:

Պետական փոխառության արժեթղթերի վաճառքի և գնման գործառնությունները դրված են բանկերի վրա: Բանկերը պետական փոխառության արժեթղթերը գնում են իրենց անվանական գնով, այսինքն՝ որը նշված է յուրաքանչյուր արժեթղթի վրա, իսկ վաճառում են մի փոքր բարձր գնով: Ավելի բարձր գնով - արժեթղթերը իրացվում են ամսվա այն կեսում, երբ տեղի է ունենալու շահման տիրաժին:

Պետական փոխառության շահած արժեթղթերի վճարումը կատարում են բանկերում:

Պետական փոխառությունների արժեթղթերը հանդիսանում են

ըստ ներկայացնողի արժեթուղթ: Այդ պատճառով նրանց կորստի դեպքում բանկը նրանց տերերից պատճառաբանություններ չի ընդունում:

Արժեթղթերը չեն վաճառվում խաղարկության անցկացման օրը և դրանից մի քանի օր հետո, մինչև խաղարկության պաշտոնական ադյուսակի ստանալը: Բանկերի կողմից փոխառության արժեթղթերի գնումը կատարվում է անընդհատ, այդ թվում նաև խաղարկման տիրաժի անցկացման օրը:

Պետական վարկի դրսևորման ձևերից են բնակչության և իրավաբանական անձանց ավանդները, որոնք բանկային հիմնարկներում պահվող քաղաքացիների և իրավաբանական անձանց դրամական միջոցներն են:

Բնակչության խնայողությունները և իրավաբանական անձանց դեպոզիտների իրավական կարգավորումը սահմանված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 902 հոդվածով, որտեղ ասված է, որ բանկային ավանդի (դեպոզիտի) պայմանագրով մի կողմը (բանկը) ընդունելով մյուս կողմից (ավանդատուից) ստացված կամ վերջինիս համար ստացված դրամական գումարը (ավանդը), պարտավորվում է ավանդատուին վերադարձնել ավանդի գումարը և պայմանագրով նախատեսված պայմաններով ու կարգով տոկոսներ վճարել դրանց:

Անձը, որի անվամբ բանկում ձևակերպում են ավանդը և նրան տալիս են բանկային կամ հաշվարկային գրքույք, հանդիսանում է բանկի ավանդատու: Մվանդատուներ կարող են լինել ինչպես ՀՀ չափահաս և անչափահաս քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, այնպես էլ իրավաբանական անձինք: Ավանդ կարելի է պահել ուրիշի անունով, որն այդ դեպքում հանդիսանում է ավանդատու: Մեկ անձը կարող է ձևակերպել մի քանի ավանդներ: Ավանդների պահման ժամկետը չի սահմանափակվում: Ավանդը լրիվ, կամ մասնակիորեն վերադարձվում է ավանդատուին նրա առաջին իսկ պահանջով:

Բանկերի ավանդների տեսակները մեր հանրապետությունում սահմանված են քաղաքացիական օրենսգրքի 905 հոդվածում, ըստ որի ավանդները լինում են ցպահանջ և ժամկետային: Ավանդատուն իրավունք ունի ընտրել դրանցից յուրաքանչյուրը:

Ցպահանջ ավանդները բնորոշ են նրանով, որ պահման ժամկետը նախօրոք չի սահմանվում: Ավանդը կարելի է ստանալ ցանկացած ժամանակ: Չի նախատեսվում նաև ոչ մի հատուկ պայման նրանց վերադարձնելու համար: Այդպիսի ավանդների համար բանկերը վճարում են պայմանագրային տոկոս¹: Ցպահանջ ավանդը

¹ Стн. дннршдшшн, Постановление Правительства РФ "О государственном внутреннем выигрышном займе 1982 года и выпуске Российской внутренней займа 1992 года". (РГ. 1992, 25 февр.)

¹ Стн. дннршдшшн, Финансовое право. Сг. աշխատ. էջ 366.

ձևակերպված որոշակի անձի անունով կոչվում է անվանական ավանդ, իսկ առանց անձի նշումը ըստ ներկայացնողի ավանդ: Վերջին ձևի ավանդի տեր կարող է լինել յուրաքանչյուր անձ, որը ներկայացնում է ավանդագրքույկը: Այդ փաստաթղթի կորուստի դեպքում ավանդատուն կարող է վերականգնել իր իրավունքները միայն դատական կարգով:

Ժամկետային ավանդները - դրանք դրամական միջոցներ են, որոնք ընդունվում են խնայողամարկդների կողմից որոշակի ժամանակով: Ավանդը համարվում է շտապ, նրա ժամկետը անցնելուց հետո: Քանի որ ավանդները բանկերի տրամադրության տակ մնում են ավելի երկար ժամանակ, դրանց համար վճարվում է ավելի բարձր եկամուտ: Եթե ավանդատուն ավանդը հանձնելու ժամանակ բանկին գրավոր ցուցում չի տվել այն մասին, որ դրամը դրվում է ժամկետային ավանդի ձևով, ապա այդ ավանդը համարվում է ցպահանջ և տվյալ ավանդի եկամուտը վճարվում է ցպահանջ ավանդի տոկոսադրույքով, անկախ նրա պահման ժամանակից:

Ավանդատուն իրավունք ունի ժամկետային ավանդի դրամը ստանալ ժամկետը չլրացած, բայց այդ դեպքում նրան վճարվում է ցածր տոկոս եկամուտ՝ ավանդի պահման ողջ ժամանակաշրջանի համար: Ժամկետային ավանդների ժամանակ լրացուցիչ մուծում չի կատարվում: Դրա հետ մեկտեղ այդ ավանդներով կարող են տրվել տոկոսներ, հաշվարկված որոշակի ժամանակաշրջանի համար:

Գործող բանկային օրենսդրությամբ ինչպես քաղաքացիները, այնպես էլ իրավաբանական անձինք բանկային ավանդի պայմանագրով կարող են իրենց խնայողությունները պահել պայմանական, ընթացիկ հաշվային և այլ ավանդների տեսակներով, որոնք կարգավորվում են ինչպես կողմերի միջև կնքված պայմանագրով, այնպես էլ գործող քաղաքացիական և ֆինանսական օրենսդրությամբ:

Այսպես, պայմանական ավանդները առանձնանում են նրանով, որ ավանդատուն կարող է տնօրինել ավանդը միայն որոշակի պայմաններ կատարելուց հետո (դպրոցը, ԲՈՒՅ-ը ավարտելուց հետո): Պայմանը նշվում է ավանդատուի կողմից, որը գրվում է ավանդատուի դիմային հաշվի մեջ և ավանդագրքույկում: Պայմանները չպետք է պարունակեն օրենքին հակասող և այլ անհասկանալի պահանջներ, որոնք դժվարացնեն ավանդի ետ վերադարձնելը: Ավանդատուն իրավունք ունի տնօրինել պայմանական ավանդը այն քանից հետո, երբ ներկայացնելով փաստաթուղթը ապացուցում է, որ պայմանը կատարված է (դպրոցի ավարտման վկայական, ԲՈՒՅ-ի դիպլոմ և այլն): Պայմանական ավանդի տերը դա կարող է տնօրինել նաև նախքան պայմանի կատարելը, երբ դրա համար կա ավանդը պահող անձի թույլատվությունը:

Անչափահասի անունով դրված ավանդը, մինչև պայմանի կատարումը, իրավունք ունի տնօրինել այն անձը, որն ավանդը պահել է. բայց անչափահաս ավանդատուի ծնողների գրավոր համաձայնությամբ: Ըստ պայմանական ավանդների եկամուտը տարեկան սահմանվում է պայմանագրերով, ինչպես ցպահանջ ավանդներինը: Բանկային ավանդի պայմանագրով կողմերը կարող են սահմանել ընթացիկ հաշվարկային ավանդ:

Ընթացիկ հաշվարկային ավանդը ցպահանջ ավանդներից տարբերվում է առաջին հերթին նրանով, որ ավանդատուին բանկային գրքույկի փոխարեն տրվում է երկու փաստաթուղթ՝ հաշվարկային և չեկային գրքույկներ: Դրանք այդ ավանդով տրվում է չեկի համաձայն, որը ստորագրում է ինքը՝ ավանդատուն: Հաշվարկային գրքույկում բանկը գրանցում է միայն մուծումները, որոնք ստացվում են ընթացիկ հաշվով, իսկ ծախսվող գործառնությունների գումարները գրանցվում են ավանդատուի կողմից: Ընթացիկ հաշվի առավելությունն այն է, որ ավանդատուն կարող է լրացնել չեկը ամեն մի անձի անունով, ինչպես նաև ըստ ներկայացնողի: Բացի դրանից, ավանդատուն հնարավորություն ունի մուծումներ կատարել անկանխիկ ձևով: Այդ դեպքում ավանդի տերը չեկի վրա «հաշվարկային» սղում է կատարում և գումար ավանդը ստացողի հաշվի համարը, բանկի, հիմնարկության անվանումը, որտեղ գտնվում է այժմ չեկը: Հաշվարկային հաշվով դրամ ստանալու համար, կամ գումարն այլ անձի կամ հիմնարկության անունով դուրս գրելու համար անհրաժեշտ է բանկին ներկայացնել համապատասխան չեկը: Այս ավանդի համար եկամուտները վճարվում են տարեկան տոկոսադրույքով ըստ պայմանագրում նշված չափի:

Հայաստանի հանրապետությունը մեծ հոգատարություն է ցուցաբերում ավանդատուների իրավունքների պաշտպանության, նրանց անձնական խնայողությունների մեծացման ուղղությամբ:

Բանկային հիմնարկներում գտնվող դրամական միջոցները և այլ արժեքները երաշխավորված են հանրապետության կառավարության կողմից: Հանրապետության բանկային օրենսդրությունը նախատեսում է ավանդների գաղտնիությունը, դրանց պաշտպանվածությունը և վերադարձնելը առաջին իսկ պահանջով: Բանկերում եղած ավանդների մասին տեղեկությունները տալիս է միայն ավանդատուին կամ նրա օրինական ներկայացուցչին: Այսպիսի տեղեկություններ կարող են տրվել նաև դատարաններին, հետաքննության և նախաքննության մարմիններին՝ այն ավանդների վերաբերյալ, որոնք կապակցությամբ քրեական գործ է հարուցված, կամ ըստ գործի նախատեսվում է գույքի բռնագրավում: Որոշ քաղաքացիական գործերով, որոնք բխել են քրեական գործերից և

կապված են ալիմենտի բռնագանձման հետ, ինչպես նաև ամուսինների կողմից համատեղ ձեռք բերած գույքի բաժանման վերաբերյալ գործերով: Ավանդների մասին տեղեկանքը տալիս են բանկային մարմինները: Քաղաքացիների ավանդների վրա կարելի է դնել կալանք վերը նշված մարմինների կողմից կայացված որոշման հիման վրա, ինչպես նաև կարող է բռնագանձվել դատարանի դատավճռով կամ նրա որոշման հիման վրա:

Բանկերը դրամը ավանդատուին են տալիս նրա առաջին իսկ պահանջով: Ավանդատուն իրավունք ունի տնօրինել ավանդը ինքը կամ իր վստահված անձի միջոցով: Ավանդների տնօրինման հատուկ կարգ է սահմանված անչափահաս ավանդատուների համար: Անչափահասը տնօրինում է ավանդը ինքնուրույն ընդհանուր հիմունքներով, եթե ավանդը ինքն է դրել: Սակայն անչափահասը իրավունք չունի կտակային կարգադրություններ անելու ավանդների վերաբերյալ:

Եթե անչափահասի անունով ավանդը պահված է այլ անձի կողմից, ապա այդ ավանդը տնօրինում են նրա ծնողները կամ ավանդատուի այլ օրինական ներկայացուցիչները: 14 տարին լրանալուց հետո ավանդը տնօրինում է ինքը՝ անչափահասը ծնողների կամ խնամակալների համաձայնությամբ:

Սեծ առավելություններ են տրված ավանդատուներին ավանդը վերցնելու, երաշխավորագրեր տալու և կտակներ կազմելու վերաբերյալ: Ողջ ավանդը կամ նրա մի մասը վճարելու երաշխավորագիրը պարտադիր չէ հաստատել նուտարական գրասենյակում: Ավանդատուն դա կարող է գրել իր դիմային հաշվում, որը բացված է իրենց բանկում: Այդպիսի երաշխավորագիրը երաշխավորվում է ավանդատուի ստորագրությամբ և հաստատվում է բանկի հսկիչի կողմից:

Ավանդատուն իրավունք ունի երաշխավորագիր կազմելու խնայողամարկդից դուրս: Այդ դեպքերում այն հաստատվում է կամ նուտարական գրասենյակում, կամ ավանդատուի բնակվայրի տեղական ինքնակառավարման մարմինների կամ այն հիմնարկության, ձեռնարկության կողմից, որտեղ աշխատում է ավանդատուն: Ավանդի տնօրինման լիազորագիր թույլատրվում է ձևակերպել մեկ կամ մի քանի անձանց վրա, որի ժամանակ ավանդատուն նշում է լիազորագրի ժամկետը, բայց ոչ ավելի 3 տարուց: Այդ ժամկետի լրանալուց հետո լիազորագիրը կարող է նորից ձևակերպվել: Լիազորագիրը առանց ժամկետի նշման կարող է գործել մեկ տարի:

Եթե լիազորագիրը տրվում է անգրագետ ավանդատուի կողմից, ապա դա կարող է ստորագրվել այլ անձի կողմից: Այդպիսի լիազորագիրը բանկերը չեն գրանցում դիմային հաշվի կտրոններում:

Ավանդատուն իրավունք ունի իր ավանդը կտակել մեկ կամ մի քանի անձանց, անկախ նրանից, նրանք հանդիսանում են նրա օրինական ժառանգորդները թե ոչ: Ավանդը կարելի է նաև կտակել իրավաբանական անձանց:

Ավանդատուն կտակի կարգադրությունը գրանցում է դիմային հաշվի կտրոնում, խնայողական կամ հաշվարկային գրքույկում, առանցիկ թղթի վրա: Կտակն անող ավանդատուն պահպանում է կտակի տնօրինման իրավունքը: Ավանդատուի նոր կտակի կարգադրությունը փոխում է նախորդը: Եթե ավանդը կտակված չէ, ապա ավանդատուի մահվան դեպքում ավանդն անցնում է նրա օրինական ժառանգորդներին:

Բանկային ավանդները, ինչպես նաև նրանց եկամուտները ենթակա են հարկման: Եթե ավանդատուի մահից հետո չկան օրինական ժառանգորդներ, և ավանդը կտակված չի եղել, ապա այն ճանաչվում է տիրազուրկ և ֆինանսական մարմինների գրավոր պահանջի հիման վրա գրանցվում է որպես պետական եկամուտ:

Բանկային համակարգի բոլոր այն մարմինները, որոնք 39 կենտրոնական բանկի թույլտվությամբ (լիցենզիա) կարող են իրականացնել խնայողական գործունեության կազմակերպում, որպես իրավաբանական անձինք քաղաքացիների և տնտեսական կազմակերպությունների հանձնարարությամբ կարող են իրականացնել ավանդների հետ կապված վճարա-հաշվարկային գործառնությունները:

Ավանդատուների հանձնարարությամբ բանկերը կատարում են բնակարանի վարձի գումարների, կոմունալ ծառայությունների համար գումարների դուրսգրում:

Ոչ կանխիկ հաշվարկները ավանդատուներին համար ստեղծում են նշանակալի հարմարավետություններ: Այսպիսի հաշվարկների ներդրմամբ բարձրանում է բանկերի հեղինակությունը: Դրա հետ միաժամանակ մեծանում է ավանդատուների թիվը, աճում է ավանդների հոսքը: Ոչ կանխիկ հաշվարկների ձևերի զարգացումը և օգտագործումը հիմնված է կամավորության սկզբունքի վրա:

Ոչ կանխիկ հաշվարկման կարգով ավանդատուների դիմումի հիման վրա կարող են ընդունվել բանվորների և ծառայողների աշխատավարձը, պարգևատրման գումարները, գյուղատնտեսական ապրանքների համար գումարները, որոնք վճարվել են պետական նախապատրաստող կազմակերպություններին հեղինակային հոնորարը, թոշակները, ալիմենտները և այլն:

Աշխատավորների սպասարկման հեղինակային ձևերից է հանդիսանում բանվորների և ծառայողների աշխատավարձի վճարումը՝ բանկերի միջոցով: Այդ միջոցառումն ունի կարևոր նշանա-

կություն: Նա ձեռնարկությունների համար ստեղծում է որոշակի էֆֆեկտ, որը կայանում է նրանում, որ աշխատավարձն անմիջականորեն ձեռնարկություններում բաժանելիս վերացվում են աշխատաժամանակի ավելորդ կորուստները: Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, աշխատավարձի նոր տեսակի հաշվարկի կիրառումը մի շարք ձեռնարկություններում բերում է ուշացումների և պարապուրդների քանակի կրճատում:

Ձեռնարկություններում աշխատաժամանակի ռեզերվ է առաջանում նաև արտահաստիքային գանձապահների ծառայությունից հրաժարվելը, որոնք աշխատավարձի օրերին զբաղվում էին աշխատավարձի բաժանմամբ: Այսպիսով, աշխատավարձի վճարման նոր ձևը ձեռնարկություններում նպաստում է աշխատանքի արտադրողականության աճին, ավանդատուների թվի մեծացմանը, նպաստում է կանխիկ դրամական շրջանառության կազմակերպման կատարելագործմանը:

Բանկային մարմինների ավանդատուների հանձնարարությամբ, կատարում են անկանխիկ հաշվարկներ՝ ձեռնարկությունների և հիմնարկությունների մատուցած ծառայությունների համար, նրանց են փոխանցում վճարներ, օրինակ բնակարանի, էլեկտրոէներգիայի, գազի, ջրի, հեռախոսի, ձեռք բերած ապրանքների վճարումների համար:

Ավանդատուն կարող է նաև հանձնարարել բանկին վճարել հարկը անկանխիկ հաշվարկների կարգով, փոխանցել կյանքի ապահովագրության վճարները, բնակարանային շինարարական կոոպերատիվների վճարները, մանկական հիմնարկությունների վարձը և այլն:

Ավանդատուները բանկերին այդպիսի հանձնարարություններ տալիս են մեկ անգամ կամ երկարատև ժամկետով: Անկանխիկ հաշվարկների գործառնությունները գրանցվում են ավանդատուի գրքույկում:

Բանկերը ավանդատուի պատվերով կարող են կատարել նաև այլ գործառնություններ: Յուրաքանչյուր ավանդատու իրավունք ունի հանձնարարել բանկին փոխադրել իր որջ ավանդը կամ նրա մի մասը ուրիշ բանկ՝ իր անվամբ կամ այլ անձի անունով: Բացի դրանից, ավանդը թույլատրվում է փոխադրել այլ խնայքանկի միջոցով, կանխիկ դրամի ձևով հանձնելու այլ անձի: Յուրաքանչյուր բանկ կանխիկ դրամ է ընդունում փոխադրման միջոցով և այն գրանցում է ավանդատուի հաշվին, որը բացվում է այլ բանկում: Փոխադրման գործառնությունները ձևակերպվում են այլ բանկ ուղարկելով փոխադրության բլանկը:

Մի բանկից այլ բանկ ուրիշ անձի անունով ավանդի փո-

խադրման ծառայության համար վարձ է գանձվում, որը հաշվվում է սահմանված տարիքով:

Պետք է ասել, որ մի բանկից մյուսը ավանդ փոխադրելու համար, նույն ավանդատուի անունով, նրանից վարձ չի գանձվում:

Ավանդատուն չի վճարում նաև իր անունով ավանդի փոխադրման վարձը (անկախ գումարից և պահպանման ժամանակից) հետևյալ դեպքերում՝ երբ փոխադրության գործառնությունները կատարվում են տվյալ վարչա-տեղիտրիալ միավորի շրջանակներում:

Երբ ավանդատուն կատարում է լրացուցիչ վճարում իր հաշվին, որը բացված է ուրիշ բանկում, միաժամանակ ներկայացնում է ավանդագրքույկը:

Քանի որ ավանդների փոխադրությունը կատարվում է առանց կանխիկ դրամի, այդ իսկ պատճառով բանկերի այդպիսի գործառնությունները կրճատում են կանխիկ դրամի շրջանառությունը:

Բանկերի գործունեության մեջ լայն տարածում ունի նաև ակրեդիտիվային գործառնությունները:

Բանկային ակրեդիտիվը - դա անվանական փաստաթուղթ է, ըստ որի տվյալ քաղաքի կամ համայնքի բանկում պահված դրամը տրվում է ցանկացած քաղաքաի կամ համայնքի բանկին: Բանկերը տալիս են ակրեդիտիվ ըստ ներկայացման, ինչպես նաև հիմնարկ-ձեռնարկությունների անունով: Ակրեդիտիվը գործում է սահմանված ժամկետով հաշված արված օրից: Ժամկետանց ակրեդիտիվը կարող է վճարվել հետագա երեք տարիների ընթացքում:

Ակրեդիտիվի տերը դրած գումարի համար եկամուտ չի ստանում: Ակրեդիտիվներ տալիս են բանկային համակարգի մարմինները: Ակրեդիտիվները վճարվում են բոլոր բանկերի կողմից: Դրամը ըստ ակրեդիտիվի վճարվում է նրա տիրոջը, երբ ներկայացվում է ակրեդիտիվը, դրան կից հսկիչ թերթը և անձնագիրը կամ փոխարինող որևէ փաստաթուղթ:

Դրամը ըստ ակրեդիտիվի կարելի է տալ լիազորագրով այլ անձանց: Լիազորագրում ակրեդիտիվի տերը պետք է նշի ակրեդիտիվի համարը և սերիան, ինչպես նաև ակրեդիտիվ վճարման գումարի չափը: Ակրեդիտիվի տիրոջ ստորագրությունը հաստատվում է նոտարական մարմինը: Հիվանդանոցներում, զինվորական մասերում գտնվող անձանց լիազորագրերը հաստատում են այդ հիմնարկությունների ղեկավարները:

Ակրեդիտիվային գործառնությունները հանդիսանում են բնակչության դրամական գումարների կենտրոնացման ձևերից մեկը, ինչպես նաև սպասարկման ձևերից մեկը: Շատ ակրեդիտիվներ քաղաքացիներին տրվում են առողջարաններ և հանգստյան տներ, ծառայողական գործուղումների մեկնելիս և այլն:

Ակրեդիտիվային գործառնություններն ունեն կարևոր տնտեսական նշանակություն, քանի որ կրճատում են կանխիկ դրամի հոսքը: Պետության ներքին պարտքի ձևավորման աղբյուր է հանդիսանում պետական վիճակախաղը:

Պետական վիճակախաղի տոմսերը հանդիսանում են բնակչության ազատ միջոցների կենտրոնացման ձևերից մեկը՝ համապետական շահերի օգտագործման համար¹:

Ֆինանսա-իրավական գրականության մեջ ժամանակին և այսօր էլ կարծիքներ են հայտնվում, որ դրամաիրային վիճակախաղը ըստ էության պետության ոչ հարկային եկամուտներից մեկն է: Չնշելով որպես պետական եկամտի աղբյուրի պետք է նկատել, որ այն պետական վարկի տարատեսակ է, որի կազմակերպումը և կառավարումը, դրամաիրային վիճակախաղի սահմանման իրավունքը հանրապետության մասշտաբով վերապահված է կառավարությանը, իսկ նրա հանձնարարությամբ այն կարող է իրականացնել ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը: Հանրապետության մասշտաբով դրամաիրային վիճակախաղի կազմակերպման անհրաժեշտությունը առաջանում է ազգային պետական կյանքի կարևորագույն խնդիրների լուծման ֆինանսավորման նպատակով: Կառավարությունը միակողմանիորեն ինքն է որոշում դրամաիրային վիճակախաղի բնույթը, շահումները, վճարման կարգը և ժամկետները:

Դրամաիրային վիճակախաղի գործընթացում ծագող հարաբերությունները ունեն ֆինանսաիրավական բնույթ և զուղղված են պետության ֆինանսական գործունեություն ճանապարհով դրամական միջոցների հավաքմանը, որպիսի գործընթացը ներհատուկ է պետական վարկին: Ըստ վիճակախաղի խաղարկվում են դրամական և իրային շահումներ: Իրային շահումներում մտցվում են բնակչության կողմից մեծ պահանջարկ ունեցող ապրանքներ (ավտոմեքենա, սառնարան և այլն): Իրային շահումները հանձնվում են (ուղարկվում) արևտրական կազմակերպությունների կողմից, իսկ դրամական շահումները վճարվում են բանկերի կողմից:

Վիճակախաղի սահմանման իրավունքը վերապահված է կառավարությանը կամ նրա հանձնարարությամբ ֆինանսների նախարարությանը: Վիճակախաղի անցկացման պայմանները (շահումների թիվը, շահող իրերի տեսականից, շահման տիրաժների անցկացման ժամկետները և այլն) որոշում է կառավարությունը: Առվորաբար շահումների ընդհանուր գումարը ըստ դրամա-իրային վիճակախաղի կազմում է ընդհանուր թողարկվող տոմսերի արժեքի 60%-ը, իսկ յուրաքանչյուր տոմսի անվանական արժեքը որոշում է կառավարու-

թյունը:

Պետական վիճակախաղի միջոցառումների իրականացումը, վիճակախաղի մշակումը, դրա թողարկման ժամկետների, ծավալի, շահման տիրաժի անցկացման, հանձնաժողովի կազմի հաստատման հարցերով զբաղվում են հանրապետության ֆինանսների նախարարությունը և կենտրոնական բանկը: Նրանք ստեղծում են ազիտացիոն և ռեկլամացիոն նյութեր, նախապատրաստում են անհրաժեշտ նյութեր մամուլում տպագրման, ռադիոյով և հեռուստատեսությամբ հաղորդելու համար: Ֆինանսական մարմինները բանկի հիմնարկների հետ համատեղ միջոցառումներ են կազմակերպում վիճակախաղի տոմսերի լրիվ վաճառքի համար:

Պետական վիճակախաղի տոմսերը վաճառվում են կանխիկ վճարով բանկերում, խանութներում, գործակալություններում և այլուր: Անմիջականորեն ծեռնարկություններում, հիմնարկություններում և կազմակերպություններում տոմսերի վաճառք չի թույլատրվում: Վիճակախաղերի տոմսերի իրացման և նրանց շահման վճարման հետ կապված բոլոր հաշվարկները կատարում են բանկային մարմիններում:

Վիճակախաղի տոմսերի վաճառքի համար առանձնացված անձինք ամեն օր կանխիկ դրամը հանձնում են իրենց կազմակերպության դրամարկղը, որը պարտավոր է դրանք ուղարկել բանկի հիմնարկությանը ոչ ուշ, քան հետևյալ օրը: Տոմսերի վաճառքին ներգրավված աշխատողները ստանում են պարգևատրություն:

Պետական վիճակախաղի տոմսերի վաճառքից բյուջեի մաքուր եկամուտը որոշվում է տոմսերի վաճառքից ստացված գումարի և վճարված դրամական և իրային շահումների ու վիճակախաղի անցկացման հետ կախված ծախսերի տարբերությամբ:

Վիճակախաղի տոմսերի վաճառքից ստացված գումարները բանկի հիմնարկությունների միջոցով հաշվեգրվում են որպես հանրապետության բյուջեի եկամուտ:

§ 3. ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԾԱԳՈՂ ՖԻՆԱՆՍԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պետական վարկի կազմակերպման և իրացման գործընթացում ձևավորվող հասարակական հարաբերությունները իրենց բնույթով բարդ են, տարասեռ: Կարգավորվում են ոչ միայն ֆինանսական այլև քաղաքացիական և վարչական իրավունքի նորմերով: Հետևաբար, այս իրավահարաբերությունները ունեն համալիր բնույթ:

¹ Տես մանրամասն, "Финансовое право", № 2, աշխ էջ 326

Պետական վարկի ուղրտին վերաբերող իրավական հարաբերությունները ծագում են վարկի ձևավորման, գործադրման և մարման ընթացքում: Որպես առանձնահատկություն պետք է նկատել, որ այս հարաբերությունները դուրս չեն պետության ֆինանսական գործունեությունից և կազմում են այդ գործունեության բաղկացուցիչ մասը:

Ինչ վերաբերում է պետության ներքին պարտքի գործընթացում ձևավորվող իրավահարաբերությունների օբյեկտին, ապա վերջիններս, ինչպես ամեն մի ֆինանսա-իրավական հարաբերության օբյեկտ հանդիսանում են պետության ֆինանսական ռեսուրսները:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, հանրապետության կառավարության և մյուս պետական մարմինների միջև պետական ներքին պարտքի ծածկման կապակցությամբ ձևավորվող ֆինանսաիրավական հարաբերություններն ունեն գույքային-դրամական բնույթ:

Պետական վարկի կապակցությամբ ծագող բոլոր իրավահարաբերությունների էական առանձնահատկություններից մեկն այն է, որ այս իրավահարաբերությունների կողմերից մեկը, որպես կանոն հանդիսանում է պետությունը կամ նրա կողմից լիազորված պետական որևէ մարմին: Պետական վարկի իրավահարաբերությունների սուբյեկտների տեսակը և քանակը մշտապես պայմանավորված են այն իրավաբանական փաստերով, որոնք ընկած են պետական ներքին պարտքի ձևավորման հիմքում:

Այսպես, ՀՀ պետական վարկի սուբյեկտներ հանդիսանում են մի կողմից պետությունը, հանձին Հայաստանի Հանրապետության կառավարության, որը հանդես է գալիս որպես վարկառու և պարտավորվում է վերադարձնել պարտքը և վճարել տոկոսներ, իսկ մյուս կողմում հանդես են գալիս իրավաբանական և ֆիզիկական անձինք:

Պետական վարկին վերաբերվող իրավահարաբերություններում կարող են հանդես գալ ինչպես ներկայացուցչական, այնպես էլ գործադիր մարմիններ, որոնց լիազորությունները սահմանված են ինչպես սահմանադրությամբ, այնպես էլ նորմատիվ և ենթաօրենսդրական ակտերով: Օրինակ ՀՀ սահմանադրության 77 և 89-րդ հոդվածները ամրապնդում են օրենսդիր և գործադիր իշխանությունների լիազորությունները պետական բյուջեի կատարման, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացած փոխառությունների և վարկերի օգտագործման գործընթացում:

Պետական վարկին վերաբերվող իրավահարաբերությունների անմիջական սուբյեկտ է հանդիսանում ՀՀ կենտրոնական բանկը և ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը: Այս մարմինները ՀՀ կառավարության միջոցով առաջարկություններ են ներկա-

յացնում բարձրագույն օրենսդիր մարմնին պետական վարկի և նրա տեսակների գործադրման ընթացքում կիրառվող քաղաքականության մշակման ուղղությամբ: Պետական վարկի գործադրման և այդ ուղղությամբ հաշվարկների, վճարումների և այլ բնույթի ծառայությունների մատուցման աշխատանքները կազմակերպում է կենտրոնական բանկը, բանկային համակարգի մարմինների միջոցով:

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը սահմանում է ներքին փոխառությունների բաց թողման, վճարման և ետ գնման կարգը և ժամկետները:

Պետական վարկի կազմակերպմանը, նրա գործադրմանը վերաբերվող բոլոր իրավահարաբերություններում, որպես պարտադիր կողմ հանդես են գալիս պետական իշխանության մարմինները, որոնք անկախ վարկատուների ցանկությունից ու կամքից միակողմանիորեն սահմանում են ներքին պարտքից բխող իրենց պարտավորությունները, ինչպես նաև պետական վարկի պայմանները, սահմանման և բաշխման կարգը:

Հետևաբար, դժվար չէ նկատել, որ պետական վարկի գործընթացում ձևավորվող իրավահարաբերություններին, ինչպես ցանկացած ֆինանսական իրավահարաբերության, ներհատուկ է այդ հարաբերությունների ծագման պետաիշխանական բնույթը: Չնայած այս իրավահարաբերություններում պետությունը հանդես է գալիս որպես դրամական միջոցների փոխառու, այնուամենայնիվ, ինքն է թելադրում պայմանագրի այնպիսի էական պայմաններ, ինչպիսիք են պետական վարկի ժամկետները, տեսակները և հատուցանելիությունը: Պետությունը միակողմանիորեն կարող է դադարեցնել կամ փոփոխել պետական վարկի պայմանները:

Ինչ վերաբերվում է պետական վարկի մյուս կողմին իրավաբանական և ֆիզիկական անձանց, ապա վերջիններս հանդես գալով վարկային հարաբերություններում, պարտավոր են պահպանել պետության ներքին պարտքի բոլոր պայմանները: Ի տարբերություն բանկային վարկի, այստեղ իրավահարաբերության մասնակիցները իրավահավասար չեն: Այս իրավահարաբերություններին ներհատուկ է ավտորիտար պետա-իշխանական գործունեության մեթոդը, որտեղ պետությունը ինքն է անմիջապես կազմակերպում պետական ներքին պարտքի կառավարումը:

Այլ խոսքով, ի տարբերություն գույքային հարաբերությունների կարգավորման քաղաքացիաիրավական մեթոդի, պետական վարկի գործադրման ընթացքում ծագող ցանկացած իրավահարաբերություն կարգավորում է պարտապան-պետության կողմից, որպիսի առանձնահատկությունն վկայում է պետական վարկերին վերաբերող իրավական ինստիտուտի համալիր (կոմպլեքսային) լինելու մասին

ԳԼՈՒԽ XVIII

**ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ**

**§ 1. ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ, ՀԱՍԿԱԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ**

Ներկայիս համաշխարհային գիտատեխնիկական առաջընթացը և նրա նվաճումների ներդրումը արտադրության մեջ, մարդուն հնարավորություն է ընձեռնում ավելի մոտիկից և լիովին ծանոթանալու բնության օրենքների հետ և այն օգտագործելու հասարակության շահերի համար: Տիրապետելով բնության օրենքներին մարդը գիտակցված պայքար է մղում տարերային ուժերի դեմ: Շատ հաճախ այդ պայքարի արդյունավետությունը պայմանավորված է ոչ այնքան գիտության և տեխնիկայի զարգացման մակարդակից, որքան տվյալ պահի արտադրության եղանակից:

Հայաստանի Հանրապետությունը անկախության հռչակումից հետո, իրագործելով ներքին և հիմնական ֆունկցիաներից մեկը՝ երկրի տնտեսական կազմակերպումը և կառավարումը լայն աշխատանք է տանում երկրի առանձին շրջաններում տարերային աղետների կանխման ուղղությամբ: Ստեղծվում են կանխարգելիչ կառույցներ, կառուցվում են ոռոգման համակարգեր, ձեռնարկվում են անասունների հիվանդությունները կանխող տարբեր անասնաբուժական միջոցառումներ:

Ներկայումս, երբ հանրապետության տնտեսության մեջ լայնորեն արձատարվում են շուկայական հարաբերությունները, գիտատեխնիկական առաջընթացի նվաճումները անհամաչափություններ կարող են առաջանալ ոչ միայն տարերային աղետների հետևանքով, այլև ուրիշ պատճառներով: Ապահովագրական ֆոնդերի ստեղծումը ռեալ երաշխիք է տնտեսության մեջ առաջացող անհամաչափությունները կանխելու և հետևանքները վերացնելու համար:

Տնտեսագիտական և իրավաբանական գրականության մեջ այն կարծիքն է հայտնվում, որ ապահովագրական ֆոնդ կարելի է ստեղծել երեք եղանակով, այդպիսի ֆոնդեր ստեղծելով յուրաքանչյուր տնտեսությունում, որն ընդունված է անվանել ինքնաապահո-

վագրում, պետական բյուջեի կազմում ընդհանուր պետական կենտրոնացված պահեստային ֆոնդ ստեղծելով, ապահովագրման մեթոդով, այսինքն ապահովագրական ընկերությունները կյանքի և ոչ կյանքի ապահովագրական պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով, ապահովագրավիճարներից ձևավորվում են ապահովագրական պահուստներ, որտեղից հատուցվում են տարերային աղետներից և դժբախտ պատահադեպերից այդ մուծումների վճարողների կրած կորուստները:

Ինքնաապահովագրությունը, որպես կանոն, տնտեսապես աննպատակահարմար մեթոդ է, որովհետև այն առաջ է բերում անձեռնմխելի պաշարի ձևով միջոցների սառեցում, որի կարիքը հայտնի չէ, թե երբ կզգացվի, գուցե և առհասարակ չզգացվի տվյալ տնտեսություններում: Մյուս կողմից, եթե պատահում են կորուստների դեպքեր, ապա եղած պաշարը նույնպես կարող է ոչնչանալ կամ չբավականացնել կորուստը ծածկելու համար:

Ինքնաապահովագրությունը գյուղական և գյուղացիական տնտեսություններում արտահայտվում է սերմացուի, անասնակերի, պարենամթերքների համեմատաբար ոչ մեծ չափի ֆոնդերի ստեղծմամբ:

Տարերային աղետներից և դժբախտ պատահարներից ձեռնարկությունների և կազմակերպությունների կրած կորուստները կարող են ծածկվել պետության կենտրոնացված պահուստային ֆոնդից, որը ստեղծվում է գյուղացիական կոոպերատիվ տնտեսություններին և քաղաքացիներին տարերային խոշոր աղետներ պատահելու դեպքում, օգնություն ցույց տալու համար:

Տարերային աղետներից և դժբախտ պատահարներից տուժած գյուղացիական և կոոպերատիվ տնտեսություններում անխափան վերարտադրությունը ապահովելու և քաղաքացիական օգնություն ցույց տալու համար ստեղծվում է համապատասխան ապահովագրական ֆոնդ ապահովագրության մեթոդով, այսինքն, առանձին տնտեսությունների և քաղաքացիների միջոցների զանձման ու կուտակման միջոցով: Ապահովագրությունը մասամբ դառնում է պետության գործունեության մի առանձին բնագավառ որն իրականացվում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կազմում գործող ապահովագրական տեսչության և ապահովագրական այլ կազմակերպությունների կողմից: Պետությունը հանձին այդ մարմինների հանդես է գալիս որպես ապահովագրական գործունեության կազմակերպող:

ՀՀ ապահովագրության իրավական կարգավորումը սահմանված է ԱԺ 1996թ. նոյեմբերի 19-ին ընդունված «Ապահովագրության մասին» օրենքով, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով,

որտեղ սպառիչ լուսաբանված են կամավոր ապահովագրության հիմնախնդիրները:

Ապահովագրությունը որպես ֆինանսաիրավական ինստիտուտ, որպես իրավական կատեգորիա իր լուսաբանումն է ստացել «Ապահովագրության մասին» օրենքի 2-րդ հոդվածում, որտեղ ասվում է, որ ապահովագրությունը գործունեություն է, ըստ որի ապահովագրողները ստանձնում են պարտավորություն՝ հատուցել ապահովագրման պայմանագրով նախատեսված ապահովագրական պատահարների հետևանքով ապահովադիրների կրած փաստացի վնասը կամ կորուստները:

Օրենքում սահմանված են ապահովագրության այնպիսի կատեգորիաների հասկացությունը և իրավական ռեժիմը, ինչպիսիք են ապահովագրական իրավահարաբերությունների սուբյեկտները, օբյեկտները, ապահովագրավճարը, ապահովագրական պատահարը, ապահովագրական ռիսկը, ապահովագրական գումարը, հատուցումը և այլ իրավական հասկացությունները:

Ապահովագրության իրավահարաբերությունների օբյեկտների իրավական ռեժիմի հարցում առաջին անգամ օրենսդիրը օգտագործում է ա) *կյանքի ապահովագրություն* և բ) *ոչ կյանքի ապահովագրություն* հասկացությունները:

Կյանքի ապահովագրության տակ նկատի են առնվում այնպիսի օբյեկտներ, ինչպիսիք են, ապահովագրված անձի կյանքը, լրակեցության և կենսաթոշակային ապահովածությունը, իսկ ոչ կյանքի ապահովագրության տակ նկատի է առնվում գույքային այնպիսի շահեր, որոնք կապված են ապահովագրված անձի առողջության, աշխատունակության, գույքի, դրա տիրապետական, օգտագործման և տնօրինման հետ:

ՀՀ «Ապահովագրության մասին» օրենքում լուսաբանված են ապահովադիրները և ապահովագրողներ հասկացությունները:

Ապահովադիրներ են համարվում ապահովագրողների հետ ապահովագրության պայմանագիր կնքած ֆիզիկական, իրավաբանական անձինք և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները: Ապահովադիրներն իրավունք ունեն ապահովագրողների հետ ապահովագրական պայմանագրեր կնքել հօգուտ երրորդ անձանց (շահառուների), ինչպես նաև պայմանագրում նշել ֆիզիկական և իրավաբանական այն անձանց, որոնք ապահովագրական պատահարի ժամանակ նույնպես ձեռք են բերում հատուցում ստանալու իրավունք: Ապահովագրված անձինք են հանդիսանում բոլոր նրանք, որոնց հետ կապված ապահովագրական պատահարի առաջացումը, հանդիսանում է ապահովագրության պայմանագրի առարկա:

Ապահովագրությունը Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվում է իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, սահմանված կարգով լիցենզավորված և գրանցված ապահովագրական ընկերությունների կողմից, որոնք իրենց կազմակերպական-իրավական տեսակով կարող են լինել՝

ա) բաժնետիրական ընկերություններ

բ) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ:

Ապահովագրողներն ապահովագրական գործունեությունը կարող են իրականացնել ապահովագրական գործակալների և բրոքերների միջոցով:

Ապահովագրական գործակալներն ապահովագրական կազմակերպությունների հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող ֆիզիկական անձինք են, որոնք հանդես են գալիս ապահովագրվողի անունից և նրա հանձնարարությամբ:

Ապահովագրական բրոքերները ապահովագրության գծով միջնորդային գործունեություն իրականացնող, սահմանված կարգով լիցենզավորված ձեռնարկություններ և անհատ ձեռներեցներ են, որոնք գործում են ապահովադրի հանձնարարությամբ և նրա անունից: Ապահովագրական բրոքերները իրականացնում են ապահովագրական գործառնություններ:

«Ապահովագրության մասին» օրենքում առաջին անգամ հստակորեն սահմանազօծվել են ապահովագրավճար, սակագին, ապահովագրական ռիսկ, ապահովագրական պատահար, գումար, ապահովագրական հատուցում հասկացությունները: Այսպես, *ապահովագրավճար* է համարվում ապահովագրության համար նախատեսվող այն գումարը, որն ապահովադիրն ապահովագրության պայմանագրի կամ պարտադիր ապահովագրության դեպքում օրենսդրությանը համապատասխան պարտավոր է մուծել ապահովագրողին:

Ապահովագրական սակագինը սահմանված ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրավճարի դրույքաչափն է:

Ապահովագրական ռիսկ է համարվում այն պատահարի (դեպքի) տեղի ունենալու հավանականությունը, որի հետ կապված իրականացվում է ապահովագրությունը:

Ապահովագրական պատահարը պատահական դեպք է, որի հետևանքով սկիզբ է առնում օրենսդրությամբ կամ ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական հատուցում վճարելու ապահովագրողի պարտավորությունը:

Ապահովագրողներն ապահովագրության պայմանագրում նախատեսված յուրաքանչյուր հավանական պատահարի համար սահմանում են *ապահովագրական գումար*, որը տվյալ պատահարի առաջացման ժամանակ ապահովագրության պայմանագրով նախա-

տեսված հատուցման ենթակա առավելագույն չափն է: Ապահովագրության պայմանագրի կնքման պահին ապահովագրվող գույքի համար սահմանվող ապահովագրական գումարը չի կարող գերազանցել նրա իրական (շուկայական) արժեքը՝ ապահովագրական արժեքը:

Ոչ կյանքի ապահովագրության պայմանագրի կնքման պահին ապահովագրվող գույքի համար սահմանվող ապահովագրական գումարը տվյալ գույքի ապահովագրական արժեքն է:

Ապահովագրական հատուցումն այն գումարն է, որն ապահովագրողները վճարում են ապահովադիրներին ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած փաստացի վնասի կամ կորուստների դիմաց: Ոչ կյանքի ապահովագրության դեպքում կողմերի փոխադարձ համաձայնությամբ ապահովագրության պահյմանագրով կարող է նախատեսվել հատուցման վճարման բնաիրային ձև:

Վճարման ենթակա ապահովագրական հատուցման արժեքը չի կարող գերազանցել ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարի չափը: Ապահովագրական հատուցման չափը համապատասխանում է ապահովագրության գումարին միայն ապահովագրության օբյեկտի կորստի դեպքում¹:

Ապահովագրության իրավական կազմակերպումը իրականացվում է որոշակի սկզբունքներով, որոնք պայմանավորված են ապահովագրական պատահարի առանձնահատկություններով և ամեն անգամ իրենց գործնական դրսևորումն են ստանում ապահովագրության իրավահարաբերություններում:

Ապահովագրությանը ներհատուկ են պատահարի (դեպքի) հավանականության, միջոցների հետադարձության, ապահովագրական հարաբերությունների բաշխվածության ընդգծվածության, ապահովագրական ֆոնդերի նպատակաուղղվածության և այլ սկզբունքներ:

Ապահովագրական պատահարի հավանականությունը վկայում է այն մասին, որ ապահովագրության ժամանակ անհնար է նախատեսել դեպքի վրա հասնելու ժամանակը, տեղը, բնույթը, վնասի չափը, ինչպես նաև նախապես որոշել այն ապահովադիրներին որոնք եղելությունների կամ դժբախտ դեպքի հետևանքով վնասներ են կրելու:

Ապահովագրական միջոցներ հետադարձության սկզբունքին ներհատուկ է այն, որ ապահովագրական վճարների ֆոնդի ձևավորումից հետո, կախված ապահովագրության ձևից այն ըստ օրենքի կամ պայմանագրով սահմանված չափերի վերադարձվում է

ապահովագրվածներին:

Ապահովագրական հարաբերությունների ընդգծվածության սկզբունքը կիրառվում է ապահովագրական դեպքի կայացմամբ: Այլ խոսքով ապահովագրության միջոցները վերաբաշխվում են այն ֆիզիկական և իրավաբանական անձանց միջև, որոնց վճարումների հաշվին ձևավորվել են ապահովագրության ֆոնդերը, քանի որ ապահովագրական ռիսկը ընկնում է բոլոր ապահովագրողների վրա: Հետևաբար, վնասի հատուցմանը օրենքով սահմանված կարգով մասնակցում են ապահովագրական իրավահարաբերությունների բոլոր մասնակիցները:

Ինչ վերաբերում է ապահովագրական պահուստների օգտագործմանը, ապա վերջիններս բաշխվում են խիստ նպատակային կարգով, որպիսի հանգամանքները սահմանված են ապահովագրության պայմանագրով և կարգավորվում են քաղաքացիական իրավունքի նորմերով:

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 985 հոդվածը սահմաններում է գույքային ապահովագրության պայմանագրի հասկացությունը, որտեղ պայմանագրի էական կետերից մեկը **ապահովագրական հատուցման** նպատակային լինելն է և բխում է պայմանագրով սահմանված գույքի ապահովագրության շահերից:

Ապահովագրությանը, որպես հանրապետության միասնական ֆինանսական համակարգի բաղկացուցիչ մասի, ներհատուկ է բաշխման ֆունկցիան, որի իրավական կարգավորումը ընթանում է երեք ուղղություններով: Ենթա հաճախ, այս ուղղությամբ իրավաբանական գրականության մեջ նկատվում են իրավունքի ֆունկցիաների հետ նույնացումը¹:

Ապահովագրության առաջին ֆունկցիան՝ տարերային աղետներից և դժբախտ պատահարներից առաջացած վնասի փոխհատուցումն է, հասարակության արտադրողական ուժերի վերականգնումը և քաղաքացիների նյութական բարեկեցության ապահովումը: Իրավաբանական գրականության մեջ այդ ֆունկցիան ընդունված է անվանել **վերականգնման**, քանի որ ապահովագրական ընկերությունները կատարելով այդ ֆունկցիան փոխհատուցում են կազմակերպություններին և քաղաքացիներին հասցված վնասները:

Երկրորդ ֆունկցիան, տնտեսության կորուստների **կանխումն է**: Ապահովագրական ընկերությունները, ոչ միայն փոխհատուցում են վնասը, այլև նպաստում են բնության կործանիչ ուժերի դեմ, տարվող պրոֆիլակտիկ միջոցառումներին:

Երրորդ ֆունկցիան, արտադրողական ուժերի և տնտեսության

¹ Տե՛ս, ՀՀ օրենքը «Ապահովագրության մասին, ընդունված 10 կողմից 1996թ. նոյեմբերի 19-ին, հոդ. 10, (Ապահովագրության տեղեկագիր, N 1, հունվար 1999թ.):

¹ Տե՛ս, մանրամասն, Финансовое право, 1996г. №2. աշխատ. էջ 381-382.

հետագա աճին նպաստելն է: Ապահովագրության ընկերությունների միջոցները օգտագործվում են տնտեսության ֆինանսավորման և վարկավորման համար: Տվյալ դեպքում արտահայտվում է ապահովագրության կապը այնպիսի ֆինանսական ինստիտուտների հետ, ինչպիսիք են բանկային վարկը և պետությունը:

Ապահովագրական վճարումները կենտրոնացվում են բանկի հաշիվներում, որ բացվում են ապահովագրական ընկերությունների անունով: Դրանք ծախսվում են ըստ անհրաժեշտության առաջացում վնասից բխող *փոխհատուցումները* վճարելու համար: Միջոցների ազատ մասը բանկի կողմից օգտագործվում է վարկավորման վրա: Ստացված եկամուտների մի մասը ապահովագրական ընկերությունները շահութահարկի միջոցով փոխանցում են պետական բյուջե:

Այսօր ֆինանսական գրականության մեջ շարունակում են վիճահարույց մնալ ապահովագրական հարաբերությունները կարգավորող իրավունքի ճյուղերի հարցը:

Հիմնահարցի ուսումնասիրությունը հեշտացնելու նպատակով անհրաժեշտ է ֆինանսավարկական գրականության մեջ արտահայտված տարբեր կարծիքները պայմանականորեն բաժանել երեք խմբի և կոնկրետ հետազոտությունների լույսի տակ պարզաբանել ապահովագրության բնագավառում ծագող իրավահարաբերությունների առանձնահատկությունները և ցույց տալ այն իրավունքի ճյուղերը, որոնք կարգավորում են հիշյալ իրավական հարաբերությունները:

Ապահովագրության կազմակերպման և անցկացման գործընթացում ծավալող հարաբերությունները կարգավորվում են իրավունքի մի շարք ճյուղերի կողմից: Այսպես, ֆինանսական իրավունքի կողմից կարգավորվում են այն հարաբերությունները, որոնք ծագում են պետության ֆինանսական գործունեության պրոցեսում: Դա պարտադիր ապահովագրության ոլորտում ապահովագրական ընկերությունների, բանկի և ֆինանսական մարմինների միջև ծավալվող հարաբերություններն են: Ապահովագրական ընկերությունների, պետական իշխանության ու կառավարման մարմինների միջև ծավալված այն հարաբերություններն են, որոնք կապված են ղրամական միջոցների հավաքման և օգտագործման հետ: Այդ հարաբերությունների ծագումը կապված է ապահովագրական ընկերությունների ֆինանսական պլանների հետ, որոնք իրենց հերթին պետության ֆինանսական պլանավորման մի մասն են: Դրանցից են օրինակ այն հարաբերությունները, որոնք ծագում են պարտադիր ապահովագրության պարտավորությունից, որի ուժով կառավարության կողմից, որոշ միջոցներ պետք է տրամադրի տեղական

ինքնակառավարման մարմինների՝ նախագրաչաքման միջոցառումների անցկացման համար:

Կարչական իրավունքի նորմերը սահմանում են ապահովագրական մարմինների համակարգը, իրավասությունը, նրանց պաշտոնատար անձանց իրավունքները և պարտականությունները:

Քաղաքացիական իրավունքի նորմերը կարգավորում են ապահովադիրների և ապահովագրական ընկերությունների գույքային հարաբերությունները, որոնք կողմերի միջև ծագում են ապահովագրական վճարի և ապահովագրական հատուցում կատարելուց:

Սրանք գույքային երկկողմանի հարաբերություններն են և իրենց բնույթով չեն տարբերվում քաղաքացիական իրավունքի նորմերով կարգավորվող այլ նմանօրինակ գույքային հարաբերություններից:

Անհրաժեշտ է նշել, որ տվյալ դեպքում խոսքը գնում է ոչ միայն կամավոր, այլև պարտադիր ապահովագրության մասին: Այստեղ տարբերությունը կայանում է նրանում, որ ապահովագրությունն առաջանում է անկախ կողմերի ցանկության, սակայն օրենքի հիման վրա ծագած հարաբերությունները միակողմանի չեն, դրանք իրենց մեջ ընդգրկում են ապահովադիրներին և ապահովագրական մարմնի փոխադարձ պարտավորությունները:

Այսպիսով, իրավաբանական գրականության մեջ տեղ գտած տարբեր կարծիքների առկայությունը բերում է այն համոզման, որ ապահովագրության ոլորտում առաջացած հարաբերությունները ունեն համալիր բնույթ, քանի որ նրանց մի մասը, որը առաջանում է պայմանագրի հիման վրա ունի քաղաքացիա-իրավական բնույթ, հետևաբար կարգավորվում է իրավունքի այդ ճյուղի կողմից: Իրավահարաբերությունների երկրորդ խումբը, որոնք առաջ են գալիս անհատական կամ նորմատիվային ակտերի հիման վրա և ուղղված են ղրամական միջոցների պլանային հավաքմանը, բաշխմանը և վերաբաշխմանը, կարգավորում են ֆինանսա-իրավական նորմերով, և հանդես են գալիս պետության ֆինանսական գործունեության բաղկացուցիչ մասը:

§ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈՂՆԵՐԸ

Ապահովագրության իրավական ռեժիմին վերաբերվող հարցերը իրենց սպառիչ պատասխանն են գտել 37 «Ապահովագրության մասին» օրենքում: Ապահովագրությունը ըստ իրականացման օբյեկտի և մեթոդների ենթարկվում են որոշակի դասակարգման: Այն ըստ օբյեկտի դասակարգվում է ա) կյանքի և բ) ոչ կյանքի ապահո-

վագրության:

Ապահովագրության մարմինները ոչ կյանքի ապահովագրում իրականացնելիս կնքված պայմանագրերի հիման վրա պարտավորվում են հատուցել տարերային աղետների և դժբախտ պատահարներից տնտեսությանը պատճառված նյութական վնասները: Վնասի հատուցումը կատարվում է այն գումարների սահմաններում, որով ապահովագրված է նրանց գույքը: Կյանքի ապահովագրության դեպքում ապահովագրական գումարները վճարվում են, եթե ապահովագրողը կանդանի է մնում մինչև որոշակի ժամկետ կամ կորցնում է աշխատունակությունը, վճարվում է նրա ընտանիքին՝ նրա մահանալու դեպքում: Կյանքի ապահովագրության որոշ ձևերի խնայողություն ստեղծելու մի յուրահատուկ մեթոդ են ներկայացնում:

Կյանքի և ոչ կյանքի ապահովագրությունը ըստ իրականացման մեթոդի ֆինանսավորվական օրենսդրության մեջ բնութագրվում է երկու ձևով՝ *պարտադիր* և *կամավոր* ապահովագրություն:

Իրավական տեսանկյունից *պարտադիր ապահովագրության* մ էությունը կայանում է նրանում, որ վերջինս իրացվում է օրենքի համաձայն և պարտադիր է ինչպես ապահովագրվողի, այնպես էլ ապահովագրողի համար:

Կամավոր ապահովագրությունը կատարվում է ապահովագրողի և ապահովադիրի միջև կնքված ապահովագրության պայմանագրի հիման վրա:

Ոչ կյանքի պարտադիր ապահովագրությունը ընդգրկում է ապահովագրվողների տնտեսություններում եղած հիմնական ունեցվածքը և ունի որոշ տարրերիչ առանձնահատկություններ: Այդ ապահովագրությունը սահմանափակ է: Դա նշանակում է, որ պարտադիր կարգով ապահովագրման ենթակա գույք ունեցող տնտեսությունների գույքը ապահովագրվում է օրենքի ուժով: Պարտադիր ապահովագրությունն անժամկետ է և գործում է այնքան ժամանակ, քանի դեռ գոյություն ունի գույք ունեցող և ապահովագրության օբյեկտ հանդիսացող տնտեսությունը: Պարտադիր ապահովագրության նկատմամբ ապահովագրական մարմնի պատասխանատվությունն առաջանում է ինքնին, երբ որևէ տնտեսության մեջ երևան է գալիս ապահովագրման ենթակա ունեցվածքը և կախված չէ ապահովագրական վճարումների մուծումից:

Պարտադիր ապահովագրության գծով ապահովագրական բավարարումը սահմանվում է օրենքին համաձայն որոշակի նորմաներով, գույքի որոշ տեսակների համար լրիվ արժեքի չափով: Նորմաները կարող են սահմանվել բացարձակ գումարներով, ինչպես նաև գույքի արժեքի նկատմամբ տոկոսային հարաբերությամբ:

Պարտադիր ապահովագրության վճարումները ապահովագրվածների կողմից ժամանակին չմուծվելու դեպքում կարող են գանձվել պարտադիր կարգով:

Ոչ կյանքի կամավոր ապահովագրությունն ընդգրկում է քաղաքացիների, իրավաբանական անձանց գույքը: Կամավոր, ոչ կյանքի ապահովագրությունը կատարվում է ոչ թե համատարած կերպով, այլ ընտրովի, որովհետև այն առաջանում է ապահովագրվողի ցանկությամբ: Ապահովագրական ընկերությունները՝ ապահովագրված գույքի նկատմամբ պատասխանատվություն են կրում միայն պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո, եթե ապահովագրական վճարումները կատարվել են սահմանված ժամանակին:

Կամավոր ապահովագրության պայմանագիրը ձևակերպվում է ապահովագրվողի ցանկությամբ՝ քաղաքացիական օրենսդրության պահանջներին համապատասխան: Ապահովագրության այդ ձևերից յուրաքանչյուրում կան համապատասխան տեսակներ:

ՀՀ «Ապահովագրության մասին» օրենքը չի սահմանում կյանքի և ոչ կյանքի ապահովագրության տեսակները: Սակայն, ինչպես ցույց են տալիս ապահովագրական ընկերությունների գործունեության ուսումնասիրությունները, գոյություն ունեն ոչ կյանքի ապահովագրության հետևյալ տեսակները՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց գույքի, քաղաքացիների շինությունների (բնակարան, ամառանոց, փոխադրամիջոցների), գյուղական և գյուղացիական տնտեսությունների ցանքսերի, այգիների, տնային կենդանիների ապահովագրություն:

Կյանքի ապահովագրության գծով ապահովագրական ընկերությունները իրականացնում են կյանքի խառն ապահովագրություն, ապահովագրություն մահվան, աշխատունակության կորստի, ցմահ ապահովագրություն, դժբախտ պատահարների, կենսաթոշակների, երեխաների և ապահովագրության այլ տեսակներ:

Պատմական էքսկլուսիվները վկայում են, որ աշխարհի զարգացած մի շարք պետություններում անհատական իրավական կարգավորման են ենթարկված կյանքի և ոչ կյանքի, ինչպես կամավոր, այնպես էլ պարտադիր մեթոդներով կիրառվող ապահովագրության առանձին տեսակներ:

Առանձին ուշադրության է արժանանում ՌՖՀ կյանքի պարտադիր ապահովագրությունը կարգավորող օրենսդրությունը, որտեղ կյանքի ապահովագրությունը պարտադիր է համարվում ոչ միայն տրանսպորտի առանձին տեսակներով (օդային, ծովային, գետային, երկաթգծային) ուղևորների փոխադրումը, այլև պետական ծառայության առանձին ոլորտներում ծառայության անցնելը, քաղաքացիական և զինվորական նշանակության, էկոլոգիական արտակարգ

անդետները հնարավորություն պարունակող արտադրական ճյուղերում աշխատանքներ կատարողները, ինչպես նաև համաճարակաբանության, հոգեբուժության և փրկարարական ոլորտներում բժշկական և այլ ծառայություններ վարողները¹:

Կյանքի պարտադիր ապահովագրություն է սահմանված նաև ՌՖ իրավապահ մարմիններում ծառայության անցած քաղաքացիների համար:

Ապահովագրության ձևի իրավական կարգավորումը անբավարար է չլուծված նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, որտեղ ապահովագրությունը որպես քաղաքացիաիրավական ինստիտուտ, սահմանված է միայն որպես գույքային պարտավորություն, շրջանցելով կյանքի և ոչ կյանքի պարտադիր ապահովագրության տեսակներ, որոնք որպես գույքային հարաբերություններ, կարող են առաջանալ օրենքների և նորմատիվ իրավական ակտերի հիման վրա:

Որպես կանոն, պարտադիր ապահովագրության որոշ տեսակների վճարման աղբյուրը կարող են հանդիսանալ պետական բյուջեի միջոցները:

Ապահովագրության ոլորտում ծագող բոլոր վեճերը լուծվում են դատական կարգով:

ՊԵՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ

§ 1. ԿԱՊԻՏԱԼ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Ֆինանսական իրավունք առարկայի դասընթացի ամենաընդարձակ և իրավական կարգավորման առանձնահատկություններով աչքի ընկնող իրավական ինստիտուտը պետական ծախսերը և բյուջետային ֆինանսավորումն են:

Այս բաժնում արծարծվող իրավական կարգավորման մեխանիզմի առանձնահատկությունների ուսումնասիրության անհրաժեշտությունը պայմանավորված է ոչ այնքան նրանց ծավալով, որքան մեր երկրի պետական, տնտեսական և հասարակական կյանքի, ներքին և արտաքին քաղաքականության անշեղ իրականացման ապահովման ռեալ երաշխիքներ հանդիսացող այնպիսի խոշոր միջոցառումների ֆինանսավորմամբ, ինչպիսիք են հանրապետության տնտեսությունը, երկրի պաշտպանությունը, սոցիալ-կուլտուրական կյանքը և վարչա-կառավարչական ապարատի պահպանումը:

Հասարակական և պետական կյանքի համար վճռական նշանակություն ունեցող այս և ամենաբազմազան ոլորտներում կատարվող պետական ծախսերը, ինչպես նաև առանձին ոլորտների ֆինանսավորումը արտացոլում են Հայաստանի Հանրապետության տնտեսական և ֆինանսական դերը քաղաքական համակարգում:

Այժմ, երբ կյանքում առավել արմատավորվում են գիտա-տեխնիկական հեղափոխության նվաճումները, երբ գիտությունը վերածվել է արտադրողական ուժի, էլ ավելի են ընդլայնվում պետական ծախսերի ոլորտները: Պետական բյուջեներից կատարվող ծախսերը, իրենց հիմնական մասսայով ուղղված են երկրի սպառագինության,

¹ Տե՛ս մանրամասն, Указ Президента РФ от 22 декабря 1993г., N.15 (САПП РФ, 1993, N52, стр. 5073.)

բանակի, ոստիկանության, հետախուզության և հակահետախուզության, ստեղծմանը և ֆինանսավորմանը: ՀՀ-ում պետական ծախսերը ունեն արտադրողական բնույթ և ֆինանսավորումը կատարվում է խիստ Փրագրված կարգով՝ նախապես հաստատված ընթացիկ և հեռանկարային ծրագրերին համապատասխան:

«Պետական ծախսեր» ֆինանսաիրավական կատեգորիան թե՛ տնտեսական և թե՛ իրավական ըմբռնմամբ ավելի լայն է «Պետական բյուջեի ծախսեր» հասկացությունից: Խնդրի այսպիսի ըմբռնումը ներկա ժամանակաշրջանում հրամայաբար պահանջ է առաջադրում ընդարձակելու տնտեսագիտական գիտելիքները, ծանոթանալու հատկապես տնտեսության բնագավառում վերջին տարիներին վարած քաղաքականությանը, որը ամբողջովին վերաբերում է շուկայական հարաբերություններին:

Հանրապետության տնտեսության ոլորտում ինչպես պետական եկամուտների, այնպես էլ պետական ծախսերի կատարելագործման ուղիները ուղղակի կախվածության մեջ են տնտեսական կազմակերպությունների և ձեռնարկությունների արդյունավետության բարձրացման ուղղությամբ տարվող աշխատանքների վերջնական ցուցանիշներից:

Հետևաբար, ինչպես պետական, այնպես էլ բյուջետային ծախսերը ուղղակի կախվածության մեջ են և փոխադարձաբար պայմանավորված են մեկը մյուսով:

Ներկա ժամանակաշրջանում, երբ օրակարգի հարց են դարձել տնտեսության մեջ տնտեսական մեխանիզմի դերի և նշանակության հետագա բարձրացման և աշխատանքի ու արդյունավետության կատարելագործման հիմնահարցերը, որոնք իրենց իրավական ամրապնդումն են ստացել գործող հարկային և բյուջետային օրենսդրությամբ, էական փոփոխություններ են կատարվել նաև պետական ծախսեր տնօրինող սուբյեկտների իրավական ռեժիմը սահմանող ակտերում, հատկապես, եթե նկատի ունենանք, որ այս իրավական ակտերով ձեռնարկությունների գրեթե բոլոր տնտեսական մարմինների համար սահմանվել է շահույթի բաշխման նույնաբովանդակ հարկային քաղաքականությունը:

Գործող ֆինանսական օրենսդրությամբ, բացառության կարգով բյուջետային միջոցներից տնտեսական կազմակերպությունների կարիքների համար, ֆինանսավորման ճանապարհով միջոցներ են հատկացվում միայն արտադրական նշանակության կապիտալ ներդրումների և շինարարության, ինչպես նաև, բացառիկ դեպքերում վերակառուցումների համար, եթե վերջիններս նախատեսված են սոցիալական և տնտեսական զարգացման ծրագրերով:

Նման դեպքերում խստորոշ հաշվառվում են տնտեսական կազ-

մակերպությունների սեփական, և փոխառու միջոցները ու բյուջետային ֆինանսավորում կատարվում է միայն դրանց անբավարարության դեպքում:

Ինչպես հայտնի է, արտադրությունն անհնար է առանց նրա հիմնական ֆոնդերի վերականգնման, որանց որակի բարելավման, որոնք մասամբ նյութականացվում են պետական և բյուջետային ծախսերի շնորհիվ:

Բյուջետային ծախսերը իրենց հիմնական զանգվածով բաժին են ընկնում հիմնական արտադրական ֆոնդերի կապիտալ ներդրումների, կապիտալ շինարարության և կապիտալ վերանորոգման ֆինանսավորմանը:

Պետական ծախսերի ուսումնասիրության այս ասպեկտով հիմնական ֆոնդերը բաժանում է՝

1. Արտադրության միջոցներ, որոնք օգտագործվում են տնտեսության տարբեր ճյուղերում (մեքենաներ, մեխանիզմներ, սարքավորումներ, շենքեր, կառույցներ և այլն):
2. Ոչ արտադրական դեր կատարող ֆոնդերի (բնակելի շենքեր, դպրոցներ, հիվանդանոցներ, վարչական շենքեր և այլն):

Հիմնական ֆոնդերի նոր տեսակների ստեղծման, եղածների ընդլայնման և վերակառուցման ծախսերը ընդունված է անվանել կապիտալ ներդրումներ: Կապիտալ ներդրումները կարևորագույն դեր են խաղում մեր երկրում նոր հասարակարգի կառուցման գործում:

Նշված խնդրի կատարումն անհնար է առանց կապիտալ ներդրումների ֆինանսավորման ուղղությամբ պետական մարմինների գործունեության խստիվ իրավական կարգավորման: Հետևաբար, կապիտալ ներդրումների ֆինանսավորումը պետության և նրա մարմինների իրավական նորմերով կարգավորված գործունեությունն է դրամական միջոցների նորմատիվային, հատկացման ու կարգավորման ուղղությամբ:

Կապիտալ ներդրումների ոլորտում կատարվող պետական ծախսերը կարգավորող իրավական ակտերի խորը և մանրագնդի ուսումնասիրության հիման վրա միայն կարելի է ճիշտ կողմնորոշվել կապիտալ ներդրումների ֆինանսավորման սկզբունքների դասակարգման հարցում, առանց որոնց անհնար է ճիշտ պատկերացում կազմել մեր երկրի տնտեսական հզորության մասին:

Կապիտալ ներդրումների ֆինանսավորման հիմնական սկզբունքները հասնում են նրան, որ տնտեսական կազմակերպությունների կապիտալ ներդրումների ֆինանսավորումը նշանակալից չափով կատարվում է անվերադարձ կարգով պետական բյուջեի հաշվին: Կազմակերպությունները կապիտալ ներդրումները ֆինան-

սավորվում են նրանց կուտակումների և բանկային վարկի հաշվին: Կապիտալ ներդրումներին բնութագրական է նաև այն, որ տնտեսական կազմակերպությունների կապիտալ ֆինանսավորումը կատարվում է տնտեսական ու սոցիալական զարգացման ծրագրի և պետական բյուջեին համապատասխան՝ ըստ հաստատված տարեկան տիտղոսային ցուցակների: Դա հնարավորություն է տալիս վերահսկել միջոցների ուղղությունը և նպատակասլացությունը և ժամանակին գործարկման հանձնել հիմնական ֆոնդերը:

Կապիտալ ներդրումների հիմնական սկզբունքներից է պետական բյուջեից միջոցները ըստ ֆինանսավորման հաստատված լիմիտների փոխանցումը պատվիրատու կազմակերպությունների հաշիվներով՝ ըստ կապիտալ ներդրումների պլանների կատարման: Այդ նպատակների համար տրամադրվածից սեփական միջոցները ծախսվում են առաջին հերթին: Որպես կանոն, ֆինանսավորվում են միայն այն օբյեկտների ծախսերը, որոնք ունեն հաստատված նախագծեր և նախահաշիվներ: Այս սկզբունքի նպատակն է, ապահովել միջոցների խնայողաբար ծախսումը, կանխել ոչ արտադրական և աննպատակ ծախսերը: Պետական ծախսերը կարգավորող գործող օրենսդրությամբ խստորոշ արգելվում է կապիտալ ներդրումների վրա օգտագործել ձեռնարկության շրջանառու միջոցները և այն միջոցները, որոնք նախատեսված են շահագործման հետ կապված կապիտալ ծախսերի հետ:

Կապիտալ ներդրումների իրականացման հետ կապված աշխատանքների և նյութական արժեքների համար վճարումը կատարվում է համաձայն կապալի և մատակարարման պայմանագրերով նախատեսված փաստացի կատարողականի:

Կապիտալ ներդրումների պլանները կատարած կազմակերպությունների խրախուսման համար, ինչպես նաև այն կազմակերպությունների, որոնք չեն կատարել այդ պլանները, ֆինանսապես ներգործելու համար կիրառվում են ֆինանսավորման տարբեր ռեժիմներ: Տրամադրվում են համապատասխան արտոնություններ կամ կիրառվում են ֆինանսական սանկցիաներ:

Պետական ծախսերի իրավական կարգավորման և բյուջետային ֆինանսավորման առանցքային հիմնահարցերից մեկը՝ կապիտալ ներդրումների և կապիտալ շինարարության ֆինանսավորման աղբյուրների և իրականացնող կարգի առանձնահատկությունների իրավական կարգավորումն է:

Կապիտալ շինարարության իրավական ռեժիմը սահմանող իրավական ակտերի ուսումնասիրության հիման վրա դժվար չէ պարզորոշ սահմանագծում անցկացնել, ընդհանրապես կապիտալ ներդրումների քաղաքացիաիրավական և ֆինանսա-իրավական ըն-

բնույթների և իրավական կարգավորման առանձնահատկությունների միջև:

Պետական ծախսերի և մասնավորապես կապիտալ ներդրումների ոլորտում իրավական կարգավորման առանձնահատկությունները դրսևորվում են ֆինանսավորվող օբյեկտների, կառույցների ֆինանսական աղբյուրներով, նրանց ձևավորման յուրահատկություններով, ինչպես նաև ծախսումների ուղղությամբ և նպատակայնությամբ:

Գործող օրենսդրությունը վկայում է այն մասին, որ կապիտալ ներդրումները որպես կանոն ֆինանսավորվում են երեք աղբյուրներից՝ պետական բյուջեի, տնտեսական կազմակերպությունների սեփական միջոցներից ու բանկային վարկերից:

ՀՀ-ում կապիտալ ներդրումների ֆինանսավորման հիմնական աղբյուրն ազգային եկամուտն է, որի համընդհանուր աճը հնարավորություն է ստեղծում կապիտալ ներդրումների ծավալը մեծացնելու համար: Ներկայումս ի հաշիվ ազգային եկամտի է կազմավորվում կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալի զգալի մասը: Կապիտալ ներդրումների մնացած մասը ֆինանսավորվում է ի հաշիվ կապիտալ շինարարությանը տրամադրվող ամորտիզացիոն հատկացումների: Կապիտալ ներդրումներն էլ իրենց հերթին ազգային եկամտի աճման կարևոր գործոն են հանդիսանում:

Բյուջետային միջոցները, որպես կապիտալ ներդրումների ֆինանսավորման աղբյուր, հատկացվում են ՀՀ պետական բյուջեի մասին օրենքի հիման վրա:

Կապիտալ ներդրումների բյուջետային բոլոր հատկացումները բաժանվում են ըստ հանրապետության նախարարությունների, որոնց ղեկավարները տնտեսության զարգացման ծրագրերին համապատասխան հաստատում են կապիտալ ներդրումների ֆինանսավորման պլանները և ծախսային ցանկերը: Այդ փաստաթղթերը ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և նրա մարմինների կողմից ստուգվելուց հետո, հիմք են ծառայում բյուջեից միջոցներ բաց թողնման համար:

Կապիտալ ներդրումների ֆինանսավորման աղբյուրների շարքում ֆինանսա-իրավական կարգավորման առանձնահատկություններով աչքի են ընկնում ձեռնարկությունների, տնտեսական կազմակերպությունների սեփական միջոցները:

Գործող ֆինանսական օրենսդրությունը նախատեսում է, որ ինչպես պետական ձեռնարկությունները, այնպես էլ սեփականության այլ ձևերի հիման վրա գործող կազմակերպությունները կապիտալ ներդրումների ֆինանսավորման համար իրենց սեփական միջոցների մի մասը փոխանցում են կուտակման ֆոնդին: Այդ կարգի

խախտման դեպքում բանկային մարմինները իրավունք ունեն այդ մասին հայտնելու համապատասխան վերադաս տնտեսական մարմիններին և նրանց տրված հրամանների ու ցուցումների հիման վրա անվիճելի կարգով գանձելու ժամկետին չմուծված գումարները:

Ձեռնարկությունների և միավորումների սեփական միջոցների քվին են պատկանում ամորտիզացիոն հատկացումները, հիմնական գործունեությունից ստացած շահույթը, տնտեսական եղանակով կատարվող շինարարության արժեքի իջեցումից ստացած խնայողությունը, հիմնական միջոցների վաճառքից և վարձակալությունից ստացած միջոցները և այլն:

Ինչպես հայտնի է, հիմնական արտադրական ֆոնդերը մասնակցելով արտադրական պրոցեսին, աստիճանաբար մաշվում են և իրենց արժեքը մաս առ մաս փոխանցում են ստեղծված արտադրանքին:

Այս նպատակով արտադրական ֆոնդերի ամորտիզացիայի գումարի մասհանումները գործող ֆինանսական օրենսդրությամբ թույլատրվում է կատարել թողարկված արտադրանքի, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների ինքնարժեքից: Ամորտիզացիոն մասհանումները, որպես կանոն, կատարվում են արտադրական ֆոնդերի սկզբնական հաշվեկշռային արժեքների նկատմամբ տոկոսներով, որը դիֆերենցված է ըստ արտադրության տարբեր ճյուղերի:

Կապիտալ ներդրումների ֆինանսավորման աղբյուր են հանդիսանում նաև բանկային վարկերը:

Վարկ տրամադրվում է արտադրական նշանակություն ունեցող օբյեկտների շինարարության համար, երբ այդ նպատակներին ուղղվող արտադրության զարգացման ֆոնդի միջոցները չեն բավականացնում:

Պետական ծախսերի և քյուլջետային ֆինանսավորման իրավական կարգավորման առանձնահատկությունները դրսևորվում են ոչ միայն կապիտալ շինարարության և կապիտալ վերանորոգման ֆինանսավորման գործընթացում, այլև վերջիններիս իրականացման կարգը սահմանող իրավական փաստաթղթերում, որոնք ունեն տեսական և գործնական մեծ նշանակություն:

Տնտեսական և ֆինանսական քաղաքականության ոլորտում կառավարության ծրագրային նշանակություն ունեցող խնդիրներից է կապիտալ շինարարության ֆինանսավորումը կարգավորող իրավական օրենսդրության ստեղծումը, որը ճիշտ արտացոլի դրամական և նյութական միջոցներով կապիտալ շինարարության ապահովվածությունը, նախապատրաստվածությունը և պլանայնությունը:

Գործող օրենսդրությունը կապիտալ շինարարության իրակա-

նացումը թույլատրելի է համարում հետևյալ իրավական հիմքերի առկայության դեպքերում կապիտալ շինարարության պլաններ, շինարարության տիտղոսային ցուցակ, նախագծային-նախահաշվային փաստաթղթեր, պլանավորվող տարում կառույցի ֆինանսական պլան, կապիտալ շինարարության կապալի պայմանագրեր, եթե վերջինս իրականացվում է կապալային եղանակով:

Կապիտալ շինարարության պլանը տնտեսական և սոցիալական զարգացման պետական ծրագրերի բաղկացուցիչ մասն է և երկրի մասշտաբով հաստատվում է կառավարության կողմից:

Օրենսդրությամբ կարգավորված են նաև կապիտալ շինարարության պլանի մերջին կառուցվածքին վերաբերող հարցերը: Որպես կանոն, կապիտալ շինարարության պլանը բաղկացած է երկու մասից՝ 1/ կապալային և տնտեսական եղանակով կատարվող շինարարական և մոնտաժային աշխատանքների պլանը, 2/ հետագա տարիների շինարարական աշխատանքների համար նախատեսվող նախագծային հետազոտական աշխատանքների պլանը:

Այդ պլանները հաստատում են նախարարությունները և գերատեսչությունները:

Կապիտալ շինարարության տարեկան պլաններում կապալային եղանակով իրականացվող կապիտալ շինարարության փոփոխություններ կատարելու կարգը սահմանված է օրենսդրությամբ: Այսպես 73 քաղ. օրենքի 765-րդ հոդ. ասվում է, որ սահմանված կարգով կապալային աշխատանքների ֆինանսավորման համար հատկացված պետական քյուլջեի միջոցների նվազեցման դեպքում կողմերը պետք է համաձայնեցնեն նոր ժամկետները:

Կապիտալ շինարարության հաստատված պլանները բանկի կողմից շինարարության ֆինանսավորման հիմքերից մեկն է:

Կապիտալ շինարարության ֆինանսավորման իրավական հիմքերից է տիտղոսային ցուցակների առկայությունը:

Կապիտալ շինարարության ինչպես ծավալը, այնպես էլ շինարարական և մոնտաժային աշխատանքները սահմանվում են պլանային կարգով, օբյեկտների և կառույցների տիտղոսային ցուցակները հաստատելու միջոցով:

Տիտղոսային ցուցակները ընդունված է համարել ամփոփիչ ֆինանս-պլանային ակտ, որը կապիտալ շինարարության ոլորտում իրավահարաբերությունների մասնակիցների համար սահմանում է վարքագծի համապատասխան կանոններ:

Հաստատված տիտղոսային ցուցակների առկայությունն արդեն որոշակի է դարձնում համապատասխան օբյեկտների շինարարությունը և ֆինանսավորումը: Այն սահմանում է նաև շինարարության սկիզբը և ավարտը, նախահաշվային արժեքը, կառույցի հատա-

կազմային հզորությունը, ինչպես նաև շինարարական և մոնտաժային աշխատանքների ծավալը:

Կապիտալ շինարարությունը կարգավորող գործող օրենսդրության հիմնական պահանջն է, որ տիտղոսային ցուցանիշները պետք է արտացոլեն կառույցների ընդհանուր պատկերը և տեղեկատվություն պարունակեն նրանց վիճակի մասին:

Տիտղոսային ցուցանիշների մեջ մտցվող կառույցները կարելի է բաժանել երեք խմբի

- ա/ գործարկվող,
- բ/ սկսվող,
- գ/ փոխանցվող:

Գործարկվող, որպես կանոն, համարվում են այն օբյեկտները, որոնք շահագործման պետք է հանձնվեն սահմանված ժամկետներում:

Այլ է սկսվող կառույցների իրավական ռեժիմը: Դրանք այն կառույցներն են, որոնք նոր են սկսվել և շահագործման չեն հանձնվել: Ինչ վերաբերում է փոխանցվող կառույցներին, ապա, դրանց շինարարական աշխատանքները սկսվել են նախորդ տարում և չեն ավարտվելու ընթացիկ պլանավորող տարում:

Կապիտալ մեդդրումենտը կարգավորող իրավական ակտերը սահմանում են նաև օբյեկտների և կառույցների նախահաշիվները և տիտղոսային ցուցանիշները հաստատելու կարգը: Սոր սկսվող արտադրական կարևորագույն նշանակություն ունեցող կառույցների նախահաշիվները և տիտղոսային ցուցանիշները հաստատվում է կառավարության կողմից նախատեսված կարգով, մուսցած օբյեկտները հաստատվում են նախարարությունների և գերատեսչությունների կողմից:

Կառույցների և հիմնական օբյեկտների շինարարությունը կարող է սկսվել մի շարք նախապատրաստական աշխատանքների կատարումից հետո, որոնք ցանկը և ծավալը սահմանվում է նախագծային և նախահաշիվային փաստաթղթերով:

Շինարարության նախահաշիվը կառույցի տեխնիկական փաստաթղթերի անբաժան և կարևոր մասն է:

Կապիտալ շինարարության պլանավորման գործում կարևոր նշանակություն ունի նախահաշիվը, քանի որ տնտեսության տարբեր ծյուղերի պլանավորման հիմքում դրվում են արտադրանքի ոչ միայն քանակն, այլև արժեքային ցուցանիշները:

Կառույցների տիտղոսային ցուցանիշները կազմելիս նույնպես կապիտալ շինարարության ծավալը ուղղվում են էլեմենտի համապատասխան օբյեկտների նախահաշիվային արժեքից:

Նախահաշիվը կարևոր նշանակություն ունի շինարարական-

մոնեթային աշխատանքների փաստացի ինքնարժեքի սահմանժան գործում, քանի որ ինչպես փաստացի, այնպես էլ պլանային և նախահաշիվային ինքնարժեքների մակարդակները սահմանելու համար վերջիններս համեմատության մեջ են դրվում կառույցի նախահաշիվային ցուցանիշների հետ:

Հիմնական օբյեկտների կապիտալ շինարարությունը կարող է սկսվել մի շարք նախապատրաստական աշխատանքների կազմակերպման նախագծով:

Կապիտալ շինարարության ֆինանսավորման կարգը սահմանող գործող օրենսդրությամբ ամրապնդված է շինարարության նախագծման կարգը:

Նախագծումը սովորաբար կատարվում է երկու փուլով:

1. Ամփոփիչ նախահաշիվային ֆինանսական հաշվարկներով նախագծային առաջադրանքի պատրաստում.
2. Նախահաշիվների բանվորական գծագրերի պատրաստում. երբեմն պրակտիկայում անհատական նախագծման դեպքում նախագծումն ընդհանում է երեք փուլով.
1. Ամփոփիչ նախահաշիվային ֆինանսական հաշվարկներով (նախագծային հանձնարարության պատրաստում),
2. Ամփոփիչ նախահաշիվ տեխնիկական նախագծի պատրաստում,
3. Քանվորական գծագրերի և նրանց նախահաշիվների պատրաստում:

Ամփոփիչ նախահաշիվային ֆինանսական հաշվարկը հիմնական ֆինանսական փաստաթուղթ է, որի իրավական նշանակությունը կայանում է նրանում որ վերջինս սահմանում է շինարարության վրա կատարվող ծախսերի, նրա նախահաշիվային արժեքի անհրաժեշտ և թույլատրելի գումարը:

Ամփոփիչ նախահաշիվային ֆինանսական հաշվարկը սահմանում է նախագծի տեխնիկա-տնտեսական ցուցանիշները: Այն իր մեջ ներառում է ինչպես շինարարական և մոնեթային աշխատանքների, այնպես էլ սարքավորումների և այլ ծախսերի արժեքները:

Կապիտալ շինարարության նախահաշիվային-նախագծային փաստաթղթերում նախագծային առաջադրանքների փոփոխությունները թույլատրվում է սոսկ բացառիկ դեպքերում:

Փոփոխություններ կատարելու իրավունքը վերապահված է միայն այն հաստատելու իրավունք ունեցող պետական մարմիններին:

Ինչ վերաբերվում է բանվորական գծագրերին, ապա վերջիններիս հաստատման պահանջ օրենսդրությամբ չի առաջադրվում: Դրանց համար պատասխանատվություն է կրում նախագծող

կազմակերպությունը:

Այնուամենայնիվ ծանոթանալով նախագծային-նախահաշվային փաստաթղթերի բովանդակությունը սահմանող իրավական ակտերի հետ կարելի է հանգել այն կարծիքին, որ կապիտալ շինարարության նախահաշիվը նպատակ է հետապնդում տարբեր նշանակության շինարարական-մոնտաժային աշխատանքներ կատարելու, սարքավորումներ մոնտաժելու, ինչպես և սարքավորումների, գործիքների ու ինվենտարի ձեռք բերման և կառույցի հետ առնչվող մի շարք արտադրա-կազմակերպական միջոցառումների համար սահմանել աշխատանքային, նյութական և դրամական անհրաժեշտ ծախսերը:

Կապիտալ շինարարության նախագծային-նախահաշվային փաստաթղթերի անբաժան մասնիկն է հանդիսանում պլանավորող տարում կառույցի ֆինանսավորման պլանը: Այսպիսի պլանների կազմման անհրաժեշտությունը սահմանված է կապիտալ ներդրումների մասին գործող օրենսդրությամբ:

Պլանավորող տարում կառույցների և օբյեկտների ֆինանսական պլաններում արտացոլվում են դրամական հատկացումները և դրանց ծախսման ուղղությունները:

Ֆինանսական պլաններով միաժամանակ սահմանվում են կառույցի ֆինանսավորման բոլոր արժյուրները և այն գումարները, որոնք ըստ եռամսյակային բաժանմամբ պետք է իրացվեն տվյալ տարում:

Կապիտալ ներդրումները ֆինանսավորելիս բանկը շինարարությունը ֆինանսավորվում է միայն այն դեպքում, երբ ներկայացվում են. պլանավորվող տարվա կառույցի տարեկան և կապիտալ աշխատանքների պլանները, առանձին օբյեկտների ու ծախսումների տիտղոսային ցուցակը, տեղեկանք համապատասխան նախագծային-նախահաշվային փաստաթղթերը հաստատված լինելու մասին:

Կապիտալ շինարարության, ինչպես նաև կապիտալ վերանորոգման իրականացման և ֆինանսավորման պրոցեսի վերահսկողությունը դրված է վարկային մարմինների վրա, որոնք այն իրագործում են մինչև ֆինանսական համապատասխան գործառնությունների սկսելը, այդ գործառնությունների իրականացման ինչպես նաև շինարարության ավարտից հետո:

Ընթացիկ տարում կառույցի ֆինանսական պլանի տակ նկատի է առնվում շինարարության ապահովվածությունը ինչպես դրամական, այնպես էլ նյութական միջոցներով: Այլ խոսքով, դրամական և նյութական միջոցների տակ օրենսդիրը նկատի ունի ֆինանսավորման լիմիտը, որը պլանային տարում կապիտալ շինարարության աշխատանքների կատարման համար առանձնացված միջոցների այն

առավելագույն գումարն է, որը նախատեսվում է պատվիրատուի ֆինանսական պլանով:

Պլանավորող տարում կապիտալ շինարարության ֆինանսավորման կարգավորման առանձնահատկությունն այն է, որ շինարարության ապահովվածությունը ֆինանսական միջոցներով արտացոլվում է հատուկ ֆինանսավորման պլանով, որը որպես պլանային անհատական ակտ սահմանում է ինչպես պատվիրատու, այնպես էլ կապալառու կազմակերպությունների գործունեության շրջանակները:

Ֆինանսական պլանը որպես իրավական ակտ միաժամանակ սահմանում է ֆինանսական միջոցների տարեկան շարժը ըստ եռամսյակների: Պլանով նախատեսված և մեկ եռամսյակում չօգտագործված միջոցները կարող են օգտագործվել հաջորդ եռամսյակում. իսկ պլանային տարին ավարտելուց հետո չօգտագործված միջոցները փոխանցվում են պետական բյուջե:

Կապիտալ շինարարության ֆինանսավորումը դադարեցվում է համապատասխան օբյեկտների և կառույցների ավարտով, նրանց շահագործման հանձնմամբ:

Օբյեկտների և կառույցների շահագործման հանձնելու կարգը սահմանված է ՀՀ գործող քաղաքացիական օրենսգրքի 751-րդ հոդվածում, որտեղ ասվում է, որ այդ իրավական ակտերով նախատեսված դեպքերում աշխատանքների արդյունքի ընդունմանը պետք է մասնակցեն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները:

Աշխատանքի արդյունքի հանձնումը և պատվիրատուի կողմից դրա ընդունումը ձևակերպվում է երկու կողմերի ստորագրած ակտով:

Կապիտալ ներդրումների իրականացման և ֆինանսավորման պրոցեսի վերահսկողությունը իրականացնում են վարկային համակարգի մարմինները, որոնք ամենօրյա վերահսկողություն են իրագործում կառույցների և շինարարական կազմակերպությունների տնտեսական գործունեության նկատմամբ:

§ 2. ՆԱԽԱԳԱՆՎՈՐՈՒՄԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԻՍՈՒՆՔՆԵՐԸ

ՀՀ-ում պետական ծախսերի մի զգալի մասը կյանքի են կոչվում (իրացվում) բյուջետային ֆինանսավորման եղանակով:

Բյուջետային ֆինանսավորման (նախահաշվային) ելությունը պայմանավորված է մեր հասարակության քաղաքական համակար-

գուճ պետության ներքին և արտաքին այնպիսի ֆունկցիաների դրսևորման բովանդակությամբ, ինչպիսիք են տնտեսա-կազմակերպչական և սոցիալ-մշակութային ֆունկցիաները:

Պետական բյուջեի ծախսերի մի զգալի մասը բյուջետային ֆինանսավորման ճանապարհով ուղղվում է տնտեսության ճյուղերի համամասնական զարգացմանը, բնակչության իրական կենսամակարդակի, նրա ամենօրյա հարաճուն պահանջմունքների բավարարման նպատակին:

Այսօր աշխարհում կայուն խաղաղության ամրապնդման, մարդկանց ստեղծագործական աշխատանքը և հայրենիքի անվտանգությունը ապահովելու նպատակով պետությունը անհրաժեշտ բյուջետային միջոցներ է հատկացնում երկրի պաշտպանության համար:

ՀՀ պետական բյուջեի ծախսերի շարքում իրենց տեսակարար կշռով առանձնանում են սոցիալ-կուլտուրական միջոցառումների ֆինանսավորման համար նախատեսված միջոցները, որոնք պետական բյուջեում մեծ տեսակարար կշիռ են կազմում: Այս խմբի մեջ են մտնում լուսավորության, կրթության, գիտության, առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի գծով կատարվող ծախսերը:

Սոցիալ-կուլտուրական միջոցառումների ֆինանսավորման համար բյուջեից կատարվող ծախսերը տարեցտարի աճում են: Ավելացնելով սոցիալ-կուլտուրական միջոցառումների գծով կատարվող ծախսերը պետությունը մյուս խնդիրների հետ միասին նպատակ է հետապնդում մարդկանց բարեկեցությունը բարձրացնել որակապես նոր աստիճանի, ապահովել նյութական, սոցիալական ու մշակութային բարիքների սպառման այնպիսի մակարդակ ու կառուցվածք, որոնք առավելագույնս կհամապատասխանեն ներդաշնակորեն զարգացած, հոգեպես հարուստ անհատի ձևավորման, մարդկանց ընդունակությունների ու տաղանդների լրիվ բացահայտման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման նպատակների՝ ի շահ հասարակության:

Ոչ արտադրական ոլորտի հիմնարկները և կազմակերպություններն իրենց պահպանման համար համապատասխան դրամական միջոցներ ստանում են պետական բյուջեից ֆինանսական պլանների նախահաշիվների հիման վրա: Բացի բյուջետային հատկացումներից սոցիալ-կուլտուրական միջոցառումների ֆինանսավորման համար ակտիվորեն ներգրավում են նաև տնտեսական կազմակերպությունների ներքին միջոցները:

Գործող օրենսդրությամբ առանձին հիմնարկությունների իրավունք է վերապահված օգտագործելու նաև իրենց կից տնտեսական մարմինների արտադրանքի իրացումից ստացած շահույթը:

Նախահաշվային բյուջետային ֆինանսավորման բնագավառում ամենից ավելի նշանակալից միջոցներ ծախսվում են աճող սերնդի կրթության և դաստիարակության վրա:

Ստեղծված են բոլոր պայմանները միջնակարգ և բարձրագույն կրթություն ստանալու համար:

Այսօր պետության հիմնական լծակներից մեկը մատաղ սերնդի և երիտասարդության հանրճանալու պրոֆեսիոնալ և աշխատանքային դաստիարակությունն է:

Հանրապետության իշխանությունների գործունեությունը նպատակամղված է այն բանին, որ էլ ավելի բարձրացվի երիտասարդության կրթության ու դաստիարակության մակարդակը, բարելավվի ինքնուրույն աշխատանքային կյանքին նրա նախապատրաստությունը, աստիճանական անցում կատարվի դեպի ընդհանուր պրոֆեսիոնալ կրթությունը:

Պետության ծրագրային այս դրույթը ուղղված է այն բանին, որ Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացի զինվի պրոֆեսիոնալ կրթությամբ, որպիսի կարողանա առավել լրիվ կերպով ցուցաբերել իր ընդունակությունները, կիրառել իր գիտելիքները և գործարդել իր ստացած պրոֆեսիոնալ կրթությունը հասարակական կյանքի այս կամ այն բնագավառում:

Լուսավորության ոլորտի բոլոր հաստատությունները ըստ ֆինանսավորման կարգի բյուջետային են: Հանրակրթական դպրոցների ծախսերը որոշելու համար ֆինանսական օրենսդրությամբ հիմք է վերցվում դասարանների և նրանցում սովորող աշակերտների թիվը: Դասարանը դպրոցի ծախսերի սահմանման հիմնական ցուցանիշն է, որոնց թվին համապատասխան հաստատվում են դպրոցի ծախսերը: Նախահաշվային ծախսերի շուրջ 80 տոկոսը կազմում են ուսուցիչների, վարչատնտեսական և ուսումնա-օժանդակ անձնակազմի աշխատավարձը: Ծախսերի մնացած 20 տոկոսը բաժին է ընկնում գրասենյակային և տնտեսական կարիքների բավարարմանը:

Վերջին տարիներին պետությունը իր վրա է վերցրել անապահով ընտանիքների երեխաների անվճար ուսումնական դասագրքերով ապահովելու ծախսերը: Հանրակրթական գրեթե բոլոր դպրոցներում, որտեղ գործում են երկարօրյա խմբեր, նյութապես վատ ապահովված ընտանիքների երեխաներին տրվում է ձրի սնունդ:

Այսօր ավելի քան երբևէ, պետությունը զգալի ուշադրություն է ցուցաբերում գիտության զարգացմանը:

Այսօր գիտատեխնիկական նվաճումները մեծ դեր են խաղում արտադրական ուժերի զարգացման և հասարակական հարաբերությունների կատարելագործման, տեխնիկայի ու տեխնոլոգիայի

սկզբունքորեն նոր տեսակների ստեղծման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, երկրի ընդերքի, շրջակա միջավայրի պահպանության և բարելավման գործում:

Գիտա-տեխնիկական առաջընթացի նվաճումները հասարակական արտադրության մեջ ներդնելու համար պահանջվում են հսկայական ֆինանսական միջոցներ:

Գիտա-հետազոտական աշխատանքները, որպես կանոն, ֆինանսավորվում են ինչպես պետական բյուջեից, այնպես էլ ձեռնարկությունների և տնտեսական կազմակերպությունների շահույթներից և այլ աղբյուրներից:

Բյուջետային միջոցների հաշվին են պահվում հանրապետության գիտությունների ակադեմիան, գիտա-հետազոտական ինստիտուտները, գիտությունների ճյուղային ակադեմիաները, փորձարարական կայանները, կենտրոնական լաբորատորիաները, գիտական զորդարանները: Համապետական նշանակության տեսական և հոգևոր մտածողության բոլոր կենտրոնները ՀՀ-ում ֆինանսավորվում են պետական բյուջեի միջոցներից::

Այսօր գիտությունը ավելի ու ավելի է դառնում հասարակության արտադրողական ուժ:

Մեր երկրի աշխատավորների համար ի թիվս բազմաթիվ ծառայությունների կազմակերպում է նաև հանրամատչելի անվճար բարձրորակ բուժօգնություն:

Առողջապահության համար կատարվող ծախսերը ըստ բյուջետային դասակարգման ուղղված են.

1. Բուժ-պրոֆիլակտիկ հիմնարկությունների (հիվանդանոցների) դիսպանսերների, պոլիկլինիկաների, ձեռնարկությունների առկեսերի, արյան փոխներարկման կայանների, մանկական առողջարանների պահպանման և համապատասխան միջոցառումների ձեռնարկմանը, սանիտարա-պրոֆիլակտիկ (դիզինֆեկցիոն, համաճարակային հիվանդությունների դեմ պայքարի) և այլ միջոցառումների:

Ներկայումս բուժական հիմնարկների ֆինանսավորման հարցում առաջատար տեղը պատկանում է ստացիոնար բուժական հիմնարկներին, որտեղ հիվանդները մնում են բուժման և առողջացման ամբողջ ժամանակաշրջանում:

Բուժ-պրոֆիլակտիկ հիմնարկների համակարգը ամբողջապես ֆինանսավորվում է բյուջեից, նրանց պահպանման ծախսերը կազմում են առողջապահության համար բյուջեից կատարվող բոլոր հատկացումների հիմնական մասը:

Առողջապահության սխտեմի ծախսերը գլխավորապես բաղկացած են, 1. բուժական և վարչա-տնտեսական անձնակազմի աշխատավարձից, 2. հիվանդների սննդի, 3. բուժամիջոցների ձեռքբեր-

ման, 4. տնտեսական և այլ ծախսերից:

Բուժական հիմնարկների աշխատողների աշխատավարձի չափը կախված տվյալ հիմնարկում ունեցած աշխատանքային ստաժի և զբաղեցրած պաշտոնի, գործող ֆինանսական և աշխատանքային օրենսդրությամբ դիֆերենցված է:

Միջին բուժական անձնակազմի պաշտոնական դրույքները կապված զբաղեցրած պաշտոնի, աշխատանքային պայմանների և առանձնահատկությունների հետ նույնպես դիֆերենցված են:

Առողջապահության ոլորտում կատարվող ծախսերի շարքում իրենց տեսակարար կշռով առանձնանում են հիվանդների սննդի և բուժամիջոցների ձեռք բերման վրա կատարվող ծախսերը:

§. 3. ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՈՐՊԵՍ ՖԻՆԱՆՍԱ-ՊԼԱՆԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՍԿՏ

Անարտադրողական ոլորտի վերը հիշատակված, այնպես էլ մնացած բոլոր հաստատությունները իրենց պահպանման և նորմալ գործունեության իրականացման համար դրամական միջոցներ ձեռք են բերում պետական բյուջեից՝ նախահաշիվների հիման վրա:

Նախահաշիվը պլանային բնույթի ֆինանսա-իրավական ակտ է, որը սահմանում է պետության կողմից հիմնարկների, կազմակերպությունների և այլ հաստատությունների պահպանման և նրանց առաջ կանգնած խնդիրների լուծման համար պետական բյուջեից հատկացվող միջոցների ծավալը, նպատակաուղղվածությունը և եռամսյակային բաշխումը:

Բյուջետային բոլոր հիմնարկների նախահաշիվների ձևը և բովանդակությունը, որպես կանոն, սահմանում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:

Ուսումնասիրելով տնտեսության մեջ կիրառվող նախահաշիվները դժվար չէ նկատել, որ վերջիններս կարելի է դասակարգել հիմք ընդունելով այն՝ էական հատկանիշները, որոնցով բնութագրվում են տվյալ ճյուղի առանձնահատկությունները: Այս հատկանիշների առաջին խումբը արտացոլում է հիմնարկների շրջանակը, իսկ երկրորդ խումբը այնպիսիներն են այդ հիմնարկների տիպերը: Ըստ հիմնարկների տիպերի գործող նախահաշիվները բազմազան են. որոնցից կարելի է առանձնացնել կառավարման մարմինների պահպանման նախահաշիվների ձևերը, կադրերի պատրաստման, բուժական-առողջարանային հիմնարկների նախահաշիվների ձևերը և այլն:

Նախահաշիվները ըստ հիմնարկների շրջանակի գործող օրենսդրությամբ լինում են երեք տեսակ. անհատական, կենտրոնացված միջոցների և ամփոփիչ ճյուղային:

Անհատական Նախահաշիվն արտացոլում է որևէ կոնկրետ բյուջետային հիմնարկի առանձնահատկությունները:

Ամփոփիչ ճյուղային Նախահաշիվները համապատասխան նախարարությունների գեղատեսչությունների և համայնքների գործադիր մարմինների կողմից միավորված միևնույն ճյուղին պատկանող հիմնարկների ընդհանուր նախահաշիվն է:

Յուրաքանչյուր նախահաշվի հատուկ է նրա ներքին կառուցվածքի միատարրությունը, որտեղ հողվածները բյուջետային դասակարգմանը համապատասխան ունեն ճշգրիտ առարկայական, նպատակային անվանումներ և միավորում են միատեսակ խմբեր:

Նախահաշվում նոր հողվածներ սահմանելու կամ փոփոխելու իրավունքը պատկանում է կառավարությանը: Ծախսերի հողվածները ունեն խստիվ պարտադիր բնույթ և ենթակա չեն կամայական փոփոխության: Դա բխում է օրենքի ուժ ունեցող պետական բյուջեի բնույթից և նախահաշվային բյուջետային կարգապահության պահանջներից: Հիմնարկությունների յուրաքանչյուր տիպ օգտագործում է նրա համար ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից սահմանված հողվածների որոշակի քանակ:

Ընդհանրացնելով նախահաշվում տեղ գտած հողվածների բովանդակությունը կարելի է ասել, որ բյուջետային-նախահաշվային բոլոր հիմնարկների ծախսերը բաժանվում են երկու մեծ խմբի: Այդ ծախսերի մի մասը վերաբերվում է կապիտալ ներդրումներին, իսկ մյուս մասը՝ հիմնարկի ընթացիկ պահպանմանը:

Հիմնարկների և հաստատությունների ընթացիկ պահպանման ծախսերը իրենց հերթին կարելի է բաժանել վարչա-տնտեսական և օպերատիվ գործառնությունների ֆինանսավորման:

Բյուջետային կազմակերպությունների նախահաշիվները կազմվում են ծախսերի նորմերի հիման վրա, որի տակ հասկանում են միասեռ հաստատությունների նախահաշվային ծախսերի միասնական տիպային չափանիշներ:

Կառավարության կողմից հաստատված ընդհանուր նախահաշվի ներքին կառուցվածքի ուսումնասիրությունը բերում է այն կարծիքի, որ նախահաշվում տեղ գտած նորմերը ըստ իրենց դիսպոզիցիայի կարելի է դասակարգել պարտադիր և ոչ պարտադիր, բյուջետային անհատական և կոմբինացված նորմերի:

Նախահաշվային ծախսերում տեղ գտած ոչ պարտադիր նորմերը, իրենց բնույթով դիսպոզիտիվ նշանակություն ունեն և կարող են փոփոխվել իրենց կիրառման պրոցեսում կապված կոնկրետ

հիմնարկության առանձնահատկությունների հետ: Ոչ պարտադիր նորմերը, բազմաթիվ են: Դրանց թվին կարելի է դասել շինարարական աշխատանքները, ջեռուցման, գույքի ձեռք բերման և այլ բնույթի ծախսերը սահմանող նորմերը:

Նախահաշվային ծախսերի համակարգում դիսպոզիտիվ բնույթի նորմերի առկայությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ շատ հաճախ անարտադրողական ոլորտի բյուջետային հիմնարկները աշխատում են ոչ հավասար պայմաններում: Բյուջետային հիմնարկների անհավասար պայմաններ կարող են կապված լինել տեխնիկա-տնտեսական, բնա-կլիմայական առանձնահատկությունների հետ: Օրինակ, հանրապետության երկու դպրոցներ կարող են ունենալ տարբեր ծավալ, տարբեր ջեռուցման համակարգ և այլն: Կարևոր նշանակություն ունեն տնտեսական և բնա-աշխարհագրական պայմանները: Դրա համար էլ յուրաքանչյուր հիմնարկության իրավունք է տրվում կիրառելու ծախսերի այնպիսի նորմաներ, որոնք համապատասխանում են նրա տնտեսական և այլ կարիքներին: Նախահաշվային ծախսերը սահմանող նորմերի մի մասն ունի նյութական բնույթ: Նյութական են նախահաշվի ծախսերը սահմանող այն նորմերը, որոնք իրենց մեջ պարունակում են նյութական միջոցների որոշակի քանակություն: Նախահաշվում նյութական նորմի օրինակ կարող է հանդիսանալ սոցիալ-կուլտուր-լուսավորության հիմնարկներում ջեռուցման համար օրական վառելանյութի քանակը կամ հիվանդին մեկ օրվա համար տրվող սննդամթերքի քանակը: Նախահաշվի նյութական նորմերում նյութերի ծախսի նորմաները, որպես կանոն, գործող օրենսդրությամբ սահմանվում են մեկ օրվա համար, որոնց հիման վրա հետագայում հաշվվում են ամսվա, տարվա նյութական ծախսերը: Ինչ վերաբերվում է բյուջետային նորմերին, ապա վերջիններս հանդես են գալիս որպես նյութական նորմերի գումարային արտահայտություն: Օրինակ, կարող են ծառայել դրամական հաշվարկման ենթարկված զանազան նյութական ցուցանիշներ, այսպես՝ հիվանդանոցի մեկ լաբորատորիայի վրա ծախսվող էլեկտրաէներգիայի քանակը և այլն: Նախահաշվում տեղ գտած նորմերի մի մասը իրենց բնույթով անհատական են: Նախահաշվային բյուջետային ֆինանսավորման պրոցեսում անհատական նորմերն ունեն ծառայողական մեծ նշանակություն, օգտագործվում են միայն հիմնարկությունների անհատական նախահաշիվների կազմման ժամանակ:

Կոմբինացված նորմերը գործնականում մեծամասամբ օգտագործվում են ամփոփիչ նախահաշիվների կազմման ժամանակ, քանի որ վերջիններս իրենցից ներկայացնում են անհատական նորմերի մի ընդհանուր գումար, որը վերաբերում է մեկ որևէ

տնտեսական ցուցանիշի և դյուրին է դարձնում կառավարման ճյուղային մարմինների ամփոփիչ նախահաշիվների կազմման տեխնիկական պրոցեսը.

Բյուջետային ֆինանսավորման իրական ընթացքի էական և իրավական տեսանկյունից կարևոր պահերից մեկը նախահաշվի կազմման, քննարկման և հաստատման գործընթացն է, որտեղ դրսևորվում է աշխատավորական կոլեկտիվների լիազորությունները հիմնարկ-ձեռնարկությունների ֆինանսա-տնտեսական գործունեության զարգացման գործում:

Նախահաշվի, որպես ֆինանսա-իրավական պլանային ակտի ներհատուկ է իրավական ակտերի ընդունման փուլերը, որոնք հստակորեն սահմանված են իրավական նորմերով: Նախահաշվի շարժման պրոցեսը բաղկացած է նրա կազմման, քննարկման և կատարման փուլերից:

Նախահաշվի կազմումը բյուջետային հիմնարկության գործունեության ամենից ավելի պատասխանատու պահերից մեկն է: Այն կազմվում է հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը: Այն հիմնարկները, որոնք սկսում են գործել տարվա ընթացքում նախահաշիվը կազմվում է տարվա մնացած մասի համար: Նախահաշիվը կազմվում է վերադաս մարմինների ցուցումների հիման վրա, որը տրվում է օրենսդրությամբ լիովին համապատասխան: Նախահաշիվների կազմման տեխնիկական աշխատանքները դրված է հաշվային աշխատողների վրա: Կազմված նախահաշիվը քննարկվում է կամ արտադրական խորհրդակցություններում կամ հիմնարկների արհմիութենական կոմիտեների նիստերում: Հավանության արժանացած նախահաշիվները հաստատվում են վարկերի գլխավոր տնօրինողների կողմից, որոնք և իրավունք ունեն փոփոխություններ մտցնելու նախահաշվի կազմում:

ԳԼՈՒԽ XX

ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՍՈՒՆՔՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

§ 1. ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՀՍՍԿԱՑՈՒ- ԹՅՈՒՆԸ, ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

«Բանկ» տերմինը առաջացել է իտալերեն «banco» բառից, որը նշանակում է դրամափոխի աթոռ, նստարան կամ դրամատուն: Բանկերն առաջացել և զարգացել են ապրանքադրամական և վարկային հարաբերություններին զուգընթաց: Ղրանք հանդես են գալիս որպես վարկային կազմակերպություններ, որոնք կենտրոնացնում են ժամանակավորապես ազատ դրամական միջոցները և օգտագործում վարկի ձևով: Բանկերը կատարում են վճարային կանխիկ հաշվարկները, վարկավորման և ֆինանսավորման գործառնությունները, բաց են թողնում դրամ և տարատեսակ արժեթղթեր¹:

Շուկայական հարաբերություններին անցնելու պայմաններում արմատապես վերակառուցվում է բանկերի և բանկային համակարգի գործունեությունը: Բանկային վարկերի օգտագործման արդյունավետությունը խիստ կախվածության մեջ է դրվում պատվիրատուների՝ ձեռնարկությունների, կազմակերպությունների և քաղաքացիների սպասարկման որակից, ինչպես նաև ավանդների ու փոխառվության տոկոսների չափերից: Շուկայական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց բանկային համակարգը առևտրային հաշվարկի և ինքնաֆինանսավորման սկզբունքներին փոխադրելու կապակցությամբ կիրառվում են վարկավորման արդյունավետ ժամանակակից նոր ձևեր ու մեթոդներ, որոնք կոչված են ապահովելու վարկային ռեսուրսների վերադարձելիությունը և շրջանառելիությունը:

Բանկերը ներկայումս դարձել են ինքնուրույն ձեռնարկություններ և նրանց գործունեությունն ավելի մեծ չափով առևտրային բնույթ է

¹ Տես նախածանն, А.Г.Ефимова, Банковское право, Изд. БЕК, М., 1994, с.тр.6.

ստացել: Առևտրային սկզբունքներով են աշխատում բանկային համակարգի բոլոր մարմինները բացառությամբ Կենտրոնական բանկից:

Անհրաժեշտ է նկատել, որ վարկային մարմնի առկայությունը և նրա կողմից վարկային գործառնությունների կատարումը, ավանդների ընդունումը և վճարումը դեռևս բավարար պայման չէ տվյալ պետության վարկային համակարգի մասին լիարժեք դատողություններ կատարելու համար:

Վարկային համակարգը ցանկացած պետության միևնույն նպատակի և խնդիրների իրականացման համար կազմակերպարարական ձևերով միավորված վարկային մարմինների համակցություն է, որը գլխավորում է կենտրոնական կամ ազգային բանկը, իրականացնելով բանկային համակարգի կառավարման ֆունկցիա:

Պատահական չէ, որ վարկային համակարգ ստեղծելու նպատակով ինքնիշխան Հայաստանի Հանրապետությունը անկախության առաջին օրից ձեռնմուխ եղավ հանրապետության Կենտրոնական բանկի ստեղծմանը, որը հիմնվեց Գերագույն խորհրդի 1993թ. ապրիլի 27-ի «ՀՀ Կենտրոնական բանկի» և «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքներով, որոնք գործեցին մինչև 1996 թվականը:

1996թ. հունիսի 30-ին ԱԺ ընդունեց օրենք «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի» և «Բանկերի և բանկային գործունեության մասին», որով նախկին օրենքները կորցրեցին իրենց ուժը:

Գործող վարկային օրենսդրության ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ աճում է Կենտրոնական բանկի որպես մեթոդի գլխավոր բանկի դերը, որը միաժամանակ հանդիսանում է էմիսիոն և հաշվարկային կենտրոն:

Գործող բանկային օրենսդրության սկզբունքային առանձնահատկությունն այն է, որ Հայաստանի բանկերը իրենց գործունեության մեջ անկախ են օրենսդիր և գործադիր մարմիններից: Ըստ «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի առաջին հոդվածի, հանրապետությունում բանկերը ինքնուրույն են, պատասխանատու չեն Հայաստանի Հանրապետության կառավարության պարտավորությունների համար և, հակառակը, կառավարությունը պատասխանատվություն չի կրում բանկերի պարտավորությունների համար, բացի այն դեպքերից, երբ բանկը կամ կառավարությունը ստանձնում են այդպիսի պարտավորություններ:

Հայաստանի Հանրապետության բանկային գործունեության համալիր իրավական կարգավորումը արտացոլվում է 1996թ. հաստատված «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի

մասին» ՀՀ նոր օրենքում, որի առաջին հոդվածում ուղղակի ասվում է, որ «ՀՀ կենտրոնական բանկը իրավաբանական անձ է, որի միակ հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է»: Այն իրենից ներկայացնում է միասնական համակարգ, որը ներառում է բանկի գլխավոր գրասենյակը և տարածքային ստորաբաժանումները:

Տնտեսավարման ներկա պայմաններում հանրապետության բանկային օրենսդրության համար նորույթ է Կենտրոնական բանկի բացառիկ ինքնուրույնությունը և անկախությունը կառավարությունից:

Կենտրոնական բանկի համար այսպիսի իրավական նոր ռեժիմի սահմանումը բնավ չի խոսում այն մասին, որ վերջինս դուրս է պետական իշխանության և կառավարման բարձրագույն մարմինների տնտեսական համագործակցությունից, ընդհակառակը, Կենտրոնական բանկը մասնակցում է կառավարության տնտեսական ծրագրերի մշակմանը և աջակցում է կառավարության կողմից իրականացվող միջոցառումներին:

Բանկային համակարգի մարմինների ամենօրյա գործունեության ձևերի շարքում իր հասարակական-տնտեսական անհրաժեշտությամբ, իրավական կարգավորման ժամանակակից ձևերով և մեթոդներով առանձնանում է բանկային վարկը:

Բանկային վարկը դրսևորվում է որպես տնտեսական հարաբերությունների համակցություն, որի գործընթացում պետության, իրավաբանական և ֆիզիկական անձանց ժամանակավորապես ազատ դրամական միջոցները հավաքվում են բանկային մարմիններում և վերադարձնելիության պայմանով տրվում են ինչպես տնտեսավարող սուբյեկտների, այնպես էլ քաղաքացիներին:

Ընդլայնված վերարտադրության պրոցեսում մշտապես առաջանում են ազատ միջոցների խոշոր գումարներ: Օրինակ միանգամից, ամբողջ ծավալով չեն օգտագործվում ձեռնարկություններին հատկացված հաշիվներին արտադրանքի իրացման համար փոխանցված գումարները: Ժամանակավորապես ազատ են նաև ամորտիզացիոն մասհանումները, չբաշխված շահույթը և այլն:

Ժամանակավորապես ազատ միջոցներ ունեն նաև խնայքանկերը, ապահովագրական մարմինները: Մի շարք կազմակերպությունների, ձեռնարկությունների և քաղաքացիների մոտ տնտեսական գործառնություններ իրականացնելու ընթացքում առաջանում է լրացուցիչ դրամական միջոցներ օգտագործելու կարիք:

Ակնհայտորեն աննպատակահարմար է ձեռնարկությունը ապահովել նրա առավելագույն պահանջները բավարարող շրջանառու միջոցներով, բանի որ դրա հետևանքով ձեռնարկության միջոցների զգալի մասը երկար ժամանակ կմնա առանց օգտագործման

փոխանակ տնտեսության կարիքների վրա օգտագործվելու: Դրա համար էլ ձեռնարկությունները օժտված են իրենց նվազագույն կարիքները բավարարող շրջանառու միջոցներով: Իսկ այն դեպքում, երբ ձեռնարկության մուտ կարիք է առաջանում ժամանակավորապես մեծացնել իր շրջանառու միջոցները ապա նրան օգնության է գալիս բանկը տալով կարծատն վարկեր: Նման վարկավորման պրակտիկայում ներկայումս վարկերը ձեռք են բերում կայուն բնույթ և իրանից ներկայացնում են բանկի բաժնային մասնակցությունը տնտեսական կազմակերպությունների շրջանառու միջոցների ձևավորման մեջ:

Համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի մասին օրենքի 38-րդ հոդվածի, բանկային վարկավորումը բաժանվում է կարծատն և երկարատև վարկավորման:

Կարծատն բանկային վարկը տրվում է 6 ամսից ոչ ավելի ժամկետով:

Կարծատն վարկերն իրենց հիմնական զանգվածով տրվում են առևտրային կազմակերպություններին և քաղաքացիներին:

Կարծատն վարկավորման օբյեկտները հանդիսանում են տնտեսական կազմակերպությունների ընթացիկ ակտիվները:

Կարծատն վարկերը բանկերի կողմից տրվում են վարկային պլանին համապատասխան:

Բանկային երկարատև վարկավորման իրավական հիմքը վարկի ժամկետի տևողության իմաստով հանդիսանում է ՀՀ Կենտրոնական բանկի մասին օրենքի 38-րդ հոդվածով բանկին վերապահված իրավունքը, որով կենտրոնական բանկը բանկային համակարգի մյուս մարմիններին կարող է տրամադրել մինչև մեկ տարի մարման ժամկետ ունեցող վարկեր:

Շուկայական հարաբերությունների պայմաններում նշանակալից չափով աճել է տնտեսական կազմակերպությունների կապիտալ ներդրումների երկարատև վարկավորման դերը:

Երկարատև վարկավորման օբյեկտներ են հանդիսանում նոր ձեռնարկությունների, բնակարանային շինարարության, տեխնիկական վերազինման, ինչպես նաև սոցիալ տնտեսական նշանակության ծախսերը:

Բանկային վարկավորումը իրականացվում է որոշակի սկզբունքներով, որոնք սահմանված են բանկային օրենսդրությամբ: Այս սկզբունքներն են

- ա) ուղղակիությունը
- բ) նպատակայնությունը
- գ) ժամկետայնությունը
- դ) ետադարձ լինելը

ե) հատուցանելիությունը

զ) ապահովված լինելը:

Նպատակային բնույթն արտահայտվում է նրանում, որ բանկային վարկերը ծախսվում են այն օբյեկտների վրա, որոնց համար հատկացվել են կոնկրետ ժամկետով, քանի որ տրվում է ճշգրիտ ժամկետների համար, որի ընթացքում տնտեսական մարմինները դրանք կարող են օգտագործել մինչև 12 ամիս: Այս ժամկետը անցնելուց հետո տնտեսական մարմինները պարտավոր է վարկը վերադարձնել բանկին: Սրանում է արտահայտվում նրա ետադարձ լինելը:

Հատուցանելի է, քանի որ տրամադրված վարկերի համար տնտեսմարմինները բանկին մուծում են որոշակի տոկոսներ:

Ապրանքանյութական արժեքներով ապահովված լինելը արտահայտվում է նրանում, որ բանկը իր տրամադրած վարկերի համար ընդունում է գրավ, որը անհրաժեշտության դեպքում կիրացնի (կվաճառի), եթե վարկերի գումարը ժամանակին ետ չստանա: Վարկերի նյութական ապահովվածության էությունը բացատրվում է նրանով, որ բանկը տնտեսական մարմիններին վարկ է տալիս որոշակի նյութական արժեքներ ձեռք բերելու համար, որոնք և հանդես են գալիս բանկային վարկը ապահովող գրավի դերում:

§ 2. ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ԱՅՆ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ

Սեփականության տարբեր ձևերի վրա հիմնված տնտեսավարման նոր կարգը և հատկապես շուկայական հարաբերությունները ավելի են ամրապնդում վարկային և հաշվարկային համակարգի, նրա կատարելագործման նկատմամբ պետական հսկողության ուժեղացումը, որի իրավական արտահայտությունը ՀՀ կենտրոնական բանկի և բանկային համակարգի գործունեության կարգավորման ուղղված օրենսդրական ակտերն են:

Կենտրոնական բանկի հիմնական խնդիրը ՀՀ գների կայունության ապահովումն է, որի իրագործման նպատակով բանկը մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագիրը, որոնց մի մասն են կազմում բանկային համակարգի կայունությունը և բանկային գործունեության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելը, որը կենտրոնական բանկը իրականացնում է տարբեր բանկերի և այլ անձանց հետ փոխհարաբերություններ ձևավորելու միջոցով:

Կենտրոնական բանկի մասին օրենքը սպառիչ թվարկում է այն

խնդիրները, որոնց իրականացումը անհնար է առանց այլ մարմինների հետ իրավական փոխհարաբերությունների ստեղծման: Այդպիսի խնդիրների թվին են դասվում այլ բանկերի լիցենզավորումը, որպես վերջին ատյանի վարկատու վարկերի տրամադրումը, ինչպես նաև այդ մարմինների և քաղաքացիների վարկային և վճարահաշվարկային գործունեության կարգավորումը և վերահսկումը:

ՀՀ կենտրոնական բանկի և այլ մարմինների փոխհարաբերություններից ձևավորվող վարկային և հաշվարկային իրավահարաբերությունների բնույթի, նրանց իրավական կարգավորման հիմնախնդիրները եղել և այսօր էլ մնում են վիճելի: Ընդհանուր ճանաչում ստացած տեսակետն այն է, որ բանկային վարկն արտահայտվում է բանկային փոխառվության ձևով և որոշ չափով հիշեցնում է փոխառության պայմանագրերը, սակայն այն ունի մի շարք առանձնահատկություններ, որոնցով տարբերվում է քաղաքացիական իրավունքի նորմերով կարգավորվող փոխառության պայմանագրից:

Այս պատճառով էլ բանկային վարկավորումը իրենից ներկայացնում է հասարակական հարաբերությունների մի յուրահատուկ համակարգ, որը կարգավորվում է քաղաքացիական և ֆինանսական իրավունքի նորմերի կողմից: Այդ նորմերը իրենց հանրագումարի մեջ կազմում են ինքնուրույն իրավական ինստիտուտ, որն ունի համալիր բնույթ:

Սա բացատրվում է պետության գործունեության մեջ բանկերի ունեցած առանձնահատուկ իրավական դրոշմով: Նրանք միևնույն ժամանակ հանդիսանում են և իրավաբանական անձինք, տնտեսական կազմակերպություններ և իշխանական բնույթի լիազորություններով օժտված պետական կառավարման մարմիններ: Այստեղից էլ ինչպես հաշվարկների, այնպես էլ վարկավորման ժամանակ, բանկերը մտնում են քաղաքացիական իրավունքի նորմերով կարգավորվող գույքային-պայմանագրային հարաբերությունների մեջ: Այդ հարաբերություններում բանկերը հանդես են գալիս որպես տնտեսական շրջանառության (վարկի բաց թողնում, գրավի ձևակերպում և այլն) մասնակիցներ:

Այսպիսի գործառնությունների կատարումով հանդերձ բանկերը միաժամանակ մտնում են տնտեսական հարաբերությունների մեջ, որոնցում հանդես են գալիս որպես իշխանական լիազորություններով օժտված կառավարման մարմիններ, որոնք վարկավորման և հաշվարկների պրոցեսում վերահսկում են տնտեսական կազմակերպությունների գործունեությունը և ըստ անհրաժեշտության կիրառում բանկային սանկցիաներ, որոնք կարգավորում են ֆինանսական իրավունքի նորմերով:

ՀՀ կենտրոնական բանկի և այլ բանկային մարմինների փոխ-

հարաբերությունների ընթացքում ձևավորվող իրավահարաբերությունների մի մասը վերաբերում են օրենսդրական սահմանում ստացած տնտեսական այն նորմատիվների իրավական կարգավորմանը, որոնք կազմում են կենտրոնական բանկի բացառիկ իրավասությանը:

Բանկային գործունեության այնպիսի հիմնական տնտեսական նորմատիվներ, ինչպիսիք են բանկի ընդհանուր կապիտալը, կանոնադրական հիմնադրամի և ընդհանուր կապիտալի նվազագույն չափը մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը, ինչպես նաև արտարժույթի տնօրինման նորմատիվը սահմանում է ՀՀ կենտրոնական բանկը:

Ըստ «Բանկերի գործունեության մասին» օրենքի 46-րդ հոդվածի կենտրոնական բանկը կարող է սահմանել բանկերի կանոնադրական հիմնադրամի և ընդհանուր կապիտալի նվազագույն չափերը, որոշակի գումարների ձևով:

Կենտրոնական բանկը իրավունք ունի տարին մեկ անգամ վերանայելու բանկերի կանոնադրական հիմնադրամի կամ ընդհանուր կապիտալի նվազագույն չափերը: Վերանայելիս կարող է սահմանել այն ժամկետները, որի ընթացքում բանկերը պարտավոր են լրացնել կանոնադրական հիմնադրամի կամ ընդհանուր կապիտալի նվազագույն վերանայված չափերը: Օրենքով սահմանված է, որ տվյալ ժամկետը չի կարող երկու տարուց պակաս լինել:

Ինչ վերաբերում է մեկ փոխառուի ռիսկի առավելագույն չափի սահմանը, ապա այն սահմանվում է որպես բանկի կողմից մեկ փոխառուին և նրա հետ փոխկապակցված անձանց տրամադրված վարկերի, նրա պարտավորությունների դիմաց տրված երաշխիքների և երաշխավորությունների գումարի բանկի ընդհանուր կապիտալի հետ հարաբերության առավելագույն չափ:

Բանկային օրենսդրությունը կենտրոնական բանկին իրավունք է վերապահում սեփական հայեցողությամբ սահմանել *հատուկ տնտեսական* նորմատիվներ, որոնց նպատակը բանկային համակարգի կայունության ապահովումն է: Այս նորմատիվների գործողության ժամկետը վեց ամիս է:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի իրավական կարգավիճակի առանձնահատկությունները պայմանավորված են կենտրոնական բանկին վերապահված *վերահսկողական ֆունկցիայով*:

Բանկային օրենսդրությամբ սահմանված կարգով կենտրոնական բանկը հետևում է, որպեսզի առևտրային բանկերը ժամանակին և լիով ծավալով կատարեն հիմնական տնտեսական և հատուկ նորմատիվները, գործեն իրավական ակտերով սահմանված

հասցեագրումներին համապատասխան:

«Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 57-րդ հոդվածի համապատասխան, բանկերի գործունեության նկատմամբ վերահսկողության բացառիկ իրավունքը պատկանում է Կենտրոնական բանկին: Կենտրոնական բանկը ըստ անհրաժեշտության կարող է անցկացնել հերթական և արտահերթ վերստուգումներ, որը իրականացվում է կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ:

Բանկային համակարգի մարմիններում անցկացվող վերստուգումների օբյեկտ կարող են հանդիսանալ առևտրային և օտարերկրյա բանկերի և նրանց մասնաճյուղերի կողմից կենտրոնական բանկ ներկայացվող եռամսյակային հաշվետվությունները, հաշվեկշիռները:

Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով յուրաքանչյուր տարի բանկերը ստուգվում են առևտրային գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անկախ առևտրային կազմակերպության կողմից:

Հանրապետության Կենտրոնական բանկի վերահսկողական ֆունկցիաները իրավական գնահատման իմաստով անսահմանափակ են և պետության ֆինանսական իշխանության կազմակերպման առումով ճիշտ են արտացոլում ազգային բանկի դերը ու նշանակությունը հատկապես արժույթի և արտարժույթային գործառնության կարգավորման և վերահսկողության ոլորտում:

Կենտրոնական բանկի կարգավիճակը արտացոլող մնացած բոլոր իրավունքները և պարտականությունները ածանցյալ են արժույթի և արտարժույթային գործունեության ձևերից: Այս գործընթացում է, որ արտահայտվում է Կենտրոնական բանկի անսահմանափակ իրավունքները՝ որպես պետական կառավարման մարմնի, որպես ՀՀ արժույթային միակ գործակալի: Արժույթային կարգավորման ոլորտում կենտրոնական բանկի իրավասության տնօրինման առարկա են հանդիսանում արտարժույթային տնօրինման նորմատիվների, դրամի փոխարժեքի որոշման մեթոդների, ինչպես նաև արժույթային գործառնությունների իրականացման կարգի ու պայմանների սահմանումը:

Կենտրոնական բանկը, որպես հանրապետության արժույթային գործակալ, արտարժույթային կարգավորման ոլորտում հսկում և կարգավորում է արժույթային գործառնություններ իրականացնող դիլերների, ներառյալ բանկերի գործունեությունը:

Օրենսդրական այսպիսի պահանջը պայմանական է դարձնում բանկային գործունեության ոլորտում վարկային և հաշվարկային իրավահարաբերությունների քաղաքացիական կարգավորման բնույթը, քանի որ ցանկացած պահի կենտրոնական բանկը պե-

տության և հասարակության շահերից ելնելով՝ ինքն է որոշում պահի դրամավարկային հարաբերությունների ձևերը և մեթոդները:

Հետևաբար, որպես պետության ֆինանսական իշխանությունը գործադրող մարմին միակողմանիորեն կարող է դուրս գալ պայմանագրային պարտավորությունների շրջանակներից ի շահ պետության:

Այս հարաբերություններում մշտապես առկա է վարչական-ֆինանսական կարգավորումը, չնայած վերջիններս կոնկրետ վարկային և հաշվարկային իրևաձևահարաբերություններում չեն զգացվում և չեն դրսևորվում մինչև իրավախախտման պահը: Բնական է, այս հարաբերությունների հետևանքները դատական լուծում չունեն, ավարտվում են օպերատիվ կարգով ֆինանսական սանկցիաների կիրառմամբ:

Բանկային մարմինների և այլ անձանց հետ կենտրոնական բանկի փոխհարաբերություններին բնութագրական է վերջինիս կողմից վերահսկողական լիազորություններով հանդես գալը, որպես գործադիր իշխանության մարմնի:

Կենտրոնական բանկին վերահսկողության իրավունք վերապահելը և այն իրավական ակտերում սահմանելը ինչպես նաև վերահսկողության հետևանքների սանկցիավորումը վկայում են այն մասին, որ կենտրոնական բանկը ֆինանսական իրավունքի *հասունկ սուբյեկտ* է: Ինչ վերաբերում է վարկային և հաշվարկային իրավահարաբերությունների ձևավորմանը և իրավական կարգավորմանը, ապա սրանք իրավական գնահատմամբ ձևական քաղաքացիական - պայմանագրային կարգավորում ունեն այնքան ժամանակ, քանի դեռ չի խախտվել վարկավորման կամ հաշվարկային իրավահարաբերությունները կարգավորող իրավական նորմի պահանջները: Բացի այս, ըստ պետական և հասարակական շահերի անհրաժեշտության, բանկային մարմինը ցանկացած պահի կարող է միակողմանի փոփոխություններ մտցնել վարկային կամ հաշվարկային պայմանագրի էական կետերի մեջ, որը անառարկելիորեն վկայում է այս հարաբերությունների ֆինանսաիրավական առանձնահատկությունների մասին:

ՀՀ բանկերի և բանկային գործառնությունների խախտման տեսակները, որոնց թվին են դասվում՝

ա) իրավական ակտերի խախտումով բանկի կանոնադրական հիմնադրումը կամ ընդհանուր կապիտալի տարրերի համալրումը.

բ) բանկային գործունեության և ֆինանսական գործառնությունների իրականացումը օրենքի խախտումով.

գ) բանկի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների խախտումը.

դ) հաշվապահական հաշվառում վարելու կանոնները, ինչպես նաև հաշվեկշռի, ֆինանսական հաշվետվությունների ներկայացման և հրապարակման կարգն ու պայմանները:

ե) բանկի կանոնադրության խախտումները:

Կենտրոնական բանկը ֆինանսական և բանկային օրենսդրության պահանջների խախտումներ հայտնաբերելիս օրենքով սահմանված կարգով իրավունք ունի բանկերի նկատմամբ կիրառել հետևյալ ներգործության միջոցները (պատժամիջոցներ):

1) նախազուշացում.

2) հանձնարարականներ տալ խախտումները վերացնելու մասին.

3) տուգանք

4) բանկի ղեկավարներին զբաղեցրած պաշտոններից հեռացում.

5) լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում:

Բանկային օրենսդրությամբ սահմանված պատժամիջոցների այս համակարգը, նրա առանձին տեսակները կարող են կիրառվել, ինչպես կենտրոնական բանկի կողմից անմիջականորեն, այնպես էլ դատական կարգով:

Ֆինանսական իրավունքի տեսության զարգացման նպատակով կենտրոնական բանկի կողմից կիրառվող պատժամիջոցները մեր կարծիքով կարելի է բաժանել երկու խմբի.

ա) բանկային օրենսդրության խախտման համար կիրառվող *հիմնական* և բ) *լրացուցիչ* պատժամիջոցների:

Կենտրոնական բանկի կողմից անմիջականորեն կիրառվող հիմնական պատժամիջոցների շարքում անհրաժեշտ է առանձնացնել հատկապես *լիցենզիայի ուժը կորցրած ճանաչելը*, որը որպես օրենսդրության խախտման համար կիրառվող ներգործության միջոց ըստ էության, իր բնույթով ծանր պատժամիջոց է, իրավական բոլոր հետևանքներով: Այս պատժամիջոցի կիրառմամբ նախքին իրավաբանական անձը փաստորեն դադարում է գոյություն ունենալուց, բանկը զրկվում է բանկային գործունեություն իրականացնելու իրավունքից, բացառությամբ օրենքով նախատեսված գործարքների, որոնք ուղղված են նրա ստանձնած պարտավորությունների կատարմանը, միջոցների իրացմանը և դրանց վերջնական բաշխմանը:

Իրավական հետևանքների տեսակետից, որպես բանկային օրենսդրության խախտման համար կիրառվող հիմնական պատժամիջոց, հանդես է գալիս «բանկերի սնանկ» ճանաչումը, որը կիրառվում է դատարանների ընդունած որոշումների հիման վրա:

Բանկերի սնանկության հիմնական պատճառը ժամանակին Կենտրոնական բանկի կողմից պատշաճ ֆինանսական վերահսկո-

ղության իրականացման բացակայությունն է, խնամակալությունը, բանկի տնտեսական նորմատիվների պահպանման նկատմամբ անփութությունը և մի շարք այլ սուբյեկտիվ և օբյեկտիվ պատճառներ, որոնք բանկին կարող են հասցնել սնանկացման:

Կենտրոնական բանկի կողմից անմիջականորեն կիրառվող լրացուցիչ պատժամիջոցների թվին կարելի է դասել նախազուշացումը, խախտումները վերացնելու հանձնարարականներ տալը, բանկի ղեկավարներին զբաղեցրած պաշտոններից հեռացումը, որպես կարգապահական տույժ, ինչպես նաև կենտրոնական բանկի հայցով դատարանների որոշմամբ բանկերից գանձվող տուգանքը:

Բանկային օրենսդրությամբ որպես նվազագույն պատժամիջոց կիրառվում է նախազուշացումը և խախտումները վերացնելու հանձնարարականը: Ըստ էության, նախազուշացումը և խախտումները վերացնելու հանձնարարականներ տալը, իրենց բնույթով օրենքի խախտման անթույլատրելիության մասին նախազուշացված միջոցներ են, որոնցից յուրաքանչյուրը ունի իր բովանդակությունը և կարող է գործադրվել որպես բանկային ինքնուրույն պատժատեսակ:

Բանկային օրենսդրության խախտման համար կիրառվող նախազուշացման, ինչպես նաև իրավախախտումը վերացնելու մասին հանձնարարականը ըստ էության բանկային տույժի տեսակներ են, բնույթով վարչական, որոնք կիրառվում են բանկային օրենսդրության առավել փոքր խախտումներ կատարած այնպիսի իրավաբանական անձանց նկատմամբ, որոնք մինչև խախտումներ կատարելը վարկային և հաշվարկային իրավահարաբերություններում աչքի են ընկել կարգապահությամբ և դրականորեն են բնութագրվել:

Կենտրոնական բանկի կողմից կիրառվող նախազուշացումը և խախտումները վերացնելու հանձնարարականը իրավական գնահատման առումով միշտ չէ, որ կարելի է համարել բանկային հարկադրանքի տեսակ, առավել ևս, որ օրենքով չի կարգավորված նրա կիրառման ձևին վերաբերող հարցերը:

Գործնականում հաճախ կիրառվում է բանավոր նախազուշացումը, որը վարչական տույժ չի կարելի համարել, քանի որ դիտվում է որպես բացատրական միջոցառում:

Նախազուշացումը բանկային տույժ կարելի է համարել միայն այն դեպքում, երբ այն արվում է գրավոր ձևով:

Նախազուշացմամբ արժանագրվում է թույլ տրված խախտումը և իրավախախտողին բանկը տեղեկացնում է խախտման անթույլատրելիության մասին:

Նախազուշացումը որպես բանկային տույժ անբաժան է խախտումը վերացնելու հանձնարարականից: Կենտրոնական բանկը կիրառելով նախազուշացում, միաժամանակ սահմանում է

իրավական նորմի խախտումները վերացնելու ժամկետները և գրավոր հանձնարարականով այն ուղարկում է բանկային մարմնին: Հանձնարարականի կատարումը պարտադիր է նախազգուշացում ստացած բանկի համար:

Բանկային օրենսդրության խախտումների համար *կիրառվող պատժամիջոցներից է տուգանքը*, որը գանձվում է Կենտրոնական բանկի հայցով: Գումարը գանձվում է բանկի թղթակցային հաշվից հօգուտ պետական բյուջեի:

Բանկերի և բանկային գործունեության մասին օրենքի 63-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր խախտման համար բանկից գանձվող տուգանքի չափը սահմանում է Կենտրոնական բանկը և թվարկվում են խախտումների այնպիսի հիմքեր, ինչպիսիք են հաշվետվությունները ուշացնելը, անարժանահավատ տեղեկություններ արտացոլելը, որոնց դեպքում դատարանի կողմից նշանակվող տուգանքի չափերը կատեգորիկ ամրապնդված են օրենքի տեքստում:

Այսպես, հաշվետվություններն ուշացնելու համար կիրառվող տուգանքի չափը չի կարող գերազանցել կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն կանոնադրական հիմնադրամի հինգ տոկոսը:

Բանկային օրենսդրության յուրաքանչյուր այլ խախտման համար բանկի նկատմամբ կիրառվող տուգանքի՝ չափը չի կարող գերազանցել կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն կանոնադրական հիմնադրամի մեկ տոկոսը:

Տուգանք սահմանող նորմի իմպերատիվ բնույթից դժվար չէ նկատել, որ դատարանը փաստորեն հայցադիմումը քննարկելիս տուգանք նշանակելու և նրա շահերը պաշտպանելու հարցում ազատ չէ, գործի փաստական հանգամանքները քննարկելիս որպես արդարության մարմին ինքնուրույն չի կարող որոշել մեղքի չափը և կիրառել տուգանք՝ որպես վարչական տույժի միջոց: Առավել ևս ինքնուրույնաբար չի կարող սահմանել տուգանքի չափերի փոփոխություն:

Իրավական գնահատման իմաստով, դատարանների անօգուտ ծանրաբեռնվածությունը թեթևացնելու, բանկային հայցերի դատական քննարկումների տևական գործընթացները կրճատելու և ժամանակը խնայելու նպատակով, թվում է, անհրաժեշտ է վերանայել վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությունը, Կենտրոնական բանկը ճանաչել որպես վարչական տույժեր կիրառող մարմին և տույժերի ու տուգանքների օպերատիվ կիրառման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով բանկային օրենսդրության խախտումների համար տույժերի կիրառման

իրավունքը վերապահել Կենտրոնական բանկին:

Կենտրոնական բանկի կողմից օրենսդրության խախտումների համար կիրառվող պատժամիջոցների թվին է դասվում բանկի ղեկավարներին զբաղեցրած պաշտոններից հեռացումը, որը իրականացվում է Կենտրոնական բանկի խորհրդի առաջարկությամբ:

Բանկի ղեկավարը կամ ղեկավարները զբաղեցրած պաշտոններից կարող են հեռացվել օրենքները միտումնավոր կերպով խախտելու, անազնիվ և անբարեխիղճ վերաբերմունք դրսևորելու, բանկի կամ բանկի հաճախորդների շահերին հակասող գործողություններ կատարելու և օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Բանկը այս սանկցիաները կիրառում է ամեն մի դեպքում հաշվի առնելով կոնկրետ դեպքի առանձնահատկությունները:

ԴՐԱՄԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՍՈՒՆՔՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

§ 1. ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Դրամաշրջանառության կարգավորումը ՀՀ-ում պետության բացարձակ իրավասությունն է: Դրամաշրջանառության իրավական կարգավորումը նպատակ է հետապնդում անհրաժեշտ համաչափություն ապահովել շրջանառության մեջ մտնող ապրանքային և դրամական զանգվածների, ինրպես նաև ապրանքների ու ծառայությունների առաջարկի և բնակչության զնոդական ֆոնդերի միջև:

Դրամաշրջանառության պետական կարգավորման համար կարևոր նշանակություն ունի նրա պլանավորումը: Դրամաշրջանառության պլանավորումը իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից: Դրամաշրջանառության պլանավորումը առաջին հերթին ելնում է բնակչության դրամական եկամուտների և ծախսերի մոտավոր հաշվեկշռի սահմանումից: Այս հաշվեկշիռը արտացոլում է բնակչության տարբեր աղբյուրներից ստացած ինչպես դրամական եկամուտները, այնպես էլ ծախսերը: Կենտրոնական բանկի կողմից դրամական շրջանառության օպերատիվ կազմակերպման իրավական ձևը դրամարկղային պլանն է, որի միջոցով պարզվում է բանկային համակարգի դրամարկղեր մուծվող կանխիկ դրամի չափը և աղբյուրները, բաց թողնվող դրամի չափն ու նպատակային ուղղվածությունը, որոշվում է շրջանառության մեջ դրվելիք կամ հանվելիք դրամի քանակը: Դրամաշրջանառության ծրագիրը սերտորեն կապված է բնակչության դրամական եկամուտների ու ծախսերի հաշվեկշռի, վարկային ծրագրի և պետական բյուջեի հետ:

Դրամաշրջանառության համակարգը անկանխիկ և կանխիկ դրամի շրջանառության միասնությունն է:

Պատմական էքսկուրսները վկայում են, որ այսօր գարգացման ինքնուրույն ուղի բռնած Հայաստանի Հանրապետությունը

խորհրդային կարգերի փլուզումից հետո, 1993թ. սկսած ձեռնմուխ է եղել ազգային դրամական նոր համակարգի, հետևաբար նաև դրամաշրջանառության նոր սկզբունքների արմատավորմանը: 1993թ. հոկտեմբերի 13-ի ՀՀ Գերագույն խորհրդի որոշմամբ ստեղծված դրամաշրջանառության մեջ դրվեց ազգային դրամը և լուծվեց: Խորհրդային ժամանակից ազգային դրամով փոխարինվեց, մեկ դրամի դիմաց երկու հարյուր ռուբլի հարաբերությամբ:

Ազգային դրամաշրջանառությունը կարգավորող առաջին օրենքը հանդիպեց լուրջ դժվարությունների, իսկ դրամը՝ արժեզրկման: Պատճառներից մեկն այն էր, որ Հայաստանը ռուբլու գոտու վերջին հանրապետություններից մեկն էր, որ սահմանեց իր ազգային դրամը: Հանրապետության ներքին շուկան ողողված էր խորհրդային ռուբլով, որը հանրապետություն էր բերվում նախկին միության տարբեր հանրապետություններից:

Իրադրությունը շտկվեց «ՀՀ կենտրոնական բանկի մասին» 1993թ. ապրիլի 27-ին ընդունված օրենքով:

Այսուհետ հանրապետության դրամական շրջանառության ոլորտում դրամի ներքին և արտաքին կայունության երաշխավորը հանդիսանում էր կենտրոնական բանկը: Առաջին անգամ ազգային բանկին իրավունք վերապահվեց կարգավորել շրջանառությունը, իրականացնել դրամի էմիսիան:

Ազգային դրամի կայունության և միասնական հաշվարկային և վարկային քաղաքականության ապահովման նպատակով և այլ անհրաժեշտությունից ելնելով ՀՀ Աժ 1996թ. հունիսի 30-ին ընդունեց օրենք «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին», որով ուժը կորցրած ծանաչվեց նախկին օրենքը: Օրենքի 5-րդ հոդվածում նշվում է, որ կենտրոնական բանկը թողարկում է ՀՀ արժույթը, կազմակերպում և կարգավորում է դրամաշրջանառությունը:

Դրամաշրջանառությունը դիտարկելով որպես կանխիկ և անկանխիկ դրամի շարժ, որը ապահովում է ապրանքաշրջանառությունը, ինչպես նաև ոչ պլանային վճարումները և հաշվարկները, դժվար չէ նկատել, որ գործնականում անկախ սեփականության ձևից տնտեսական կազմակերպությունների, ինչպես նաև դրանց ու ֆինանսավարկային մարմինների միջև ապրանքային մատակարարումների, կատարվող աշխատանքների ու ծառայությունների վճարումները, հարկային և ոչ հարկային մուծումները պետությունը, ապահովագրական, սոցապահովագրության վճարումները ֆինանսական համակարգի մյուս օղակներին, բանկերից վարկերի ստացումը, մարումը և տոկոսների վճարումը, ինչպես նաև տնտեսական ու սոցիալական ոլորտների ֆինանսավորման դրամական գոր-

ծարքները իրականացվում են բանկերի միջոցով անկանխիկ վճարումների կարգով: Կանխիկ դրամական վճարումներն ընդգրկում են հիմնականում բնակչության և կազմակերպությունների, բնակչության տարբեր խմբերի, ինչպես նաև բնակչության և ֆինանսավարկային մարմինների միջև գոյություն ունեցող դրամական հարաբերությունները: Զնդ որում, դրամի շրջանառության երկու ուղորտները՝ անկանխիկ և կանխիկ, միմյանց հետ սերտորեն կապված են: Այն դեպքում, երբ ձեռնարկությունները և կազմակերպությունները բանկերից կանխիկ փող են ստանում բնակչությանը աշխատավարձ, կենսաթոշակներ, կրթաթոշակներ, նպաստներ և այլն վճարելու, անկանխիկ դրամական հաշվարկները վերածվում են կանխիկ դրամական հաշվարկների: Իսկ այն դեպքերում, երբ առևտրային և այլ կազմակերպություններից բանկեր են մուտք լինում կանխիկ փողային գումարները և գրանցվում են կազմակերպությունների համապատասխան հաշիվներում, կանխիկ փողային վճարումները վերածվում են անկանխիկ փողային վճարումների:

Դրամական վճարային գործարքների մեջ անկանխիկ դրամական վճարումների համեմատ կանխիկ դրամական շրջանառության տեսակարար կշիռը թեպետ փոքր է, այնուամենայնիվ դրա անհրաժեշտությունը անխուսափելի է: Տնտեսության և բնակչության պահանջը բավարարելու համար բանկերը, հատկապես կենտրոնական բանկը, ամեն օր շրջանառության մեջ բաց են թողնում կանխիկ դրամ և ետ գանձում այն: Սակայն կանխիկ դրամը անմիջապես և լրիվ չափով ետ չի վերադառնում բանկեր, այլ որոշ ժամանակ մնում է շրջանառության ոլորտներում՝ բնակչության մոտ և ձեռնարկություններում ու կազմակերպություններում: Աշխատողներն աշխատավարձ են ստանում, իսկ մինչև մյուս աշխատավարձն ստանալը, նրանց մոտ մնում է որոշ քանակությամբ կանխիկ դրամ: Բացի այդ, ձեռնարկությունները և կազմակերպությունները, այդ թվում վարկային հիմնարկներն իրենց ամենօրյա վճարային գործառնություններն անխափան կերպով իրականացնելու համար իրենց դրամարկղերում ունենում են որոշ քանակի կանխիկ դրամ: Սակայն վերարտադրության կարևոր պայմաններից մեկն էլ այն է, որ շրջանառության մեջ, այսինքն՝ բնակչության մոտ և ձեռնարկությունների ու կազմակերպությունների դրամարկղերում եղած կանխիկ դրամի քանակը համապատասխանի տնտեսության ռեալ պահանջներին, հատկապես իրացվող ապրանքային ֆոնդերի քանակին:

Որքան շատ են իրացվող ապրանքները, այնքան ավելի շատ դրամական միավորներ են պահանջվում դրանց իրացման համար: Բայց շրջանառության մեջ կանխիկ փողի քանակը կախված է նաև

փողի յուրաքանչյուր միավորի պտույտի արագությունից: Դա կապված է այն բանի հետ, որ դրամի միևնույն գումարը կարող է սպասարկել մեծ կամ փոքր թվով առք ու վաճառքի գործարքներ: Դետևաբար, շրջանառության համար անհրաժեշտ կանխիկ դրամի քանակն ուղիղ համեմատական է իրացվող ապրանքների քանակին և հակադարձ համեմատական է դրամի պտույտի արագությանը: Իսկ պտույտի արագությունը իր հերթին հավասար է ապրանքների իրացման գումարը բաժանած կանխիկ փողի այն գումարին, որի օգնությամբ դա կատարվել է:

Դրամը պտույտ է կատարում տարբեր արագություններով: Դա շատ գործոններից է կախված հատկապես ապրանքների առկա քանակից, որակից, տեսականուց և այլն: Այդ պատճառով էլ դրամի պտույտի արագությունը կարևոր տնտեսական ցուցանիշ է: Այն արտահայտում է ապրանքների շրջանառության արագությունը, այսինքն ապրանքների շրջանառության ուղորտից ապառման ուղորտին անցնելու՝ այդ ուղորտում դրանք նոր ապրանքներով փոխարինելու արագությունը: Նշանակում է, դրամի շրջանառության դանդաղումը բացասական ցուցանիշ է, որը վկայում է տնտեսության մեջ առկա լուրջ թերությունների մասին:

Շրջանառության համար անհրաժեշտ կանխիկ դրամի քանակը կախված է նաև դրամի վճարելամիջոցի ֆունկցիայի օգտագործումից: Դրամի է, որ իրացվող ապրանքների մի մասը վաճառվում է վարկով և դրանց արժեքը վճարվում է որոշ ժամանակից հետո: Դրա հետ կապված, տվյալ ժամանակում համապատասխան գումարով կրճատվում է կանխիկ դրամի պահանջը: Մյուս կողմից, տվյալ ժամանակում վրա է հասնում ապառիկ վաճառված ապրանքների դիմաց դրամով վճարելու պահը, որը մեծացնում է կանխիկ դրամի պահանջը: Եվ վերջապես, հարկավոր է հաշվի առնել նաև այն, որ վճարման պարտավորությունների մի մասը փոխարձակվում է մարվում է:

Դժվար չէ նկատել, որ դրամի պտույտի տվյալ արագության ժամանակ, լինի դա շրջանառության միջոց, թե վճարելամիջոց, որոշ ժամանակում շրջանառության մեջ գտնվող դրամի ընդհանուր գումարը որոշվում է իրացվելիք ապրանքների գների ամբողջ գումարով:

Շրջանառության մեջ անհրաժեշտ փողի քանակի որոշումը կամ, ինչպես կոչվում է փողի շրջանառության տնտեսական օրենքն ընդհանուր է բոլոր այն հասարակարգերի համար, որտեղ գոյություն ունեն ապրանքափողային հարաբերություններ:

§ 2. ԴՐԱՍՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՍՔԵՐԸ

Դրամի շրջանառության կազմակերպման ու կարգավորման ֆունկցիան գործող բանկային օրենսդրությամբ վերապահված է կենտրոնական բանկին: Նա է կազմակերպում քթատրամի և մետաղադրամի պատրաստումը, կանխիկ դրամի պահպանման, տեղափոխման և ինկասացիայի կարգի սահմանումը, ինչպես նաև քթադրամների և մետաղադրամների պահուստային ֆոնդերի ստեղծման ապահովումը¹:

Այսօր շրջանառության մեջ կենտրոնական բանկի կողմից թողարկված են 10, 25, 50, 100, 200, 500, 1000, 5000, 20000 և այլ արժողության բանկային տոմսեր և 1, 3, 5 արժողության գանձարկային տոմսեր:

Բանկային տոմսերը ապահովվում են ոսկով, թանկարժեք մետաղներով և բանկի այլ ակտիվներով, իսկ գանձարկային տոմսերը՝ պետության ամբողջ ունեցվածքով: Շատ էության, բանկային տոմսերի և գանձարկային տոմսերի միջև տարբերությունը չկա, քանի որ երկուսն էլ բանկը բաց է թողնում շրջանառության ռեալ պահանջները բավարարելու համար: Դրանց հիմքում ընկած են ապրանքանյութական արժեքները, որոնք դուրս են բերվում շուկա բնակչության շրջանում իրացնելու համար:

Շրջանառության մեջ բանկային գանձարկային և մանր մետաղյա դրամներ բաց են թողնվում որոշակի համամասնությամբ: Այդ համամասնությունը կոչվում է դրամական զանգվածի կուպյուրային կառուցվածք: Դրա գործնական անհրաժեշտությունը կարևորվում է նրանով, որ շրջանառության մեջ բաց թողնված բանկային, գանձարկային և մետաղյա դրամը պետք է համապատասխանեն ապրանքաշրջանառության պահանջներին և, ամենից առաջ, ապրանքների գների մակարդակին: Եթե ապրանքների գները ցածր են, ապա պետք է ավելի շատ փոքր արժողության գանձարկային և մետաղյա դրամ բաց թողնել ապրանքաշրջանառության արագ կատարման համար և ընդհակառակը: Նշանակում է, դրամական զանգվածի կուպյուրային կառուցվածքի խախտումը բացասաբար է անդրադարձնում ապրանքաշրջանառության նորմալ ընթացքի ապահովման վրա:

Շրջանառության մեջ նոր դրամի բաց թողնելու, հին և մաշված դրամը նորերով փոխարինելու և, վերջապես, դրամի զանգվածի կուպյուրային կառուցվածքը կարգավորելու համար Հայաստանի

բանկն ունի պահուստային ֆոնդ, որտեղ պահվում են բանկային, գանձարկային և մետաղյա դրամի նմուշները: Հայաստանի կենտրոնական բանկն ունի շրջանառու դրամարկղեր, որոնց միջոցով օպետատիվ կարգով կարգավորվում են կանխիկ փողի մուտքը և ելքը: Այդ դրամարկղերը լիմիտավորվում են, բանկի բաժանմունքը աշխատանքային օրվա ընթացքում լիմիտի և օրվա մուտքերի հաշվին պետք է բավարարի ընթացիկ դրամական վճարումների պահանջը: Այն դեպքերում, երբ օրվա վերջում դրամարկղային լիմիտից ավելի կանխիկ գումար է մնում, ապա այն փոխադրվում է պահուստային ֆոնդ և տեղի է ունենում արժույթի վերածում նմուշի: Իսկ այն դեպքերում, երբ լիմիտը և օրվա մուտքերը չեն բավարարում ելքը, ապա հատուկ թույլտվությամբ պակասը չրացվում է պահուստային ֆոնդից, և տեղի է ունենում նմուշի վերածում արժույթի¹:

Բանկը իրավունք ունի իր մեկ կամ մի քանի մասնաճյուղերի դրամարկղերի կանխիկ դրամի ավելցուկի հաշվին ծածկել իր մյուս, մեկ կամ մի քանի մասնաճյուղերի դրամարկղերի կանխիկ դրամի պակասի պահանջը: Այս գործարքները բոլորովին էմիսիոն բովանդակություն չեն պարունակում և, ըստ էության, բխում են շրջանառու դրամարկղերի գործնական կարգավորման և մասնակիորեն գոյացող ավելորդ դրամական միջոցներով տվյալ ժամանակում շրջանառության ողջ համակարգի նորմալ կազմակերպման պահանջներից: Միայն այն դեպքում, երբ ամբողջ հանրապետության մակարդակով կանխիկ դրամի մուտքը չի բավարարում ելքը, Հայաստանի բանկը ՀՀ ԱԺ որոշմամբ չրացուցիչ դրամ է բաց թողնում շրջանառության մեջ: Այս դեպքում տեղի է ունենում դրամի էմիսիա:

Կանխիկ դրամի մուտքի և ելքի հարցերը գործնականորեն կարգավորելու ու լուծելու նպատակով կենտրոնական բանկի կողմից յուրաքանչյուր եռամսյակի համար կազմվում է կանխիկ դրամի շրջանառության օպերատիվ ծրագիր կամ դրամարկղային հաշվեկշիռ: Շրջանառության մեջ գտնվող դրամի քանակի գերազանցումն ապրանքների գների գումարի նկատմամբ և դրա հետևանքով ապրանքով չապահովված դրամի առաջացումը կոչվում է արժեզրկում (ինֆլյացիա): Վերջինս բարձրացնում է իրացվող ապրանքների գները: Դրամի արժեզրկումն առաջանում է տարբեր տնտեսական պատճառներով: Դա շրջանառության մեջ և՛ դրամի միավորների ավելորդ քանակի բաց թողումն է, և՛ ապրանքների արտադրության ետ մնալն է վճարունակ պահանջարկի աճից, և՛ պահանջարկ չվայելող ապրանքներ շուկա մտնելն է ու այլ

¹ Տե՛ս, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 42 և 43 հոդվածները (գործող օրենքի ժողովածու 1995-1999թթ. գիրք Ա):

¹ Տե՛ս, Ս.Մուրադյան, Գ.Սուքիասյան, ՀՀ ֆինանսական իրավունք, Ե., 1996, էջ 211

պատճառներ: Բայց և այնպես, փողի արժեզրկման, հատկապես գերարժեզրկման ընդհանուր հիմնական պատճառը տնտեսության աննայուն ու խոր ճգնաժամն է, մասնավորապես թերարտադրության խրոնիկական վիճակը, անառողջ ֆինանսական դրությունը, պետությունից դիֆիցիտը և այլն:

§ 3. ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱՅԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱԿՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ազատ շուկայի գոյության պայմաններում որպես տնտեսական կազմակերպությունների աշխատանքը զնահատող ցուցանիշ, ներկա ժամանակաշրջանում կարևորվում է տնտեսության մեջ բանկային վարկի և տնտեսվարող սուբյեկտների միմյանց միջև փոխադարձ հաշվարկների արդյունավետ և տնտեսապես հիմնավորված օգտագործումը:

Իրավունքը, հանդես գալով որպես հասարակական հարաբերությունների կարգավորիչ, միաժամանակ կարգավորում է բազմաբովանդակ տնտեսական հարաբերություններ:

Տնտեսավորման ներկա ժամանակաշրջանում, երբ իրավունքի դերը ավելի է բարձրացել որպես տնտեսական բնույթի հարաբերությունների կարգավորիչի, դժվար թե գտնվի ապրանքային արտադրության մի այնպիսի բնագավառ, որը զերծ լինի իրավական կարգավորումից:

Անկախ իրավական կարգավորման առարկաների և մեթոդների բազմազանությունից, անհավանական է պատկերացնել իրավունքի որևէ ամփոփ ծյուղ, որը ամենաընդհանուր գծերով կարգավորի միայն տնտեսական գործունեությունից բխող հասարակական հարաբերությունների համակցությունը: Հետևաբար, այսպիսի բազմաժամպլ գործունեության ամրապնդումը, կարգավորումը և վերջինիս իրավական պաշտպանության հարցերը իրենց լրմևորումն են ստանում իրավունքի ամենատարբեր ճյուղերում: Այսպես, տնտեսական գործունեությունից ծագող հասարակական հարաբերությունների մի խումբը կարգավորվում է քաղաքացիա-իրավական նորմերով, հարաբերությունների երկրորդ խումբը վարչա-իրավական, իսկ մեկ այլ խումբ հարաբերությունները ֆինանսա-իրավական նորմերով:

Հաշվարկային և վարկային հարաբերությունների տնտեսական և գործնական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջիններս

նույնպես համալսելի են: Տարասեռության չափանիշի ուժով, այն գույքային հարաբերությունները, որոնք ծագում են հաշվարկների և վարկավորման պրոցեսում և պայմանավորված են իրավահարաբերության սուբյեկտների իրավական հավասարությամբ, կարգավորվում են քաղաքացիական իրավունքով, իսկ այսպես կոչված ուղղահայաց փոխհարաբերություններից առաջացած գույքային հարաբերությունները կարգավորվում են վարչական և ֆինանսական իրավունքի ճյուղերի նորմերի կողմից¹:

Իրավաբանական գրականության մեջ ինչպես ժամանակին, այնպես էլ այսօր հաշվարկային և վարկային հարաբերությունների հասկացության և իրավական կարգավորման հարցում մեկ միասնական տեսակետ գոյություն չունի:

Հեղինակներից Վ.Ֆ.Կուզմինին այն կարծիքին է, որ հաշվարկային և վարկային հարաբերությունները իրենց բնույթով, բովանդակությամբ և նախատակադրվածությամբ տնտեսական բնույթի են և կարգավորում են տնտեսական իրավունքով²: Հետևողականորեն պաշտպանելով իր տեսակետը հեղինակը հանգում է այն համոզման, որ ամհնար է հաշվարկային և վարկային հարաբերությունները առանձնացնել տնտեսական իրավահարաբերություններից և այն բաժանել քաղաքացիական, վարչական և ֆինանսա-իրավական հարաբերությունների:

Անկ այլ տեսակետ է առաջադրում Վ.Պ.Կոռյակովը, ըստ որի մինևույն հաշվարկային և վարկային իրավահարաբերությունները իրենց մեջ պարունակում են քաղաքացիա-իրավական և ֆինանսա-իրավական տարրեր:

Այս տեսակետն է պաշտպանում նաև Ս.Լ.Կոզանը ընդգծելով, որ ցանկացած հաշվարկային և վարկային իրավահարաբերության ընթացքում Կենտրոնական բանկի գործունեության մեջ նկատելի է իշխանական կազմակերպական և գույքային հարաբերությունների միասնությունը³:

Իրավաբանական գրականության մեջ հաշվարկային և վարկային հարաբերությունների իրավական կարգավորման հարցի կապակցությամբ արտահայտված տարբեր կարծիքներն էական չեն, քանի որ բավական է մատնացույց անել Հայաստանի Հանրապետության

¹ Я.А. Куник, Кредитные и расчетные отношения в торговле, "Экономика", М., 1976, стр.6.

² В.Ф.Кузьмин, Кредитные и расчетные правоотношения в промышленности, "Юридическая литература, М., 1975, стр.30

³ М.А.Коган, Правоотношения между Госбанком и объединения "Советское государство и право", 1974, №1, стр.59

քաղաքացիական օրենսգրքի առաջին հոդվածի 6-րդ կետը, որտեղ ասված է, որ քաղաքացիական օրենսդրությունը կարգավորում է գույքային հարաբերությունները և չի կիրառվում մի կողմի մյուս վարչական կամ այլ իշխանական ենթակայության վրա հիմնված գույքային ներառյալ հարկային, ֆինանսական և վարչական հարաբերությունների նկատմամբ քաղաքացիական օրենսդրությունը և այլ իրավական ակտերը չեն կիրառվում, եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ:

Իրավաբանական գրականության մեջ ընդհանուր ճանաչում ստացած տեսակետն այն է, համաձայն որի հաշվային և վարկային հարաբերությունները ծագում են դրամական պարտավորության տեսքով և հանդես են գալիս որպես քաղաքացիա-իրավական պարտավորությունների տարատեսակ:

Դրամական պարտավորությունները մշտապես կապված են որոշակի դրամական գումար փոխանցելու հետ, որոնք արտահայտվում են արժույթով: Ընդ որում, դրամական պարտավորություններին բնութագրական է այն, որ վերջիններիս համար էական չէ, թե ինչ ձևով է կատարվում հաշվարկը կանխիկ թե անկանխիկ¹:

Յետևաբար, դրամական պարտավորությունները քաղաքացիա-իրավական այնպիսի իրավահարաբերություններ են, որտեղ կողմերից մեկը՝ պարտապանը, պարտավոր է մի ուրիշ անձի (պարտատիրոջը), վճարելու որոշակի դրամական գումար, իսկ պարտատերը իրավունք ունի պարտապանից պահանջելու, որ նա կատարի իր պարտականությունը:

Այդպիսի պայմանագրային պարտավորությունների օրգանական մասն են կազմում նաև հաշվարկային իրավահարաբերությունները, քանի որ ամեն կարգի հատուցանելի իրավահարաբերություններին ներհատուկ է ցուցաբերած ծառայությունը և վերջինիս փոխհատուցումը: Այսպիսի իրավական հարաբերությունների իրավաբանական առանձնահատկությունը ոչ այնքան դրամական պարտավորության կատարումն է, որքան ծառայության մատուցումը: Գրեթե բոլոր տնտեսական պայմանագրերում (մատակարարման, փոխադրման, կապիտալ շինարարության, կապալի, պահատվության) դրամը հանդես է գալիս որպես համարժեք փոխհատուցման միջոց: Նշված տնտեսական պայմանագրերը մեկը մյուսից տարբերվում են ծառայության բնույթով և ոչ թե վճարվող դրամով, որպես փոխհատուցում:

Յետևաբար, հարցապնդման տրամաբանական շարունակությունը դրամական պարտավորության կատարումը ցանկացած

հատուցանելի պայմանագրային պարտավորության անհրաժեշտ և բավարար տարրը չէ, այլ վերջինիս նկատմամբ ածանցյալ է և հանդես է գալիս որպես երկրորդական ֆունկցիա:

Սակայն, քաղաքացիական իրավունքում հանդիպում է հասարակական հարաբերությունների մի ինքնուրույն խումբ, որը միայն կապված է դրամական հաշվարկների հետ և բանկային օրենսդրության համաձայն այդպիսի հաշվարկներ թույլատրվում է տնտեսական կազմակերպությունների միջև ծավալվող փոխհարաբերություններում: Այդպիսի հատուկ հաշվարկային իրավահարաբերություններն ունեն իրենց բնորոշ առանձնահատկությունները, քանի որ վերջիններս ծագում են այն ժամանակ, երբ հաշվարկներին մասնակցում են բանկային հիմնարկները և հիմնական պայմանագրային պարտավորության սուբյեկտները չեն համընկնում հաշվարկային իրավահարաբերության մասնակիցների հետ¹:

Վերը հիշատակվածը վկայում է այն մասին, որ ոչ բոլոր դրամական հաշվարկներն են կարգավորվում ինքնուրույն հաշվարկային իրավահարաբերությունների ինստիտուտի նորմերով: Վերջիններս կարգավորող նորմերում ինքնուրույն իրավական ինստիտուտի տեսք են ձեռք բերում միայն այն ժամանակ, երբ հանդես են գալիս որպես պայմանագրային պարտավորության իրացման եղանակ:

Հաշվարկային իրավահարաբերությունների ինքնուրույնությունը հիմնականում պայմանավորված է բանկային գործունեությունը կարգավորող հատուկ կանոններով, որոնք շատ հաճախ բանկային ծառայության ընթացքում տնտեսական պայմանագրերի բովանդակությունից դուրս կողմերի նկատմամբ կարող են ցուցաբերել դիֆերենցացված մոտեցում:

Այսպիսով, հաշվարկային իրավահարաբերությունները դրանք դրամական այն պարտավորություններն են, որտեղ մի կողմը՝ պարտապանը, պարտավոր է բանկային մարմնի միջոցով մյուս կողմի՝ պարտատիրոջ օգտին վճարելու որոշակի դրամական գումար կատարված աշխատանքի և ստացված ապրանքների համար:

Բանկում բացված հաշիվների հիման վրա կազմակերպությունների միջև ծավալվող իրավահարաբերություններն ունեն բարդ (համալիր) բնույթ, որը պայմանավորված է հաշվարկային իրավահարաբերություններին ներհատուկ երկու առանձնահատկություններով:

Առաջինն այն է, որ հաշվարկային յուրաքանչյուր գործառնության մասնակցում են ոչ թե երկու, այլ երեք սուբյեկտներ՝ բանկը, վճարող

Տես. Советское гражданское право, учеб. под ред. проф. О.А.Красавчикова, том II, "Высшая школа" М., 1969, стр.292-293

¹ Տես. Я.А.Куник, Кредитные и расчетные отношения в торговле, "Экономика" М., 1976, стр.17

կողմը և այն կողմը, որի օգտին կատարվում է վճարումը և, երկրորդ, բանկը հաշվարկային գործառնություններին մասնակցում է միաժամանակ և որպես իրավաբանական անձ (առևտրային կազմակերպություն) և իշխանության բնույթի լիազորություններով օժտված պետական կառավարման մարմին:

Հետևաբար, հաշվարկների կատարման պրոցեսում ծագող հարաբերությունները կարգավորվում են իրավունքի ոչ թե մեկ, այլ երկու ճյուղերի՝ քաղաքացիական և ֆինանսական իրավունքի նորմերով:

Այսպես, վճարողի և մատակարարի միջև ծագած հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական իրավունքի կողմից: Տվյալ դեպքում հաշվարկը հանդես է գալիս որպես իրավաբանական փաստ, որի ուժով ղարաբեցվում են այն քաղաքացիա-իրավական հարաբերությունները, որոնք ծագել էին մատակարարողի և վճարողի միջև՝ մատակարարման և այլ պայմանագրերի հիման վրա: Վճարելով իրենց պարտքի գումարը, վճարողը դրանով իսկ կատարում է մյուս կողմի հետ կնքած պայմանագրով իր վրա դրված պարտականությունը: Այսպիսի հաշվարկային հարաբերությունները իրենց բնույթով սկզբնական չեն, այլ հանդես են գալիս որպես ածանցված, հետևանք են նախկինում բանկի կլիենտների միջև ծագած քաղաքացիա-իրավական հարաբերությունների: Դրա համար էլ հաշվարկային կոնկրետ ձևերը կարգավորվում են քաղաքացիական իրավունքի նորմերով:

Հաշվարկների մասնակիցների և բանկի միջև ծագող հարաբերությունները առավել բարդ են: Մի կողմից դրանք կրում են քաղաքացիա-իրավական բնույթ, քանի որ հիմնված են բանկային հաշվի կամ նրա տարատեսակներին պատկանող պայմանագրերի վրա, համաձայն որի պայմանադիր տնտեսական մարմինը պարտավոր է հաշվարկային հաշվի մեջ մտցնել իր բոլոր դրամական միջոցները, իսկ բանկն էլ պարտավոր է կատարելու հաշվետիրոջ օրինական կարգադրությունները, ընդ որում բանկը հանդես չի գալիս իր կլիենտի կարգադրությունները պասսիվ կատարողի դերում: Հանդես գալով որպես իշխանության բնույթի լիազորություններով օժտված կառավարման մարմին, բանկը հաշվարկների պրոցեսում ամենօրյա վերահսկողություն է իրականացնում հաշվետիրոջ գործողությունների վրա, ստուգում նրանց կարգադրությունների օրինականությունը, հասնում այն բանին, որ հաշվարկները կատարվեն ժամանակին և ճիշտ:

Այսպիսի վերլուծությունը վկայում է այն մասին, որ պետական բանկի և հաշվետիրոջ միջև եղած հարաբերությունները չեն կարող կարգավորվել սոսկ քաղաքացիական իրավունքի նորմերի կողմից:

ևա կատարվում է նաև ֆինանսական իրավունքի նորմերով:

Հաշվարկը իրենից ներկայացնում է պարտատիրոջ կողմից որոշակի դրամական գումարի վճար: Հաշվարկների կատարման օրենքով սահմանված կարգը կոչված է ապահովել նրանց ժամանակին լինելը: Ժամանակին լինելը ներկայումս ձեռք է բերում սկզբունքային նշանակություն, քանի որ տնտեսվարման նոր կարգի անցած ձեռնարկությունների աշխատանքը գնահատվում է ոչ թե նրանց կողմից պատրաստված և մատակարարած արտադրանքի, այլ միայն ու միայն իրացված (բեռնաթափված և վճարված) արտադրանքի ծավալով: Հաշվարկը որպես ընդհանուր կանոն, նախնական բնույթ չի կրում, այլ կատարվում է բեռնաթափումից, աշխատանք կատարելուց, ծառայություն մատուցելուց հետո: Դրանով իսկ կանխվում է մի կազմակերպության կողմից մյուս կազմակերպության վարկավորումը¹:

§ 4. ՀՍՇՎԱՐԿՆԵՐԻ ՉԵՎԵՐԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՆ ԿՎՐԳՎՈՐՈՒՄԸ

Այսօր, ավելի քան երբևէ, տնտեսական կազմակերպությունները, իրենց դրամական միջոցները պահելով բանկի համապատասխան հաշիվներում, իրավական փոխհարաբերության մեջ են մտնում բանկի հետ, որի իրավական բազան է հանդիսանում բանկային հաշիվը: Ըստ գերատեսչությունների, միավորումների, հիմնարկների և կազմակերպությունների գործունեության բնույթից կախված բանկային հաշիվները հանդես են գալիս հաշվարկային հաշվի և ընթացիկ հաշվի իրավական հարաբերությունների տեսքով:

Իրավական մի շարք ակտերով, այդ թվում հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 912 հոդվածում սահմանված է կազմակերպությունների և բանկային մարմինների իրավական փոխհարաբերության հիմքերը, որոնք նախատեսում են կազմակերպությունների վարկային հիմնարկներում ունեցած հաշիվներում պահվող դրամական միջոցների տնօրինման կարգը:

Ըստ գործող քաղաքացիական օրենսդրության՝ բանկային հաշվի պայմանագրով բանկը պարտավորվում է ընդունել և հաճախողի (հաշվի տիրոջ) բացած հաշվի վրա մուտքագրել մուտք եղող դրամական միջոցները, կատարել հաշվից փոխանցումներ, կատարելու

¹ Советское гражданское право, под ред. проф. О. А. Красавчикова; том II: "Высшая школа", М., 1969, стр.304

համապատասխան գումարներ տալու և հաշվով այլ գործառնություններ իրականացնելու վերաբերյալ հաճախորդի կարգադրությունները:

Օրենսդիրը սահմանելով բանկի լիազորությունները, միաժամանակ սահմանափակում է նրա իրավունքները այն ծավալով, որ նա իրավունք չունի որոշել և վերահսկել հաճախորդի դրամական միջոցների օգտագործման ուղղությունները կամ սահմանել օրենքով կամ բանկային հաշվի պայմանագրով չնախատեսված այլ սահմանափակումներ իր դրամական միջոցները սեփական հայեցողությամբ տնօրինելու նրա իրավունքների նկատմամբ: Առևտրային ձեռնարկությունները և միավորումները, որոնք օժտված են սեփական շրջանառու միջոցներով և ունեն ինքնուրույն հաշվեկշիռ, պայմանագրային պարտավորություններից բխող հաշվարկների կատարման համար բանկում բացվում է *հաշվարկային հաշիվ*:

Հաշվարկային հաշվում արտացոլում է կազմակերպությունների գործունեության արդյունքները: Կառավարության թույլտվությամբ հաշվարկային հաշիվ կարող է բացվել և նոր բյուջետային կազմակերպությունների համար:

Հաշվարկային հաշիվներում գումարները զոյանում են դրանց շրջապտույտի պրոցեսում միջոցների ազատման հետևանքով և ի հաշիվ այլ ձեռնարկություններից ու կազմակերպություններից առաքված ապրանքների, մատուցված ծառայությունների դիմաց ստացվող վճարումների:

Այստեղից է կատարվում դրամի հոսքը վճարումների ձևով: Հաշվարկային հաշիվների միջոցով բանկի հսկողության տակ տեղի է ունենում դրամի շրջանառությունը: Այսպես, տնտեսական կազմակերպությունները հիմնականում հաշվարկային հաշվից են կատարում բոլոր ծախսերը՝ կանխիկ դրամ ստանում աշխատավարձի, գործուղումների, տնտեսական և այլ կարիքների համար, անկանխիկ հաշվարկներ կատարում, մարում իրենց պարտավորությունները:

Այսօր, ավելի քան երբևէ, երբ մեր երկրում գիտատեխնիկական նվաճումների բազայի հիման վրա ամրապնդվում և լայնորեն ներդրվում է զարգացած պետությունների տնտեսափորձը, էապես աճում է հաշվարկային հաշվի դերը ձեռնարկությունների և միավորումների օպերատիվ տնտեսական ինքնուրույնության ամրապնդման գործում: Տնտեսական գործունեության առաջավոր մեթոդների արմատավորումը ընդլայնում է կազմակերպությունների նախաձեռնությունն ազատ և նպատակասլաց տեղաբաշխելու հաշվարկային հաշվում ունեցած դրամական միջոցները:

Այսպես, ազատ շուկայական հարաբերություններում ձեռնարկու-

թյունները և տնտեսական կազմակերպությունները ինքնուրույնաբար իրենց սեփական դրամական միջոցների հաշվին իրականացնում են կապիտալ ներդրումներ: Այսպիսի միջոցառումների իրականացման համար կազմակերպությունները իրենց հաշվարկային հաշվի դրամական միջոցներից առանձնացնում են որոշակի գումար կապիտալ շինարարության համար:

Բանկային հաշվի մյուս տեսակը՝ *ընթացիկ հաշիվն է*, որը բացվում է բյուջետային կազմակերպությունների կամ ֆինանսական այլ աղբյուրների համար:

Հաշվարկային կամ ընթացիկ հաշիվ բացելու համար կազմակերպությունները բանկի հարստատություններին ներկայացնում են դիմում՝ կցելով տվյալ կազմակերպության ստեղծման օրինականությունը հաստատող փաստաթղթերի պատճենները, վերադաս կազմակերպության տեղեկանքը ղեկավարի և գլխավոր հաշվապահի լիազորությունների մասին, ինչպես նաև նրանց ստորագրությունների նմուշները և տնտեսական կազմակերպության կնիքի դրոշմը:

Ընթացիկ հաշիվները բացվում են բոլոր բանկերում: Վերջիններս ընթացիկ հաշվարկային գործառնություններ կատարում են ինչպես հասարակական կազմակերպությունների, այնպես էլ համայնքների համար:

Տնտեսության մեջ դրամական միջոցները պահելու և հաշվարկներ կատարելու նպատակով ձեռնարկությունների, կազմակերպությունների ու հիմնարկների համար, նրանց գործունեության բնույթին և ֆինանսական աղբյուրներին համապատասխան գործող օրենսդրությամբ մեր հանրապետության տարածքում սահմանվել է հաշվարկների միասնական ձևեր:

Կազմակերպությունների միջև կատարվող հաշվարկները հիմնականում տեղի են ունենում անկանխիկ դրամի մասնակցությամբ, միջոցներ վճարողի և ստացողի հաշիվներում բանկային գրանցումներ կատարելու միջոցով:

Քաղաքացիական գործող օրենսգրքի 929 հոդվածում սահմանված է կանխիկ և անկանխիկ հաշվարկների իրավական ռեժիմը:

Քաղաքացիների մասնակցությամբ հաշվարկները, որոնք կապված չեն նրանց ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ, կարող են կատարվել կանխիկ դրամով՝ առանց գումարի սահմանափակման կամ անկանխիկ ձևով:

Իրավաբանական անձանց միջև հաշվարկները, ինչպես նաև քաղաքացիների մասնակցությամբ հաշվարկները կապված նրանց ձեռնարկատիրական գործունեության հետ, կատարվում են անկանխիկ ձևով: Այդ անձանց միջև հաշվարկները կարող են կատարվել նաև կանխիկ դրամով, եթե այլ բան սահմանված չէ օրենքով:

Անկանխիկ հաշվարկներ կատարվում են բանկերի, այլ վարկային կազմակերպությունների միջոցով, որոնցում բացված են համապատասխան հաշիվներ:

Անկանխիկ հաշվարկի տեսակները նույնպես սահմանված են օրենսդրությամբ: Այսպես, քաղաքացիական օրենսգրքի 930 հոդվածը սահմանում է, որ անկանխիկ հաշվարկներ իրականացնելիս կիրառվում են՝ ա) հաշվարկներ վճարման հանձնարարականներով, բ) ակրեդիտիվով, գ) ինկասո հաշվարկներ, դ) չեկերով, ինչպես նաև օրենքով նախատեսված ու դրան համապատասխան բանկային կանոններով և բանկային գործունեության մեջ կիրառվող գործարար շրջանառության սովորույթներով սահմանված այլ ձևերով հաշվարկներ:

Տնտեսական կազմակերպությունները քաղաքացիական շրջանառության մեջ ազատ են, իրավունք ունեն ընտրելու և պայմանագրով սահմանել հաշվարկների ցանկացած ձևը:

Բանկային գործառնությունների մեջ լայն տարածում ստացած հաշվարկի ձևերից է *վճարման հանձնարարությունը*: Հաշվարկի այս ձևի դեպքում վճարող կազմակերպությունը ինչպես նշված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 931 հոդվածում իրեն սպասարկող բանկին հանձնարարում է իր հաշվում եղած գումարներից որոշակի գումար փոխանցել ստացողի հաշվին: Գումարների փոխանցումը կարող է կատարվել ինչպես նույն, այնպես էլ այլ բանկի կամ բանկի բաժանմունքներում: Վճարային հանձնարարություններով կատարվող գործառնությունները ամրապնդված են հաշվարկային օրենսդրությամբ: Ներկայումս կազմակերպությունների փոխհարաբերություններում վճարման հանձնարարությամբ հաշվարկներ կատարվում է ձեռք բերված ապրանքների և մատուցված ծառայությունների, վարկով վերցված ապրանքների դիմաց, կապիտալ շինարարության և արտադրության զարգացման ֆոնդին հատկացումներ կատարելիս, ինչպես նաև պարտքեր, տուժանքներ և տուգանքներ վճարելուց:

Անկանխիկ բանկային հաշվարկի ձևերից է *ակրեդիտիվով հաշվարկները*:

Ակրեդիտիվով հաշվարկ կատարելիս ակրեդիտիվ բացելու մասին վճարողի հանձնարարությամբ գործող բանկը պարտավորվում է միջոցներ վճարել ստացողին կամ վճարել, աակցեպտավորել կամ հաշվառել նրա փախանցելի մուրհակը կամ լիազորել այլ բանկի (կատարող բանկին) միջոցներ վճարելու ստացողին կամ վճարելու, ակցեպտավորելու կամ հաշվառելու փոխանցելի մուրհակը:

Քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է *հետ կանչվող և հետ չկանչվող* ակրեդիտիվներ:

Հետ կանչվող է համարվում այն ակրեդիտիվը, որն էմիտենտ բանկը կարող է փոփոխել կամ վերացնել առանց միջոցներ ստացողին նախապես ծանոթացնելու:

Կատարող բանկը պարտավոր է հետ կանչվող ակրեդիտիվով վճարել կամ այլ գործառնություններ կատարել, եթե դրանց կատարման պահին ծանուցում չի ստացել ակրեդիտիվի պայմանների փոփոխության կամ վերացման մասին:

Հետ չկանչվող է համարվում այն ակրեդիտիվը, որը չի կարող վերացվել կամ փոփոխվել առանց միջոցներ ստացողի համաձայնության:

Էմիտենտ բանկի խնդրանքով ակրեդիտիվային գործառնությանը մասնակցող բանկը կարող է հատուցել հետ չկանչվող ակրեդիտիվը:

Նման հատուցումը նշանակում է էմիտենտ բանկի պարտավորությունը հանդեպ կատարող բանկի կողմից ակրեդիտիվի պայմաններին համապատասխան վճարելու լրացուցիչ պարտավորության ստանձնում:

Կատարող բանկի հաստատած, հետ չկանչվող ակրեդիտիվը չի կարող փոփոխվել կամ վերացվել առանց կատարող բանկի համաձայնության:

Անկանխիկ բանկային հաշվարկի մյուս ձևն *ինկասո հաշվարկներն են*:

Ինկասո հաշվարկների դեպքում բանկը պարտավորվում է հաճախորդի հանձնարարությամբ ու նրա հաշվին կատարելու վճարողից վճար և վճարի ակցեպտ ստանալու գործողություններ:

Էմիտենտ բանկը, ստանալով հաճախորդի հանձնարարությունը, այն կատարելու համար իրավունք ունի ներգրավել այլ բանկ:

Հաճախորդի առջև պատասխանավորություն է կրում նաև կատարող բանկը հաճախորդի հանձնարարականները չկատարելու դեպքում:

Հաշվարկի այս ձևի իրավական կարգավորումը սահմանված է քաղաքացիական օրենսգրքի 943 հոդվածում, որտեղ ասվում է, որ եթե փաստաթղթերը ենթակա են վճարման ըստ ներկայացման, կատարող բանկը պետք է ինկասո հանձնարարությունն ստանալուց հետո անհապաղ վճարի դրանք: Եթե փաստաթղթերը ենթակա են վճարման այլ ժամկետում, կատարող բանկ ինկասո հանձնարարությունն ստանալուց հետո փաստաթղթերն անհապաղ պետք է ներկայացնի ակցեպտի՝ վճարողի համաձայնությունն ստանալու համար, իսկ վճարի պահանջը պետք է կատարվի ոչ ուշ, քան փաստաթղթում նշված վճարման ժամկետի վրա հասնելը:

Եթե վճարը և ակցեպտը չեն ստացվել, կատարող բանկը պարտավոր է անհապաղ ծանուցել էմիտենտ բանկին չվճարելու

կամ ակցեպտից հրաժարվելու պատճառների մասին:

Էմիտենտ բանկը պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել հաճախորդին նրանից ցուցումներ խնդրելով հետագա գործողությունների վերաբերյալ:

Տնտեսության մեջ լայն տարածում ստացած բանկային անկանխիկ հաշվարկի ձևերից է *չեկերով կատարվող հաշվարկները*:

Չեկ ասելով պետք է հասկանալ չեկ տվողի գրավոր առաջարկը վճարողին որոշակի գումարի դրամ վճարելու չեկի տիրոջը:

Չեկն իր բովանդակությամբ արժեթուղթ է, որի վրա պարտադիր կարգով պետք է նշվի չեկը տալու օրը, ամիսը, տարին, տեղը: Չեկի պարտադիր ռեկվիզիտներից է նաև վճարողը և նրա հաշվի համարը, չեկով նշված փաստաթուղթը և չեկ տվողի ստորագրությունը:

Չեկ հիշեցնող բոլոր այն փաստաթղթերը, որոնք չեն համապատասխանում սահմանված պահանջներին չեկ չեն: Չեկ տալը ինքնին իրավական փաստ է, որը ծնում է իրավահարաբերություններ: Չեկից բխող իրավահարաբերությունները իրենց մասնակիցների իրավական վիճակի առանձնահատկություններով սահմանազատվում են մյուս բոլոր իրավահարաբերություններից: Այստեղ որպես իրավահարաբերության սուբյեկտներ հանդես են գալիս չեկ տվողը, չեկի տերը և վճարողը:

Չեկի իրավական ռեժիմին վերաբերվող առանձնահատկությունները սահմանված են քաղաքացիական օրենսգրքի 945-953 հոդվածներում:

Իրենց իրավական առանձնահատկություններով չեկերի շարքում առանձնանում են *հաշվարկային չեկերը*, որոնց վրա ցույց են տրվում այն գումարները, որոնք ենթակա են փոխանցման անկանխիկ ձևով: Հաշվարկային չեկերն ունեն իրենց տեսակները: Կան բանկի կողմից ակցեպտավորված և չակցեպտավորված չեկեր: Բանկի կողմից չակցեպտավորված հաշվարկային չեկերը մեծամասամբ օգտագործվում են ձեռնարկությունների, միավորումների և տնտեսական այլ կազմակերպությունների կողմից ստացված ապրանքանյութական արժեքների և առանձին գործառնությունների կատարման համար մատուցված ծառայությունների արժեքի վճարման հետ կապված ներքաղաքային հաշվարկների դեպքում:

Բանկի կողմից ակցեպտավորված հաշվարկային չեկերի իրավական բնույթին ներհատուկ է այն, որ բանկը նախապես չեկ տվողի հաշվից հանում է նշված գումարները և չեկի վրա նշում է ակցեպտի մասին: Ակցեպտավորված չեկը բանկ ներկայացնելիս բանկը պարտավոր է անմիջապես նշված գումարները փոխանցել չեկը ներկայացնողի հաշիվը:

«ՀՀ կենտրոնական բանկի» և «Բանկային համակարգի մասին»

օրենքներով դրամաշրջանառության իրավական կարգավորումը հանրապետությունում ապահովում է բանկային համակարգի մարմինների միջոցով:

Կենտրոնական բանկի մասին օրենքի 48 և 49-րդ հոդվածները սահմանում են նրա վերահսկողական լիազորությունները որպես ՀՀ արժութային գործակալի և արտարժութային կարգավորողի:

Իրավական այս ակտում ուղղակի ասված է, որ կենտրոնական բանկը իրավունք ունի հսկել և կարգավորել արժութային գործառնություններ իրականացնող դիլերների, ներառյալ բանկերի գործունեությունը:

Իրավական այս նորմը ունի իմպերատիվ բնույթ: Հետևաբար, ՀՀ կենտրոնական բանկը դրամաշրջանառության գործընթացում իրականացնելով օրենքով իրեն վերապահված հսկողության լիազորությունները այս հարաբերությունում հանդես է գալիս երկակի կարգավիճակով որպես կառավարման մարմին և որպես քաղաքացիական շրջանառության մասնակից, իրավաբանական անձի կարգավիճակով:

Որպես վերահսկողություն իրականացնող կառավարման մարմին իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում հաշվարկային խախտումներ հայտնաբերելիս, միակողմանիորեն կարող է փոփոխություններ մտցնել ձեռնարկությունների հաշվարկային փոխհարաբերություններում, կասեցնել կամ դադարեցնել բանկային համակարգի այս կամ այն մարմնի միջոցով հաշվարկների իրականացումը:

**ԱՐԺՈՒԹՎՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ՀԻՍՈՒՆՔՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

**§ 1. ԱՐԺՈՒԹԻ ՀԱՍԿԱԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ
ԿԱՐԳՎՎՈՐՈՒՄԸ**

«Արժույթ» տերմինը ինչպես տնտեսագիտական, այնպես էլ ֆինանսաիրավական գրականության մեջ ընկալվում է երկու իմաստով: Առաջին, որպես պետության դրամական միավոր, երկրորդ, որպես արտասահմանյան պետությունների դրամանիշ, որը կիրառվում է միջազգային հաշվարկներում, կարող է արտահայտվել նաև վարկային և հաշվարկային փաստաթղթերում որպես արտասահմանյան դրամական միավոր¹

Ֆինանսների և ֆինանսական իրավունքի, ինչպես նաև գործնական կյանքում արժույթը մեծամասամբ օգտագործվում է երկրորդ իմաստով:

Պետությունների ներքին և արտասահմանյան արժույթների փոխհարաբերություններում կիրառվում է «փոխանակելի» և «ոչ փոխանակելի» արժույթ հասկացությունները, որոնցից երկրորդը կիրառվում է մեկ պետության շրջանակներում, իսկ փոխանակային արժույթը ազատորեն փոխանակվում է արտասահմանյան պետությունների արժույթով և միջազգային շուկայում հանդես է գալիս որպես վճարամիջոց: Արժույթային գործառնությունները և արժույթի նկատմամբ վերահսկողությունը Հայաստանի Հանրապետությունում ենթակա է իրավական կարգավորման: Արժույթային գործառնությունների իրականացման ընդհանուր սկզբունքները, արժույթային վերահսկողություն իրականացնող մարմինների իրավասությունները, իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքները և պարտականությունները արժույթային արժեքների հետ կապված

գործառնություններում, ինչպես նաև նրանց պատասխանատվությունը արժույթային օրենսդրության խախտման համար սահմանված է «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ գերագույն խորհրդի 1993թ. սեպտեմբերի 2-ի օրենքով:

Ֆինանսիրավական այս օրենքը պատմական առաջին ակտն է, որը սահմանեց Հայաստանի Հանրապետության արժույթի հասկացությունը, նրա կազմը արժույթային արժեքները, արտարժույթը, արժույթային կուրսը, գործառնությունները, ինչպես նաև արժույթային կարգավորման հասկացությունը և բովանդակությունը:

Ըստ օրենքի Հայաստանի Հանրապետության *արժույթ են համարվում*

1) Շրջանառության մեջ գտնվող, ինչպես նաև շրջանառությունից հանված կամ հանվող, փոխանակման ենթակա ՀՀ դրամները ՀՀ կենտրոնական բանկի բանկային տոմսերի (թղթադրամների) տեսքով, և մետաղադրամները (լուծա), գանձատան տոմսերը:

2) ՀՀ բանկերի և այլ ֆինանսավարկային կազմակերպությունների հաշիվներում առկա միջոցները՝ արտահայտված ՀՀ դրամով:

3) ՀՀ արժույթը՝ որպես վճարման օրինական միջոց օգտագործելու մասին ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի կողմից օտարերկրյա պետության համապատասխան մարմինների հետ կնքված համաձայնագրերի հիման վրա, տվյալ պետության տարածքում գտնվող բանկերի և այլ ֆինանսավարկային կազմակերպությունների հաշիվներում առկա միջոցները՝ արտահայտված ՀՀ դրամով:

4) ՀՀ դրամով վճարման փաստաթղթերը,

5) ՀՀ արժույթով արժեթղթերը՝ բաժնետոմսերը, պարտատոմսերը, մուրհակները և այլ արժեթղթեր՝ արտահայտված ՀՀ դրամով:

Հիշատակված օրենքը ՀՀ արժույթի թվին է դասում *արժույթային արժեքները*, որոնց մեջ են մտնում՝

- արտարժույթը,
- արտարժույթով արտահայտված արժեթղթերը,
- թանկարժեք մետաղները ոսկի, արծաթ, պլատին և պլատինի խմբի մետաղներ,
- բնական թանկարժեք քարերը (ալմաստ, սուտակ, գնդուխտ, շափյուղա, ալեքսանդրիտ, ինչպես նաև մարգարիտը անմշակ և մշակված տեսքով ու վիճակում, բացառությամբ այդ քարերից պատրաստված ոսկերչական և կենցաղային այլ իրերի ջարդոնի,
- համաշխարհային շուկայում գեղարվեստական և պատմական արժեք ներկայացնող արվեստի գործերը և իրերը:

¹ Տե՛ս, Коммерческий словарь, М; 1991, стр.28

«Արժուքային կարգավորման և արժուքային վերահսկողության մասին» օրենքով սահմանվեց նաև *արտարժույթի հասկացությունը*:

Հայաստանի Հանրապետությունում արտարժույթ են հանդիսանում՝

1. օտարերկրյա դրամանիշները՝ արտահայտված բանկային տոմսերի, գանձատու քոթադրամների և մետաղադրամների ձևով, որոնք համապատասխան օտարերկրյա մեկ կամ մի քանի պետությունների տարածքում գտնվում են շրջանառության մեջ և օրինական վճարման միջոց են: Արտարժույթ են նաև շրջանառությունից հանված կամ հանվող, բայց փոխանակման ենթակա շրջանառության մեջ գտնվող դրամանիշները:

2. բանկային հաշիվներում և ավանդներում գտնվող օտարերկրյա պետությունների դրամական կամ հաշվարկային միավորներով արտահայտված միջոցները և վճարման փաստաթղթերը:

Օրենքը սահմանում է նաև *արժուքային կուրսի* հասկացությունը: Արժուքային կուրսը երկու և ավելի երկրների արժույթների կապվածության դրսևորումն է:

Արժուքային կուրսը որոշվում է արժուքային շուկայում եղած առաջարկի և պահանջարկի հիման վրա, սակայն այն կարող է ֆիքսվել պետության կողմից միակողմանիորեն: Այս տեսակետից արժուքային կուրսը լինում է լողացող և ֆիքսված: Արժույթները լինում են ազատ (լրիվ փոխարկելի, օր.՝ ԱՄՆ-ի դոլարը, գերմանական մարկը և այլն), մասնակի (ներքին) փոխարկվող (օր.՝ ՀՀ դրամը) և չփոխարկվող:

Օրենքում սպառիչ թվարկված են *արժուքային գործառնությունները*:

Արժուքային գործառնություններն այն գործառնություններն են, որոնք կապված են.

ա) արժուքային արժեքների սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների փոխանցման հետ, այդ թվում այնպիսի գործառնությունների, որոնք կապված են արտարժույթով վճարման փաստաթղթերի օգտագործման հետ.

բ) որպես վճարման միջոց՝ արտարժույթի, ինչպես նաև արտաքին տնտեսական գործունեություն իրականացնելիս՝ Հայաստանի Հանրապետության արժույթի օգտագործման հետ.

գ) արժուքային արժեքների՝ արտասահմանից ՀՀ փոխադրման, ներմուծման և առաքման, ՀՀ-ից դրանց փոխադրման, արտահանման և առաքման, ինչպես նաև դրամական փոխանցումների հետ¹:

«Արժույթ» հասկացության անբաժան մասն է կազմում *արժուքային կարգավորումը*:

Արժուքային կարգավորումը պետական մարմինների գործունեությունն է ուղղված արժուքային գործառնությունների կանոնակարգմանը:

ՀՀ-ի արժուքային հարաբերությունների կարգավորումն իրականացվում է երկու եղանակով՝ նորմատիվ և անհատական¹:

Նորմատիվ իրավական կարգավորում իրականացվում է իրավական նորմերի միջոցով: Դրանցով կարգավորվում են արժույթի հետ կապված հասարակական հարաբերությունները:

Անհատական կարգավորումը իրենից ներկայացնում է իրավական նորմերի կիրառումը կոնկրետ հանգամանքների նկատմամբ, որոնք առաջացնում են կոնկրետ արժուքային հարաբերությունների ծագում, փոփոխում և դադարեցում:

«Արժուքային կարգավորման և արժուքային վերահսկողության մասին» օրենքով կարգավորված են արժուքային հարաբերությունները:

Ըստ այս օրենքի, արժուքային իրավահարաբերության *սուբյեկտներն են* իրավաբանական անձիք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները և կազմակերպությունները, քաղաքացիները:

Օրենքը հիշատակված սուբյեկտներին բաժանում է ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների:

Ռեզիդենտներ են համարվում. ա) ՀՀ-ում մշտական բնակության վայր ունեցող ՀՀ, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, այդ թվում՝ ՀՀ-ում մշտական բնակության վայր ունեցող, բայց ժամանակավորապես արտասահմանում գտնվող ֆիզիկական անձինք.

բ) ՀՀ օրենսդրությամբ համապատասխան, ստեղծված և ՀՀ տարածքում գտնվող իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները և կազմակերպությունները, այս ռեզիդենտների ՀՀ-ի սահմաններից դուրս գտնվող մասնաճյուղերը և ներկայացուցիչները:

գ) ՀՀ դիվանագիտական և այլ պաշտոնական այն ձեռնարկությունները, որոնք գտնվում են ՀՀ սահմաններից դուրս:

Ոչ ռեզիդենտներ են՝

ա) արտասահմանում մշտական բնակության վայր ունեցող ՀՀ քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, այդ թվում՝ ՀՀ տարածքում ժամանակավորապես գտնվող ֆիզիկական անձինք.

¹ Տես, մանրամասն, Заков Р. О валютном регулировании и валютном контроле, (ВВС Р 1992. N45, ст.2552)

¹ Տես, Финансовое право, М: БЭК, 1996, стр.456

բ) իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այն ձեռնարկությունները և կազմակերպությունները, որոնք ստեղծված են օտարերկրյա պետությունների օրենսդրությանը համապատասխան և գտնվում են ՀՀ սահմաններից դուրս և սրանց մասնաճյուղերն ու ներկայացուցիչները, որոնք գտնվում են ՀՀ-ում:

գ) ՀՀ տարածքում գտնվող օտարերկրյա դիվանագիտական և պաշտոնական այլ ներկայացուցչությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա ֆիրմաների ներկայացուցչությունները:

Ռեզիդենտների միջև հաշվարկները ՀՀ արժույթով իրականացվում են առանց սահմանափակումների: ՀՀ տարածքում ոչ ռեզիդենտների կողմից ՀՀ արժույթ ձեռք բերելու և օգտագործելու կարգը սահմանում է ՀՀ կենտրոնական բանկը՝ ՀՀ-ի օրենսդրությանը համապատասխան: Ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների կողմից ՀՀ արժույթի և դրանով արտահայտված արժեթղթերի փոխադրումը, արտահանումն ու առաքումը ՀՀ-ից, ինչպես նաև դրանց ներմուծումն ու առաքումը ՀՀ, իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով:

Ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների սեփականություն կարող են հանդիսանալ նաև արժույթային արժեքները: ՀՀ-ում պետության արժույթային արժեքների սեփականության կազմակերպումը երաշխավորվում և պաշտպանվում է:

Թանկարժեք մետաղների, բնական թանկարժեք քարերի, գեղարվեստական և պատմական արժեք ներկայացնող գործերի և իրերի ներմուծման, արտահանման հետ կապված գործարքների կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:

Օրենքը սահմանում է *արժույթային իրավահարաբերությունների սուբյեկտների իրավունքները և պարտականությունները*:

Հայաստանում արժույթային գործառնություններ իրականացնող ռեզիդենտները և ոչ ռեզիդենտները, ինչպես նաև ՀՀ արժույթով և դրանով արտահայտված արժեթղթերով գործառնություններ իրականացնող ոչ ռեզիդենտներն իրավունք ունեն:

1) վարել իրենց կողմից կատարվող արժույթային գործառնությունների հաշվառում և կազմել հաշվետվություն՝ ապահովելով դրանց պահպանությունը հինգ տարուց ոչ պակաս ժամանակով:

2) ծանոթանալ արժույթային վերահսկողության մարմինների և գործակալների կազմած ստուգման ակտերին:

3) ՀՀ օրենսդրության համապատասխան, զանգատարկել արժույթային վերահսկողության մարմինների և գործակալների գործողությունները:

4) օգտվել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

ՀՀ արժույթային գործառնություններ իրականացնող ռեզիդենտները և ոչ ռեզիդենտները, ինչպես նաև ՀՀ արժույթով և դրանով արտահայտված արժեթղթերով գործառնություններ իրականացնող ոչ ռեզիդենտները *պարտավոր են՝*

1. արժույթային վերահսկողության մարմիններին և գործակալներին ներկայացնել արժույթային գործառնությունների իրականացման մասին պահանջվող բոլոր փաստաթղթերը և տեղեկությունները:

2. արժույթային վերահսկողության մարմիններին և գործակալներին ներկայացնել բացատրություններ՝ վերջիններիս կողմից կատարվող ստուգումների կապակցությամբ:

3. արժույթային վերահսկողության մարմինների և գործակալների կողմից կատարված ստուգումների ակտերում շարադրված փաստերին չհամաձայնելու կամ ակտը ստորագրելուց հրաժարվելու դեպքում ներկայացնել գրավոր պարզաբանումներ:

4. կատարել օրենսդրության խախտումների վերացման մասին արժույթային վերահսկողության մարմինների պահանջները (ցուցումները):

5. կատարել ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պարտականություններ:

Ռեզիդենտներն իրավունք ունեն արտարժույթով հաշիվներ ունենալ լիազոր բանկերում:

Ռեզիդենտ հանդիսացող ձեռնարկությունների, կազմակերպությունների կողմից ստացվող օտարերկրյա արժույթը ենթակա է պարտադիր հաշվեգրման ՀՀ տարածքում գտնվող լիազոր բանկերում ունեցած նրանց հաշիվներում, եթե ՀՀ կենտրոնական բանկի կողմից այլ կարգ չի սահմանված:

Ռեզիդենտներն օտարերկրյա բանկերում կարող են արժույթային հաշիվներ ունենալ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված դեպքերում և պայմաններով:

Լիազոր բանկերի կողմից արտարժույթով ռեզիդենտների հաշիվներ բացելու և վարելու կարգը սահմանում է ՀՀ կենտրոնական բանկը:

Կապիտալի շարժման հետ կապված արժույթային գործառնությունները ռեզիդենտների կողմից իրականացվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով: Ռեզիդենտներն իրավունք ունեն առանց սահմանափակումների արժույթային արժեքներ փոխադրել, առաքել և ներմուծել ՀՀ՝ պահպանելով ՀՀ մաքսային օրենսդրությունը:

Ռեզիդենտներին պատկանող արտարժույթի և դրանով արտա-

հայտված արժեքները ՀՀ փոխադրելու, առաքելու և ներմուծելու կարգը սահմանում է ՀՀ կենտրոնական բանկը, իսկ ռեզիդենտներին պատկանող թանկարժեք մետաղները, բնական թանկարժեք քարերը, գեղարվեստական և պատմական արժեք ներկայացնող արվեստի գործերն ու իրերը ՀՀ փոխադրելու, առաքելու և ներմուծելու կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:

Ռեզիդենտներն իրավունք ունեն ՀՀ ներքին արժույթային շուկայում արտարժույթ վաճառել օրենքով սահմանված կարգով:

Ֆիզիկական անձ հանդիսացող ռեզիդենտներն իրավունք ունեն պահպանելով ՀՀ մաքսային օրենսդրությունը, հանրապետությունից փոխադրել, առաքել, արտահանել նախկինում հանրապետություն ներմուծված, փոխադրված կամ առաքված արժույթային արժեքներ դրանց ներմուծումը, փոխադրումը և առաքումը հաստատող հայտարարագրերում կամ այլ փաստաթղթերում նշված կարգերով:

Ոչ ռեզիդենտներն իրավունք ունեն լիազոր բանկերում արտարժույթով և ՀՀ արժույթով հաշիվներ ունենալ:

Լիազոր բանկերի կողմից արտարժույթով և ՀՀ արժույթով հաշիվներ բացելու և վարելու կարգը սահմանում է ՀՀ կենտրոնական բանկը:

Ոչ ռեզիդենտներն իրավունք ունեն առանց սահմանափակումների ՀՀ փոխադրել, առաքել և ներմուծել արժույթային արժեքներ պահպանելով ՀՀ մաքսային օրենսդրությունը: Ոչ ռեզիդենտներն իրավունք ունեն ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով ՀՀ արժույթով արտարժույթ գնել կամ վաճառել: Ոչ ռեզիդենտները նաև իրավունք ունեն պահպանելով ՀՀ մաքսային օրենսդրությունը, հանրապետությունից փոխադրել, առաքել և արտահանել արժույթային արժեքներ, եթե դրանց ավելի վաղ փոխադրվել, առաքվել և ներմուծվել են ՀՀ կամ հանրապետությունում ձեռք են բերվել ՀՀ օրենսդրությամբ համապատասխան:

Հայաստանի Հանրապետությունում արժույթային կարգավորման և վերահսկողության բացառիկ լիազորություններով հանդես է գալիս Կենտրոնական բանկը, որը «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» օրենքի 48-րդ հոդվածով սահմանված կարգով հանդիսանում է ՀՀ արժույթային գործակալը և լիազորված է իրականացնելու արժույթային քաղաքականությունը:

Արժույթային կարգավորման ոլորտում Կենտրոնական բանկը սահմանում է արժույթային գործառնությունների իրականացումը, արժույթի նկատմամբ հայկական դրամի փոխարժեքի որոշմամբ, արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների լիցենզավորման կարգը:

«Կենտրոնական բանկի մասին» օրենքի 49-րդ հոդվածում սահ-

մանված են նրա լիազորությունները արժույթային կարգավորման գործընթացում: Կենտրոնական բանկը սահմանում է արժույթային գործառնությունների իրականացման կարգը և պայմանները, ընդունվում է արժույթային գործառնությունները կարգավորող որոշումները և կանոններ, հսկողություն է իրականացնում և կարգավորում է արժույթային գործառնություններ իրականացնող դիլերներին, ներառյալ բանկերի գործունեությունը, սահմանում է արժույթային դիլերների, բանկերի արժույթային տնօրինման նորմատիվներ, սահմանում է հայկական դրամի փոխարժեքի որոշման մեթոդները:

Արժույթային գործառնությունների իրավական կարգավորման անբաժանելի մասն է կազմում *արժույթային վերահսկողությունը*:

Արժույթային վերահսկողության իրավական կարգավորումը սահմանված է իրնչպես «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին», այնպես էլ «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» օրենքներով:

Արժույթային վերահսկողության նպատակն է ապահովել արժույթային օրենսդրության պահպանումը արժույթային արժեքներով գործառնություններ իրականացնելիս:

Արժույթային վերահսկողության հիմնական ուղղություններն են ա) գործող օրենսդրությամբ արժույթային գործառնությունների համապատասխանության և դրանց համար անհրաժեշտ արտոնագրերի (լիցենզիաների) առկայության ստուգումը, բ) պետության հանդեպ ռեզիդենտների կողմից արժույթով պարտավորությունների, ինչպես նաև ՀՀ ներքին արժույթային շուկայում արտարժույթի, թանկարժեք մետաղների, բնական թանկարժեք քարերի, գեղարվեստական և պատմական արժեք ներկայացնող արվեստի գործերի և իրերի վաճառքի գծով պարտավորությունների կատարման ստուգումը, գ) արտարժույթով վճարումների շրինականության ստուգումը, դ) արտարժույթային գործառնությունների, ինչպես նաև ՀՀ արժույթով, դրամով արտահայտված արժեքներով ոչ ռեզիդենտների հաշվառման և հաշվետվության լրիվության ստուգումը:

ՀՀ արժույթային վերահսկողության մարմիններ են ճանաչված Կենտրոնական բանկը, ինչպես նաև ՀՀ կառավարությունը:

Արժույթային վերահսկողություն են իրականացնում նաև գործակալները, որոնց լիազորությունները, նրանց շրջանակը սահմանվում է արժույթային վերահսկողության մարմինների կողմից: Արժույթային վերահսկողության գործակալներ են հանդիսանում ՀՀ Կենտրոնական բանկի կողմից լիազորված բանկային մարմինները, որոնց իրենց գործունեության համար հաշվետու և պատասխանատու են Կենտրոնական բանկին:

Արժույթային վերահսկողության գործակալները օրենքով սահ-

մանված կարգով Կենտրոնական բանկին և կառավարությունը պարբերաբար հաշվետվություններ են ներկայացնում իրենց կողմից իրականացված գործառնությունների, այդ թվում արտարժույթի տնօրինման չափի գծով:

Արժութային վերահսկողության մարմինները իրենց վերապահված լիազորությունների սահմաններում իրավունք ունեն ընդունելու իրավական ակտեր, որոնց կատարումը պարտադիր է արժութային իրավահարաբերությունների սուբյեկտների համար:

Արժութային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի պահանջների ընդհանրացումից դժվար չէ նկատել, որ արժութային վերահսկողությունը իրականացվում է.

ա) հանրապետությունում ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների կողմից կատարվող արժութային գործառնությունների, ԳՀ օրենսդրությանը այդ գործառնությունների համապատասխանության, արտոնագրերի պատվանմանների պահպանման նկատմամբ:

բ) ԳՀ-ում ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների արժութային գործառնությունների օրինականության

գ) ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների կողմից իրականացվող արժութային գործառնությունների հաշվառման, հաշվետվության և փաստաթղթերի լրացման կարգի ու ձևերի նկատմամբ:

§ 2. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Արժութային հարաբերությունները հանրապետության ֆինանսական գործունեության մի մասն են, որոնք դրսևորվում են դրամական հարաբերությունների տեսքով, ձևավորում են ինչպես ներպետական, այնպես էլ պետության միջազգային ֆինանսական գործունեության ոլորտում:

Արժութային բոլոր հարաբերություններին ներհատուկ է ֆինանսահրավական կարգավորումը, որի հետևանքով դրամական հարաբերությունների այս խումբը վեր է ածվում ֆինանսական հարաբերությունների:

Որպես իրավական հարաբերությունների տարատեսակ՝ արժութային իրավահարաբերությունները, նրանց հասցեագրումները ապահովում են պետական հարկադրանքի ուժով: Արժութային իրավահարաբերությունները կարգավորող ցանկացած իրավական ակտի խախտումը, ելնելով հասարակական վտանգավորության

աստիճանից, կարող է առաջ բերել կարգապահական, նյութական, վարչական, ինչպես նաև քրեական հարկադրանքի ներգործության միջոցներ:

Այսօր արժութային օրենսդրության խախտումների պատասխանատվությունը սահմանված է ինչպես 1993թ. սեպտեմբերի 2-ի «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» այնպես էլ «ԳՀ Կենտրոնական բանկի մասին» 1996թ. հունիսի 30-ին ընդունված օրենքներով:

Այս իրավական ակտերում սահմանված են արժութային այն գործառնությունները, որոնց իրականացման համար արժութային վերահսկողության մարմինները իրավունք ունեն կիրառելու նյութական, վարչական պատասխանատվության տեսակներ կամ համապատասխան հայցերի միջոցով պահանջել վեճերի դատական լուծում:

Այսպես, «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության» մասին օրենքի 15-րդ հոդվածում սահմանված են արժութային գործառնությունների խախտման օբյեկտները, որոնց համար սահմանված է պատասխանատվություն:

Արժութային իրավահարաբերության օբյեկտներ են հանդիսանում.

1) ԳՀ տարածքում ոչ ռեզիդենտների կողմից ԳՀ արժույթ ձեռք բերելու և օգտագործելու կարգը խախտելը:

2) ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների կողմից ԳՀ արժույթի և դրամով արտահայտված արժեթղթերի փոխադրումը արտահանման ու առաքման կարգը խախտելը:

3) թանկարժեք մետաղների, բնական թանկարժեք քարերի, զեղարվեստական ու պատմական արժեք ներկայացնող արվեստի գործերի և իրերի ներմուծման, արտահանման հետ կապված գործարքների կարգը խախտելու,

4) ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների կողմից ԳՀ ներքին շուկայում արտարժույթ գնելու և վաճառելու կարգը խախտելու,

5) ԳՀ արտարժույթի առուծախի կարգը խախտելու,

6) ռեզիդենտներ հանդիսացող ձեռնարկությունների, կազմակերպությունների կողմից ստացվող օտարերկրյա արժույթը ԳՀ տարածքում գտնվող լիազոր բանկերում ունեցած նրանց հաշիվներում չհաշվեգրելու,

7) ռեզիդենտների օտարերկրյա բանկերում արտարժույթով հաշիվներ ունենալու ԳՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգը խախտելու,

8) ռեզիդենտների կողմից կապիտալի շարժման հետ կապված արժութային գործառնությունները խախտելու համար.

ԸՆԴՊԱՆՈՒՄ ՄԱՍ

Արժուքային կարգավորման օրենսդրությունը լիազոր բանկերի, ինչպես նաև ռեզիդենտների թույլ տված խախտումների համար սահմանում է հետևյալ պատժամիջոցները.

1. անվավեր ճանաչված գործարքներից ստացվածը ամբողջությամբ բռնագանձվում է պետական բյուջե.

2. առանց գործարք կնքելու, այլ անօրինական գործողությունների հետևանքով ձեռք բերվածը բռնագանձվում է պետական բյուջե:

Արժուքային գործադնությունների հաշվառման բացակայության, արժուքային գործառնությունների հաշվառումը սահմանված կարգի խախտումով վարելու, արժուքային վերահսկողության մարմիններին և գործակալներին փաստաթղթեր չներկայացնելու կամ ժամանակին չներկայացնելու համար ռեզիդենտները, ներառյալ լիազոր բանկերը և ոչ ռեզիդենտները պատասխանատվություն են կրում *տուգանքների ձևով* այն գումարների սահմաններում, որոնք հաշվառված չեն, հաշվառված են ոչ պատշաճ ձևով կամ որոնց վերաբերյալ փաստաթղթերը և տեղեկանքները սահմանված կարգով չեն ներկայացվել:

Արժուքային օրենսդրությունը կոնսակի խախտելու դեպքում, ինչպես նաև արժուքային վերահսկողության մարմինների պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կերպով կատարելու դեպքում, ռեզիդենտների, ներառյալ լիազոր բանկերի և ոչ ռեզիդենտների նկատմամբ կիրառվում են հետևյալ պատժամիջոցները.

1. դատարանի կողմից անվավեր ճանաչված գործարքներից ստացվածի ամբողջությամբ բռնագանձում.

2. առանց գործարք կնքելու, այլ օրինական գործողությունների հետևանքով ձեռք բերվածը պետական բյուջե բռնագանձելուց բացի, պետական բյուջե է զանձվում նաև տուգանք՝ այդ գումարների մինչև հնգապատիկի չափով:

3. արժուքային վերահսկողության մարմինների կողմից ռեզիդենտներին, ներառյալ լիազոր բանկերի, և ոչ ռեզիդենտների արտոնազրոգ գործունեության կասեցում կամ արտոնազրոհ գրվում:

Ռեզիդենտներից տուգանքի բռնագանձումը կատարվում է արժուքային վերահսկողության մարմինների հայցով՝ դատական կարգով:

| | |
|---|-----------|
| Ներածություն | 3 |
| ԳԼՈՒԽ I ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒԹՅՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱԿՐՈՒԹՅՈՒՆ ԳԴՈՒՄ | 7 |
| §1. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱԿՐՈՒԹՅՈՒՆ | 7 |
| §2. ԳՆՅԱՍՏԱՆԻ ԳՆԵՐԱԹԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՄԱՐԳԸ | 10 |
| §3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒԹՅՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՆՁՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍՄՐՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ | 14 |
| §4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒԹՅՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՉԵՎԵՐԸ | 22 |
| ԳԼՈՒԽ II ԳՆՅԱՍՏԱՆԻ ԳՆԵՐԱԹԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՄԸ ԵՎ ՍՄՐՈՒՄԸ, ԳՆԱՄԱՐԳԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆԵՐԸ | 25 |
| §1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՄԸ ԵՎ ՍՄՐՈՒՄԸ ԳՆԱՄԱՐԳՈՒԹՅՈՒՆԸ | 25 |
| §2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՄԸ ՏԵՂԸ ԳԴ ԻՐԱՎՈՒՄԸ ԳՆԱՄԱՐԳՈՒՄ, ՆՐԱ ՍՈՒՆՉՆԱԳՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՊԸ ԻՐԱՎՈՒՄԸ ՄՅՈՒՄ ԾՅՈՒՄԸ ԳԵՏ | 36 |
| §3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՄԸ ԳՆԱՄԱՐԳԸ ԵՎ ԱՂԲՅՈՒՄՆԵՐԸ | 39 |
| §4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՄԸ ՍԿԶԲՈՒՆԵՐԸ | 41 |
| §5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՄԸ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՍՈՐԿԱՆ ԵՎ ԽՆԴԻՄՆԵՐԸ | 45 |
| ԳԼՈՒԽ III ՖԻՆԱՆՍԱ-ԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ ԵՎ ԳՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 51 |
| §1. ՖԻՆԱՆՍԱ-ԻՐԱՎԱԿԱՆ ՆԵՐՄԵՐԻ ԳՆԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾԸ | 51 |
| §2. ՖԻՆԱՆՍԱ-ԻՐԱՎԱԿԱՆ ԳՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԱՍՈՆՉՆԱԳՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ | 59 |
| §3. ՖԻՆԱՆՍԱ-ԻՐԱՎԱԿԱՆ ԳՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՒՐՅԵԿՏՆԵՐԸ | 64 |
| §4. ՖԻՆԱՆՍԱ-ԻՐԱՎԱԿԱՆ ԳՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃԱԳԱՆ, ՓՈՓՈՌՈՄՆ և ԴՎՊՈՒԹՅԱՆ ԳՆՄԵՐԸ | 74 |
| §5. ՖԻՆԱՆՍԱ-ԻՐԱՎԱԿԱՆ ԳՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ | 77 |
| ԳԼՈՒԽ IV ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱԳՆԱԿՈՂՈՒԹՅՈՒՆ | 85 |
| §1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱԳՆԱԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՆԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԽՆԴԻՄՆԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱ ՕՍՏԱՆԱԿԱՆՈՒՄ | 85 |

§2. Ֆինանսավան Վերադարձի Իրավունքները Գրեթե Կապ
Մարտիկների Համակարգը 92

1. Պետական Իշխանություններ Եվ Կառավարման Մարտիկների
Կողմից Իրավունքավոր Ֆինանսավան Վերադարձի Իրավունքները .92

2. Ֆինանսավան Սարտիկների Կողմից Իրավունքավոր
Վերադարձի Իրավունքները 97

3. Ներգերման Իրավունքներ Եվ Ֆինանսավան Վերադարձի Իրավունքները 102

4. Հասարակական Ֆինանսավան Վերադարձի Իրավունքները 104

5. Արդիտնողական Ֆինանսավան Վերադարձի Իրավունքները 106

§3. Ֆինանսավան Վերադարձի Իրավունքները Զեպերի Որ Մեթոդները . 107

§4. ԱՏՈՒՄՆԵՐ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 111

ՀԱՏՈՒԿ ՄԱՍ

**ԳԼՈՒԽ V ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՖՈՆԴՆԵՐԻ
ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ 115**

§1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՆ ԵՎ
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ 115

§ 2. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ԻՐԱՎԱՅՐԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ 120

§ 3. ԲԳ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 126

§ 4. ԲՅՈՒՋԵԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ
ԿԱԶՄԸ, ՆՐԱՆՑ ԲԱՇԽՈՒՄԸ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ 130

**ԳԼՈՒԽ VI ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ 135**

§1. ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ 135

§2. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ 139

**ԳԼՈՒԽ VII ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ 144**

§1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍԻՌՈՒԹՅՈՒՆԸ
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ
ՍԱՀՄԱՆՄԱՆ և ԲԱՇԽՈՒՄԱՆ ԲՆԱԳԱՎՈՐՈՒՄ 144

§2. ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ,
ՆՐԱՆՑ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԱՌՁԱՆՈՒՄ 154

§3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՁԱՆԱՍՆ ՍԿԶԵՐՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԻՐԱՎԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ 159

ԳԼՈՒԽ VIII ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ 162

§1. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՓՈՒԼԵՐԸ 162

§2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄՈՒՄԸ 165

§3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ԲՆԱՐԿՈՒՄԸ
ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ 167

§4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՍԱՐՈՒՄ 170

§5. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՏՆՈՐԻՆՈՂՆԵՐԸ, ՆՐԱՆՑ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 177

**ԳԼՈՒԽ IX ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ
ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՇԺՄԱՆ
ՍԴՅՈՒՐՆԵՐԸ 184**

§1. ԶԵՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՇԱՀՈՒՅԹԸ, ՆՐԱ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ 184

§2. ԱՐՏԱՂԱՆՔԻ ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ԵՎ ՍՅՈՒՄ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ Ի
ՐԱՎԱԿԱՆ ՈՇԺՄԱՆ ԱԶԱՏ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 188

§3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՈՇՄՈՒՐՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ 190

**ԳԼՈՒԽ X ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ 194**

§1. ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՄԱ-
ԿԱՐԳԸ, ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ 194

**ԳԼՈՒԽ XI ՀԱՐԿԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐ-
ԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 202**

§1. ՀԱՐԿԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ 202

§2. ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 205

§3. ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 209

§4. ՊԱՏԱԽԱՆԱՍՏՎՈՒԹՅՈՒՆԸ` ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆԱՐՈՒԹՅՈՒՆԸ
ԽԱՍՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ 210

§5. ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՁՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 214

ԳԼՈՒԽ XII ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՉԱՆՑԻՑ ԳԱՆՉՎՈՂ ՀԱՐԿԵՐ 221

§ 1. ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ 221

§ 2. ԱԿԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ 226

§ 3. ԱԿՑԻՉԱՅԻՆ ՀԱՐԿ 234

| | |
|--|-----|
| ԳԼՈՒԽ XIII ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՉԱՆՑԻՑ ԳԱՆՉՎՈՂ ԵԿԱՍՏԱ- ՀԱՐԿԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ | 237 |
| ԳԼՈՒԽ XIV ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՉԱՆՑԻՑ ԳԱՆՉՎՈՂ ՀԱՐԿԵՐ | 242 |
| § 1 ԳՈՒՅՔԱՀԱՐԿ | 242 |
| § 2. ՀՈՂԻ ՀԱՐԿ | 247 |
| ԳԼՈՒԽ XV ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ | 252 |
| § 1. ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԸ | 252 |
| § 2. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԳՈՐԾՈՂՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԳԱՆՉՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԸ | 255 |
| ԳԼՈՒԽ XVI ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՖՈՆԴԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ | 262 |
| §1. ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՖՈՆԴԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | 262 |
| §2. ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ | 266 |
| ԳԼՈՒԽ XVII ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԿԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ | 268 |
| § 1. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԿԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ | 268 |
| « 2. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԿԻ ՉԵՎԵՐԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ | 270 |
| § 3. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԿԻ ԳՈՐԾԵՆԹԱՑՈՒՄ ԾԱԳՈՂ ՖԻՆԱՆՍԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | 281 |
| ԳԼՈՒԽ XVIII ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ | 284 |
| § 1. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒ- ԹՅՈՒՆ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ | 284 |
| § 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈՂՆԵՐԸ | 291 |
| ԳԼՈՒԽ XIX ՊԵՏԱԿԱՆ ԾԱՊԱԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ | 295 |
| § 1. ԿԱՊԻՏԱԼ ԵԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ | 295 |
| § 2. ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ-ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ | 305 |

| | |
|--|-----|
| §. 3. ՆԱԽԱՀԱՇՎԻԸ ՈՐՊԵՍ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏ | 309 |
| ԳԼՈՒԽ XX ԲԱՆԿԱՅԻՆ ԿԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ | 313 |
| § 1. ԲԱՆԿԱՅԻՆ ԿԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ | 313 |
| § 2. ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՓՈՒՆԴԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՉԱՆՑ ՀԵՏ | 317 |
| ԳԼՈՒԽ XXI ԴՐԱՄԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ | 326 |
| §1. ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ | 326 |
| §2. ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ | 330 |
| §3. ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | 332 |
| §4. ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ՉԵՎԵՐԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ | 337 |
| ԳԼՈՒԽ XXII ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՎԵՐԱՀԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ | 344 |
| §1. ԱՐԺՈՒԹՅՈՒ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ | 344 |
| §2. ՊԱՏԱՆԻՍԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ | 352 |

Սուբհասյան Գառնիկ Արտաշեսի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ
(դասագիրք բուհերի համար)

Խմբագիր՝ Լ.Ս. Առաքելյան

Ստորագրված է տպագրության՝ 8.10.2001թ.:
Հանձնված է արտադրություն՝ 11.10.2001թ.:
Չափսը՝ 60x84¹/₁₆: Թուղթ՝ տպագրական:
Տպագրություն՝ օֆսեթ: 20,93 պայմ. տպ. մամուլ,
18,7 հրատ. մամուլ: Տպաքանակ՝ 500:

ԵրՊՏԻ «ՏՆտեսագետ» հրատարակչություն

Երևան 25, Եալբանդյան 128